

Մաշտոցի անվան Մատենադարանը և «Մատենադարանի բարեկամներ»  
հիմնադրամը երախտագիտություն են հայտնում  
բարերար **Մաքսիմ Հակոբյանին**  
սույն հատորի հրատարակությունը հովանավորելու համար:

The Institute of Ancient Manuscripts after Mesrop Mashtots  
“Matenadaran” and the Benevolent fund “Friends of the Matenadaran”  
express their gratitude to benefactor **Maksim Hakobyan** for sponsoring  
the publication of the volume of “Banber Matenadaran”.



**“MATENADARAN”  
MASHTOS INSTITUTE OF ANCIENT MANUSCRIPTS**

**BANBER MATENADARAN**

**21**

**“Nairi” publishing house  
YEREVAN – 2014**

**“МАТЕНАДАРАН”  
ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ ИМ. МАШТОЦА**

**ВЕСТНИК МАТЕНАДАРАНА**

**21**

**Издательство “Наири”  
ЕРЕВАН – 2014**

«ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ»  
ՄԱՇՏՈՅԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ԶԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

# ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

21

«ՆԱԻՐԻ»  
ԵՐԵՎԱՆ – 2014

ISSN 1829-054X

ISSN 1829-054X

ISSN 1829-054X

ISSN 1829-054X

Տպագրվում է Մաշտոցի անվան Մատենադարանի  
գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ՝ Հ. Թամրազյան (գլխ. խմբագիր), Գ. Տեր-Վարդանյան, Շ. Խաչիկյան, Վ. Տեր-Ղևոնդյան, Գ. Մուրադյան, Գ. Գասպարյան, Ս. Վարդազարյան

«Բանբեր Մատենադարանի», Հ. 21 Մաշտոցի անվան հին ձեռագրերի ին-տ. – Եր.: «Նաիրի» հրատ., 2014:

Հ. 21/խմբ. Հ. Թամրազյանի, 2014:

Մաշտոցի անվան Մատենադարանի «Բանբեր Մատենադարանի» 21-րդ հատորում ընդգրկված են Հայագիտական ուսումնասիրությունների միջազգային ընկերակցության (AIEA) 13-րդ համաժողովի (2014, հոկտեմբերի 9-11) նյութերը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ**

Երևան, 9 հոկտեմբերի 2014 թ.

**ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ 13-ՐԴ ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ**

*Հարգելի՛ տիկնայք և պարոնայք,*

*Ձերմտրեն ողջունում եմ Հայագիտական ուսումնասիրությունների միջազգային ընկերակցության հերթական՝ 13-րդ համաժողովի կազմակերպիչներին, մասնակիցներին և հյուրերին: Շատ ուրախ եմ, որ այս տարի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի տնօրինության նախաձեռնությամբ աշխարհի 20 երկրներ ներկայացնող և ավելի քան 400 հայագետների միավորող ընկերակցության ներկայացուցիչները հավաքվել են համայն հայության և հայագիտության մայրաքաղաք Երևանում:*

*Կարծում եմ՝ խորհրդանշական է, որ եվրոպական հայագիտության դեռևս 19-րդ դարից եկող փառավոր ավանդույթները շարունակող, աշխարհի նշանավոր համալսարանները ներկայացնող հետազոտողներին միավորող այս կառույցի առաջին հայաստանյան համաժողովը կազմակերպվում է հենց Մաշտոցյան Մատենադարանի ջերմ ու հայաշունչ հարկի տակ:*

*Ընդամենը երեք տարի առաջ հանդիսավորապես իր դռները բացեց Մատենադարանի հոյակերտ նորակառույց մասնաշենքը, ապա նաև նորացված հին մասնաշենքը: Մատենադարանի համալիրն իր ընդարձակ տարածքով, տեխնիկական հագեցվածությամբ, գրեթե եռապատկված աշխատակազմով ու գիտական ներուժով ունի բոլոր հնարավորությունները կազմակերպելու և հաջողությամբ իրականացնելու միջազգային մակարդակի համաժողովներ: Նման հաջող մի ձեռնարկի ականատեսն ենք այսօր մենք բոլորս:*

*Սիրելի՛ հայագետներ,*

*Կրկին ողջունելով Հայագիտական ուսումնասիրությունների միջազգային ընկերակցության համաժողովի գումարման կապակցությամբ՝ մաղթում եմ ձեզ գիտական բեղմնավոր գործունեություն:*

**ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆ**

## ՀՐԱՉՅԱ ԹԱՄՐԱԶՅԱՆ

### ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ (AIEA) 13-րդ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ԲԱՑՄԱՆ ԽՈՍՔ

#### *Սիրելի բարեկամներ*

Հայագիտական ուսումնասիրությունների միջազգային ընկերակցությունը տասնամյակների ուղի է անցել: Այն իր տարեգրության մեջ արձանագրել է մեծ ձեռքբերումներ և զգալի առաջընթաց հայագիտության զարգացման գործում և՛ խորքային, և՛ տարածական իմաստով, հատկապես հայագիտության միջազգայնացման առումով: Այն 33 տարվա պատմություն ունի և իր մեջ ներառում է 400-ից ավելի անդամներ:

Ընկերակցությունը նպաստել է Հայաստանի և արտերկրի հայագետների տեղական շփումների, գիտական կապերի սերտացմանը՝ էական դեր կատարելով հայագետների նոր սերունդների կայացման գործում, որ մենք հատկապես կարևորում ենք: Այս ընթացքը, հուսով ենք, շարունակական է լինելու, և մեր ցանկությունն է Մատենադարանի նոր սերունդներին ևս ընդգրկելու դրանում: Նման համաժողովները, մեր համոզմամբ, ի շարս այդ խնդիրները՝ կապված տեղեկատվության փոխանակման, մարդկային շփումների և զարգացման ծրագրերի հետ, պետք է առաջ քաշեն նաև հրատարակչական ծրագրեր՝ նպատակ ունենալով գիտական-թարգմանական ավանդույթի ձևավորման, եզրաբանության հարստացման. դրանց պետք է նպաստեն այդ առթիվ լույս տեսնող ոչ միայն երկրների թեզիսները, այլև առանձին մենագրությունները, հոդվածների ժողովածուները, ուր բոլոր հոդվածները, ցանկալի է, որ ունենան իրենց հայերեն տարբերակները, քանի որ հայագիտությունը առաջին հերթին հայերենագիտություն է, և նման նախաձեռնությունը՝ իբրև գործունեության ծրագիր, միտված է զարգացնելու այն և՛ նոր տեսություններով ու մեթոդաբանություններով, և՛ գիտական-թարգմանական հարստացված ապարատով և՛ եզրաբանությամբ՝ մեծացնելով նրա ասոցիատիվ դաշտն ու թափանցելիությունը այլ համակարգերում:

Այս համաժողովը, կարծում եմ, կունենա հայագիտության համար և՛ կենտրոնաձիգ, և՛ տարածական ուժ հատկապես միջազգայնացման առումով: Այս համատեքստում մենք լիահույս ենք, որ Ընկերակցության բոլոր 400-ից ավելի անդամները կդառնան իսկական մատենադարանցիներ և պարբերաբար կմասնակցեն մեր միջոցառումներին՝ միաժամանակ Մատենադարանի կայքի միջոցով ակտիվորեն օգտվելով մեր հարստագույն հավաքածուներից, որոնք արագորեն թվայնացվում են և ներդրվում համացանցային կայքում: Մեր ցան-

կուլթյունն է, և մենք դա կքննարկենք համատեղ, Մատենադարանի կայքում Ընկերակցությանը նվիրված հատուկ կայքէջ բացել: Մեր ցանկությունն է նաև նրա շարքերը համալրել Մատենադարանի նոր սերունդների ներկայացուցիչներով, որոնք արդեն կարևոր քայլեր են արել հայագիտության բնագավառում:

Ես ցանկանում եմ խոսել նաև հայագիտության այն կենտրոնաձիգ ուժի մասին, որ միացնում է, օղակում է մեզ բոլորիս: Մեր խնդիրն է պահպանել և զորացնել այն: Սակայն հաճախ, մեզնից անկախ, գոյանում է մերձգիտական մի տարածք, որ ոչ միայն գուրկ է այդ կենտրոնաձիգ ուժից, այլև շունի դրա ազդու գիտակցությունն անգամ:

Մի տեսակ մակաբույծի շրջիկ կերպար կարող է ստեղծվել, այն է՝ հայագետ՝ առանց հայերենի դուզն ինչ իմացության, միջնորդավորված, սնուցված միայն համացանցային տեղեկատվությամբ: Փառք Աստծո, դրա վտանգը առայժմ չկա, բայց կան մանրատման, տրոհման տենդենցներ, միտումներ, շատերը չեն շփվել դասական հայագիտության հետ, չեն օգտվում բնագրերից, ձեռագրաց մայր ցուցակներից ու մատենաշարերից:

Մասնավորաբար, շեշտել եմ ցանկանում Մատենադարանի «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց» և «Մատենագիրք հայոց» մատենաշարերը, որոնք ընդգրկվելու են համապատասխանաբար 35 և 70 հատորների մեջ: Դրանք օգնում են ոչ միայն մեր ձեռագրական-մատենագրական ժառանգության ամբողջացման, այլ նոր բնագրեր ի հայտ բերելու և գիտական շրջանառության մեջ դնելու գործին: Մենք ներմուծել և ներմուծում ենք դրանք Մատենադարանի կայքէջում որոնման ծրագրերով, իսկ սրանք հիմնարար են հայագիտության համար:

Վերջերս տպագրված և նախորդ հատորները, որոնք ցուցադրված են այսօր, գիտաժողովի մասնակիցները կարող են ստանալ Մատենադարանի գրադարանից:

Ի դեպ, այսօր նաև գրքերի յուրահատուկ շնորհանդեսի օր է, գրքեր, որ լույս են տեսել Հայագիտական ուսումնասիրությունների միջազգային ընկերակցության 13-րդ համաժողովի հրատարակչական ծրագրերի շրջանակներում: Դրանցից նշենք.

Ընկերակցության առաջին նախագահ, վաստակաշատ Մայքլ Սթոունի «Պարականոն բնագրեր եւ ավանդություններ» գիրքը, որի ընծայագիրը ցանկանում եմ կարդալ. «Նվիրվում է Մաշտոցի անվան Մատենադարանին, որը նպաստում է հայագիտության զարգացմանը ողջ աշխարհում» (Մայքլ Սթոուն):

«Մատենագիրք հայոց»-ի հերթական 2 հատորները,

«Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց»-ի 2 հատորները,

Գոհար Մուրադյանի «Հին հունական առասպելները հայ մատենագրության մեջ»,

Հրաչյա Թամրազյանի «Գրիգոր Նարեկացին և Նարեկյան դպրոցը»,

Հ. Հակոբյանի «Արցախի մանրանկարչությունը» եռալեզու պատկերագիրքը,



Վիգեն Դազարյանի Գիտնիսիոս Արեոպագոսու երկերի աշխարհաբար թարգմանությունը,

Աևոն Ավդոյանի «Ճանաչել զիմաստություն եւ զխրատ»,

Արմենուհի Աբգարյանի «Գրչարվեստ և պատկերների հմայք» գիրքը,

Վարդի Քեշիշյանի աշխատասիրությունները Արշակ Ալպոյաճյանի «Տպագրութեան արուեստը եւ Հայք» անտիպ երկը,

Համաժողովի թեզիսների ժողովածուն և այլ հրատարակություններ և գրքեր, որոնք լույս են տեսել Մատենադարանի միջոցներով և պետական պատվերով:

Սիրելի բարեկամներ,

Մատենադարանում վերջին տարիներին բուռն սերնդափոխություն է ընթանում, և մենք դրա մեջ ենք տեսնում հայագիտության զարգացման հեռանկարը:

Մեր բարեկամ հայագետների մեծ մասը տեղյակ է Մատենադարանի վերջին տարիների նորակերտմանը, որը մեր նորանկախ հանրապետության գիտամշակութային խոշորագույն ձեռքբերումներից է:

Կարծում եմ հենց դրա շնորհիվ է, որ ընկերակցության 13-րդ գիտաժողովը հրավիրվեց Մատենադարանում: Որոշումը կայացավ ընկերակցության Բուդապեշտի համաժողովում և ընդունվեց մեծ խանդավառությամբ:

Համաժողովի բոլոր մասնակիցները հնարավորություն կունենան մանրամասնորեն ծանոթանալու Մատենադարանի նորակերտված ամբողջական համալիրին, որը համապատասխանում է միջազգային բարձրագույն չափանիշներին:

Մատենադարանը ստեղծագործական եռուզեռի, ներքին շարժման, կառուցվածքային փոփոխությունների ընթացքում է: Եկող տարի Արցախում, Գանձասար վանական համալիրում հանդիսավորապես կբացվի «Մաշտոցի անվան Մատենադարան-Գանձասար» գիտամշակութային կենտրոնը՝ իբրև Մատենադարանի մասնաճյուղ: Այն կունենա իր գիտական և ցուցադրական մասը: Մոտ 5 տարի նախապատրաստում ենք ցուցանմուշները թանգարանային մասի համար, ուր ընդգրկված են ոչ միայն Արցախի գրչության կենտրոնները, այլ ողջ պատմական Հայաստանի տարածքում ստեղծված ձեռագրերի բարձրարվեստ ընդօրինակությունները: Մատենադարանում արդեն իսկ գործում է Արցախի մանրանկարչության ցուցասրահը, որ մշտապես այցելուների ուշադրության կենտրոնում է: Այն դիտել են հարյուր հազարավոր մարդիկ: Ցուցադրությունը հագեցած կլինի նաև Արցախ աշխարհին վերաբերող եզակի վավերագրերով և արխիվային փաստաթղթերով:

Հուրախություն մեզ, արդեն ընթացքի մեջ են շինարարական աշխատանքները և ցանկացողները, դեպի Արցախ մշակութային-ճանաչողական մեր այցի շրջանակներում, սկանառես կլինեն այդ ընթացքին: Ծրագիրը հովանավորում

է Մատենադարանի խոշոր նվիրատուներից՝ «Փյունիկ» համահայկական բարեգործական հիմնադրամը, ի դեմս համանախագահներ Գաբրիել Չեմպերճյանի և Լևոն Սարգսյանի: Մեր կարծիքով, սա պատմամշակութային խոշոր ծրագիր է, և համալիրի բացումը Հայոց Մեծ եղեռնի 100-ամյա տարելիցին՝ իբրև քաղաքական-մշակութային վերելքի, իբրև համաժողովրդական արարման ու զարթոնքի գորեղ փաստ՝ կհանրահռչակվի ի լուր աշխարհի:

Միրելի բարեկամներ,

Ես ցանկանում եմ հատուկ անդրադառնալ այս համաժողովի կայացման աշակիցներին և հովանավորներին. գլխավոր աշակիցն է ՀՀ Կրթության և գիտության նախարարությունը:

Հովանավորներից են՝

Հայ Բարեգործական Ընդհանուր Միությունը,

Գալուստ Կյուլպենկյան հաստատությունը, որոնց մշտական աջակցությամբ և հոգածությամբ Մատենադարանը լայնածավալ ծրագրեր է իրագործում,

«Ձեյ Թի Ինթերնեյշնլ Կուլթսեմբուրգ Էս-Էյ» ընկերության հայաստանյան ներկայացուցչությունը:

Մենք մեր երախտագիտությունն ենք հայտնում նրանց այս պատմական համաժողովի կայացմանն աջակցելու առթիվ:

Միրելի բարեկամներ, լինել հայագետ նշանակում է շփվել մեծ կենսադատի, հազարամյակների պատմության և մշակույթի հետ ու նաև հոգևոր գերզգայուն մի աշխարհի, ուր մտնողը չի կարող նվիրյալ չդառնալ, ինչ-որ շափով չլինել խենթ: Ուրեմն այդ սուրբ խենթությունը թող մեզ հետ լինի մեր ողջ կյանքի ընթացքում, զի «եղբայր եմք մեք»՝ միացած լինելության այս օղակով, որ կոչվում է հայագիտություն:

Բարի երթ մեր պատմական համաժողովին:

**ՎԱԼԵՆՏԻՆԱ ԿԱԼՅՈՒԱՐԻ**  
(ՀՈՒՄԸ ՆԱԽԱԳԱՀ)

**ՈՂՋՈՅՆԻ ԽՕՍՔ**

Մատենադարանի Տնօրէն մեծարգոյ Պարոն Հրաչեայ Թամրազեան, Հայկական Ուսումներու Միջազգային Ընկերակցութեան պատուարժան անդամներ, սիրելի գործակիցներ եւ բարեկամներ,

Ամենախոր գնահատանքի զգացումներով իմ ողջոյնս կը բերեմ ձեզի այս գիտա-ժողովի բացման հանդիսաւոր նիստին առթիւ: Այսօր, առաջին անգամ ըլլալով, Հայկական Ուսումներու Միջազգային Ընկերակցութեան համաժողովներէն մէկը Հայաստան տեղի կ'ունենայ: Վստահ եմ, որ բոլորդ ալ գիտակից էք, որ պատմական օրեր պիտի ապրինք: Ասիկա իրականութիւն դարձաւ, որովհետեւ Մատենադարանի տնօրէնը, որ վաղուց մեր ընկերակցութեան անդամ է, հաւատաց, որ կարելի էր ընկերակցութեան անդամները հրաւիրել այստեղ՝ հանդիպման սովորական եւրոպական վայրերէն քիչ մը հեռանալով Հայաստան գալու համար: Իր հաւատալը՝ մեր հաւատալը դարձաւ: «Մեր» բառը ըսելով կ'ակնարկեմ նախ եւ առաջ կոմիտէի անդամներուն: Երեք տարի առաջ ընկերակցութեան անդամներու ընդհանուր ժողովին ընթացքին, որ Բուզապէշտ տեղի ունեցաւ, Պարոն Հրաչեայ Թամրազեան առաջարկեց մեզի 13-րդ համաժողովը կազմակերպել Երեւան. առաջարկ մը, որ կոմիտէն ընդունեցաւ երախտագիտութեամբ եւ ոգեւորութեամբ:

Այս ժողովի մասնակիցներուն ճոխ թիւը ապացոյց մըն է, եթէ ատոր կարիքը կար, որ այդպիսի ոգեւորութիւն զգացողները միայն մենք չէինք: Ի հարկէ Հայաստան գալը միշտ յատուկ նշանակութիւն ունի մեզի՝ հայագէտներու համար: Հին ձեռագիրներու հովանիին տակ ըլլալը, աւելի եւս՝ ըլլալը յիշողութեան այն վայրին մէջ որ է Մատենադարանը, նոյնիսկ աւելի յատուկ եւ խորհրդանշական իմաստ ունի: Իսկ խորհրդանշականէն անդին, ի հարկէ պէտք է յիշել, որ բազմաթիւ են գիտական համագործակցութեան ծրագիրները, որոնք մեզ բոլորս կը կապեն Մատենադարանին:

Ինչ կը վերաբերի ինձի, եթէ ընդունիք, որ քիչ մը աւելի անձնական շեշտ մը տամ խօսքիս, մեծ հպարտութեամբ կ'ուզէի յիշել, որ Մատենադարանի քանի մը գործակիցներու՝ Արամ Թովչեանի, Գոհար Մուրադեանի, Էռնա Շիրինեանի հոյակապ աշխատանքին շնորհիւ փիլիսոփայական հրատարակութիւններու նոր շարք մը կրցայ հիմնել: Երրորդ հատորը հրատարակուելու վրայ է Գոհար Մուրադեանի ջանքերով<sup>1</sup>: Յե-

<sup>1</sup> Հատորն արդէն լոյս է տեսել. **David the Invincible, Commentary on Porphyry's Isagoge**, Old Armenian Text with the Greek Original, an English Translation, Introduction and Notes by **Gohar Muradyan** (*Commentaria in Aristotelem Armeniaca: Davidis*

տոյ, մեծ կարօտով կը յիշեմ հայկական ձեռագիրներու ցուցահանդէսը, որ Մատենադարանի եւ գուբերիոյ մէջ Հայաստանի դեսպանութեան օժանդակութեամբ կազմակերպեցինք ժրնեւ, քանի մը տարի առաջ: Ինչո՞ւ կարօտով: Աւելի յարմար բառ չեմ կրնար գտնել նկարագրելու համար այն հիանալի ձեռագիրները, որ գրեթէ ամէն օր կրնայի երթալ տեսնել, եւ որ հիմա, անշուշտ, իրենց տեղը գտան նորէն Մատենադարան վերադառնալով:

Բայց կարօտ բառը յատկապէս ուրիշ պատճառներով պիտի գործածէի: Կը մտածեմ այն հեռուոր օրերուն մասին, երբ, դեռ երիտասարդ ասպիրանտ ըլլալով, քանի մը ամիս անցուցի այստեղ, Երեւանի պետական համալսարանի հրաւերին շնորհիւ: Այն ատեն ոչ միայն համալսարան յաճախեցի, այլ նաեւ Մատենադարանի ձեռագիրները ուսումնասիրելու սկսայ: 1992-ին էր, աշունը: Երեւանցի բարեկամներս միշտ կը կրկնէն ինծի՝ «Ճգնաժամին միայն սկիզբն էր»: Բան չկար, կամ գրեթէ: Այն օրերը Պարոն Գէորգ Տէր Վարդանեան յաճախ շատ օգտակար տեղեկութիւններ եւ թելադրանքներ տուաւ ինծի՝ ներքեւը, ուր կը գտնուէին գանձերը: Իր ծանօթագրութիւնները կը գրէր պզտիկ գիրերով, թուղթի շնչին կտորներու վրայ: Այդ օրերուն բան չկար. թուղթն ալ հագուագիւտ եւ թանկագին բան մըն էր: Մտածեցի, որ ատիկա էր պատճառը:

Բան չկար, բայց բացարձակապէս բան մը պակաս չեղաւ բնաւ հոս՝ Մատենադարանը: Հայ մշակութային հարստութիւններուն նկատմամբ յարգանքը, ինչպէս նաեւ կամքն ու փափաքը այդ հարստութիւնները փոխանցելու անոնց, որոնք նոյն յարգանքը ունին: Զերմ ընդունելութեան այն աւանդութիւնը, որ Մատենադարանը միշտ ունեցաւ, նորէն յայտնի է այսօր, ու շատ առատաձեռն ձեւով:

Թուղթի այդ պզտիկ կտորները, որ միշտ շատ բան նշանակած են ինծի համար, հիմա իրենց տեղը զիջեցան այս նորագոյն եւ շքեղ շէնքին: Եւ եթէ այն ատեն թուղթի փոքր կտորները խորհրդանիշներն էին այն ճգնաժամին, որ Հայաստանը կ'ապրէր, այս շքեղ շէնքը նոր Հայաստանի մը պատկերն է:

Մատենադարանը ո՛չ միայն շքեղ շէնք մըն է: Մատենադարանը դարձաւ մանաւանդ կեդրոն մը, ուր արդիական արհեստագիտութիւններով կարելի է աշխատիլ եւ ձեռագիրները ուսումնասիրել, նաեւ կեդրոն մը՝ որ աշխատանք կու տայ բազմաթիւ հետազոտողներու, երբեմն շատ երիտասարդ: Մեր ընկերակցութիւնը շատ հպարտ է Մատենադարանին հետ գործակցութիւնը ունենալով, եւ կոմիտէի անունով կը մաղթեմ, որ նոր ծրագիրներ եւս կեանքի կոչուին մօտ ապագային: Մեր կողմէ ամբողջական օժանդակութիւն կը խոստանանք ձեզի այդ նպատակով:

Խօսքս չեմ ուզեր երկարել: Ուրիշ կարելոր բան մը եւս կը փափաքիմ աւելցնել սակայն: Սկիզբէն ի վեր մեր ընկերակցութիւնը յատուկ ուշադրութիւն եւ մեծ գնահատանք ցուցաբերեց Հայաստանի գիտական աշխարհին նկատմամբ: Հայաստանէն ե-

կող գործակիցներ միշտ հրաւիրուած եղան մեր գիտաժողովներուն եւ այս նպատակը միշտ առաջնահերթ մնաց ընկերակցութեան համար:

Երբ դեռ Հայաստանը խորհրդային հանրապետութիւն մըն էր եւ հետեւաբար ակադեմիական գիտական հաստատութիւնները հայ գործակիցներ, Հայկական Ուսումներու Միջազգային Ընկերակցութիւնը միշտ մեծ ջանք թափեց հայաստանցիներու մասնակցութիւնը ապահովելու նպատակով: Այդ աւանդութիւնը միշտ կը պահենք, բայց այս անգամ մե՛նք ենք ձեր հիւրը. եւ շատ բան կը պարտինք ձեզի:

Մեր ընկերակցութիւնը զանազան կարեւոր կապեր ունի Հայաստանի ուրիշ հեղինակաւոր հիմնարկութիւններու հետ եւս, ի միջի այլոց Ակադեմիային հետ: Կ'ուզէի օրինակ յիշել, որ ՀՈՒՄԸ իր Պատուոյ Անդամներու մէջ կը հաշուէ ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարեանը, որ միշտ մեծ ուշադրութիւն ցոյց տուած է Եւրոպական հայագիտութեան նկատմամբ: Անցեալ տարի Ակադեմիան համաժողով մը կազմակերպեց, որուն հրաւիրուած էի գեկուցում մը տալու Եւրոպական հայագիտութեան արդի կացութեան մասին եւ ուր կրցայ մեր ընկերակցութեան գործունէութիւնները յիշատակել:

Իմ խօսքիս վերջաւորութեան կը փափաքիմ նշել, որ ՀՈՒՄԸ Եւրոպայի հայագիտական ամենամեծ ընկերակցութիւնն է, ունի աւելի քան 400 անդամներ ոչ միայն Եւրոպայի, այլեւ ԱՄՆ-ի, Հայաստանի եւ Միջին Արեւելքի մէջ: Անոր գլխաւոր նպատակն է համախմբել այն մասնագէտները, որոնք լրիւ կամ մասամբ կ'աշխատին հայագիտութեան մարզին մէջ: Մեր անդամները կ'օգտագործեն համագործակցութեամբ եռամեայ ընդհանուր գիտաժողովներ կը կազմակերպեն, ինչպէս նաև որոշակի թեմաներու նուիրեալ գիտաժողովներ:

Առաջիմ ընդհանուր գիտաժողովներ կազմակերպուած են Լեյդենի, Տրիբի, Պրիւքսելի, Ֆրիբուրգի (Չուիցերիա), Պոլոնիայի, Լոնտոնի, Լուվեն-լա-նէօվի, Վիեննայի, Վիւրզբուրգի, Վիտորիայի, Փարիզի, Բուդապեշտի համալսարաններուն մէջ: Յատուկ նիւթերու մասին գիտաժողովներ տեղի ունեցան ժընեւի, Պրիւքսելի, Փարիզի, Աարուսի, Հելդելբերգի, Միլանի, Լեյդենի, Նէօշաթէլի, Վասսենարի, Լեչչի, Վենետիկի, Օքսֆորդի, Չալցբուրգի համալսարաններուն մէջ:

2003 թուականին սկսաւ “Armenian Studies 2000” կոչուած ծրագիրը, որուն նպատակն է ուրուագծել հայագիտութեան գլխաւոր արդիւնքներուն status quaestionis-ը այսօր: Այս գծով նախապատրաստական վեց գիտաժողով տեղի ունեցած է լեզուաբանութեան, բանասիրութեան, արուեստի պատմութեան, գրականութեան, պատմութեան եւ գաղափարներու պատմութեան մասին: ՀՈՒՄԸ ծրագիր ունի զանազան ճիւղերուն վերաբերեալ եօթը հատոր հրատարակել: Այս գիտական ծրագիրը ընդունուեցաւ Brill հրատարակչական տան կողմէ Handbook of Oriental Studies հեղինակաւոր շարքին մէջ: ՀՈՒՄԸ նոր շարք մը հիմնեց, որուն վերնագիրն է History of Armenian Studies Series: Առաջին հատորը բանասիրական նիւթերու նուիրուած է եւ արդէն լոյս տեսաւ իմ ղեկավարութեամբ, պրոֆ. Մալք Սթոունի համագործակ-

ցութեամբ: Պատիւ ունիմ այդ հատորը Մատենադարանին նուիրելու՝ մեր երախտագիտութիւնը յայտնելու համար<sup>2</sup>:

Շատ շնորհակալ եմ ձեզի: Գիտեմ որ ամէն ջանք թափեցիք, որպէսզի այս 13-րդ համաժողովը յաջողութեամբ պսակուի: Իմ խորունկ շնորհակալութիւնս կազմակերպիչ խումբի ամէն մէկ անդամին՝ Հրաչեայ Թամրազեան, Վարդի Քէշիշեան, Վահան Տեր-Ղեւոնդեան, Շուշանիկ Խաչիկեան, Սոնա Բալոյեան, Արա Խզմալեան: Իմ երախտագիտութիւնս կ'ուզեմ յայտնել նաեւ Հայկական Ուսումներու Միջազգային Ընկերակցութեան կոմիտէի այն գործակիցներուն, որոնք ինծի հետ մաս կազմեցին կազմակերպիչ մարմնին՝ Արմենուհի Դրոստ-Աբգարեան եւ Թեո վան Լինտ: Իմ ջերմ շնորհակալութիւնս կ'երթայ նաեւ այն հիմնարկութիւններուն, որոնք իրենց էական օգնութիւնը չզրկեցին մեզի, եւ մասնաւորապէս Գալուստ Կիւպէնկեան Հիմնարկութեան Հայկական համայնքներու բաժանմունքին, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան եւ Հայաստանի Հանրապետութեան Կրթութեան եւ գիտութեան նախարարութեան:

Իմ խորին շնորհակալութիւնս կը փափաքիմ յայտնել ձեր բոլորին, որ հեռաւոր վայրերէ գալով ձեր գիտուն եւ թանկագին մասնակցութիւնը ապահովեցիք այս գիտաժողովին:

Ձեր բոլորին կը մաղթեմ յաջող եւ արդիւնաբեր օրեր:

---

<sup>2</sup> *Armenian Philology in the Modern Era, From Manuscript to Digital Text*, Edited by **Valentina Calzolari**, University of Geneva. With the Collaboration of **Michael E. Stone** (Handbook of Oriental Studies. Section 8 Uralic & Central Asian Studies, Volume 23/1), Leiden & Boston, Brill, 2014, p. XVI + 596:



## ՀՐԱԶՅԱԹԱՄՐԱԶՅԱՆ

### ԳԻՈՆԻՍՏԻՈՍ ԱՐԵՈՊԱԳԱՅԻՆ ԵՎ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻՆ

Նարեկա վանքն ամենանշանավորն էր X դ. կառուցված վանական համալիրներից: Այստեղ դարի 40-ական թվականներին վանքի առաջնորդ Անանիա Նարեկացին հիմնադրեց Նարեկյան դպրոցը:

Նարեկյան դպրոցն իր հիմքում ունի մի գրական ընտանիքի պատմություն, որի ներկայացուցիչներն էին Խոսրով Անձևացին, Անանիա Նարեկացին, Գրիգոր Նարեկացին իր Սահակ և Հովհաննես եղբայրներով: Խոսրով Անձևացին Գրիգոր Նարեկացու հայրն էր, Անանիան՝ մոր հորեղբոր որդին:

Ըստ Ուխտանեսա և Ասողիկ պատմիչների, դպրոցն ուներ հարյուրավոր աստվածաբաններ, երաժշտագետներ և գրականագետներ («գրական գիտողներ», Ասողիկ):

Վերջին շրջանի բնագրագիտական հետազոտությունները զգալիորեն ընդլայնում են այս դպրոցի պահպանված գրական ժառանգության պատկերը, որն ընդգրկված է «Մատենագիրք հայոց» հիմնարար մատենաշարի 3 հատորներում: Իրանց շնորհիվ ի հայտ են եկել մեծաթիվ նոր բնագրեր, մեծարժեք երկեր, որոնք ներքին գաղափարական-ոճական շերտերով փոխներթափանցված են, ներշնչված են իրար՝ իբրև դպրոցին յուրահատուկ համաբնագիր:

Հենց այս նորագյուտ բնագրերի՝ հիմնականում Անանիա Նարեկացու երկերի քննությունը պարզորոշ դարձավ, որ Նարեկա վանական համալիրում ստեղծվել է հայ միջնադարի խոշորագույն դպրոցներից մեկը, որ նախատիպ է հանդիսացել հետագա հայ միջնադարյան բարձրագույն դպրոցների և համալսարանների համար<sup>1</sup>:

Նորահայտ երկերը հնարավորություն են տալիս պարբերացնել դպրոցի ձևավորման և զարգացման ընթացքի պատմությունը:

Նման խորապատկերում մեծապես աճում են դպրոցի գրական ժառանգության ուսումնասիրման հնարավորությունները, յուրաքանչյուր նոր բնագրային աղբյուր ու խորքային վերլուծություն շարժման մեջ է դնում, ի հայտ է բերում նոր իմաստային ոլորտներ, բառաշխարհներ, ներքին հղացքներ ու ճյուղավորումներ:

Դպրոցի գրական ժառանգությունը հառնում է իբրև միեղեն կառույց, որն անընդհատ ներքին շարժման մեջ է:

<sup>1</sup> Այս մասին տե՛ս Հ. Թամրազյան, *Անանիա Նարեկացի. կյանքն ու մատենագրությունը*, Եր., ԳԱ հրատ., 1986:



Այս երկերի նմանատիպ լուսաբանությունն աննախադեպ մեծացնում է նարեկացիագիտության տեսադաշտը, դպրոցի ներքին աղերսներից զատ կամուրջ կապելով անցյալի հոգևոր ժառանգության և հետագա դարաշրջանների հոգևոր դպրոցների և զորեղ գրական ընթացքների միջև, որի կարևորագույն օղակներից մեկը նարեկյան դպրոցն է:

**Շեշտենք մի հանգամանք:**

Այս բնագրագիտական հետազոտությունները տեսանելի են դարձնում նարեկյան դպրոցի պատմության ընթացքը: Դրանք վերստեղծում են բնագրերի ծագումնաբանության, ժառանգական կապերի, փոխներթափանցման ու փոխազդեցության, դրանց գոյավորման կենդանի ընթացքի պատկերը:

Մեր խնդիրն է եղել առաջին հերթին բացահայտել այդ ստեղծաբանական կենդանի ընթացքը, քանի որ այդ բնագրերը հաճախ շատ ավելի խոսուն են, հարաշարժ ու վերձանելի այս փոխառնչությունների, ասոցիատիվ կապերի ու հարասությունների ոլորտում, քան առանձին մեկնաբանությունների ընթացքում: Սրանցով ի հայտ է գալիս, եթե կարելի է ասել, բուն բնագրերի կենսագրությունը, որոնք ստեղծագործող անհատի ինքնարարման ընթացքի արտահայտություններն են:

Արդյունքում վերստեղծվում է մի համաբնագիր, որ նոր խորք, ծավալ ու տարածականություն է հաղորդում յուրաքանչյուր ստեղծագործությանը՝ մեծացնելով նրա իմաստային-խոհական դաշտը, ընդգծելով համընդհանուր կառուցի ճարտարապետությունը:

Այս համաբնագիրն իր ճյուղավորումներով ու ծավալումներով վկայում է ստեղծագործական հզոր պաթոսի, արարման մեծ տարերքի մասին, որ հատուկ էր նարեկյան դպրոցին: Այն վիթխարի ազդեցություն է թողել հայ մատենագրության, գիտության ու մշակույթի վրա՝ ընդհուպ մինչև նոր և նորագույն շրջանները՝ կանխորոշելով նրանց զարգացման զորեղ ընթացքները:

Դպրոցն իր գրական ժառանգությամբ գերակշիռ տեղ է զբաղեցնում X դ. հայ մատենագրության մեջ: Այն արևելաքրիստոնեական միստիկայի զորեղ և ինքնատիպ դրսևորումներից է, որում գերագույն տեղ է հատկացվում հոգևոր արվեստների տեսությանն ու ստեղծագործական փորձին: Սրանց հիմքում նաև հայրաբանական գրականությունն է և նորալատոնական փիլիսոփայությունը:

Նարեկյան դպրոցի ներկայացուցիչները դիտարկում են ստեղծաբանությունն՝ իբրև ներքին մարդու ինքնակատարելագործման ընթացք, ներքին կենսագրություն, հոգևոր ուղի, որի վերջնանպատակն է նմանվել Աստծուն՝ ըստ մարդկային կարողությունների:

Ամեն մի առանձին բնագիր, ստեղծագործություն՝ անկախ ժանրից, ձևեր է բերում ուղենշային, բացառիկ արժեք մարդու աստվածացման ճանապարհին, արտաքին կենսագրությունը դառնում է ներքին կենսագրություն՝ ներառվելով ստեղծաբանական ընթացքներում, ընդգրկվելով հոգևոր վերառաքման

շղթայի մեջ: Անգամ պատմական միջավայրը, իրադարձային էտնախորքերը՝ թափանցելով հոգևոր այդ ընթացքի մեջ՝ դառնում են ներքին կենսագրության փաստեր և իբրև այդպիսիք՝ վերարթնացնելով ու բորբոքելով ներքին մարդու հուզական շերտերը, «զղջման և արտասուլաց» շնորհը, վերածվում են պատկերաշարերի, փոխաբերությունների, վերառաքվող խոսքի, բանաստեղծության, որն այս դեպքում դառնում է նրանց գերագույն իմաստը: Ընդգծվում է բանաստեղծողի կերպարը, նրա գործի աստվածային նշանակությունը. նա ստեղծագործում է «ամենարուեստ» Արարչի հետ «համաշնչապէս», իր արարման ձիրքով նա «համացեղ է Աստծուն» (Գրիգոր Նարեկացի):

Նարեկյան դպրոցի գլխավոր արգասիքը բանաստեղծական արվեստի նորարարական տեսությունն է և դրա աննախադեպ զորեղ արտահայտությունները ստեղծաբանության ոլորտում, առավելապես Գրիգոր Նարեկացու ստեղծագործության մեջ:

Դպրոցի հիմնադիր և առաջնորդ Անանիա Նարեկացին իր խրատներում զարգացրել է հոգևոր արվեստների, մասնավորաբար բանաստեղծական արվեստի մի ամբողջական տեսություն՝ առաջ քաշելով և ընդգծելով անհատական սկզբի, անձնական փորձի, արվեստի հուզականության, արտահայտչականության, ընտրականության, պատճառա-հետևանքային կառուցիկության սկզբունքները: Իր տեսությունը նա կոչում է ընտրության արվեստ, զղջման և արտասուլուլու շնորհ: Սրանց հիման վրա նա ստեղծում է նաև բանաստեղծական աղոթքի իր նմուշները և մի ամբողջական քնարական բանաստեղծություն՝ «Վասն անցաւոր աշխարհիս», որոնք X դ. բանաստեղծության առաջին նմուշներն են:

Ըստ մեր առաջ քաշած տեսակետի, որոնք հիմնված են ձեռագրական տվյալների վրա, նա իր «Յաղագս զղջման և արտասուլաց» խրատը, որում գետեղված է իր նշված տեսությունը, գրել է իր աշակերտի՝ Գրիգոր Նարեկացու խնդրանքով:

Սա լիովին փոխում է մեր պատկերացումները X դ. հայ բանաստեղծության ձևավորման ընթացքի վերաբերյալ:

Անանիա Նարեկացու տեսության և փորձի հիմնական աղբյուրները, հայրաբանական գրականությունից զատ (Գրիգոր Աստվածաբան, Եվագր Պոնտացի, Եփրեմ Ասորի, Նեղոս), Դավիթ Անհաղթն ու Գիտնիսիոս Արեոպագացին են:

Այս ամբողջ փորձը, բնականաբար, Գրիգոր Նարեկացին ներառել է իր ստեղծագործության մեջ, հարստացնելով այն նոր շերտերով, ստեղծաբանական ընթացքը հասցնելով կառուցիկության ու կոթողայնության:

Եվ այս ասպարեզում նա գերագույն դեր է հատկացնում Գիտնիսիոս Արեոպագացու երկերին, որոնց զորեղ ազդեցությունները ակնհայտ են նրա բոլոր ժանրերի գործերում:

Գիտնիսիոս Արեոպագացու անունով հայտնի երկերը խոր ազդեցություն են թողել Գրիգոր Նարեկացու ստեղծագործության բոլոր շերտերի վրա: Այս

խնդրին մենք անդրադարձել ենք մեր ուսումնասիրություններում, հատկապես «Գրիգոր Նարեկացին և նորալատոնականությունը»<sup>2</sup> աշխատությունում, բայց ի հայտ են եկել բնագրագիտական և տեսական բնույթի նոր փաստեր, որոնց հարկ է անդրադառնալ:

Դիոնիսիոս Արեոպագագու անունով հայտնի երկերն ընդունված է համարել V-VI դարերի հեղինակի գործեր:

Դիոնիսիոս Արեոպագացին Պողոս առաքյալի աշակերտն էր և Աթենքի առաջին եպիսկոպոսը: Նրան վերագրվող այս երկերն առաջին անգամ հիշատակվում են 532 թ., Կոստանդնուպոլսի եկեղեցական ժողովում, ուր միաբնակները երկաբնակների հետ վիճաբանելիս, իբրև մեծ հեղինակության, հենվում են Դիոնիսիոսի երկերի վրա: Սկսած այդ թվականից՝ հեղինակի իսկությունը կասկած է հարուցել, և այդ վեճերը, հաճախ անպտուղ, շարունակվում են առ այսօր:

Փամանակակից ուսումնասիրողներից ոմանք, շեշտադրելով այս խորհրդավոր երկերի բուն էությունն ու նշանակությունը, դիտարկում են դրանք իբրև միեղեն մարդ — ստեղծագործություն, որի խորհրդավոր հեղինակը ներհյուսվել է սրբազան բնագրերի հետ:

Խորհրդավոր այդ բնագրերում քրիստոնեական աստվածաբանությունը ներհյուսված է նորալատոնական փիլիսոփայության հետ: Դիոնիսիոս Արեոպագացին ընդհանրական եկեղեցու սուրբ հայրերից է՝ հայրաբանության վերջին շրջանի ներկայացուցիչներից:

Նա նաև արևելաքրիստոնեական միստիկայի փիլիսոփայական-հայեցողական դպրոցի հիմնադիրն է համարվում, թեև նրա երկերն ընդգծված գեղագիտական բնույթ ունեն:

Հայ իրականության մեջ Դիոնիսիոսը համարվում էր եկեղեցու 12 գերագույն հեղինակություններից մեկը և, իբրև միաբնակության հետևորդ, օգտագործվում էր երկաբնակության դեմ դավանաբանական պայքարում: Նրանից բազմաթիվ քաղվածքներ կան «Կնիք հաւատոյ» դավանաբանական ժողովածուում:

Այս երկերը վիթխարի ազդեցություն են թողել Միջնադարի և Վերածննդի գեղագիտական մտքի և մշակույթի զարգացման ընթացքի վրա: Հայ մշակույթի վրա այդ զորեղ ազդեցությունը նկատելի է սկսած VIII դարից՝ դրանց թարգմանությունից անմիջապես հետո: Ինչպես հայտնի է, այս երկերը 718 թ. թարգմանել է Ստեփանոս Սյունեցին՝ V-VI դդ. հայ հունաբան դպրոցի ավանդների շարունակողը: Դիոնիսիոսի ազդեցությունն արդեն իսկ նկատելի է նրա երկերի վրա:

Այս երկերն իրենց կարևոր տեղն ունեն հայ ձեռագրական ավանդույթի մեջ: Դրանք այն եզակի բնագրերից են, որ մեզ են հասել հարյուրից ավելի ձե-

<sup>2</sup> Երևան, Նաիրի, 2004:

ուագրով (հիսունից ավելի օրինակ պահվում է միայն Մաշտոցի անվան Մատենադարանում):

Գիտնիստու Արեոպագոսու ազդեցությունն ակնառու է Նարեկյան դպրոցի բոլոր ներկայացուցիչների վրա: Ինչպես պարզվում է Անանիա Մոկացու թղթերից, նրա վրա էր հիմնվում Խոսրով Անձևացին՝ եկեղեցական-բարենորոգչական իր ծրագրերում<sup>3</sup>: Ինչպես նշեցինք, Գիտնիստու ազդեցությունն ակնհայտ է Անանիա Նարեկացու բանաստեղծական արվեստի տեսության և ստեղծագործական փորձի վրա, որից էլ այն անցել է Գրիգոր Նարեկացուն<sup>4</sup>:

Նրա դավանաբանական հայացքները մեծապես օգտագործվել են նաև X դ. հայ դավանաբանության մեջ: Դրանցից քաղվածքներ են գետեղված Անանիա Նարեկացու «Հաւատարմատ» դավանաբանական երկում, ուր Անանիա Նարեկացին նրան կոչում է «Սուրբ Գիտնիստու Արիսպագոսի՝ ավէնական փիլիսոփայ եւ գերակատար ճարտասան»<sup>5</sup>: Այս բնորոշումը հույժ հետաքրքրական է, քանի որ ակնարկ է հեղինակի ճարտասանական ոճի, նրա փիլիսոփայական երկերի գեղագիտական-գեղարվեստական ուղղվածության մասին, որին մենք կանդրադառնանք:

Վերջին շրջանում բնագրագիտական հետազոտությունների շնորհիվ Գրիգոր Նարեկացու մատենագրական ժառանգության պատկերն առավել ամբողջացավ ներառելով մի քանի մեծարժեք աստվածաբանական-դավանաբանական, մեկնողական-խորատական բնույթի երկեր, որոնցից մենք հիմնականում կանգ կառնենք «Ճառ սրբոյն Գրիգոր Նարեկացույ ասացեալ» երկի վրա, որը տրամախոսական-իմաստասիրական խորք ունի և համալրում է Գրիգոր Նարեկացու ստեղծագործության պատկերը՝ նոր լույս սփռելով նրա մի շարք կողմերի վրա:

Առավելապես այս երկում են ի հայտ գալիս Գիտնիստու Արեոպագոսու գորեղ ազդեցությունները Գրիգոր Նարեկացու աստվածաբանական-բանաստեղծական համակարգի վրա:

Գիտնիստուն իր երկերում զարգացնում է աղոթքի և օրհնաբանությունների մի ամբողջական տեսություն: Դրանց շարքում են աղոթասացական աստվածաբանությունն իր երկու ճառերի և անճառերի ուղղություններով, նշանական աստվածաբանությունը (պատկերի տեսությունը), էքստատիկ («տարփական») աստվածաբանությունը, խորհրդական աստվածաբանությունն՝ իրենց գոյաբանական, տիեզերագիտական, գեղագիտական շերտերով, որոնք ներթա-

<sup>3</sup> Մատենագիրք հայոց, Ժ հատոր, Ժ դար, եր., 2011, էջ 288-291 (այսուհետ՝ Մատենագիրք հայոց):

<sup>4</sup> Այս մասին տե՛ս Հ. Հ. Թամրազյան, Անանիա Նարեկացի. կյանքն ու մատենագրությունը, էջ 293-295, նույնի՝ Գրիգոր Նարեկացին և նորավատոնականությունը, էջ 12, 19, 21-30, 31-34 և այլն:

<sup>5</sup> Մատենագիրք հայոց, Ժ հատոր, էջ 571:

փանցել են Գրիգոր Նարեկացու ստեղծագործության խորին շերտերը: Եվ վերջապես, դրանք բոլորն ամբողջանում են օրհնաբանական աստվածաբանության մեջ, քանի որ Դիոնիսիոսն օրհնաբանությունն ու աստվածաբանությունը նույնացնում է երկրային ու երկնային քահանայապետության հիերարխիկ շղթայի մեջ, որը ներառում է Դիոնիսիոսի գոյաբանական և տիեզերաբանական տեսությունները:

\*\*\*

### Ա. Աղոթքի և օրհնաբանության տեսությունը Դիոնիսիոս Արեոպագոսի աստվածաբանական համակարգում

Դիոնիսիոս Արեոպագոսու տեսական համակարգում հատուկ տեղ է գրավում աղոթքի տեսությունը, որ նա համարում է անմիջնորդ, անմիջական աստվածահայեցողություն:

Աղոթքի տեսությունն իր հիմքում ունի երկնային և երկրային քահանայապետությունների, իմանալի և զգալի աշխարհների գոյաբանական կապի գաղափարը, ըստ որի այդ երկու աշխարհները գոյացել և գոյում են Աստծո նախախնամությունից և գոյակցված, էակցված են իրար: Զգալի, զգայական, երևելի աշխարհների միջոցով նրա նշաններով հնարավոր է դատել իմանալի, բանական, աներևույթ աշխարհների մասին:

Դիոնիսիոս Արեոպագոսու «Յաղագս աստուածալնոցն անուանց»<sup>6</sup> երկի III գլուխը նվիրված է աղոթքի՝ իբրև աստվածաբանության անհրաժեշտ, կարևորագույն մասի քննությանը: Այն խորագրված է «Զի՞նչ է աղալթից զարութին, եւ յաղագս երանելոյն Յեռոթէոսի, եւ յաղագս երկիւղածութեան եւ շարագրութեան աստուածաբանականի»<sup>7</sup>:

Այս գործն աղոթքի տեսություն է, որ կապվում է ավելի հոգեզգայական էքստազի, քան բանական հայեցողության հետ:

Զգայական աշխարհից վերառաքումը զուգորդվում է առաջին հերթին «սրբազան տուփման» (էքստազի), «աստվածային սիրո» զգացմունքի, հուզագեղման հետ, որ գերագույն նպատակ է «խորհրդագգած» անձի, միստիկի համար (Դիոնիսիոսն այն անվանում է «տուփական» (սիրային) աստվածաբանություն):

Անպղտոր, մաքուր մտքով կատարվող «ամենասուրբ» աղոթքի միջոցով միայն կարող է ներանձնացյալը, հայեցողն առավել մերձենալ գերագույն Բարուն՝ Աստծուն և նրա «բարեպետությանը», թափանցել բանական աշխարհը, որին այնուհետ միայն հաջորդում է առավել խաղաղ՝ բանական հայեցողու-

<sup>6</sup> Տե՛ս The Armenian version of the works attributed to Dionysius the Areopagite, ed. by R. W. Thomson, Lovanii, in Aedibus E. Peeters, 1987 (Corpus Scriptorum Christianorum Orientalium 448), (այսուհետ՝ Դիոնիսիոս), էջ 128-224:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 149-153:

թյունը, երբ հայեցողը «ուսանում է, սերտում է» աստվածային պատգամները՝ նրա շուրջը տարածվող էությունների աշխարհը:

Ըստ Գիտնիստուի՝ «առաջին հերթին և միշտ» աստվածաբանությունը աղոթքից է պետք սկսել: Նա աղոթքը համարում է անմիջնորդ աստվածաբանություն, որի միջոցով ձգտելով Աստուծուն, մերձենում և միանում ենք նրան՝ ոչ թե նրան ձգելով դեպի մեզ, այլ բարձրանալով առ նա:

Այդ պատճառով բուն աստվածաբանության սկզբունքները շարադրելուց առաջ նա անդրադառնում է աղոթքին, որի միջոցով, ասես լարի նման երկնային ճառագայթից քաշելով՝ բարձրանում ենք մինչև «բարձրագույն, բազմաճաճանչ ճառագայթների պայծառությունը», աստվածային լուսեղեն բխումների աշխարհը:

«Նւ որպէս... բազմալոյս ինչ լար ի յերկնից ծայրութենէն կախեալ ի վերուստ մինչ ի վայր, եւ բունն հարեալ զնմանէ ձեռն ձեռամբ փոփոխելով քարշել թուելով զնա, ոչ զնա ի մեզ քարշեաք, զի վերուստ կապեալն, այլ մեք էլանեաք առ բարձրագոյնսն բազմաճաճանչ ճառագայթիցն պայծառութիւն:

... Վասն որոյ եւ նախ քան զամենայն եւ լաւէտ քան զաստուածաբանութեանն աղաւթից սկսանել պարտ է...»<sup>8</sup>:

Երկնից կախված «բազմալոյս» այդ լարի պատկերն օգտագործված է Գրիգոր Նարեկացու՝ Հոբի գրքի մի հատվածի («Ո՞վ է Դա») մեկնության մեջ. «Իբրեւ հրեղեն լարս՝ զսուրբ զաղաւթս յերկինս առաքեսցուք...»<sup>9</sup>:

Այս հատվածում Գրիգոր Նարեկացին «բացում» է, հոգևոր էքստազի մեջ մեկնում է իր ստեղծագործության նորարարական տարերքը, որին կանդորդառնանք:

Ըստ Գիտնիստուի, աստվածային Հոգու այդ ներթափանցումների՝ «հայրաշարժ լուսերևության» շնորհիվ մարդկային հոգիները միավորվում և ձգտում են «աստվածարար պարզություն»:

Այս ավանդույթի նորովի արտահայտություններն են Գրիգոր Նարեկացու «լուսազեղուն» տաղերի մի շարք հատվածներ:

\*\*\*

«Յաղագս աստուածայնոցն անուանց» երկի III գլխի շարունակության մեջ Գիտնիստուը բացում է իր միստիկ աստվածաբանության սրբազան գաղտնիքներից մեկը:

Ըստ Գիտնիստուի, գերագույն ներշնչանքի պահին աղոթքը, օրհնաբանությունն ու աստվածաբանությունը ներհյուսվում են, դառնում են միեղեն աստվածահայեցողություն և հասցնում Աստծո հետ հաղորդության, կցորդության,

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 149-150:

<sup>9</sup> Մատենագիրք հայոց, հատոր ԺԲ, էջ 908:

որը մեծ միստիկներին հասցնում է հափշտակության, հիացման, էքստազի, և որի գերագույն արտահայտություններից են տեսիլքները: Մենք ուղղակի կապ ենք տեսնում Դիոնիսիոսի այս հատվածների և Նարեկացու անձնական տեսիլքների հիշատակությունների միջև, որոնք նրա հոգևոր պայծառացման, աստվածացման պահերն են, և որոնց նա բացառիկ նշանակություն է տալիս՝ իբրև գերբնության դրսևորումներ, ներքին մարդու պայծառացման պահեր:

Սա Դիոնիսիոսի աղոթքի տեսության գերագույն աստիճանն է, նրա միստիկ աստվածաբանության կիզակետը:

\*\*\*

Եվ իրոք, հետագա շարադրանքում պարզվում է, որ Հեոթեոսի՝ այդ աստվածային օրհներգուի «Աստվածաբանության սկզբունքների» հիմնական շերտերից է աղոթքի տեսությունը, որը հանդես է գալիս իբրև օրհնաբանություն կամ օրհնաբանության տեսություն, որին Դիոնիսիոսը բազմիցս և տարբեր ձևակերպումներով անդրադառնում է իր երկերի տարբեր զուլաններում և հատվածներում:

Հեղինակն ամենուրեք օգտագործում է օրհներգության, օրհնաբանության ժանրին հատուկ բառապաշար և ճարտասանական բարձրարվեստ ոճ, որը հատուկ շեշտում է Անանիա Նարեկացին. «Դիոնիսիոս Արիսպագացի՝ աթենական փիլիսոփայ է և գերակատար ճարտասան»: Դիոնիսիոսի երկերի այս յուրահատուկ բառապաշարը մեծապես ազդել է և՛ Անանիա Նարեկացու, և՛ Գրիգոր Նարեկացու վրա: Այդ ազդեցություններն ի հայտ են գալիս հատկապես նրանց ներբողներում:

Գեղագիտական-գեղարվեստական այս շերտը, ճարտասանական այս արվեստն ու յուրահատուկ բառագանձը, որ Դիոնիսիոսի աստվածաբանության էական կողմերից է, խորապես ընկալել, ստեղծագործաբար յուրացրել ու ծավալել է Գրիգոր Նարեկացին:

### **Աղոթքն ու օրհնաբանությունն իբրև Դիոնիսիոսի երկերի ներքին կառուցվածքային շերտ ու խորհային հղացք**

Դիոնիսիոսն իր «Յաղագս աստուածայնոցն անուանց» երկը հղացել է իբրև օրհնաբանությունների շարք՝ ձոնված Արարչին և նրա արարչագործությանը, մարդուն ու մարդկային հանճարին, օրհնաբանություններ, որոնք ներհյուսված են ամենաբարդ ու խրթին, հաճախ գաղտնաձածուկ աստվածաբանական բնագրերին: Դրանք տարփողում են Աստծո արարչագործության հրաշքը, աստվածայինով ներթափանցված ողջ տիեզերքը, որ զեղուն է սիրով և անընդհատ շարժման մեջ է:

Անընդհատ շարժման մեջ են նաև զարմանալի այս բնագրերը, որոնք ներթափանցել են Գրիգոր Նարեկացու երկերի մեջ, և նրանցով միջնորդավորված, «շաղկապված և էակցված» տիեզերական շրջապտույտը դառնում է վերժամանակյա ստեղծաբանություն:

Նման տեսանկյունից դիտարկելով՝ Գիտնիստուի երկերում ի հայտ է գալիս ներքին մի կառույց, որ թույլ է տալիս նրա միատիկ տեսությունը, եթե ոչ ամբողջությամբ, ապա հիմնական մասերով, ընկալել իբրև համապարփակ աղոթքի տեսություն, քանի որ աղոթքը, օրհնաբանությունը, ըստ էության, նրա աստվածաբանական համակարգի, աստվածաճանաչողության սկիզբն է, միջոցն ու նպատակը: Եվ աղոթքի ժանրի մեջ են ներառվում նաև օրհնաբանությունը, փառատրությունը, խորհրդավոր միատիկ ներսուզումները և մտահայեցումները, որոնք արդյունք են աշխարհն իբրև աստվածային անվերջ հղացման, լուսեղեն արարչագործության ծիր, անվերջ բխում և շրջապտույտ ընկալելու գիտնիստության գաղափարի, ըստ որի արարման գերագույն ներշնչանքի պահին մարդն էակցվում, միախառնվում է աստվածային ոլորտներին, աստվածանում է ըստ մարդկային կարելիության ու կարողության:

Գիտնիստուն աղոթքն ընկալում ու ներկայացնում է իբրև անմիջական աստվածահաղորդության և աստվածահայտնության արվեստ և գիտություն, իբրև յուրատեսակ առաջին աստվածաբանություն, որի միջոցով աղոթողը կամ աստվածաբանողը բարձրանում է երկնային աստիճանակարգերով: Նա շեշտում է աղոթքի նշանակությունը, մշակում նրա տեսությունը: Եվ իր ողջ աստվածաբանական համակարգը նա ներառում է այս շղթայի մեջ՝ իբրև վերառքման աղոթք, սիրազեղուն, էքստատիկ օրհնաբանություններ և հիմներ, և, իբրև բանական հայեցողության բարձրագույն վիճակներ ու ներսուզումներ՝ կատաֆատիկ (ճառելի, հաստատող) և ապոֆատիկ (անճառելի, ժխտող) փառատրություններ, որոնք, ըստ էության, աղոթքի ձևանմուշներ ու օրինակներ են:

Ճառելի աստվածաբանությանն է նվիրված «Յաղագս աստուածանոցն անուանց», անճառելի՝ «Յաղագս խորհրդականի աստուածաբանութեան» երկը:

Այս շղթային է անմիջականորեն ներհյուսվում Գիտնիստուի պատկերի տեսությունը՝ «նշանական աստվածաբանությունը», որի զորեղ ազդեցությունը նույնպես ակնառու է Նարեկյան դպրոցի և հատկապես Գրիգոր Նարեկացու ստեղծագործության վրա:

Բոլոր այս օրհնաբանություններն ու փառատրությունները նախօրինակ են հանդիսացել Գրիգոր Նարեկացու ստեղծագործության համար: «Մատեան»-ի շատ դրվագներ իրենցից աստվածային գերանունության շարքեր են ներկայացնում:

### **Խորհրդական աստվածաբանությունը. ապոֆատիկ և կատաֆատիկ օրհնաբանության սկզբունքներ:**

Գրիգոր Նարեկացու վրա զորեղ ազդեցություն է թողել հատկապես Գիտնիստուի «խորհրդական աստվածաբանությունը», որն իր ողջ փիլիսոփայական-խորհրդապաշտական ծավալումներով և առեղծվածային խորքերով նույնպես ներկայանում է իբրև աղոթքի, օրհնաբանության տեսություն կամ ներածություն:



Այդ մասին են վկայում «Յաղագս խորհրդականի աստվածաբանութեան» երկի II ենթագլխի խորագիրն ու բովանդակությունը, ինչպես նաև մնացած բոլոր գլուխները, որոնք բացահայտում են, թե ինչպես պետք է կառուցել աղոթքն ու օրհնաբանությունը և միաժամանակ տրվում են դրա օրինակները:

Իր այս խորհրդավոր երկասիրությունը, իր իսկ սկզբունքի համաձայն, նա սկսում է Սուրբ Երրորդությանն ուղղված սրբազան աղոթքով:

Սուրբ Երրորդությունը ներկայանում է որպես սրբազան խավար, «գերալոյս մէզ», որի անմատուց լույսը՝ «գերալուսությունը» պատված է «թաքնախորհուրդ լուսության միգով», և որին կարելի է հասնել «անաչա իմացութեամբ»:

Աղոթքի ընթացքում ներհյուսվում են էքստատիկ աստվածաբանության բոլոր աստիճանները, և էքստազը կայանում է գերագույն էության անըմբռնելի ընկալմամբ՝ հիացման, զարմանքի, հափշտակության վիճակում. «Անըմբռնեալ եւ արձակ, եւ մաքուր զարմացմամբն առ գերագոյ ճառագայլին աստվածալուսոյն խաւարի համբարձցիս՝ զամենայն թողեալ եւ յամենայնէ ի բաց լուծեալ»<sup>10</sup>:

### **Օրհնաբանական աղոթքը, ապոֆատիկ և կատաֆատիկ աստվածաբանությունը Գրիգոր Նարեկացու երկերում**

Արեոպագիտյան աստվածաբանության այս վերին մակարդակը՝ խորհրդական աստվածաբանությունը, ինչպես և նախորդ աստիճանները, արտահայտված է Գրիգոր Նարեկացու ստեղծագործության մեջ: Գրիգոր Նարեկացու երկերում ևս հանդիպում է Աստծո՝ իբրև սրբազան խավարի, անմատուց լույսի ըմբռնումը, որի աղբյուրն, անկասկած, Դիոնիսիոսն է:

Ինչպես նշել ենք, իր այս երկում Դիոնիսիոսը տալիս է հաստատող և ժխտող աստվածաբանության (այսինքն՝ օրհնաբանական աղոթքի) նման շարքեր, որ հետագայում ուղեցույց և ընդօրինակման առարկա են դարձել միջնադարյան միստիկ բանաստեղծների համար:

Արեոպագիտյան ապոֆատիկ և կատաֆատիկ աստվածաբանության, օրհնաբանական աղոթքի այս եղանակներն ի հայտ են գալիս առավելապես Գրիգոր Նարեկացու «Մատենանում», ուր կան նման ամբողջական շարքեր ու գլուխներ: Նրա բանաստեղծական բնագրերում այս երկու եղանակներն ավելի հաճախ հանդես են գալիս միահյուսված:

Գրիգոր Նարեկացին արդեն իսկ իր սկզբնական շրջանի գործերից մեկում՝ «Վասն ուղիղ հաւատոյ եւ մաքուր վարուց առաքինութեան» խրատում իրար է հյուսում արեոպագիտյան բնագրերում հանդիպող ժխտողական ու հաստատող, դրական աստվածաբանության «գերանունությունները»:

<sup>10</sup> Դիոնիսիոս, էջ 224:

«Եւ արդ, այս է ճշմարիտ հաւատոյ դաւանութիւն: Հաւատալ զԱստուած Հայր՝ էութիւն ճշմարիտ, գոյ կատարեալ, անեղ, անսկիզբն, անժամանակ, անպատճառ, անիմանալի, անտեսանելի, անճառելի, անհաս, պարզ, անզնին, անկէտ, անսահման, աներբ, անուր, անբովանդակելի, անալլալելի, անփոփոխ, գերաբուն, գերագոյ, գերալոյս, գերանճառ»<sup>11</sup>:

Ահա մի հատված «Մատենանից».

Փառաւորեալ, անքնին, ահեղ, ահարկու,  
Սոսկալի, հզար, սաստիկ,  
Անտանելի, անմերձենալի, անըմբռնելի, անիմանալի,  
Անճառելի, անտեսանելի, անզննելի, անշաւշափելի,  
Անորոնելի, անսկիզբն, անժամանակ,  
Անշամանդազ գիտութիւն, աներկեւան տեսութիւն,  
Ճշմարիտ էականութիւն, բարձր եւ խոնարհ,  
Արհնաբանելի գոյութիւն, անստուեր ծագումն,  
Ամենափայլ ճառագայթ, խոստովանեալ լոյս,  
Անտարակոյս վստահութիւն, անտարտամ հանգիստ,  
Անյեղլի կնիք, անսահմանելի տեսիլ, վկայեալ անուն,  
Ճաշակ քաղցրութեան, բաժակ բերկրութեան,  
Հաստիչ հոգւոց հաց, աւտար մթութեանց սէր, աներկբայ խոստումն,  
Ծածկոյթ ցանկալի, զգեստ անկապուտ...

(Բան Գ, Ա)

Աստվածաբանական նշված եղանակներն այս հատվածում հանդես են գալիս զուգորդված, համատեղ ծառայելով նույն նպատակին: Նարեկացին հիշատակում է հաստատող կատաֆատիկ «աստվածանունության» կերպը՝ «դրականապէս անունագրութեամբ»:

«Մատենան»-ի բազմաթիվ գլուխներում և հատվածներում կան գոհաբանական աղոթքի շարքեր, ուր միանում, միահյուսվում են նշանական, տարփողական և խորհրդական աստվածաբանությունները, որոնք Նարեկացին անվանում է «մաղթողական բանաստեղծութիւն, գոհաբանական աղերս, գոհութիւն՝ խառնեալ ընդ աղերս, երգաձայնութիւն» և այլն:

Նման օրհնաբանությունները սոսկ վերացական թվարկումներ չեն, մտահայեցողությանն այստեղ միախառնված է նաև զգացմունքային-հոգեբանական շերտը, որով նրանք ներհյուսվում են ջերմեռանդ աղոթքին՝ վերածվելով աղերս-մաղթանքների, որոնցում նշմարվում է Աստծո հետ անմիջնորդ կապի, այդ միութեան կենդանի զգացողության հարակալող տեսիլքը: Եվ այստեղ էական են դառնում այն բնորոշումները, որոնք նշում են այդ կապը. Աստծո

<sup>11</sup> Մատենագիրք հայոց, հատոր ԺԲ, էջ 1024:

էական հատկանիշների մեջ շեշտվում են նրա ազդեցութեան, ներգործութեան, շնորհատվութեան, աղտթողի հետ անընդհատ կապի, հրաշագործութեան արարչական գործվելունները, արվեստի հրաշքները: Աստված համարվում է «համբուրելի խոսք, սքանչելի ազդում» (ԻԼ, է), «Բարձրութեան պատկեր, բերկրութեան բարբառ» (Մէ, Ա):

Այստեղ դարձյալ Նարեկացին խոսում է աստվածային ներշնչանքի, շնորհված խոսքի մասին, որ բանաստեղծի շուրթերի շարժարանն է, նրա ազդեցութեամբ են ձեռքերն առ բարձրյալը բարձրանում:

Աստված ներկայանում է իբրև գերագույն արվեստագետ, ամենարվեստ Արարիչ, որն արարման շնորհով է օժտում նաև բանաստեղծին, մասնակցում նրա ստեղծագործությանը:

Կի՛ց նուագաւք այսր մատենի...

Եւ գերեսս կերպի պատկառեցելոյս նշանաւ խաչիդ զաւրացո՛ւ:

Միասցի՛ կնիքդ լուսոյ ի գեղ տեսակիս...

Արուեստդ հրաշից ի ճակատիս շո՛ւք նշանակեսցի:

(ԿԵ, Բ)

Աստծո բարձրագույն անվանումներին ավելանում են «ամենահնար արվեստագետը, երկնային ճարտարապետը, արծաթագործը» (Բան ԿԹ, Ա), «ամենարվեստը, վարդապետը» (ՀԶ, Բ), «մատենագիրը, որը գրում է բանաստեղծի հոգու ոսկեղեն տախտակի վրա» (ԼԳ, Փ):

Այսպես, այս թվարկումների ընթացքում, որոնք արթնացնում, սրում են բանաստեղծի միատիկ աստվածագացողությունը, շարունակվում է նաև նրա անմիջնորդ գրույցն Աստծո հետ: Սահմանները ջնջվում են, բանաստեղծի եսը միախառնվում է Աստծուն, Աստված ինքն է, ասես, արարել «Մատեան»-ը, և բանաստեղծը խնդրում է նրան՝ հանուն իր հանդեպ տաժած սիրո, ողբերգության մատչանում հիշել և ներել նաև թշնամիներին:

Դիոնիսիոսի խորհրդավոր բնագրերը սնել են Նարեկացու բանաստեղծական աշխարհը՝ զարկ տալով բանաստեղծական անանց երևակայությանը, մտքի թռիչքին:

Խորհրդավոր մտքերի, պատկերների ստեղծագործական զորեղ ներուժն արտահայտված է Գրիգոր Նարեկացու երկերում:

Ավելին, դրանք էական ազդեցություն են թողել նրա պոետիկայի և բառաշխարհի կազմավորման և զարգացման վրա, սնելով նրա բառաստեղծման տարերքը, մղելով նրան անընդհատ նորաբանությունների:

Այդ խորհրդավոր բանաձևումները, բանական աշխարհի վերամարմնավորումներն ու տեսիլքները Գրիգոր Նարեկացու առաջմղիչ գաղափարները, ստեղծագործական սկիզբներն են հանդիսացել: Դրանք նաև բանալիներ են՝ բանաստեղծի խորհրդավոր աշխարհը թափանցելու համար:

Այդ խորհրդավոր բնագրերը, նրանցում արծարծված գաղափարները ծառայում են հեղինակի ստեղծագործական խնդիրներին, երկի բուն նպատակին, ներհնումը, իբրև օրհներգություն և փառատրություն, աղոթասացություն՝ օրհնաբանական աստվածաբանություն՝ ըստ Գիտնիստուի: Այդօրինակ հատվածներն ու թվարկումները՝ մտային հայեցողությունից, մտավոր վերառաքումից բացի, Նարեկացու բնագրերում ունեն նաև հուզական-զգացմունքային ազդակների գործառույթ. դրանք նախապատրաստում են բանաստեղծին հասնելու հոգևոր վերառաքման վերին օղակին՝ էքստատիկ աստվածաբանությանը, որը ներկայացնում է հոգևոր զգացմունքի բարձրագույն աստիճանը: Պատահական չէ, որ հաճախ այդ աստվածանունության շարքերին հաջորդում են բանաստեղծի ամենախիտիմ խոստովանությունները և բանաստեղծական ներքին փորձի բացահայտումները:

Այսպիսով, Գրիգոր Նարեկացու երկերն ի հայտ են բերում նրա ստեղծագործության խոր աղերսներն արեոպագիտյան էքստատիկ աստվածաբանության բոլոր շերտերի հետ, որոնք լիակատար արտահայտություն են գտել նրա բանաստեղծության ծիրում: Այդ աստվածաբանության ստեղծագործաբար յուրացումը սկսվել էր արդեն Խոսրով Անձևացուց, յուրովի զարգացում ապրել Անանիա Նարեկացու գործերում ու բանաստեղծություններում, սակայն առավել ամբողջական, համապարփակ կիրառվել է Գրիգոր Նարեկացու «Մատեան»-ում ու սաղերգության մեջ:

#### «Ճառ սրբոյն Գրիգորի Նարեկացոյ ասացեալ»

Գիտնիստու Արեոպագոս տեսական համակարգի զորեղ ազդեցությունը նկատելի է հատկապես «Ճառ սրբոյն Գրիգորի Նարեկացոյ ասացեալ» երկի վրա, որի բնաբանն է «Հայեա՛ց յանձն քո...»: Այն սկսվում է «մեծն Գիտնիստուի» մի ընդարձակ քաղվածքով, որ նրա ողջ փիլիսոփայական-գոյաբանական համակարգի մի խտացված բանաձևումն է: Գրիգոր Նարեկացին այդ համակարգը ներառում է գոհաբանական, օրհնաբանական աղոթքի մեջ: Իր ճառի մի այլ հատվածում, որն ուղղակի առնչվում է վերոնշյալի հետ, նա խոստովանում է, որ Սուրբ Հոգուց շնորհ, լեզու է ստացել՝ բարբառելու աստվածային բոլոր գոյերի, տարերքների և ողջ մարդկության փոխարեն: Սա բխում է Գիտնիստուի նշված ուսմունքից, ըստ որի աստվածային ողջ նվիրապետությունը, ողջ տիեզերքը՝ աստվածային էակներից մինչև բնության ամենաչնչին արարածները՝ ներթափանցված են աստվածայինով:

Զուգադրենք «Ճառի» նշված երկու հատվածները.

«Գութ արարչական խնամոցն Աստուծոյ եւ անդունդք սեռն եւ յստակ սիրոյ նորա եւ անմեկնելի եւ անորոշելի եւ յարարելոցն յիւրմէ՛ լուսաշարժ եւ քարքրելիս ստեղծելոցն յառաջնոցն մինչեւ ի հուսկ յետին յարարածս, որք բոլորովին անշունչք եւ անշարժք. ըստ մեծին Գիտնիսեայ Արիսպագացոյ՝ յոր

հայել որ ի խաւսնոց մտաւորաց՝ ոչ է արժան յուսահատութեամբ զինքն արտա-  
քոյ դնել մասին այցելութեան Աստուծոյ...:

Յաղագս որոյ քնդ իս առեալ զբոլոր գոյսս ի մասունս բաժանելով եւ ի  
ստիքս<sup>12</sup> կոտորելով, քան զկիտուածս մանրութեան հատոյ մանանխոյ, տալով  
բնաւիցն խաւսուն լեզուս՝ եւ ամենեքումբ գոհանամբ զնմանէ, որ ետ ինձ ի վա-  
լելս գայս ամենայն ...՝ առնուլ գաղաւթս եւ գաւրհնութիւն աղեկիզեալ սիրալի,  
եւ աստուածագութ խնամոցն... Եւ ջեռուցեանել զջերմ եւ զեռանդնոտ սիրտս  
ձեր՝ բորբոքել սիրով, զոր պարտին արարածք՝ Արարչին...»<sup>13</sup>:

Բանական մարդն անմասն չէ այդ աստվածային, տիեզերական արարչա-  
գործությունից՝ աստվածային էություններից մինչև հետին արարածները, և  
դեպի այն պետք է ուղղվի նրա հայեցողությունը, և այդ հայեցողության, աստ-  
վածատուր ձիրքի, խոսքի շնորհիվ բանաստեղծն աղոթում և օրհնաբանում է  
Աստծո խնամակալության տակ գտնվող բոլոր գոյերի, բնության տարերքների,  
արարածների և համայն մարդկության փոխարեն, որոնք Աստծո «լուսաշարժ և  
բարեբուղխ» ստեղծագործության արդյունք են:

Վերոնշյալ հատվածների հիմքում Դիոնիսիոսի հիերարխիկ տեսությունն է,  
որը էական է նրա գոյաբանական համակարգում. ըստ դրա՝ աշխարհում ամեն  
ինչ կապված է Առաջնամիակի՝ Աստծո հետ, նրա ստեղծագործությունն է և  
լուսեղեն բխման արդյունք լինելով գտնվում է հավերժական շրջապատւյտի  
մեջ՝ հրեշտակներից մինչև ամենահետին արարածները: Այս տեսությունն իր  
գեղարվեստական մարմնավորումն է գտել հատկապես Գրիգոր Նարեկացու  
տաղերում: Այս առումով Գրիգոր Նարեկացին մեծ նորարար է, քանի որ ոչ մի-  
այն ստեղծագործաբար յուրացրել, այլև կիրառել է այդ տեսությունն իր ստեղ-  
ծագործական հղացքների մեջ՝ իբրև միատիկ բանաստեղծ հասնելով զարմա-  
նալի խորքերի ու ներթափանցումների:

Ինչպես տեսնում ենք, «Ճառում» ևս աստվածաբանությունը, փառատրու-  
թյունն ու օրհնաբանությունը շաղկապված են իրար իբրև միեղեն հորինվածք  
և բնագիր: Սրա վառ արտահայտությունները երևան են գալիս Գրիգոր Նարե-  
կացու տաղերում, «Ճառ Լուսոյ խաչի» ներբողում, Հոբի գրքի «Ո՛վ է Դա»  
հատվածի բանաստեղծական մեկնություններում:

Գրիգոր Նարեկացու բանաստեղծական տեսիլքն, ըստ էության, ներշնչված  
է Դիոնիսիոսի «զարմանահրաշ» ներթափանցումներով և հիերարխիկ տեսու-  
թյամբ:

### «Ճառ լուսոյ խաչի»

Վերոնշյալ «Ճառում» արժարժված գաղափարներն իրենց գեղարվեստա-

<sup>12</sup> Առիք բառը, ի թիվս այլ իմաստների, բնության տարբ և տարեբ է նշանակում (տե՛ս նոր  
բառգիրք Հայկազեան լեզուի, Կ. II, էջ 746):

<sup>13</sup> Մատենագիրք հայոց, հատոր Ժ, էջ 1040, 1042:

կան մարմնավորումն են գտել նաև Նարեկացու «Ճառ լուսոյ խաչի» ներբողում, որի նախադրույթյան մեջ Գրիգոր Նարեկացին մեկնաբանում է Նսայու մարգարեության մի հատվածը. «Ձերկին աթոռ իմ և զերկիր պատուանդան ուտից իմոց» (Նս. ԿԶ. 1), փորձելով բացահայտել պատկերի «երկկերպեան» իմաստը. այն է՝ ինչպես են մարդու մեջ միացել «հողագանգուած միեղենութիւնն» ու «անյաւղական եւ լուսանշոյլ պայծառ պարզութիւնն», այսինքն՝ աստվածային էությունը:

<p>1. Իբրեւ ելեալ երթայր Պաւղոս յԻկոնիոն քաղաք ... 5. Եւ իբրեւ եմուտ Պաւղոս ի տուն Ոնեսիփորայ՝ ...: Մատեալ Պաւղոս եւ սկսաւ խաւսել զբանն Աստուծոյ ... 7. Եւ մինչ Պաւղոս զայս ամենայն զմեծամեծս Աստուծոյ խաւսէր ի մէջ առ տնին Ոնեսիփորայ, Թեկզ անուն կոյս մի դուստր Թեկզեայ՝ զոր խաւսեալ էր առն ումեմն, որում անուն էր Թեմերոս, եկեալ նստէր առ պատուհանի միող, որ մերձ էր ի տանիս նոցա, եւ լսէր զբանն Պաւղոսի, զոր խաւսէր վասն սրբութեան. եւ ամենեւին ոչ մեկնէր ի պատուհանէ անտի. զտիւ եւ զգիշեր լսէր զաղաւթն Պաւղոսի եւ զարմանայր ընդ հաւատս նորա.</p> <p>8. ... ես ընդ այս զարմացեալ եմ, թէ զի՛արդ կոյսք իմաստունք այնպէս վաղվաղակի զհետ երթան շարաշար եւ պատիր բանից: ... 9. Եւ Թեկզ եւս պատեցաւ զնովաւ իբրեւ զազբն զոստայնիւ եւ ըմբռնեցաւ ի նոր իմն ցանկութեան ...:</p> <p>18. Եւ Թեկզ ի նմին գիշերի... չոգաւ նստաւ առ ոտսն Պաւղոսի եւ լսէր ի նմանէ զմեծամեծս Աստուծոյ: Եւ Պաւղոս ոչինչ էր տրտում, այլ համարձակ յայտնի զամենեսեան որ էին առ նմա՝ ուրախ առնէր պատուիրանան Աստուծոյ. եւ Թեկզ մեծաւ ուրախութեամբ</p>	<p>4. Եւ ինքն սուրբ առաքեալն... հասանէր յաշխարհն Հայոց առ թագաւորն Սանատրուկ... յապարանս արքունի... Եւ քարոզէր անդ զբանն կենաց: ... եկեալք բազումք յարքունական դրանէն առ սուրբ առաքեալն, լսէին ի նմանէ զքաղցրաբարբառ քարոզութիւն աւետարանին ...: Եւ տեսեալ զամենայն սքանչելիս բազումք հաւատացին ի Քրիստոս (էջ 13):</p> <p>5. Յայնժամ եկեալ դուստր թագաւորին, որում անուն էր Սանդիստ, որ էր ի տիոց աղայ, գեղեցիկ տեսեամբ եւ վայելուչ երեսօք, որ ոչ գտանէր համեմատ նմա ի վերայ երկրի: Եւ հասեալ ի գիշերի առ սուրբ առաքեալն՝ լսէր ի նմանէ զբանն քարոզութեան, ... եւ անկանէր առաջի սուրբ ոտից նորա, եւ արտասուօք համբուրէր, եւ ուսանէր ի նմանէ զբազում աւուրս. եւ ոչ թողոյր զնա զտիւ եւ զգիշեր, եւ այնպէս միացեալ բեւեռէր ի սէրն Քրիստոսի Աստուծոյ մերոյ (էջ 14):</p> <p>Եւ տեսեալ... առաքելոյն զջերմեռանդն գուլթ սիրոյ նորա առ Քրիստոս, առեալ մկրտէր զնա յանուն Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն սրբոյ: Եւ եղեւ նշան լուսեղէն յերկնից ի վերայ սրբոյ կուսին, եւ ի մէջ լուսոյն ձայն երկնաւոր զուարթնոցն (էջ 14): 7. ... Եւ եկեալ առ սուրբն Սան-</p>

<sup>12</sup> Տե՛ս վերը, ծանօթագրութիւն 3:

<p>համբուրեր գկապանս եւ զշղթայսն զոտիցն եւ զձեռացն Պաւղոսի:</p> <p>34. ... իբրեւ ետես Թեկղ թէ բազում գազանս արձակեն նմա, տարածեաց զձեռս իւր եւ կայր յաղաւթս. եւ իբրեւ կատարեաց զաղաւթսն՝ դարձաւ յետս եւ ետես գուր մի լի ջրով եւ ասէ. Ահա այսուհետեւ ժամանակ է մկրտելոյ: Ամբարձ զձեռս իւր եւ ասէ. Յանուն Յիսուսի Քրիստոսի, ահա այսար զյետին արն մկրտիմ ... եւ դատաւորն եւս իբրեւ ետես զնա՝ ելաց եթէ զայդպիսի գեղ վայելուչ ուտիցեն գազանքն որ են ի ջուրն. եւ Թեկղ դիմեաց վաղվաղակի եւ էջ ի ջուրն, եւ գազանքն որ էին անդ, իբրեւ տեսին զփայլակն հրոյն՝ սատակեցան եւ կային ի վերայ ջուրցն եւ գային շուրջ զնովաւ, եւ ի վերայ նորա եղեւ հավանի ամպ փայլատականց, այնպէս զի ոչ երեւելով երեւէր Թեկղ թէ մերկ իցէ:</p>	<p>դուխտ համբուրեաց գկապանս նորա եւ ասէ ցնա. Երանի է քեզ դուստր երկնաւոր թագաւորին. եւ զօրացուցեալ զնոսա բանիւք սուրբ աւետարանին ի սէրն Քրիստոսի, նշանեաց լուռ կալ եւ աղօթել: Եւ ինքն տարածեալ զձեռս իւր յերկինս ասէ. Գոհանամ զքէն Տէր իմ... հայեաց այժմ յերկնից... յաղախին քո Սանդուխտ, որ ետ զտղայութիւն իւր քեզ. արդ պահես զսա տէր իմ, եւ զօրացո՞ ի պատերազմիս (էջ 17-18):</p>
<p>23. Եկն ընդ նմա Թեկղ ի տուն պատանւոյն եւ եմուտ եկաց առ Պաւղոսի, եւ եգիտ զնա զի կայր ի ծունր, աղաչէր եւ ասէր. 24. Հայր մեր որ յերկինսդ ես, խնդրեմ ի քէն զի մի մերձեսցի հուրն ի Թեկղ, այլ շիջո զնա ի նմանէ, զի քո է: Եւ Թեկղ կայր յետոյ նորա, եբաց զբերան իւր եւ ասէ. Հայր՝ որ արարեր զերկինս եւ զերկիր, դու ես հայր Սրբոյն, գոհանամ զքէն վասն որոյ արարեր ընդ իս, եւ կեցուցեր զիս զի տեսից զՊաւղոս:</p>	<p>12. Եւ տեսեալ զսուրբ առաքեալն զի աղօթէր եւ լոյս մեծ ի վերայ նորա, զահի հարեալ սուրբն Սանդուխտ՝ արկանէր ի վերայ երեսաց իւրոց արտասուօք եւ համբուրէր զգարշապարս առնն Աստուծոյ եւ ասէր. Տէր իմ եւ Հայր, որ գտեր զիս զմոլորեալս, եւ ծանուցեր ինձ զերկնաւոր զՏէրն իմ զՅիսուս Քրիստոս զմիածին որդին, այժմ աղօթեա վասն իմ եւ օրհնեա զիս, զի եւ ես փութացեալ հասից ընկերաց իմոց, եւ եղէց արժանի տեսանել զՏէրն զՔրիստոս քեւ հանդերձ:</p>
<p>Յարեաւ Պաւղոս եւ ետես զնա. պատասխանի ետ եւ ասէ. Աստուած սրտագէտ, Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, գոհանամ զքէն, զի վասն որոյ խնդրեցի՝ հաներ ի հրոյն, եւ ետուր ինձ</p>	<p>Եւ տեսեալ սուրբ առաքելոյն զարտասուս սրբոյ կուսին Սանդխտոյ, եւ զջերմեռանդն գուլթ սիրոյ նորա առ Քրիստոս, եւ ասէր. Երանի է քեզ դուստր երկնաւոր թագաւորին, համբերեա աստ ժա-</p>

<p>տեսանել զնա, եւ սոցա որ ընդ իս են. միայն ի քո ձեռս է փրկել յամենայն վշտաց որ փառաւորեն զանուն քո յաւիտեան: <b>25.</b> Եւ Պաւղոս ցնծայր եւ ուրախ էր հանդերձ ամենեքումբք որ ընդ նմայն էին: Եւ եբեր նոցա պատանեակն հինգ նկանակ հաց եւ խաւարտ եւ աղ եւ ջուր, եւ ուրախ լինէին ի սուրբ գործսն Քրիստոսի: Եւ ասէ Թեկղ ցՊաւղոս. Փոքրեցից զհերս իմ եւ եկից զկնի քո ուր եւ դու երթիցես: Ասէ ցնա Պաւղոս. Պատերազմ սաստիկ է, եւ դու կին գեղեցիկ ես, գուցէ այլ փորձութիւն գայցէ ի վերայ քո շար եւս քան զառաջինն, եւ ոչ կարիցես համբերել: Ասէ Թեկղ ցՊաւղոս. Միայն զգրոշմն Քրիստոսի տուր ինձ, եւ փորձութիւն առ իս ոչ մերձենայ: Ասէ Պաւղոս ցԹեկղ. Երկայնամիտ լեր եւ առցես զոր ինչ խնդրեսդ:</p>	<p>մանակ, եւ այժմ տեսանես զլոյսն ամենայն<sup>13</sup> արարածոց: Քաջալերէր եւ զայլ հաւատացեալսն սուրբ բանիւ աւետարանին եւ ասէր. Պինդ կացէք, զի այժմ առնուք զլուսեղէն պսակն: Եւ կատարեալ զխօսան մատուցին առաջի հաց, եւ առեալ զհացն օրհնաց եւ ետ սրբոյն Սանդիստոյ եւ ընկերացն. Ճաշակեաց սակաւիկ մի եւ ինքն. եւ իբրեւ յարեան՝ օրհնեցին եւ զոհացան զսուրբ Երրորդութենէն (էջ 27-28): <b>13.</b> ... պահեա եւ զտղայս զայս Սանդուխտ, զի է սուրբ կուսութեամբ. եւ տուր համբերութիւն սմա պատերազմել զհանդէս մարտիրոսական ընթացիցն, եւ առնուլ զպսակն լուսոյ ի գլուխ իւր (էջ 29):</p>
<p><b>17.</b> ... Իբրեւ զայս բանս լուաւ դատաւորն, հրաման ետ զի նովին կապանաւք երթիցէ ի բանտն, մինչեւ եղիցի տեղի լսել նմա բարուք: ... <b>28.</b> Իբրեւ մտին գազանքն ի թէատրոնն, եկին զԹեկղ տանել ի տանէն Տրիփոնեայ, տարան ի թէատրոնն եւ մերկացուցին զնա, արկին առիգած կտաւի եւ կացուցին զնա մերկ: Եւ արձակեցին նմա մատակ առիւծ մի մեծ. ... Եկն մատակ առիւծն եւ սկասաւ լեզուլ զԹեկղ. <b>35.</b> ... Ել բոց հրատին եւ այրեաց զկապանսն որով կապեալ էին զոտսն Թեկղի:</p>	<p><b>28.</b> Յայնժամ սրտմտեալ թագաւորն ասէ. Ոչ է պարտ առնս այսմիկ կեալ. եւ տարեալ զսուրբն Թադէոս կապանօք արգելին ի դղեակ պարսպին (բերդին), ուր էին մարդակեր գազանքն: Իբրեւ արձակեցին երկու առեւծք, եւ եկեալ անկանէին առ ոտսն եւ լեզուին զհողաթափսն ոտից սրբոյն, եւ ոռնային քծնելով: Եւ սրբոյն աղօթեալ լուծան կապանք իւր (էջ 51-52):</p>
<p><b>21.</b> ... եւ տայր վճիռ զի այրեսցի հրով ի մէջ թէատրոնին: <b>22.</b> ... Ժողովէին զփայտն եւ բուռն հարկանէին զնմանէ երիտասարդքն՝ զի ելցէ կացցէ ի վերայ հրոյն բորբոքելոյ. եւ Թեկղ առ ժամայն</p>	<p><b>28.</b> Իսկ անօրէն թագաւորն առաւել գրգռեալ ի շարէն հրամայեաց լուցանել հնոց հրոյ եւ բորբոքեցին յոյժ, եւ արկին զսուրբ առաքեալն կապանօք ի ներքս: Եւ նա աղօթեալ ասէր. Տէր Յիսուս Քրիս-</p>

<sup>13</sup> Ակիմեան չիք ամենայն:

<p>ելանէր կայր ի վերայ հրոյն եւ զձեռս իւր տարածէր ի նմանութիւն խաշափայտին: Եւ իբրեւ ելանէր դիզանէր բոց հրոյն բորբոքելոյ, եւ մագ մի ի հերաց նորա ոչ խանձէր, զի գթացաւ հոգին Աստուծոյ եւ ձայն գոչման ելանէր յերկրէ, եւ ամպ ցաւազգին հովանի լինէր ի վերայ նորա, եւ կարկուտ եւ անձրեւ սաստիկ յերկիր հեղոյր. եւ բազումք ի մարդկանէն որ նստէին եւ հայէին՝ սատակէին եւ հուրն շիջաւ եւ Թեկղ ապրեցաւ:</p>	<p>տոս հաս ինձ յօգնականութիւն. եւ ել յանկարծակի հողմ ուժգին ամպախառն ցողով, եւ առ զհնոցն հրախառն եւ արկ զանօրէն բարբարոսօքն: Եւ ահ երկնաւոր ձայնիցն կորոյս զամենեսեան: Իսկ թագաւորն փախստական անկաւ յապարանս իւր, եւ շար հիւանդութեամբ վարանեալ կայր ի տարակուսի (էջ 52):</p>
--	---

**4. Մեկնաբանութիւն**

**4.1. Թեկղի եւ Սանդուխտի հանդիպումը Պօղոսի եւ Թադէոսի հետ**

Ակինեանը նախ եւ առաջ մօտեցուց Պօղոսի Իկոնիոն քաղաք գալուստի եւ Թադէոսի Շաւարշան գալուստի դիպուածները (ԹՊ § 1 եւ § 5; *cf.* ԹՎ § 4): Այս երկու հատուածներուն միջեւ էական կապ գոյութիւն չունի սակայն: Այս դրուագներէն ետք Ակինեանը մօտեցուց երկու ուրիշ դրուագներ, ուր առաջին անգամ ըլլալով նշուած են առաքեալներուն աշակերտուհիները՝ Թեկղ եւ Սանդուխտ. տե՛ս օրինակ կարճառօտութեամբ՝ «Թեկղ եկեալ նստէր առ պատուհանի միոջ որ մերձ էր ի տանիս նոցա, եւ լսէր զբանսն Պաւղոսի զոր խաւէր վասն սրբութեան» (ԹՊ § 7-9), *cf.* «(Սանդուխտ) եկեալ ... հասեալ ի գիշերի առ սուրբ առաքեալն՝ լսէր ի նմանէ զբանն քարոզութեան» (ԹՎ § 5): Թադէոսի Վկայաբանութեան մէջ կը կարդանք, որ Սանդուխտը «գտիւ եւ զգիշեր» կը մնայ առաքելոյ մօտ, ինչպէս Թեկղը «գտիւ եւ զգիշեր» պատուհանին մօտ կը մնայ Պօղոսի քարոզութեան մտիկ ընելու համար: Այս կացութիւնը («գտիւ եւ զգիշեր» առաքեալին մօտ մնալը) ընդհանուր տեղի (topos) մըն է, որ շատ յաճախ կը գտնուի անկանոն երկերուն մէջ (տե՛ս օրինակ՝ Գործք Անդրէի, ուր եղբայրները *νοκτῶς καὶ ἡμέρας* «գտիւ եւ զգիշեր» կը մնան Անդրէի մօտ, *cf.* Գործք Անդրէի VIII, 5, X, 5-6, XIII, 1-2, XXIII, 18. տե՛ս նաեւ Գործք Պօղոսի, IX, 16 եւ IX, 18): Կարելի է համեմատել նաեւ երկու դրուագներ, որոնք փոխադարձաբար Թադէոսի Վկայաբանութեան 5-րդ պարբերութեան եւ Պատմութեան Թեկղի 18-րդ պարբերութեան կը պատկանին. Պատմութեան Թեկղի 18-րդ պարբերութեան մէջ կը կարդանք, որ Թեկղը «...չոգաւ նստաւ առ ոտսն Պաւղոսի եւ ... մեծաւ ուրախութեամբ համբուրէր զկապանս եւ զզլթայսն զոտիցն եւ զձեռացն Պաւղոսի», ինչպէս Թադէոսի Վկայաբանութեան 5-րդ պարբերութեան մէջ գրուած է, որ Սանդուխտը «անկանէր առաջի սուրբ ոտից նորա, եւ արտասուօք համբուրէր»: Հե-

տաքրքրական է նկատել, որ նման կացութիւն կը գտնուի Թադէոսի Վկայաբանութեան 7-րդ պարբերութեան մէջ ալ, բայց ընդհակառակը. ի հարկէ Թադէոսն է, որ Սանդուխտի շղթաները կը համբուրէ. «...եւ եկեալ առ սուրբն Սանդուխտ համբուրեաց զկապանս նորա...»: նկատենք նաեւ, որ Թադէոսի Վկայաբանութեան 12-րդ պարբերութեան մէջ, «սուրբն Սանդուխտ արկանէր ի վերայ երեսաց իւրոց արտասուօք եւ համբուրէր զգարշապարս առնն Աստուծոյ»:

#### 4.2. Թեկղի եւ Սանդուխտի կրկին նահատակութիւնը

Երկու երկերուն մէջ հնարաւոր է մօտեցնել քանի մը ուրիշ հատուածներ կամ կացութիւններ, եւ ի միջի այլոց հետեւեալները. Թեկղի նման (ԹՊ § 22, ՇՖ. ԹՎ § 28), Սանդուխտն ալ (ԹՎ § 17, ՇՖ. ԹՎ § 23) երկու անգամ մահուան դատապարտուած է: Երկու գրուածքներուն մէջ ալ, առաքելոյ աշակերտուհին է, որ դատապարտուած է նախ եւ առաջ, մինչ ընդհանրապէս անկանոն առաքելական գրուածքներուն մէջ առաքեալն է, որ դատապարտուած է առաջինը<sup>14</sup>:

Երկու երկերուն մէջ՝ երկու սրբուհիները դատապարտուած են նախ կրակով մեռնիլ եւ երկուքն ալ փրկուած են հրաշքով, նոյնիսկ եթէ տարբեր ձեւով. Թեկղի նահատակութեան ընթացքին՝ «...ձայն գոչման ելանէր յերկրէ, եւ ամպ ցաւդագին հովանի լինէր ի վերայ նորա, եւ կարկուտ եւ անձրեւ սաստիկ յերկիր հեղոյր. եւ բազումք ի մարդկանէն որ նստէին եւ հայէին՝ սատակէին եւ հուրն շիջաւ եւ Թեկղ ապրեցաւ» (ԹՊ § 22), մինչ Սանդուխտի նահատակութեան ատեն՝ «եղեւ շարժում, եւ ծագեաց լոյս յերկնից, եւ եղեւ ձայն որ ասէր. “Քաջալերեաց դուստր իմ, զի ընդ քեզ եմ ի փրկել զքեզ”». հատուածը կը շարունակէ պատմելով «Լուծան կապանք նորա (Սանդուխտի), եւ ի լուսոյ փայլատականցն կորեաւ դահճապետն, եւ բազումք ընդ նմա...» (ԹՎ § 17)<sup>15</sup>: Թեկղի Պատմութեան 35-րդ պարբերութեան մէջ ալ, Թեկղը շղթաներէն ազատուած է հրաշքով. «...եւ զայրանային զուարակքն առ ցաւս խորանացն. եւ ել բոց հրատին եւ այրեաց զկապանսն որով կապեալ էին զոտսն Թեկղի: Յարեաւ Թեկղ եւ եկաց առ կողմանէ զուարակացն, իբրեւ թէ բնաւ ամենեւին ցաւ ինչ ոչ իցէ եղեալ նմա, եւ ոչ կապանաւք կապեալ իցէ զնա»<sup>16</sup>:

Գալով առաքեալին, կրնանք նկատել, որ Թադէոսի Վկայաբանութեան մէջ Թադէոսն ալ երկու անգամ վկայաբանութիւնը կը կրէ. Թեկղի եւ Սանդուխտի նման, ինքն ալ հրով մեռնիլ դատապարտուած է նախ եւ առաջ: Իր նահատակութեան ընթացքին, ուժգին հող մը եւ ամպախառն ցօղ մը կ'արգելեն, որ կրակը Թադէոս այրէ եւ իր մահուան տեղը կը պատճառեն «անօրէն

<sup>14</sup> Տե՛ս ստորև:

<sup>15</sup> Այդ հատուածը նշուած չէ Ակիմեանին յօդուածին մէջ:

<sup>16</sup> Տե՛ս նաեւ Պօղոսի Գործք IX, 19 եւ ԹՎ 28 (ստորև):



բարբարոսներուն մահը» (ԹՎ § 28). Նոյն 28-րդ պարբերութեան մէջ, Թագէտը երկրորդ տանջանք մը պէտք է տանի. այս նահատակութեան նկարագրութիւնը ուրիշ նմանութիւններ ունի Թեկղի նահատակութեան պատմութեան հետ, ինչպէս պիտի տեսնենք հետեւեալ տողերուն մէջ:

#### 4.3. Առիւծներուն դրուագը երկու երկին մէջ

Թեկղի Պատմութեան 28-րդ պարբերութիւնը կը պատմէ, որ Անտիոք քաղաքի թատրոնին մէջ «արձակեցին նմամատակ առիւծ մի մեծ. [...] Եկն մատակ առիւծ եւ սկսաւ լեզուզ գլխիկը»: Նոյն ձեւով Թագէտի Վկայաբանութեան 28-րդ պարբերութեան մէջ, «Իբրեւ արձակեցին երկու առեւծք, և եկեալ անկանէին առ ոտսն և լեզուին գոզաթափսն ոտից սրբոյն, և ոռնային քծնելով»: Տեքստը կը շարունակէ պատմելով «Եւ սրբոյն աղօթեալ լուծան կապանք իւր: Եւ նշանեալ ընդդէմ առիւծուցն գնացին յիրաքանչիւր տեղիս»: Նորէն կը գտնենք շղթաներուն հրաշքը, որ արդէն տեսանք Սանդուխտի եւ Թեկղի նահատակութեան վերաբերեալ:

#### 4.4. Տրիփոնիա եւ Զարմանդուխտ

Երկու երկերը ուրիշ նմանութիւններ ունին, որ Ակինեանը չէ նկատած: Երկուքն ալ թագաւորական ծագումով կին մը կը նշեն, որ համապատասխանաբար Սանդուխտի եւ Թեկղի հետ կապ ունի: Թեկղի Պատմութեան 27-31-րդ պարբերութիւններուն մէջ, թագաւորական ծագումով կին մը իր պաշտպանութեան տակ Թեկղ կ'առնէ. իր անունը Տրիփոնիա է (յունարէն Τριψωνία). «Եւ էր անդ տիկին մի թագաւորագն, մեծատուն, Տրիփոնեայ անուն, որոյ մեռեալ էր դուստր իւր» (ԹՊ § 27): Նահատակութենէն փրկուելէն ետք, Թեկղը Թրիփոնիան եւ ամբողջ իր տունը քրիստոնէութեան կը դարձնէ. «Եւ չոգաւ ընդ նմա Թեկղ եւ եմուտ ի տուն նորա, եւ հանգեաւ անդ աւուրս ութ, եւ ուսոյց Տրիփոնեայ տիկնոջ զամենայն պատուիրանս Աստուծոյ: Եւ հաւատաց տիկինն յԱստուած, եւ բազումք յաղախնաց նորա. եւ եղեւ անդ ուրախութիւն մեծ» (ԹՊ § 39): Նմանապէս Թագէտի Վկայաբանութեան 20-րդ պարբերութեան մէջ, Սանդուխտն ալ քրիստոնէութեան կը դարձնէ հարուստ եւ ազնիւ կին մը՝ Զարմանդուխտ անունով. ինքն ալ, Տրիփոնիային նման, թագաւորին մերձաւոր է. «Յայնժամ հաւատաց կին ոմն ի մեծ ազգէն ամենայն տամբ իւրով որ էր ի մերձաւորաց թագաւորին, որում անուն էր Զարմանդուխտ» (ՇՖ. ԹՊ § 31 «...քանզի Տրիփոնյա տիկինն յազգէ կայսեր է...»):

Նոյնիսկ, եթէ հնարաւոր չէ ճշգրիտ բառացի մեջբերումներ գտնել, անժխտելի է սակայն, որ երկու երկերը զանազան եւ ճոխ նմանութիւններ ունին, որ ապացոյց են, թէ շատ հաւանաբար Թեկղի Պատմութեան տեքստը ծանօթ էր Թագէտի Վկայաբանութեան հեղինակին: Այս ենթադրութիւնը աւելի ուժեղ կ'երեւի, եթէ մտածենք, որ արդէն 5-րդ դարու Թեկղի Պատմութիւնը մեծ

ազդեցություն ունեցաւ ուրիշ հայերէն գրական երկերուն վրայ, եւ մասնաւորապէս Ագաթանգեղոսի Պատմութեան, ինչպէս նաեւ Փաւստոսի Բուզանդացոյ Պատմութեան Հայոց վրայ<sup>17</sup>:

#### 4.5. Թեկղի եւ Սանդուխտի մկրտությունը

Վերջին նկատողությունները Թեկղի եւ Սանդուխտի մկրտութեան գրուածներուն կը վերաբերին: Եթէ երկու երկերու միջեւ զուգահեռ հատուածները շատ են. կարելի է ըսել նաեւ, որ այդ երկու մասերը քանի մը հետաքրքրական տարբերություններ ալ ունին երկու սուրբ կիներու ներկայացումին մէջ: Ի հարկէ Սանդուխտը անմիջապէս մկրտությունը կը ստանայ Թադէոս առաքեալէն (ԹՎ § 5), մինչ Պողոսը կը մերժէ մկրտություն տալ Թեկղի, որ զայն կը խնդրէ իրմէ (ԹՊ § 25): Թեկղը պէտք է սպասէ իր երկրորդ նահատակութեան, որուն ընթացքին մկրտությունը կը ստանայ առանց առաքեալի միջնորդութեան կամ, ըստ տարբեր մեկնաբանութեան մը, ինքզինք կը մկրտէ (ԹՊ § 34)<sup>18</sup>:

Թեկղի Պատմութեան 25-րդ պարբերութեան մէջ, Պողոսը կը մերժէ Թեկղը մկրտել վախճալով, որ ուրիշ փորձություն իյնայ աղջկան վրայ՝ իր գեղեցկութեան պատճառաւ, եւ որ աղջիկը տկար ըլլայ. հետեւաբար առաքեալը Թեկղը կը հրաւիրէ համբերել («երկայնամիտ լեր»): Նմանապէս Թադէոսի Վկայաբանութեան 12-րդ եւ 13-րդ պարբերություններուն մէջ, Թադէոս Սանդուխտը կը հրաւիրէ համբեր ըլլալ («համբերեա՛...») եւ Աստուծմէ կը խնդրէ որ աղջկան տայ համբերությունը նահատակութեան օրը սպասելով. սա է նահատակությունը Սանդուխտին ցանկությունն ու նպատակը:

Երկու երկերը «պատերազմ»-ը կը նշեն, բայց տարբեր իմաստով: Թեկղի Պատմութիւնը-ը կը նշէ Թեկղի գեղեցկութեան կապուած պատերազմն ու

<sup>17</sup> St' u V. Calzolari, «Le sang des vierges et le plan de Dieu. Réflexions à partir de l'ancienne historiographie arménienne ancienne (V<sup>e</sup> siècle ap. J.-C.)», A. A. Nagy – F. Prescendi (eds), *Victimes au féminin*, Genève, 2011, p. 178-194 ; V. Calzolari, «De sainte Thècle à Anahit : une hypothèse d'interprétation du récit de la mort de l'empereur Valens dans les *Buzandaran Patmut'iwnk'*», N. Awde (ed.), *Armenian Perspectives. (10<sup>th</sup> Anniversary Conference of the Association Internationale des Etudes Arméniennes. SOAS, London)*, Richmond, Surrey 1997, p. 39-49, 371-377; տե՛ս նաեւ V. Calzolari, «The legend of St Thecla in the Armenian tradition: From Asia Minor to Tarragona through Armenia», J. W. Barrier – J. N Bremmer – T. Nicklas – A. Puig I Tarrech (ed.), *Thecla: Paul's Disciple and Saint in the East and West (Studies in Early Christian Apocrypha)*, Leuven (Երեւանի):

<sup>18</sup> ԹՊ § 34 Νῦν καιρὸς τοῦ λούσασθαι με. cf. ԹՊ § 40 Ἔλαβον τὸ λουτρόν, Παῦλε· ὁ γὰρ σοὶ συνεργήσας εἰς τὸ εὐαγγέλιον κἀμοὶ συνήργησεν εἰς τὸ λούσασθαι: St' u S. J. Davis, «A “Pauline” Defense of Women's Right to Baptize? Intertextuality and Apostolic Authority in the *Acts of Paul*», *Journal of Early Christian Studies*, 8/3, (2000), p. 453-459. G. Dagron, *Vie et Miracles de sainte Thècle. Texte grec, traduction et commentaire (Subsidia Hagiographica, 62)*, Bruxelles 1978, 40-44:

փորձությունը, որոնք կրնային վտանգի ենթարկել Թեկղի հաւատքը («... պատերազմ սաստիկ է, եւ դու կին գեղեցիկ ես, գուցէ այլ փորձութիւն գայցէ ի վերայ քո շար եւս քան զառաջինն, եւ ոչ կարիցես համբերել» (ԹՊ 25), մինչ Թադէոսի Վկայաբանութիւնը կը նշէ նահատակութեան մարտն ու պատերազմը («...տո՛ւր համբերութիւն սմա պատերազմել զհանդէս մարտիրոսական ընթացիցն, եւ առնուլ զպսակն լուսոյ ի գլուխ իւր» (ԹՎ § 13. Cf. ԹՎ § 7), «արդ պահեա՛ զսա Տէր իմ, եւ զօրացո՛ ի պատերազմիս»):

Երկու հատուածներուն սկիզբն ալ կարելի է համեմատել. ի հարկէ Թեկղի Պատմութիւնը (§ 25) կը պատմէ, որ Պօղոսը, Թեկղը եւ քանի մը ուրիշ հաւատացեալներ հինգ հաց կը բաժնեն եւ կ'ուտեն. այդ կացութիւնը կը յիշեցնէ Թադէոսի Վկայաբանութեան (§ 12) պատարագի հացի բաժանումը:

Ամփոփելով կարելի է եզրակացնել, որ տարբերութիւններէն զատ, մեզ հետաքրքրող երկու հատուածները նաեւ համեմատելի բազմաթիւ կէտեր ունին. այս պարագային կարելի է մտածել, որ Թեկղի Պատմութեան օրինակը մասամբ վերագրուած եւ տարբեր ենթատեքստի յարմարցուած է:

4.6. Թագաւորութեան կրօնքին եւ հօր հեղինակութեան դէմ Սանդուխտի հակադրութիւնը եւ Թադէոսի մահու դատապարտութիւնը

Նկատի առնենք դարձեալ մկրտութեան դրուագը: Ինչպէս արդէն նշեցինք, երկու սուրբ կիները մկրտութիւնը կը ստանան տարբեր պայմաններով: Առաջին հայացքէն Սանդուխտ կրնայ թուիլ աւելի կարեւոր, որովհետեւ անմիջապէս իր մկրտութիւնը կը ստանայ: Պէտք է նկատել սակայն, որ ի տարբերութիւն Թեկղի՝ Սանդուխտը առաքեալէն անկախ չէ: Ընդհակառակը, Թեկղը բոլորովին պէտք չունի Պօղոսի միջնորդութեան, եւ ուղղակի աստուածային միջամտութեան շնորհիւ մկրտութիւնը կը ստանայ:

Առաքեալին անհրաժեշտ միջնորդութեան հակառակ, սկզբէն ի վեր մեծ կարեւորութիւն կը տրուի Սանդուխտին ալ: Մկրտութեան ատեն, օրինակի համար, լուսաւոր նշան մը Սանդուխտի երեսին վրայ կ'երեւի՝ իբր ընտրութեան նշան մը: Մկրտութենէն ետք Սանդուխտը հետեզհետէ աւելի կարեւորութիւն կը ստանայ: Ինքն է, օրինակ, որ հաւատքի առաջին խոստովանութիւնը կ'արտասանէ (տե՛ս ստորև, ԹՎ § 16): Հաւատքի այս խոստովանութիւնը Սանդուխտը կ'արտասանէ իր հօր առջեւ, որ, մի՛ մոռնաք, հայկական թագաւորութեան քաղաքական իշխանութիւնը եւ նախնիների հեթանոսական կրօնքը կը ներկայացնէ: Սանդուխտի յամառութիւնը – որ կը շարունակէ մերժել թագաւորութեան աստուածները – թագաւորին բարկութիւն կը պատճառէ եւ Սանդուխտը մահուան կը դատապարտուի:

Թեկղի նման, ինչպէս նաեւ Մաքսիմիղայի (տե՛ս Գործք Անդրէի), Միգդոնիայի եւ Տերտիայի (տե՛ս Գործք Թովմայի), Նիկանորայի (տե՛ս Գործք Փիլիպպոսի), Քսանթրիպպէին (տե՛ս Գործք Պետրոսի) եւ այլն, Սանդուխտը

եւս, անկանոն գրականութեան դասական պատմողական ուրուագիծի մը կը հետեւի. ըստ այս ընդհանուր տեղիին՝ կին մը քրիստոնեա կը դառնայ եւ բարկութիւն կը պատճառէ իր ընտանիքին անդամներէն մէկուն, որ քաղաքին երեւելի կամ քաղաքական անձնաւորութիւն մըն է: Ընդհանրապէս այդ բարկութիւնը կնոջ ընտրած ժուժկալ կեանքին կապուած է, որուն հետեւանքով կինը իր ամուսինէն կամ նշանածէն կը հեռանայ<sup>19</sup>: Սա է առաքեալին դատապարտումի գլխաւոր պատճառը: Այսպէս, Անդրէի Գործք-ին մէջ Մաքսիմիղան բարկութիւն կը պատճառէ իր ամուսինին, որ Պատուա քաղաքի իշխանն է: Թեկղի պատմութեան մէջ, որ Պողոսի Գործք-ին մաս կը կազմէ, Թեկղը բարկութիւն կը պատճառէ իր նշանածին՝ Թամիրիսին, որ առաքեալը կը մեղադրէ դատաւորին առջեւ: Թովմայի Գործք-ին մէջ, Տերտիան եւ Միգդոնիան իրենց ամուսիններուն՝ Մազդէի եւ Քարիսիոսի բարկութիւն կը պատճառեն: Պետրոսի Գործք-ին մէջ, Քսանթիպպէն իր ամուսինէն կը հեռանայ բարկութիւն պատճառելով, եւ հետեւաբար Պետրոսի դատապարտութիւնը, եւ այլն: Սանդուխտ, ինքը, իր հօր բարկութիւն կը պատճառէ, որ նոյնպէս մահուան կը դատապարտէ առաքեալը: Թադէոսի Վկայաբանութեան մէջ, սակայն, բարկութեան պատճառը ժուժկալ կեանքին ընտրութիւնը չէ. անշուշտ, Սանդուխտը յաճախ «կոյս» ածականով» կոչուած է («պահեա՛ եւ զտղայս զայս Սանդուխտ, զի է սուրբ կուսութեամբ») (ԹՎ § 13. cf. ԹՎ § 23, 26, 27, և այլուր): Սակայն իր դատապարտութեան բուն պատճառը իր կուսութիւնը չէ, այլ հօրը եւ թագաւորութեան կրօնքին իր հակադրութիւնը: Նոր քրիստոնէական հաւատքին իր կապը ուժեղ է եւ ինքն ալ քարոզչական դեր կը խաղայ:

#### 4.7. Տիկին Սանդուխտի քարոզչական դերը

Իր երկրորդ եւ վերջնական նահատակութենէն առաջ վերջին օրը՝ Սանդուխտին կարեւորութիւնը կատարեալ է (ԹՎ § 23). նոր կին դարձած է, որ Թադէոսին իր օգնութիւնը կրնայ տալ, անոր առաքելական գործունէութեան ընթացքին: Թեկղի նման՝ Սանդուխտն ալ, քարոզչական դեր կը խաղայ վերջաւորութեան: Ան կը քարոզէ, կը մխիթարէ, հաւատքի ընկերները եւ նահատակները կը խնամէ, հրաշքներ կ'ընէ, ինչպէս նաեւ քրիստոնէութեան կը դարձնէ շատ մարդիկ, եւ ի միջի այլոց Զարմանդուխտը.

ԹՎ § 19 «և մխիթարէր սուրբն Սանդուխտ զամենայն հաւատացեալսն. կերակրէր զնոսա հացիւ և զգեցուցանէր հանդերձիւ, և ոչինչ առնէր նոցա պակաս, և քարոզէր զբանն կենաց, և դարձուցանէր զբազումս առնելով նշանս և սքանչելիս» (էջ 39, 23-40, 4):

<sup>19</sup> Y. Tissot, «Encratisme et Actes apocryphes », F. Bovon et al., *Les Actes apocryphes des Apôtres. Christianisme et monde païen (Publications de la Faculté de Théologie de l'Université de Genève, 4)*, Genève, 1981, 109-119:

Սանատրուկ ինքն կ'անդրադառնայ, որ իր աղջիկը տարբեր է եւ որ Թադէոսէն աւելի մարդիկ քրիստոնէութեան կը դարձնէ, կամ, իր տեսակէտէն, որ «նա զամենեսեան առաւել մոլորեցուցանէ» (ԹՎ §20, էջ 40, 18-19):

Սանդուխտին նոր դերին վերաբերեալ կարելի է աւելցնել հետեւեալ հատուածն ալ, ուր իշխանուհին իր յորդորանքները կ'ուղղէ հաւատակիցներուն. «Ասէ սուրբն Սանդուխտ մեծաբարբառ ձայնիւ ցհաւատացեալ ընկերակիցսն իւր ցնծալով. “եղբարք իմ, պի՛նդ կացէք եւ զօրացարո՛ւք ի Քրիստոս...”» (ԹՎ § 15): Հետաքրքրական է նշել, որ ընդհանրապէս առաքեալն է, կամ Աստուած ինքն, որ հաւատացեալներուն կը դիմէ այդպիսի քաջալերանքներով: Ուրիշ հատուած մը կը պատմէ յետոյ այն բարեգործութիւնները, զորս Սանդուխտ կը կատարէ հաւատքի իր ընկերներուն հանդէպ.

ԹՎ § 11 «Եւ իբրեւ եղեւ գիշեր, ... յղէր ի տուն իւր սուրբն Սանդուխտ գաղտ ի հօրէն իւրմէ եւ տայր բերել բարակ կտաւս, եւ առեալ զհաւատացեալ սուրբ ընկերսն, ամփոփէր զմարմինս նոցա, համբուրէր եւ ասէր. Երանի՛ է ձեզ, եղբարք իմ եւ քորք. որք արժանի եղէք երկնաւոր ուրախութեանցն, յիշեցէք եւ զիս զաղախինս ձեր. Եւ թաղէր զնոսա մօտ յապարանս իւր, եւ տայր զգուշութիւն, զի մի ոք զիտասցէ յարքունի տանէն» (էջ 26, 23-27, 11):

Իր վկայաբանութենէն ետք, Սանդուխտը, որ տեքստին մէջ արդէն յիշուած էր իբր «աղջիկ»<sup>20</sup>, հիմա կոչուած է «տիկին» անունով: Նոյն ածականը օգտագործուած է նաեւ սուրբ Թեկղի համար Բուզանդարան Պատմութիւնք-ին մէջ (IV, 10)<sup>21</sup>, Տիրամօր համար (օրինակ՝ Գրիգոր Նարեկացիի մօտ)<sup>22</sup> եւ, հեթանոսական ժամանակի ընթացքին, Անահիտ դիցուհիին համար՝ ըստ Ագաթանգեղոսի Պատմութեան (§ 53)<sup>23</sup>: Ահաւասիկ՝ հին Հայաստանի կրօնական գրականութեան եւ պատմութեան մեծ Տիկիները, որոնց պէտք է աւելցնել Հոնիփիմէն ալ<sup>24</sup>: Զանազան ձեւերով Թեկղը՝ անկանոն աւանդութեան առաջին վկայուհին եւ առաջին առաքելուհին, մեծ ազդեցութիւն ունեցաւ հին հայկական գրականութեան զանազան հեղինակներուն վրայ, որոնք իր օրինակին հետեւեցան Հայաստանի պատմութեան ամենակարեւոր կիներուն պատկերը գծելու համար<sup>25</sup>:

<sup>20</sup> Հոնիփիմէին մասին տե՛ս Ագաթանգեղոսի Պատմութիւն, § 202, 249 և այլուր:

<sup>21</sup> V. Calzolari, *De sainte Thècle à Anahit*, վերը, ծանօթագրութիւն 17, 48-49:

<sup>22</sup> J. R. Russell, *Zoroastrianism in Armenia* (Harvard Iranian Series, 5), Cambridge, MA, 1987, 251-252:

<sup>23</sup> Պարսկերէն *bānūk* (ML 'T). տե՛ս E. Benveniste, *Titres et noms propres en iranien ancien*, Paris, 1966, 28 էւ 46-47. H. Hübschmann, *Armenische Grammatik*, 1: *Armenische Etymologie*, Leipzig, 1897 (Hildesheim – New York, 1972), 117:

<sup>24</sup> Հոնիփիմէին մասին տե՛ս Ագաթանգեղոսի Պատմութիւն, § 202, 249 և այլուր:

<sup>25</sup> Այս մասին տե՛ս իմ հրատարակուելիք ուսումնասիրութիւնս CSCA շարքին համար (վերը՝ ծանօթագրութիւն 3):

**Valentina Calzolari**  
**The Armenian Version of the Acts of Thecla and the Martyrdom of Thaddeus and Sanduxt**

This paper deals with the question of the relationship between the Armenian version of the apocryphal *Acts of Paul and Thecla* and the Armenian *Martyrdom of Thaddeus and Sanduxt*. N. Akinean raised the hypothesis of a possible influence of the first text on the second one in an article published posthumously in *Handēs Amsōreay* in 1970. He did not give any commentary, but simply put some parallels of the two works in a synoptic presentation. A thorough analysis, on a new basis, was necessary. A comparison between the two texts allows us to establish that a few parallels identified by Akinean are not conclusive. It is nevertheless possible to confirm many other parallels, and even add some more others, which support Akinean's hypothesis. We can conclude that the author of the *Martyrdom of Thaddeus and Sanduxt* must have known the text of the *Acts of Paul and Thecla*, which enjoyed a great popularity in Armenia from the fifth century onwards. The model of the *Acts of Paul and Thecla* is particularly significant as a pattern of holiness followed by the author of the *Martyrdom of Thaddeus* in the representation of the figure of Sanduxt, who, according to this apocryphal text, was one of the disciples of the apostle and the first woman converted to Christianity in Armenia. Following the same text, she also had a role as a preacher, as Thecla did in the *Acts of Paul and Thecla*.



CLAUDE MUTAFIAN

LA DIPLOMATIE MATRIMONIALE DE L'ARMÉNIE  
CILICIENNE

Contrairement aux précédents royaumes, l'Arménie cilicienne, entourée d'une mosaïque d'États et de peuples, ne pouvait s'épanouir qu'en pratiquant une diplomatie tous azimuts, dont l'un des volets concerna les nombreuses unions matrimoniales avec ses différents voisins.

*Les alliances arméno-latines au XII<sup>e</sup> siècle*

Dès le début, plus précisément dès les premiers contacts avec les croisés, des alliances matrimoniales se nouèrent avec le monde franc. Pour les barons roubénides, il s'agissait essentiellement de s'émanciper de Byzance: un seul d'entre eux, Mleh, prit une épouse arménienne<sup>1</sup>. En sens inverse, les chevaliers francs devaient, sur place, choisir pour épouse une princesse chrétienne et non grecque – à cause du schisme de 1054 –, ce qui laissait peu de choix en dehors des Arméniennes. Disons tout de suite que la plupart de ces unions furent plutôt malheureuses: dans les mentalités, un fossé séparait les seigneurs latins toujours tournés vers l'Europe et les princesses arméniennes formées dans le subtil moule oriental avec une conception «indigéniste» de la politique. L'historiographie occidentale les a longtemps qualifiées de «princesses orientales assoiffées de pouvoir», un stéréotype bien réducteur.

Un brillant exemple de telles incompréhensions est donné au tout début du XII<sup>e</sup> siècle par le comté d'Édesse, premier État fondé par les croisés au Levant, moyennant la destruction de la principauté arménienne de T'oros. Vu la majorité arménienne de la population, les deux premiers comtes, des Flamands du nom de Baudouin et parents entre eux, épousèrent des princesses arméniennes, respectivement filles des seigneurs Tavt'ouk de Samosate et Gabriel de Mélitène<sup>2</sup>. Quand le premier Baudouin devint roi de Jérusalem fin 1100, son épouse ne lui était plus d'aucune utilité et il la répudia sous prétexte de stérilité alors que c'était certainement lui, ayant «horreur des étreintes de l'épouse», qui était impuissant ou homosexuel, comme s'en souvint au milieu du XIX<sup>e</sup> siècle

---

<sup>1</sup> Voir **Mutafian**, t. II, généalogie 31.

<sup>2</sup> *LOM*, p. 86, 160, 79; *GT*, XII 4, p. 551. Voir **Dédéyan**, p. 1036-1038.



l'auteur de son portrait dans les Salles des croisades de Versailles<sup>3</sup>. Baudouin II lui succéda à Édesse, puis en 1118 à Jérusalem avec son épouse arménienne Morfia. Édesse passa alors à Jocelyn I<sup>er</sup>, qui épousa une princesse roubénide<sup>4</sup>. Leur fils Jocelyn II, dernier comte d'Édesse, «aimait beaucoup les Arméniens»<sup>5</sup>. Il suscita, à cause de son ascendance maternelle, des commentaires acerbes et racistes de Guillaume de Tyr, qui le décrit «le teint et les cheveux noirs, les yeux gonflés et le nez proéminent», robuste et généreux, mais ivrogne et libertin, finalement puni «pour sa lâcheté et ses vices»: un portrait négative couramment repris<sup>6</sup>. Les auteurs arabes vantent au contraire son courage et l'appellent «Jocelyn l'Arménien», le qualifiant même de «roi des Arméniens»<sup>7</sup>.

À Jérusalem, les deux premières reines étaient donc arméniennes. Morfia ne fut pas répudiée comme la première, elle joua même un rôle important lors de la captivité de son époux<sup>8</sup>, mais elle ne put – ou ne voulut – empêcher Baudouin II de rester dans l'histoire comme le fossoyeur de l'Euphratèse arménienne, qui liquida un à un tous les pouvoirs arméniens<sup>9</sup>.

Le couple eut quatre filles. La cadette entra dans les ordres, mais les trois aînées eurent des postes importants dans l'Orient latin, à commencer par la fameuse Mélisende, la plus célèbre de tous les souverains de Jérusalem, qui succéda en 1131 à son père Baudouin II. Brillante et ambitieuse, cette reine demi-arménienne refusa de laisser tout le pouvoir à son époux Foulque puis à son fils Baudouin III: l'archevêque Guillaume de Tyr la décrit comme une « femme douée de plus de sagesse et de prudence qu'il n'appartient d'ordinaire à son sexe, et qui avait dirigé avec beaucoup de vigueur les affaires du royaume pendant trente ans et plus, tant du vivant de son mari que sous le règne de son fils»<sup>10</sup> (voir l'image N 1).

Comment s'est exprimée son arménité à Jérusalem? On en a peu de trace, mais il y a une hypothèse très tentante concernant la cathédrale des

<sup>3</sup> **GT**, XI 1, p. 496; **William of Malmesbury**, 385, p. 688. Voir **Mutařian**, t. II, repr. 83, 84.

<sup>4</sup> Voir **Mutařian**, t. II, généalogie 57.

<sup>5</sup> Voir **Mutařian**, t. I, p. 372.

<sup>6</sup> **GT**, XIV 3, p. 635.

<sup>7</sup> **Ibn al-Athir**, p. 372; **Ibn Šaddād**, p. 68. Voir **Dédéyan**, p. 533, 552, 902.

<sup>8</sup> **Orderic**, XI 26, p. 114; **GT**, XII 18, p. 568. Voir **Mutařian**, t. I, p. 69.

<sup>9</sup> **ME**, p. 337-339. Voir **Mutařian**, t. I, p. 62.

<sup>10</sup> **GT**, XVIII 27, p. 850. Voir **Mutařian**, t. I, p. 376-378, t. II, repr. 88, 89.

Saints-Jacques du patriarcat arménien de Jérusalem. Le bâtiment actuel date pour l'essentiel du règne de Mélisende, durant lequel, en 1141, le catholico Grégoire III Pahlavouni fit une visite remarquée dans la Ville sainte<sup>11</sup>. Il y a très certainement rencontré cette reine demi-arménienne, et on peut suggérer que la décision fut prise conjointement par ces deux exceptionnelles personnalités.

Quant aux deux autres filles, Alice épousa le prince d'Antioche Bohémond II et Hodierne le comte de Tripoli Raymond II<sup>12</sup>. Toutes deux entrèrent en conflit avec leurs époux, pour des questions de pouvoir, de ligne politique ou encore de jalousie. C'est ce qu'a résumé avec humour, en 1927, l'historien Joseph Laurent: «Dernière et terrible vengeance contre les Francs: leurs femmes arméniennes, ou bien ne leur donnèrent pas d'enfants [...]; ou bien, quand elles leur donnèrent des enfants, ce furent des filles et de terribles filles»<sup>13</sup>.

Il est intéressant de noter que les sources concernant ces unions sont exclusivement franques. Ni les deux reines arméniennes de Jérusalem, ni les filles de la deuxième ne font l'objet d'aucune mention dans l'historiographie arménienne. Peut-être la raison est-elle religieuse : ayant dû se soumettre à Rome, elles devaient être considérées comme ayant perdu tout caractère arménien.

### *La diplomatie matrimoniale de Léon I<sup>er</sup> et la question d'Antioche*

Les données changèrent à la suite de la chute de Jérusalem, en 1187. La reconquête partielle de Richard Cœur de Lion réussit certes à recréer une Syrie franque, mais il s'agissait d'une étroite bande côtière, sans Jérusalem et d'importance bien réduite. En revanche, deux nouveaux royaumes virent le jour: Amaury de Lusignan fut couronné à Nicosie en septembre 1197, et le 6 janvier 1198, à Tarse, le prince roubénide Léon II devint Léon I<sup>er</sup> roi d'Arménie, dit «Léon le Magnifique» (voir l'image N 2).

Léon était alors marié à une princesse antiochénienne dont il avait eu une fille, Rît'a, mais cette alliance était de peu d'importance à côté de la chypriote, bien plus prometteuse, aussi répudia-il son épouse pour se remarier en 1210 avec Sibylle, fille du défunt roi Amaury I<sup>er</sup>, qui avait une dizaine d'années alors que lui était sexagénaire<sup>14</sup>. Leur fille Zabêl,

<sup>11</sup> GT, XV 18, p. 699.

<sup>12</sup> LOM, p. 86, 96, 140, 160. Voir **Mutafian**, t. I, p. 378-381.

<sup>13</sup> Laurent, p. 144.

<sup>14</sup> **Smbat**, p. 217 ; LOM, p. 66, 81-82, 88, 90, 92, 137, 143). Voir **Rüdt-Collenberg X**, (A,16), p. 99.

née 5 ans plus tard, fut promise en 1218 à un fils du roi de Hongrie<sup>15</sup>, mais Léon décéda l'année suivante et le projet resta lettre morte (voir l'image N 3).

Son règne avait en grande partie été occupé à lutter pour imposer un de ses parents à Antioche, face aux ambitions du comte Bohémond IV de Tripoli<sup>16</sup>. À l'approche de la mort il choisit naturellement pour lui succéder Zabêl au détriment de sa fille aînée, Řit'a, épouse du roi de Jérusalem Jean de Brienne – cette Řit'a reste donc comme la troisième reine arménienne de Jérusalem, certes sans Jérusalem. Le conseil de régence tenta une réconciliation avec Antioche via le mariage, en 1222, de Zabêl avec Philippe, fils de Bohémond IV<sup>17</sup>, mais deux ans plus tard ce deuxième roi d'Arménie fut mis à mort, probablement à la suite d'intrigues du régent Constantin de Papéron qui cherchait à placer sur le trône son fils Hét'oum et réussit à le marier de force à Zabêl<sup>18</sup>. Ce n'est qu'une trentaine d'années plus tard, en 1254, que ce roi Hét'oum I<sup>er</sup> parvint à sceller la réconciliation en donnant la main de sa fille Sibylle à Bohémond VI, petit-fils de Bohémond IV<sup>19</sup>.

#### *Arméniens et Lusignan*

Dans les lignes 10 et 11 de la longue inscription gravée en 1241 au sud de Papéron par le régent Constantin, père de Hét'oum I<sup>er</sup>, on lit : «Et sa fille aînée, vierge, il la prépare pour les ordres monastiques. Et l'autre, il la marie au roi de Chypre. Quant à la troisième, il la donne en mariage au bailli de Chypre, qui était seigneur de Beyrouth et de Jaffa»<sup>20</sup>. Ces deux mariages concernaient les deux grandes familles du royaume de Chypre, la dynastie royale des Lusignan et les Ibelin d'où, comme on le verra, était issu ce «bailli».

Il était logique que, à l'instar de Léon I<sup>er</sup> d'Arménie et Sibylle de Chypre, les alliances matrimoniales aux XIII<sup>e</sup> et XIV<sup>e</sup> siècles concernent en premier lieu les familles régnantes des deux principaux États chrétiens du Proche-Orient, les Lusignan de Chypre et les Héthoumides d'Arménie<sup>21</sup>. Dans l'inscription, il s'agit de Stéphanie, sœur de Hét'oum

<sup>15</sup> *Smbat*, p. 221-223. Voir *Têr-Petrosian*, p. 236-239.

<sup>16</sup> Voir *Mutafian*, t. I, p. 104-106, t. II, généalogie 54.

<sup>17</sup> *CM XIII*, 93, p. 133. Voir *Mutafian*, t. I, p. 116.

<sup>18</sup> *CM XIII*, 474, p. 587.

<sup>19</sup> *LOM*, p. 92, 95, 139, 145). Voir *Mutafian*, t. I, p. 383.

<sup>20</sup> *GMO*, p. 253, 255. Voir *Mutafian*, t. I, p. 347-348, t. II, repr. 99, 100.

<sup>21</sup> Voir *Rüdt-Collenberg X*; *Mutafian*, t. II, généalogie 74.

I<sup>er</sup>, qui épousa en 1237 le roi Henri I<sup>er</sup>, veuf<sup>22</sup>. C'est la raison pour laquelle son frère le connétable Smbat, en route vers la Mongolie, envoya en 1248 depuis Samarkand sa précieuse lettre à la cour de Chypre<sup>23</sup>.

À la génération suivante, Léon II, fils de Hét'oum I<sup>er</sup>, maria deux de ses nombreux enfants à des enfants du roi Hugues III Lusignan: T'oros épousa Marguerite<sup>24</sup>, et surtout Zabêl s'unit à Amaury de Tyr. Cette dernière union eut des répercussions politiques importantes. D'une part Zabêl joua très certainement un rôle dans le coup d'État de 1306 par lequel Amaury renversa son frère le roi Henri II, avant d'être assassiné en 1310<sup>25</sup>. D'autre part, c'est de ce couple que sont issus les deux rois Lusignan d'Arménie: leur fils Guy fut couronné en 1342 (voir l'image N 4) et mis à mort en 1344, et son neveu Léon V monta sur le trône en 1374<sup>26</sup>. L'année suivante, les Mamelouks s'emparèrent de Sis<sup>27</sup> et le roi fut emmené captif au Caire; plus tard libéré grâce à l'intervention du roi de Castille, il finit ses jours à Paris où il mourut en 1393. Le mausolée de ce dernier roi d'Arménie se trouve dans la basilique de Saint-Denis, près de Paris<sup>28</sup>.

### *Arméniens et Ibelin*

Le fondateur de la royauté de Chypre fut Amaury I<sup>er</sup> Lusignan, et la lignée royale est issue de sa première épouse Échive, petite-fille de Balian d'Ibelin, du nom d'un fief situé au sud-est de Jaffa, que lui a octroyé le roi Foulque en 1141<sup>29</sup>. Ces Ibelin, auxquels on s'accorde à donner une origine d'Italie du Sud, jouèrent dans le royaume un rôle politique aussi important que les Lusignan. On compte au XIII<sup>e</sup> siècle une douzaine d'unions entre Arméniens et Ibelin<sup>30</sup>, et vu leur caractère diplomatique il n'est pas étonnant que plusieurs se soient soldées par des échecs. Signalons les plus importantes.

Le «seigneur de Jaffa» mentionné sur l'inscription du régent Constantin était le fameux juriste Jean d'Ibelin, un arrière-petit-fils de

<sup>22</sup> LOM, p. 166, 143. Voir Rüdtt-Collenberg X, (A,18), p. 101.

<sup>23</sup> Kouymjian, p. 688-692. Voir Mutafian, t. I, p. 138.

<sup>24</sup> LOM, p. 91, 140.

<sup>25</sup> LOM, p. 91, 140, 144. Voir Rüdtt-Collenberg X, (B,7), p. 110-112; Mutafian, t. I, p. 196-198.

<sup>26</sup> Voir Mutafian, t. II, généalogie 50, repr. 114.

<sup>27</sup> CM XIV, 635, 636, p. 516 (angl., p. 99); ms. Or. 5458 de la British Library, f<sup>o</sup> 145v, in Têr-Petrosian, p. 557.

<sup>28</sup> Voir Mutafian, t. I, p. 221, t. II, repr. 115.

<sup>29</sup> GT, XV 24, p. 707; LOM, p. 60, 97.

<sup>30</sup> Voir Rüdtt-Collenberg IX; Mutafian, t. II, tableau 3, généalogies 77-80.

Balian d'IBelin qui avait en effet épousé une sœur du roi Hét'oum I<sup>er</sup>, Marie<sup>31</sup>. Cette union semble avoir été assez lâche: le pape Clément IV réprimanda Jean pour une liaison extra-maritale<sup>32</sup>. On trouve Marie en Cilicie en 1256, et elle y mourut en 1263<sup>33</sup>.

Le nom de ce juriste Jean d'IBelin figure en 1252 dans l'acte de mariage de Julien de Sidon, fils de son cousin germain Balian, avec une fille de Hét'oum I<sup>er</sup>, Fimi<sup>34</sup>. Ce mariage fut lui aussi un échec. En 1263 Fimi se réfugia avec ses enfants en Cilicie, où son frère Léon et son oncle l'évêque Jean lui offrirent des manuscrits enluminés, et l'année suivante le pape Urbain IV admonesta Julien, qui vivait avec une concubine; Fimi fut ensuite supérieure du couvent Notre-Dame de Tyr de Nicosie, où elle mourut en 1308 «à un âge très avancé»<sup>35</sup>. Sa petite-fille homonyme épousa un fils du maréchal Ôchin<sup>36</sup>, cousin germain du roi Hét'oum I<sup>er</sup>.

Guy, fils de Baudouin, sénéchal de Chypre et autre cousin germain de Jean d'IBelin, épousa lui aussi une fille du roi Hét'oum I<sup>er</sup>, Marie, en 1266, et ils eurent deux enfants: T'oros s'unit à une fille du seigneur héthoumide de Servantik'ar et Isabelle devint l'épouse du célèbre historien Hét'oum de Korykos, alias Hayton<sup>37</sup>. À la mort de Guy, Marie succéda à sa défunte sœur Fimi comme supérieure de Notre-Dame de Tyr, à Nicosie<sup>38</sup>. Notons aussi le mariage, en 1279, d'un cousin germain de Guy, le sénéchal Balian, avec la princesse héthoumide Alice de Lambron, sœur de la reine Kéran<sup>39</sup>.

#### *D'autres unions arméno-latines*

La diplomatie matrimoniale du royaume d'Arménie ne se réduisait pas aux Lusignan et aux IBelin. Ainsi, une importante dynastie franque possédait le fief de Toron, actuel Tibnîn, au Liban près de Tyr. Le prince Roubên, frère aîné du futur roi Léon, choisit cette alliance et s'unit en 1181 à Isabelle, fille du connétable Honfroy de Toron<sup>40</sup>. L'une de leurs

<sup>31</sup> *LOM*, p. 67, 100; **Kouymjian**, p. 688. Voir **Rüdt-Collenberg IX**, (J,3), p. 205-206.

<sup>32</sup> Voir **Mutafian**, t. I, p. 343.

<sup>33</sup> **Smbat**, p. 231, 241-242.

<sup>34</sup> *Cartulaire*, XX, p. 146 ; *LOM*, p. 92, 103, 139; **Smbat**, p. 229.

<sup>35</sup> *CM XIII*, 264, 201, p. 320, 251. Voir **Mutafian**, t. I, p. 397.

<sup>36</sup> *LOM*, p. 103.

<sup>37</sup> *LOM*, p. 99, 92, 139. Voir **Rüdt-Collenberg IX**, (S,1), (S,5), p. 157, 169.

<sup>38</sup> Voir **Mutafian**, t. I, p. 398.

<sup>39</sup> *LOM*, p. 100.

<sup>40</sup> **Smbat**, p. 193; *LOM*, p. 65-66, 91, 108, 136.

filles, Alice, épousa en secondes noces Raymond, héritier d'Antioche<sup>41</sup>, et leur fils Raymond-Rouben fut un éphémère candidat au trône d'Arménie. Sa fille Alice, qui avait formellement des droits sur l'Arménie et sur Antioche, hérita du fief de Toron<sup>42</sup>.

Parmi les dynasties mineures alliées au royaume d'Arménie, citons les Montfort, les Bouillon, les Picquigny, les Mansel<sup>43</sup>.

### *Les unions arméno-grecques*

Le voisinage des dynasties byzantines imposait également une diplomatie matrimoniale grecque. Au XII<sup>e</sup> siècle, les tout premiers princes roubénides, Constantin et T'oros I<sup>er</sup>, semblent avoir épousé des princesses grecques, et T'oros II donna en mariage une de ses filles à Isaac Doukas, arrière-petit-fils de l'empereur Comnène Jean II<sup>44</sup>. Au début du siècle suivant, dans le cadre de sa diplomatie tous azimuts, Léon I<sup>er</sup> proposa sa nièce Philippa à l'empereur grec de Nicée Théodore I<sup>er</sup> Laskaris; le mariage eut lieu vers 1213, mais pour des raisons qu'on ignore, probablement personnelles, Philippa fut vite répudiée et renvoyée en Cilicie<sup>45</sup>.

Un cas plus important se produisit avec la dynastie Paléologue. À la fin du XIII<sup>e</sup> siècle l'empereur Andronic II cherchait un époux pour son fils et coempereur Michel IX<sup>46</sup> (voir l'image N 5). Hét'oum II convoqua les ambassadeurs byzantins, qui repartirent avec deux sœurs du roi, «l'une pour l'empereur, l'autre pour un époux approprié»<sup>47</sup>. Elles durent se convertir et prendre des noms grecs. Théodora fut promise à Théodore Ange, sebastocrator de Thessalie, mais périt peu après avoir quitté Constantinople<sup>48</sup>. Sa sœur devint coïmpératrice sous le nom de Marie Paléologue, comme il figure sur son sceau<sup>49</sup>. Elle accueillit à Constantinople ses deux frères Hét'oum II et T'oros, et plus tard son neveu Guy de Lusignan. La mort de son époux, en 1320, fut suivie de la «guerre des deux Andronic», entre son beau-père et son fils homonymes. Marie Paléologue se fit reconnaître comme souveraine et imposa comme

<sup>41</sup> LOM, p. 136.

<sup>42</sup> LOM, p. 108. Voir **Mutafian**, t. I, p. 399-400, t. II, généalogie 81.

<sup>43</sup> Voir **Mutafian**, t. I, p. 400-405, t. II, généalogies 81, 82.

<sup>44</sup> Voir **Mutafian**, t. I, p. 66-67, 82, t. II, généalogie 31.

<sup>45</sup> **Acropolite**, 15, p. 29. Voir **Mutafian**, t. I, p. 406.

<sup>46</sup> **Pachymère**, IX 5, p. 229.

<sup>47</sup> **Grégoras**, VI, p. 193-195.

<sup>48</sup> **Pachymère**, IX 6, p. 233.

<sup>49</sup> Vienne, Kunsthistorisches Museum, Münzkabinett, 19. Voir **Mutafian**, t. I, p. 407.

héritier légitime son petit-fils Jean V qui allait bientôt naître<sup>50</sup>. Le ménologe arménien la qualifie de «très grande reine des Grecs»<sup>51</sup>.

### ***Les unions arméno-mongoles***

La diplomatie mongole des rois d'Arménie fut très active, mais ne comporta pas de volet matrimonial d'une quelconque importance. Tout au plus peut-on signaler le connétable Smbat, frère de Hét'oum I<sup>er</sup>, qui se vit offrir à Karakoroum une princesse mongole<sup>52</sup>. Il en eut au moins un fils, «Vasil surnommé T'at'ar», armé chevalier en 1264, capturé 2 ans plus tard lors de la première invasion mamelouke de la Cilicie, et décédé en 1270<sup>53</sup>.

À la fin du siècle, un autre Smbat, frère de Hét'oum II, usurpa la couronne, et pour tenter de se maintenir il se rendit en 1297 auprès du souverain mongol de Perse, Ghâzân, où il épousa une de ses parentes<sup>54</sup>.

### ***Conclusion***

De ce bref exposé on peut tirer les conclusions suivantes :

- La diplomatie matrimoniale de l'Arménie cilicienne fut particulièrement active
- Elle fut essentiellement tournée vers le Levant latin
- En règle générale, ces unions furent malheureuses du point de vue personnel, allant jusqu'à des heurts parfois violents entre époux, souvent pour cause d'incompatibilité de caractère et de vision politique
- À quelques importantes exceptions près, qu'on a mentionnées, les princesses arméniennes de ces couples mixtes n'ont pas eu une grande influence sur la politique menée par leurs époux, en particulier en direction du monde arménien

### ***Bibliographie***

L'astérisque \* désigne un ouvrage en arménien

**Acropolite** = Georges Acropolite, *Chronique*, éd. Emmanuel Bekker, Bonn, 1836.

**Cartulaire** = *Le Trésor des chartes d'Arménie ou Cartulaire de la chancellerie royale des Roupéniens*, éd. et trad. Victor Langlois, Venise, 1863.

<sup>50</sup> Grégoras, IX, p. 440-441.

<sup>51</sup> Ms. n° 710 de Venise, in *Hayapatoum*, n° 361, p. 545.

<sup>52</sup> GA, VII, p. 32.

<sup>53</sup> Smbat, p. 244, 247-248, 252.

<sup>54</sup> TT, p. 268. Voir Mutafian, t. I, p. 191.

**CM XIII** = *Colophons de manuscrits arméniens, XIII<sup>e</sup> siècle\**, éd. Artachès Mat'évosian, Erevan, 1984.

**CM XIV** = *Colophons de manuscrits arméniens, XIV<sup>e</sup> siècle\**, éd. Lévon Khatchikian, Erevan, 1950.

**Dédéyan** = Gérard Dédéyan, *Les Arméniens entre Grecs, Musulmans et Croisés, Étude sur les pouvoirs arméniens dans le Proche-Orient méditerranéen (1068-1150)*, 2 vol., Lisbonne, 2003.

**GA** = Grégoire d'Aknèr, *Histoire des Tatares\**, éd. Norayr Bogharian, Jérusalem, 1974.

**GMO** = Maxime Goepp, Claude Mutafian et Agnès Ouzounian, « L'inscription du régent Constantin de Papèron (1241), Redécouverte, relecture, remise en contexte historique », *REA* 34 (2013), p. 243-287.

**Grégoras** = Nicéphore Grégoras, *Histoire byzantine*, éd. et trad. latine Ludwig Schopen, 3 vol., Bonn, t. I, 1829.

**GT** = Guillaume de Tyr, *Chronique*, éd. Robert Huygens, 2 vol., Turnhout, 1986.

**Hayapatoum** = Léonce Alishan, *Hayapatoum\**, t. II, Venise, 1901.

**Ibn al-Athîr** = *The Chronicle of Ibn al-Athîr for The Crusading Period from al-Kâmil fi'l-Ta'rîkh*, trad. Donald Richards, 3 vol., Aldershot, GB, t. I, 2006.

**Ibn Šaddâd** = 'Izz al-Dîn Ibn Šaddâd, *Description de la Syrie du Nord*, trad. Anne-Marie Eddé-Terrasse, Damas, 1984.

**Kouymjian** = Dickran Kouymjian (dir.), *In memoriam Haïg Berbèrian*, Lisbonne, 1986.

**Laurent** = Joseph Laurent, *Études d'histoire arménienne*, Louvain, 1971.

**LOM** = *Lignages d'Outremer*, éd. Marie-Adélaïde Nielen, Paris, 2003.

**ME** = Matthieu d'Édesse, *Chronique\** avec continuation par Grégoire le Prêtre, éd. Mambré Mélik' Adamian et Nersês Têr Mikayélian, Vagharchapat, 1898.

**Mutafian** = Claude Mutafian, *L'Arménie du Levant (XI<sup>e</sup>-XIV<sup>e</sup> siècle)*, 2 vol., Paris, 2012.

**Orderic** = Orderic Vital, *Historiæ ecclesiasticæ*, éd. et trad. anglaise Marjorie Chibnall, 6 vol., Oxford, t. VI, 1978.

**Pachymère** = Pachymère, *Relations historiques*, éd. et trad. Albert Failler et Vitalien Laurent, 5 vol., Paris, t. III, 1999.

**Rüdt-Collenberg IX** = Weyprecht Rüdt-Collenberg, «Les Ibelin aux XIII<sup>e</sup> et XIV<sup>e</sup> siècles», *Ἐπετηρίς IX* (1977-1979), Nicosie, p. 117-248.



**Rüdt-Collenberg X** = Id., «Les Lusignan de Chypre», *Ἐπετηρίς X* (1979-1980), Nicosie, p. 85-319.

**Smbat** = *Chronique de Smbat le Connétable\**, éd. Séropé Akelian, Venise, 1956.

**Têr-Petrosian** = Lévon Têr-Petrosian, *Les Croisés et les Arméniens\**, 2 vol., Erevan, t. II, 2007 .

**TT** = *Cronaca del Templare di Tiro (1243-1314)*, éd. et trad. Laura Minervini, Naples, 2000.

**William of Malmesbury** = William of Malmesbury, *Gesta regum Anglorum*, éd. et trad. Roger Mynors, 2 vol., Oxford, t. I, 1998.

### Կլոդ Մուբաֆեան

#### Կիլիկեան Հայաստանի ամուսնական դիւանագիտութիւնը

Ծանօթ է, որ Կիլիկեան Հայաստանը գլուխ գործոց դիւանագիտութիւն մը վարեց, մանաւանդ խաչակիրներուն ու մոնղոլներուն հետ: Առաջիններուն հետ կարեւոր երես մը՝ ամուսնական կապերուն կը վերաբերի, քանի որ այդ ժամանակաշրջանին նման կապեր քաղաքական բնոյթ ունէին:

ԺՔ. դարուն գլխաւոր ֆրանք տարրը շորս կատին պետութիւններն էին. Երուսաղէմի առաջին երկու թագուհիները ու Եդեսիոյ առաջին երեք կոմսուհիները հայ իշխանուհիներ էին, ու միւս կողմէն Ռուբինեան ութ իշխաններէն՝ եօթը յոյն, կամ մանաւանդ ֆրանք իշխանուհիներու հետ ամուսնացան:

1187-ի Երուսաղէմի անկումէն յետոյ՝ ու Երրորդ խաչակրութեան իբր հետեւանք, ուշագրութիւնը դէպի Կիպրոս կղզի շեղուեցաւ: Իշխանութիւնը երկու կարեւոր տոհմերուն կը պատկանէր, Իբրլիները ու Լուսինեանները, որոնք թագ կը կրէին: Կիլիկեան Հայաստանի վրայ իշխող Հեթումեան տոհմը բազմաթիւ կապեր ստեղծեց իրենց հետ: Իբր ամենափայլուն հետեւանք՝ հայոց երկու թագաւորները Լուսինեան տոհմէն էին, ու երկրորդը՝ Լեւոն Լուսինեան, կը մնայ իբր վերջին հայոց թագաւորը:

## ՎԱԿԻՄԻՐ ԲԱՐԵՈՒԴԱՐՅԱՆ

### ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԱՐԱՆՆԵՐԸ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի անկախության վերականգնումը 9-րդ դ. վերջին և ավելի քան մեկ ու կես հարյուրամյակի խաղաղ, ստեղծագործ աշխատանքի պատմափուլում տնտեսության հետ հուժկու վերելք ապրեց նաև մշակույթը, այդ թվում ուսումնականության բնագավառը:

Ստեղծվեցին նախորդը շունեցող բարձրագույն դպրոցներ՝ վարդապետարաններ: Դրանք գիտակրթական կենտրոններ էին, որոնք ավարտելով սաները ստանում էին վարդապետական աստիճան, իսկ դա համարվում էր գրագիտության, գիտնականության բարձր տիտղոս: Ոչ միայն սովորական վարդապետները, այլ անգամ եպիսկոպոսներն էին ստանում վարդապետական աստիճան:

Բարձրագույն այդ դպրոցներում ուսուցանվել են «յոթ ազատ արվեստները» կամ գիտության յոթ ճյուղերը՝ բաժանված երկու մասի: Հասարակական գիտությունների ոլորտն ընդգրկող եռյակ բաժնում սովորում էին քերականություն, ճարտասանություն և տրամաբանություն: Ճշգրիտ գիտություններն ընդգրկող քառյակ բաժնում ուսուցանվում էր թվաբանություն, երկրաչափություն և երաժշտություն:

Վարդապետարաններում ուսման տևողությունը սահմանվում էր 7-8 տարի: Նրջանավարտը պարտավոր էր քննություններ հանձնել անցած դասընթացից: Դրանից զատ նա ավարտաճառ էր ներկայացնում, որի պաշտպանությունը կատարվում էր հրապարակավ, հատուկ հանձնաժողովի միջոցով<sup>1</sup>:

Բարձրագույն այդ դպրոցները միաժամանակ գիտական կենտրոններ էին: Ուսուցման հետ մեկտեղ այնտեղ գիտական գործունեություն էր ծավալվում: Ձեռագրեր էին ուսումնասիրում, աշխատություններ գրում, արտագրում, դասագրքեր ստեղծում, այլ խոսքով զբաղվում մատենագիտությամբ: Թարգմանում էին անտիկ հեղինակների գործերը, մեկնություններ կատարում, արտագրում, բազմացնում ու տարածում: Ձեռագրերի ստեղծման, արտագրության, դրանցով ուսուցանելու գործնական պահանջի թելադրանքով էական տեղ էր տրվում բանասիրությանը:

---

<sup>1</sup> Տես Լ. Խաչիկյան, «Գլաձորի համալսարանը և նրա սաների ավարտական ատենախոսությունները», Պետական համալսարանի գիտական աշխատությունները, հ. 23, 1946, էջ 434:

Ուսումնագիտական այդ կենտրոնները գլխավորում էին ժամանակի նշանավոր գիտնականները: Նրանք անվանվում էին վարդապետեր, ռաբունապետեր, ուսուցչապետեր, դպրապետեր:

Բագրատունյաց Հայաստանի մայրաքաղաք Անիում անվանի գիտնական, ուսուցչապետ Գրիգոր Մագիստրոսը ճեմարան էր կազմակերպել: Հայտնի է Սանահինի կրթական կենտրոնը, որտեղ դասընթացները անց են կացվել «Մագիստրոսի ճեմարան» կոչվող սրահում:

Անիի վարդապետարանը ծաղկում ապրեց 12-րդ դարում Հովհաննես Իմաստասերի շնորհիվ: Նա համակարգեց վարդապետարանի ուսումնական ծրագրերը, կազմեց հանձնարարելի գրքերի ցանկը, որը հայտնի է «Սարկավագյան մատենացանկ» անունով:

Խոր գիտելիքներ էր տալիս Կարսի վարդապետարանը: Դրա սաներից էր Գագիկ Ա. թագավորը (990-1020), որին Մատթեոս Ուռհայեցին բնութագրում է որպես հմուտ փիլիսոփա և լավագույն ճարտասան:

Նշանավոր էր Ռշտունյաց գավառի Նարեկա վանքի գիտաուսումնական կենտրոնը՝ անվանի մանկավարժ, աստվածաբան Անանիա Նարեկացու գլխավորությամբ: Այդ դպրոցի սանն էր Գրիգոր Նարեկացին:

Հաղպատի ուսումնագիտական կենտրոնը նշանավոր է եղել և գործել է ամբողջ երեք հարյուրամյակ՝ 11-13-րդ դարերում: Այնտեղ կատարվում էին մատենագրական-գիտական բեղուն աշխատանքներ: Հաղպատում ծանրակշիռ ավանդ ունի մեծանուն գիտնական Հովհաննես Իմաստասերը (Հովհաննես Սարկավագը), որն իր մտավոր գործունեությամբ այդ կենտրոնը զարգացման գագաթնակետին հասցրեց: Գարեգին Հովսեփյանը գտնում է, որ Հաղպատում ստեղծագործական այնպիսի կյանք կար, ուսուցիչների և աշակերտների այնպիսի բազմություն, ուր պետք է որ ծաղկեր նաև գրչության արվեստը<sup>2</sup>:

12-13-րդ դարերում արգասավոր էր Նոր Գետիկի կամ Գոշավանքի վարդապետարանը: Այդ կենտրոնի ուսուցչապետ Մխիթար Գոշի համբավը տարածված էր և շատ շատերն էին գալիս նրա մոտ ուսանելու: Ուսումնարանի սան, նշանավոր պատմիչ Կիրակոս Գանձակեցին վկայում է այդ մասին: Նա գրում է. «Բազումք էին, որ աշխատեցան ի նմանէ վարդապետական բանին, քանզի համբաւ իմաստութեան նորա հռչակեցաւ ընդ ամենայն տեղիս»<sup>3</sup>: Նրա աշակերտներից շատերը այլ վայրերում դպրոցներ բացեցին և շարունակեցին մտավոր գործունեությունը:

<sup>2</sup> Գ. Հովսեփյան, Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի ու մշակույթի պատմության, պր. Ե, Երուսաղեմ, 1935, էջ 68-70:

<sup>3</sup> Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, աշխատասիրությամբ Կ. Ա. Օհանջանյանի, Եր., 1961, էջ 217:

Գիտակրթական մարզի բարեփոխումներն ու առաջընթացը նույն ձևով իրականանում էր նաև Կիլիկիայում:

Կիլիկիայի հայկական պետության մայրաքաղաք Սիսը մտավոր նշանավոր կենտրոն էր: Այնտեղ հիմնվել էր բարձրագույն դպրոց-համալսարան, ուր հրավիրվել էր Հովհաննես Երզնկացին (Պլուզ) և կարգում էր քերականություն: Սսի վարդապետարանում մեծ էր նշանավոր փիլիսոփա Վահրամ Բաբունու գիտամանկավարժական վաստակը: Լեոն Ա Մեծագործը, նրա գործը շարունակող Հեթում Ա թագավորը հոգ էին տանում գիտաուսումնական այս կենտրոնի նկատմամբ<sup>4</sup>:

Հոռոմկա սահմանային բերդ-ամրոցում, երբ այն դարձավ հայրապետական աթոռանիստ, ստեղծվում է Դպրեվանք, ուր ուսումնամանկավարժական բեղմնավոր աշխատանք էին կատարում Գրիգոր Գ Պահլավունի Փոքր Վկայասեր հայրապետը և նրան փոխարինող Ներսես Շնորհալին: Կարճ ժամանակում նրանք Դպրեվանքը դարձնում են գիր ու գրականության նշանավոր կենտրոն<sup>5</sup>:

Ուսումնաբերաժշտական գրչության նշանավոր կենտրոն էր Դրազարկը: Մանրանկարչության նշանավոր դեմքերից Սարգիս Պիծակը Դրազարկի սանն էր: Այս մտավոր կենտրոնն աչքի էր ընկնում երաժշտական կրթության և լեզուների ուսուցման բարձր մակարդակով: «Այս ամենը ցոյց կուտան, - գրում է Ա. Ալպոյաճյանը, - թէ Դրազարկի վանքը պարզ մենաստան մը չէր, այլ ուսումնարան մը, որ փայլած է ԺԲ դարէն մինչև ԺԳ դարուն կէսերը»<sup>6</sup>:

Սկեռայի վանքում գործել է նշանավոր ուսումնարան, ուր ուսուցիչների և աշակերտների մի ամբողջ խումբ Ներսես Լամբրոնացու գլխավորությամբ մատենագիտական լուրջ աշխատանքներ էին կատարում<sup>7</sup>:

Կիլիկիայի Աև լեռան Պահլավունի, Արեգի, Ուլինի, Մարաշի, Ընկուզուտի, Շաքիրի և մյուս վարդապետարանները մեծ համբավ ունեին: Իրենց գիտելիքները հարստացնելու, խորացնելու նպատակով Հայաստանից մասնագետները մեկնում էին Կիլիկիայի գիտական կենտրոններ, ինչպես վարվեց Մխիթար Գոշը:

Միջնադարյան Հայաստանի բարձրագույն դպրոցների մեջ նշանավոր է հատկապես Գլաձորի համալսարանը: Այն հիմնադրվել է 1282 թ. Վարդան Արևելցու սան Ներսես Մշեցու կողմից: Նա մշակում է ուսման ծրագիրը, հավաքագրում խոստումնալից աշակերտներ, կենտրոնն ապահովում լավ դասախոսներով: Մշեցին իր սաներից Եսայի Նչեցուն ձեռնադրում է վարդապետ: Իր մահից հետո (1284 թ.) Նչեցին դառնում է ուսուցչապետ և երկար տասնամյակ-

<sup>4</sup> Տե՛ս Լ. Խաչերյան, Հայագիր դպրության ուսումնասիրության կենտրոնները, դպրոցները, դպրեվանքերը, վարդապետարանները, ձեռնարանները, ակադեմիաները և համալսարանները միջնադարյան Հայաստանում և Կիլիկիայում (V-XVI դդ.), Լիզպոն, 1998, էջ 449:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 295-298:

<sup>6</sup> Ա. Ալպոյաճյան, Պատմություն հայ դպրոցի, հ. Ա, Գահիրե, 1946, էջ 209:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 208-210:

ների ընթացքում ձեռք բերում վիթխարի հաջողություններ: Գլաձորի համալսարանի հոշակը տարածվում է ամբողջ Հայաստանում: Փամանակակիցները նրան «Երկրորդ Աթենք» են համարել: Գլաձորի ուսումնագիտական կենտրոնը ժամանակակիցներն ու հայագետները համարել են համալսարան:

«Յոթ ազատ արվեստների» ուսուցումը կատարվում էր պատշաճ մակարդակով:

Եռյակ ուսուցման առաջին անհրաժեշտ առարկան քերականությունն էր: Այդ առարկայով գիտելիք էր հաղորդվում ոչ միայն լեզվի առանձնահատկությունների, օրինաչափությունների, այլ նաև գրականության տեսության, արվեստի իմաստասիրության, ճարտասանության, երաժշտության վերաբերյալ: Այդ պատճառով էլ քերականությունը որպես ուսումնական հիմնական առարկա դրված է եղել ինչպես եվրոպական, այնպես էլ Հայաստանի միջնադարյան համալսարանների ուսուցման ծրագրերի հիմքում: Գլաձորի համալսարանում որոշակի չափով առաջ մղվեց քերականական միտքը: Նրա սաներից շատերը դպրոցներ հիմնեցին իրենց ծննդավայրերում և շարունակեցին ու խորացրին Գլաձորի ավանդները<sup>8</sup>: Այս առարկան ուսուցանվում էր հիմնականում Եսայի Նչեցու «Վերլուծություն քերականութեան» աշխատությամբ:

Գ. Հովսեփյանը ծանրակշիռ աշխատություն է համարում Եզեկիելի մեկնությունը, որը նա գրել է Ստ. Օրբեյանի պատվերով: Նչեցու այդ գործը նշանավոր է առատ աղբյուրների օգտագործմամբ:

Եռյակ ուսուցման երկրորդ առարկան ճարտասանությունը կամ հոետորությունն էր: Այն գիտելիքներ էր տալիս նաև գրական ստեղծագործության, ոճաբանության, գեղագիտության վերաբերյալ: Այդ առարկան սովորեցնում էր ճառ, քարոզ, պաշտոնական ուղերձներ, նամակներ գրելու արվեստը: Ճարտասանությունը պատշաճ էր մատուցվում հենց նրանով, որ Մովսես Խորենացուն վերագրվող «Գիրք Պիտոյից»-ը քանիցս ընդօրինակվել է Գլաձորի համալսարանում: Ճարտասանությունը ոչ միայն պերճախոսության, այլև համոզելու արվեստ էր: Այդ պատճառով պահանջվում էր, որ ճարտասանը մեծ պատրաստություն, լայն մտահորիզոն ունեցող անձնավորություն լիներ: Նույն եղանակով ու խորությամբ ուսուցանվում էին եռյակ ու քառյակ ծրագրերի մյուս առարկաները:

Պոռոյանների և մյուս իշխանական տների նկատմամբ մոնղոլական պետության հալածական նոր քաղաքականության հետևանքով փակվում է Գլաձորի համալսարանը 1338 թ. Եսայի Նչեցու մահից հետո:

Գլաձորի ուսումնագիտական ուժերը իրենց գործունեությունը շարունակում են Վայոց Ձորի Հերմոնի վանքում, որտեղ համալսարանի ռաբունապետ է

<sup>8</sup> Տե՛ս Ս. Արևշատյան, Ա. Մաթևոսյան, Գլաձորի համալսարանը միջնադարյան Հայաստանի լուսավորության կենտրոն, Եր., 1984, էջ 29:

կարգվում Հովհան Որոտնեցին: Ապա նա իր ուսումնակրթական գործունեությունը շարունակում է Տաթևում և Որոտնավանքում մինչ 14-րդ դարի 80-ական թվականների վերջերը: Նրան փոխարինում է Գրիգոր Տաթևացին: Վերջինս մատենագիտական, ուսումնամանկավարժական, հասարակական լայն գործունեություն է ծավալում: Նա 1409 թ. վարդապետական աստիճան է տալիս իր 10 սաներին, որոնք Տաթևի համալսարանի վերջին շրջանավարտներն էին:

Տաթևացու երկու աշակերտները Թովմա Մեծոփեցին և Հովհաննես Հերմոնեցին կատարեցին իրենց ուսուցչի ցանկությունը՝ ամենայն հայտնի կաթողիկոսությունը վերահաստատեցին իր օրինական տեղում՝ Վաղարշապատի Ս. Էջմիածնի վանքում<sup>9</sup>:

Անշուշտ Հայաստանի բազմաքանակ բարձրագույն դպրոցները բոլորը չէ, որ Գլաձորի կամ Տաթևի համալսարանների մակարդակին էին հասել և նույն ծավալով ու խորություններ կարող էին կազմակերպել «յոթ ազատ արվեստների» ուսուցումը: Այդուհանդերձ, թեկուզ թերի ծրագրով նրանք բարձրագույն դպրոցների կարգավիճակով էին կազմակերպում ուսումնագիտական աշխատանքները:

Կիրիկիայի հայկական պետությունից գոյությունը մեծ պատվար էր Հայաստանի մտավոր կյանքի պահպանման ու զարգացման համար: Սերտ համագործակցություն գոյություն ունեւր մշակույթի բոլոր բնագավառներում այդ թվում գիտակրթական ոլորտում: Հայրենի երկրում ստեղծագործական աշխատանքի դժվարությունների կամ անհնարին լինելու պարագայում նվիրյալներն անցնում էին Կիրիկիա, այնտեղ ապաստան ու նպաստավոր պայմաններ գտնում:

Հայաստանի բարձրագույն դպրոցների մասին լրիվ ու ամբողջական պատկերացում ունենալու համար անհրաժեշտ է թեկուզ որոշ զուգահեռներ անցկացնել Եվրոպայի ուսումնական հաստատությունների հետ: Ինչպես Եվրոպայում, այնպես էլ Հայաստանում բարձրագույն դպրոցները ծնունդ են առնում հասարակության հասունացման, զարգացման որոշակի աստիճանում զարգացած միջնադարում: Այդ դարաշրջանում երկու դեպքում էլ կրթության ոլորտում զորեղանում է աշխարհականացման միտումը: Եվրոպական երկրների նման Հայաստանում ևս ուսման գործընթացի հիմքում ընկած էին «յոթ ազատ արվեստները»: Ինչպես այնտեղ, այնպես էլ Հայաստանում, մեծ նշանակություն էր տրվում անտիկ հեղինակների երկերի մեկնաբանմանն ու օգտագործմանը: Ինչպես Եվրոպայում, այնպես էլ Հայաստանում բարձրագույն դպրոցներում դասախոսում, ստեղծագործական աշխատանք էին կատարում երկրի նշանավոր գիտնականները:

Ուրիշ խոսքով Հայաստանում կրթությունն առաջադիմում էր եվրոպական երկրների ուսումնական գործընթացին համահունչ:

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 51:

Եվրոպական երկրների համեմատությամբ կար մի էական տարբերություն: Այնտեղ կրթական կենտրոններն առաջանում էին երկրի խաղաղ պայմաններում, պետության օգնությամբ ու հովանավորությամբ: Հայաստանի հարևան Բյուզանդիայում 10-րդ դարի բարձրագույն հաստատություններից մեկում կայսրը դասախոսներին աշխատավարձ էր վճարում, իսկ ուսանողներին նյութական օգնություն ցույց տալիս<sup>10</sup>: Կոստանդնուպոլսի 11-րդ դարի համալսարանի իրավունքի ու փրկիսոփայության դպրոցների տնօրենները բարձր աշխատավարձ էին ստանում և իրենց պաշտոնը վարում ցմահ<sup>11</sup>:

Հայաստանում իրավիճակը միանգամայն այլ էր: Բազրատունյաց պետության անկումից, 11-րդ դարի կեսերից սկսած երկրում իշխում էին սելջուկ-թուրքերը և մոնղոլները, որոնք անխնա ավերածությունների էին ենթարկում երկիրը այդ թվում և կրթական կենտրոնները: Հայաստանում բարձրագույն դպրոցները հիմնականում ստեղծվեցին ու գոյատևեցին հենց դժվարին այդ ժամանակաշրջանում՝ 12-13-րդ դարերում: Ուսումնական գործը կազմակերպվում էր դժվարին ու ծանր պայմաններում, անապահով վիճակում: Ձեռագրերից մեկի հիշատակարանում կարդում ենք.

«Ես Մխիթար գրիչ սորա  
Թուղթս անկոկ ու գրիչ չկա  
Եւուրքս ցուրտ ու պարզկայ  
Ջարդարինս բարձ ու կրակ չկայ  
Դոներս չոր ու սպաս չկայ,  
Եւ այս Գլաձորն ով գիտենայ  
Ես յոյժ նեղած ու ճար չկայ  
Գիրքս յերկար ու եզր չկայ  
Եւ ես պանդուխտ ու վեղար չկայ»<sup>12</sup>:

Նման դժնդակ պայմաններում վարդապետարանների ստեղծումն ու ամեն տեսակ դժվարությունները հաղթահարելու գնով դրանց ստեղծագործական գոյատևումը բարձր արժեքի մասնակարիք ունի.

«Սովորական կարծիք է, - գրում է մեծանուն գիտնական Ն. Ադոնցը, - որ Բազրատունյաց անկումից հետո հայ կյանքը գահավիժում է և մտնում իր խավար շրջան, գրեթե կանգ է առնում դարեր շարունակ կաշկանդված իր գործունեության մեջ՝ շնորհիվ իր շուրջը բռնացող օտարոտի կարգերին: Սակայն հակառակ այդ ծանր կացության, որ ստեղծվել էր Հայաստանում և ամբողջ Առաջավոր Ասիայում հեռու են խուժած նոր ու բարբարոս ժողովուրդների հեղեղումով, անուրանալի է, որ հայ կյանքը չի մահացել: Հայ հեզ աշխատասիրու-

<sup>10</sup> Տե՛ս *Культура Византии (вторая половина VII-XII вв.)*, Москва, 1989, с. 394-395:

<sup>11</sup> Տե՛ս **А. Т. Каждан**, *Византийская культура*, Москва, 1968, с. 65:

<sup>12</sup> **Վ. Ալիշան**, *Սրտական, Վեներիկ*, 1893, էջ 135:

թյունը, շինարար ոգին և արթուն միտքը շարունակել են փայլվիլել զանազան կենտրոններում, ինչպես մշտավառ ճրագներ, և հավետ կենսունակության ապացույցներ տվել քաղաքակրթական նորանոր ճիգերով ու ստեղծագործություններով»<sup>13</sup> :

Հայաստանում կրթության ոլորտում կատարվող առաջադիմությունը ընթանում էր ամբողջ երկիրը համակած մշակութային ընդհանուր վերելքի պայմաններում: Այդ ակնառու վկայություն է լուսավորության նկատմամբ անվերապահ մեծ ձգտում ունենալու: Գիտակրթական առաջընթացն իրականանում էր ժողովրդի բոլոր շերտերի և ամեն մի դժվարության դիմակայող նրա նվիրյալ զավակների անձնագործ ջանքերով: Համընդհանուր այդ ջանքերի շնորհիվ շեշտվում, ամրապնդվում էր ազգայինը, ամուր հող ստեղծվում ձուլվելու վտանգին ընդդիմանալու: Լայն տարածում գտած գիտաուսումնական կենտրոնները՝ վարդապետարանները, կարևոր գործոն էին նախնիներից հաջորդ սերունդներին ավանդված ժառանգության վրա հենվելու, ազգային ոգին, ազգային ինքնությունը պահպանելու գործում:

### Vladimir Barkhudaryan

#### The Medieval Clerical Colleges and National Identity

A number of clerical colleges were established in numerous cities and monasteries of Armenia and Cilicia. More prominent among them was the college of Gladzor, which has been called a university and was considered as “second Athens”.

The clerical colleges were very important. A cultural prosperity occurred along with the economy's, including the educational sphere, when the independence of Armenia was restored in the year 885. There were established high schools, clerical colleges, where “seven free arts” were taught. Besides being teaching places the clerical colleges were also scientific-creative centers that were headed by the well-known scientists of the time.

<sup>13</sup> Գ. Կաթողիկոս Հովսեփյան, *Խաղբակյանք կամ Պոռշյանք հայոց պատմության մեջ*, Անթիլիաս-Լիբանան, 1969, էջ 462:





## ԹԵՈ ՄԱԱՐՏԸՆ ՎԱՆ ԼԻՆՏ

### ՎԱՂ ՇՐՋԱՆԻ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Հաջորդ մի քանի էջով կցանկանայի ընթերցողի ուշադրությունը հրավիրել մի թեմայի վրա, որ կարող է անսպասելի թվալ: Զբաղվելով Գրիգոր Մագիստրոսի թողած գրական ժառանգությամբ, ինձ հետաքրքրեց նրա կարծիքը վաղ շրջանի պատմագրության մասին: Ի՞նչ է Գրիգոր Պահլավունին ասում դրա մասին, ո՞ւմ գործերի հետ է ծանոթ եղել, որո՞նք էին դրանց անդրադառնալու հանգամանքները:

Մի շարժառիթ ևս կար, որ դրդեց փորձել անցյալի աչքերով նայելու ավելի վաղ անցյալին: Դա այն փաստն է, որ անցյալը շարունակ կարծես թե փոխվում է: Մենք բոլորս էլ որոշ չափով միշտ մեր անցյալը կառուցում, ստեղծում ենք: Այն սերնդե սերունդ տարբեր տեսք ունի: Ի՞նչ ենք հիշում, կամ համարում ենք հիշատակի արժանի այն անցած ժամանակների իրողություններից: Ի՞նչպես են այդ հիշողությունները ձևավորված և կազմակերպված: Ի՞նչն է պատահական, երկրորդական, և ի՞նչն է էական, սահմանեցնող նշանակություն ունենում: Եվ սա ոչ միայն առանձին անձնավորության, այլ նաև հասարակության, ժողովրդի, ազգի համար: Վերջին այդ եզրերն իրենք էլ կարող են նման ընտրության արդյունք հանդիսանալ:

Մի օրինակ բերեմ, որը բոլորին քաջ հայտնի է: Եղիշեն իր Վարդանի կամ Հայոց պատերազմի պատմության մեջ ասում է, թե հայերը Քրիստոնեությունը պաշտպանում էին զրադաշտական Մասանյանների դեմ, որպես իրենց հայրենի օրենքը: Սակայն պետք է նկատի ունենալ, որ հինգերորդ դարի կեսին Քրիստոնեությունը դեռ բավականաչափ նոր կրոն էր, և այն նախարարները, ովքեր Մասանյանների կողմն էին ընտրել, որոշ արդարությամբ կարող էին հաստատել, որ հայրենի օրենքը հենց զրադաշտականությունն է, որպես իրենց Պարթև նախնիների կրոնը: Եղիշե վարդապետի տեսակետից այն փաստը, որ Վարդան Մամիկոնյանի ժամանակ քրիստոնեությունն արդեն մեկուկես դար հաստատված էր եղել, շատ ավելի կարևոր էր, քան այն որ զրադաշտականությունը Հայոց հին կրոնն էր եղել:

Թվում է, հետաքրքրական կլինի փորձել հասկանալ, թե ինչպես է մոտենում անցյալին Գրիգոր Մագիստրոս Պահլավունին: Մագիստրոսը շատ յուրահատուկ անձնավորություն է հայոց պատմության մեջ: Իր ժամանակի ամե-

նագիտուն, բազմակողմանի գիտելիքների տեր մի անձ է նա եղել<sup>1</sup>: Ավելին, նա արժանի է հատուկ ուշադրության, քանի որ եկեղեցական չի եղել: Պակաս կարևոր չէ նրա կարծիքներին ծանոթանալը նաև այն պատճառով, որ նա ամենաազդեցիկ կաթողիկոսների տոհմի նախահայրն է: Սկսած իր որդուց, Վահրամից, այսինքն Գրիգոր Բ Վկայասերից (1065-1105), Պահլավունիները փաստորեն եղել են կաթողիկոս-թագավորներ, մինչև իշխան Լևոն II թագադրումը որպես Լևոն I (հայոց) թագավոր:

Գրիգոր Մագիստրոսն իհարկե չէր կարող իմանալ, որ Պահլավունիների տոհմն այդքան կարևոր դեր էր խաղալու ապագայում, չնայած չեմ կարծում, որ դա նրան զարմացներ: Ինքը միշտ բարձր պաշտոններ էր գրավել, ոչ միայն Բագրատունյաց Հայաստանում, այլ նաև Բյուզանդական կայսրության մեջ: Իր ռազմական, քաղաքական և ընդհանրապես ղեկավարմանն առնչվող փորձի հետ միասին, նա ճանաչված էր նաև որպես աստվածաբան: Կարելի է ասել, որ այդ շափազանց ընդունակ անձնավորությունն իր մեջ զուգակցում էր և՛ աշխարհիկ մարդու, և՛ աստվածաբանի, որը կրոնավորների մտերիմ ընկերն էր: Նրա աշակերտների թվում կային եպիսկոպոսներ, և նույնիսկ ապագա մի կաթողիկոս:

Մագիստրոսի երկերում վաղ շրջանի պատմագրությունը ներկայացված է երկու երկերով՝ Ագաթանգեղոսի Պատմությամբ և Մովսես Խորենացու Հայոց պատմությամբ<sup>2</sup>: Գիտնականների տեսանկյունից է կախված, Խորենացուն վաղ շրջանի պատմագիր համարել, թե ոչ: Այսօր ես այդ հարցը չեմ շոշափում, քանի որ Մագիստրոսի աշխարհայացքի համար այն էական չէ: Նա Խորենացուն ընդունում է որպես հայոց անցյալին վերաբերող հարցերում մի հեղինակություն: Բացի նշված երկու պատմական երկից, Մագիստրոսը դիմում է առասպելներին՝ որպես անցյալի ճանաչման կարևոր միջոցի: Այժմ անդրադառնանք Խորենացուն և առասպելներին, իսկ Ագաթանգեղոսին կանդրադառնանք մեկ այլ առիթով:

Մագիստրոսն իր թղթերում Մովսես Խորենացուն մի քանի անգամ է հիշատակում, ուստի հաստատ է, որ նրա Պատմությամբ ծանոթ է<sup>3</sup>: Ավելին, ինչպես կտեսնենք, նրա պատմության փիլիսոփայությունը շատ մոտ է Խորե-

<sup>1</sup> Գրիգոր Մագիստրոսի կյանքի և ստեղծագործության մասին, տ. Langlois 1869, Կոստանեանց 1909, Leroy 1935, Խաչերեան 1987, Sanjian 1993, Մխիթարյան 2001, Terian 2012, Մուրադեան 2012, Մուրադյան 2014, van Lint 2010, 2012, և 2014:

<sup>2</sup> Կոստանեանց 1910, 318-324, Terian 2012, 57-58 (տողեր 922-966), 84-87 (ժամոթագրություններ) and 113 (բնագիր): Արձագանքներ կան նաև Կորինի Վարդ Մաշտոցի-ից, բայց Մագիստրոսի հաղորդած տեղեկությունները կարող են կաղած լինեն Ագաթանգեղոսի և Խորենացու երկերից:

<sup>3</sup> Մ21.44, էջ 272 և ծան. 2 (Կ2), Մ24.51, էջ 284 (Կ19); Մ27.27, էջ 296 և ծան. 2 (Կ18), Մ46.5, էջ 322 (Կ7)՝ Գետադարձի ախորի ժամանակ գրված մխիթարական նամակ է: Մ53.2, էջ 332 (Կ32).

նացու տեսակետներին: Օրինակները բերելու եմ Մուրադյանի նոր՝ Մառե-նագիրք Հայոց-ի տասնվեցերորդ հատորում լույս ընծայած հրատարակություն-նից<sup>4</sup>: Մուրադյանի հրատարակության կազմակերպչական սկզբունքները տար-բերվում են Կոստանյանցի կիրառածներին: Կոստանյանցի մոտ առաջին ինը նամակները ուղղված են Պետրոս Գետադարձ Կաթողիկոսին (1019-1058)<sup>5</sup>: Մուրադյանի քսանմեկերորդ նամակը (Կ2) այն նամակն է, որտեղ Մագիստրոսը խնդրում է, որ Գետադարձն իրեն ուղարկի Անանիա Շիրակացու Քննիկոս-ի ձեռագիրը, որը՝ չկարգացված և շուտամնասիրված, գտնվում է կաթողիկոսա-րանի գրադարանում: Այստեղ երեք հանգամանք են կարևոր համարում: Նախ, Մագիստրոսը կրկնում է Խորենացու Պատմության սկզբում արտահայտված այն դժգոհությունը, որ հայերը չեն սիրում ուսումը, ոչ էլ արժանի փաստեր գրավոր ձևով պահպանելը, և ընդհանրապես գրքեր չեն սիրում: Երկրորդն այն է, որ նա միևնույն ժամանակ կրկնում է Անանիա Շիրակացու ասածը, որը գտնվում ենք նրա ինքնակենսագրական արձակում: Երրորդ տարրը, որն էական է Մագիստրոսի դիրքորոշման նշանակությունը ընկալելու համար, այն փաստն է, որ Գրիգորը մի նախարար է, աշխարհական, մեծ տոհմի ժառան-գորդ, և նույն ժամանակ սիրում է ուսումը, որն ավելի շուտ նախատեսված էր կրոնականների համար: Մագիստրոսի տոհմը ծագում էր Արշակունիներից, Գրիգոր Լուսավորչի տոհմից և Մամիկոնեաններից<sup>6</sup>: Հետևաբար Գրիգորն իր մեջ միավորում է միջնադարյան Հայաստանում գոյություն ունեցած երկու տարբեր ասպարեզներ՝ եկեղեցականը և աշխարհականը:

Մեջբերում եմ բավական երկար մի հատված՝

«43. Եւ արդ քանզի սակս մատենին Անանիայի եղեւ յիշատակ իմաստա-սիրելոյս մեզ, բեր ոչինչ խրթին եւ անյայտարար. կամիմք զհայցուած մեր ծանուցանել մերոյ լուսավորչիդ: 44. Ի բազմաց անփոյթ եղելոյ այսպիսի գոր-ծառնութիւնք եւ հանդէսք, որ ոչ երբէք ի ստադին<sup>7</sup> վարժելոց գրամարտկոսաց և քերդողաց հնացեալ, ի մոռացումն այսպիսոյ մատենի ոչ միայն եղեւ ան-կանել, այլ եւ բազմաց, որպէս ի մերոյն Մովսիսէ ուսեալ, գտեալ գտաք, եւ յայդմ մատենի մակագրութեան վերծանեմք: 45. Քանզի Արամեան սերի հպար-տութիւն եւ անամոք բնութիւն եւ խստապարանոց բարս ոչ ստորակայի յայ-սոսիկ կրթութիւնս յարատեական հաւանեալ, կամ եթէ ոչ փոյթ, որք պետակա-

<sup>4</sup> Կոստանեանց 1910 զիբը երկար ժամանակ մեր հիմնական աղբյուրն է եղել Մագիստրոսի նամակների համար: Մեր հղումները երբեմն ներառում են Կոստանեանցի հրատարակությունը:

<sup>5</sup> Մուրադյանի հրատարակության հետևյալ թվեր են՝ Մ7, Մ21, Մ19, Մ20, Մ25, Մ70, Մ46, Մ58, Մ3:

<sup>6</sup> Teryan 2012, 11 և ծան. 24: Իր ծագումն անշուշտ կարևոր էր Մագիստրոսի համար, սակայն արդի գիտնականները միշտ չեն ընդունում նրա ծննդաբանությունը:

<sup>7</sup> Կ՝ ստագին:

նին հասին բախտի, մեծարու լինել եւ խուզել զխոհեմական արհեստս ի զարդ քարգոնոսական ապարանին, որպէս մեծ Փտլոմէոսն այն եւ որք այլք այդպիսիք: 46. Եւ զի բազում աշխատութեամբ խոնջեալ եւ տագնապեալ, մինչ տակաւին յիմում անտիականն ելով տիս, հազիւ հազ մակացու այսմ եղեալ, սուղ ինչ էակացն հասեալ, ըստ որումն են յարաբացուց եւ քաղդէացուց եւ յունաց, ոչ դանդաղեցայ քննութեամբ զփորձ առնուլ»<sup>8</sup>:

Գրիգոր Պահլաւունու քսանյոթերորդ նամակը (1042-1044 թթ-ի ժամանակաշրջանում), ուղղված է Սարգիս վարդապետին, գրված այն ժամանակ, երբ Գրիգորը Անիում հալածվում էր Գագիկ թագաւորի կողմից<sup>9</sup>: Գրիգորն իրեն համեմատում է Գրիգոր Լուսաւորչի հետ, երբ վերջինս հալածանքների էր ենթարկված Տրդատ թագաւորի կողմից: Գրիգորը բացատրում է, որ Աստուածաշնչից կարող էր բերել նաև ժողովողի և Երեմիայի օրինակները, սակայն նախընտրում է «մերոյն» Գրիգոր Լուսաւորչին հիշեցնել, և բոլոր այն մարդկանց ովքեր նման վիճակում էին եղել: Ամփոփելով հետևյալն է ասում Գրիգորը՝

«Եւ արդ բաւական են այսոքիկ: 27. Թէեւ ի վախճան ժամանակի հասեալ հանդիպեցաք, ըստ մարգարէութեանն Դանիէլի, եւ կամ ըստ մերոյն տեսլեանն Իսահակայ սրբոյ եւ քահանայապետի, կամ ըստ սրբազանին Մովսէսի յիւրում սքանչելի տախտակի մարգարէական տառի, զողբս ի վերայ Հայաստանեայցս առնելով, սակայն ըստ իմում կարի ոչ անտեղի տեսի սուղ ինչ ցանկակարկատ լինել, քանզի զայսոսիկ որ խրամատենն, քանզի «ոք քակէ զցանկ հայրենի, աւճ հարցէ զնա» ըստ աստուածայնոյն մարգարէութեան տեսողի»:<sup>10</sup>

Բագրատունյաց թագավորութեան ծայրահեղ վիճակը Գրիգորին հիշեցնում է աղետալի մարգարէությունները, դրանց մեջ նաև Սահակ Պարթևինը, որ գտնում ենք ներմուծված Դազար Փարպեցու Հայոց պատմության մեջ: Այն ավելի ուշ ժամանակի աշխատանք է, բայց պարզ է, որ հորինվել էր Գրիգորի օրերից առաջ: Մեջբերած հատվածը կարևոր է նաև նրանով, որ Գրիգորն իր ժամանակը «վախճան ժամանակ» է անվանում և համեմատում այն Մովսէս Խորենացու վերջին ողբի հետ, որպես պատշաճ մի համեմատություն:

Ողբագին եղանակով է գրված նաև քսանչորսերորդ նամակը, որը նույնպես ուղղված է Սարգիս վարդապետին<sup>11</sup>: Այստեղ գտնում ենք Գրիգորի ողբն իր ժողովողի կորսված մեծութեան մասին: Գրիգորը տալիս է Երվանդունի և Արշակունի թագավորների անունները, հավանաբար Գագիկ թագավորին նրանց հետ համեմատելու համար:

<sup>8</sup> Մ21.43-46, էջ 271-272; Կ2, էջ 9:

<sup>9</sup> Մ27, էջ 294-298; Կ18:

<sup>10</sup> Մ27.26-27, էջ 296-297; Կ18, էջ 55:

<sup>11</sup> Մ24, էջ 278-284; Կ19, էջ 57-64:

Բերենք մի քանի օրինակներ ողբի ոճով Գրիգորի գրած այդ նամակի մի հատվածից՝

«Մ'ւր թորգոմեան թեակոխութիւն, ո՛ւր հայկեան հանդէս եւ հիացուցանելի գործառնութիւն, ո՛ւր Արամեան արմատ եւ մեծութիւն...

ո՛ւր Արամ Արամեան նահապետն, ո՛ւր Արայն գեղեցիկ, Արարատեան կերտացօղ»<sup>12</sup> :

Գրիգոր Մագիստրոսը հաճախ պարսկական անուններ և ուրիշ տարրեր է մեջբերում առանց բացասական դիտողությունների: Այդ առումով նա տարբերվում է հորենացուց: Նրա հետ Գրիգորը համամիտ է հունական ուսման և առասպելների հանդեպ ունեցած սիրո հարցում:

Նրա պատմության փրիխտոփայտությունը մոտ է հորենացուն՝ Գրիգորի համար Քրիստոնեության ընդունումը ոչ այնքան որոշիչ պահ է եղել հայոց երկարատև պատմության մեջ, չնայած ինքը Հայոց եկեղեցու հավատարիմ մի զավակ է: Նրա համար շափազանց կարևոր է մեծամեծ տոհմերի շարունակականությունը, և դրանց ներկայացուցիչների ցուցաբերած արիությունը: Այդ մոտեցումը կիսում է նա նաև Թովմա Արծրունու հետ: Դրա մի օրինակը հետևյալն է՝

«Թէպէտև զկնի կցորդաբար ի մեզ տողանի սեր և նահապետութիւն և թէպէտև ոմանց անարի և անզօր գոլ, սակայն տիրապետեալ տանս Թորգոմեան, պահելով զաթոռն»<sup>13</sup> :

Բաց թողնելով այն սերունդները, որոնք ծառայության մեջ են ապրել, ինքը հիշատակում է իր տոհմը, Պարթև Արշակունիների մասին ասում է՝

«Մ'ւր մերն Տրդատ, Խոսրով, Տիրան և Տրգրան, Արշակ, Վարազդատ, Արշակ և վերջին Վաղարշակ»<sup>14</sup> :

Խորենացու նման նա հիշատակում է նաև Վահագնի ծնունդի հեթանոսական երգը, մեջբերելով այն որպես հին օրերի առավելություններից մեկը, ասելով՝

«ուր Վահագն որ և Երկնէր երկիր, և որ զկնի առասպելին առումն»<sup>15</sup> :

Հասնելով իր ժամանակին, նա չի թաքցնում իր դառնությունը՝

«Եւ մերոյս հաւ ի հիացման եկեալ հրացեալ խորհրդով հաւանիմ ինձ միայն հնարս զհարկաւորն հատուցանել զհարցն իմ սահման. զի թերևս զերծեալ ի ծորեալ և ի դառն կենցաղոյս, որ իբրու զանկենցաղս վարիմք: 35. Քանզի զի՞նչ աւգուտ մեզ երկարութիւն ամաց, եւ մեծագոյն բարկութիւնս եւ զտառապանս կրել եւ տեսանել եւ ի վերայ յոքունց առնուլ ողբս եւ զնոցայն ցաւակցել: 36. Վասն զի իմ է բոլորիցն բեկումն [...]»<sup>16</sup>

<sup>12</sup> Մ24.29, էջ 280; Կ19, էջ 59-60:

<sup>13</sup> Մ24.32, էջ 282; Կ19, էջ 61:

<sup>14</sup> Մ24.31, էջ 282; Կ19, էջ 61:

<sup>15</sup> Մ24.28, էջ 280բ և ծան. 20; Կ19, էջ 61:

<sup>16</sup> Մ24.34-36 էջ 282; Կ19, էջ 61:

Կոստանյանցն ուշադրություն է դարձրել Մագիստրոսի օգտագործած հավանաբար ժողովրդական աղբյուրների վրա: Գրիգոր Պահլավունին որոշ տեղեկություններ ունի հիշատակած անձանց մասին, ովքեր բացակայում են Խորենացու մոտ<sup>17</sup>: Շատ հավանաբար Մագիստրոսը գրանք վերցրել է իր ժամանակին դեռ պատմվող առասպելներից: Ուշադրության արժանի է այդ առասպելների արժեքի մասին Մագիստրոսի նամակներում արտահայտված կարծիքները: Մագիստրոսը առասպելական նյութը խառնում է Խորենացուց իր վերցրած տեղեկություններին: Այդ տեղեկությունները Խորենացին իր հերթին հաճախ հին վիպասանություններից և առասպելներից էր վերցրել: Մագիստրոսն այդ երկու տիպի աղբյուրները կարծես նույն լրջությամբ է ընդունում որպես անցյալի մասին արժանի և վստահելի տեղեկություններ: Եթե դա հիշենք, առանձին հետաքրքրություն է ստանում Մագիստրոսի մեջբերած Արտաշեսի վիպասանության հատվածը, «գոր և ի գոեհիկա աւանդեալ գտաք»<sup>18</sup>: Մագիստրոսի համար պատմությունը ոչ միայն գրավոր ձևով է ավանդվել, այլև բերանացի, և ավանդվել է ոչ միայն կրթություն ստացած եկեղեցականների կողմից, այլ նաև ժողովրդի, ամենապարզ՝ «գոեհիկ» մարդկանց կողմից: Սա մի կարևոր հանգամանք է նաև հայ ժողովրդի պատմության մեր ընկալման համար:

Գրիգոր Մագիստրոսի գործերը իրենց ամբողջության մեջ ներկայացնում են ցարդ լիովին շճանաչված վիպություն տասնմեկերորդ դարի աշխարհիկ մի մարդու աշխարհայացքի, և այն դերի, որ նրանում խաղում են պատմագրությունը, առասպելներն, Աստուածաշունչը և դիցաբանությունը: Դրանք հազվագյուտ հնարավորություն են տալիս ուսումնասիրելու մի նախարարի բազմակողմանի մտքերն ու կարծիքները իր անձնական կյանքի, իր տոհմի, իր ազգի և այն դերի մասին, որ նրա համար ունեն բանավոր և գրավոր ավանդությունները:

Գրիգոր Մագիստրոսի գրվածքներում հայոց պատմության վաղ շրջանի արձագանքները նաև կարևոր լույս են սփռում հայ հնագույն պատմական հուշարձանների վրա:

### Գրականություն

**Langlois Victor**, 1869 ‘Mémoire sur la vie et les écrits de Prince Grégoire Magistros, duc de Mésopotamie, auteur arménien du Xie siècle’, *Journal asiatique*, 5-64.

**Leroy M.**, 1935 ‘Grigor Magistros et les traductions arméniennes d’auteurs grecs’, *Annuaire de l’Institut de Philologie et d’Histoire Orientales et Slaves* 3 (1935), 263-294.

<sup>17</sup> Կոստանեանց 1910, 318-319:

<sup>18</sup> ՄՅԶ.8, էջ 332; Կ33, էջ 86-87; Արտաշեսի խոսքեր, էջ 86:

**Խաչերյան Լ. Գ.**, 1987 Գրիգոր Պահլավունի Մագիստրոս (985-1058). *Կյանքն ու գործունեությունը*, Los Angeles.

**Կոստանեանց Կ.**, 1910 Գրիգոր Մագիստրոսի Թղթերը, Աղբասանդրապոլ  
**Մխիթարյան Սարգիս**, 2001 Գրիգոր Մագիստրոսի կյանքը և գեղարվեստական ժառանգությունը, Երևան.

**Մուրադեան Գոհար**, 2012 ‘Գրիգոր Մագիստրոս’, Պետրոս Հովհաննիսյան (խմբ.), *Մատենագիրք Հայոց, ԺԶ հատոր, ԺԱ դար*, Երևան.

**Մուրադյան Գոհար**, 2014 ‘Գրիգոր Մագիստրոսի մատենագրությունը. կյանքը’, *Բանբեր Մատենադարանի* 20 (2014), 5-44.

**Sanjian Avedis K.**, 1993 ‘Gregory Magistros. An Armenian Hellenist’, J.S. Allen և ուրիշներ (խմբ.), *To Hellenikon. Studies in honor of Speros Vryonis, Jr.* 2 vols. New Rochelle NY, ii, 131-158 .

**Terian Abraham**, 2012 *Magnalia Dei. Biblical History in Epic Verse by Grigor Magistros. Critical Text with Introduction, Translation, and Commentary*, Louvain.

**van Lint, Theo Maarten**, 2010 ‘Grigor Magistros’, ‘Letters to Amir Ibrahim’, ‘*Magnalia Dei*’, in David Thomas and Alex Mallet (eds), *Christian-Muslim Relations. A Bibliographical History. Volume 2 (900-1050)*, Leiden – Boston, 703-713.

2012 “Grigor Magistros Pahlawuni: Die armenische Kultur aus der Sicht eines gelehrten Laien des 11. Jahrhunderts”, *Ostkirchliche Studien* 61, 66-83.

2014 ‘La cultura armena nella visione del mondo di Grigor Magistros Pahlawuni’, in Rosa Bianca Finazzi ed altri (eds.), *Atti del Terzo Dies Academicus, 12-14 novembre 2012* (Accademia Ambrosiana. Classe di Studi sul Vicino Oriente), Milano, 3-22.

### Theo van Lint

#### Early Historiography in the *Letters* of Grigor Magistros

Grigor Magistros Pahlawuni had a keen interest in the past of his people, which manifests itself among other things in his quotations from Movsēs Xorenac‘i’s *History of the Armenians* and from Agat‘angelos’ *History*, and no less through his interest in folk-lore, which represents a rich source for ancient, sometimes pre-Christian tradition.





## ՅԱԿՈՒՔ ԿԻՒՎԻՃԵԱՆ

### ԱՆԿԱՐԵԼԻ ԶՈՂՄԸ ՎԵՐԸՆԾԱՅԵԼՈՒ ՊԱՅՔԱՐԸ՝ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻԻ ԿՈԹՈՂԱԿԱՆ ՓՈՐՁԸ ԼԵԶՈՒԻ ԸՆԴՄԵՋԷՆ

Հակառակ անոր, որ Նարեկացիի գլուխ գործոցը՝ Ողբերգութեան Մատեանը ընդհանրապէս անգիտացուած է եւրոպական միջնադարեան խորհրդական գրականութեան ուսումնասիրութեանց մէջ, ան եզակի լուծումներ կ'առաջարկէ այն խնդիրներուն, որ դիմագրաւած են խորհրդագրած գրողներ: Այստեղ պիտի կեդրոնանամ այն հնարքներուն եւ լուծումներուն վրայ, զորս Գրիգոր կ'որդեգրէ դիմակայելու համար անճառութեան եւ լեզուի անկարելիութեան խնդիրը, տրուած ըլլալով, որ իր բացայայտ նպատակն է իր քերթողութիւնը վերածել «բանական զոհ»ի: Փոխանակ գրութիւնը գործածելու սովորականին պէս իբրեւ փորձ մը խորհրդական փորձառութիւնը փոխանցելու, եւ կամ առնուազն աստուածութեան կամ միաւորութեան փափաքը հաղորդելու<sup>1</sup>, բանաստեղծ-աստուածաբան-փիլիսոփան այդ փորձառութիւնը կը կազմէ իր գրութեան մէջ իսկ, բացայայտօրէն նոյնացնելով ինքզինք գիրքին հետ. աւելին՝ ան գիրքը կ'ընէ ոչ միայն Աստուծոյ հետ միաւորութեան միջնորդ, այլեւ զայն կը վերածէ այն վայրին ու գործողութեան, ուր եւ որով այդ միաւորութիւնը կ'իրագործուի:

Երբ կը խորանանք բացասականաստուածաբանութեան, աստուածային անուններուն եւ խորհրդագրածութեան յատուկանճառութեան սերտողութեան մէջ, մենք մեզ կը գտնենք զանոնք գրուած խօսքի թարգմանելու գեղագիտական եւ գրական խնդիրն առջեւ: Իրողութիւնը այն է, որ այստեղ գեղագիտական ու աստուածաբանական խնդիրները կը միախառնուին, դառնալով մէկ խնդիր (հոս «աստուածաբանութիւն» եզրը կը գործածուի Գիտնիսիոս Արիոպագացիի ըմբռնած ձեւով՝ այսինքն աստուածգիտութիւնն ու Աստուծոյ ճանաչումը): Մէկ կողմէ ասիկա հարցն է լեզուին ու գրականութեան որ կը դիմագրաւեն այն, որ չի կրնար ըսուիլ ու վերկայացուիլ (*represent*), իսկ միւս կողմէ հարցն է մատչելու ի խնդիր ուղեւոր դարձած խորհրդագրածին՝ որուն

<sup>1</sup> Գրիգոր Նարեկացիի ստեղծաբանութեան եւ լեզուի մասին մտածող որեւէ աշխատութիւն չի կրնար չմեկնիլ **Գրիգոր Պըլտեանի** լայնածաւալ երկերէն՝ գլխաւորաբար *Գրիգոր Նարեկացի լեզուի սահմաններուն մէջ*, Վենետիկ, 1985, *Ի գործ արկանել*, Մոնթրէալ, 2003, եւ *Երկ-խօսութիւն Նարեկացիի հետ*, Եր., 2008: Նոյն ձեւով, Գրիգոր եւ Ամանիա Նարեկացիներու խորհրդական մերձեցումներուն եւ նորադատական առնչութիւններուն անդրադառնալու համար հարկ է մեկնիլ **Հրաչեայ Թամրազեանի** այդ նիւթերուն նուիրուած բազմաթիւ աշխատութիւններէն, որոնցմէ գլխաւորը՝ *Գրիգոր Նարեկացիի եւ նորադատականութիւնը*, Եր., 2004:

բառերը չեն յաջողիր նկարագրել եւ վերկայացնել տեսութեան ու միաւորութեան իր անցեալ փորձառութիւնը, ոչ ալ պիտի բաւեն հաղորդակցելու համար Աստուծոյ հետ: Գրիգորի համար սակայն հարցը մէկ է, որովհետեւ իր առաջադրած գրական կամ գեղագիտական առարկան իսկ է Աստուծոյ հետ հաղորդակցութիւնը, ու ոչ միայն այն պատճառով, որ ինք որոշած է գեղարուեստական արտադրութեան մը մէջ ներքաշելայդ հաղորդակցութիւնը, այլ որովհետեւ այդ հաղորդակցութիւնը պէտք է որ ըլլայ գեղարուեստական, տրուած ըլլալով որ ան ոչ միայն նկարագրութիւն մը կամ վերկայացումներն է հեղինակի փորձառութեան, այլ նաեւ «բանական զոհ» մը, կամ խօսքի պատարագ, նուէր, զոհաբերում մատուցուած Ստեղծիչին<sup>2</sup>: Բացի փորձառութիւն մը վերկայացնելէ, վերկայացումը ինքնին փորձառութիւնն է:

Նարեկացի բացառիկ կերպով գիտակից է այն բանին, որ կոշուած է խորհրդական տնտեսութիւն. Աստուած կը գերազանցէ թէ՛ յղացականութիւնը (conceptuality) եւ թէ՛ տրամասութայնութիւնը (discursivity). Այնուհանդերձ գրողը իբր բանաստեղծ կը փորձէ հաստատել զԱյն որպէս սահմանելի եւ վերջին հաշուով ճանաչելի<sup>3</sup>: Բանաստեղծին նկարագրել ուզածը չի կրնար համեմատուիլ որեւէ այլ առարկայի հետ, այսինքն կը գտնուի անճառելի սահմաններէն ներս. իսկ Աստուած՝ բառերու մէջ ամփոփուելու անկարելի իր այլութեամբ, առարկան է այս պայքարին: Այս մեկնաբանութեան համաձայն, Նարեկը որոնումներն է Աստուծոյ. որոնումը սակայն կ'արտայայտուի բառերու փնտռութեամբ: Անգամ մը որ խօսքին տիրանայ՝ բանաստեղծը հասած պիտի ըլլայ Աստուծոյ:

Ասիկա մէկն է Նարեկի առանձնայատկութիւններէն, այսինքն որոնումը լեզուական աստուածաբանութեան մը որուն առարկան է իմանալ կամ ճանչնալ անճառելի գոյ մը<sup>4</sup>:

Նարեկացի կը փորձէ բռնել՝ ըմբռնել (*apprehend*) անսահմանը իր ձայնով: Այստեղ կ'ակնարկենք այն ձեւերէն մէկուն, որ Կանտ կ'առաջարկէ բնորոշելու համար վսեմը: Ծնունդ կ'առնէ *apprehensio* բառէն՝ բռնել, ընդ-բռնել կամ հաշուարկել շափելի եւ երեւակայութեան մէջ առանձին-առանձին բաւող միաւորներու անհունօրէն շարունակուող շարք մը<sup>5</sup>: Ասոնք յարաբերական մե-

<sup>2</sup> Գրիգոր Նարեկացի, *Մատենան Ողբերգութեան*, Ա. (ա) 13, Բ. (բ) 56, Գ. (գ) 108, Դ. (դ) 104, Ե. (ե) 3-6, Զ. (զ) 26, Ը. (ը) 26-30, Ջ. (ա) 112, Ջ. (բ) 38, Ջ. (բ) 10, Դ. (դ) 10: Բոլոր յղումները եւ տողաթիւերը կը համապատասխանեն Պ. Խաչատրեանի եւ Ա. Ղազարեանի խմբագրած հրատարակութեան. Եր., ՀՍՍՀ ԳԱՀ, 1985, յետ այսու՝ *Մատենան*. փակագծի մէջ փոփոխուած բանի ներքին հատուածը:

<sup>3</sup> Հմմտ. Philip Leonard, "Divine Horizons: Levinas, Derrida, Transcendence", Leonard, Philip (ed.). *Trajectories of Mysticism in Theory and Literature*, New York: St. Martin's Press, 2000, էջ 226, ծնթ. 26:

<sup>4</sup> Նոյն, 226:

<sup>5</sup> Իմանուէլ Կանտի բացատրութիւնը տե՛ս Քննադատութեան Դատողութիւն, § 26:

ծուծիւններ (relative magnitude) են, մէկը միւսին հաւասար, բայց որոնք անկարելի է ըմբռնել երբ անոնք նկատի առնուին իրենց ամբողջականութեան կամ գումարին մէջ: Երկրորդ ձեւը կը վերաբերի comprehensio յղացքին, որ նախորդին հետ շշփոթելու համար այս վերլուծման մէջ առժամաբար պիտի թարգմանեմ համաբոնում, եւ ուր կը փորձենք ընկալել առանձին ու միակ մեծութիւն մը իր ամբողջութեան մէջ: Այս մեծութիւնը համարժէք է ինքն իրեն՝ հաւասար է ոչ այլ ինչի բացի ինք իրմէ (equivalent magnitude): Բացարձակապէս վիթխարին է: Քանի որ անոր բաղադրանքի առարկայ չկայ, նոյն ինքն սահմանումն է անճառութեան:

Այստեղ պիտի առժամապէս ընդլայնեմ Կանտի նկարագրութիւնը՝ առաջադրելով նուազագոյն մեծութիւն մը որուն յարաբերական մանրութիւնը անկարելի ըլլայ նկարագրել, որովհետեւ ոչ մէկ աստիճանաչափ կրնանք մտապատկերել՝ որ վսեմի հետ համեմատելով կարենայ արժորոշել անոր յարաբերական ծաւալը: Զայն կրնանք ժամանակաւորապէս կոչել մանրավսեմ: Նարեկի ընթերցողը կը զգայ, թէ երկու պարագաներն ալ կը տեսնէ միաժամանակ իրար հետ երկխօսութեան մէջ՝ մէկ կողմէ Բացարձակ վսեմը իր լայնարձակ անհունութեամբ, եւ միւս կողմէ «ամենայետինը»՝ հեղինակի խօսքերուն եւ անձին մէջ, որ դեռ, նոյնիսկ այս կացութեան մէջ՝ կը պահպանէ իր ազատութիւնն ու անհատականութիւնը: Գրիգոր շի ջնջեալ ինքզինք նոյնիսկ անվերջ ողբի մէջ, ու ձեւով մը կը յաշտողի ինքզինք ներմուծել վսեմի տրամասութեան (dialectic) մէջ՝ իր անհուն աննշանութեան անկիւնէն:

Կանտ վսեմի ընկալման երկու տարողութիւններու (ըմբռնում եւ համաբռնում) իբր օրինակ կը բերէ եգիպտական բուրգերը: Անոնց հսկայական ծաւալի վիթխարութիւնը փորձընկալելու համար մարդ պէտք չէ ո՛չ շատ մօտ, ոչ ալ շատ հեռու կենայ անոնցմէ: Իր կեցած տեղէն, ենթական փոխնիփոխ կը փորձէ հաշտեցնել ու ընկալել յարաբերական եւ համարժէք մեծութիւնները, ու անզօր մնալով վերստին կը փորձէ իր հայեացքը յարմարեցնել: Այս պատճառով է որ Գրիգոր եւս տեւաբար կը վերադառնայ սկզբնակէտին, կը մերձենայ ու կը հեռանայ՝ զայն իր հայեցադաշտին մէջ պահելու համար, եւ անվերջօրէն կը կշռէ հեռաւորութիւնը: Այս է պատճառը անվերջանալի այն ալիքներուն, որոնցմով շարադրուած է քերթուածը: Մշտական վերադարձ, անվերջ սկիզբ: Այս ձեւով է, որ Աստուած գրքի մէջ պիտի որակուի «անմատչելի հեռաւոր եւ անընդմիջելի մերձաւոր»<sup>6</sup>:

Գրիգոր կ'որդեգրէ՞ արդեօք ժխտողական ուղին՝ via negativa-ն: Նարեկացի կը ներկայացնէ համադրոյթ մը ապոֆատիկ, ժխտողական կամ խորհրդական աստուածաբանութեան՝ կատաֆատիկ, դրական, բանական կամ բնականցական աստուածաբանութեան հետ, գլխաւորաբար այն՝ որ կ'արտայայտէ այն Աստուածը որ է: Կատարելութիւն, սէր, լոյս եւ ճշմարտութիւն կը թարգ-

<sup>6</sup> Մատեան, ԻԳ (ա) 8:

մանուին մարդկային լեզուի եւ կը զգեստաւորուին մարդկային կերպարանքով, որ ինք կը խտացնէ ըսելով՝ «որ միայն մարմնացար վասն մեր ըստ մեզ»<sup>7</sup> :

Այդ պատճառով է, որ ինչպէս Զէքիեան կը նշէ Մատեան-ի մէջ լեզուի խնդիրը կը խուսափի, կամ աւելի ճիշդ՝ կը զանցէ միւս խորհրդագրածներու դժուարութիւններն ու տուամները այն մասին, թէ ինչպէ՞ս գիտնալ ու ինչպէ՞ս արտայայտել խաւարի Աստուած մը: Փոխանակ ատոր, Գրիգորի ճիգերն ու խոնջէնքը սկիզբ կ'առնեն ու կը գործադրուին այն շմորանքին ու սքանչախառն ապշահարութեան մէջ, որ ինք կը փորձընկալէ երբ կը կանգնի ըսելուիր անկարողութեան դիմաց. ու ոչ միայն Աստուած ըսելու՝ այլ նաեւ ըսելու իր սեփական անկումը: Զէքիեան ասիկա կը կոչէ կրկնակի աֆագիա՝ լեզու գործածելու անկարողութիւն կամ անխօսութիւն<sup>8</sup>: Թէեւ ինք աւելի չի մանրամասներ, հասկնալի է այն նուրբ սակայն կարեւոր տարբերութիւնը որ կայ այս յատկանշումին եւ խորհրդական ծանօթ անճառելիութեան միջեւ: Անճառելին, հակառակ անոր, որ կը մեկնի ենթակայէն՝ իրականութեան մէջ կը վերաբերի առարկայի մը: Կը նկարագրէ առարկայ մը, որ ի բնէ առարկայ մը չէ, եւ որ չի կրնար յատկանշուիլ կամ նկարագրուիլ. եթէ կարելի ըլլար ընել ատիկա, առարկան պիտի դադրէր Աստուած ու անճառելի ըլլալէ: Ասոր փոխարէն աֆագիան կամ անխօսութիւնը կը նշէ ենթակային անկարողութիւնը՝ անկախ առարկայէն: Ենթակայական հանգամանք մըն է ուր, աւելին՝ կրկնակի անխօսութեան երկու կողմերէն մէկուն մէջ ենթական անկար է նոյնիսկ ինք իր նկատմամբ, այսինքն՝ երբ կը դիմագրաւէ իր մեղքերու զանգուածը ըսելու դժուարութիւնը: Ենթական չի կրնար խօսիլ զԱստուած ու չի կրնար խօսիլ ինքզինք:

Վերոյիշեալ ապշահարութիւնը չի վերաբերիր ենթակայի մեղքերու քանակական թէ որակական աննկարագրելիութեան կամ անշափելիութեան, այլ այն զարմանքին, շուարումին եւ շփոթութեան, որ կը պատահի այն պահուն, երբ ան հասու կը դառնայ ատոր նշանակալիութեան: Զեւով մը ասիկա վերը նկարագրուած երկու վսեմներու աստուածաբանական երեսն է, այսինքն անոնց առերեսումը: Այն, ինչ որ ես փորձնականօրէն կոչեցի մանրավաւճա՝ կը փորձէ պարփակել ու մտաւորապէս կամ գրութենականօրէն հասնիլ աստուածային վսեմին: Աֆագիան կամ անխօսութիւնը այն է, երբ մանրակերպը կը դիտէ անհունօրէն մեծը, յաւիտենականը, անդրազանցականն ու անժամանակակ-

<sup>7</sup> Մատեան, ԺԹ (ա) 10-17. «Որ միայն մարմնացար վասն մեր ըստ մեզ / Զի արացես զմեզ վասն քո ըստ քեզ / Լոյս ամենայնի, յամենայնի ողորմած, հզար, երկնային: / Եւ այժմ զլուծեալ եւ զխորտակեալ հողանիւք անաբս / Աստուածաւրէն հրաշակերտութեամբ, աղաչեմ, գրած, նորոգ հաստատեալ, / Զփոյին պատկերս մեղամբ հնացեալս / Ի քայս հարցաց կայծակամբ բանիդ, / Պաղատիմ առ քեզ, վերստին ձուլեալ»:

<sup>8</sup> Boghos Levon Zekian, “L’esperienza mistica di S. Gregorio di Narek e il problema del linguaggio teologico”, *Saint Grégoire de Narek. Théologien et mystique*, Jean-Pierre Mahé et Boghos Levon Zekian, (խմբ.), Orientalia Christiana Analecta 275, Roma: Pontificio Istituto Orientale, 2006, էջ 298-99:

անը, եւ կը գիտակցի, բաղդատութեան վայրկեանին՝ Այլին դիմաց իր մանրութեան անհունութեան: Այնքան փոքր է ինք, որ բոլոր անհուններու նման իր փոքրութիւնը եւս դուրս կը մնայ իր իմացողութեան, երեւակայութեան, կամ յղացականացումի ու լեզուականացումի կարողութեան դաշտէն:

Այդ կէտը սակայն իր նայուածքի վերջակէտը չէ: Ընդմէջ երկու վիճերուն (այն, որ կը բռնանայ իր երեւակայութեան վրայ աստուածային անճառելիութեամբ, եւ միւսը՝ իր համեմատական աննշանութեան վիճը), իր աչքերը կը փորձեն բռնել, ըմբռնել երկուքին միջեւ եղող հեռաւորութիւնը: Բան մը, որ կը նշանակէ չափել անկումը: Այդ է որ պիտի ըլլար մեղքի անունը եթէ Նարեկացի կարենար անուանել զայն: Որովհետեւ այն մեղքը, զոր Նարեկացի կ'ողբայ՝ մեր հաւանաբար սակաւ ու հասարակ մեղքը չէ, այլ մեղանշած ըլլալու մեղքը՝ այսինքն անձի աստուածային հանգամանքն ու աստուածային վսեմը անարգելն ու այնքան անդնդայնորէն տխմար բանի ձեռնարկած ըլլալը:

Վիճ մը՝ երկու վիճերու միջեւ:

Կրկնակի աֆագիան իրականութեան մէջ մէկ է, երկու հակընդդէմ բեւեռներով, որոնք ի տարբերութիւն ելեկտրականութեան առաւել եւ նուազ նշաններուն, իրենց մէջ կը պարփակեն լուսաբուխ աստուածայնութեան եւ ողբերգական անկումի անհաւասարութիւնն ու հակադրութիւնը: Անոնք այդ անպարագիծ միջոցին մէջ ի մի կը կուտակեն այդ երկու բեւեռներու միջեւ շարժող ուժը: Ու նոյն այն ձեւով որ դիմեցինք յարաբերական մեծութիւնները իրարու վրայ գումարելու հնարքին՝ ըմբռնելու համար վիթխարին ու երեւակայելու համար բոլորի համակցութիւն մը, նոյնպէս ալ կը բաժնենք անոնցմէ իւրաքանչիւրը յարաբերականորէն աւելի փոքր մեծութիւններն՝ որպէսզի երեւակայենք մանրի աննշմարելի մանրութիւնը: Երեւակայութիւնը կը ճամբորդէ վեր ու վար՝ ուղեւորութիւն մը վերելքի ու վայրէջքի, համընթաց բազմապատկումի ու բաժանումի: Բանաստեղծի գործն է այս շարժումն ու շրջանառութիւնը հրահրել՝ իր «բանական գոհի» «ծուխ»-ով ուժանիւթ, Էներգիա արտադրելու համար: Ճիշդ ինչպէս համարժէք մեծութիւնները անկարելի է վերկայացնել, բայց որոնց անվերկայանալիութիւնը (unrepresentability) վերկայացնելով կրնանք զանոնք յղացականացնել ու քաշել դէպի գրութենականութիւն (textuality), նոյն ձեւով ալ զոհաբերուող խօսքի շրջաբերող ուժանիւթը եւս կը գրութենականացնէ, կը շինէ, կը կազմէ ու կը մարմնատրէ այն կամուրջը, որ երկու բեւեռները պիտի միացնէ: Խօսքն է կամուրջը. հետեւաբար, ան անհասին անհասապէս հասնիլն է կամ հասնելու խոստումը. այն բանն է, որ ուղեգնացին համար ուղի մը կը բանայ ու հնարաւոր կը դարձնէ միաւորութիւնը: Այն, որ խորհրդագրածներ կը կոչեն կատարելութեան հանգրուան՝ Նարեկացիի համար կը կատարելագործուի ուրեմն խօսքի մէջ:

Հայաստանի խորհրդական գրականութեան պատմութեան նուիրուած լիակատար աշխատութեան մը ծանօթ չեմ տակաւին: Միջնադարեան հայ հեղի-

նակներու հետ Նարեկացիի համեմատական ուսումնասիրութիւն մը բազմաթիւ պարագաներ կը յայտնաբերէ, ուր խորհրդականութիւնը պատահական չէ, այլ կեդրոնական երեւոյթ մը տուեալ հեղինակներու ստեղծագործութիւններուն եւ գաղափարախօսութեան: Նախնական դիտարկումներէ մեկնելով կարելի է աշխատանքային սկզբնական հետեւեալ վարկածը առաջադրել՝ Դիոնիսիոս եւ իր նորպղատոնական խորհրդականութիւնը նշանակալի կերպով ներկայ են Հայաստանի մէջ մինչեւ Նարեկացի ու անշուշտ անկէ ետք, բայց անոնք բացարձակօրէն տիրական չեն, այլ կը գոյակցին կապաղովկիացի Հայրերու եւ այլ խորհրդական մերձեցումներու հետ:

Դիոնիսիոսի դիրքերուն աւելի շեշտուած կերպով կը հանդիպինք Նարեկացիէ մէկ-երկու դար ետք, թերեւս հայկական միջավայրի մէջ ժամանակակից սուֆիներու յարաճուն ազդեցութեան որպէս հետեւանք: Հայ հայեցողները համադրութիւն մը կը զարգացնեն Նարեկացիի եւ զուտ դիոնիսեան կեցուածքներուն միջեւ:

Շարք մը զուգահեռներ զուգահիւսութենէ շատ աւելին կը մատնեն: Այսպէս, ԺԳ դարուն Յակոբ Կլայեցի միաժամանակ Դիոնիսիոսի գործերու մեկնիչ եւ Նարեկի առաջին մեկնութեան հեղինակն է<sup>9</sup>: ԺԴ դարուն Գրիգոր Տաթեւացի Նարեկացիի նմաներգ Երգոցի մեկնութեան, բայց նաեւ դիոնիսեան գործերու մեկնութեան հեղինակ է: Տաթեւացիի աշակերտ եւ քրորդի Առաքել Սիւնեցի կը հեղինակէ յատկապէս դիոնիսեան խորհրդական բառապաշարով յագեցած բանաստեղծութիւն, բայց միաժամանակ հեղինակն է Նարեկացիի ձօնուած քերթուածի մը, որ հնագոյն նարեկներուսկիզբը կը գտնենք:

Տաթեւացիի Կեղծ-Դիոնիսիոսի ուշագրաւ Մեկնութիւնը հիմնուած էր Դիոնիսիոսի Ը դարու թարգմանութեան վրայ, որու համահեղինակը, ինչպէս ծանօթ է, նոյնպէս Սիւնիքէն վարդապետ (եւ մետրոպոլիտ) մըն էր՝ Ստեփանոս Սիւնեցի: Դժուար է խորհիլ, թէ իր կազմաւորման տարիներուն Առաքել Սիւնեցի գերծ մնացած ըլլար այդքան մօտիկ ազդեցութիւններէ:

Իր քերթուածներէն մէկուն մէջ՝ «Տարփմամբ սիրոյ», Առաքել կը խօսի անանուն սիրահարի մը կողմէ արձակուած ճառագայթներու մասին. ճառագայթները նուազման զգայութիւն կը յառաջացնեն իր հոգւոյն մէջ, որ այդ լոյսին գերի կը դառնայ: Առաքել տակաւին կը խօսի իր զգայական կարողութիւններու հասարակ մասերու նահանջին մասին, ինչպէս նաեւ այրող ցանկութեան,

<sup>9</sup> Յակոբ Կլայեցի կաթողիկոս (1268-86). կայ ժամանակակից ձեռագիր՝ 1271-էն: Դաւիթ Կորայեցի եւ Յակոբ վարդապետ գրած են Դիոնիսիոսի մեկնութիւն (տե՛ս **Robert W. Thomson**, "The Armenian Version of Ps.-Dionysius Areopagita", *Acta Jutlandica* 27 (1982): 121). Խաչատրյան այս աշխատութիւնը կը վերագրէ «իմաստուն վարդապետներ» Դաւիթի, կոչեցեալ Խլմշաժ, եւ Յակոբ Կլայեցիի՝ ապա կաթողիկոս, այսինքն դար մը ուշ քան առաջին Դաւիթը. *Լուծմունք Դիոնիսիոսի ի Դաւթէ եւ Յակոբայ յիմաստուն վարդապետաց*, Մատենադարան MS 3275, ֆ. 71v, նշ. **Պողոս Խաչատրյան**, *Նարեկացին եւ Հայ Միջնադարը*, Էջմիածին, 1996, էջ 254, ծնթ. 24:

ատոր հետեւող մարմնական թմրութեան եւ սիրածի դէմքին տեսութեան կրկնութեան բռուն կերպով հետամուտ ըլլալուն՝ սիրային յափշտակութեան (էքստազ) փորձառութիւնը կրկնելու բաղձանքին<sup>10</sup>, մէկ խօսքով՝ բոլոր այն յատկանիշները, որ սովոր ենք տեսնելու սուֆի թէ արեւմտեան միստիքներու կողմէ խորհրդական փորձառութեան նկարագրութեան մէջ<sup>11</sup>, եւ որոնք նկատելիօրէն նուազ ներկայ են Նարեկացիի երկին մէջ:

Նարեկը աւելի մօտ է Գրիգոր Նիւսացիի. վերջնական կատարելութիւնն ու անշարժ հանդարտութիւնը խաւարին մէջ փնտռելէ աւելի՝ սիրուած ու տենչացուած Աստուծոյ մը հասնելու ուղին որոնելու գաղափարը կը շեշտուի: Նոյնիսկ երբ Նիւսացի բացասական աստուածգիտութեան աստուածաբան է, այնուհանդերձ ան այս հարցերուն կը սատարէ *epektasis*-ի յղացքով տեւական քայլերու յառաջատուութիւն մը, անհունին հետամտող անվերջ երթ մը: Անսահմանափակ Աստուծոյ մը տեսութեան ձգտող հոգիի տենչերուն կողմէ արտադրուած այս գործընթացի կորիզին մէջ է, ուր ան միաւորման կ'ուզէ հասնիլ դէպի վեր ու առաջ քայլերու անվերջ յաշորդականութեամբ: Ասիկա տարբեր է դիոնիսեան ճանապարհէն, որ կ'աւարտի անգիտութեան մէջին մէջ, անհունէն անդին գտնուող Աստուծով մը, ու հետեւաբար թերեւս Աստուծոյ անուններէն Անհունի արժեզրկմամբ<sup>12</sup>:

Գրութիւնը կատարողական (*performative*) պաշտօն ունի Գրիգորի համար: Ան կը մարմնացնէ ոչ միայն հեղինակի հաւատքն ու գայն կ'արտայայտէ տառերով, այլեւ կը նոյնանայ գայն արտադրողի հետ, դառնալով մէկ: Այս իմաստով, Գրիգորի գրութիւնը կը վերածուի ենթակայի մը որ կը բանի իբր կատարողական խօսք: Խօսքը կը դադրի ունենալէ բացառապէս այն հաստատողական (*constative*) եւ նկարագրական բնոյթը, զոր ողբերգական գրութիւն մը պիտի պահանջէր, եւ կը դառնայ փոխակերպիչ՝ իրականութեան եւ նոյնիսկ խօսողի նոյնինքն ինքնութեան<sup>13</sup>: Որպէս կատարողական գրութիւն Նարեկի յառաջացուցած արդիւնքներն ու ներգործութիւնը եւս մաս կը կազմեն գրութեան. այսինքն փոխակերպում, վերելք, հոսք ու յետահոսք՝ մակընթացութիւն ու տեղատուութիւն կը պատահին ոչ միայն իբր գրութեան հետեւանք, այլեւ գրութենէն ներս: Բացի գործակալական դեր (*role of agency*) ստանձնելէ, գրութիւնը նաեւ կը դառնայ իր սեփական արդիւնք:

<sup>10</sup> Տես **Զուպալ Գազանճեան** (խմբ. եւ թրգմ.), *Հատընտիր հայ հին բանաստեղծութեան*, Բ. հատոր, Վենետիկ, 1998, էջ 218 եւ 248-49:

<sup>11</sup> Ի դէպ, Առաքել Սիւնեցիի այս բանաստեղծութիւնը շեշտուած կերպով կը յիշեցնէ Հոմեր Սանթա Մարիա դելլա Վիթորիա եկեղեցայ մէջ Բերնինիի «Մրբուհի Թերեզայի յափշտակութիւնը» ֆանդակախումբը (պատրաստուած 1647-1651):

<sup>12</sup> Այս վիճարկման համար տես **Ysabel de Andia**, *L'Union à Dieu chez Denys l'Aréopagite*, Leiden-New York-Köln: E.J.Brill, 1996, էջ 13-20:

<sup>13</sup> Տես **Judith Butler**, *Excitable Speech: a Politics of the Performative*, New York: Routledge, 1997, էջ 145. **Jacques Derrida**, "Signature Événement Context", *Marges de la philosophie*, Paris: Minuit, 1972, էջ 365-393.



Իւրաքանչիւր գլուխ, խօսք կամ բան կը սկսի հետեւեալ բանաձեւով. «Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հսկողի առ նոյն աղեսու մաղթանաց բանի, ի խորոց սրտի խաւսք ընդ Աստուծոյ», ուր դիտաւորեալ կերպով հինգ անգամ կը շեշտուի կրկնութենական իմաստը: Գրութիւնը իրականութեան մէջ կրկնութիւն (repetition) չէ, այլ կրկնողութիւն (iteration), վերակրկնողութիւն (re-iteration): Յաւերժ սկզբնաւորութիւն: Անսահման կրկնութիւն եւ պտոյտ կրկնողութիւն իմաստի անհաշիւ կարողականութիւններուն մէջ. գրութեան ապակառուցում մը որ կը ձգտի հոգիի ապակառուցման: Խօսքի այս ամբարձումը միեւնոյն ատեն գրոհ մըն է կազմակերպ գրութեան եւ գրութենական պայմանադրոյթներու դէմ:

Իր խօսքին հետ խօսողի նոյնացումը չի մնար միայն թելադրանքի մարզին մէջ, ոչ ալ սոսկ կ'ապաւինի ընթերցողներու կողմէ ինքնաբոլոս եզրակացութիւններու: Նարեկացի բացայայտօրէն կը յայտարարէ. «Սոյն գիր իմովս ձայնիւ, իբր զիս, ընդ իմ աղաղակեսցէ»<sup>14</sup>:

Սկզբունքով գիրքը արգասիքն է հեղինակի մտաւոր ու հոգեկան ճիգերուն: Երկրորդ մակարդակի մը վրայ, ան կը վերածուի հաղորդակցութեան միջոցի մը՝ Աստուծոյ հետ խօսակցութեան համար. իսկ երրորդ մակարդակի վրայ կը զարգանայ ըլլալու համար զոհաբերման առարկայ: Ամեն բանէ անդին, սակայն, գիրքը կ'ըլլայ հեղինակին հետ մէկ ու կը զգեստաւորէ զինք: Խօսողը կը մարմնաւորուի գրքին մէջ՝ նմանողական ցոլացումով մը այն բանին, որ գլխաւոր Բանը կը կատարէ երբ կը զգեստաւորուի մարդկային զգեստով: Այսպէս է որ ձայնին տէրը պիտի վերածի զոհի ու ընծայի ինքն իսկ:

Աստուծոյ լեզուականացումի եւ մարդու միջեւ եռանկիւնը յարատեւօրէն կը բանի նարեկացիի դատողութեան մէջ. ատիկա կ'ընէ դիւրահոս կերպով եւ զոյգ ուղղութիւններով: Կ'ըսէ շրջաբերութեան վերջին նպատակը՝ Աստուած մարդկային մարմին կ'առնէ որպէսզի մարդ մասնակցի եւ խառնուի աստուածային էութեան<sup>15</sup>:

Գրիգոր տակաւին իր գրութեան դէպի Աստուած կամուրջ մը ըլլալու գաղափարը եւս պիտի գերազանցէ՝ Աստուծոյ տեսութիւնը գրութեան մէջ իսկ իրագործելու յղացքով: Աստուածութիւնը ինքզինք պէտք է յայտնէ գրութենէն ներս: Գրութեան եւ խօսքի այս ծիսական դերը հաստատ կերպով արտայայտուած է, օրինակ, Վարդան Արեւելցիի կողմէ յօրինուած շարականներէն՝ «Որք

<sup>14</sup> Մատեան, ԶԸ (գ) 44:

<sup>15</sup> Մատեան, ԾԳ (գ) 59-71. «Իսկ եթէ, ամենիցդ Աստուած անհնիւն, / Իմովս վասն իմ առ իմ փրկութիւն, ի դէմս իմ, / Իբր թէ ընդ քոյն էութեան եւ իցեմ / Մարմնով պարունակողիդ կցորդ միացեալ, / Եւ դու, բարեբաւ, յաղագս իմ ի յիմս կերպի, / Փոխանակեալ ընդ իմովս պարտեաց, / Եւ մահ ընկալեալ անպարտոյ / Զմահապարտիս վնասուց պատունաս, / Եւ ի յիմ անուն յանցատրապէս, / Որպէս թէ կամաւ ընդ քեզ եւ կրիցեմ, / Բազումս մեռեալ եւ մնաս կենդանի, / Ոչ ուրացողացն ձեռաւք, այլ դաւանողացն հաւատովք / Աստուածապէս նուիրեալ եւ իմասունս անհատս բաշխեալ»:

զարդարեցին»-ի մէջ, ուր թարգմանիչները անեղի իմաստը երկրի վրայ կը հաստատեն մարդեղութեան խորհուրդով այսինքն տառերը համարժէք են Բանի միջոցաւ Աստուծոյ մարմնաւորումին («զարդարեցին տնօրինաբար զիմաստս անեղին, հաստատելով յերկրի զգիր կենդանի»)։ Թարգմանիչները ձեռով մը աստուածայնութիւնը երկրայինի թարգմանողներն են այբուբենի միջոցաւ, յատկապէս եթէ ուշադրութեամբ կարդանք հետեւեալ տունը։

Որ խորհրդեամբ ճշմարիտ լուսոյ փառաց անեղին,  
Նկարագրեցաւ մեզ գիր կենդանի՝  
Յարգանդ մաքուր մեծին Մեսրոպայ։  
Անմատոյց լուսոյն երկրպագեսցուք։

Ուշագրաւ հաստատում՝ Մեսրոպի «մաքուր արգանդէն» մեզի համար կ'ուրուագծուի կենդանի գիրը, Անեղի լոյսի խորհուրդին միջոցաւ։ Յստակ զուգահեռ կայ Աստուածածնի արգանդէն մարդեղացող Բանին եւ Մեսրոպի արգանդով միջարկուած լոյսին միջեւ։ Հայ մատենագրութեան մէջ այս տիպի վկայութիւնները հիմնուած են այն գաղափարին վրայ, որ մարդ՝ անկարող ըլլալով կամրջելու Ստեղծիչին եւ իր միջեւ եղած էաբանական (ontological) ճեղքը, Աստուած ինքն է որ զայն կը կատարէ իջնելով ու մարդեղանալով իբր մարմնաւոր բան՝ խօսք։

Այս է նոյնպէս հիմնաւորումը իրենց սեփական գրութեան հանդէպ ակնածանքի այն բազմաթիւ դրսեւորումներուն, որ կը գտնենք ոչ միայն Նարեկացիի, այլեւ ուրիշ խորհրդագագածներու մօտ, յատկապէս սպանացի Խուան դէ լա Քրուզի (San Juan de la Cruz, 1542-1591) ստեղծագործութեանց մէջ։ Գրութիւնը իրենց կը տրուի ոչ միայն իբրեւ ներշնչում, այլեւ որպէս աստուածայինի թարգմանութիւն մը։ Դը Սերթօ (De Certeau), ուսումնասիրելով խօսքի ծնունդն ու ծագումը Ս. Թերեզայի, Դանթէի, Խուան դէ լա Քրուզի եւ այլոց մօտ, լուսարձակի տակ կ'առնէ անոնց համոզումը այն մասին, թէ խորհրդական բանաստեղծութիւնը ինքզինք է որ կը գրէ. Տրամասոյթը (discourse) պարզապէս աստուածայնութեան գործակալ մըն է<sup>16</sup>։ Այսինքն կարելի է ըսել՝ Գրիգորի բանաստեղծութիւնը ոչ այլ ինչ է եթէ ոչ աստուածային նշանները մարդկային տեսակին միաւորելու փափաքը։ Նարեկացի կ'ըսէ. «Միասցի՛ կնիքդ լուսոյ ի գեղ տեսակիս»<sup>17</sup>։ Աւելին՝ կարիքը ունի որ ատիկա պատահի որովհետեւ ինքզինք կը նկատէ միաժամանակ «բնակարան, ազգարան եւ ընդունարան Աստուծոյ բանին»<sup>18</sup>։

<sup>16</sup> Michel de Certeau, “Mystic Speech”, in *Heterologies: Discourse on the Other*, trans. Brian Massumi, Minneapolis: University of Minnesota Press, 2000 [բնագիրը տես՝ “L’énonciation mystique”, *Recherches de science religieuse*, 64, 2 (1976): 183-215], էջ 97:

<sup>17</sup> Մատեն, ԿԵ (բ) 49:

<sup>18</sup> Մատեն, ԾԹ (բ) 40-41. «Ասէի զիս բնակարան, ազգարան եւ ընդունարան Աստուծոյ բանին»:

ՉԸ Բանի մէջ ստուարաթիւ ակնարկութիւններ կը գտնենք գրքի տեւականութեան՝ երբ հեղինակը կը խօսի զոհաբերումի թեմային մասին: Գիրքը «արձան յաւիտեան» է, որ պէտք է կանգնի «մշտնջենապէս» Աստուծոյ առջեւ, յիշատակուելով Անոր «հանապազ». պէտք է որ «նկարուի» մարդոց մտքերուն մէջ ու «տպաւորուի զգայութեանց սեմերուն». ոչ միայն պէտք է ըլլայ ապրող, «կենդանի» գրութիւն, այլ նաեւ պէտք է որ այնպէս կատարէ, որ «թէպէտ վախճանս ընդունիմ իբր մահկանացու, այնուամենայնիւ՝ այս գրքի յարակալութեամբ կենդանի նկատուիմ», ի վերջոյ խնդրելու համար, որ գրութիւնը տողայ, մնայ «անեղծ» վիճակի մէջ՝ այսինքն իբր անեղծանելի, անջնջելի ու անմոռաց առարկայ:

Նարեկացիի համաձայն, գիրքը կը դադրի ըլլալէ հեղինակինը, ու կը սկսի պատկանիլ գալիք, բայց նաեւ աշխարհէ անցած մարդերուն:

Գրելու այս ստեղծագործ աշխատանքը հետեւաբար կ'ընդգրկէ երեք երեսներ՝ հաղորդակցութիւն, խորհրդական փորձառութեան իբր էական գործիք գործիականացում, եւ ինքնագննութիւն, երբ գրութիւնը, կամ աւելի ճիշդ՝ գրումը կը դառնայ ինք իր վրայ եւ ինքզինք կը դիտէ որպէս գրելու գործողութիւն մը, որու պաշտօնն է մաքառումը ի դիմաց անճառելիութեան ու անասելիութեան եւ յայտնաբերումը իր վերանցական կարողականութիւններուն:

Սկզբնական պատկերը վերստանալու եւ Աստուծոյ հասնելու տենչանքը կը գումարուի սահմանին հասնելու բանաստեղծական ձգտումին հետ՝ ձեռով մը կամք առ ծայրագոյնը, ինչպէս պիտի բանաձեւէր անաստուած միստիք ժորժ Բաթայ տարբեր շրջարկի մէջ<sup>19</sup>: Երկու գուգահեռ նպատակներ, թէեւ տարաբնոյթ, պիտի միախառնուին: Մէկ կողմէ, բանաստեղծը կը պայքարի իր երկրաւոր ու աշխարհասէր կիրքերուն հետ ու դէմ կարենալ մատչելու համար սահմանի տեսութեան, որ աստուածային լոյսն է: Բանաստեղծը կը փորձէ ատիկա, այնուհանդերձ, մարդկային լեզուով: Ի տարբերութիւն խորհրդական փորձառութիւնը նկարագրող այլ գրութիւններու սակայն, Գրիգոր յարաբերաբար տարտամօրէն կը յիշատակէ տեսութիւնը, իր ճիգերը կեդրոնացնելով փոխանակ գայն վերադառնալուն՝ այդ փորձառութիւնը լեզուի մէջ արտադրելու վրայ: Այստեղ, լեզուն չի նշեւ փորձառութիւնը՝ ինքն է փորձառութիւնը: Կ'արտադրէ ինքզինք, քանի որ այս պարագային փորձառութիւնը կը գոյանայ միայն լեզուի միջոցաւ եւ լեզուի մէջ: Լեզուն, հետեւաբար, կը խօսի ինք իր մասին ու կը խօսի ինքզինք, կը խօսի լեզուն եւ այն ինչ որ կը պատահի իր մէջ ու իր միջոցաւ: Ինչ որ համարժէք է ըսելու թէ հեղինակը կը նոյնանայ, կ'ինքնանայ իր գրքին հետ եւ կը դառնայ մարմնաւորուած խօսք:

Միմեսիսի աւանդական մեկնաբանութեան շրջումով մը, բանաստեղծա-

<sup>19</sup> St'ou **George Bataille**, *Inner Experience*, transl. and intro. by **Leslie Anne Boldt**, from *L'Expérience Intérieure* (Paris: Gallimard, 1954 [1943]), Albany: State University of New York Press, 1988, էջ 50:

կան լեզուն այստեղ այլեւս չի վերկայացներ, ալ կ'արտադրէ, կամ, աւելի ճիշդ՝ է: Որքան ալ թէեւ ան ծաւալէ ու տարածէ ինքզինք դէպի ծայրագոյնը, լեզուն չի կրնար հասնիլ իր ձգտածին. սոսկ ելք մըն է, մեկնում, փախուստ, արտընթացութիւն մը (excursio) եւ ուխտագնացութիւն մը ինք իրմէ դուրս:

Բանաստեղծութիւնը չի կրնար հասնիլ ու վերածուիլ անկարելի ծայրագոյնին՝ նոյնիսկ եթէ ասիկա յաճախ կը թուի ըլլալ իր միտումը: Եթէ կարենար նուաճել զայն, ինքնին ըլլալով վերկայացում մը, տարբեր պիտի ըլլար անկէ ու, հետեւաբար, տարբեր՝ ինք իրմէ. այսինքն պիտի չըլլար բանաստեղծութիւն: Այլ խօսքով, եթէ հասնի այդ սահմանին, ատիկա կը նշանակէ թէ ուրիշ ձեւ չկայ ըսելու համար հասնումը<sup>20</sup>:

Ու հակառակն ալ ճշմարիտ է: Ծայրագոյնը անարտասանելին, անտեսանելին ու անպարփակելին է: Այսպէս, լեզուն կը ձգուի ու կը լարուի վերկայացնելու համար ծայրագոյնին անվերկայանալիութիւնը: Բանաստեղծութիւնը, ուրեմն, ծայրագոյնին անսահման ու անվերջ որոնումն է. այլ խօսքով՝ որոնումն է զոհաբերումը:

Այս աշխատութեան երկայնքին ներկայացուած գաղափարները կարելի է տեսնել բացառիկ կերպով բիւրեղացած՝ Մատեանի ԼԳ Բանի մէկ պարբերութեան մէջ, եթէ զայն կարդանք կեդրոնանալով ընդգծուած մասերուն վրայ.

Արդ, զայս գոչումն ծածուկ խորհրդոց՝ կերպատրեւոց յայսմ մատենի, ամենալուր ալանջաց մեծիդ Աստուծոյ ընծայեցուցի, սովիմբ սպառազինեալ՝ եւ ապա մաի ի հանդէսն: Այլ ոչ եթէ կարատեալ իմոյս ինչ ձայնի այսու մեծանաս, որ մինչ շե ստեղծեալ էր քո զամենայն՝ նախ քան զլինելն երկնի փառաբանչաբն ամմանից եւ երկրաստեղծս բանատրաւ, դու քեզն ի քումդ լրութեան փառատրեալ իսկ էիր, - այլ զի զմերժեալս՝ զիս յարգեցես, աննառ քաղցրութիւն, քաղցրեղ զքեզ բանիս քաղցրութեամբ: Իսկ զի՞նչ պարտ իցէ ըստ արքունական հրամանիդ՝ կենաց կանոնիդ ասել Ադոնայի տէր, եւ զհրամայեալ պատուէրդ ոչ առնել: Որ ինձն իսկ զիս՝ զսկեղէն տախտակս խաւառն, նովրեալ քումդ պատգամի, զգրեալս մատամբդ Աստուծոյ, եղծի, որ եւ խորտակելն է իրաւացի, եւ ես տխրատեսակ մըով զերկրորդն նմանութիւն առեալ հայթայթեմ: Այլ արդ, քանզի բազմամ պաղատեցայ դրուատաւ խանդաղատականաւ, որ ոչ է գրեալ ի յայս կարգ ձայնի, լուր, բարեգութ, ըստ սմին բանի այնմ ամենայնի: Եղիցի՛ եւ այս աղերս բարբառոյ հայցման աղափից յաղեալ ընդ նոսին, թերես ի մաքրոց եւ ի կամարարից այս նուէր հացի պանից բաղարշոց՝ իւրով զանգեղոց ի սեղան փառացդ քոց մատիցէ<sup>21</sup>:

Գրիգոր գրքի մէջ բանաձեւուած ծածուկ խորհուրդներու գոչումը կը ներկայացնէ Աստուծոյ ալանջներուն: Ատոնցմով սպառազինուած՝ կը մտնէ խօսքի՝ տրամասողի (discourse) մէջ, որ «հանդէս»ն է, ըստ Հայկազեան Բառգիրքի «հաւաքումն եւ առաջադրութիւն բանից» բացատրութեան, այսինքն արդի տրամասողի կամ տրամասողութիւն հասկացողութեան սահմանումն

<sup>20</sup> Նոյն: Բարայ այս եզրակացութեան կը հասնի Ռէմբոյի իր քննադատութեան առիթով:

<sup>21</sup> Մատեան, ԼԳ (ժ):

իսկ<sup>22</sup>: Նպատակն է, որ աննաոխարութիւնը տեղ տայ գրողին՝ որպէսզի վերջինս կարենայ զինք ճաշակել բանիս հաղորդութեամբ: Գրողը Աստուծոյ հետ կը հաղորդուի գրողի իսկ գրութեամբ եւ զԱյն կը ճաշակէ գրողի իսկ խօսքին ընդմէջէն: Ես իմն է որ խօսող ոսկեղէն տախտակս եղծեցի, այն՝ որ գրուած էր Աստուծոյ մատով: Եւ ուրեմն ես եմ որ պիտի օգտագործեմ Թաւառեսակ մուրը՝ այն որ յառաջացած է ինքնաքանդումէն, գծելու համար երկրորդ օրինակը պատկերին: Բազմանշանակ է արտայայտութիւնը. աստուածային իր պատկերին իր իսկ ձեռքով կործանման եւ իր ներկայ վիճակին քակման, քանդումին եւ ապակառուցման արտադրած մուրն է որ կ'օգտագործուի վերակազմելու նախկին պատկերը: Նմանութիւնը կամ օրինակը երկրորդն է, որովհետեւ բանաստեղծին կողմէ կը գծուի նմանակելով Բանը՝ նախատիպ Աստուծոյ մարդեղութեամբ զգեստաւորուած պատկերը. մարդը այստեղ ուրեմն պատկերին պատկերն է: Յետոյ պիտի ականարկէ յայս կարգ ձայնի կամ այս տրամասոյթի մէջ տեղ չգտած բազմաթիւ այլ պաղատանքներու եւս, որպէսզի Աստուած զանոնք ալ լսէ ըսուածներուն հետ: Պիտի աւարտէ խնդրելով, որ Աստուծոյ սեղանին վրայ մատուցուի այս զոհն ու նուէրը, ուշագրաւ կերպով սակայն խօսելով հայցման աղօթքներու աղերսի բարբառին յօդաւորման մասին՝ մատուցողը աղերսի լեզուն է, խօսելու ունակութիւնը, յօդաւորման աշխատանքը, language-ը, բարբառը՝ որ ստեղծած է տասնեակ հազար տողերու վրայ:

### Hagop Gulludjian

#### Struggling to Offer in Sacrifice the Impossible: Gregory of Narek's Monumental Attempt Inside Language

Although the 10<sup>th</sup> century Armenian poet St. Gregory of Narek's magnum opus, the *Book of Tragedy* or *Lamentations*, is somehow overlooked in the context of European medieval mystical literature, it offers unique solutions to many problems faced by most mystic writers. This paper focuses on the ways Gregory deals with the ineffability and with the impossibility of language, given that his declared purpose is to make his poetry a “rational sacrifice”. An extensive reading list from the great names of mysticism will only highlight the unusual approaches by the poet-theologian-philosopher. Instead of employing text as usual in an attempt to convey the mystical experience, or the desire for union, he culminates in shaping that experience within the text itself, explicitly identifying himself with the book. Performative language renders speech not only as a vehicle for union with God, but also as the place and the act where it happens.

<sup>22</sup> ՆԲՀԼ, ֆուն. Բ, 43:

## ԱԶԱՏ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

### ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅՈՒ ԵՐԿԻ ՄԻ ՔԱՆԻ ԳՐԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Մանուկ Աբեղյանը վկայում է. «(Խորենացու մատյանի մասին) բուն գրական ուսումնասիրություն չկա»<sup>1</sup>: Աբեղյանի մահվանից անցել է մի քանի տասնամյակ, բայց շատ բան չի փոխվել: Խորենացիագետների ջանքերի առյուծի բաժինը ուղղված է Խորենացու ժամանակին ու ժամանակագրությանը, զուտ բանասիրական և պատմագիտական խնդիրներին: Այս միակողմանիությունը պատմահոր գործի քննության մեջ անարդար է: Խորենացու երկը հայ խոսքի, մանավանդ պատմողական խոսքի հետաքրքրագույն հուշարձաններից է: Ներկա հոգվածում ես կանդորդառնամ Խորենացու «Պատմության» բուն գրական մի քանի խնդիրների, հատկապես նրա խոսքի առանձնահատկություններին:

Սկսեմ մի խնդրով, առանց որի ամբողջական և ճիշտ պատկերացում կազմել Խորենացու խոսքի մասին հնարավոր չէ: Արդյո՞ք Խորենացու աշխատությունը պատկանում է գեղարվեստական արձակի մարզին:

Գրականագիտության մեջ երբեմն լռելյայն, երբեմն բարձրաձայն, այս հարցին դրական պատասխան է տրվում<sup>2</sup>: Իմ կարծիքով, V դարի պատմագրությունը, ինչպես և ամբողջ հայ պատմագրությունը, գեղարվեստական արձակ չեն: Ներկա հոգվածում հնարավորություն չկա մանրամասնորեն խոսել մի քանի տեսական խնդիրների մասին՝ կապված արձակի գեղարվեստականությունից հետո: Դրանց ես անդրադարձել եմ այլ հոգվածում<sup>3</sup>: Այստեղ համառոտ և սխեմատիկ շարադրեմ հիմնական դրույթները: Ես ելնում եմ այն ըմբռնումից, որ գեղարվեստական արձակը ծնվում է հեղինակային հնարանքի հետ: Քանի

<sup>1</sup> Մանուկ Աբեղյան, *Հայոց հին գրականության պատմություն*, գիրք առաջին, Անթիլիաս – Լիբանան, 2004, էջ 263: Հետագա մեջբերումները՝ այս գրքից:

<sup>2</sup> Մայիս Ավդալբեգյանը իր *Հայ գեղարվեստական արձակի սկզբնավորումը* աշխատության մեջ Խորենացու մատյանը չի ֆննում V դարի այն պատմագիրների գործերի շարքում, որոնք ինքը դիտարկում է իբրև հայ գեղարվեստական արձակի սկզբնավորում: Բայց հետագայում *Հայ միջնադարյան գրականության ժանրերը* գրքում տպագրված հոդվածում նա Խորենացու երկն էլ է ֆննում իբրև գեղարվեստական արձակ: Երկու դեպքում էլ նրա հետ դժվար է համաձայնել՝ և այն դեպքում, երբ նա Խորենացուն հետացնում է V դարի իր գրչակիցներից (գրքում), և այն դեպքում, երբ նրան էլ, մյուսների պես համարում է գեղարվեստական արձակի ներկայացուցիչ:

<sup>3</sup> **Ազատ Եգիազարյան**, «Художественный вымысел», в сб. *Литература в меняющемся мире* (в печати).

դեռ հեղինակը չի գիտակցել իր իրավունքը ստեղծել, այսինքն, հնարել իր աշխարհը, մենք գործ ունենք արձակի այլ տեսակների, և ոչ թե գեղարվեստական արձակի հետ: Այն, ինչ ներկայացնում է *V* դարի պատմագիրը, մեր հայացքով ճշմարտություն չէ: Դա առասպել է, ճշգրիտ չէ և այլն, բայց դա՝ մեր հայացքով: Իրենք՝ հեղինակները, չունեին այդ գիտակցությունը:

Պատմագիրները համոզված էին, որ գրում են մաքուր ճշմարտությունը (այդ համոզմունքի արտահայտությունները հանդիպում են Ագաթանգեղոսի, Եղիշեի և ուրիշների գրքերում): Իհարկե, այդ «ճշմարտություն» մեջ խառնված էին իրական փաստերը, ավանդությունները, բանահյուսությունը, գրական կանոնը: Բայց պատմագիրները գիտակցաբար ոչինչ չէին հնարում: Նրանք ամենաշատը կարող էին ծաղկեցնել իրենց պատմածը զանազան պատկերներով, խոսքի երանգավորումներով, որոնք, պետք է հատուկ շեշտել, շատ բազմազան են *V* դարի պատմագրության մեջ: Անգամ Խորենացին, որի «Պատմությունը» ամենից մոտ է գիտականության մասին մեր պատկերացումներին, հաճույքով զարդարում է իր խոսքը տպավորիչ պատկերներով, համեմատություններով, մակդիրներով:

Բայց *V* դ. գրքերը նաև «մաքուր» պատմագրություն չեն, մաքուր գիտական աշխատություններ չեն: *V* դարում հայ մատենագրության մեջ այդպիսի բաժանում չկար ոչ տեսական մակարդակով, ոչ էլ գործնականում: Պատմագրության մեջ տարբեր հատկանիշներ կազմում են մի ամբողջություն, որը կարելի է անվանել հենց պատմագրական արձակ:

Խորենացու գրքում գիտականության հատկանիշները, *V* դ. մնացած բոլոր պատմագիրների համեմատությամբ, ամենից ավելի են աչքի ընկնում: Նրա առաջին հատկանիշը, որ նրան առանձնացնում է իր գրչակիցների գործերի ֆոնին, նրա խոսքի քննականությունն է: Դա իսկապես գիտականության միտող խոսք է, սթափ, ամեն տեսակի շափազանցություններից (իր ըմբռնումով) խուսափող: *V* դարի պատմիչներից ամենից շատ նա է ձգտում հարազատ մնալ պատմության փաստերին: Ընթերցողն անընդհատ հանդիպում է նրա դատողություններին այն մասին, որ ուրիշների հաղորդած այսինչ կամ այնինչ փաստը իրեն արժանահավատ չի թվում, կամ, ուրիշ դեպքերում, հավաստիացումներ այն մասին, որ ինքը փնտրել և գտել է իսկական ճշմարտությունը, արժանահավատ փաստերը: Ահա թե ինչու է նա այդքան շատ դիմում կողմնակի աղբյուրների օգնությանը: Նրա օգտագործած աղբյուրների քանակությունը իր ժամանակի, մանավանդ նոր սկսվող հայ պատմագրության համար աննախադեպ է: Գագիկ Սարգսյանը իր թարգմանության առաջաբանում տալիս է այդ աղբյուրների տպավորիչ պատկերը (առհասարակ այդ հոգվածը Խորենա-

ցու պատմագիտական սկզբունքների լավագույն վերլուծություններից է)<sup>4</sup>: Մեզ հետաքրքրում է, թե ինչպես են այդ սկզբունքները արտացոլվել նրա խոսքում՝ դառնալով ոճի հատկանիշ:

Կարելի է ձևակերպել այսպես՝ Խորենացին հենվում է ոչ թե հավատի, այլ տրամաբանության վրա, և սրանով նա շատ է տարբերվում V դարի մեր մյուս պատմիչներից: Սա, հարկավ, չի նշանակում, որ Խորենացին հավատացյալ քրիստոնյա չէր: Ինքն էլ է հենվում Աստվածաշնչի վրա, մեծ հարգանքով է խոսում Ս. Գրքի մասին: Բայց ես խոսում եմ նրա մտածելու եղանակի մասին, որում ամենակարևորը քննական մոտեցումն էր, տրամաբանությունը:

Նրա մտածողության այս կողմը լուսաբանելու համար ամենաշահեկան օրինակները, պատմական փաստերի քննությունից հետո, տալիս է նրա վերաբերմունքը Ս. Գրքի և կրոնական սյուժեների նկատմամբ:

Խորենացու քննող հայացքը տարածվում է մինչև կրոնական խնդիրները, առաջին հերթին՝ մինչև Աստվածաշուշ: Շատ հետաքրքրական է և բնորոշ նրա վերաբերմունքը քրիստոնեության հանդեպ: Երբ գործ ունենք Ագաթանգեղոսի և Եղիշեի հետ, այս դեպքում խնդիրն ավելի պարզ է. Ագաթանգեղոսը ոչ միայն հավատացյալ է, այլև աշխարհը տեսնում է մեկ լույսով՝ քրիստոնեական բարոյականության ու դոգմատի լույսով: Նրա աշխարհայացքը ձևավորված է այդ կաղապարով, մնացած տարրերը պատահական ու անկարևոր են: Եղիշեն հավատը կապում է ազգության հետ. բայց պատահական չէ, որ Ղևոնդը նրա մատչանում ավելի կարևոր դեմք է, քան Վարդանը (թեև մատչանը մեզ է հասել իբրև «Պատմություն Վարդանայ»): Եղիշեի աշխարհայացքի համար էլ կրոնականությունը շատ կարևոր է: Այնինչ Խորենացու դեպքում հավատի ազդեցությունը նրա մտածողության վրա նկատելիորեն ավելի քիչ է զգացվում: Զգայթակղվենք նրան քննադատական հայացք վերագրելով քրիստոնեության հանդեպ: Նա հավատացյալ է և քրիստոնեության շատագույն: Բայց նա Հայոց պատմության և դրա հետ կապված դեպքերի մասին խոսելիս հենվում է ոչ այնքան Սուրբ գրքի, որքան իր հետազոտությունների արդյունքների վրա: Հետաքրքրական է, որ մեր քրիստոնյա պատմագիրը քննական հայացք է նետում և Ս. Գրքին. «Եւ այս յայտնի է ամենեցուն, զի դժուարհաւաք և տաժանելի է որպէս գիւտ ժամանակացն ի սկզբանէ մինչև առ մեզ... Մանաւանդ զի աստուածայնոյն Գրոյ զիւրսն ի բաց հատեալ յինքն սեպհական ազգ՝ ելիք զայլոցն իբր զարհամարհելեացն և իւրոց անարժան կարգելոց բանից» (Գիրք առաջին, Ե, էջ 17)<sup>5</sup>: Ուշագիր լինենք իմ ընդգծած տողերին. հստակ լավում է Խորենացու անբավարարվածությունը, որ Սուրբ գիրքը ուշագրություն է դարձրել միայն իր

<sup>4</sup> Տե՛ս **Мовсес Хоренаци**, *История Армении*, перевод с древнеармянского языка, Введение и примечания **Гагика Саркисяна**, Ер., Айастан, 1990, сс. X-XVII:

<sup>5</sup> Պատմության էջերը նշվում են ըստ 1991 թ. երևանյան հրատարակության, որը կրկնում է Տփիսիսի (Թբիլիսիի) 1913 թ. ֆինական հրատարակությունը:



ազգին: Իսկ մնացածը ինքը՝ Խորենացին, գտել է տաժանելի աշխատանքով: Իսկ նախորդ գլխում Խորենացին տրամաբանության դիրքերից քննում է Ս. Գրքում ասվածը Ենովսի և Նոյի մասին և հանգում որոշակի եզրակացությունների: Նույն Ե գլխում Խորենացին հայտնում է, որ Աստվածաշնչի հայերեն թարգմանության մեջ չի գտել նահապետների մի քանի անուններ և դրանք լրացրել է «մի ուշիմ և ընթերցասեր ասորացու» ասածից: Այսինքն, այս դեպքում Աստվածաշունչը նրա համար աղբյուր է ուրիշ աղբյուրների շարքում:

Այլ դեպքերում Խորենացին հանգիստ պատմում է հեթանոսական աստվածների հանդեպ հայոց և այլ թագավորների պաշտամունքի մասին, որևէ անհարգալից արտահայտություն չանելով այդ աստվածների մասին (օրինակ, Գիրք երկրորդ, ԺԴ): Այսինքն, նա հեթանոսությունը ընդունում է սոսկ իբրև պատմական փաստ: Իհարկե, երբ հասնում է Աբգար թագավորին, նրա նամակագրությանը, բաժանում է Աբգարի ջերմեռանդությունը: Երբ պատմում է քրիստոնեության ընդունման, իր ժամանակի իրադարձությունների մասին (երկրորդ գրքում), հանդես է բերում և կրոնական ջերմեռանդություն: Բայց չենք կարող չհիշել նրա ակնածանքը հունական առասպելների հանդեպ, առասպելներ, որոնք հագեցած էին հեթանոսությամբ: Հունաստանը «մայր կամ դայակ իմաստության» եղել է հենց հեթանոսության շրջանում: Մի այլ դեպքում Պատմահայրը հանդուրժողաբար է խոսում զրադաշտականության մասին (երբ պատմում է պարսից Արտաշիր թագավորի՝ Հայաստանում ծավալած գործունեության մասին (Գիրք երկրորդ, ՀԷ): Այսինքն, Խորենացու պատմության մեջ քրիստոնեությունը անանցանելի սահմաններ չի գծում նրա հայացքին: Իր քրիստոնյա լինելը էականորեն չի ազդում նրա պատմագիտական հիմնադրույթի (կոնցեպցիայի) վրա:

Չի ազդում և խոսքի վրա: Մեր հիշած բոլոր դեպքերում Խորենացու խոսքը հանգիստ է, հավասարակշռված, մեջբերումներ և հղումներ Աստվածաշնչին համարյա չկան, ի տարբերություն Ագաթանգեղոսի, Բուզանդի, Եղիշեի, Փարպեցու: Խոսում են ոչ թե կրոնական պաթոսն ու ջերմեռանդությունը, այլ քննությունն ու տրամաբանությունը:

Շատ կարևոր է, թե ինչպես է նա ներկայացնում իր հերոսների նահատակությունը: Մինչ V դարի (և հետագա դարերի) պատմիչները մանրամասն և ջերմեռանդորեն նկարագրում են վկաների մարտիրոսությունը, Խորենացին ընդամենը համառոտ տողերով ներկայացնում է փաստը: Նա խուսափում է սրբերի տառապանքն ու մահը և, ուրեմն, նրանց ցնծությունը գոհաբերության պահին նկարագրելուց: Սրան արժե ուշադրություն դարձնել, մանավանդ, որ նա բազմաթիվ անգամներ հիշում է Ագաթանգեղոսին, նկարագրում է նույն դեպքերը, ինչ Ագաթանգեղոսը, բայց խուսափելով տանջանքների ու մահվան նկարագրությունից: Ագաթանգեղոսը բազում էջեր է նվիրում Գրիգոր Լուսավորչի տանջանքներին ու այդ պահին նրա արտասանած խոսքերին: Խորենա-

ցին միայն մի անգամ է անցողակի հիշում Լուսավորչի ֆիզիկական շարժարանքները: Մյուս սրբերի մասին բավարարվում է միայն նրանց սպանվելն հիշելով և Ագաթանգեղոսին հղելով: Օրինակ, երկրորդ գրքում մի գլուխ կա «Յաղագս վկայութեան առաքելոցն մերոց» վերնագրով: Այստեղ Խորենացին կարճ և առանց զեղումների պատմում է Ադդեի մահվան մասին. «Եւ յղեաց առ Ադդէ, զի արասցե նմա խոյր բեհեզեայ անգուածով ոսկոյ, որպէս առաջագոյն առնէր հօրն նորա: Եւ պատասխանի ընկալաւ, թէ «ոչ արասցեն ձեռք իմ խոյր գագաթան անարժանի, որ ոչ երկրպագէ Քրիստոսի Աստուծոյ կենդանոյ»: Եւ իսկոյն հրամայեաց միում ի զինակրացն՝ կտրել զոտս նորա սրով: Որոյ երթեալ, և տեսեալ զնա, զի նստէր յաթոռ վարդապետութեանն՝ էած սուսերաւ և ի բաց կտրեաց զսրունս նոցա, և նոյն ժամայն աւանդեաց զհոգին» (Գիրք երկրորդ, ԼԳ, էջ 158):

Խորենացու ոճն ու մտածողությունը ուսումնասիրելիս չի կարող հարց շարժանալ՝ որտեղի՞ց են գալիս դրանց առանձնահատկությունները և, առաջին հերթին, քննականությունը: Ոչինչ դատարկ տեղում չի առաջանում: Իսկ V դ. առաջ հայ գրականություն չկար, և Խորենացին հայ հեղինակների վրա չէր կարող հենվել: Կար հայոց նախաքրիստոնեական հարուստ բանահյուսությունը: Որ Խորենացին գիտեր այդ բանահյուսությունը, երևում է իր իսկ գրքից, որի առաջին գլուխները հենվում են բանահյուսության վրա (բայց կարելի է արձանագրել, որ Խորենացու և բանահյուսության կապը լավ չի ուսումնասիրված):

Ինչ վերաբերում է նրա քննական-տրամաբանական ոճին, այստեղ նա կարող էր հենվել միայն անտիկ պատմագրության վրա:

Վաղուց արդեն ընդհանուր տեղի է դարձել հունական մշակույթի հանդեպ նրա վերաբերմունքը: Նրա հիացմունքն ու ակնածանքը հին հույների ստեղծածի նկատմամբ ընդգծվում է նրա գրքի բոլոր մասերում: Նրա հայտնի նախադասությունը՝ «Զբոլոր իսկ զՅոյնս ոչ դանդաղիմ մայր կամ դայակ ասել իմաստից» (Գիրք առաջին, Բ, էջ 9) նրա վերաբերմունքի ամենաճշգրիտ արտահայտություններից մեկն է: Բուն տեքստում բազմաթիվ վկայություններ կան այն մասին, որ Խորենացին առնվազն լավ ծանոթ է հունական դպրությանը: Նա հիշում է ոչ միայն Հոմերոսին, այլև հույն պատմիչներին՝ սկսած մ. թ. ա. V դարից՝ Հերոդոտոս և ուրիշներ: Պատահական չէ Խորենացու վերապահությունը, որ թեև իր տեղեկությունները սկզբնապես եղել են ասորական և այլ աղբյուրներում, ինքը գերադասել է դրանք բերել հունական աղբյուրներից: Ընդհանրապես, հունական հետքը Խորենացու գրքում արժանի է առանձին քննության: Հայ պատմիչներից ուրիշ ոչ ոք այսքան կապված չի եղել հունական մշակույթի հետ (չմոռանանք նաև նրա անվերապահ-մերժողական վերաբերմունքը պարսկական առասպելների և նույնքան անվերապահ հիացմունքը հունականների հանդեպ):

Պատմահոր այս ակնածանքը հունական դպրության հանդեպ իր խոր հետքն է թողել նաև նրա սեփական մտածողության մեջ: Հին հույների ռացիոնալիզմը, հավատը բանականության հանդեպ դարձել է հորենացու մտածողության գլխավոր կողմերից մեկը: Այն, ինչ քիչ առաջ հիշվեց իբրև հորենացու մտածողության առանձնահատկություններից մեկը (ոչ թե հավատ, այլ տրամաբանություն, սթափ քննություն), գալիս է, անկասկած, հունական մտածողությունից: Հույներն հավատում էին իրենց աստվածներին, բայց դա միանգամայն տարբեր էր իրենց աստու հանդեպ քրիստոնյաների վերաբերմունքից, որն արտացոլվեց նաև պատմագրության մեջ: Տրամաբանական կամ, որ այս դեպքում նույնն է, փիլիսոփայական մտածողությունը հին հույների հոգևոր կյանքի ամենաէական գծերից մեկն էր: Այնինչ քրիստոնեության ազդեցության ուղորտում գտնվող մտածողների համար գլխավորը անկասկածելի հավատն էր միակ Աստու և նրա նախանշած ուղու հանդեպ:

Այնինչ մենք տեսանք, որ հորենացու գրքում հավատը իբրև մտածողության սկզբունք շատ կարևոր տեղ չի գրավում: Այն, ինչ Հերոդոտոսը, Թուկիդիդեսը, Քսենոփոնը արել էին մ. թ. ա. V դարում, անում էր հայկական իրականության մեջ հորենացին նրանցից հազար տարի հետո: Այս կետում արժե ուշադրություն դարձնել հորենացու Պատմության և Թուկիդիդեսի գրքի միջև առկա մի ընդհանրություն: V դարի հայ պատմագիրներից հորենացին միակն է, որ տեսական դատողություններ է անում պատմագրության մասին: Նրա այս դատողությունները հիշեցնում են Թուկիդիդեսի պատմության սկիզբը: Թուկիդիդեսը այստեղ խոսում է Հունաստանի պատմության հին շրջանի, Հունաստանի աշխարհագրության, զանազան անցքերի մասին ստացած տեղեկությունների մասին: Թուկիդիդեսը հատուկ ուշադրություն է դարձնում իր պատմագրի գրածի և բանաստեղծների և արձակագիրների գրածների տարբերությանը, ակնհայտ քամահրանքով վերաբերվում դրանց: Նա հավաստիացնում է, որ ինքը կամ տեսել է, կամ տարբեր աղբյուրներից ստուգել է փաստերը: հորենացու գրքում, իհարկե, այսպիսի հակադրություն չէր կարող լինել: V և նախորդ դարերի Հայաստանում չկային բանաստեղծներ և արձակագիրներ, որոնց նա հակադրվեր: Բայց էականը քննականության միտումն էր, և այս տեսակետից Թուկիդիդեսի դիրքը շատ հոգեհարազատ է նրան: Նա էլ խիստ քննադատաբար է մոտենում իր աղբյուրներին, առաջին հերթին՝ բանահյուսությանը:

Այս զուգահեռը շատ թերի կլինի և թյուրիմացությունների առիթ կարող է տալ, եթե շտեմենք հորենացու մտածողության զուտ ազգային և անհատական գծերը, որոնք նրան տարբերում էին Հին Հունաստանի պատմագիրներից: Այսինքն նրանից, ինչ հորենացու մեջ ընդգծում էր նրա հայկականությունը: Այստեղ մենք բախվելու ենք նաև պատմական պայմանների, պատմության զարգացման տարբեր փուլերի հետ:

Մեր հիշած հույն պատմագիրները գործում էին հունական քաղաք-պետությունների մրցակցության մթնոլորտում: Նրանց բոլորի մեջ կա այն գիտակցությունը, որ նրանք հելլեններ են՝ հույներ: Բայց դա, զարմանալիորեն (մեզ՝ հայերիս համար) կապ չունեն ավագային հայրենասիրության հետ: Այս ավագայինին պետք է շատ ուշադիր լինել: Նրանց հերոսները՝ Պերիկլեսը և մյուսները իրենց քաղաք-պետությունների հայրենասերներն են: Պերիկլեսը ամեն ինչ անում է Աթենքի և աթենացիների հաղթանակի համար, և սպարտացիները կամ լակեդեմոնցիները, որոնք նույն հույներն են, ճիշտ այնպիսի թշնամիներ են կամ հակառակորդներ, ինչ պարսիկները և մյուս բարբարոսները: Հաղթում են մեկը մյուսին, ավերում միմյանց հողերը, սպանում գերիներին կամ ստրկության վաճառում: Ահա այստեղ Խորենացին սկզբունքորեն տարբեր է նրանցից: Հունական դասական պատմագրությունից հետո անցած հազար տարում փոխվել են աշխարհընկալումները: Փոխվել է հայրենասիրության բնույթը: Եվ Հայաստանի պատմությունն է շատ տարբեր հույների պատմությունից: Խորենացին ոչ թե քաղաքի, որևէ վայրի, այլ մի երկրի և ժողովրդի ներկայացուցիչ է: Ահա այստեղ նրա խոսքի քննականությունը էականորեն լրացվում է զգացմունքայնությամբ: Խորենացին շատ զգացմունքային է, երբ խոսում է հայոց պետության, հայ հերոսների մասին: Ահա Խորենացու զգացմունքայնության ամենատպավորիչ (և ամենահուզիչ) արտահայտություններից մեկը. «Արդ՝ այժմ անցից ի թիւ մերոց արանց, մանաւանդ թե թագաւորաց, մինչև ցտէրութիւն Պարթևաց: Քանզի ինձ այսոքիկ արք ի մերոց թագաւորաց են սիրելիք, որպես բնիկք և իմոյ արեան առուք և հաւաստի հարազատք: Եւ սիրելի էր ինձ՝ յայնժամ գալ Փրկչին և զիս գնել, և առ նոքօք յաշխարհ զմուտն իմ լինել, և նոցա տէրութեամբն խրախճանալ, և յարդեացս ապրել վտանգիցս» (Գիրք առաջին, ԻԲ, 66): Սա բոլորովին այլ վերաբերմունք է սեփական ժողովրդի և նրա հայրենիքի հանդեպ: Արյան մասին հիշողությունը այստեղ հուշում է Խորենացու հայրենասիրության բնույթը՝ այս պատմիչը իրեն զգում է իբրև որոշակի ժողովրդի (և ոչ քաղաք-պետության, մարզի և այլն) ներկայացուցիչ: Այսպիսի հատվածներ՝ ուժեղ կամ թույլ զգացմունքայնությամբ, սփռված են Խորենացու ողջ պատմության մեջ:

Այստեղից էլ՝ Խորենացու մատյանի վերնագիրը արտահայտում է նրա աշխատության բուն էությունը: Համեմատության համար կարելի է հիշել, որ հին հույների (և հռոմեացիների) գրքերը վերնագրված են առանց երկրի կամ ժողովրդի նշման: Օրինակ, Հերոդոտոսի պատմությունը կոչվում է «Պատմություն ինն գրքից», Թուկիդիդեսինը՝ «Պելոպոննեսյան պատերազմի պատմություն», Քսենոփոնինը՝ «Անաբասիս» և այլն: Նրանց հռոմեացի հետևորդի՝ Տակիտոսի գրքերը՝ «Աննալներ», «Պատմություն» և այլն: Հնարավոր է, որ Խորենացու (և V դարի մյուս հայ պատմիչների) գրքերի վերնագրերը փոխվել կամ խմբագրվել են: Բայց դրանց բովանդակությունը, մանավանդ Խորենացու

Պատմությունը, իսկապես հայոց պատմություններ են, գրված ոչ անկողմնակալ պատմիչի, այլ իր հայրենիքի ճակատագրով խորապես ապրող հայ մարդու ձեռքով: Առհասարակ, հայրենիքի գաղափարը (հայկական ըմբռնումով) էական չէ անտիկ պատմագրության համար, հատկանիշ, որը որևէ շափով չի պակասեցնում դրա արժեքը: Խոսքը միայն պատմագրության ազգային առանձնահատկությունների մասին է: Հերոդոտոսը իրեն կարող է թույլ տալ երկար և հանգամանորեն պատմել զանազան հերոսների ու գործիչների հետ կապված տարբեր դրվագներ, որոնք ինքնին շատ հետաքրքրական են, բայց ուղղակիորեն կապված չեն հույների պատմությունը, որովհետև նա իսկապես հույների պատմությունը չի գրում, այլ պատմությունը այն բոլոր երկրների ու ժողովուրդների, որոնց ինքը այս կամ այն կերպ ծանոթ է (այսպես և նրա պատմության մեջ տարբեր առիթներով հիշատակվում է և Արմենիան՝ Հայաստանը): Իսկ Խորենացին կենտրոնացած է հայոց պատմության ու ճակատագրի վրա, սկզբում հեռավոր էքսկուրսներ է անում հայոց մեծերի ծննդաբանությունը պարզելու համար, և հատուկ ուրախություն է ապրում, երբ հասնում է զուտ հայկական պատմության հանգրվանին (ինչպես վերը բերված հատվածում):

Հայ հերոսների մասին խոսելիս Խորենացին անթաքույց հիացող է, մանավանդ երբ հիշում է քաջ նախնիներին: Հիշենք, թե ինչպես է ներկայացնում Հայկին, նրա կոնիվը Բելի դեմ, հետո՝ Տրդատին և մյուսներին:

Եվ այսպես, Խորենացու անկեղծ, խորը հայրենասիրությունը կասկած չի հարուցում: Կարելի է պնդել, որ V դարի ուրիշ ոչ մի հեղինակի գրքում հայրենասիրությունը այդքան խորությամբ գիտակցված չէ, ինչքան Խորենացու պատմության մեջ: Բայց այդ խորությունը նաև նշանակում է, որ նրա հայրենասիրությունը հայրենիքի պարզ գովերգություն չէ: Դա նաև տրամաբանորեն ու դառնություն է իր ժողովրդի ոչ միայն ճակատագրի, այլև թերությունների և արատների համար: Հիշեմ Խորենացու գրքի հայտնի փաստերը և մի փաստ, որին գրեթե ուշադրություն չի դարձվել: Նախ, շատ հիշատակված փաստերը: Խորենացին, գնահատելու համար Սահակ Բագրատունու հանձնարարության արժեքը, նշում է, որ մեր հները հոգ չեն տարել հայոց պատմությունը շարադրելու մասին, մինչդեռ «թեև փոքր ածու ենք...» և այլն: Այստեղ արդեն խոր դժգոհություն կա նախնիներից: Խորենացու պատմությունն ավարտվում է հայոց թագավորության անկմամբ և Մաշտոցի ու Սահակի մահով: Այս առթիվ Խորենացին գրում է իր հուշակավոր Ողբը, որի մեջ հիշում է իր հայրենակիցների մեծամեծ թերությունները և արատները: Բայց նաև երկրորդ գիրքն է ավարտվում մի գլխով, որ իր բովանդակությամբ շատ է մոտենում Ողբին: Այս գլխի մասին է, որ գրեթե չի խոսվում: Ի՞նչ է ասում Խորենացին այդ գլխում: Նախ՝ վերնագիրը. «Յաղագս վախճանի Տրդատայ թագավորի, ընդ որում եւ ողբերգական մեղադրութիւն»: Ինչու՞ «ողբերգական մեղադրութիւն»: Հիշելով Տրդատի լավ գործերը, որ «յետ հաւատոցն որ ի Քրիստոս», դրանից անմիջա-

պես հետո գրում է. «Աստանօր ամաչեմ ասել զճշմարտութիւնն, մանավանդ թէ զանօրէնութիւն և զամբարշտութիւն ազգիս մերոյ, և զմեծի ողբոց և արտասուաց արժանի գսոցա գործս» (Գիրք երկրորդ, ՂԲ, էջ 246): Զայրույթը միանգամայն կոնկրետ առիթով է՝ Տրդատ թագավորին թունավորելը (այս առիթով Խորենացին հիշում է Սոկրատին թունավորելու, ինչպես նաև խաչված Քրիստոսին լեղախառն ըմպելիք տալու պատմութիւնները): Բայց դա առիթ է տալիս խոսելու ամբողջ ժողովրդի թերութիւնների մասին, նույն ոճով ու պաթոսով, ինչպես «Ողբում». «Արք Արամեանք, մինչև յէ՛րբ էք ծանրասիրտք, ընդէ՛ր սիրեք զնանրութիւն և զանաստվածութիւն» (նույնը, էջ 247):

Այսպիսով, Խորենացու «Պատմութեան» մեջ հստակ երևում է մի գիծ, որը կարելի է անվանել խորապես քննադատական հայացք իր իսկ ժողովրդի հանդեպ, որի մասին նա այլ առիթներով խոսում է անկեղծ հիացմունքով և սիրով: Ուրեմն, այս գլուխը, «Ողբի» և մյուս հատվածների կողքին, մեզ հիմք է տալիս ասելու, որ հայրենասիրութեան այս որակը՝ հպարտութիւնը իր ժողովրդի լավ գործերի և պատմութեան համար և ցավն ու զայրույթը նրա թերութիւնների համար, բնորոշ է Խորենացուն:

Փաւստոսի և Եղիշեի մատյաններում հայրենասիրութեան բնույթն այլ է: Փաւստոսն առհասարակ հայրենիքի մասին չի խոսում: Պարզապես իբրև հայ մարդ հպարտութեամբ նշում է հայ թագավորների ու զորավարների հաղթանակները և առանց տատանվելու քննադատում նրանց, այսինքն՝ անհատների թերութիւնները: Նրա միտքը չի ձգտում ընդհանրացումների, դրա կարիքն էլ չունի: Նրա ուժը հետաքրքրական, հյուսիսեղ, կենսական դրվագների մեջ է:

Եղիշեն գովերգում է հայոց պայքարը ընդդէմ պարսիկների հոգևոր բռնութեան. նրա շափանիշը մեկն է՝ ով հավատարիմ է Ղևոնդին, Վարդանին, հայոց եկեղեցուն՝ հերոս է ու սուրբ, ով հակառակ է դրանց կամ ձգտում է լեզու գտնել պարսիկների հետ՝ դավաճան է, ինչպես Վասակը: Նրա միտքը վերլուծական ուղղվածութիւն չունի, նրանը կրակոտ ոճն է ու հայրենասիրական պաթոսը: Նա միակողմանի է, ինչպես պահանջում է իր նպատակը՝ դաստիարակել սեր ու հավատարմութիւն հայրենիքի հանդեպ և արգահատանք դավաճանութեան հանդեպ:

Խորենացին այլ է, նա քննող է ու վերլուծող, և պաթոսը, թեև խորթ չէ նրան, երբ խոսում է, ասենք, Հայկի, Տրդատի և այլ հերոսների մասին, նրա բնորոշ գիծը չէ: Նրա միտքը ձգտում է ընդհանրացումների, նա ընդունակ է սերը և հիացմունքը համատեղել խիստ քննադատութեան հետ: Այսպիսի հայացք տրված է միայն մեծ և ուժեղ մարդկանց, որոնք ընդունակ են խորապես սիրելու: Մերժումը գալու է ահա այդպիսի հայրենասիրութիւնից:

Այսպիսի ուժգին ցավ հայրենիքի ճակատագրի համար կարող են ունենալ մեծ անհատները, որոնք հստակ տեսնում են նաև իրենց ժողովրդի թերութիւն-

ները: Նոր ժամանակներում այդպես էին սիրում հայրենիքը Հովհաննես Թումանյանը և Եղիշե Չարենցը:

Բայց կա ավելի էականը: Խորենացին առաջին հայ գրողն է ու մտածողը, որն իրեն զգում է ոչ թե պարզապես հայ, այլ հայ ժողովրդի, ազգային ամբողջության մասն ու ներկայացուցիչը, որը խորհում է ոչ թե թագավորների ու զորավարների ճակատագրի ու քաջագործությունների, ոչ թե կրոնների հերթափոխության, այլ իր ժողովրդի ու հայրենիքի մասին, և խոսելիս ու պատմելիս միշտ ելնում է ահա այդ ամբողջության գոյությունից, իր հերոսների գործերին նայում է հայ ժողովրդի տեսակետից:

Ահա այս տեսակետից Խորենացին (ինչպես և V դ. մյուս պատմիչները) զանազանվում է ոչ միայն հին հույն պատմիչներից, այլև ժամանակով իրեն ավելի մոտ պատմիչներից: Եվսերիոս Կեսարացին գրել է քրիստոնեական եկեղեցու պատմությունը բավական մանրամասն, և այդ պատմության մեջ հերոսների ազգային պատկանելությունը որևէ նշանակություն չունի: VI դ. պատմիչ Պրոկոպիոս Կեսարացին գրում է Հուստինիանոսի պատմությունը, բայց նա այնքան է տարված կայսեր ու նրա կնոջ արատների մերկացմամբ, որ հայրենիքի գաղափարը նրան որևէ չափով չի զբաղեցնում: Իսկ Խորենացու համար, այսօրվա տերմինով, հենց էթնիկական ազգության գաղափարը չափազանց կարևոր է:

Եվ ևս մի կարևոր խնդիր՝ Խորենացուն իբրև պատմողի կամ խոսողի անհատականության խնդիրը: Առհասարակ միջնադարյան գրականության մեջ անհատականության խնդիրը բավական բարդ է: Ուշ միջնադարում այն ընդհանրապես անցնում է երկրորդ պլան, տեքստը անանուն է: Բայց հինգերորդ դարի հայ պատմագրությունը այս տեսակետից էլ շատ հետաքրքրական պատկեր է ներկայացնում: Գոնե Խորենացու դեպքում մենք գործ ունենք պատմողի ընդգծված անհատականության հետ: Մեր այս պատմիչը ոչ միայն իրեն զգում է իբրև անհատականություն, այլև «իրավունքներ է բանեցնում»: Եվ դա տեսնվում է նրա մատյանի հենց առաջին էջից, որտեղ նա դիմում է իր պատվիրատու Սահակ Բագրատունուն: Այն, որ նա շատ գոհ է իշխանից, հասկանալի է: Բայց այդ գոհությունը հայտնելու եղանակը հուշում է գրողի տարիքի և իմաստության մասին: Մենք հասկանում ենք, որ սա սովորական շողոքորթություն չէ իշխանից ինչ-որ շնորհներ ստանալու համար, նա խոսում է անկեղծ և սրտանց. «Առ որով տեսանեմ և զայս, զի եթե որք յառաջ քան զմեզ և կամ առ մեօք եղեն հարուստք և իշխանք աշխարհիս Հայոց, ոչ ընդ ձեռամբ անկելոց իւրեանց արդեօք գտելոց իմաստնոց զայսպիսեացս հրամայեցին կարգել զյիշատակս բանից, և ոչ արտաբուստ ուստեք այսոցիկ ի ներքս ածել խորհեցան օժանդակութիւնս իմաստից, և զքեզ այժմ այսպիսի եղեալ ծանեաք, - ապա ուրեմն յայտ է, թե ամենեցուն քան զքեզ նախագունիցն ճանաչիս վեհագոյն, և

բարձրագույնիցն արժանաւոր գովութեանց, և յայսպիսի պատկանաւոր դնիլ յարձանագրութիւնս բանից» (Գիրք առաջին, Ա, էջ 6): Սա իսկապես ավագի, իրեն նահապետ զգացող մարդու խոսք է կրտսերին, դաս՝ բառիս լավագույն իմաստով: Խորենացին Սահակին համեմատում է հայ իշխանների հետ, որոնք ապրել են անցյալում և ապրում են իրենց կողքին: Եվ նրանցից ոչ մեկը հրաման չի արձակել գիտուններին պատմություն գրել: Մենք գիտենք, որ այս մտտիվը՝ քննադատական հայացքը նախնիների «անիմաստասեր բարքի» նկատմամբ հետո (1, Գ) ավելի ուժգին է հնչում Խորենացու խոսքերում, այսինքն՝ Սահակ Բագրատունու և մյուսների հակադրության մտտիվը պարզ հաճոյախոսություն չէ պատվիրատուին, այլ նրա արածի ճշգրիտ գնահատություն: Այս գնահատականի արժեքը ավելի ևս մեծանում է Խորենացու հայտնի խոսքերի ֆոնին, խոսքեր, որոնցով նա հանդիմանում է Սահակին պարսկական առասպելների հանդեպ անհարկի հետաքրքրության համար: «Այլ տացուք զայսոսիկ՝ մանկական քոյոց տիոց և անհասութեան խակութեանդ լեալ տարփանք» (Գիրք առաջին, Յաւելուած Բ, էջ 90): Միայն տարիքով զգալիորեն ավագը կարող էր այսպես խոսել իշխանի հետ՝ հիշելով նրա «մանկական» (երիտասարդ) տարիքը և «տհասության խակությունը»: Այս խոսքերը կարևոր են և Խորենացու տարիքը գիրքը գրելու պահին որոշելու համար: Բայց սրանք նաև «կերպարաստեղծ» արժեք ունեն: Խորենացու խոսքերի շնորհիվ մենք բավական լավ պատկերացում ենք կազմում իր իսկ՝ հեղինակի ինքնատիպ և վառ անհատականության մասին:

Այս նույն տեսանկյունից հետաքրքրական են Խորենացու դիմումները Սահակին գրքի տարբեր էջերում: Այդ բոլոր դիմումները շեշտում են Խորենացու անհատականությունը: Նա ոչ մի ցանկություն չունի թաքնվել դեպքերի, իրադարձությունների ետևում, ընթերցողը միշտ զգում է ավագի, նահապետի ներկայությունը նրա Պատմության մեջ: Երբեմն այնպիսի տպավորություն է, որ ավագը կրտսերին բանավոր պատմություն է պատմում, ինչպես եղել է ժողովրդական կենցաղում դարերով, և ըստ երևույթին, այդպես եղել է և հինգերորդ դարում: Օրինակ. «Սկիզբն արասցուք պատմել քեզ ի հինգերորդ գրոցն Ափրիկանոսի ժամանակագրի...», կամ. «Եւ վկայ քեզ ի մօտոյ երաշխաւորեսցէ եկլէսիաստէ գիրք եւսեբի Կեսարացոյ...» (Գիրք երկրորդ, Ժ, էջ 120): Այսինքն, այստեղ մենք ունենք Խորենացու պատումի առանձնահատկություններից մեկը՝ գիտական-քննական վերաբերմունքը և ոճը ներդաշնակորեն զուգակցվում են կենդանի զրույցի՝ ժողովրդական խոսքից եկած գծերի հետ՝ ընդգծելով պատմողի անհատականությունը:

Մանուկ Աբեղյանը, խոսելով Խորենացու և Սահակ Բագրատունու հարաբերությունների մասին, շատ դիպուկ նկատողություն է արել Խորենացու անհատականության մասին. «Մեր այս պատմիչը այնպիսի գրողներից է, որ ամեն մի հարմար ըրպէի հայտնում է իր կարծիքները: Ուստի և մենք նրա Հայոց



Պատմությունից լավ ճանաչում ենք նրա բնավորության շատ կողմերը, և մեր ոչ մի պատմագրի հայացքի, համոզումների ու գրական ճաշակի մասին այնքան ստույգ ծանոթություն չունենք, որքան Մ. Խորենացու»<sup>6</sup>:

Ես չեմ խոսում Խորենացու ժամանակի մասին: Դա իմ թեման չէ, մանավանդ, այդ խնդրին նվիրված են բազում գրքեր ու հոդվածներ XVIII դարից մինչև այսօր: Բայց ներկա հոդվածի թեման ստիպում է առնվազն մի դիտողություն անել՝ կապված Խորենացու խոսքի առանձնահատկությունների հետ: Այն պատմաբաններն ու բանասերները, որոնք տարված են Խորենացու գրքի սխալներն ու «կեղծիքը» մերկացնելով, միշտ աչքաթող են անում կամ, ավելի լավ է ասել, չեն տեսնում այս գրքի ամբողջությունը, ոճական միասնությունը, ինչի մասին ես խոսեցի: Եվ ահա այն առանձնահատկությունները, որոնք, հուսով եմ, միայն ես չեմ նկատել, մի բան են վկայում. այս գրքի հեղինակը մեկն է, որն անկեղծ է իր մտքերով ու մտայնումներով: Այսինքն, նա չէր կարող ամբողջ մեծ գրքի էջերում, ամեն քայլափոխի, մտածել V դարի մարդ ներկայանալու մասին: Նա միայն կարող էր լինել: Փաստարկ, որ կարող է շատ թույլ թվալ բանասիրական և պատմական քննությունների արդյունքների կողքին. բայց, ըստ էության, դա ամենագլխավոր փաստարկներից մեկն է, երբ խոսում ենք գրողի ու նրա ստեղծագործության մասին:

Խորենացու նորօրյա քննադատների մեջ վերջին տասնամյակներում առանձնանում է պրոֆեսոր Ռոբերտ Թոմսոնը, մի մարդ, որն իսկապես մեծ ծառայություններ ունի հայ միջնադարյան գրականության երկերը անգլերեն թարգմանելու գործում: Բայց Թոմսոնը այն հայագետների թվում է, որոնք Խորենացու գիրքը համարում են IX դարի գործ, հետևաբար՝ կեղծիք: Հայ և այլազգի պատմաբաններից ու բանասերներից շատերն են գրել այս խնդրի մասին. հիշեմ հայագիտության դասականներից Մանուկ Աբեղյանի և Ստեփանոս Մալխասյանցի, նրանց հետևորդների՝ Գագիկ Սարգսյանի, Բաբկեն Հարությունյանի, Ալբերտ Մուշեղյանի աշխատությունները, որոնցում նրանք բանասիրական և պատմագիտական քննությամբ հաստատում են Խորենացու V դարի հեղինակ լինելը: Թոմսոնի ներածական հոդվածը Խորենացու գրքի իր իսկ թարգմանությունը ինձ հետաքրքրական է իմ թեմայի տեսակետից՝ ինչպե՞ս է պրոֆ. Թոմսոնը ընկալում Խորենացու խոսքի առանձնահատկությունները: Պատասխանը տարօրինակ կարող է թվալ, բայց իսկապես Թոմսոնը բացարձակապես անուշադիր է դրանց: Առհասարակ նրա հոդվածը ավելի քրեական մեղադրանքի փաստաթուղթ է հիշեցնում, քան գիտական անաչառ վերլուծություն: Նա իրապես ոչ թե գիտական ճշմարտությունն է փնտրում, այլ Խորենացու «մեղավորության» ապացույցներ, և այդ ճանապարհին բոլորովին մոռանում

<sup>6</sup> Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, Անթ., Լիբանան, էջ 269:

է, որ Խորենացին գրող է, իսկ գրողի կեղծ ու անկեղծ լինելը նաև (և գուցե առաջին հերթին) նրա խոսքի բնույթի մեջ է երևում:

Վերևում ես խոսեցի Խորենացու հայրենասիրության մասին, իր ազգի ներկայացուցչի նրա արժանապատվության և նույն պահին իր ժողովրդի հանդեպ նրա ամենախիստ քննադատության մասին: Պրոֆ. Թոմսոնը Խորենացու այս վերաբերմունքը «մաքրում» է հակասություններից, Խորենացուն ներկայացնելով իբրև մեկին, որն ամեն գնով ուզում է փառաբանել իր ժողովրդին ու նրա ներկայացուցիչներին: Բերեմ երկու օրինակ նրա ներածական հոդվածի 27 էջից: Առաջինը. «Այս միստիֆիկացիաների լույսի ներքո զարմանալի չէ, որ Մովսեսը հաճախակի օգտագործում է Հովսեպոսին առանց դա գիտակցելու: Առաջին հերթին մենք պետք է նկատենք աղապտացիաների մի քանի օրինակներ, որոնք արված են գրական էֆեկտի համար, և ապա ավելի հետաքրքրական օրինակներ, որոնց նպատակն է Հայաստանը կեղծիքով մտցնել համաշխարհային թատերաբեմ»<sup>7</sup>: Երկրորդը. «Այստեղ Մովսեսը երկու գլխավոր նպատակ ունի՝ բարձրացնել Հայաստանի թագավորներ Տիգրանի և Արտավազդի միջազգային նշանակությունը Հռոմի և Պարթևների պատերազմներում և ներկայացնել հրեական համայնքները Հայաստանում և Բագրատունիների ընտանիքի հրեական ծագումը...»<sup>8</sup>: Ուշադրություն դարձրեք իմ կողմից ընդգծված բառերին: Պրոֆ. Թոմսոնը այնպես է ներկայացնում իր հերթական մեղադրանքը, որ Խորենացու հայրենասիրությունը վերածվում է մանր խորամանկության: Մյուս կողմից, իր հոդվածում նա ոչ մի անգամ, գոնե հարևանցի չի հիշատակում Խորենացու ասածները «փոքր ածու» լինելու մասին, նրա Ողբը գրքի վերջում և զայրույթը իր հայրենակիցների հասցեին, որոնք ես արդեն հիշատակել եմ: Այսինքն, եթե Մովսես Խորենացին պատրաստ էր անգամ կեղծիքների գնալ Հայաստանը և նրա թագավորներին բարձրացնելու համար, էլ ինչու՞ նա պետք է այդքան խիստ խոսեր իր հայրենակիցների թերությունների մասին, գրեր այդքան ազդեցիկ իր ողբը: Զարմանալի է, որ խոսքի հետ գործ ունեցող փորձված մասնագետը այդքան անուշադիր է գրողի խոսքի կարևորագույն առանձնահատկությունների հանդեպ: Այս ձևով պրոֆ. Թոմսոնը Խորենացու միանգամայն սթափ և անկեղծ հայրենասիրությունը վերածում է մակերեսային պարզ խորամանկության (երևի պատահական չէ, որ նա բոլորովին չի անդրադարձել Մ. Աբեղյանի և Ստ. Մալխասյանցի դիտողություններին):

<sup>7</sup> Moses Khorenats' I, *History of the Armenians*, Translation and Commentary on Literary Sources by Robert W. Thomson, Ann Arbor: Caravan Books, 2006, p. 26.

<sup>8</sup> Անդ:

\*\*\*

*Մովսես Խորենացու «Պատմության» գրական առանձնահատկությունները պահանջում են խոր և համակողմանի քննություն: Դա անհրաժեշտ է ոչ միայն հայոց գրականության և խոսքի, այլև հայկական մտավոր մշակույթի ամբողջական պատմության ստեղծման համար:*

**Azat Eghiazaryan**  
**Literary Peculiarities of “History of the Armenians” by Movses Khorenatsi**

The “History of the Armenians” by Movses Khorenatsi is one of the most important monuments of Armenian historiography. Yet its literary peculiarities are not studied sufficiently. I am based on the conviction that it is not a fiction, but not a scientific work either. It has its specific features, which I try to find out in my paper. The most essential characteristic is the style of his narrative, which I have focused on.

## ԱՐՄԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

### ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԻՊԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ

Հայոց ինքնության ամենաէական հատկանիշներից է մեր մշակույթի, այսպես ասած, պատմական ուղղվածությունը՝ ամեն ինչի խորը ներթափանցվածությունը պատմությամբ: Անցյալի հեղինակները, երբ գրիչ են վերցրել իրենց ձեռքը, կարծես ինքնաբերաբար սկզբից գրել են վերնագիրը՝ «Հայոց պատմություն»: Հաճախ այդ գրվածքը չի համապատասխանել իր ընդգրկուն վերնագրին, այլ վերաբերվել է միայն մի կարճ դարաշրջանի, հաճախ էլ այդ վերնագիրը դրվել է հետագայում, ինչը նորից շեշտում է նույն՝ ամեն մի գրվածք որպես պատմություն ընկալելու միտումը: Հայոց նոր գրականությունն էլ, որոշ չափազանցությամբ, կարելի է ասել, որ պատմավեպերի՝ այսինքն, «հայոց պատմությունների» մի շարան է: Եվ հայոց հայացքը, զարմանալիորեն, ուղղված է ոչ թե դեպի առաջ, այլ՝ հետ:

Հայկական վիպական բանահյուսությունը ևս պատմական է: Բացառությամբ ազգածին ավանդության և «Սասնա ծռերի», էպոսների գործող անձինք հիմնականում պատմական կերպարներ են՝ Արտաշիսյան և Արշակունի արքայատոհմերի արքաներ, Մամիկոնյան տոհմի իշխաններ և այլն: Երբ դեռ չկա գիրը և գրավոր պատմությունը, ժողովուրդն իր պատմությունը գրանցում է այսպես ասած, էպիկական կողավորման միջոցով: Այդպիսիք են «ազգածին ավանդությունը» և «Վիպասանքը»: Բայց դպրության ի հայտ գալուց հետո էլ ժողովուրդը շարունակել է ստեղծել էպոսներ, որոնցով ներկայացվել են պատմական դարաշրջանները: Եվ հայկական միտքը փորձել է կողավորել երկրի ողջ պատմությունը իրար հաջորդող էպոսների և էպիկական շարքերի միջոցով:

Հայկական վիպական բանահյուսությունը վերին աստիճանի հարուստ է, բազմազան մի շարք խոշոր էպոսներից և բազում փոքր ստեղծագործություններից<sup>1</sup>: Սրանց պետք է գումարել նաև հայոց քրիստոնեական դարձի մասին

<sup>1</sup> Հայ վիպական բանահյուսության համակարգման վերաբերյալ տե՛ս Մ. Աբեղյան, *Երկեր*, Հ. Ա, Եր., 1966; A. Y. Petrosyan, “The Indo-European and Ancient Near Eastern Sources of the Armenian Epic”, *Journal of Indo-European Studies Monograph* № 42. Washington DC, 2002; A. E. Петросян, *Армянский эпос и мифология*, Ер., 2002: Հին էպոսների տեքստերի բնագրերը տե՛ս հղված միջնադարյան հեղինակների երկերում, դրանց կապակցված շարադրանքը՝ Ս. Հարությունյան, *Հին հայոց վիպաշխարհը*, Եր., 1987, Սասունի էպոսի բնագրերը՝ «Սասնա ծռեր», հհ. I-IV, Եր., 1948-1999: Քրոնոլոգիական ամենամաքողական տարբերակը տե՛ս Քյոռ-Օղլի, ժողովրդական վիպասանություն. Եր., 1941, հայրուկի երգերը՝ Ա. Ղազիյան, *Հայ ժողովրդական ոսգմի և զինվորի երգեր*, Եր.,



վանդույթում անձնավորում է Ուրարտու պետությունը (նրան են վերագրվում Ուրարտուի նշանակալի կառույցների, այդ թվում՝ մայրաքաղաք Վանի, Մենուա արքայի ջրանցքի կառուցումը, ուրարտական սեպագիր արձանագրությունները և այլն): Ուրարտուի տիրապետությունը՝ մ. թ. ա. IX-VII դդ., այսպիսով, համարվում է ասորեստանյան գերիշխանության դարաշրջան: «Վիպասանքը» հետուրարտական դարաշրջանի էպոս է՝ նրա առաջին նշանակալի հերոսը՝ Տիգրան Երվանդյանը թվագրվում է մ. թ. ա. VI, իսկ վերջինները՝ Արտաշեսը և Արտավազը՝ մ.թ.ա. II-I դարերով: «Պարսից պատերազմը» պատմում է Արշակունիների դարաշրջանի (I-V դդ.) հատկապես վերջին շրջանի, իսկ «Տարոնի պատերազմը»՝ հետարշակունյաց դարաշրջանի Տարոն նահանգի տերերի՝ հիմնականում Մամիկոնյան իշխանների՝ պարսիկների դեմ ունեցած պատերազմների մասին: «Սասնա ծռերը» ընդգրկում է արաբական տիրապետության և հետագա ժամանակահատվածը (VII-XIII դդ.): Այդ էպոսների հերոսներից շատերը, ինչպես ասվեց, պատմական դեմքեր են (օրինակ, Տիգրանը, Արտաշեսը, Արտավազը, Տիրանը, Արշակը հին և միջնադարյան Հայաստանի թագավորներ են): Չնայած ակնհայտ պատմականացմանը, հատկապես թշնամիների կերպարներում պարզորոշ լսվում են հին առասպելների արձագանքներ (Այսպես, Հայկի հակառակորդ Բելը Բաբելոնի մեծ աստված Բել-Մարդուկն է, Արամի հակառակորդ Բարշամը՝ սիրիական Բաալշամին աստվածը, Տիգրանի հակառակորդ Աժդահակը՝ իրանական առասպելական օձ-վիշապ Աժի Դահական):

Այս ստեղծագործությունների սյուժեները քիչ ընդհանրություններ ունեն (նրանք արտացոլում են տարբեր դարաշրջանների պատմական իրականությունը): Սակայն, համեմատությունը բացահայտում է նրանց բոլորին բնորոշ մի սխեմա, որը կարող է պարզեցվել որպես որոշակի կերպարների հաջորդականություն.

1) Աստվածություն կամ նրա սիմվոլը,

2) նրա որդիները՝ երկվորյակներ, որոնցից առաջինը ներկայացնում է ամպրոպի աստծու էպիկական տարբերակը,

3) «մեռնող (և հարություն առնող)» կերպար:

Հնդեվրոպական համատեքստում այդ սխեման կարելի է դիտարկել որպես երկու առասպելների համադրություն՝ 1) աստվածային երկվորյակների՝ երկնային աստծու որդիների առասպելությունը և 2) ամպրոպի աստծու և նրա «պատժվող / զոհվող» որդու առասպելությունը: Ակնհայտ է, որ այս վիպական սխեման ծագում է աստվածային պարադիգմից՝ դիցաձևությունից (թեոգոնիա): Դիցաբանական վերակազմության մեջ նախնական սխեման պատկերանում է որպես պարզ ծննդաբանական շարք.

1) Երկնային աստված,

2) նրա որդիները, երկվորյակներ, որոնցից մեկն ամպրոպի աստվածն է, վիշապամարտիկ,

3) ամպրոպի աստծու որդին, «զոհվող» աստվածություն<sup>3</sup>:

Այս սխեման օգտագործվել է առասպելական արքեաթիպային կերպարների միջոցով Հայաստանի պատմական դարաշրջանների կողավորման և մոդելավորման համար: Պետք է նշել, որ հայկական, ինչպես և որոշ այլ ավանդույթներում, ամպրոպի աստվածը հանդես է գալիս որպես երկվորյակային կերպար (դրա վառ օրինակն է, Սանասարը, Սասունի հերոսների հիմնական զենքի՝ «թուր-կեծակի» առաջին տերը)<sup>4</sup>: Էպիկական տոհմաբանություններում այդ սխեման հաճախ բարդացվում է՝ հանդիպում տոհմագծեր երկու սերունդների երկվորյակներով, հայտնվում է նոր հերոս՝ ամպրոպի աստծու երկրորդ մարմնավորումը, որին է հաջորդում «մեռնող և հառնող» կերպարը:

Տոհմի հիմնադիրը՝ երկվորյակների հայրը, որը հնդեվրոպական վերակազմության մեջ հանդես է գալիս որպես երկնքի (արևի) աստված՝ \*dyēus ph₂ter-, շարքում կարող է փոխարինվել իր սիմվոլով («Վիպասանքում» երկվորյակային հերոսների հայրը ցուլն է, իսկ «Սասնա ծռերի» մի տարբերակում՝ ըստ երևույթին՝ ձին<sup>5</sup>): Նա, ի դեպ, երբեմն ոչ մի դեր չի խաղում, և տոհմը, ըստ էության, սկսվում է երկվորյակներից: Նրանցից ավելի նշանակալի եղբոր՝ ամպրոպի աստծու կերպարը կրկնվում է շարքի հիմնական հերոսի՝ տոհմի նախավերջին անդամի կերպարում («Սասնա ծռերում»՝ Գավիթ) և, յայսպիսով, նախնական սխեման բարդանում է:

Շարքն ավարտվում է վերջին հերոսի վերջով/մահվամբ (հարույթյան հույսով), որից հետո դարաշրջանն ավարտվում է (տեղի են ունենում աղետներ, փոխվում է արքայատոհմը, Հայաստանը կորցնում է անկախությունը և այլն):

Ազգածին նահապետների տոհմաբանությունը կարող է ներկայացվել որպես երկու նմանատիպ շարքերի հաջորդականություն, քանի որ այստեղ կարելի է տեսնել երկվորյակների երկու սերունդների հետքեր (իրար նման անուններով հերոսները՝ Արամանյակ և Արամայիս, Հարմա և Արամ, կարող են

<sup>3</sup> Երկվորյակների հնդեվրոպական առասպելների վերաբերյալ տե՛ս օրինակ **D. Ward**, *The Divine Twins: An Indo-European Myth in Germanic Tradition*, Berkeley-Los Angeles; **J. P. Mallory, D. Q. Adams**, *Encyclopedia of Indo-European Culture*, London-Chicago, p. 161 ff.; **M. L. West**, *Indo-European Poetry and Myth*, New York, 2007, p. 186 ff.; հնդեվրոպական ամպրոպի աստծու վերաբերյալ՝ **В. В. Иванов, В. Н. Топоров**, *Исследования в области славянских древностей*, М.

<sup>4</sup> Սանասարի՝ որպես ամպրոպի աստծու վիպականացած կերպարի վերաբերյալ տե՛ս **Մ. Աբեղյան**, *Երկեր*, Հ. Ա, էջ 414 հտմ., Երվանդի վերաբերյալ՝ **Ս. Հարությունյան**, *Հայ առասպելաբանություն*, Բեյրութ, 2000, էջ 103 հտմ.: Ի դեպ, ամպրոպի աստվածը հանդես է գալիս որպես երկվորյակային կերպար նաև որոշ այլ ավանդույթներում՝ այդպիսիք են հին հնդկական Ինդրան, և խոտիական Քեշուրը և շումերական Իշկուրը (տե՛ս **A. Y. Petrosyan**, *The Indo-European and Ancient Near Eastern Sources of the Armenian Epic*, 14 f., 20 ff.; **А. Е. Петросян**, “Армяно-индийские эпические параллели”, *Армянский эпос и мировое эпическое наследие*, Ер., 2007, с. 38-46.

<sup>5</sup> **Ս. Հարությունյան**, *Հայ առասպելաբանություն*, էջ 349-350:

հանգեցվել նախնական երկվորյակներին): Սակայն, այս երկու շարքերը կարող են պարզեցվել մեկի՝ 1) Հայկ՝ դիցաբանական կերպար, որը սպանում է Բաբելոնի բռնակալ Բելին և հիմնադրում Հայաստանը, 2) Արամանյակ և Արամայիս, որոնցից երկրորդը կառուցում է Արմավիրը՝ Հայաստանի առաջին մայրաքաղաքը, [...] 3) Արամ, գլխավոր հերոս, ռազմիկ, 4) Արա Գեղեցիկ, որը սպանվում է ճակատամարտում, բայց հավատում էին, որ նա վերակենդանացել է առասպելական արալեզների՝ շան նման արարածների միջոցով: Կարելի է ասել, որ սա հին հայկական դիցաբանության առավել մոտ վիպական տարբերակն է, որտեղ որոշ կերպարներ պահպանել են աստվածային հատկանիշներ (Հայկի անունով է կոչվում Օրիոն համաստեղությունը, Արայի անունով մի աստղ կամ մոլորակ):

Հայ հնագույն թագավորների ծննդաբանությունը «Վիպասանքում» կարող է ներկայացվել որպես երկու նմանատիպ հաջորդական շարք: Ստորև ներկայացվում է դրանցից միայն երկրորդը. 1) արքայական տոհմի մի կին և ցուլ, աստծու սիմվոլը, 2) երվանդ արքա (երվանդաշատ մայրաքաղաքի հիմնադիր) և նրա եղբայր, գլխավոր քուրմ երվազ<sup>6</sup>, 3) Արտաշես, մեծ արքա, 5) Արտավազդ արքա, որը շղթայված է Մասիս լեռան քարանձավում և ձգտում է դուրս գալ այնտեղից:

«Պարսից պատերազմը» և «Տարոնի պատերազմը» գրական ստեղծագործություններ են, որոնցում նշված ծննդաբանական շարքը բացահայտ չի դրսևորվում: Բայց, այնուամենայնիվ, պարզորոշ նկատվում են հին վիպական ավանդույթի և կերպարների հետքերը: Այսպես, «Պարսից պատերազմում» Մուշեղ սպարապետի դիակը դնում են մի բարձր տեղ, որպեսզի առասպելական արալեզները նրան լիզելով վերակենդանացնեն, ինչպես Արային (Փավստոս V, 36): «Տարոնի պատերազմում» Գիսանե և Գեմետր եղբայրները՝ Տարոնի էպոնիմների նախնիները, աստվածային երկվորյակների ակնհայտ վիպական տարբերակներն են: Նրանք հիմնում են Վիշապ քաղաքը Տարոնում (Մուշի շրջանում), վիշապաքաղ Վահագնի պաշտամունքի կենտրոնում: Գիսանեն ինքը նույնացվում է այդ աստծու և նրա քրիստոնեական հաջորդի՝ սուրբ Կարապետի հետ (Հովհաննես Մկրտիչ): Հատկանշական է, որ վերջինիս երկրպագում էին սուրբ Աթանազիոսի հետ և պատկերացնում որպես «այր մի գիսաւոր ընդ ամպս որոտացեալ», այսինքն, նա էլ կարող է համարվել երկվորյակային կերպար, ընդ որում, ինչպես և մյուս հայկական ավանդույթի «ավագ» երկվորյակները, ծագած ամպրոպի աստծուց<sup>7</sup>:

«Մասնա ծռերում» ծննդաբանական շարքը ներկայացված է այսպես. 1)

<sup>6</sup> Երվանդի և Երվազի՝ որպես երկվորյակների մասին տե՛ս Ս. Հարությունյան, Հայ առասպելաբանություն, էջ 103 հուն.:

<sup>7</sup> Ս. Հարությունյան, Հայ առասպելաբանություն, էջ 124 հուն.:



Ծովինար՝ ամպրոպի դիցուհի, որի անունը հենց նշանակում է «կայծակ, փայլակ», 2) Սանասար (ամպրոպի աստծու կերպարը) և Բաղդասար, Սասուն քաղաքի հիմնադիրներ, 3) Մեծ Մհեր, 4) Դավիթ, էպոսի հիմնական հերոսը, ամպրոպի աստծու երկրորդ մարմնավորումը, 5) Փոքր Մհեր, երկրորդ մարմնավորումն իր պապ Մեծ Մհերի, «մեռնող և հառնող» կերպար, որը մտնում է ժայռի մեջ և դուրս կգա այն ժամանակ, երբ աշխարհը կդառնա առատ և արդար: Շարքն ունի այդ տեսքը էպոսի ստանդարտ տարբերակներում, բայց գրանցված են երկվորյակների երկու սերունդներով, մեկ Մհերով, առանց Դավիթի կամ երկու Դավիթներով տարբերակներ:

Այս էպոսներում աստվածայինը և մարդկայինը հանդես են գալիս տարբեր համամասնություններով՝ ինչքան արխաիկ է էպոսը, այնքան շատ է աստվածայինը: Ազգածին լեգենդների Հայկը և Արան, ինչպես ասվեց, հնագույն աստվածների անուններ կամ մականուններ են, Արամը՝ նույնպես<sup>8</sup>: Տիգրանի որդի Վահագնը նախաքրիստոնեական աստված է (< պարթևական \*Varhragna, հմմտ. ավեստ. Vərəθraγna), իսկ «Սասնա ծռերում» Մհերը նախաքրիստոնեական Միհր աստծու անվան մի տարբերակն է:

Այս սխեմայի հետքեր կարելի է գտնել թագավորների և մեծ իշխանների լեգենդար տոհմաբանությունների մեջ («տոհմական վեպ»), որտեղ տոհմի հիմնադիրները հաճախ հանդես են գալիս որպես համահունչ անուններով եղբայրներ կամ երկվորյակներ: Այսպես, Արծրունի և Գնունի տոհմերը ծագեցվում են Սանասարից և նրա եղբորից, Բագրատունիները՝ Հայկի սերունդ Բագամ և Բագարատ եղբայրներից, հայ Արշակունիները՝ պարթևների Արշակ արքայի Վաղարշակ եղբորից (առասպելական անձ), Մամիկոնյանները՝ չինական թագաժառանգներ Մամիկ և Կոնակ առասպելական եղբայրներից:

Այժմ ավելի ուշ շրջանի ստեղծագործությունների մասին: «Քյոռողլիում» («Կույրի որդի», XVI-XVII դարերի սահմանի պատմական անձ, ջալալիների ապստամբության առաջնորդներից), չկա տարբեր սերունդների հերոսների հերթագայություն: Սա թյուրքական էպոս է, բայց նրա գործողությունները տեղի են ունենում Հայկական լեռնաշխարհում և այն ներառել է իր մեջ հայկական մոտիվներ: «Կույրի որդի» սյուժեն ծագում է «Պարսից պատերազմից», ըստ որի, Տիրան թագավորին՝ Արշակ թագավորի հորը, կուրացնում է Վարագ-Շապուհը (Փավստոս III, 20-21): «Քյոռողլին» ներառում է Արշակի լեգենդի առանցքային տարրերը՝ հորը կուրացնելը, պայմանավորված ձիու հետ կապված մի թյուրիմացությունը և հերոսի վրեժը<sup>9</sup>: Կան բազմաթիվ համապատասխանություններ «Քյոռողլու» և «Սասնա ծռերի», միջև՝ օրինակ, Քյոռողլու թու-

<sup>8</sup> A. Y. Petrosyan, *The Indo-European and Ancient Near Eastern Sources of the Armenian Epic*, p. 43 ff.

<sup>9</sup> Կ. Մելիք-Օհանջանյան, «Տիրան-Տրդատի վեպը ըստ Փավստոս Բուզանդի», *Տեղեկագիր*, 1947, № 7, էջ 59-77.

րը պատրաստվում է կայծակից (հմմտ. Սասունի հերոսների Թուր-կեծակին), նրա կախարդական ձին, ինչպես և Սասունի հերոսների ձին, ծովային ծագում ունի, Քյոռոզլու ընկերները կոչվում են «գալի»՝ «խենթ», ինչպես «Սասնա ծռերի» հերոսները և այլն: Որոշ տարբերակներում, կյանքի ավարտին Քյոռոզլին մտնում է քարանձավ, հմմտ. Փոքր Մհերի և Արտավազդի վերջը: Արշակ թագավորը ևս շղթայվում և նետվում է Անհուշ բերդը, որտեղ և ավարտվում է նրա կյանքը: Այսպիսով, Քյոռոզլին, կարելի է ասել, շարունակում է Հայաստանի էպիկական ավանդույթը<sup>10</sup>:

Եվ զարմանալի չէ, որ եթե արևելահայերի մեջ Քյոռոզլին հանդես է գալիս որպես թյուրքական հերոս, ապա Արևմտյան Հայաստանի հարավային շրջաններում նա ներկայացվում է որպես հայ, Արշամ (և ոչ Ռովշան) անունով, ծագումով Վանի շրջանի Անկշտան գյուղից (ինչպես որ պարսիկների մեջ Քյոռոզլին պարսիկ է, քրդերի մեջ՝ քուրդ, օսմանցիների մեջ՝ օսմանցի): Այս տարբերակները հագեցած են հայկական բանահյուսությամբ և կենցաղով և այնքան են հեռացած թյուրքականներից, որ իրենցից ներկայացնում են «Սասնա ծռերը» հիշեցնող մի նոր հայկական էպոս<sup>11</sup>:

Հայդուկի երգերում ևս չկա հերոսների սերունդների հաջորդականություն: Հայդուկները կոչվում էին մուսուլմանական-արաբական ֆիդայի տերմինով (նաև՝ ֆիդա, ֆեդա, ֆեդային «զոհ»)՝ նրանք երգվում էին զոհվել հայրենիքի համար): Երգերում հայդուկի մահվան օրը կոչվում է տոն, զատիկ՝ Քրիստոսի հարուժյան տոնի անունով, և նա պետք է հարուժյուն առնի և հասնի անմահության՝ «երկնային փառքի», «փառքի պսակի»: Գերեզմանից ելնելու, հարուժյուն առնելու կոչը երգերի ամենահաճախ հանդիպող մոտիվներից է: Հայդուկների մշտական կոչումը՝ «առյուծ» և շամուսնանալու երգումը հիշեցնում են էպոսի Մհերներին (հմմտ. Մեծ Մհերի «առյուծ» կոչումը և անգամակ Փոքր Մհերի կերպարը): Արևմտյան Հայաստանի ազատագրման ողբերգական պատերազմը ճակատագրական կերպով կենտրոնացված էր Սասունում և հարակից շրջաններում, որտեղ մեծ հայդուկ Անդրանիկի մասին պատմել են «Սասնա ծռերի» գրվագները հիշեցնող պատմություններ (նա, իբր, մարմնի վրա խաչ է ունեցել, ամեն կովից հետո լողացել և նոր ուժեր է ստացել և այլն): Այսպիսով, հայդուկի երգերը շարունակում են էպոսի վերջին հերոսի՝ մեռնող և հառնող կերպարի ավանդույթը<sup>12</sup>:

<sup>10</sup> «Քյոռոզլու» հայկական տարբերակների և հայկական կապերի վերաբերյալ տե՛ս Խ. Սամվելյան, «Նախաբան», Քյոռ-Օղլի, ժողովրդական էպոս, էջ 5-23, Ռ. Աթայան, «Քյոռոզլի», Հայկական սովետական հանրագիտարան, հ. 12, էջ 465, Ա. Կ. Petrosyan, *The Indo-European and Ancient Near Eastern Sources of the Armenian Epic*, p. 157-158, Ս. Ռամազյան, «Քյոռոզլի», Իրան-նամե, 1998, № 1-2-3, էջ 72-85.

<sup>11</sup> Խ. Սամվելյան, «Նախաբան», Քյոռ-Օղլի, ժողովրդական էպոս, էջ 18-20:

<sup>12</sup> Ա. Պետրոսյան, «Ֆիդայու կերպարը հայ բանահյուսության մեջ», Ավանդականը և արդիականը հայ մշակույթում, Հայ ժողովրդական մշակույթ XV, Եր., 2010, էջ 447-453:

Խորհրդային Հայաստանի առաջին տասնամյակներին հասարակ մարդկանց, ժողովրդական երգիչների և պրոֆեսիոնալ բանաստեղծների կողմից ստեղծվել են բազմաթիվ էպիկական ստեղծագործություններ՝ երգեր, բանաստեղծություններ և պոեմներ խորհրդային ղեկավարների, մասնավորապես Լենինի և Ստալինի մասին: Այդ ժողովրդական (կամ «կեղծ ժողովրդական») ստեղծագործություններն այն ժամանակվա գիտություն մեջ համարվում էին մեր էպոսի «հինգերորդ ճյուղը», այսինքն՝ «Սասնա ծռերի» շարունակությունը Փոքր Մհերի ճյուղից հետո<sup>13</sup>: Դրանցում Լենինն ու Ստալինը հաճախ են հանդես գալիս որպես հիմնադիր-երկվորյակներ:

Բայց երևում է նաև նշված սխեմային ավելի մոտ հերոսների շարքի ակնարկը՝ Մարքս-Լենին, որպես երկվորյակ հիմնադիրներ, Լենին, գլխավոր հերոս, որը սպանում է վիշապին՝ ցարին, և Ստալին՝ վերջին հերոս: Իրոք, Մարքսը և Լենինը նախախորհրդային դարաշրջանը խորհրդանշող համաժամանակյա կերպարներ են, մարքսիզմի հիմնադիրներ և ապագայի նախակարապետներ, Լենինը՝ ԽՍՀՄ առաջին ղեկավար, իսկ Ստալինը՝ նրա հաջորդը և գործի շարունակողը<sup>14</sup>: Խորհրդային հերալդիկ շարքի պրոֆիլները՝ Մարքս-Լենին-Ստալին (որտեղ ավագությունը որոշվում է մորուքի խտությունը և երկարությունը) և խորհրդային առաջնորդների հուղարկավորությունները դամբարանում ամրապնդվում էին այս առնչությունները (Լենինն ու Ստալինը կարող են դիտվել որպես Փոքր Մհերի տիպի ժայռում «քնած հերոսներ», իսկ Ստալինի մարմնի դուրս բերումը դամբարանից համեմատելի է Մհերի՝ ժայռից ելնելու հետ)<sup>15</sup>: Ասվածը միատիկական կապերի բացահայտման միտում չունի:

<sup>13</sup> Այդ մասին տե՛ս Հ. Մելիքյան, *Լենինը և Ստալինը հայկական ֆոլկլորում*, Եր., 1941, Մ. Մուրադյան, «Լենինի և Ստալինի կերպարներ սովետական հայկական երաժշտական ստեղծագործություններում», *Տեղեկագիր*, 1949. № 10, էջ 111-128, Ա. Պետրոսյան, «Առասպելաբանական մի սխեմայի արտացոլումը հասարակական գիտակցության մեջ», *Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Հանրապետական գիտական նստաշրջան, 1984-1985 թթ. ազգաբանական և բանագիտական դաշտային հետազոտությունների արդյունքները, Զեկուցումների հիմնադրույթներ*, Եր., 1990, էջ 47-50:

<sup>14</sup> Միայն մեկ օրինակ՝ Նաիրի Զարյանի «Ստալին» բանաստեղծության մեջ Մարքսին և Լենինին միասին հատկացված է մեկ տող, իսկ Լենինին և Ստալինին՝ հաջորդ առանձին տողերը: Մարքսը և Լենինը ներկայացված են է մեկական, Լենինը՝ երկու, Ստալինը՝ երեք մակդիրով: Այս անձինք միավորվում են որպես «հանճարի արեգնափայլ չորրորդությունը տիտան»:

<sup>15</sup> Փոքր Մհերի և Եվրոպական «քնած հերոսների» կապի վերաբերյալ տե՛ս **А. Е. Петросян**, «Влияние армянского Мгера на европейских героев», *Вестник Матенадарапана*, т. 20 (2014), с. 169-174, Լենինի վերաբերյալ՝ **Сергей Королев**, «Бессмертие властителя. Ленин как сказочный персонаж», [http://sergeikorolev.sitecity.ru/ltext\\_1602035726.phtml?p\\_ident=ltext\\_1602035726.p\\_1106163203](http://sergeikorolev.sitecity.ru/ltext_1602035726.phtml?p_ident=ltext_1602035726.p_1106163203): Լենինի և Ստալինի մասին խորհրդային Միության տարբեր ժողովուրդների կողմից հսկայական քանակությամբ բանահյուսական և մեծաքանակությամբ ստեղծագործություններ են ստեղծվել: Խորհրդային պաշտոնական գաղափարախոսությունն ինքը ուներ վերին աստիճանի արխաիկ հատկանիշներ, համադրելի հնագույն առասպելների հետ: Այսպես, Ստալինի սովոր-

Հասկանալի է, որ այս տիպի համընկնումները պատահական բնույթ են կրում, բայց և այնպես, դրանք կարող էին ռեզոնանսի մեջ մտնել հին, արքետիպային սխեմայի հետ:

Սակայն Ստալինի «անձի պաշտամունքի» դատապարտումը և խորհրդային իրականության զարգացումները թույլ չտվեցին ձևավորվելու այդ վերջին «էպոսը»: Խրուշչովի դարաշրջանը դարձավ խորհրդային հերոսական էպիկայի ավարտը՝ հրատապ դարձավ բանահյուսության մեկ այլ ժանր՝ անեկդոտը: Դրանց հիմնական թիրախը ԽՍՀՄ ընթացիկ ղեկավարներն էին, բայց Լենինը և Ստալինը շարունակում էին մնալ կարևոր կերպարներ (կա, օրինակ, Լենինի մասին ուշ հայկական անեկդոտների շարք): Հազվագեպ հանդես էին գալիս նաև Մարքսը և Էնգելսը:

Այսպիսով, հայ ժողովուրդը էպոսներով կողավորել է հայոց պատմությունը սկսած ժողովրդի ծագումից մինչև XX դարի կեսը: «Սասնա ծռերից» հետո ողջ ծննդաբանական շարքը պարունակող նոր լիարժեք էպոսներ, կարելի է ասել, չստեղծվեցին՝ և՛ դարաշրջանն էր ուրիշ, և՛ պատմական հանգամանքները թույլ չտվեցին: «Քյոռուղլին», ամեն դեպքում, փոխառյալ էպոս է, թեև նշանակալի հայկական տարրերով, հայդուկների ազատագրական պայքարի երգերը կասեցվեցին ցեղասպանությամբ և նրանց արգելքով ԽՍՀՄ-ում, իսկ ԽՍՀՄ առաջնորդների մասին էպիկական ստեղծագործությունները՝ Ստալինի պաշտամունքի դատապարտմամբ: Բայց եղած նյութը թույլ է տալիս ասելու, որ բոլոր ստեղծագործություններում, որտեղ հնարավոր է եղել, էպիկական պատմությունը փորձ է արվել կերտելու ըստ միևնույն արքետիպային սխեմայի՝ հերոսների ծննդաբանական շարքի:

Ստորև ներկայացվում է այդ շարքի մի պարզեցված աղյուսակ չորս էպոսների համար:

էպոս	Երկվորյակային տիպի հերոսներ	Մեծ հերոս	Վերջին՝ զոհվող և վերածնվող, կամ փակված հերոս
Ազգածին ավանդություն	Արամանյակ և Արամայիս	Արամ	Արա Գեղեցիկ
«Վիպասանի»	Երվանդ և Երվազ	Արտաշես	Արավազդ
«Սասնա ծռեր»	Սանասար և Բաղդասար	Դավիթ	Մհեր
Մարտիգովի հիմնադիրներ և ԽՍՀՄ առաջնորդներ	Մարտի և Էնգելս	Լենին	Ստալին

րական մակդիրները՝ «արև» և «հայր», հիշեցնում են հնդեվրոպական արևային երկնի աստծուն՝ \*dyēus ph₂ter- («լուսավոր երկինի-հայր»), իսկ մյուս մշտական մակդիրը՝ «ընկեր» համընկնում է Միտրա աստծու անվան հնդկական իմաստավորմանը: Այդ նույն աստվածն Իրանում դարձել էր Միթրա և Միհր, արևի աստված, տե՛ս Ա. Պետրոսյան, Առասպելաբանական մի սխեմայի արտացոլումը հասարակական գիտակցության մեջ:

\*\*\*

Հայկական էպոսի ծննդաբանական սխեման, ինչպես տեսանք, լավագույնս մեկնաբանվում է հնդեվրոպական առասպելաբանության տվյալներով: Այս համատեքստում հայկական շարքերի ամենամոտ զուգահեռը Հռոմի լեգենդար արքաների շարքն է (Ժորժ Դյումեզիլի մեկնաբանությամբ). 1) Մարս աստված (հմմտ. Հայկ, աստվածային կերպար). 2) երկվորյակներ Ռեմոս և Ռոմուլոս, Հռոմի հիմնադիրը (հմմտ. Արամանյակ և Արամայիս՝ հիմնադիրը Արմավիրի, Սանասար և Բաղդասար, հիմնադիրները Սասունի), 3) Նումա՝ «միտրայական» արքա (հմմտ. Մեծ Մհեր, որի անունը ծագում է Միթրա-Միհրից), 4) Տուլլոս, ռազմիկ արքա (հմմտ. Արամ և Դավիթ) 5) Անկոս, «միտրայական» Նումայի ժառանգ, «երրորդ գործառույթի» ներկայացուցիչ (ինչպիսիք են նաև հայկական շարքերի վերջին հերոսները՝ Արան և Փոքր Մհերը)<sup>16</sup>:

«Վիպասանքում» էական է իրանական ազդեցությունը: Երվանդի, Երվազի և Արտավազդի առասպելները հիշեցնում են Ֆիրդուսու «Շահնամի» պատմությունները Լուհրասպի, Գուշտասպի և Իսֆանդիյարի մասին: Ինչպես Երվանդը և Երվազը, Լուհրասպը և Գուշտասպը ծագում են աստվածային երկվորյակներից<sup>17</sup> (ընդ որում Լուհրասպի հին անունը՝ Արվատասպա «Արագածի», համապատասխանում է հայ. Երվանդին՝ «Արագ», իրանական նույն արմատից)<sup>18</sup>, իսկ Իսֆանդիյարը, Գուշտասպի որդին, շղթայվում է ինչպես Արտավազդը: Կարելի է ասել, որ «Վիպասանքը» Հայաստանի պատմության իրական դեպքերի և հայկական ու իրանական առասպելների միահյուսման մի հետաքրքիր օրինակ է:

Օսական նարթական էպոսը և «Վիպասանքը» միավորվում են նույն հերոսուհու կերպարով՝ օսական Սաթանան, նարթերի մեծ հերոսուհին, համապատասխանում է «Վիպասանքի» Սաթենիկին, որը ներկայացվում է որպես ալանների (օսերի նախնիների) արքայի քույր: Օսական էպոսում հերոսների ծննդաբանությունը ներկայացված է այսպես՝ 1) Ուարխագ «Փայլ», երկվորյակների հայրը (հմմտ. Ռեմոսին և Ռոմուլոսին կերակրող հռոմեական էգ գայլի կերպար-

<sup>16</sup> Հռոմեական հին արձանների շարքի վերաբերյալ տե՛ս **G. Dumézil**, 1974. *Mythe et épopée. T. I. L'idéologie des trois fonctions dans les épopées des peuples indo-européens* (2e éd.). Paris, Gallimard. C. 271-284; հայկական հերոսների «ֆունկցիոնալ» բնութագրերը՝ **S. Ahyan**, 1982. *Les débuts de l'histoire d'Arménie et les trois fonctions indo-européennes*; հռոմեական և հայկական երկվորյակների առասպելների առանձնահատուկ համապատասխանությունների վերաբերյալ՝ **G. Dumézil**, 1994. *Le roman des jumeaux*. Paris: C. Gallimard, 133-134 :

<sup>17</sup> Լուհրասպի և Գուշտասպի՝ երկվորյակներից ծագելու վերաբերյալ, տե՛ս **S. Wikander**, « Sur le fonds commun indo-iranien des épopées de la Perse et de l'Inde, » *La nouvelle Clío: Revue mensuelle de la découverte historique* 1949, № 1-2: 317 seq.

<sup>18</sup> Երվանդ անվան ստուգաբանությունը տե՛ս **Հ. Աճառյան**, *Հայոց անձնանունների բառարան*, հ. 2, Եր., Պետական համալսարանի հրատարակչություն, 1944, էջ 145:

րը), 2) երկու սերունդների երկվորյակներ՝ Ախսար և Ախսարթագ, Ուրըզմագ և Խամրց, 3) Ուրըզմագ, երկվորյակներից ավելի արժանավորը և նարթերի առաջնորդը, որը, որպես Սաթանայի ամուսին, համապատասխանում է Արտաշեսին, Սաթենիկի ամուսնուն, 4) Սոսլան, քարից ծնված հերոս, Արտավազդի կրկնակը, որը լավագույնս համապատասխանում է և «Սասնա ծռերի» Փոքր Մհերին<sup>19</sup>:

«Վիպասանքի» և օսական էպոսի վրա ակնհայտ է տեղական՝ փոքրասիական-կովկասյան ազդեցությունը: Այսպես, ազգածին ավանդության՝ արալեզների կողմից վերածնվող Արա Գեղեցիկի փոխարեն հաջորդ էպոսներում վերածնվող հերոսը փակվում է ժայռի մեջ, այդպիսով, նույնանալով ժայռից կամ քարից ծնվող կամ վերածնվող խուռա-ուրարտական և կովկասյան կերպարներին (խուռիական Ուլլիկումմի, ուրարտական Խալդի, կովկասյան Սոսրուկո, Սոսլան): Եվ Սոսլանի ազդեցական կրկնակը՝ Սոսրուկոն թաղված է հողում և ամեն գարուն փորձում է դուրս գալ այնտեղից, ինչպես Արտավազդը (ընդ որում, նրա ազատումը, ինչպես և Արտավազդի դեպքում է, կհանգեցնի աշխարհի վերջին)<sup>20</sup>:

«Շահնամեի» հիշյալ շարքը դիտվել է որպես այսպես կոչված «երկնային արքայության թեմայի» հնդեվրոպական արտահայտություններից մեկը: Ըստ այդ թեմայի, աստվածների ներկա սերնդին նախորդել է գերբնական էակների երկու կամ երեք սերունդ: Մանրամասն քննությունը ցույց է տալիս, որ հայկական էպոսներում պահպանվել են նաև այդ թեմայի դրսևորումները (այսպես, Սանասարը խուռիական ամպրոպի աստծուն՝ Թեշուբի մի կրկնակն է, «Վիպասանքում» հանդես է գալիս Աժդահակը՝ «Շահնամեի» Զոհակի իրանական նախատիպը և այլն)<sup>21</sup>:

Այսպիսով, այն սխեման, որով հայկական էպոսներում կողմորվել են Հայաստանի պատմության դարաշրջանները, հնդեվրոպական ծագում է են-

<sup>19</sup> Օսական և հուրմեական երկվորյակների առասպելների համեմատությունը տե՛ս **В. И. Абаев**, *Скитско-европейские изоглоссы*, Москва, 1965, с. 86 слл.:

<sup>20</sup> Մհերի և Արտավազդի խուռիական, ուրարտական և կովկասյան կապերի վերաբերյալ՝ **А. Y. Petrosyan**, “Haldi and Mithra/Mher”, *Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies*, 2006, 1, p. 222-238; **Ա. Պետրոսյան**, «Հայկական և հյուսիսկովկասյան նարթական էպոսների հարաբերությունը», *Հայ ժողովրդական էպոսը և համաշխարհային էպիկական ժառանգությունը*, Եր., 2012, էջ 8-51:

<sup>21</sup> Այս թեմայի վերաբերյալ տե՛ս օրինակ **S. C. Littleton**, *The ‘Kingship in Heaven Theme’. Myth and Law Among the Indo-Europeans*, Berkeley-Los Angeles, 1970, p. 83-122; **Idem**, “Is the ‘Kingship in Heaven’ Theme Indo-European?” *Indo-European and Indo-Europeans*, Philadelphia, 1970, p. 383-404; նրա հայկական արտածումները՝ **А. Y. Petrosyan**, *The Indo-European and Ancient Near Eastern Sources of the Armenian Epic*, p. 119-121.

*Թագրում իսկ էպոսներում ի հայտ են գալիս բնիկ հնդեվրոպական, իրանական և հին տեղական՝ խուռա-ուրարտական տարրեր:*

### **Armen Petrosyan Armenian History and Epic Folklore**

When there is no writing and written history, people record their history through epic compositions. But after the emergence of writing, the Armenian mind continued developing epics presenting historical eras. It might be said that the whole history of Armenia was codified through successive epics. In this article the following epic compositions are considered: 1) Ethnogenic legends; 2) “Vipasank”; 3) “War of Persia”; 4) “War of Taron”; 5) “Daredevils of Sasun”; 6) Kyoroghli; 7) Haiduk songs, and 8) Poems about the Soviet leaders.

Almost all of them were created according to the uniform scheme – a genealogical line of archetypal heroes: 1) a divine image or its symbol; 2) divine twins, and 3) “dying (and rising) hero”. The historic kings and heroes of the epics were superposed on these mythological archetypes. The scheme is of native Indo-European origin, which later incorporated some local non-Indo-European and Iranian elements.

## ԼԻԼԻԹ ՓԱՐԵՄՈՒԶՅԱՆ

### ՀԱՄԸՆԳՆՈՒՐ ՅԱՆՑԱՅԻՆ ԼԵԶՈՒ

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի, Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի, Երևանի պետական համալսարանի գիտնականների կողմից զգալի աշխատանքներ են կատարվել լեզվաբանության և ինֆորմատիկայի կիրառական ուղղությունների ձեռքբերումները հայագիտության մեջ կիրառելու նպատակով: Խոսքերը ակտիվորեն մասնակցել է UNL համակարգի (Համընդհանուր ցանցային լեզու)<sup>1</sup> հայկական մոդուլի ստեղծմանը: Աշխատանքներ են կատարվել հայերենի ձևային նկարագրության, տեքստի ավտոմատ մշակման, ավտոմատ բառարանների և համակարգչային տվյալների հենքերի ստեղծման ուղղությամբ:

Նախապես մշակված ու ներդրված լինելով դոկտոր Հ. Ուշիդայի և գործընկերների կողմից (1996 թ.), UNL -ն իր շարունակական զարգացումն ապրեց մի քանի գիտական ինստիտուտների, շահագրգիռ կազմակերպությունների կողմից՝ Տոկիոյի (Ճապոնիա) Միավորված ազգերի կազմակերպության համալսարանի Հեռանկարային հետազոտությունների ինստիտուտի նախաձեռնությամբ:

2001 թ. հունվարին ՄԱԿ-ի համալսարանը ստեղծեց առանձին կազմակերպություն՝ UNDL հիմնադրամը<sup>2</sup>, որը պատասխանատու է UNL ծրագրի զարգացման և կառավարման համար:

UNL-ն իբրև համակարգչային համընդհանուր, արհեստական ցանցային լեզու, նպատակաուղղված է համաշխարհային սարդոստայնի ինֆորմացիայի նկարագրմանը, պահպանմանն ու տարածմանը՝ որևէ բնական լեզվից՝ համակարգչային միջավայրից անկախ տեսքով (տե՛ս ներդիր, նկ. 6): Ի տարբերություն մեքենական թարգմանության համակարգերի, որոնք նախատեսված են մի բնական լեզվից մյուսը տեքստերի թարգմանության համար, UNL համակարգը նախատեսվում է ավտոմատացված եղանակով, նաև՝ մարդու միջամտությամբ, բնական լեզվով ներկայացված տեքստը UNL -ի փոխարկելու, այնուհետև նրանից պահանջվող տեքստը բնական լեզվով սինթեզելու համար: Պարզ է, որ համակարգը կարող է սպասարկել տվյալ բնական լեզուն, եթե ներկայացվի հատուկ ծրագրային և լեզվաբանական միջավայր:

<sup>1</sup> [www.unlweb.znet](http://www.unlweb.znet).

<sup>2</sup> <http://www.undlfoundation.org>.



Այսպիսի միջավայր է ստեղծվել ՄԱԿ-ի հիմնական լեզուների՝ արաբերենի, չինարենի, անգլերենի, ֆրանսերենի, ռուսերենի ու իսպաներենի համար: Բացի վերոնշյալ լեզուներից, ստեղծվում են միջավայրեր նաև հինգրիի, ինդոնեզերենի, իտալերենի, պորտուգալերենի, թայերենի, հայերենի համար:

Հայերենը ներգրավվեց UNL ծրագրի աշխատանքներին 2001թ.: Մինչև 2014թ. Հայ մասնագետների կողմից ստեղծվեց UNL-ի աշխատունակ տարբերակ, որը ներառում էր UNL-հայերենբառարան (մոտ 37 000 բառ ու բառային միավոր)՝ հայերեն- UNL և UNL-հայերեն անցման կանոններով, UNL հայկական սերվերով, UNL-ի տեքստային գրաֆի կառուցիչով և այլն: UNL լեզուն նախատեսված է մուտքային բնական լեզվի բառերի, բառակապակցությունների և նախադասությունների կամ ամբողջ տեքստերի իմաստների ներկայացման համար:

Գիտական հոդվածներ են ներկայացվել 2003, 2005, 2007, 2009, 2011, 2013 թթ. CSIT (International Conference on Computer Science and Information Technologies) և այլ միջազգային գիտաժողովներում: 2005 թ. Թունիսում կայացած ինֆորմացիոն և կոմունիկացիոն տեխնոլոգիաների համաշխարհային գագաթնաժողովին՝ ՄԱԿ-ի տաղավարում ներկայացվել են կատարված աշխատանքները: 2006 թ. հայկական խմբի ձեռքբերումները ներկայացվեցին UNL ծրագրի ղեկավարների հետ Հայաստանում տեղի ունեցած աշխատանքային հաշվետու հանդիպման ժամանակ:

UNL լեզվի հիմնական բաղադրիչը բառարանն է, որն ամփոփում է հայերենի բառերը, դրանց UNL համարժեքները, վերջիններիս համապատասխանեցված համընդհանուր բառերը (UW), որոնք կոնցեպտուալ տարրեր կամ հասկացություններ են և յուրաքանչյուր բառի ձևաբանական ու շարահյուսական բնութագրերը: UW բառերը պարունակում են իմաստային և կառուցվածքային սահմանափակումներ, որոնք հնարավորություն են ընձեռում որոշ շափով վերացնել բնական լեզուներին բնորոշ բազմիմաստությունը: Բառարանում ներկայացվում են բառերի ձևաբանական բնութագրերը: Մյուս կարևոր բաղադրիչներն են՝ գիտելիքների հենքը (KB), որում թվարկվում են տարբեր իմաստների հնարավոր հարաբերությունները, UW բառերի իմաստը նկարագրող հատուկ բնութագրերը (բնութագրեր՝ օբյեկտ, գործողության ազենտ, ժամանակ, տեղ և այլն) և իմաստաշարահյուսական երկանդամ հարաբերությունները: KB-ն մշտապես համալրվում է հասկացությունների ավելացմանը զուգընթաց: Հետևաբար, UNL լեզվի տեքստը UW բառերի՝ ատրիբուտներով օժտված և իմաստաշարահյուսական հարաբերություններով փոխկապակցված ներկայացում է (տե՛ս ներդիր, նկ. 7):

UNL համակարգի կարևոր մոդուլներն են EUGENE (dEep-to-sUrface

natural language GENERator)<sup>3</sup> և IAN (Interactive ANalyser)<sup>4</sup> փոխարկման (էնկոնվերտոր) և վերլուծման (դեկոնվերտոր) ծրագրային կիրառական մոդուլները: Առաջինը իրականացնում է բնական լեզվով տրված տեքստի ձևափոխում (վերլուծություն և փոխարկում) UNL գրաֆի, երկրորդը՝ UNL գրաֆից համապատասխան բնական լեզվի տեքստի սինթեզ:

Այս մոդուլների համար կարևոր մաս են կազմում անալիզի և սինթեզի կանոնները, որոնք և հիմնականում որոշում են տրված բնական լեզվի ներկայացման որակը UNL համակարգում: Հայերեն մոդուլի համար կազմվել է մոդուլի լեզվաբանական ապահովում: Էնկոնվերտոր և դեկոնվերտոր ծրագրերը համընդհանուր են բոլոր լեզուների համար, և սա է բոլոր բնական լեզուներին մատչելի լինելու գլխավոր գրավականը: Հայկական մոդուլի ստեղծման համար համաձայնագրի միջոցով UNDL հիմնադրամից խումբը ստացել է UNL համակարգի անհրաժեշտ ծրագրային մոդուլները, ինչն էլ ունեցավ իր անգնահատելի դերը հայերեն մոդուլի մշակման գործում: Լեզվաբանական ապահովումից բացի, հայ մասնագետները մշակել են նաև ծրագրային ապահովում, որի օգնությամբ իրականացվել են հայերենի հետ կապված բոլոր բառարանները, կանոնները, դրանց վերլուծությունը և ստուգումը:

UNL -հայերեն հայկական մոդուլն այժմ ունի հետևյալ կառուցվածքը.

- UNL-հայերեն բառարան՝ 37 000 բառ ու բառային միավոր
- Հայերեն էնկոնվերտոր
- Հայերեն դեկոնվերտոր
- UNL-հայերեն սերվեր ([www.unl.am](http://www.unl.am))
- UNL տեքստերի գրաֆի կառուցիչ
- Ձևաբանական վերլուծիչ և համադրիչ
- Գիտական հաշվետվություններ և հոդվածներ

Հայկական մոդուլի աշխատանքները խթանելու համար 2007 թ. ստեղծվեց UNL-հայկական կենտրոնը: Հայկական խումբը ներգրավվեց UNL-ի EOLSS և LIS ծրագրերի աշխատանքներում, 2009-2014 թթ.՝ LPP, MIR A-1, 1, 2, AESPO-1, BRUNO-1, NADIA-A1, UGO-A1 ծրագրերին (*Ошибка! Недопустимый объект гиперссылки.*):

Աշխատանքների կատարման տարբեր փուլերում խումբը ստացել է ֆինանսական օժանդակություն ՀՀ Կառավարությունից («ՀՀ պետական գիտական հաշվողական համակարգի ստեղծում» նպատակային ծրագիր, 2003-2006 թթ.), դրամաշնորհ «Գալուստ Գյուլբենկյան» հիմնարկությունից («UNL-ի հայերենի մոդուլի մշակում» նախագիծ, 2003-2006 թթ.), UNDP Հայաստանի գրասենյակից («Ինֆորմացիոն հասարակություն և դեմոկրատական կառավարում» նախագծի շրջանակներում, 2001-2003 թթ.) և UNDL հիմնադրամից LPP և MIR A-1, 1, 2, AESPO-1, BRUNO-1, NADIA-A1, UGO-A1 ծրա-

<sup>3</sup> <http://dev.undlfdoundation.org/generation/index.jsp>.

<sup>4</sup> <http://dev.undlfdoundation.org/analysis/index.jsp>.

գրերի բառարանները (NL-հայերեն և հայերեն-NL) կազմելու համար (2009-2011 թթ.):

Այժմ խումբն աշխատում է ՀՀ Սփյուռքի նախարարության և ՀՀ ԳԱԱ Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի միջև կնքված պայմանագրի համաձայն «Համընդհանուր ցանցային լեզվի օգտագործմամբ հայերենի բառապաշարային տվյալների հենքի մշակում» թեմայով նախագծի իրականացման ուղղությամբ: Նախագծի նպատակն է մշակել էլեկտրոնային բառարան հայերենի (և՛ արևելահայերեն, և՛ արևմտահայերեն) համար՝ օգտագործելով UNL միջավայրը՝ ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ու Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտների կողմից արդեն իսկ ստեղծված ծրագրային միջոցներով ու տվյալների հենքով:

Առաջարկվում է UNL-NL բառարանի տարածական տարբերակների և NL բառարանի քերականական բնութագրերի դաշտում ներգրավել արևմտահայերենը՝ քերականական բնութագրով:

Նախագծի իրականացման արդյունքում կստեղծվի UNL-հայերեն երկլեզու բառարան, որի իմաստները նկարագրված կլինեն UNL-ով ու կմշակվի բառապաշարային տվյալների հենք՝ WordNet-ի օրինակով: Բառարանը կարող է ընդգրկվել բազմալեզու բառարանային համակարգում, ինչպիսին է MUHIT համակարգը<sup>5</sup> սրանով իսկ փորձելով ամրագրել մեր լեզվի անշափ կարևոր ու կենսական տարբերակը՝ արևմտահայերենը պահել-պահպանելու պահանջը՝ հայ ազգի վերապրումն ապահովելու նպատակով:

### **Lilit Paremuzyan** **Universal Networking Language**

UNL- is a computational universal artificial network language which aims at description, preservation and dissemination of global information, from any natural language, regardless of the form of the computer environment. The works of the Armenian module began in 2001. There have been done works on a creation of the formal description of Armenian language, the automatic processing of text, the creation of automatic dictionaries and computer data bases.

Now the group is working on the implementation of a joint project with the Ministry of Diaspora. The result of the project will be the creation of the UNL- Armenian bilingual dictionary, the meanings of which will be described in UNL and the development of vocabulary data basis on the example of WordNet. The dictionary can be included in the multilingual dictionary system, such as the MUHIT system is.

<sup>5</sup> <http://www.unlweb.net/muhit/>.

## ՎԱՀԱՆ ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ

### ԵՐՋՆԿԱՅԻ<sup>1</sup> 1230 Թ. ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ ԵՎ ԿԻԼԻԿԵՑԻՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ

1230 թվականին Երզնկայի (կամ Յասի Չիմենի) ճակատամարտում փոքրասիական սելջուկների ու Այյուբյանների միացյալ զինուժը վերջնականապես ջախջախեց շուրջ վեց տարի տարածաշրջանը սարսափի մեջ պահող Ջալալ ալ-Դինի խորեզմյան բանակը: Վերջինիս հաղթանակի դեպքում նվաճման վտանգի առաջ էին կանգնելու Այյուբյանների տիրույթները Ջազիրայում (Վերին Միջագետք) Մոսուլ կենտրոնով և Վանա լճի ավազանում՝ Խլաթ կենտրոնով:

Այյուբյան պետությունը փաստորեն մի շարք պետությունների «համադաշնություն» էր, որի մեջ հատկապես խոշոր միավորներ էին 3-4-ը, իսկ սրանց մեջ գերագահ էր համարվում Եգիպտոսի սուլթանը, թեև դա էլ երբեմն ձևական բնույթ էր կրում: Դամասկոսը, Հալեպը, Համան, Հոմսը, Մոսուլը կամ Խլաթը ուղիղ ձևով Կահիրեին չէին ենթարկվում, թեև այս բոլոր քաղաքներում իշխում էին Այյուբյան տոհմի ներկայացուցիչները: Նշենք նաև որ քննարկվող ժամանակաշրջանում Հալեպը և Հյուսիսային Սիրիան գտնվում էին Մոսուլի ալ-Աշրաֆի հովանավորության տակ:

1225-ին, երբ Ջալալ ալ-Դինը հայտնվեց տարածաշրջանի սահմանագլխին Այյուբյան եղբայրները գրեթե ինչպես միշտ գտնվում էին ներքին պայքարների մեջ: Այս հակասություններից փորձեց օգտվել խորեզմի թագաժառանգը: Ջալալ ալ-Դինի և Դամասկոսի տեր ալ-Մուազզամի միջև կնքվեց դաշինք ընդդեմ Ջազիրայի և Վանա լճի ավազանի տեր ալ-Աշրաֆի: Այս դաշինքին մասնակցող Իրբիլի տեր Արտուխյան Գյոքբորնին, ըստ նախատեսված պլանի պիտի հարձակվեր Մոսուլի վրա, ալ-Մուազզամը՝ Հոմսի ու Համայի, իսկ Ջալալ ալ-Դինը՝ Խլաթի ու Վանա լճի ողջ ավազանի վրա<sup>2</sup>:

Ջալալ ալ-Դինն ու իր դաշնակիցները իրենց նվաճողական պլանների իրագործմանն անցան շուրջ մեկուկես տարի անց միայն, քանի որ 1225-1226 թվականներին Ջալալ ալ-Դինը ամբողջովին զբաղված էր Վրացական պետու-

<sup>1</sup> Այս նակատամարտը առավել հայտնի է Յասի Չիմենի նակատամարտ անունով, որը մի գյուղ է Երզնկայի մոտակայքում: Մենք հետևել ենք ֆրանսիացի նշանավոր արևելագետ Ռընե Գրոսսեին, որն այն կոչել է «Երզնկայի նակատամարտ», տե՛ս René Grousset, *Histoire des Croisades et royaume franc de Jerusalem*, v.III, 2006 (1936,1991),pp.382-383 (այսուհետև R. Grousset).

<sup>2</sup> Stephen Hemphreys, *From Saladin to the Mongols, The Ayyubids of Damascus, 1193-1260*, New York, 1977, p.176-178 (այսուհետև Stephen Hemphreys).

թյան դեմ արշավանքներով ու ասպատակություններով: Այդ ընթացքում նա Գառնիի (1225) բախտորոշ ճակատամարտում հաղթանակ տարավ և 1226-ի սկզբին գրավեց մայրաքաղաք Թբիլիսին, այդ ընթացքում նաև ավարառության ենթարկելով Վրաստանի և Հյուսիսային Հայաստանի բազմաթիվ բնակավայրեր<sup>3</sup>:

1226 թ. նոյեմբերին Ջալալ ալ-Դինը անսպասելի հայտնվեց հլաթի մոտ: Խորեզմցիները հասան որոշակի հաջողություն, բայց ի վերջո սաստիկ ցուրտն ու Ատրպատականից ստացած տագնապալի լուրերը ստիպեցին նրանց հեռանալ հլաթից<sup>4</sup>:

Դրանից հետո շուրջ երկու տարի (1226-ի վերջից մինչև 1228-ի երկրորդ կեսը) Ջալալ ալ-Դինը գտնվում էր Իրանում և Իրաքում: Այդ ընթացքում Դամասկոսի տեր Այյուբյան ալ-Մուազզամը հիվանդացավ ու մահացավ 47 տարեկան հասակում: Դրանով իսկ Ջալալ ալ-Դինը կորցրեց իր գլխավոր դաշնակցին տարածաշրջանում:

Իսֆահանում մոնղոլների դեմ տարած իր հաղթանակից հետո Ջալալ ալ-Դինը կրկին հայտնվեց Փոքր Ասիայում և 1229 թ. խորեզմցիները դարձան Այյուբյանների գլխավոր մտահոգությունը արտաքին հարաբերություններում<sup>5</sup>:

Թեև ժամանակակիցներն ու պատմագիրները Ջալալ ալ-Դինին համարում են մի բախտախնդիր<sup>6</sup>, իսկ նրա բոլոր արշավանքները բնորոշում որպես կողոպուտչական, սակայն հանուն ճշմարտության պետք է նշել, որ 1225-1230 թվականներին գրեթե ողջ Իրանն ու Վրացական թագավորությունը (Հյուսիսային Հայաստանի հետ միասին) գտնվում էին Ջալալ ալ-Դինի տիրապետության տակ: Նույն ճակատագիրն էր սպասում նաև Հարավ-արևմտյան Հայաստանին, Ջազիրային, Ասորիքին (Այյուբյան տիրույթներ), Փոքր Ասիային (Իկոնիայի սելջուկյան սուլթանություն), ինչպես նաև Կիլիկիայի հայկական թագավորությունն ու խաչակրաց տիրույթներին:

1229թ. օգոստոսի վերջին Ջալալ ալ-Դինը անսպասելի հայտնվեց հլաթի պարիսպների տակ իր հետ բերելով պաշարողական մեքենաներ: Խլաթի գրավումը այս անգամ ևս շատ դժվար խնդիր դարձավ նրա համար: Քաղաքը

<sup>3</sup> Հ. Մարգարյան, «Ջալալ ալ-Դինի Հայաստան և Վրաստան կատարած արշավանքի պատմության շուրջ». - Պատմաբանասիրական հանդես, եր., 1981, 4, էջ 125-139:

<sup>4</sup> Նույն տեղում:

<sup>5</sup> Ռընե Գրուսեմ վկայակոչելով լատին պատմիչների տեղեկությունները եզրակացնում է որ Ջալալ ալ-Դինի հրոսակների ներխուժման վտանգը այնքան մեծ էր, որ երկու Այյուբյան եղբայրները՝ ալ-Քամիլը և ալ-Աշրաֆը դիմեցին անգամ Ֆրիդրիխ II կայսրի օգնությանը: (Տե՛ս R. Grousset, p. 382).

<sup>6</sup> Առաջին հերթին այն պատճառով, որ նա թեև ուներ շատ մարտունակ մի բանակ, բայց կորցրել էր իր երկիրն ու պետությունը, հետևաբար ավելի նման էր թափառական ավազակի, քան մի մեծ պետության ղեկավարի, որը նվաճումներով ընդարձակում է իր տիրապետությունը (Վ. Տ.-Ղ.):

դիմացավ գրեթե 10 ամիս, բայց ի վերջո 1230 թ. ապրիլի 14-ին խորեզմցիները գրոհեցին պարիսպների վրա և մի աշտարակից կարողացան ներխուժել քաղաք: Խլաթի անկումը ծանր հարված էր Այյուբյանների համար:

Փաստորեն 1230 թվականի գարնանը արդեն Զալալ ալ-Դինը ի վիճակի էր կատարելու նոր լայնածավալ նվաճումներ: Իրավիճակը ստիպեց տարածաշրջանի պետություններին սթափվելու և կտրուկ քայլերի դիմելու մի կողմ դնելով նախկինում եղած հակասությունները: Խլաթի անկումը Այյուբյաններից ոչ պակաս անհանգստացրել էր Իկոնիայի սուլթան Քայ Կուբադին, որը որոշեց հարթել իր բոլոր հակասությունները Այյուբյանների հետ: Նա անմիջապես բանագնացներ ուղարկեց Եգիպտոսի ալ-Քամիլի և Զազիրայի ալ-Աշրաֆի մոտ, որի արդյունքում մի դաշինք գոյացավ սելջուկների և Այյուբյանների միջև: Ալ-Քամիլը Ալ-Աշրաֆին նշանակեց բոլոր այյուբյան զորքերի հրամանատար<sup>7</sup>:

Ալ-Աշրաֆը սկզբում իր հետ ուներ ընդամենը 700 զինվոր որ բերել էր Դամասկոսից: Նրան միացան Հալեպի, Հոմսի, Համաչի, Դիյար Մուգարի, Մոսուլի և այլ ուժեր: Ի վերջո զորքը հասավ 5000-ի: Խառանի մոտ բանակ կազմելով ալ-Աշրաֆը Եփրատի հովտով գնաց դեպի Սեբաստիա որտեղ միացավ Քայ Կուբադի 20000 —անոց հեծելազորին<sup>8</sup>:

Երբ Զալալ ալ-Դինը լսեց իր դեմ ստեղծված զինակցության մասին նա փորձեց հարվածել սելջուկներին նախքան նրանց միանալը ալ-Աշրաֆի հետ: Բայց Խարբերդի մոտ նա անսպասելի հիվանդացավ ու թեև մի քանի օրից ստիպեց իրեն շարունակել առաջխաղացումը, բայց արդեն պահը կորցրել էր: 1230 թ. օգոստոս 7 -ին Խարբերդից Երզնկա ուղղվելով Զալալ ալ-Դինը դեմ հանդիման դուրս եկավ սելջուկների 6000-անոց<sup>9</sup> մի զորաբանակի: Վերջիններս հանկարծակիի գալով այդ օրը շախշախիչ պարտություն կրեցին: Բայց սա ընդամենը նախերգանքն էր:

1230 թ. օգոստոս 9 —ին, Երզնկայի մոտ գտնվող Յասի-Չիմեն գյուղի մոտ Զալալ ալ-Դինը հանդիպեց դաշնակիցների հիմնական ուժերին: Եթե հավաստի է Բար Հեբրեոսի հիշատակած թիվը ապա Զալալ ալ-Դինը ուներ թվական գերազանցություն՝ 40 հազարն<sup>10</sup> ընդդեմ 25 հազարի: Նրա առաջապահները ուժեղ հարձակման ենթարկվեցին սելջուկ-այյուբյան բանակի կազմում կռվող բեղունների կողմից: Հաջորդ օրը խորեզմցիները քիչ էր մնում գրավեին այն բլուրը, որի վրա դաշնակիցները տեղավորել էին իրենց ուժերը, բայց հանկարծ ինչ որ մի քամի մեծ փոշի առաջացրեց, որի հետևանքով նրանք միմյանց

<sup>7</sup> Stephen Hemphreys, p.217-218

<sup>8</sup> Նույն տեղում:

<sup>9</sup> Ըստ Բար Հեբրեոսի սելջուկների թիվը 4000 էր: (*The Chronography of Gregory Abu'l-Faraj Bar Hebraeus*, eng. tr. *Ernert A. Wallis Budge*, Amsterdam, 1976, p.395, այսուհետև Bar Hebraeus).

<sup>10</sup> Նույն տեղում:

տեսադաշտից անհետացան: Ըստ երևույթին Ջալալ ալ-Դինի հիվանդ լինելը ևս ինչ որ դեր խաղաց: Ի վերջո խորեզմցիներն սկսեցին նահանջել: Ապա նահանջը վերածվեց փախուստի և Այյուբյանների ու սելջուկների հեծելազորը նետվեց խորեզմցիների հետևից վերջնականապես ջախջախելով նրանց: Ջալալ ալ-Դինը մի կերպ փրկվեց փախչելով Խլաթ, ապա հասնելով մինչև Խոյ<sup>11</sup>:

Երզնկայի ճակատամարտի մասին հիշատակող արաբական<sup>12</sup> և ասորական<sup>13</sup> աղբյուրներից և ոչ մեկը չի հիշատակում հայերի և ֆրանկների մասնակցությունը մասին: Ուստի բացառիկ են 13-րդ դարի երկու հայ հեղինակների տեղեկությունները:

Եզակի է Կիրակոս Գանձակեցու տեղեկությունը, Հայոց Պատմության այն գլխում որ կոչվում է «Վասն կորստեան սուլտանին Ջալալադնի եւ բառնալոյ նորա յերկէ»: Համաձայն այդ հաղորդման Երզնկայի ճակատամարտին բացի սելջուկներից ու Այյուբյաններից մասնակցել են նաև հայերն ու խաչակիրները: Նկարագրելով Խլաթի պաշարումն ու գրավումը խորեզմցիների կողմից, պատմիչը հիշատակում է երեք սուլթանների՝ Քամիլ և Աշրաֆ Այյուբյանների և Իկոնիայի Քաչ Կուբադի զինակցությունն ընդդեմ Ջալալ ալ-Դինի, ապա ավելացնում է. «Կոչեցին իւրեանց օգնական և ի զօրացն հայոց, որ յաշխարհին Կրիկեցուց, և ի ֆրանկացն ծովեզերեացց, և եկին տալ պատերազմ ընդ խորագմեցուցն Ջալալադնի»<sup>14</sup>: Ապա նկարագրում է Երզնկայի ճակատամարտը հետևյալ կերպ. «Եւ իբրեւ եկին մօտ առ միմեանս, զանգիտեցին երկոքին կողմանքն և ոչ իշխէին խառնիլ ընդ իրեարս: Ապա քրիստոնեայքն, որ ի հայոց և ֆրանկաց, խրախուսեալք յԱստուած, դիմեցին ի վերայ նոցա: Եւ էին թուով սակաւք, պակաս քան զհազար մի, և զօրութեամբն Քրիստոսի հարին զզօրսն և ի փախուստ դարձուցին: Եւ զայն տեսեալ զօրացն տաճկաց՝ յարձակեցան և նոքա. և հարին կոտորեցին զբազումս մինչ ի մուսս արևուն: Ապա հրաման ետուն սուլտանքն ոչ պնդել զհետ փախստէիցն, իբր այն թէ հաւատակիցք նոցա իցեն: Եւ դադարեցին ի պնդելոյ զհետ նոցա: Իսկ սուլտանքն զի արք բարեպաշտք էին, ոչ ապերախտ լինէին առ զօրն քրիստոնէից, զի գիտացին, թէ ի ձեռն նոցա ետ տէր զյաղթութիւնն»<sup>15</sup>:

Բացի Կիրակոս Գանձակեցուց նման տեղեկություն գտնում ենք նաև նրան

<sup>11</sup> Stephen Hemphreys, p.219.

<sup>12</sup> Шихаб ад-Дин Мухаммад ан-Насави, *Жизнеописание султана Джалал ад-Дина Манкбурны*, пер. с арабск. З. М. Буниятова, Баку, 1973, стр.256-257, Ibn al-Athir, *Al-Kamil fi l-Tarikh*, t. X, Beirut, 2003, pp.486-487, տե՛ս նաև *Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին*, Իբն ալ-Ասիր, Եր., 1981, էջ 339-340 (այսուհետև՝ Իբն ալ-Ասիր):

<sup>13</sup> Bar Hebraeus, p. 395.

<sup>14</sup> Կիրակոս Գանձակեցի, *Պատմութիւն Հայոց*, էջ 228-229:

<sup>15</sup> Կիրակոս Գանձակեցի, *Պատմութիւն Հայոց*, էջ 229-230:

ժամանակակից Անանուն Սեբաստացու տարեգրության (XIII դ.) մեջ<sup>16</sup>, ընդ որում երկու տարբերակով<sup>17</sup>:

Կիլիկիայի պատմության վաստակաշատ ուսումնասիրող Գրիգոր Միքայելյանը իր աշխատության մեջ անդրադառնալով այդ ճակատամարտին ամբողջովին հենվում է Կիրակոս Գանձակեցու տեղեկության վրա<sup>18</sup>: Միքայելյանը չի փորձում այլ աղբյուրներով հաստատել հայերի ու ֆրանկների մասնակցության հավաստիությունը, ինչպես նաև կռաւիցիայի մեջ մտնելու դրդապատճառները, զինվորների թիվը, ուժքեր էին նրանց հրամանատարներն ու վերջապես ինչ ենք հասկանում ասելով «ծովեզրյա ֆրանկներ»:

Մի այլ վաստակաշատ կիլիկիագետ Քլոդ Մուլթաֆյանը նույնպես անդրադառնում է այս ճակատամարտին, ընդ որում նա բացի Կիրակոս Գանձակեցուց հղում է նաև Անանուն Սեբաստացու ժամանակագրությունը<sup>19</sup>:

Հույն պատմաբան Ալեքսիս Սավվիդիսը, նույն ճակատամարտը նկարագրում է հետևյալ կերպ «Անատոլիայի հյուսիս-արևելքի բախտը որոշող ճակատամարտը մղվեց ... Երզնկայից արևմուտք, Յասիչիմենի կանաչ դաշտում: Քայկուբատ I-ը դիվանագիտական հաղթանակ տարավ ընդունելով ալ-Քամիլի և ալ-Աշրաֆի օգնության առաջարկը, քանի որ հաղթանակի դեպքում նա կկարողանար իր պայմանները թելադրել Փոքր Ասիայի ապագա ստատուս քվոյի հարցերում: Կիլիկյան թագավոր Հեթում Ա-ը նույնպես ստիպված էր Կոնիային մատակարարել ֆրանկոհայկական մի զորամիավորում»<sup>20</sup>:

Փորձենք պարզել թե Երզնկայի ճակատամարտին կիլիկեցիների մասնակցությունը որքանով էր հավանական և որքանով էր թելադրված հայոց թագավորության մինչ այդ վարած արտաքին քաղաքականությունը:

Հայտնի է որ Կիլիկյան Հայաստանը Իկոնիայի սելջուկյան սուլթանության հանդեպ 1216-ից հետո ուներ որոշակի վասալական պարտավորություններ: Դա տեղի ունեցավ այն բանից հետո, երբ մինչ այդ մշտապես հաղթական Լևոն Ա թագավորը իր սիրելի սպարապետ Կոստանդինին սելջուկյան գերությունից ազատելու համար թե տարածքային զիջումներ կատարեց և թե ընդունեց Իկոնիայի սուլթանի գերակայությունը, որն ըստ երևույթին ենթադրում էր նաև ռազմական ուժ տրամադրելու պարտավորություն:

<sup>16</sup> Մանր ժամանակագրություններ, XIII-XVIII դդ., հ. II, կազմեց Վազգեն Հակոբյան, Եր., 1956, էջ118-172:

<sup>17</sup> Նույն տեղում, էջ 138:

<sup>18</sup> Г. Микаэлян, *История Киликийского армянского государства*, Ер., 1952, с. 296: Մոտավորապես նույն միտքը կրկնվում է նաև Հայ ժողովրդի պատմության /ՀՀ ԳԱ բազմա-հատորյակ / 3-րդ հատորի/, Եր., 1976/ 605 էջում / հեղ. Լ. Բաբայան/:

<sup>19</sup> С. Moutafian, *L'Armenie du Levant*, t. I, Paris, 2012, p.127-128.

<sup>20</sup> Alexis G. C. Savvides, *Byzantium in the Near East: Its relations with the Seljuk sultanate of Rum in Asia Minor, the Armenians of Cilicia and the Mongols A. D. c.1192-1237*, Thesalonics, 1981, p.181 (այսմիտևն՝ Alexis G. C. Savvides).



Երեք տարի անց՝ 1219-ին նման առիթ ներկայացավ, ըստ Միքայել Ասորու ժամանակագրության հայերեն տարբերակի շարունակողի: Երբ սուլթան Քեյ-քաուսը արշավանքի դուրս եկավ ընդդեմ Հալեպի Այյուբյանների նա օգնական ուժեր ստացավ Հայոց թագավորից: Սելջուկները մի շարք բնակավայրեր գրավեցին Այյուբյաններից և արդեն սպառնում էին մայրաքաղաք Հալեպին: Հենց այդ ժամանակ Հալեպի աթաբեկ Շիհաբ ալ-Դին Տուղրիլը օգնություն ստանալու համար նամակով դիմում է Ղևոն թագավորին: Վերջինս հարևան պետությունն օգնելու նպատակով դիմում է խորամանկության: Նա իր հերթին մի այլ նամակ է ուղարկում Իկոնիայի սուլթանին հաղորդելով, որ իբրև թե տվյալներ ունի Սուլթանության ներսում ձևավորված դավադրության մասին: Այս լուրն առնելով սելջուկները վերադառնում են Իկոնիա՝ թողնելով նախապես գրավված բնակավայրերը: Դրանով իսկ ոչ միայն Հալեպն է փրկվում սելջուկյան հարձակումից, այլև ալ-Աշրաֆը ետ է խլում մինչ այդ կորցրած բնակավայրերը<sup>21</sup>:

Եթե մինչև 1216 թ. Հայոց թագավորության և Հալեպի Այյուբյանների միջև կային բավական լարված հարաբերություններ (գագաթնակետը 1203-1206 թթ. պատերազմն էր), ապա 1216-ից հետո բոլորովին այլ իրավիճակ է ստեղծվում: Այդ տարիներին Իկոնիայի սուլթանության աննախադեպ հզորացումը և Անտիոք-Տրիպոլիսի կոմսության հարձակողական պահվածքը հարևանների հանդեպ, Սահն ու Հալեպին դարձնում էին բնական դաշնակիցներ:

Միս-Հալեպ գինակցության մի նոր փաստ արձանագրվեց 1226-ին<sup>22</sup>: Այն բանից հետո երբ Զաբելի հետ ամուսնանալով Հայոց թագավոր հռչակված Ֆիլիպին (1222-1224) Կիլիկիայի վերնախավը մեկուսացրեց ու բանտարկեց, ռազմական բախում տեղի ունեցավ Հայոց թագավորության և Անտիոք-Տրիպոլիսի կոմսության միջև: Ֆիլիպի հայրը՝ Բոհեմունդ IV-ը իր նպատակին չհասնելով փորձեց հակակիլիկյան մի դաշինք ստեղծել, հայոց դեմ գրգռելով Իկոնիայի սուլթանությանը: Վերջիններս 1225-1226-ի ձմռանը ներխուժեցին Կիլիկիա, գրավեցին չորս ամրոց, բայց ձյան ու ցրտի պատճառով վերադարձան իրենց երկիրը:

Ահա այստեղ է որ կրկին գործեց Միս-Հալեպ գինակցությունը, որի մասին պերճախոս կերպով վկայում է նույն Իբն ալ-Ասիրը: Կիլիկիայի փաստացի կառավարող Կոստանդին Պալլը նամակ ուղարկելով Հալեպ հուշեց, որ Բոհեմունդ IV-ի ուժեղացումը ձեռնառու չէ նաև Հալեպի Այյուբյանների համար: Ըստ արաբ պատմիչի «Հայերը լուր ուղարկեցին Հալեպի աթաբեկ Շիհաբ ալ-Դինին՝

<sup>21</sup> Տե՛սն Միխայելի պատրիարքի ասորոց ժամանակագրություն, Երուսաղեմ, 1870, էջ 520-522: Տե՛ս նաև Վահան Տեր-Ղևոնդյան, «Կիլիկիայի հայկական թագավորությունն ու Հալեպի սուլթանությունը՝ դաշնակիցներ», Հայոց պատմության հարցեր, 11, Եր., 2010, էջ 45-55:

<sup>22</sup> Տե՛ս Իբն ալ-Ասիր, էջ 333, Վ. Տեր-Ղևոնդյան, Կիլիկյան Հայաստանը և Մերձավոր Արևելքի արաբական երկրները 1145-1226 թթ., Եր., 1994, էջ 131-133:

օգնության կանչելով և զգուշացնելով, որ վատ կլինի, եթե բրինսը գրավի իրենց երկիրը, քանի որ Հալեպի գավառներին դրացի է»<sup>23</sup> : Աթաբեկը անմիջապես «գործ ու զենք» ուղարկեց հարևան երկիր: Դրանից հետո թեև Բոհեմոնդը անձամբ արշավեց Կիլիկիայի վրա, բայց ձախողվեց ու նահանջեց: Փաստորեն Հալեպի օգնությունը վճռական նշանակություն ունեցավ խաչակիրներին ետ մղելու և շրջափակումից դուրս գալու գործում<sup>24</sup> :

Ըստ երևույթին Իկոնիայի սելջուկներին օգնական զորք տրամադրելու պարտավորությունը գործել է ընդամենը մեկ անգամ 1219-ին Լևոն Ա թագավորի գահակալության վերջին ամիսներին, այն էլ փաստորեն ինչպես տեսանք՝ ոչ լիարժեք: Ավելին, ինչպես տեսանք, վերջում այն ստացավ հակասելջուկյան բնույթ, Հայոց թագավորը պաշտպանեց Այյուբյաններին: Այդ պարտավորության նշաններ այլևս չեն երևում ոչ 1226-ին, ոչ էլ դրանից հետո մինչև 1230-ը: Ուստի որևէ հիմք չկա Երզնկայի ճակատամարտին հայերի մասնակցությունը բացատրել Իկոնիայի սելջուկների հանդեպ վասալական պարտավորությամբ: Իսկ եթե կրիկեցիները արձագանքել են երկու հիմնական ուժերից որևէ մեկի կողմն՝ («կոչեցին իւրեանց օգնական») կամ առաջարկին, ապա դա մեծ հավանականությամբ Հալեպի Այյուբյաններն էին:

Իբն ալ-Ասիրը Երզնկայի ճակատամարտում հաղթանակի գործում կարևոր դեր է վերապահում Այյուբյանների զինուժին թեև այն քառակի զիջում էր սելջուկներին<sup>25</sup> : Այն որ անկախ իրենց թվից հենց Այյուբյաններն էին խորեզմյանների դեմ հիմնական կռիվները հաստատում է նաև ասորի պատմիչ Բար Հեբրեոսը ճակատամարտի նկարագրությունից հետո նշելով, որ «... և Մալիք Աշրաֆը հաղթական էր»<sup>26</sup> :

Միաժամանակ Կիրակոս Գանձակեցին խոսելով հայերի ու ֆրանկների թվի մասին գրում է «Եւ էին թուով սակաւք, պակաս քան զհազար մի»: Սա ենթադրել է տալիս որ նրանց թիվը միասնաբար հավանաբար հասնում էր մոտ 800-900-ի: Հավանական է որ 25000-անոց բանակի մեջ այդքան զինվորը կարող էր նկատի չառնվել ժամանակի պատմագիրների կողմից, մանավանդ եթե որևէ միապետ, կամ նշանավոր իշխան նրանց չէր առաջնորդում:

Կրիկեցիների հնարավոր մասնակցությունը քննելիս ավելորդ չէ նկատել, որ Երզնկայի ճակատամարտի ժամանակ, թեև Կիլիկիայի թագավորն էր Հեթում Ա-ը, սակայն իրականում երկրի ղեկավարն էր նրա հայրը՝ Կոստանդին Պալլը<sup>27</sup> :

Միաժամանակ, թեև խորեզմյանների դեմ պայքարը Այյուբյանների կողմից

<sup>23</sup> Ibn al-Athir, *Al-Kamil fi l-Tarikh*, t. X, Beirut, 2003, pp. 469-470, Իբն ալ-Ասիր, էջ 333:

<sup>24</sup> Նոյն տեղում, pp. 470:

<sup>25</sup> Իբն ալ-Ասիր, էջ 340:

<sup>26</sup> Bar Hebraeus, p. 395:

<sup>27</sup> Լ. Տեր-Պետրոսյան, *Խաչակիրները եւ հայերը*, հ. Բ, Եր., 2007, էջ 286:

ղեկավարում էր Ջազիրայի տեր ալ-Աշրաֆը, սակայն նրա հովանավորության տակ գտնվող Հալեպում (և ողջ Հյուսիսային Սիրիայում) մինչև 1231-ը փաստացի ղեկավարն էր աթաբեկ Շիհաբ ալ-Դին Տուղրիլը՝ Լևոնի Մեծագործի հետ համագործակցողը 1219-ին և Կոստանդին Պալլի դաշնակիցը 1226-ին, որը 1230-ին ևս կարող էր որոշակի դեր խաղալ Ջալալ ալ-Դինի դեմ կոալիցիայի մեջ կիլիկեցիներին ներգրավելու հարցում:

Այսպիսով 1216-ից հետո Սիս-Հալեպ հարաբերություններում տիրապետող է դառնում համագործակցությունն ու զինակցությունը: Վերջինիս վկայությունն են պատմիչների հաղորդումները 1219-ի և 1226-ի իրադարձությունների մասին: Այս շարքին կարելի է ավելացնել նաև 1230-ի Երզնկայի (Յասի Ջիմենի) ճակատամարտը:

Այսպիսով ուրվագծվում է հետևյալ պատկերը: Թեև Երզնկայի ճակատամարտում թվական մեծ գերազանցություն ունեին Ռումի սելջուկները սակայն բուն ռազմական գործողություններում վճռական դեր են ունեցել Այյուբյանները: Ըստ երևույթին, քրիստոնյաները մաս են կազմել հենց Այյուբյան միացյալ զորաբանակի:

Արաբ պատմիչ Իբն ալ-Ասիրը թեև չի հիշատակում քրիստոնյաների մասնակցության մասին, սակայն եթե մեր վերոհիշյալ ենթադրությունը (որ քրիստոնյաները ներառված էին Հալեպի Այյուբյանների զորաբանակում) ճիշտ է, Իբն ալ-Ասիրի հաղորդումը չի հակասում Կիրակոս Գանձակեցու տեղեկությունը: XIII դարի արաբ պատմիչը նկարագրելով Երզնկայի ճակատամարտը գրում է «Ճակատամարտն սկսեց Իզզ ալ-Դին Օմար իբն Ալին՝ Հալեբի զորքի գլուխն անցած: Ջալալ ալ-Դինը չկարողացավ դիմադրել կամ դիմանալ, այլ փախուստի դիմեցին ինքը և իր զորքը»<sup>28</sup>:

Լուսաբանման կարիք ունի նաև Ֆրանկների մասին հիշատակությունը, որոնք թե Կիրակոս Գանձակեցու և թե Անանուն Սեբաստացու մոտ հիշատակվում են հայերի հետ միասնաբար<sup>29</sup>, որը նաև հուշում է որ սրանք մեկ միասնական զորամիավոր են եղել և չեն շեշտում թե դրա հատկապես որ մասն էին կազմում հայերը և որ մասը խաչակիրները: Մնում է պարզել թե հատկապես որ խաչակիրների մասին է խոսքը: Հույն պատմաբան Ալեքսիս Սավվիդիսի<sup>30</sup> արտահայտությունը այն տպավորությունն է ստեղծում որ «Ֆրանկ» զինվորներին ոչ թե ինչ որ մի խաչակիր պետություն էր տրամադրել, այլ դրանք արդեն իսկ Կիլիկյան Հայաստանի տարածքում հաստատված խաչակիր ռազմիկներ են: Եթե դա ճիշտ է ապա մեծ հավանականությամբ դա կարող էին լինել

<sup>28</sup> Ibn al-Athir, *Al-Kamil fi l-Tarikh*, t. X, Beirut, 2003, pp. 487, տե՛ս նաև Իբն ալ-Ասիր, էջ 340:

<sup>29</sup> Կիրակոս Գանձակեցի, *Պատմություն Հայոց*, էջ 229-230:

<sup>30</sup> Alexis G. C. Savvides, p. 181.

հոգևոր-ասպետական միաբանությունների անդամներ, օրինակ Հիվանդախնամներ կամ Տևտոններ (ավելի քիչ հավանական է այդ ժամանակ Տաճարականների մասնակցությունը)<sup>31</sup>:

Հայտնի է որ XIII դարի առաջին չորս տասնամյակները համարվում են Իկոնիայի սելջուկյան սուլթանության հզորագույն շրջանը: Սակայն այդ քառասնամյակի մեջ պետք է առանձնացնել վերջին տասներեք տարին (1230-1243): Այդ ժամանակ սուլթանությունը հասավ հզորության գագաթնակետին իր ազդեցությունը տարածելով Փոքր Ասիայից էլ դուրս, դեպի Ասորիք, Վերին Միջագետք, Մեծ Հայքի հարավ-արևմուտք և Վրաստանի որոշ շրջաններ: Սա պայմանավորված էր հենց Երզնկայի հաղթանակով:

Ֆրանսիացի պատմաբան Կլոդ Կայենը գտնում է, որ խորեզմցիների արշավանքներից ու Յասի Չիմենի ճակատամարտից հետո Իկոնիայի սելջուկների գերիշխանությունը Փոքր Ասիայում առավել ակնհայտ դարձավ: Նրանց բացահայտ հավակնությունները նաև Հարավ-արևմտյան Հայաստանի և Ջազիրայի հանդեպ ստիպեցին Այլուբջաններին կրկին միավորվել այս անգամ արդեն ոչ վաղ անցյալի դաշնակիցներին՝ փոքրասիական սելջուկների դեմ<sup>32</sup>:

Ակնհայտ է որ 1230-ին Երզնկայի ճակատամարտը դրական նշանակություն ուներ նաև Կիլիկիայի համար, քանի որ Ջալալ ալ-Դինի հրոսակների ներխուժումը Հայոց թագավորությունից ներս մի իսկական աղետ կլիներ իր ծաղկուն շրջանը ապրող Կիլիկիայի համար: Մյուս կողմից պարզ էր որ խորեզմցիների ահարկու բանակի ջախջախումից հետո շունենալով լուրջ մրցակից Իկոնիայի սելջուկյան սուլթանությունը փորձելու էր իր գերիշխանությունը տարածել հարևան երկրներում: Ստեղծված իրավիճակում Հեթում Ա-ը 13-րդ դ. 30-ական թթ. և 40-ականների սկզբին չէր կարող բացահայտ առճակատման գնալ և պետք է ողջամիտ համարել նրա կողմից Իկոնիայի գերիշխանության ժամանակավոր ընդունումը (որի արտահայտությունն էր միացյալ դրամների հատումը): Միաժամանակ ակնհայտ է, որ առաջին իսկ հարմար առիթի դեպքում կիլիկեցիները փորձելու էին թոթափել այդ կախվածությունը Իկոնիայից, մի բան որ մեծապես պայմանավորեց Հայոց թագավորության դիրքորոշումը մոնղոլների և սելջուկների հանդեպ Քյոսեդաղի (Չմանկատուկի) 1243-ի բախտորոշ ճակատամարտում և դրան հաջորդած եռանդուն դիվանագիտական քայլերը հայ-մոնղոլական դաշինք հաստատելու ուղղությամբ:

<sup>31</sup> **Մարի-Աննա Շելվալիե**, Կիլիկյան Հայաստանի և հոգևորասպետական միաբանությունների փոխհարաբերությունների պատմությունից, Եր., 2007, էջ 66-67:

<sup>32</sup> **Claude Cahen**, *La Syrie du Nord a l'époque des croisades et la principauté franque d'Antioche*, Paris, 1940, p. 645.

**Vahan Ter-Ghevondian**  
**About the Participation of Cilician Armenians in the Yerzinka Battle of 1230**

The creation and development of the Armenian state in Cilicia approximately coincides with the epoch of Seldjuk and Mongol domination in the Middle East (XI-XIV cc.). During that period a number of decisive battles took place each of them defining the fate of local states for some decades.

The Yerzinka (or Yasi Chimen ) battle of 1230 can be considered as one of those decisive fights, where the united forces of the local states defeated the Khorezm army of Djalal al-Din. The latter was keeping in terror the whole region for about six years.

There were two leading forces in the battle of Yerzinka: the Seldjuk sultanate of Iconium and the united forces (Damascus, Aleppo, Homs, Hama, Diyar Mudar, Banyas, Mayyafarikin) of the Ayyubid “confederation”.

The Arab and Syriac historians (Ibn al-Athir, al-Nasawi, Bar Hebraeus et c.) reporting about this battle provide information only on Seldjucs and the Ayyubids as members of the coalition. In that sense the reports of Armenian historians of 13<sup>th</sup> c. Kirakos Gandzakeci (History of Armenia) and Anonimus of Sebaste (Chronicle) are exceptional. They inform about participation of Armenians and Franks together with the Muslim contingents in the coalition. Though they precise that the number of Armenians and Franks was less than 1000 (in an army of 25.000 soldiers), all the same the fact of participation is important to reveal the nuances of the foreign policy of the Kingdom of Cilicia, especially in a period of time when there are few reports.

We haven't yet found additional evidences confirming the statements of above-mentioned Armenian authors. At the same time a thorough research of the foreign policy of the Armenian kingdom and the analysis of the power balance in the region in 1216-1230 demonstrates the credibility of their reports.

Following the death of sultan Salah al-Din (1193) his empire was divided among his sons and his brother. Northern Syria, with a center in Aleppo, became the possession of his son al-Malik al-Dhahir. He governed as a sovereign ruler and sometimes was called “sultan”. During his governance the relations with Cilician Armenia were tense and even hostile for some years (the war of 1203-1206). But the conditions were completely changed in 1216. After al-Malik al-Dhahir passed away, his infant son came to power under the tutelage of a regent (atabek) – Shihab

al-Din Tughril. Meanwhile the Aleppo emirate itself came under the patronage of Ayyubide rulers of Mosul. In the same period, through the last years of Levon I (1216-1219) certain weakening became apparent in Cilicia, which coincided with an unprecedented strengthening of the sultanate of Iconium and an aggressive behavior of the County of Antiochia-Tripoli. All these changes that took place in the region eventually made Sis and Aleppo natural allies.

One can find at least two eloquent evidences of mutual assistance (with soldiers, weapons or diplomacy) between the Armenian kingdom and the Aleppo emirate. In 1219 Armenians helped the Ayyubids of Aleppo and Mosul confronting the sultanate of Iconium (source: Continuer of Michael the Syrian) while in 1226 it was the turn of Aleppo to help the Armenian kingdom in its struggle against the County of Antiochia-Tripoli and the sultanate of Iconium (source: Ibn al-Athir).

Most probably the battle against the army of Djalal al-Din was another occasion to continue the established cooperation between the two countries. The comparison of the reports of historical sources makes us to think that the Christian soldiers participated in the Yerzinka battle together with the contingents of the Ayyubid army. The latter was four times smaller than the Seldjuks', however it played a decisive role in defeating the huge army of Khorezm. Personal relationship also could contribute to the involvement of the Cilician Armenians in the coalition: in 1230 the *de facto* rulers of both Northern Syria and Cilicia were the regents – Shihab al-Din Tughril and Constantin Bayl, who had already played a role in the establishment of previous alliances and had preserved personal contacts.

Obviously the result of Yerzinka battle in 1230 had a positive impact on Cilicia, as the invasion of the hordes of Djalal al-Din into the flourishing kingdom of Cilicia could be a disaster. On the other hand after the defeat of the Khorezmian army the sultanate of Iconium got rid of serious adversaries and started to extend its influence towards east and south. Under the new circumstances Armenian king Hethum I had to avoid the direct confrontation with the powerful sultanate in the 30s and early 40s of 13<sup>th</sup> c. and temporarily recognize the supremacy of the sultans of Iconium. At the same time the Cilician Armenians were ready to use any opportunity to get rid of dependency on the northern neighbor. To a large extent it explains the position of the Armenian kingdom towards the battle of Köse-Dagh (Chimankatuk) in 1243 and the subsequent dynamic efforts of the Armenian political elite for the sake of establishing a durable alliance with the Mongols.







ձերը, (կրակի. – Ա. Շ.) տաճարները, վանքերը, ծիսակատարություններն ու կրոնը»<sup>1</sup>:

Ճիշտ է, առաջին փաստաթղթի տեքստում կա հետևյալ վերապահումը. «... մենք պարտավոր ենք հավատարիմ մնալ այս ուխտին, ինչքան ժամանակ, որ դուք էլ հավատարիմ կլինե՞ք՝ վճարելով ջիզյան ու խարաջը», այսինքն՝ գլխահարկն ու հողահարկը: Նմանատիպ վերապահում կա նաև հաճորդ համաձայնագրի տեքստում. «... Հաբիբ իբն Մալամայի... պայմանն է, որ դուք գիտակցե՞ք ձեր նվաստ վիճակը և թե ում վճարել ջիզյանը»<sup>2</sup>: «Ապա թե ոչ, – կարդում ենք հրովարտակում, որը 655 թ-ի գարնանը նույն գորավարը հասցեագրել էր Ջուրզանի, այսինքն՝ Վրաց իշխանության, բնակչությանը, – պատերազմ կհայտարարվի ձեզ հանուն Ալլահի ու նրա մարգարեի: Թող խաղաղություն լինի նրանց, ովքեր որ ճշմարտության ուղիով են ընթանում»<sup>3</sup>:

Մահմեդական արաբները այդ վաղ ժամանաշրջանում ընդհանրապես չէին էլ փորձում բռնի կերպով իրենց միաստվածյան կրոնը տարածել Հայկական լեռնաշխարհի և Հարավային Կովկասի քրիստոնյա բնակչության կամ զրադաշտական համայնքի շրջանում: Այդ թեզի օգտին են ակնառու կերպով խոսում նշված փաստաթղթերի որոշ կետերը. «Եթե դուք դարձի գա՞ք և (մահմեդականի. – Ա. Շ.) աղոթք կատարե՞ք՝ ուրեմն հավատով մեր եղբայրներն ե՞ք, ապա թե ոչ, (միայն. – Ա. Շ.) ջիզյան կծանրանա ձեզ վրա»<sup>4</sup>:

Միևնույն ժամանակ արաբական կողմը պնդում էր, որպեսզի համաձայնագրերում անպայման նշվի իսլամի գերիշխող դիրքի մասին: Ահա թե ինչ է ասվում Ջուրզանի (Վիրքի) ողջ բնակչությանը հասցեագրված Հաբիբի հրովարտակում. «Ձեր սուրհանդակը... ինձ և իմ ընկերակից հավատացյալներին ներկայացավ և հայտնեց ձեր անունից, թե մենք մի ժողովուրդ ենք, որին Ալլահը պատվել ու գերադասել է: Իրավ այդպես է արել Ալլահը, մեծ փառք նրան և նրա օրհնությունը թող լինի իր մարգարե ու լավագույն արարած

Ա. Շ.), որպեսզի բոլոր քրիստոնյաները հավաքվեն ֆաղաֆային եկեղեցիներում, իսկ մոգերն ու կրակապաշտները կամ ընդունեն մկրտություն, կամ էլ ոչնչացվեն» (յարտլոն Ենոզրեյձ, Գամոմց և. Գալեբիձեձոլո, 1-2, տձոլոնո, Տաեյեմֆոլո Գամոմցեմլոձ, 1955-1959 – Կարլիս Ըոօրեձ, իձ. Ը. Կալչիսիլի, 1-2, Թիլիսի, Գոսիձադ, 1955-1959, տ. 1, զ. 72-138):

<sup>1</sup> كتاب فتوح البلدان تأليف الامام ابي العباس احمد بن يحيى البلاذرى – *Liber expugnationis regionum auctore Imamo Ahmed ibn Jahja ibn Djabir al-Beladsori*, M. de Goeje (ed.), Lugduni Batavorum, 1866, p. 200, 201: Հարկ է նշել, որ նույն պայմաներով արաբ նվաճողները Բյուզանդիայի դեմ ռազմաշարժի ժամանակ հաշտության դաշինք էին կնքում և՛ Ասորիքի, և՛ Պաղեստինի բոլոր խոշոր ֆաղաֆների բնակիչների հետ: Ալ-Բալաձուրիի մոտ կարելի գտնել այդ փաստաթղթերից մի ֆանիսի բնագրերը (Ibid, p. 121):

<sup>2</sup> Ibid., p. 200, 201:

<sup>3</sup> Ibid., p. 201:

<sup>4</sup> Ibid., p. 202:

Մունամմադի վրա, խաղաղություն նրան»<sup>1</sup>: *Թիֆլիսի (Տիֆլիսի) բնակչության հետ կնքված դաշնագրում ընդգծվում է ցանկացած մահմեդականի արտոնյալ կարգավիճակը*. «Դուք մեզ տալու եք ձեր խորհուրդները և օժանդակությունը (պայմարելու. – Ա. Շ.) Ալլահի ու նրա մարգարեի թշնամիների՝ (հեթանոսների. – Ա. Շ.) դեմ, ինչքան որ կարող եք: Պարտավոր եք մեկ գիշեր հյուրընկալել կարիք ունեցող մահմեդականին՝ նրան տալով Գրֆի ժողովրդի<sup>2</sup>, միայն թե (ս. Ղուրանի. – Ա. Շ.) կողմից օրինավոր համարած կերակրից: Եթե որևէ մահմեդական ճանապարհին մոլորվելով, հանկարծ ձեզ մոտ իջևանի, պարտավոր եք նրան հասցնել ամենամոտ տեղում գտնվող հավատացյալների՝ (մահմեդականների. – Ա. Շ.) մոտ, բացի այն պարագայի, երբ դա անկարելի է»<sup>3</sup>:

*Իրավիճակը անփոփոխ է մնում նույնիսկ երբ Ը. դարի սկզբներին Հայկական լեռնաշխարհի ու Հարավային Կովկասի երեք քրիստոնեա պետական միավորումները վերջնականորեն նվաճվում են մահմեդականների կողմից՝ միավորվելով Խալիֆայության Արմինիայ նահանգի վարչական սահմանների մեջ: Ալ-Բալաձուրիի մոտ պահպանվել է ևս մեկ երաշխավորագրի բնագիր: Այս անգամ այն տրամադրում է Թիֆլիսի (Տիֆլիսի) բնակչությանը Ումայյանների խալիֆայության (661-750) փոխարքա ալ-Ջառահ իբն Աբդ Ալլահ ալ-Հաքամին (722-725 և 729-730): Վերջինս, վկայակոչելով Հաբիբ իբն Մասլամայի հաշտության գիրը, հստակ ասում է. «Նա հաստատեցի նրանց՝ (Թիֆլիսեցիների – Ա. Շ.) երաշխավորագիրը և հաշտության պայմանագիրը ու հրամայեցի, որ հարկերը չավելացվեն»<sup>4</sup>:*

*Միևնույն ժամանակ հայ և վրաց մատենագրքերում այլևս անկարելի է գտնել տեղեկություն Ը. դարում նորակառույց եկեղեցիների վերաբերյալ, և դա այն դեպքում, երբ նախորդ է. դարը այս երկրների պատմության մեջ նշանավորվեց պաշտամունքային շինությունների շինարարական եռուզեռով: Սրա բացատրությունը մենք գտնում ենք հեղինակավոր իրավագետ, Աբբասյաններ-*

<sup>1</sup> *Ibid.*, p. 201:

<sup>2</sup> Արաբ նվաճողները «*Գրքի ժողովուրդ*» (أهل الكتاب [ահլ ալ-Քիթաբ]) բառակապակցության տակ նկատի ունենին միայն սուրբ Աստվածաշնչի (Հին և Նոր կտակարանների) ժողովուրդներին:

<sup>3</sup> *Ibid.*, p. 201: Մահմեդական զավթիչները հանդուրժողություն էին դրսևորում ոչ միայն Հայկական լեռնաշխարհի ու Հարավային Կովկասի քրիստոնյա բնակչության նկատմամբ: Ալ-Բալաձուրին «*Աձարբայջանի նվաճումը*» գրույթը բացում է գրանշումով առ այն, որ Հուգայֆա իբն ալ-Ցամանը հիջրայի 22 (642/3)-ին հաշտության դաշինք կնքեց Աուրպատականի բնակչության հետ «...այն պայմանով, որ ոչ ոք չսպանվի, կամ չգերեզմարվի, ոչ մի կրակի տաճար չհանդվի, չմեղեն Բալասաջանի, ... քրդերին, հատկապես Շիզի ժողովրդին չարգելեն պարել իրենց (կրոնական. – Ա. Շ.) տոնակատարությունների ժամանակ ու կատարել այն (պաշտամունքային ծեսերը. – Ա. Շ.), որոնք մինչ այդ կատարվում էին» (*Ibid.*, p. 325):

<sup>4</sup> *Ibid.*, p. 202:

րի խալիֆայության (750-1258) գերագույն դատավոր Աբու Յուսուֆի (731-798) «Հարկերի մատյանում» (كتاب الخراج [Քիթաբ ալ-խարաջ]): Այնտեղ ասված է հետևյալը. «Նրանք՝ (այլադավանները. – Ա. Շ.) իրավունք չունեն նոր տաճարներ կամ եկեղեցիներ կառուցել»<sup>1</sup>:

Եվ միայն թ. դարի սկզբներին, երբ Արմինիայի տարածքում սկսեցին ձևավորվել Բագրատունեաց ինքնավար իշխանությունները, մեր տրամադրության տակ ունենք արաբական տիրապետության պայմաններում կառուցվող առաջին հայ և վրաց եկեղեցիների մասին վկայություններ<sup>2</sup>: Թերևս միակ բացառությունն է այս ենթատեքստում ԺԱ. դարի վրաց պատմիչ Զուանշեր Զուանշերիանիի հիշատակությունը առ այն, որ Քարթլիի մտավար (Վրաց իշխան) Արչիլը (մահ. 786-ին) Սաձմորիում, որը Կախեթիի շրջանում էր, եկեղեցի կառուցեց<sup>3</sup>:

Նոր եկեղեցաշինության դեմ իշխանությունների կողմից սահմանված արգելքը պետք է որ նպաստեր Արաբական խալիֆայության պետական կրոնի տարածմանը Արմինիայ նահանգի քրիստոնյա ժողովուրդների շրջանում: Պատահական չեն տվյալ ենթատեքստում կաթողիկոս Սահակ Գ Ջորափորեցու (677-704) մահից առաջ փոխարքա Մուհամմադ իբն Մարվանին (693-710) հասցեագրված ավանդական այն խոսքերը, որոնք մեջբերում է Լ. դարի երկրորդ կեսի վարդապետ Ղևոնդը. «Բայց վասն հաւատոյս մեր՝ զի իշխանութիւն լիցի մեզ պահել, յոր հաւատացաքն եւ խոստովանեցաք, եւ ոք ի ձերոց այտի մի՛ խոշտանգեսցէ զմեզ՝ դառնալ ի հաւատոց մերոց»<sup>4</sup>:

Միևնույն ժամանակ պետք է խոստովանել, որ հայ և վրաց մատենագրքերում անկարելի է գտնել տեղեկություն եղած եկեղեցիների, ինչպես նաև Արմինիայի ոչ-խլամական մյուս համայնքների, որոնք մահմեդական իրավագիտական գրականությունում «նիմֆի» (نمى – բառացիորեն. «[մահմեդականների] հովանու տակ գտնվող») եզրաբառով էին նշվում, պաշտամունքային շինությունների ավերման վերաբերյալ: Սրա բացատրությունը մենք դարձյալ

<sup>1</sup> ١٨٨٤ \ ١٣٠٢ ، أبو يوسف. كتاب الخراج. بولاق، Abu Yusuf, Kitab al-kharadj. Bulaq, 1302 AH / 1884 AD, p. 72:

<sup>2</sup> Ըստ ԺԱ. դարի վրաց պատմիչ Սուբրատ Գավիթիս-ձեթի՝ Երիսթավ (իշխան) Աշոտ Ա Բագրատիոնին (մոտ 810–826) կառուցել է Արտանուշի բերդաբաղաբնում սուրբ Պետրոս ու Պողոս առաքյալների եկեղեցին (*Карталис Цховреба*, т. 1, с. 377): Թ. դարի վերջի հայ պատմիչ Թովմա Արծրունու Պատմութիւն տանն Արծրունեաց երկասիրոթյունում հիշատակվում է «...բարձրաբերձ եկեղեցին, որ յանում Փրկչին մերոյ շինեալ էր յիշխանէն Բագարատայ (Բագրատունին, 826–851. – Ա. Շ.)...» (Թովմա Արծրունի և Անանուն, Պատմութիւն տանն Արծրունեաց, հրատ., թարգ. և ծանոթագր. Վ. Վարդանյանի, Եր., Երևանի համալս. հրատ., 1985, էջ 190):

<sup>3</sup> *Карталис Цховреба*, т. 1, с. 243:

<sup>4</sup> Պատմաբանութիւն Ղևոնդեայ Մեծի վարդապետի Հայոց..., Մատենագիրք Հայոց, հատ. 9 (Ը Դար), Անթիլիաս-Լիբանան, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւն, 2007, էջ 753:

գտնում ենք Աբու Յուսուֆի մոտ. «Իսկ ինչ վերաբերում է... ձիմմիների դրույթյան մասին և թե ինչպես մահմեդականների կողմից նվաճման ժամանակ նրանց թողնվել են տաճարները և եկեղեցիները փաղափներում... ու չեն փանդվել: Բան այն է, որ մահմեդականների ու ձիմմիների միջև կնքվել էր հաշտության պայմանագիր չիզյա վեհաբեյու պայմանով, իսկ փաղափները հանձնվեցին այն պայմանով, որ նրանց տաճարներն ու եկեղեցիները, թե՛ փաղափ ներսում, թե՛ նրանից դուրս չպետք է փանդվեն...»<sup>1</sup>:

Մինչդեռ եկեղեցաշինության դեմ իշխանությունների արգելքի ընդունման պահից Արմինիայի բոլոր խոշոր քաղաքների կենտրոններում, հաճախակի հնադարյա քրիստոնեական տաճարների անմիջապես հարևանությամբ վեր սկսեցին բարձրանալ ճոխ զարդարված մայր մզկիթներ: Իրա մասին ստիպված են լինելու խոստովանել այն բոլոր արաբ ու պարսիկ աշխարհագիրներն ու ճանապարհորդները, որոնք ժ. դարում այցելելու են Արմինիայի տարածքում 886-ից հետո ձևավորված անկախ պետություններ: Ալ-Մուկադդասին (946/7- մոտ 1000) դրանցից մեկն էր, ով համոզվեց նմանատիպ մզկիթների առկայությանը: Նրա հեղինակած «Ալավագույն բաժանումները կլիմաների հանաչման համար» (أحسن التقاسيم في معرفة الأقاليم [Ահսան աթ-թակասիմ ֆի մա'արիֆաթ ալ-ակալիմ]) գրքում մենք հայտնաբերում ենք մայր մզկիթների մասին վկայություններ և՛ Ախլատում (Խլաթ), և՛ Դաբիլում (Դվիլ), և՛ Բարձա'այում (Պարտավ), և՛ ալ-Բաբում (Դերբենտ), և՛ Կաբալայում (Կապաղակ), և՛ Մալազկիրդում (Մանազկերտ), և՛ Շարվանում, և՛ Շաքքիում (Շաքի/Շաքէ)<sup>2</sup>:

Մենք բացարձակապես համոզված ենք, որ Արմինիայում իսլամական պաշտամունքային շինությունների նմանատիպ շինարարական եռուզեռը, ինչը նահանգի թվարկված քաղաքներում մահմեդական համայնքների ձևավորման բնական հետևանքն էր, պետք է որ սկսված լիներ 750-ին խալիֆայությունում՝ Աբբասյանների հարստության հաստատումից հետո: Ինչպես հայտնի է, նրանց օրոք էր, որ “դարձի եկած” էթնիկ ոչ-արաբ մահմեդականները այսուհետև լիովին իրենց իրավունքներով հավասարվում էին ի ծնե մահմեդական արաբներին և նույնիսկ կարող էին ընդգրկվել համամահմեդական կայսրության կառավարման համակարգում թե՛ կենտրոնում և թե՛ նրա ծայրամասերում: Իսլամացած հայերի նմանատիպ ընդգրկման թերևս ամենավառ օրինակն են ոմն Յահյա (մկրտված պետք է որ Յովհաննէս լիներ) ալ-Արմանիի երկու որդի-

<sup>1</sup> Abu Yusuf, p. 80: Թերևս միակ բացառությունն է տվյալ դեպքում «Պատմաբանությունում Ղևոնդեայ Մեծի վարդապետի Հայոց...» մեր կողմից նկատած «գկործանումն եկեղեցեաց» արտահայտությունը (տե՛ս՝ Ղևոնդ, էջ 749): Սակայն հետագա ենթատեքստից պարզ է դառնում, որ խոսքը այստեղ գնում է վերոհիշյալ Մունամադ իբն Մարվանի կողմից Այբարաթի Բագրեանդ գավառում սուրբ Գրիգոր վանական համալիրի ոչ թե փանդման, այլ թալանման ենթարկելու վերաբերյալ (տե՛ս՝ նույն տեղում, էջ 746-747):

<sup>2</sup> St u' المكنبة الجغرافية العربية – Biblioteca Geographorum Arabicorum (BGA), ed. M. de Goeje, I-VIII, Lugduni Batavorum, 1870-1894, pars III, p. 375-377:

ները և թողը Ասորական սահմանային գոտուց (արաբ. *ألتغور الشّامية* [աս-Սու-դուր աշ-Շամիյյա]): Ըստ ալ-Բալաձուրիի և այլ մահմեդական մատենագիրների՝ ալ-Յա'կուբիի (մահ. 897-ին) ու ատ-Տաբարիի (838-923), որդիներից մեկի անունն էր 'Ալի, ով 862-863 թթ. Արմինիայի և հարակից Աձարբայջան (Ատրպատական) նահանգի կառավարիչն էր, մյուսինը՝ Ահմադ, ով Ասորական սահմանային գոտում տեղակայված ամրույթյունների (արաբ. *عواصم* [‘Աուա-սիմ], եզ. *թ. عاصمة* [‘ասիմա]) կառավարիչն էր: Թոռան անունն էլ Մուհամմադ իբն 'Ալի էր, ով 872-ին արշավեց բյուզանդացիների դեմ<sup>1</sup>:

Ընդ որում, իսլամական կրոնը ոչ մի կերպ չէր խանգարում հայկական ծագումով արաբական վարչակազմի ներկայացուցիչներին կատարելու իրենց պաշտոնական պարտականությունները՝ հաշվի առնելով հայոց ազգային շահերը: Ինչպես վկայում է կաթողիկոս Յովհաննէս Ե Դրասխանակերտցին (898-929), «...Ալի արմանին... ըստ հրամանի ամիրապետին (խալիֆի – Ա. Շ.) իշխան իշխանացս Հայոց գնա՝ (Աշոտ Բագրատունուն – Ա. Շ.) կացուցանէր..., արքունական պատուով ճոխացուցեալ՝ ՚ի նա հաւատալով զսակս Հայոց և զամենայն բեկար արքունի»<sup>2</sup>:

Մինչդեռ այլադավանները, մասնավորապես քրիստոնյաները, հրեաներն ու զրադաշտականները, ի տարբերություն ի ծնե կամ «դարձի եկած» պետական կրոնի հետևորդների, շարունակում էին 'Աբբասյանների օրօք օժտված մնալ սահմանափակ իրավաբանական և քաղաքացիական իրավունքներով<sup>3</sup>: Հատկապես՝ նրանք պարտավոր էին մուծել ծանր գլխահարկը: Մահմեդական իրավագիտության դպրոցի հիմնադիրները Ը. դարի երկրորդ կեսին շիզյայի հարկելու կապակցությամբ իրենց տեսության պարզաբանումներում վկայակոչում էին ս. Դուրանի 9-րդ սուրայի հետևյալ 29-րդ այան. «Կովեցե'ֆ Գրֆի ժողովրդից այն մարդկանց դեմ, որոնք չեն հավատում Ալլահին, վերջին դատաստանի օրվան, արգելված չեն համարում այն, ինչ Ալլահը և Նրա մարգարեն են արգելել և չեն դավանում նշմարիտ կրոնը, մինչև որ իրենց ձեռքով և հնազանդ վիճակում վճարեն գլխահարկը»<sup>4</sup>:

Չնայած իսլամ ընդունելու դեպքում հարկային անձեռնմխելիությանը,

<sup>1</sup> Al-Beladsori, p. 246; جعفر بن وهب ابن واضح الكاتب العباسي المعروف باليعقوبي تاريخ احمد بن ابي يعقوب بن — Ibn Wadhīh qui dicitur al-Ja'qubi, *Historiae*, ed. M. Houtsma, 1-2, Lugduni Batavorum, 1883, t. 2, p. 606, 624; — تاريخ الرسل والملوك لابي جعفر محمد ابن جرير الطبري — *Annales quos scripsit Abu Djafar Mohammed ibn Djarir at-Tabari*, cum aliis ed. M. de Goeje, series I-III, Lugduni Batavorum, 1879-1901, ser. III, p. 1508, 1509:

<sup>2</sup> Յովհաննու Կաթողիկոսի Դրասխանակերտցու Պատմութիւն Հայոց, բնագրի հետ հմմտ. Ալ. Մարգարյան, քաղգ. և ծանոթագր. Գ. Թոսունյանի, Եր., Երևանի համալս. հրատ., 1996, էջ 136, 137:

<sup>3</sup> Դրա մասին տե՛ս՝ Илья Петрушевский, *Ислам в Иране в VII-XV вв.: Курс лекций*, 2-е изд., Санкт-Петербург, изд-во Санкт-Петербургского университета, 2007, с. 171:

<sup>4</sup> ١٩٠٧، طبع في مطبعة دومبر اوسكى، قازان. كلام شريف. قازان. — *Коран*, пер. с араб. яз. Г. Саблюкова, 3-е изд., Казань, Центральная Типография, 1907, с. 350 и 351:

նյութական վիճակի բարելավմանը, թվարկված արտոնությունների ու իրավունքների ձեռք բերմանը՝ մենք հիմք չունենք պնդելու թե՛ Աբբասյանների օրոք Արմինիայի քրիստոնյա բնակչությունը զանգվածաբար ընդունեց մարգարե Մուհամմադի (մոտ 570-632) կրոնական ուսմունքը, ինչպես դա տեղի ունեցավ, ասենք, Ասորիքի ու Եգիպտոսի՝ բյուզանդական նախկին այս պրովինցիաների քրիստոնյա մեծամասնության հետ, կամ էլ Իրանի ու Միջին Ասիայի զրադաշտական մեծամասնության հետ: Փոխարենը մահմեդական համայնքներ ձևավորվեցին Արմինիայի բոլոր խոշոր քաղաքներում: Դրա օգտին է անուղղակիորեն վկայում ո՛չ միայն ալ-Մուկադդասիի քաղաքների վերոհիշյալ ցուցակը ճոխ մայր մզկիթների առկայությամբ, այլև՝ ժ. դարի երկրորդ կեսին այս տարածաշրջանը այցելած ևս մեկ արաբ ճանապարհորդի՝ Իբն Հաուկալի գրանշումը. «Արմինիայում... կան մահմեդականներին պատկանող քաղաքներ, որոնք առ այսօր մնում են նրանց ձեռքում: Եթե հին ժամանակներում դրանք հայերի իշխանության տակ են եղել գլխահարկ վճարելու պայմանով, ապա՝ այժմ մահմեդական իշխողների ձեռքում են, ինչպես, (օրինակ – Ա. Շ.), Առջիշը, Մալազկիրդը կամ էլ Խիլատը»<sup>1</sup>:

Մահմեդական համայնքները Արմինիայում պետք է որ բաղկացած լինեին ո՛չ միայն արաբ վերաբնակիչներից, այլև Հայկական լեռնաշխարհի ու Հարավային Կովկասի երկրներում Մասանյանների (227-651) գերիշխանության օրոք հաստատված զրադաշտական պարսիկների ժառանգներից: Այդ կարծիքին ենք մենք հանգում, հիմնվելով ժ. դարի մահմեդական աշխարհագիրների ու ճանապարհորդների վկայությունների վրա առ այն, որ Արմինիայում տեղական (ազգային) լեզուներից ու պետական արաբերենից բացի լայն տարածում ունեն նոր պարսկերենը՝ Ֆարսին, որի կրողներն էին հանդիսանում մահմեդականացված պարսիկները: Ինչպես մոտ 930-ին ալ-Իստախրին էր գրում, հիմնվելով մեկ այլ հեղինակավոր իրանցու՝ ալ-Բալխիի (մոտ 850-934) ուղեւորների վրա՝ «Աձարբայջանի, Արմինիայի ու Առանի լեզուն (նոր. – Ա. Շ.) պարսկերենն է և արաբերենը, բացառությամբ Դաբիլի ու նրա շրջակայքի բնակչությունից, որը խոսում է հայերեն, իսկ Բարձա՝ այի շրջակայքում լեզուն առաներենն է»<sup>2</sup>: Իբն Հաուկալը հիշրայի 367 (977/8)-ին իր նախորդի հաղորդագրությանը ավելացնում է Արմինիայում կատարած իր սեփական դիտողությունները. «Աձարբայջանի և Արմինիայի բնակչության մեծամասնության լեզուն (նոր – Ա. Շ.) պարսկերենն է, որը ընդհանուր լեզու է (այստեղ – Ա. Շ.), սակայն արաբերենը ևս կիրառվում է նրանց միջև»<sup>3</sup>: Վերջապես, ալ-Մուկադդասին 985-ին գրելու է. «Արմինիայում խոսում են

<sup>1</sup> BGA, pars II, p. 245:

<sup>2</sup> *Op. cit.*, pars I, p. 192:

<sup>3</sup> *Op. cit.*, pars II, p. 250:

հայերեն, Առանում՝ առաներեն, իսկ նրանց խոսակցական պարսկերենը հասկանալի է ու հիշեցնում է խուրասանի բարբառն իր հնչյուններով»<sup>1</sup>:

Արմինիայում մահմեդական համայնքների համարման ևս մեկ աղբյուր էր հանդիսանում Արմինիյա Բ-ի բնիկ աղուանից բնակչությունը Ջախակողմյան Կուրի շրջաններում, հատկապես՝ Շիրվանում, Բաբ ալ-Աբվաբում և մասնակիորեն Շաքիում: Աղուանները ավելի ընկալունակ դուրս եկան նոր միաստվածյան կրոնին, քան Արմինիայի հայ կամ վրաց բնակչությունը: Դրան անկասկած նպաստեց մերձկասպյան շրջաններում մեր կողմից պարզած համեմատաբար ավելի մեծ թվով արաբական տարրի վերաբնակեցումը<sup>2</sup> և 799-ին Շիրվանշահերի, իսկ 869-ին՝ Բաբ ալ-Աբվաբի մահմեդական ինքնավար ամիրայությունների ձևավորումը:

Ահա թե ինչու է ալ-Մուկադդասի կողմից թվարկվող մայր մզկիթներ ունեցող Արմինիայի 8 քաղաքներից 4-ը տեղադրվում Ջախակողմյան Առանում: Հավանական է, նահանգի այս տարածաշրջանը նկատի ուներ նա, գրելիս՝ «Այս երկրամասում բարեհաճություն է զգացվում դեպի իսլամական կրոնը...»<sup>3</sup>: Շաքիի շրջանի բնիկ բնակչության մասնակի մահմեդականության օգտին են վկայում մեկ այլ արաբ ճանապարհորդ՝ ալ-Մաս՝ուդիի (մահ. 956-ին) հիշրայի 332 (943/4)-ին գրի առած խոսքերը. «Շաքիի բնակիչները քրիստոնեական դավանանքի ժողովուրդ են, որոնց մեջ սակայն զգալի թվով մահմեդականներ կան...»<sup>4</sup>: Եվ չնայած որ ալ-Մուկադդասին շուրջ չորս տասնամյակ անց կհավաստիացնի իր ընթերցողին առ այն, որ «Քրիստոնյաները այնտեղ՝ (Շաքիում – Ա. Շ.) մեծամասնություն են կազմում»<sup>5</sup>, «Պարսկական աշխարհագրության» (حدود العالم [Հուդուդ ալ-Ղլամ]) անանուն հեղինակը 982-ին պնդում էր, թե Շաքիի (Շաքիի) բնակչության շրջանում առկա են միայն մահմեդականներն ու հեթանոսները<sup>6</sup>:

Մեր բոլոր որոնումները ապարդյուն անցան գտնելու մահմեդական գրա-

<sup>1</sup> *Op. Cit.*, pars III, p. 378:

<sup>2</sup> Տե՛ս մանրամասնորեն՝ Արսեն Շահինյան, «Արաբական խալիֆայության ազգային (միգրացիոն) և կրոնական փառակալությունը Հայաստանում և Արմինիայում», *Էջմիածին*, 2007, փ, էջ 24-38; Арсен Шагинян, «Формирование новой этнической и конфессиональной карты Армянского и Южно-Кавказского нагорий при арабах», *Вестник Санкт-Петербургского университета*, сер. 2, История, 2012, вып. 2, с. 57-64:

<sup>3</sup> BGA, pars III, p. 373:

<sup>4</sup> Al-Mas'udi, *Les Prairies d'or*, texte et trad. par C. Barbier de Meynard et Pavet de Courteille, t. 1-9, Paris, *Collection d'ouvrages orientaux*, publiée par la Société Asiatique, 1861-1877, t. 2, p. 68:

<sup>5</sup> BGA, pars III, p. 376:

<sup>6</sup> حدود العالم – Худуд ал-‘Алам (Рукопись Туманского), изд. В. Бартольда, Ленинград, изд-во Академии наук СССР, 1930, с. 65 (L. 35a): Շաքիի բնակչության շրջանում հեթանոսների առկայության օգտին է խոսում նաև Ջուանշեր Ջուանշերիանին (*Картиис Цховреба*, т. 1, с. 243):

կանությունում Տիդիսի կենտրոնում, ինչպես ասենք, Դվինի կամ Պարտավի դեպքում էր, մայր մզկիթի շինարարության վերաբերյալ որևէ տեղեկություն: Միևնույն ժամանակ արևելագիտությանը վաղուց է հայտնի այն փաստը, որ վրաց պատմական քաղաքամայր կենտրոնով արաբական իշխանության օրոք ձևավորվել էր համանուն Թիֆլիսի ամիրայությունը: Ակնհայտ է, որ առանց համապատասխան մահմեդական համայնքի ձևավորման չէր կարող իրականություն դառնալ այդպիսի մահմեդական ժառանգական կառավարումը: Ավելին՝ ալ-Մաս'ուդին գրում է. «Թիֆլիսում մի մարդ կար Իսմակ իբն Իսմա'իլ (իբն Շու'այբ, 818-853 – Ա. Շ.) անունով: Մահմեդականների շրջանում իր նախկին կողմնակիցների օժանդակությամբ սա կարողացավ հնազանդեցնել շրջակայքում հաստատված (արաբական – Ա. Շ.) ցեղերը...»<sup>1</sup>:

Արմինիայում մահմեդական համայնքները համալրվում էին նաև արաբական վերաբնակեցված ցեղային ավագանու բնիկ հայ ազնվականության հետ խառնվելու հաշվին՝ հայուհիներին կնության առնելու միջոցով, այն ինչ իսլամի հետևորդներին ս. Գուրանը հաստատ չէր արգելում<sup>2</sup>:

Արմինիայի երեք անգամ կառավարած Յազիդ աւ-Սուլամիի (752-754, 759-764 և 775-780) հայրը, իրաքցի պատմիչ Խալիֆա իբն Խայյատի (776/7-854) տվյալներով, ամուսնացած էր աւ-Սիսաշան (Սյունեաց) տնից հիշրայի 84 (703/4)-ին գերեւարված իշխանադստեր հետ<sup>3</sup>: Ինչպես հետևում է ԺԳ. դարի վարդապետ Վարդան Բարձրբերդցու «Պատմութիւն տիեզերական» երկասիրությունից՝ Զահհաֆ աւ-Սուլամին կնության էր առել 774-775 թթ. Հակա-արաբական ապստամբության առաջնորդ՝ Մուշեղ Մամիկոնյանի դստերը<sup>4</sup>, իսկ նրա թոռ Սավադը, ըստ Յովհաննէս Դրասխանակերտցու՝ Բագրատունեաց տան Արուսեակ անունով իշխանադստերը<sup>5</sup>: Հայուհիներին կնության առնել գերադասում էր ոչ միայն աւ-Սուլամի ցեղային ավագանին: Բագրատունեաց տան ևս մեկ իշխանադուստր, ըստ Թովմա Արժրունու և աւ-Տաբարիի, կնության գնաց Արզան արաբական ամիրայության հիմնադիր Մուսա իբն Զուրարային (? - մոտ 852)<sup>6</sup>: Իսկ Արժրունեաց տան իշխանադուստրը, ինչպես

<sup>1</sup> Al-Mas'udi, t. 2, p. 65:

<sup>2</sup> Սուրբ Գուրանի 2-րդ սուրահի 220-րդ այսքը արգելում էր միայն մահմեդականներին կնության առնել հեթանոսների (Koran, c. 62–64 и 63–65):

<sup>3</sup> تاریخ خلیفة بن خيَّاط \ حقه و قدّم له اكرم ضياء العمرى. أُلجف، ١٣٨٦ – ١٣٨٧ / ٥١٩٦٧ م The History of Khalifah ibn Khayyat / Ed. by Akram Diya' al-Umari. Nagav, 1386–1387 A. H. / 1967 A. D. p. 291; հմմտ. նաև՝ al-Beladsori, p. 205:

<sup>4</sup> Մեծին Վարդանայ Բարձրբերդցույ Պատմութիւն տիեզերական, ի լոյս ընծ. Մ. Էմին, Մոսկվա, տպ. Լազարեան նեմարանի արեւելյան լեզուաց, 1861, էջ 105:

<sup>5</sup> Դրասխանակերտցի, էջ 116 և 117:

<sup>6</sup> Թովմա Արժրունի, էջ 176 և 177; at-Tabari, ser. III, p. 1408:



հետևում է Յովհաննէս Դրասխանակերտցու գրանշումից, կնության գնաց նրա ժառանգ որդուն՝ Աբու ալ-Մու 'իզզին (852- ?)<sup>1</sup>:

Նման խառը ամուսնություններից ծնված զավակները կրում էին բացառապես մահմեդական անուններ, քանզի դաստիարակվում էին իսլամական մշակույթում, ինչը պահանջվում էր ս. Աուրանով: Դրա վառ օրինակն է Արմինիայի վերոհիշյալ կառավարիչ Յազիդ աւ-Մուլամին, ում մայրը Սյունեաց իշխանական տնից էր: Ընդհանրապես, ինչ վերաբերում է այդ հայուհի մայրերին, ապա նրանք, հավանական է, չէին շտապում կրոնափոխվել: Համենայն դեպս, բոլոր մահմեդական ու հայ մատենագիրները, որոնց մոտ հայտնաբերում ենք խառը ամուսնությունների մասին բազմաթիվ այդպիսի տեղեկություններ, ոչինչ չեն գրում կնության գնացած հայ կանանց դավանափոխության վերաբերյալ: Ավելին՝ մեր տրամադրության տակ ունենք Յովհաննէս Դրասխանակերտցու մեկ վկայություն առ այն, որ Ալլամախրան, նույն ինքն է Աբու ալ-Մու 'իզզը, Արծրունեաց տան իշխանագաստեր հետ ամուսնանալուց հետո «...ի ծածուկ ունէր զհաւատս քրիստոնէութեան...»<sup>2</sup>:

Վերջապես՝ Արմինիայի մահմեդական համայնքները պետք է որ համարվեին քրիստոնյա ավագանու բռնի հավատափոխության հաշվին: Մեր տրամադրության տակ ունենք վարքագրական մի շարք վկայաբանություններ, որտեղ մանրամասնորեն նկարագրված են գերված իշխանների մարտիրոսությունները հանուն Քրիստոսի: Չնայած որ բովանդակությունը հայ և վրաց այս ժանրի գրականությունում միշտ չէ որ լիովին համապատասխանում է պատմական իրողությանը, սակայն նահատակության փաստերը շատ դեպքերում հաստատվում են պատմագրական սկզբնաղբյուրներում տեղ գտած գրանշումներով:

Արմինիայում առաջին մարտիրոսներից էին երկու ազնվական եղբայրներ Մանկիկն ու Միրդազատը Պարտավից, որոնց հայոց 160 (711/2)-ին սարսափելի տանջանքների ենթարկեց նահանգի կառավարիչ 'Աբդ ալ- 'Ազիզ իբն Հաթիմ իբն ան-Նու 'ման (ալ-Բահիլին, 706–717): Այս ողբերգական պատմությունը, որը ավարտվում է առաջին եղբոր մահապատժով (Միրդազատը իր կյանքը փրկեց՝ ընդունելով իսլամ), մասնակի անդրադառնում է ժ. դարի պատմիչ Մովսէս Դասխուրանցին «Պատմութիւն Աղուանից աշխարհի» Գ գրքի ժէ գլխում<sup>3</sup>: Առաջին նահատակներից էր թերևս Սյունեաց Գողթն գավառի տեր Խոսրովի որդին՝ Վահանը, ով գերի էր տարվել (աշ-)Շամ, այսինքն՝ Ասորիք,

<sup>1</sup> Դրասխանակերտցի, էջ 176 և 177:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 176:

<sup>3</sup> Մովսէսի Կաղանկատուացույ Պատմութիւն Աղուանից աշխարհի, Մատենագիրք Հայոց, հտր. ժե (ժ. դար), Անթիլիաս-Լիբանան, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւն, 2012, էջ 394-396:

հայոց 186 (737/8)-ին<sup>1</sup>: Իսկ այս ողբերգական պատմությանը անդրադարձ եղավ 744-ին Արտավազգ Երաշխավորացու «Պատմութիւն և վկայաբանութիւն Վահանայ Գողթնացոյ» վարքագրական ժանրի երկում<sup>2</sup>: Վրաց առաջին նահատակներից էր արդեն հիշատակված Ը. դարի երկրորդ կեսի իշխան Արշիլը: Սակայն այս ողբերգական պատմությանը անդրադառնում է միայն «վրաց պարմահայր» Աեոնտի Մրովելին ժԱ. դարի վերջում իր փոքրիկ վարքագրական ստեղծագործությունում «Սուրբ Արշիլի մատիռոսությունը» խորագրով<sup>3</sup>: Միևնույն ժամանակ դրա մասին շարադրում է Աեոնդ Երեցը, միայն թե առանց հիշատակելու նահատակի անունը: Փոխարենը նա թվագրում է մահապատիժը Մուսէ խալիֆի, նույն ինքն է Մուսա իբն ալ-Հադի (785-786), կարճաժամկետ կառավարման վերջում<sup>4</sup>: Բացի այդ՝ Աեոնդի վկայությանը, հազմը, նույն ինքը Խուզայմա իբն խազիմ աթ-Թամիմին՝ 785-786 թթ. Արմինիայի փոխկառավարիչը, հետապնդում էր Համազասպ, Սահակ և Մեհրուժան Արծրունիներին: Ավարտվեց նրա անօրենությունը հայոց 233-ի Աստվածահայտնության օրը (= 785-ի հունվարի 6-ին) առաջին երկու նախարարների մահապատժով: Մեհրուժան էլ փրկեց իր կյանքը՝ ընդունելով իսլամ<sup>5</sup>:

Եվ այս ամենը դեռ վերջը չէ: Թովմա Արծրունու վկայությանը՝ հայոց 302-ի ձմռանը (853-854 թթ. ձմռանը) Բուղա (ալ-Քաբիր աշ-Շարաբի, 852-855) կառավարիչը, ով ըմբոստացած Արմինիայում զբաղված էր, շարիաթի (արաբ. شريعة – բառացիորեն՝ «ճշմարիտ» կամ «ճիշտ ուղի») համաձայն, պատժիչ արշավանքներով, Դվինում մահվան դատապարտեց 150 խոռվարար նախարարների: Պատճառը մեկն էր՝ նրանք բոլորը ձերբակալվելուց հետո հրաժարվեցին իսլամ ընդունել<sup>6</sup>:

Մինչդեռ, նույնիսկ խոռվարարները կարող էին արժանանալ փրկության՝ անշուշտ միայն իսլամ ընդունելու պայմանով: Այս տեսության օգտին են խոսում Թ.Փ. դ.բ. բոլոր հայ պատմիչները: Բավական է հիշել Բուղայի կողմից 855-ին Խալիֆայության մայրաքաղաք Սամառա ապստամբությունը ճնշելուց հետո գերի տարված Արմինիայ Ա-ի և Բ-ի վերնախավի մեծաթիվ ներկայացու-

<sup>1</sup> Թովմա Արծրունի, էջ 390 և 391; Դրասխանակերտցի, էջ 102 և 103:

<sup>2</sup> Պատմութիւն և վկայաբանութիւն Վահանայ Գողթնացոյ, Մատենագիրք Հայոց, հտ. 9 (Ը դար), Անթիլիաս-Լիբանան, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւն, 2007, էջ 869-945:

<sup>3</sup> Карталис Цховреба, т. 1, с. 245–248:

<sup>4</sup> Աեոնդ, էջ 848:

<sup>5</sup> նույն տեղում, էջ 846-848:

<sup>6</sup> Մանրամասնորեն տե՛ս՝ Թովմա Արծրունի, էջ 260-268 և 261-269, հմտ. Դրասխանակերտցի, էջ 124-128 և 125-129: Այս նահատակների մեծ մասը վաղուց է Հայ Առաքելական եկեղեցու կողմից դասված սրբերի շարքը: Դեռ ժ.բ. դարի հայոց ֆանանա Սամվել Անեցին էր գրում, որ այդ նահատակների հշատակը եկեղեցին նշում է յուրաքանչյուր տարի մեկնական ամսվա 25-ին (Մամուէլի քահանայի Անեցոյ հաւաքմունք ի գրոց պատմագրաց, հրատ. Ա. Տէր-Միքելեան, Վաղարշապատ, տպ. Ս. Էջմիածնի, 1893, էջ 93:

ցիչներին: Հայ և մահմեդական մատենագիրները վկայությունների հիման վրա մեր կողմից վերականգնված ցուցակում ընդգրկված է 12 ազնվական անուն<sup>1</sup>:

Յովհաննէս Գրասխանակերտցու տվյալներով խալիֆը մայրաքաղաքում բոլորին առաջարկեց փրկագին՝ ընդունել իսլամ: Մի մասը համաձայնվեց և միայն հրաժարվողները դատապարտվեցին մահվան: Վերջիններիս թվում էր գահերէց իշխան և սպարապետ Սմբատ Բ Բագրատունին (851–855)<sup>2</sup>: Ավելին՝ փրկվածները հնարավորություն ստացան վերադառնալ հայրենիք, և եթե ԺԱ. դարի սկզբի պատմիչ Ասողիկին հավատանք, ապա երկու իշխաններից բացի, այդ թվում Սմբատ Բագրատունուց, մնացած բոլորը վերադարձան հայրենիք<sup>3</sup>: Հետևաբար, սրանք բոլորն էլ Սամառայում մահմեդականացան: Սակայն սրանց հետագա քաղաքական գործունեությունը հայրենիք վերադառնալուց հետո, ինչպես դա հետևում է Թ. դարի վերջի – ԺԱ. դարի սկզբի հայոց մատենագրքերից, Հայկական լեոնաշխարհում և Հարավային Կովկասում արաբական գերիշխանության ավարտի սկիզբը դարձավ<sup>4</sup>:

Եվ այսպես, իսլամը Արմինիայում գերիշխող դիրք զբաղեցրեց այն շրջաններում, որտեղ հզոր էր վերաբնակեցված արաբական տարրը, որը Թ. դարում հիմնեց ժառանգական ամիրայություններ, իսկ նահանգի մահմեդական ընդհանրությունը հիմնականում բաղկացած էր կամ Արաբիա թերակղզուց այստեղ ներգաղթածներից, կամ էլ իսլամն ընդունած տեղի պարսիկներից: Արմինիայի հիմնական բնիկ բնակչությունը, բացառությամբ մերձկասպյան շրջանների, շարունակում էր դավանել քրիստոնեություն: Եվ դա ստիպված էին խոստովանել Ժ. դարի մահմեդական ճանապարհորդները: Օրինակ, ալ-Իստախրու մոտ հետևյալն է գրված. «Արմինիայն... գտնվում է քրիստոնյա մեծամեծների ձեռքում, և սրանք են, որ գերակշռում են Արմինիայի բնակչության շրջանում»<sup>5</sup>: Գրեթե նույն խոսքերն ենք գտնում Իբն Հաուկալի մոտ. «Արմինիայում տիրապետող (կրոնը. – Ա. Շ.) քրիստոնեությունն է...»<sup>6</sup>:

<sup>1</sup> Դրա մասին մանրամասնորեն տե՛ս՝ **Арсен Шагинян**, «Последнее восстание в арабской провинции Арминийа (850-855 гг.)», *Вестник Санкт-Петербургского университета*, сер. 2, История, 2008, вып. 4, с. 108-117: Գերևարված քրիստոնյա իշխանների հետագա բաղաբնական գործունեությունը հայրենիք վերադառնալուց հետո խոսում է Սամառայում վկայության ամբողջ ձևականության օգտին: Մենք նկատի ունենք իսլամի հինգ հենասյուններից առաջինը և ամենագլխավորը առ այն, որ «Զկա՛ Ասոված Ալլահից բացի, և որ Մուհամմադը նրա առաքյալն է»:

<sup>2</sup> **Գրասխանակերտցի**, էջ 130-132 և 131-133:

<sup>3</sup> *Ստեփանոսի Տարօնեցույ Ասողկան Պատմութիւն տիեզերական*, աշխ. **Ս. Մալխասեանցի**, ՍՊԲ., ապ. Ի. Ն. Սկորոխոբովի, 1885, էջ 110:

<sup>4</sup> Դրա մասին մանրամասնորեն տե՛ս **Арсен Шагинян**, «Расформирование арабской провинции Арминийа во второй половине IX века», *Вестник Санкт-Петербургского университета*, сер. 2, История, 2009, вып. 2, с. 213-223:

<sup>5</sup> *BGA*, pars I, p. 188:

<sup>6</sup> *BGA*, pars II, p. 245:

**Arsen K. Shahinyan**  
**Islam in the Arab Armīniyā<sup>1</sup>**

At the beginning of the 8<sup>th</sup> century the lands of Greater Armenia as well as the lands of Caucasian Iberia (K‘art‘li) and Albania (Ałank‘) conquered by the Muslims were included into the administrative unit (Arab. vilayet) of the Arab Caliphate named Arminiya. In academic literature, it is accepted to write that at the early stage of the conquests the Arabs-Muslims were tolerant of other creeds. They really were, although in the 8<sup>th</sup> century it is impossible to find in Armenian or Georgian sources information about construction of new churches on the territory of Arminiya while the whole preceding period in Christian history of Armenia, Iberia and Albania (4<sup>th</sup>-7<sup>th</sup> centuries) was marked with a boom of building such religious facilities. Moreover, in the very centre of the largest cities of Arminiya, often in close proximity to an ancient church, cathedral mosques began to tower. This fact was acknowledged by Arab and Persian geographers and travelers of the 10<sup>th</sup> century who would visit this northern region.

The construction boom of building mosques in Arminiya was to begin after the ‘Abbasid dynasty came to power in the caliphate in 750. As is generally known, under the ‘Abbasids the process of Islamization of all the non-Muslim population of the caliphate moved faster, since henceforth neophyte Muslims were given the same rights at the Arabs-Muslims. They were not only exempted from paying a burdensome poll tax (Arab. jizyah), but also could be engaged into the management of the Pan-Islamic caliphate. In spite of essential privileges, it is impossible to speak of mass peaceful conversion of the population of Arminiya into the Islam, as was the case of the Christian population of neighboring Syria or the Zoroastrian population of neighboring Iran.

On the contrary, among Armenian and Georgian sources of the 8<sup>th</sup>–11<sup>th</sup> centuries, several martyrologies are known, in which a number of Christian princes of the vilayet of Arminiya were excruciated by Arab authorities for their refusal to adopt Islam. In fact the authors of such hagiographical writings set themselves the task of persuading their audience in the exceptional superiority of Christianity over Islam, so the contents of these works were not always in keeping with historical reality. But it does not mean that we have to deny completely the facts of

---

<sup>1</sup> The authors acknowledge Saint-Petersburg State University for a research grant 5.38.283.2014

forcible islamization of Armenian nobility described in such writings. Moreover, in historical Armenian literature at the turn of the 10<sup>th</sup> century, there are important evidences that in winter of 853-854, the Arab administration of Arminiya put 150 Armenian princes to death of martyrs for their refusal to adopt Islam, and the Armenian Church made a memorable date in connection with this national tragedy. In 855, dozens of mutinous princes from this Christian vilayet were exiled to the capital of the caliphate. Only a few people who agreed to renounce Christianity openly in favor of the new religion survived.

There also occurred cases of Islamization of the population through marriages between Arab and Armenian nobility. Most of such noblemen engaged in mixed marriages, were taking on Arabic names, often added to them epithet “al-Armani”.

## **ՌՈՒԲԵՆ ԱԹՈՅԱՆ, ԱՐՄԵՆ ԽԵՉՈՅԱՆ**

### **ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՔԱՐՏԵԶՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ**

Աշխարհագրական և պատմական շատ ատլասների անբաժան մասն են կազմում պատմական և մշակութային քարտեզները: Դրանք հրատարակվում են նաև առանձին թերթերով: Օգտագործելով ավանդական քարտեզագրական խորհրդանշաններ՝ պարզ (ուրվագծային) քարտեզ-հիմքի վրա սովորաբար նշվում են հնագիտության, ճարտարապետության, մշակույթի ու արվեստի օբյեկտները: Որպես կանոն՝ դրանք նշելու համար կիրառվում են երկրաչափական ոչ զուգորդական (ասոցիատիվ) նշաններ, այսինքն՝ նշաններ, որոնք արտաքուստ չեն հիշեցնում պատկերվող օբյեկտները: Այդ պատճառով էլ նման քարտեզները, որպես կանոն, միայն տեղեկատվության կրողներն են՝ չներկայացնելով որևէ գեղարվեստական արժեք:

Սույն աշխատանքում մենք ներկայացնում ենք պատմական և մշակութային քարտեզների՝ սկզբունքորեն նոր՝ տեղեկատվական-գեղարվեստական տիպի ստեղծման մեթոդիկան և տեխնոլոգիան՝ կատարված եռաչափ լանդշաֆտային երկրապատկերի հիման վրա: Այն ժամանակակից քարտեզագրության մեջ նոր և հեռանկարային ուղղություն է:

Հայկական պատմամշակութային ժառանգության օբյեկտների ներկայացումը քարտեզագրության ցանկացած ձևով ազգային քարտեզագրության կարևոր հայեցակետերից մեկն է: Կարծում ենք, որ նման քարտեզներ պետք է ստեղծվեն ոչ միայն Պատմական Հայաստանի, այլև Սփյուռքի համար: Արդեն գոյություն ունեցող քարտեզների դիտարկումը մատնանշում է, որ նման քարտեզների ստեղծման հարցում լիովին բացակայում է համակարգված մոտեցումը:

Հիշյալ տեսակի քարտեզ կազմելու ժամանակ պետք է ղեկավարվել որոշակի ցուցանիշներով, որոնք կկիրառվեն իմաստային բովանդակության և գեղարվեստական-գրաֆիկական կառուցման գծազրական պատկերի (սխեմայի) նկատմամբ: Նպատակի իրագործման համար անհրաժեշտ է ստեղծել հայկական պատմամշակութային ժառանգության ոչ թե մեկ, այլ մի ամբողջ շարք կադաստրային (գույքագրական) քարտեզներ՝ կիրառելով միասնական մեթոդիկա և տեխնոլոգիաներ, որոնք հիմնված կլինեն բովանդակության պատմական հայեցակետերի գիտական մոտեցման, աշխարհագրական հիմքի, օբյեկտների

ներկայացման գրաֆիկական տեխնիկայի և պայմանական նշանների կիրառվող համակարգի համալիր ներկայացման վրա:

Սույն աշխատանքում մենք ներկայացնում ենք 3 քարտեզներ՝ կատարված 2011-2014 թթ. հայկական քարտեզագրության զարգացման համատեքստում. այն «Անիվ» հայագիտական հետազոտությունների կենտրոնի գործունեության ուղղություններից մեկն է: Նախագծերի տեխնիկական և դրամական օժանդակությունն իրականացվել է ինչպես կենտրոնի կողմից, այնպես և հովանավորների միջոցով Ռուսաստանից, Հայաստանից և Բելառուսից:

Դրանք են.

– Երևանի կենտրոնական մասի պանորամային (համայնապատկերային) քարտեզ,

– Արցախի Հանրապետության քարտեզ,

– Ռեչ Պոսպոլիտայի (ներկայիս Ուկրաինայի, Լեհաստանի, Բելառուսի և Լիտվայի տարածքները) հողերում գտնվող հայկական գաղութների քարտեզ:

Քարտեզներից առաջինը՝ Երևանի կենտրոնական մասի պանորամային քարտեզը, հրատարակվել է 2013 թ. անգլերենով և ռուսերենով և 2 տարբերակով պաստառի և ծավվող քարտեզի տեսքով: Վերջինիս մեջ տրված է հիմնական դիտարժան վայրերի հակիրճ բնութագիր-տեքստը: Բովանդակությունը համապատասխանում է 2013 թ. աշնանը (տե՛ս ներդիր, նկ. 8): Առաջին անգամ նման աշխատանք ներկայացվել է 2001 թ. Հայաստանի Նկարչի տանը տեղի ունեցած ցուցահանդեսի ժամանակ:

Համայնապատկերի ստեղծման համար կատարվել է մի քանի փուլերով իրականացված համալիր աշխատանք՝ բաղկացած «դաշտային» և հավաքված նյութի վրա աշխատելու մասերից: Դաշտային փուլը գործնական տեսանկյունից ներառում էր քաղաքային թաղամասերի, այգիների, պուրակների, բնության օբյեկտների (ինչպես, օրինակ, Հրազդան և Գետառ գետերի ձորերը) մանրակրկիտ հետազոտություն, լուսա- և տեսանկարահանում, ինչպես նաև առանձին շենքերի հեղինակային բազմաթիվ էսքիզների ստեղծում: Համայնապատկերային քարտեզի բարձր ճշտության համար որպես հիմնական նյութ օգտագործվել է Երևանի կենտրոնական մասի տեղագրական հատակագիծը: Նախագծի երկրորդ մասը, այսինքն՝ աշխատանքը հեղինակային բնօրինակի վրա, իրականացվել է Մինսկում:

Արցախի պանորամային նկարագրող քարտեզը ստեղծվել է 2011-2012 թթ. (տե՛ս ներդիր, նկ. 9) և ներկայումս գտնվում է հրատարակման փուլում: Այն տարածաշրջանային քարտեզ է: Մեծ ուշադրություն է դարձվել բնության օբյեկտների՝ ռելիեֆի, ջրագրության և բուսածածկի պատկերմանը: Օգտագործվել են խորհրդային շրջանի 1:100000 մասշտաբի տեղագրական, ինչպես նաև 2007-2012 թթ. ԼՂՀ քարտեզները և ատլասները, Շ. Խաչատրյանի և Ս. Կարա-

պետյանի ուսումնասիրությունները: Քարտեզի վրա ցույց են տված բոլոր բնակավայրերը (ներառյալ Հյուսիսային Արցախը), հին գյուղատեղիները, վանքերն ու եկեղեցիները, գերեզմանները, խաչքարերը, ջրաղացների ավերակները և այլ օբյեկտներ: Այն լրացված է գեղանկարիչ-քարտեզագիր Ս. Աբրահամյանի ջրաներկ պատկերներով, այսինքն՝ քարտեզը, տեղեկատվական լինելուց բացի, ստացել է նաև գեղարվեստական ձևավորում:

Նախատեսվում է հրատարակել այն երկու տարբերակով՝ պաստառի և ծավիղ քարտեզի տեսքով: Վերջինիս հակառակ կողմում կլինեն 30 հիմնական ճարտարապետական հուշարձանների պատկերներ և դրանց վերաբերյալ տեքստեր:

Ոեչ Պոսպոլիտայի հողերում գտնվող հայկական գաղութների քարտեզը դեռևս գտնվում է նախահրատարակչական փուլում (տե՛ս ներդիր, նկ. 10): Այն ևս տարածաշրջանային քարտեզ է, սակայն այստեղ արդեն ներկայացվում է Արևելյան Եվրոպայի երկրների զգալի տարածքը: Յուցադրված է արդի աշխարհագրական իրադրությունը, ընդգծված են հայկական գաղութները (ավելի քան 70 բնակավայրեր), որոնք գոյություն են ունեցել անցյալում և ներկայումս: Նշված են վանքերն ու եկեղեցիները, դպրոցները, տպարանները, թանգարանները և այլն: Քարտեզը լրացված է հայկական մեծ գաղութներ ունեցող Վարշավայի, Լվովի, Կամենեց-Պոդոլսկու և Զամոստիեի համայնապատկերային ներդիրներով: Ներդիրների վրա ցուցադրված են հայկական պատմամշակութային օբյեկտները՝ տեսարաններ հայկական փողոցներից, հայերի տներ, եկեղեցիներ, խաչքարեր և այլն: Քարտեզը դարձավ 2010-2014 թթ. «Անիվ» հայագիտական հետազոտությունների կենտրոնի կազմակերպած գիտահետազոտական հինգ արշավների հանրագումարային արդյունքներից մեկը:

Մեր ներկայացրած քարտեզ-համայնապատկերները շատ քիչ են հիշեցնում սովորական քարտեզները, ըստ էության, դրանք իրենցից ներկայացնում են գեղարվեստական ստեղծագործություններ: Պանորամային լանդշաֆտային քարտեզներն այժմ ընդունված է անվանել եռաչափ քարտեզներ (3D): Ժամանակակից եռաչափ քարտեզների մշակումը հիմնված է գեղարվեստական ստեղծագործությունների սկզբունքով արված քարտեզ-համայնապատկերների ստեղծման միջնադարյան փորձի ուսումնասիրության վրա: Մինչև 20-րդ դ. վերջը նման քարտեզները ստեղծվել են ձեռքով: Հայկական պատմամշակութային ժառանգության քարտեզների շարքի համար առաջարկում ենք կիրառել ձեռքով և ավտոմատացված միջոցներով քարտեզների ստեղծման համատեղված տեխնոլոգիա:

Այն հիմնված է համակարգչի և վեկտորային գրաֆիկայի ծրագրերի (օրինակ՝ CorelDraw) միջոցով քարտեզի որոշ ֆոնային և շտրիխային տարրերի ավտոմատացված կառուցման, ինչպես նաև արդեն ձեռքով ստեղծված տեղանքի գեղանկարչական նախօրինակի վրա նկարատակի գրությունների ձևա-



վորման վրա: Լանդշաֆտի պանորամային պատկերով գեղանկարչական նախօրինակը ստեղծվում է գծային և օղային հեռանկարի կանոնների, ինչպես նաև ձևերի և ծավալների լուսաստվերային և գունային մոդելավորման հիման վրա: Գունային լուծումը քարտեզների ձևավորման ընթացքում հնարավորինս մոտեցված է բնական երանգներին: Վեկտորային ձևաչափում պատկերների ուրվագծերի ձևավորումը կատարվում է գծային և հարթակային օբյեկտների՝ ռաստրային հիմքով ձևաչափով շրջագծման և արտամասշտաբային պայմանական նշանների՝ ծրագրային գործիքներով կառուցման միջոցով: Այս տեսակի քարտեզների համար հատուկ մշակված պայմանական նշանները (գծվում են վեկտորային ձևաչափով) ակներև հիշեցնում են ոչ միայն պատկերվող օբյեկտները, այլ նաև հեշտ են կարգացվում (ճանաչելի են), նշանների գույնը մատնանշում է օբյեկտի որակական բնութագիրը: Օրինակ՝ վանքերն ու եկեղեցիները, կախված թե ինչ վիճակում են գտնվում, ընդգծվում են երեք տարբեր գույներով՝ սև (կանգուն, այդ թվում նաև վերականգնված), շագանակագույն (կիսաավերակ) և մոխրագույն (ավերակ):

Քարտեզների այդ շարքի ստեղծման հարցում էական բարդությունը քարտեզագրական, լուսանկարչական, տեքստային (պատմական փաստաթղթեր, գիտահետազոտական աշխատանքներ) սկզբնաղբյուրները հավաքելն և համակարգելն է: Մոտակա տարիներին մենք ծրագրում ենք ստեղծել այս շարքի քարտեզագրական հետևյալ ստեղծագործությունները՝ Հայաստանի Հանրապետություն, Հայկական լեռնաշխարհ, Կիլիկիա, հայկական գաղութները Հյուսիսային Բալկաններում (Ռումինիա, Հունգարիա և Բուլղարիա): Մույն և այլ քարտեզագրական նախագծերի թեմատիկայի քննարկմանը հրավիրվում են մասնակցելու հետազոտողներ և հովանավորներ տարբեր երկրներից: Մենք ողջունում ենք նաև դրամական օգնությունը կենտրոնի կողմից ստեղծվող քարտեզների հարցում:

Բացի քարտեզների վերոհիշյալ շարքից՝ «Անիվ» նախագծերի շրջանակներում նախագծային փուլում է նաև «Հայերը Բելառուսի համար վարած մարտերում, 1941-1944 թթ.» քարտեզը. Աշխատանքները կավարտվեն հաջորդ տարվա սկզբին:

### **Atoyan Ruben, Khechoyan Armen** **The Question of Creating Historical and Cultural Maps of the Armenian Heritage**

Historical and cultural maps are an integral part of many atlases and are published separately also. On a simple base map using traditional symbols, objects of archeology, architecture, culture, art etc. are usually displayed. It uses a perfectly simple and non-associative signs. Therefore,

these maps are the only sources of information, without any artistic value. In the present paper we propose the creation of new types of maps on the basis of landscape imagery. This a new direction in cartography.

The representation of Armenian historical and cultural heritage objects in any cartographic form is one of the most important aspects of national cartography. Maps of such items must be created for Armenian states as well as Diaspora. A review of printed maps indicates the absence of system approach. This kind of maps must follow definite meaning and art scheme. For this purpose it is necessary to create a complete range of cadastral maps of Armenian historical and cultural heritage by means of common techniques and methods with scientific approach to historical aspects, geographical base showing elements, technique of art performance, symbol systems.

The center for Armenological Studies «ANIV» in recent years initiated the creation of several maps, three of which we would like to represent here. The edition of two of them was financed by a private person, the third was published thanks to the assistance of the Foundation of Culture and Heritage of Polish Armenians with the Polish Ministry of Culture. This is the Panoramic Map of the Central part of Yerevan, Republic of Artsakh and the Map of the Armenian Colonies in the Lands of Polish-Lithuanian Commonwealth. In addition to the above series of maps in the cartographic projects of «ANIV», we also made a map of the Armenians in the battles for Belarus, 1941-1944.

Maps on the basis of landscape imagery are most spectacular, interesting and have artistic value. They can be created on geographical basis with a changeable scale characteristic of perspective panoramic maps. The thematic information of this group of maps uses both modern and historical objects. The difficulty of creating such kinds of maps depends on the need for various types of sources to be collected and systematized: cartographical, photo materials, texts, scientific works, historical documents.

A series of maps of the Armenian heritage is created by fusion technologies. The basis of landscape, where significant place is occupied by the relief, is handmade following the rules of linear perspective and color plastics, but the content of the map is created automatically using computer-based vector graphics programs. This is also a novelty in the technology of artistic maps.



## ԳԱՅԱՆԵ ՇԱԽԿՅԱՆ

### ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԶՆԿԱ ԵՎ ԷՐԶՐՈՒՄ ՔԱՂԱՔՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԵՐՄԱՆԱՅԻ ՈՒՂԵԳԻՐՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ XIX Գ.

XIX դ. գերմանացի բազմաթիվ ճանապարհորդներ և ուղեգիրներ, հետազոտություններ կատարելու նպատակով այցելել են ինչպես Արևելյան, այնպես էլ Արևմտյան Հայաստան: Այդ ժամանակաշրջանում Արևմտյան Հայաստանի գրեթե ամբողջ տարածքը գտնվում էր Օսմանյան կայսրության տիրապետության տակ: Հայ ժողովրդի տնտեսական և սոցիալական ծանր կացությունը տարիներ շարունակ գտնվում էր օտարազգի հեղինակների ուշադրության կենտրոնում:

Գերմանացի հեղինակներ և ուղեգիրներ էվալդ Բանսեն, Առմանդ Ֆրայհեռ ֆոն Շվայգեռ Լեռնենֆելդը, Համմեր Պուրգշթալլը, Հերման Աբիխը, Լեհման Հաուսթրը, Էդուարդ Նոլդեն, Ա. Ռիթթեռը և այլք բազմիցս եղել են Արևմտյան Հայաստանի տարբեր քաղաքներում և նահանգներում (գավառներում) իրենց տպավորությունների վերաբերյալ արժեքավոր աշխատություններ հեղինակելով Հայաստանի ու հայերի մասին:

Մեր հոգվածի շրջանակներում անդրադարձել ենք հատկապես Երզնկա և Էրզրում քաղաքներին: Երզնկա քաղաքը՝ դարեր շարունակ, դեռևս հեթանոսական ժամանակներից համարվելով Հայաստանի հոգևոր կենտրոններից մեկը, իսկ Էրզրումը, գտնվելով հարևան երկրների առևտրային տարանցիկ ճանապարհների խաչմերուկում և համարվելով արևելքից արևմուտք և հյուսիսից հարավ անցնող բոլոր ուղղությունների կենտրոնում՝ մշտապես հետաքրքրել է օտարազգի հեղինակներին: Էրզրումը Արևմտյան Հայաստանի ամենամեծ քաղաքն էր և աշխարհագրական բարեհաջող դիրքի պատճառով հանդիսանում էր կովախնձոր՝ հարևան տերությունների համար:

Այս երկու քաղաքներին՝ վերը նշված նշանակություններից բացի, մեր հոգվածի շրջանակներում փորձել ենք քննության առնել նաև դրանց ժողովրդագրական տեղաշարժերին վերաբերող որոշ մանրամասներ:

Էվալդ Բանսեն իր «Թուրքիա»<sup>1</sup> աշխատության մեջ Երզնկան անվանում է Էրզինճեան<sup>2</sup>՝ նշելով նաև, որ անտիկ շրջանում այն անվանել են նաև Ազիրիս<sup>3</sup>:

<sup>1</sup> Banse Ewald, *Die Türkei*, Berlin, 1919.

<sup>2</sup> Banse Ewald, էջ 204:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 204:

In an article titled *Ayspes kochvats nasionalizmi masin* (About the so called Nationalism), written in 1977 and published only posthumously in 1988, Mushegh Galshoyan (1933-1980) chastises Soviet Armenian leaders for having denied the Armenian people the knowledge and awareness of the greatest tragedy in their history. By doing that, Galshoyan maintains, they had denied the world the knowledge about this fateful event in the history of mankind. The first genocide of our century was turned into an Armenian Yeghern and kept under locks. Then, he adds, they hesitantly and fearfully pulled this fragment of Armenian past out from under the locks and organized a formal commemoration of the Mets Yeghern for the first time in April 24, 1965<sup>16</sup>.

---

<sup>15</sup> **Stepan Alajajyan's** *Champezri vra* (On the roadside), housing the novella *Pyunik*, is a compilation of the author's memoirs, notes, and reminiscences about his contemporary intellectuals and overall life in the trying years of the 60s in Soviet Armenia. The book was published in 1998 in Los Angeles.

<sup>16</sup> Galshoyan's article naturally remained under lock until it was eventually and posthumously published in *Garun*, 1988, no. 8. The article is cited in *Bagin*, 9/10, 91, pp. 110-123. The paraphrased quotation is from p. 111.



Significantly, while the political atmosphere in Soviet Armenia had become more permissive toward the Armenian past, it was still risky to talk about the years of Stalin's terror. From the thousands of exiled literati not many had returned, and those who returned after Stalin's death did not dare to speak out about their torturous life in the gulags, and if they wrote their memoirs, like Gurgen Mahari, Nayiri Zaryan, Suren Hovhannisyanyan, publication was denied. However, people knew about their existence and the overall content. The manuscripts went around and were read avidly. That was the Armenian Samizdat (самизда́т)<sup>17</sup>.

In this precarious period of fluctuating pressure and degree of censorship, Paruir Sevak's (1924-1971) *Anreli Zangakatun* (Unsilenced bell-tower, first published in 1959) was a daring venture. For the first time in Soviet Armenia, it captured in poetry of epic grandeur the horrors of the Armenian Genocide. The venture was also a pace setter.

Vardges Petrossyan's (1932-1994) *Haykakan Eskizner* (Armenian sketches, 1969), Sero Khantatyan's (1915-1998) *Mkhitar Sparapet* (Commander Mkhitar, 1961), and Vahagn Davtyan's (1922-1996) *Tondraketsiner* (Tondrakians, 1960) are brave explorations of the past, deliberations on the fate of the nation, and eulogies of the struggle for freedom. They prepared the ground for a renewed Armenian national character and identity.

The popularity of *Tondraketsiner* kept Vahagn Davtyan away from the suspicion and malice of the authorities. Collections of his poems were being published indiscriminately. In these poems he sang the love of his birthplace Kharbert, his homeland lost, his longing to shed his blood in the battle for the freedom of his homeland, so that his blood will mix with the tears of Aratsani River, the river running through his native land. Vahagn Davtyan traveled to Der-El-Zor in 1977, a sort of a pilgrimage to the site where the final liquidation of the remnants of the Armenian massacres took place. Deeply affected by the sights he encountered, he wrote his most famous poem, *Rekviem* (Requiem), which was published immediately.

**The era of relative freedom ended with Brejnev's rise to power** and his efforts to tie the loose ends of post-Stalin lenient policies. The mysterious deaths of Paruir Sevak in 1971, Minas Avedisyan in 1975,

---

<sup>17</sup> *Samizdat* (самизда́т) was an underground practice in Soviet Union in which dissident writers copied and disseminated materials and entire books censored by the regime or rejected for publication. Harsh punishment awaited those who were caught.

Mushegh Galshoyan in 1980, and still others were evidence to the renewed persecutions covertly underway. Even the concept of dissidencia had acquired a fluid meaning.

Arshak (Sergey Arshakyan) was an amateur writer, a dissident because he wrote about love of freedom, love of homeland, and childhood reminiscences of the persecutions of the Stalin era. As a young boy, his protagonist accompanied his mother to the party meetings every night, “as a shield and a protector”. Because, “if she didn’t go to these meetings, it would prove that she was an accomplice to my executed father and shared his enmity against the Leader [Stalin]. And they would take her too.... She took me along, so that, they would not take her temporarily—because she was very pretty—or for good, because she was my father’s wife”<sup>18</sup>. This novel and Arshak’s other works were published beginning from 1995.

**The wave of Perestroika (перестройка) and Glasnost (гласность)**<sup>19</sup> was late to hit Armenia. But when it did, the publication of rejected material, mostly reminiscences of the devastating years of Stalin’s rule of terror, proliferated. That was between the years 1988 and 1991. The works of older generation poets were also being pulled out of their coffins, the locked boxes in the archives, and were being published. Hovhannes Toumanian’s (1869-1923) *Hin krive* (The old battle) – where he had written that Russians came to rescue Armenians in the name of Christ and they thanked God to see the carnage and the Armenian lands devoid of Armenians – and *Verjin ore* (The last day), which was an ode to the military operations of the Armenian volunteer army in 1915, were unearthed and published. So was Avetik Isahakian’s (1875-1957) *Hayduki yenger* (Fedayee Songs)<sup>20</sup>.

State censorship in the period before Perestroika had been harsher in Armenia than in Russia itself as evidenced by the fate and relatively small quantity of the nonconformist writings in Armenia. It also took longer for the Armenian KGB to loosen its grip—if it ever did—on Armenian life. And then there was the self-inflicted censorship that pressed

---

<sup>18</sup> **Arshak**, *Gnchuhin* (The Gypsy woman), Yerevan: “Vark” Press, 1995, p. 20.

<sup>19</sup> Perestroika (перестройка) was a policy promulgated by Mikhail Gorbachev in 1980s and aimed at restructuring the Communist party and the Soviet system. It was concurrent with the policy of Glasnost (гласность) which suggested more openness and transparency in government affairs.

<sup>20</sup> Taken from **H. Ghanalanyan**’s article, *Yerku khosk* (Two words), published in *Hayastani Hanrapetutian*, April 2, 1991 and cited in *Bagin* 9-10/91, pp. 66-70.

heavily in the mind of every writer and poet; “Would they publish this? No, this is not publishable. They will once again reject my work. I need to make changes.”

In any event, there was no return. Perestroika had to come. The iron curtain separating Soviet Union from the world had been lifted. European trends and ideas kept penetrating in. The Armenian youth growing in the 70s and the 80s zealously read the Soviet dissident literature especially that of Aleksandr Solzhenitsyn (1918-2008). They inhaled the patriotic air of the Armenian Diaspora, and followed the road set forth by the more daring, rebellious souls. Henrik Edoyan (b. 1940), Armen Martirosyan (1943-2009), Davit Hovhannes (b. 1945), Hrachia Sarukhan (b. 1947), Hovhannes Grigoryan (1945-2013), Alvert Petrossyan (b. 1946), and others were able to forge the modern Soviet Armenian literature, which was not necessarily nationalistic but certainly national. They were not the propagandists of the Soviet official line, but modern nationalists who were able to absorb the new, the Western, the Diasporan-Armenian, and to create the spiritual atmosphere for a new national revival.

**In a way, the dissident generation of the 1965 had prepared with their writings the ground for the movement of 1988<sup>21</sup>**, which reached its apex in the wide spread demonstrations demanding the liberation of Karabagh from the grip of Azerbaijani despotism, discrimination, and persecution. The leaders of this movement were no other than the writers and poets of yesterday now turned into political activists.

Between the years 1988, the beginning of the Karabagh movement, and 1991, the birth of the independent Republic, Armenians suffered two major cataclysms. One was a natural disaster, the devastating earthquake of Spitak in the northern region of Soviet Armenia, the other was a man-made disaster, a small-scale repetition of the 1915 Genocide against the Armenians of Azerbaijan in places like Sumgayit, Baku, Ganja, and other Armenian towns and villages. Characteristically, the memory of the Genocide of 1915 came alive in the literary responses to both catastrophes. Examples are, Davit Hovhannes’s *Haverzhakan haye* (The eternal Armenian), Arevshat Avagyan’s (b. 1940) *Mite porzadasht e Hayastane* (Is

---

<sup>21</sup> It is important to note that dissidence or dissident literature does not have the same connotation in Armenia as in the rest of the Soviet Union. While the Moscow dissidents were in disagreement with the Communist regime, the Armenian dissident literature was national in spirit, rooted in history, connected to the past, stemming from the impact of the Armenian Genocide, the loss of life and homeland. It simply entertained forbidden subjects.

Armenia a testing ground?) and Maksim Hovhannisyan's *Artsakh im, tsav im* (My Artskh, my pain).

Many poets sang the courage of the new fedayees in the battle against the Azeri intruders. Having fallen victim to the Azeri atrocities, it was impossible not to remember the genocide committed by the Turks, the brothers of today's perpetrators. It was impossible to mourn the loss of Shahumian and Getashen and not to remember Mush and Van. Robert Karayan's *Shushva krvi vordik kajazun* (Brave sons of the battle of Shushi), *Hnik Yerger* (Little Old Songs), *Enkats kajordinerin* (To the fallen brave sons) and *Te yes enknem* (If I fall) manifest the parallel imagery between two tragedies that befell the Armenian nation 72 years apart.<sup>22</sup>

Ruzanna Asatryan's (b. 1948) *Shushi* (2003) is a narrative poem, over 450 lines, an ode to the liberation of Shushi, the jewel city of the old Armenian culture that was Turkified after Stalin granted the rule of Mountainous Karabagh to Azerbaijan. The poem depicts the heroic battle the new fedayees waged to accomplish that impossible mission. And the massacres of 1915 are in the background, popping up as a parallel situation, as a metaphor, as a source of historic interpretations. The memory of old fedayees of Western Armenia adorns the images of new bravery.<sup>23</sup>

The old yearning becomes a source of inspiration and finds a new outlet. Silva Kapoutikyan writes

I saw a dream. It was Van and Aigestan,

...

Three girls of the same age are whispering in secret.

Young and slim three girls like three sisters,

I realize suddenly its grandma, mother, and I.

...

It is war in Van, fires. The loud fanfare is calling.

Tired and miserable the three women carry bread to the battlefield,

Three women are walking hardly on the deportation route,

It seems they stop near the walls of Yerevan.

Do not ask. That's us again, grandma, mother, and I<sup>24</sup>.

The memory of the catastrophic events in her grandmother's birthplace is so vivid that Kapoutikyan sees herself caught within that tragedy.

<sup>22</sup> Robert Karayan, *Lusabatsnerin endharaj* (Welcoming the dawns), Los Angeles: Hayasa printing, 1999.

<sup>23</sup> Ruzanna Asatryan, *Shushi*, Yerevan: "Amaras" Publishing, 2003.

<sup>24</sup> Silva Kapoutikyan, *Hin karot* (Old Yearning) from *Echerpakgzrotsnerits*, p. 658.

She is a player in that tragedy as a young girl, a new bride participating in the self-defense of Van, and a wretched refugee behind the walls of Yerevan. Is it possible to live in a catastrophic event in the past just like the present without having been there? Elie Wiesel says, “Yes, one can live a thousand miles away from the Temple and see it burn. One can die in Auschwitz after Auschwitz”<sup>25</sup>.

Hovik Hoveyan’s (b. 1956) collection of poetry opens with a poem titled *Anapat* (Desert). He is there himself “in the orchard called Der-Zor” as a piece of bone turning into dust at the whim of the wind like thousand others. The wind is the only witness,

Arevshat Avagyan is the son of a survivor from Mokats Ashkharh. He is a continuation of his father’s hopes and dreams, and the seeds of historical memory are cultivated in his soul through the reminiscences of his childhood. He knows how to fly through time, through centuries of Armenian history for the sake of the future renewal. In the poem *Patgam* (Bidding), he admonishes the new generation to love the light of knowledge, their fellow human beings, and “Before everything else/And after everything else/Love your homeland which is red in your veins/Its sky that shines deep in your eyes/ And love the road to eternity/That continues through your feelings and your days”<sup>26</sup>.

Rafael Ghazanchyan (b. 1938) initiates the publication of the memoirs of his father, a Genocide survivor. In the introduction of the book he writes, “How is it possible not to see the enchanting images of lost horizons in the gazes of these eyewitnesses of the Catastrophe, not to feel their hope and aspiration to return to their homes? The silly preaching of some not to ‘dig up’ the past sounds totally absurd”<sup>27</sup>.

**The present Turkish-Armenian relation finds curious echoes in artistic literature.** Aghasi Ayvazyan’s (1925-2007) *Antun turke* (The homeless Turk) is an abstract comedy-tragedy that is rooted in an absolute reality in the past. In this imaginative interaction with the Turk, fate brings the Armenian and the Turkish wanderers together under a freeway overpass in Pasadena (USA), where the homeless hang out. The Armenian blames the Turk for the present dire situation: “You Turks, if you had not invaded Armenia from Central Asia, or wherever you came from

<sup>25</sup> Alan L. Berger & Naomi Berger, ed. *Second Generation Voices, Reflections by Children of Holocaust Survivors and Perpetrators*, Syracuse, NY: Syracuse University Press, 2001, “Introduction”, p.1.

<sup>26</sup> Arevshat Avagyan, *Hangrvanner* (Phases), Yerevan: Nor Dar Press, 2003, p. 107.

<sup>27</sup> Rafael Ghazanchyan, *Hayrakan tseragir* (Paternal manuscript), Yerevan, 2003, p. 3.

... if you had not driven my grandfather out of his home in Bitlis or Kars or wherever ... if you had not slaughtered the children and the old ... I could welcome you in my house in Bitlis or wherever. We could drink wine together.” Surprisingly, the Turk takes the blame and does not repudiate, but the outcome is fruitless. The rapprochement, despite the similar conditions and fate that drew the Armenian and the Turk together, does not go anywhere.<sup>28</sup>

Another example of such an innovative voice in literary responses to Genocide in Armenia is Henrik Edoyan’s call “Hey, Turkish Poets.” The author addresses the Turk, and, at the same time, he intimates the importance of the role of literati, in this case the Turkish intellectuals at the time of the Genocide. Edoyan believes that they could make a difference and prevent the atrocities. The first stanza sets the pattern:

If one of you, just one, had spoken up  
“Why kill this trembling child,  
his slaughtered parents were enough,”  
We might have raised a glass together  
if not a monument.

The poem continues in the same mood, reproaching Turkish poets for not speaking out when “innocent girls,” children, women, and old men, “the old gods who walked and toiled this land” were being killed, when “manuscripts [were] soaked in blood again.” And if they had taken sides and said, “Let’s not kill the genuine poets / at least not them.”/ You, too, could have been the real thing.” Turkish poets have remained silent, and their silence is deemed as complicity, unfitting a real artist, as Edoyan sees it.<sup>29</sup>

Davit Mouradyan’s novella *Hrazhesht* depicts life in Armenia in the 1950s, but the thread of memory extends far back in the past, the odyssey of the Gisakyan family of Kharbert, the hardship and loss of loved ones on the deportation route and in exile, and the continuing predicament under Stalin’s rule of terror in Soviet Armenia.

The horrors of the Stalin era continue to appear at least as a secondary theme in literature, as they are certainly a part of the childhood memory of the Armenian writer. Interwoven with that life is yet the memory of the distant past. Ruben Hovsepian’s (b. 1939) *Levon Pap* (Grandpa

---

<sup>28</sup> **Aghasi Ayvazyan**, *Antun turke* (The homeless Turk), *Nor Dar*, no 2 (1999), p. 58-60.

<sup>29</sup> **Henrik Edoyan**, “Hey, Turkish Poets,” trans. Diana Der Hovanesian, *RAFT* 6 (1992), p. 11.

Levon) has gone through lots of hardship in those years. His family history is an evidence of the lifestyle prescribed by the regime. Levon Pap is a sad witness to the disrupted ties with the old and the traditional. He tries to salvage something from the past by adopting an orphan from Mush, a boy who faced death, endured hardship, famine and cold on the road of deportation. “The snow in the valley of Mush is red now,”<sup>30</sup> Levon Pap struggles to revive the discarded and despised culture of Cochineal; for him that red worm is the symbol of national values trampled underfoot.

Aghasi Ayvazyan writes about his contemporary life in Yerevan, but the effects of the Genocide are in the background. “On New Year’s day in 1892 we were 27 of us.” Kirakos remembers, even though he was not born yet. “On New Year’s day in 1916 we were three. He [Kirakos’s father] celebrated the New Year alone in 1920 in our home in Yerevan. He was almost dead when they became two again. . . The second was my mother, another starving refugee, who stood on the threshold of my refugee father’s home and said “Happy New Year.”<sup>31</sup>

Today in the relatively free atmosphere of independent Armenia, one can suggest that all the basic components of a modern national literature are in place. The atmosphere is ripe for the rebirth of one national literature: the language, the soil, the presence of a common history and common destiny for almost three million people living in their homeland, sharing the same national identity. The rupture of historical memory is mended. The Turkish-Armenian restrained relationship, coupled with Azerbaijani-Armenian tension—continued Azeri assaults, belligerent declarations, distortion of history, and intimidations on the backdrop of recent bloody incidents—are a part of everyday life in Armenia. The memorial complex of Tsitsernakabert and the majestic duo of Sis and Masis that hover above the Yerevan landscape are constant reminders of the historical injustice.

There certainly seems to be a renewed interest to rediscover the past and deal with it. On top of it all is the continuing denial of the truth of the Armenian Genocide that challenges the minds, the sanity of sensitive souls and demands response, literary response as a catharsis, as a protest, and as a sanctuary of historical memory. This is the thread, the invisible

<sup>30</sup> **Ruben Hovsepyan**, *Yes tser hishoghutiunn em* (I am your memory), collection of short stories and novellas, Yerevan: A Publication of the Armenian Writers’ Union, 2003, cited from *Vordan Karmir* (Cochineal Red) novella, p. 30.

<sup>31</sup> **Aghasi Ayvazyan**, *Entir Erker* (Selected works), Yerevan: “Nairi, 2001, from the story *Kirakos*, p. 9.

thread of historical memory which may grow thinner with time but will never break, that is if we in the Diaspora and in Armenia hold it between our fingers and walk in its path.

### **Ռուբինա Փիրումեան**

#### **Յեղասպանութեան յիշողութիւնը խորհրդահայ գրականութեան մէջ**

Հայաստանի խորհրդայնացումով պարտադրուած նոր արժէքներն ու նորմերը ենթադրում էին նոր կենսաձև, նոր աշխարհայեացք ու պատմական յիշողութեան, եղեռնի յիշողութեան խախտում: Գրականութիւնը և ընդհանրապէս մշակութային ստեղծագործութիւնները պիտի ծառայէին պոռլետար դասակարգին ու նրա մէջ սերմանէին սովետական ինքնութիւն և անսակարկ հաւատարմութիւն դէպի խորհրդային մեծ հայրենիքը: Հայոց գրականութիւնը պիտի զարգանար կտրուած իր արմատներից ու աւանդոյթներից: Զեկոյցի նեղ սահմաններում փորձ է կատարուած վերծանելու այդ տարիներին գրականութեան մէջ արտացոլք գտած բայց արգելուած մօտիկ անցեալի յուշերն ու ազդեցութիւնը և յետագայի ազգայնական զեղումների և նոյնիսկ պահանջատիրութեան արտայայտութիւնները՝ ի հեճուկս խորհրդային ճնշող քաղաքականութեան և գրաքննութեան: Անդրադարձ է կատարուած նաև 1988-ի երկրաշարժի և Ազրբէյջանում հայութեան ջարդ ու կոտորածների առթած գրական ազդումներում եղեռնի յիշողութեան առկայութեանը և թէ եղեռնի թեման ինչպիսի արտացոլք է գտնում այսօրուայ հայ-թրքական պրկուած յարաբերութիւնների միջավայրում:





## ՎԱՐԴԱՆ ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

### «ՀԱՅԿՈ» ԹԱԼԷԱԹԻ ԱՀԱԲԵԿՈՒՄԻՆ ՎԵՐՋԻՆ ԱՆԾԱՆՈՒ ՄԱՍՆԱԿԻՅՈՒ

1920-1922 թուականներուն Հ. Յ. Գաշնակցութեան կողմէ ձեռնարկուած «Նեմեսիս» գործողութեան կեդրոնական դրուագը՝ Թալէաթ փաշայի սպանութիւնը, համեմատաբար լայն անդրադարձի արժանացած է: Այսուհանդերձ, ան կը կարօտի լրացուցիչ հետազօտութեան, ինչպէս եւ ամբողջ գործողութիւնը ընդհանրապէս: Սոյն յօդուածը կը միտի լուսաբանել Սողոմոն Թեհլիրեանի գործակիցներէն Հայկոյի ինքնութիւնը:

Արդարեւ, շորս անձեր կեղծանունով ներկայացուած են Թեհլիրեանի յուշերուն մէջ՝ Հրափ, Յազօր, Վազա եւ Հայկօ: Անոնք ուղղակի կրակի գիծին վրայ եղած են. մինչ Հրափը «խլուրդ»ի դիրքը ստանձնած էր Պերլինի թրքական շրջանակներու մէջ, միւս երեքը Գեկտեմբեր 1920 - Մարտ 1921-ին Թալէաթը բացայայտող հետաքննութիւնը կատարած են Թեհլիրեանի հետ: Կեղծանունները որդեգրուած էին ապահովութեան նկատառումներով. Գործակիցները ողջ էին, կամ վրիժառուն այդպէս կը կարծէր, յուշերու գրառումի թուականին՝ 1944-էն առաջ: Արդարեւ, Յազօր մահացած է 1942-ին, Հայկօ՝ 1957-ին, Հրափ՝ 1960-ին, իսկ Վազա՝ 1980-ին:

Կինտի Վ. Աւագեան՝ ահաբեկումին առաջին անգլերէն պատումին հեղինակը (1965), որ հիմնուած է Թեհլիրեանի յուշերուն վրայ, որեւէ յայտնութիւն չէ կատարած, բայց Հայկոյի անունը սխալմամբ գրած է Hago<sup>1</sup>: Նոյն տարին, Արշաիր Շիրակեանի յուշերը բացայայտած էին սուրիական հորհրդարանի եւ Հ. Յ. Գաշնակցութեան Բիւրոյի երբեմնի անդամ Հրաչ Փափագեանի (1892-1960) եւ Հրափի նոյնութիւնը<sup>2</sup>: Շիրակեանի երկին անգլերէն թարգմանութենէն այս նոյնացումը<sup>3</sup> հաւանաբար ժազ Տըռոժիի անցած է, որ, սակայն, ենթադրութիւն չէ ըրած միւս կեղծանուններուն մասին եւ նոյնիսկ երկու հատը սխալ արտագրած է Vazan եւ Hago<sup>4</sup>: Առանց յիշելու Հայկոն, Հրաչ Տասնապետեան 1988-ին նշած է, որ Յազօրը եւ Վազան կը թուէին ըլլալ Յ. Զօրեանը եւ Վահան Զաքարեանը, աւելցնելով Շահան Նաթալիի, Հրաչ Փափագեանի եւ Կիպարիտ Նա-

<sup>1</sup> Lindy V. Avakian, *The Cross and the Crescent*, Los Angeles, 1965, էջ 121-124:

<sup>2</sup> Արշաիր Շիրակեան, *Կտակն էր նահատակներուն*, Պէյրութ, 1965, էջ 205:

<sup>3</sup> Arshavir Shiragian, *The Legacy: Memoirs of an Armenian Patriot*, translated by Sonia Shiragian, Boston, 1976, էջ 120-121:

<sup>4</sup> Jacques Derogy, *Operation Némésis*, Paris, 1986, էջ 133-144:

զարեանցի անունները որպէս ահաբեկումին մասնակիցներ<sup>5</sup>: Կլարա Թերզեան, բոլորովին անկախաբար, հիմնուելով Շահան Նաթալիի, Պետրոս Յովհաննիսեանի եւ Լուսիկ Մելիք-Օհանջանեանի բանաւոր վկայութիւններուն վրայ, 1989-ին հրապարակած է ստալինեան բռնաճշտումներու զոհ պատմաբան Յակոբ Զօրեանի (1894-1942) Թեհլիրեանի գործակից եղած ըլլալը<sup>6</sup>, իսկ երկու տարի ետք արձագանգած՝ Տասնապետեանի վերոյիշեալ նշումներուն<sup>7</sup>: Առանց տեսած ըլլալու Տասնապետեանի հատորը, էտուրրա Ալեքսանտր 1991-ին նոյնացուցած է Յազօրն ու Յ. Զօրեանը՝ հիմնուելով Արմին Վեկների 1927-ի հայաստանեան ուղեգրութեան վրայ, եւ ենթադրած, որ Հրափր կրնար նոյնանալ Հրաչ Փափազեանին, իսկ Վազան՝ Թեհլիրեանի դատաւարութեան թարգմանիչներէն Վահան Զաքարեանցի հետ: Ալեքսանտր յիշած է Հայկոն, պարզապէս հետեւելով Թեհլիրեանի պատումին, առանց որեւէ վարկած առաջարկելու<sup>8</sup>:

Ինչպէս կը տեսնենք, հազուադէպ յիշատակումներէ անդին, Հայկոյի կերպարը մնացած է ստուերի մէջ<sup>9</sup>, իսկ ինքնութեան հարցը՝ հետազօտողներու տեսադաշտէն դուրս:

Թեհլիրեան Պերլին հասած է Դեկտեմբեր 1920-ի սկիզբին: Քանի մը օրուան

<sup>5</sup> **Hratch Dasnabedian**, *History of the Armenian Revolutionary Federation Dashnaktsutium 1890/1924*, translated by Bryan Fleming and Vahe Habeshian, Milan, 1990, էջ 157 (հայերէն բնագիրը լոյս տեսած է 1988ին): Այս ենթադրութիւնը արդէն որպէս փաստուած իրողութիւն յիշուած է յետագայ այլ հրատարակութիւններու մէջ (հմմտ. *Յուշամատեան Հայ Յեղափոխական Դաշնակցութեան. Ալպոմ-Ատլաս 1914-1925*, Բ. հատոր, Լոս Անճելըս, 2001, էջ 214, **Ռոմիկ Յովնանեան**, «Նեմեսիսը» գործողութեան մէջ, Եր., 2013, էջ 33):

<sup>6</sup> **Կլարա Թերզեան**, «Հին ու նոր օրերի հետ», *Վերածնունտ Հայաստան*, 3, 1989, էջ 20-23:

<sup>7</sup> **Կլարա Թերզեան**, «Ովկե՞ր էին Թեհլիրեանի կողմին», *Ազատամարտ*, 19-26 Դեկտեմբեր 1991: Հմմտ. **Aram P. Aivazian**, *Armenia: Usurped by Genocide and Treachery*, Montreal, 1992, էջ 23: Զօրեանի մասին, տե՛ս նաեւ **Մերի Քեշիշեան**, «Նեմեսիսի զինուորը՝ Յակոբ Զօրեան», *Հայ գինուոր*, 23-29 Մայիս, 2013:

<sup>8</sup> **Edward Alexander**, *A Crime of Vengeance: An Armenian Struggle for Justice*, New York, 1991, p. 51-53: 2012ի իր մագիստրոսական աստիճանադիւն մէջ, Օսիկ Մոսէս հետեւած է Ալեքսանտրի նոյնացումներուն (վկայակոչելով նաեւ Տասնապետեանը), բայց սխալմամբ ըսած է, անտեսելով Հայկոն, թէ Թեհլիրեան յիշած է իր գործակիցներէն երեքը (**Osik Moses**, “The Assassination of Talaat Pascha in 1921 in Berlin a Case Study of Judicial Practices in the Weimar Republic”, M.A. thesis in History, California State University, Northridge, 2012, pp. 25-26):

<sup>9</sup> 2012-ին, «Նեմեսիս» գործողութեան 90-ամեակի պէտքերէն ոգեկոչումին, գլխաւոր բանախօսը՝ լիբանանեան Խորհրդարանի երեսփոխան Յակոբ Բագրատունի, նշած է, թէ Մեծ եղեռնի զոհ մայրերուն «գաւակներն էին՝ Հրաչ Փափազեան, Լիպարիտ Նազարեանց, Շահան Նաթալի, Վահան Զաքարեան, Մերհանօֆ, Յազօր, Յարութիւն Յարութիւնեան, Երուանդ Յնարեան եւ Արշակ Մուշեղեան, որոնք ծագեցին ու պատրաստեցին ոճրագործներուն անաբեկումը» («Նեմեսիս»-ի գործողութեան 90-ամեակին նուիրուած ձեռնարկին երեսփոխան Յակոբ Բագրատունիի արտասանած խօսքը», *Ազգակ*, 30 Մարտ 2012): Նկատելի է, որ Յակոբ Զօրեանը միայն յիշուած է իր կեղծանունով, իսկ «Հայկո»ն ընդհանրապէս բացակայ է երեսփոխան ամբողջական այս թուարկումէն:

հետաքննութենէ ետք, «ներս մտաւ Յազօրը երկու նոր ընկերների հետ: Դրանցից մէկը Վազան՝ միջինից քիչ բարձր, նիհարակազմ մի երիտասարդ էր, սեփսեւ մազերը խնամքով յետ սանտրած, խօսում էր ծանր, հանդարտ, առանց աւելորդաբանութիւնների, ժուժկալ նախադասութիւններով: Դէմքը խոհուն արտայայտութիւն էր, մանաւանդ խելօք աչքերը: Միւսը՝ Հայկոն ուսանող էր. ձուռածէ, համակրելի դէմքի փայլն էր սիրուն ժպիտը, զուսպ արտաքինի տակ ծածկուած էր պայծառ, մաքուր ու զարմանալիօրէն ընկերասէր հոգի: Երկուսն էլ իրազեկ էին խնդրին»<sup>10</sup>:

Երկու ամսուան հետաքննական տքնաջան աշխատանքը տակաւին չէր յաջողած Թալէաթի հետքը բացայայտել Պերլինի մէջ, երբ «նոր մարդ» մը կը յայտնուէր Փետրուար 1921-ի վերջերուն, որ, Թեհլիրեանի համոզումով, իր փնտռած թիրախը պէտք է ըլլար: Երկար վիճաբանութեան ընթացքին, Հայկօ առաջարկած է Հարթթենպէրկ փողոցի բնակիչներուն ինքնութիւնը պարզել՝ Թաղամասի գրանցման բաժնին դիմելով: Այդ առիթով, Վազա տուած է իր գործընկերոջ հակիրճ բնորոշումը. «Հայկոն թէեւ խառնուածքով բանաստեղծ է, բայց խօսում է գիտնականի պէս»<sup>11</sup>: Ինչպէս յայտնի է Թեհլիրեանի յուշերէն, Յազօրը, Վազան եւ Հայկոն շարունակած են իրենց գործակցութիւնը մինչեւ Թալէաթի աճաբեկումը՝ 15 Մարտ 1921-ին:

1919-1934-ին Աւետիք Իսահակեան եօթը նամակներ գրած է Վահան Զաքարեանին, որուն, ինչպէս եւ նամակներէն շորսին մէջ յիշուած Հայկին ինքնութիւնը անձանօթ մնացած է բանաստեղծին նամականիին հրատարակիչներուն: 1919-ի վերջերուն, «Հայկ»-ը պարտադրուած էր մեկնիլ Հանրապետութեան Պատուիրակութեան կեդրոնը՝ Փարիզ: ժընեւէն ուղղուած Նոյեմբեր 26, 1919-ի նամակին մէջ, Իսահակեանը նշած է «Բերլինում պարապ քաշ գալով, աննպատակ երեք ամիս, չյաջողած միսիոնովս, եւ Հայկի շուրջը կատարուած անսխորժ պատմութիւնով»<sup>12</sup>, եւ, առանց լուսաբանելու այս խորհրդաւոր տողը,

<sup>10</sup> Սողոմոն Թեհլիրեան, *Վերջիշումներ*, Գանիրէ, 1953, էջ 260-262:

<sup>11</sup> Տե՛ս նոյն տեղը, էջ 282-283:

<sup>12</sup> Յայտնի չէ, թէ Իսահակեան ի՞նչ առաւելութեամբ Պերլին գացած է: Սակայն, կրնայ կապ ունենալ նոյն նամակին մէջ յիշուած այն փաստին հետ, որ «Բերլինի գագանը, հրէշը մի քանի օրով եկած է եղել Զփցերիա. մինչեւ իմացանք, արդէն վերադարձել էր նորից Բերլին. (...) նոյն անունով էր եկել, ինչ որ ունէր Բերլին» (Գրականութեան եւ Արուեստի Թանգարան (ԳԱԹ), Աւետիք Իսահակեանի ֆոնտ, I բաժին, թ. 225: Տե՛ս նաեւ Աւետիք Իսահակեան, *Երկերի ժողովածու*, հատոր 6, Եր., 1979, էջ 174-175): Հնարատը է, որ խօսքը Թալէաթի մասին է. Հոկտեմբեր 1919-ին կը տեղեկագրէր, թէ զփցերիական իշխանութիւնները մերժած էին Թալէաթի ու ճեմալի մուտքը՝ Լօզան երթալու նպատակով, մինչ ճախտ արդէն ազդարարուած էր Զփցերիան ձգելու մասին, իսկ Իսմայիլ Հազգը արդէն լքած էր երկիրը. մերժած էին. «Բոլոր այս անցանկալիները պիտի կեդրոնանան Գերմանիոյ մէջ, եւ պիտի բաւականանա դրամ եւ հրահանգներ դրկելով իրենց ներկայացուցիչներուն մեր երկրին մէջ» («Nos indésirables», *Gazette de Lausanne*, 7 octobre 1919):

աւելցուցած. «Գալով Հայկին, նա Փարիզում արդարացրել էր իրեն, եւ կարծեմ չի ուզում Բերլին դառնալ. լսեցի, որ պահանջում են, որ դր. Գրենֆիլդը փաստական մեղադրանքը ուղարկի Փարիզ»<sup>13</sup>:

Իսահակեանի յաջորդ՝ Դեկտեմբեր 30, 1919-ի նամակը, պարզած է իր անվստահութիւնը Հայկի նկատմամբ<sup>14</sup>, թէեւ մանրամասնութիւնները չէ լուսաբանած. «Ինչքան էլ որ այդտեղ փորձեր կատարեն Հայկին արդարացնելու կիանողովի գործին մէջ, ես համոզւած եմ նրա շանտաժի մէջ, եւ համոզմունքս չեմ կարող փոխել. ես ո՛չ տիկ. կիանողովի պէս շանսօնէտկայ եմ եղել Բագուի կաֆէ-շանտանում, եւ ոչ էլ Գրենֆիլդի պէս վախկոտ, զգոյշ, խորամանկ, կեղծաւոր»<sup>15</sup>:

Սակայն, Իսահակեանի կասկածները չեն հիմնաւորուած. Հայկը յաջողած է լուսաբանել հարցը եւ վերադառնալ Պերլին: Այլապէս, 1920-1921-ին ան «Նեմեսիս» գործողութեան մասնակից պիտի չդառնար՝ «Հայկօ» կեղծանունով: Հայաստանի առաջին Հանրապետութեան Պոստոնի արխիւը քննած հազուագիւտ գիտնականներէն մէկուն՝ Ռիչըրտ Յովհաննէսեանի շնորհիւ գիտենք, որ ՀՀ Պերլինի ներկայացուցիչ գոկտ. Զէյմա Գրինֆիլդն (1873-1939)<sup>16</sup> ու իր օգնականը՝ Հայկ Տէր-Օհանեան, 1919-ին աշխատած են հայ ռազմագերիներ յայտնաբերել եւ անոնցմէ հազարեակ մը Հայաստան վերադարձը ապահովել՝ գերմանական կառավարութեան ծախսով: Տէր-Օհանեանի դէմ եղած վերոյիշեալ մեղադրանքներուն չհիմնաւորուած բնոյթին որպէս լրացուցիչ փաստարկ պէտք է մատնանշել, որ, այլապէս, 1920-ին ան պիտի չդառնար Հանրապետութեան ներկայացուցչութեան մամլոյ գրասենեակի վարիչը, Զաքարեանի կողքին, որ տնտեսական խորհրդական էր<sup>17</sup>:

<sup>13</sup> ԳԱԹ, Ա. Իսահակեանի ֆոնտ, I բաժին, ք. 225: Տե՛ս **Իսահակեան**, *Երկերի ժողովածու*, էջ 175:

<sup>14</sup> Ան մերժած է դրամ ուղարկել «մեր ծանօթ գործին» համար, «որովհետեւ Հայկի վրայ ո՛չ մի վստահութիւն չունեմ, իսկ դու մենակ չես կարող բան անել» (ԳԱԹ, Ա. Իսահակեանի ֆոնտ, I բաժին, 224. տե՛ս նաեւ **Իսահակեան**, *Երկերի ժողովածու*, էջ 177):

<sup>15</sup> ԳԱԹ, Ա. Իսահակեանի ֆոնտ, I բաժին, ք. 224 (տե՛ս նաեւ **Իսահակեան**, *Երկերի ժողովածու*, էջ 177): Տիկ. կիանողովը հաւանաբար կիմն էր Պաֆուի ֆարիտի մեծատուններէն Ստեփան կիանողովի՝ «ռուսական Ռոֆէֆելերը» (**John Reed**, *Ten Days that Shook the World*, New York, 1919, էջ 7), որ 1919-ին զօրավար Նիֆոլայ Եուտենիչի ստեղծած հակաբոլշեակեան կարճատեւ «Հիւսիսարեւմտեան Կառավարութեան» գլուխը կը գտնուէր (**Igor S. Zonn, Andrei Kostianoy, Aleksey Kosarev, and Michael Glantz**, *The Caspian Sea Encyclopedia*, New York and Heidelberg, 2010, էջ 272):

<sup>16</sup> Գրինֆիլդը՝ իրաւագիտութեան դոկտոր Թիւպինկէնի համալսարանէն (Գերմանիա), գերմանացի հօր եւ թաւրիզահայ մօր զաւակ էր: Անոր մասին, տե՛ս **Գրիգոր Եպո. Զիֆթեան**, «Քարեգործ Այգլի Գրինֆիլդի ծոռը ցանկանում է այցի գալ իր պապի շիրիմին՝ Մարալանի այգում», *Ալիք*, 4 Սեպտեմբեր 2014:

<sup>17</sup> **Richard G. Hovannisian**, *The Republic of Armenia*, vol. III: From London to Sèvres, February-August 1920, Berkeley-Los Angeles-London, 1996, էջ 386-387:

Մեր նոյնացումը կը հիմնաւորուի նաեւ այն իրողութեամբ, որ ցարդ վեր-  
ծանուած երեք կեղծանունները կազմուած են անուններու ու մականուններու  
սկզբնատառերու կցումով՝ Հրա-փ, Յա-գօր, Վա-զա: Տրամաբանական է, որ  
նոյն սկզբունքը պահպանուած ըլլայ «Հայկո»-յի պարագային, փոխանակ փա-  
ղաքական ձեւ մը (հմմտ. «Պերճօ», «Սերժօ») որդեգրուած ըլլալու: Ամենէն  
հաւանական տարբերակը Հայկ-օթ, իսկ ամենահաւանական թեկնածուն՝ Հ.  
Տէր-Օհանեանը:

Վահան Զաքարեան (Թաւրիզ, 1883 - Պերլին, 1980) ու Հայկ Տէր-Օհանեան  
ծնունդով պարսկահայ էին ու տարեկից, պարսկական յեղափոխութեան ժամա-  
նակակիցներ<sup>18</sup>, մօտաւորապէս միեւնոյն ատեն Իրանը ձգած եւ այնուհետեւ՝  
Պերլին եկած,<sup>19</sup> ուր կ'աշխատէին միեւնոյն վայրին մէջ: Այս բոլորը կ'ենթադրէ  
ո՛չ միայն կուսակցական բնոյթի, այլ նաեւ՝ անձնական ընկերական յարաբերու-  
թիւններ: Ահա թէ ինչու անոնք միասնաբար Թէհրանին ներկայացուած են  
Յակոբ Զօրեանի կողմէ:

Հայկ Տէր-Օհանեան ծնած է Ռաշտ, Պարսկաստան, 10 նոյեմբեր 1883-ին<sup>20</sup>:  
Հայրը՝ Աստուածատուր Տէր Յովհանեանց (աւելի ուշ՝ Ասատուր Տէր Օհանեան)  
բարեկեցիկ դիրք ունէր եւ տեղւոյն Ս. Մեսրոպ հայկական եկեղեցւոյ հոգաբար-  
ձուութեան երկարամեայ հաշուապահն էր: Եկեղեցւոյ շինութեան (շինուած  
1888-ին ու հրոյ ճարակ՝ 1920-ին) անհրաժեշտ գումարին մօտ տասը առ հա-  
րիւրը փոխ տուած էր, ու այդ գումարին կէսը նուիրած էր 1891-ին<sup>21</sup>: Ան իր  
զաւակը Պաքու ղրկած է՝ ռուսական գիմնազիայի մէջ ուսումը շարունակելու:

1902-ի վերջերուն կամ 1903-ի սկիզբին կայացած հայ աշակերտութեան  
համաժողովին խմբուած 30-40 պատուիրակները ընտրած են աշակերտական  
խորհուրդ մը, մեծաւ մասամբ՝ Դաշնակցութեան ազդեցութեան տակ, որուն  
անդամներէն մէկը Հ. Տէր-Օհանեանն էր: Կուսակցութեան կազմակերպած աշա-

<sup>18</sup> Զաֆարեանց Ատրպատականի կողմէ ներկայացուցիչ էր Հ. Յ. Դաշնակցութեան Գ. (1907)  
եւ Ե. Ընդհանուր ժողովներուն (1910) (Անդրէ Ամուրեան (խմբ.), Հ. Յ. Դաշնակցութիւն –  
Երբեմ – Պարսկական Սահմանադրութիւն, Ա. հատոր, Թեհրան, 1976, էջ 1 եւ 263):

<sup>19</sup> Զաֆարեան Գերմանա-Հայկական Ընկերութեան հիմնադիր անդամներէն մէկը եղած է  
Յունիս 1914-ին: Ա. Աշխարհամարտի սկիզբէն Պերլինի պարսկական հիւպատոսարանի  
պաշտօնէտայ էր (Թէհրան արգարահատոյցը, Պէյրութ, 1981, էջ 153):

<sup>20</sup> «Հոլովրախի», տե՛ս **Կարօ Գէորգեան**, *Ամէնուն տարեգիրքը*, Պէյրութ, 1959, էջ 590: Ըստ ու-  
րիշ մանախօսականի մը, ծնած է Թաւրիզ («Հայկ Օհանեան», *Յառաջ*, 6 նոյեմբեր 1957):  
Յիւրիսի համալսարանի տուեալներով, ծնած է Թաւրիզ, 6 Օգոստոս 1882-ին («Matrike-  
ledition der Universität Zürich, 1833-1924», [www.matrikel.uzh.ch/pages/753.htm](http://www.matrikel.uzh.ch/pages/753.htm), ըն-  
թերցուած 16 Հոկտեմբեր 2009-ին): Սակայն, Ատրպատականի հայոց թեմի առաջնորդա-  
րանը (Թաւրիզ) անոր ծննդեան արձանագրութիւն չունի (**Գրիգոր Եպս. Զիթֆելեան**, իմակ, 7  
Փետրուար 2014):

<sup>21</sup> **Ա. Մախապետեան**, «Հայերը Գիլանի մէջ եւ Ռաշտի հայոց եկեղեցին», *Հայրենիք*, Փետ-  
րուար, 1940, էջ 114-120:

կերտական խումբերուն մաս կը կազմէր նաեւ 15-16 տարեկան Սոֆիա Փիրբուդաղեանը<sup>22</sup>: Անոնք հանդիպած ու, հաւանաբար 1903-ին կամ 1904-ին, նշանուած են: Շրջանաւարտ ըլլալէ ետք, 1903-ի ամրան Տէր Օհանեան մեկնած է Եւրոպա ուսումը շարունակելու, նախ՝ Ֆրիպուրկի համալսարանը (Գերմանիա), ապա՝ Յիւրիխի համալսարանի (Զուիցերիա) փիլիսոփայութեան, պատմութեան եւ գրականութեան դպրոցը, զոր լքած է Յունիս 1905-ին<sup>23</sup>:

Մինչ այդ, Տէր Օհանեանի նշանածը հազիւ ազատած էր Փետրուար 1905-ի Պաքուի թաթարական շարդերէն<sup>24</sup>: Նոյն տարին, անոնք ամուսնացած են ու Ռաշտ փոխադրուած, բայց ամուսնութիւնը հազիւ քանի մը ամիս տեւած է: Բաժանումին ամենէն հաւանական պատճառը տողընդմէջ գրուած է Սոֆիայի կողմէ. նորապսակ ամուսինը՝ հակառակ զայն սիրելուն, լքած է՝ «Թուրքիոյ սահմանը» երթալու, որովհետեւ չբացայայտուած, «սրբազան առաքելութիւն մը» ունէր կատարելիք<sup>25</sup>: Արդարեւ, Հայկ Տէր Օհանեան Պարսկաստանէն դէպի Կովկաս գէնքերու գաղտնի փոխադրութեան ղեկավարներէն մէկը եղած է, 1906-1907-ի հայ-թաթարական կռիւներուն ընթացքին<sup>26</sup>:

Մինչ այդ, Սոֆիա Տէր Օհանեան վերադարձած էր Կովկաս եւ Օգոստոս 1906-ին ծնունդ տուած իրենց աղջկան՝ Նորային, Կիսլովոդսկի մէջ<sup>27</sup>: 1906-1908-ին ան խաղացած է Պաքուի հայ բեմին վրայ եւ ապա Մոսկուա մեկնած՝ թատրոն ուսանելու նպատակով, սակայն հոն գտած է իր բուն կոչումը՝ պարը: 1909ին դարձած է արեւելեան, գլխաւորաբար՝ պարսկական պարի մեկնաբան, եւ աւելի քան 40 տարի Արմէն Օհանեան բեմական անունով իր արուեստը տարած է Միջին Արեւելքէն մինչեւ Եւրոպա ու Հիւսիսային Ամերիկա՝ համբաւուոր անունը մը դառնալով 1910-1920-ական թուականներուն<sup>28</sup>:

Դաշնակցութեան Դ. Ընդհանուր ժողովին (Վիեննա, Փետրուար-Մայիս 1907), յաջորդած է «երիտասարդ դաշնակցականներ»-ուն անշատուը եւ ուսական Սոցիալ-Յեղափոխական կուսակցութեան հայկական ճիւղին հիմնումը Յունիս 1907-ին: Ըստ Պաքուի դաշնակցական ղեկավարներէն Աբրահամ Գիւլխանդանեանի, «անշատական» խումբին հետ թէժ բանավէճերուն Հայկ Տէր Օհանեանը աշխոյժ մասնակցութիւն ունեցած է<sup>29</sup>:

<sup>22</sup> Ա. Գիլխանդանեան, «Բագով դերը մեր ազատագրական շարժման մէջ», Հայրենիք, Յունիս, 1924, էջ 117, որ սխալմամբ գրած է «Շահրուպաղեան»:

<sup>23</sup> «Matrikeledition der Universität Zürich»:

<sup>24</sup> Տե՛ս Armen Ohanian, *The Dancer of Shamahka*, New York, 1923, էջ 82-83:

<sup>25</sup> Նոյն տեղը, էջ 125-130:

<sup>26</sup> Եղարդ Փափազեան, «Թժ. Հայկ Տէր Օհանեան մեռած», Յուսաբեր, 11 Նոյեմբեր, 1957:

<sup>27</sup> Carlos Antaramian Salas, *Del Ararat al Popocatepetl*, Mexico City, 2011, էջ 182:

<sup>28</sup> Իր մասին, տե՛ս Արծուի Բախչինեան եւ Վարդան Մաթթէոսեան, *Շամախեցի պարուհին. Արմէն Օհանեանի կեանքը եւ գործը*, Եր., 2007:

<sup>29</sup> Գիլխանդանեան, «Բագով դերը», էջ 117:

1905-1911-ի սահմանադրական շարժումին, Պարսկաստան ժամանած բազմազգ յեղափոխականներուն մաս կազմած էր պուլկարացի սոցիալ-դեմոկրատ Ֆէոդոր Պանովը որպէս Պետերբուրգի «Ռեչ» օրաթերթի թղթակից: Ան Յունիս-Դեկտեմբեր 1908-ին թղթակցութիւններ հրատարակած է (նաեւ՝ «Ռուսկոյէ Սլովո» օրաթերթին մէջ) խեղաթիւրելով պատկերը յօգուտ սեփական անձի փառաբանումին<sup>30</sup>: Գիւլիսանդանեանի հրահանգով, Տէր Օհանեան 1908-1911-ին Պարսկաստան վերադարձած է որպէս «Ռուսկոյէ Սլովո»-յի թղթակից՝ յեղափոխական շարժումին ղեկավարներէն եփրեմ խան Դաւթեանի գործունէութիւնը աւելի առարկայօրէն լուսաբանելու համար<sup>31</sup>: Յունուար 1909-ին արդէն արձանագրուած է Պարսկաստան ըլլալը, ուր եփրեմի գործակիցներէն մէկը դարձած էր<sup>32</sup>: Ըստ երեւոյթին, կուսակցութեան հիմնական նպատակը Պանովի (Դաշնակցութեան նախկին անդամ Ռաշիտ կեղծանունով, թերեւս 1899-1902-ի մակեդոնական ապստամբութեան ժամանակ) խնդրայարոյց քարոզչութեան հակազդել էր<sup>33</sup>: Պանով իր գործունէութիւնը շարունակած է մինչեւ 1909-ի գարունը<sup>34</sup>:

Տէր Օհանեան, որ նոյնպէս «Ռեչ»ի եւ յառաջդիմական «Ուտրօ Ռոսի»ի թղթակից էր<sup>35</sup>, Փետրուար 1911-ին եփրեմի հիւանդ կնոջ՝ Անահիտ Դաւթեանին ընկերացած է Գերմանիա, ապա վերադառնալով Պարսկաստան<sup>36</sup>: Զօրավիգ կանգնելով 1909-ին գահընկէց Մոհամէտ Ալի շահի հակայեղափոխական շարժումին, ռուսական կառավարութիւնը Դաշնակցութեան դէմ 1909-1912 շրջանի հալածանքը տարածած է Պարսկաստան: Ռաշտի ռուս հիւպատոսը Սեպտեմբեր 1911-ին ձերբակալած է Տէր Օհանեանը՝ ռուսական օրաթերթերուն տուած ճշգրիտ լրատուութեան պատճառով: Ութը օր ետք, սակայն, ան ազատ արձակուած է՝ կուսակցական պատկանելիութիւնը անապացոյց մնացած ըլլալով, ու որոշած՝ Երոպա մեկնիլ, երկրի անշնչելի դարձած միջնորդութիւն պատճառով<sup>37</sup>:

<sup>30</sup> Տե՛ս J. M. Hone and Page L. Dickinson, *Persia in Revolution with Notes of Travel in the Caucasus*, London-Dublin, 1910, էջ 124-125. Edward G. Browne, *The Persian Revolution of 1905-1909*, Cambridge, 1910, էջ 213-221. Mansour G. Bonakdarian, *Britain and the Iranian Constitutional Revolution, 1906-1911*, Syracuse, 2006, էջ 186:

<sup>31</sup> Գիւլիսանդանեան, «Քաղաքի դերը», էջ 117:

<sup>32</sup> «Հոդվրաիւ», էջ 590. Ամուրեան, 2. 3. Դաշնակցութիւն, էջ 67:

<sup>33</sup> Գիւլիսանդանեան, «Քաղաքի դերը», էջ 117:

<sup>34</sup> Տե՛ս Browne, *The Persian Revolution*, էջ 221-228. Janet Afary, *The Iranian Constitutional Revolution, 1906-1911: Grassroots Democracy, Social Democracy, and the Origins of Feminism*, New York, 1996, էջ 241:

<sup>35</sup> Ամուրեան, 2. 3. Դաշնակցութիւն, էջ 269:

<sup>36</sup> Նոյն տեղը, էջ 479:

<sup>37</sup> «Վերջին տարւայ քաղաքաւարը եւ “Դաշնակցութեան” մասնակցութիւնը». - Դրօշակ, Յունուար 1912, էջ 28: Տե՛ս նաեւ Ամուրեան, 2. 3. Դաշնակցութիւն, էջ 117:



Եւրոպական անորոշ վայրէ մը (հաւանաբար՝ Գերմանիոյ մէջ), Տէր Օհանեան Եփրեմին գրած էիր կնոջ առողջական վիճակին մասին, աւելցնելով, որ ապահովութեան նկատառումներով ան նոր սկսած էր դուրս գալ իր թաքստոցէն: Անթուակիր նամակը պէտք է գրուած ըլլայ 5 Մայիս 1912-էն՝ Եփրեմի մահուան թուականէն առաջ<sup>38</sup>: Ապրիլ 1912-ին Տէր Օհանեան ուսումնառութեան վկայագիր կը ստանար Յիւրիխի համալսարանէն<sup>39</sup>: Կ'ենթադրենք, որ այս ժամանակ Պերլինի համալսարանի բժշկական ճիւղը մտած է:

1912-1919-ին որեւէ տեղեկութիւն չկայ Տէր Օհանեանի մասին, որ կը թուի հանրային գործունէութենէ հեռու մնացած ըլլալ: Այստեղ պէտք է ճշգրտել Ռիչըրտ Յովհաննէսեանի աշխատութեան այն տեղեկութիւնը, թէ 1917-1918-ին Թիֆլիսի եւ Պաքուի Հայ Ազգային Խորհուրդներու անդամ եղած է սոցիալ-յեղափոխականներու կողմէ<sup>40</sup>, իսկ Ապրիլ 1919-ին քաղաքական առաքելութեամբ Ղարաբաղ ղրկուած է Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան կողմէ<sup>41</sup>: Սակայն, պէտք է բացառել Հայկ Տէր Օհանեանի՝ կուսակցական «նոր» ինքնութեամբ ներկայութիւնը Կովկասի մէջ, ինչպէս եւ իրարու ժամանակակից համանուն անձերու գոյութիւնը: Արդարեւ, Սիմոն Վրացեան յիշած է Յ. Տէր Օհանեանը վերոյիշեալ Ազգ. Խորհուրդներու անդամներու ցանկին մէջ<sup>42</sup>, իսկ Աբրահամ Գիւլիանդանեան վկայած է, որ անջատական շարժումին, ապա՝ սոցիալ-յեղափոխականներու հայկական ճիւղի կարեւոր դէմքերէն մէկն էր իրաւաբան Յովհաննէս (Վանիա) Տէր Օհանեանը<sup>43</sup>:

Այնուհետեւ, Վ. Զաքարեանը Թեհլիրեանի դատաւարութեան մասնակցած է որպէս թարգմանիչ ու վկայ Յունիս 1921-ին եւ դեր ունեցած է դատաւարութեան սղագրուած տարբերակին առանձին գիրքով հրատարակութեան մէջ՝ նոյն տարուան ընթացքին<sup>44</sup>: Ըստ երեւոյթին, միաժամանակ Տէր Օհանեանը աւարտած է իր բժշկական ուսումը: 1919-ի նամակներէն բոլորովին տարբեր հնչերանգով, Յ. Նոյեմբեր 1921-ին Իսահակեան Վենետիկէն հարցուցած է Զաքարեանին. «Հայկը ի՞նչ է անում, քննութիւն տւեց, թէ՛ ոչ (...): Ու ապա յայտնած է. «Ձերմ բարեկներ Գրենֆիլդին, Լիբարիտին [SiC], Աշոտին, Հայկին եւ

<sup>38</sup> Ամուրեան, Հ. Յ. Գաշնակցութիւն, էջ 268-269:

<sup>39</sup> «Matrikeledition der Universität Zürich».

<sup>40</sup> Richard Hovannisian, *Armenia on the Road to Independence*, Los Angeles-Berkeley-London, 1967, էջ 90 (հմմտ. նաեւ Anahide Ter Minassian, *La République d'Arménie 1918-1920*, Bruxelles, 1989, էջ 34):

<sup>41</sup> Richard G. Hovannisian, *The Republic of Armenia*, vol. I, Los Angeles, Berkeley, and London: University of California Press, 1971, էջ 174:

<sup>42</sup> Տէս Սիմոն Վրացեան, Հայաստանի Հանրապետութիւն, Բ. տպագրութիւն, Պէրուք, 1958, էջ 47 եւ 157:

<sup>43</sup> Գիւլիանդանեան, «Բագուի դերը», էջ 116-117:

<sup>44</sup> Տէս Հ. Յ. Գ. Արտասահմանի Պատասխանատու Մարմնի նամակը Վահան Զաքարեանին, 30 Յունիս 1921 (Թեհլիրեան արդարահատոյցը, էջ 418):

բողորին»<sup>45</sup>: Սակայն, Տէր Օհանեանի բժշկական գործունէութեան մասին ոչինչ յայտնի է:

Հոկտեմբեր 1922-ին Տէր Օհանեանի կինը՝ Արմէն Օհանեան, վերստին ամուսնացած է մեքսիքացի դիւանագէտ, լրագրող ու գրագէտ Մասետոնիօ Կարզայի հետ<sup>46</sup>, հաւանաբար Համպուրկի մէջ, ինչ որ կը նշանակէ, թէ այս կամ այն կերպ, ան վերջապէս յաջողած էր ամուսնալուծման արտօնութիւն ստանալ Հայց. Եկեղեցիէն՝ երկար տարիներու բաժանումէ ետք:

Զօրեան, Զաքարեան եւ Տէր Օհանեան գործնապէս չեն մասնակցած «Նեմեսիս»-ի պերլինեան յաջորդ հանգրուանին՝ Արշաւիր Շիրակեանի եւ Արամ Երկանեանի արդարահատոյց գործունէութեան, թէեւ Յակոբ Զօրեան օժանդակած է Շիրակեանին՝ Պերլինէն մեկնելու<sup>47</sup>: 1920-1925-ին Պերլինի համալսարանը ուսանելէ եւ իր դոկտորական աւարտաճառը ներկայացնելէ ետք, Զօրեան Երեւանի համալսարանէն հրաւեր ստացած ու մեկնած է Խորհրդային Հայաստան, իսկ Վահան Զաքարեան ու Հայկ Տէր Օհանեան Գերմանիա մնացած են մինչեւ իրենց կեանքին վերջը:

1921-1931 տասնամեակին որեւէ տեղեկութիւն յայտնի չէ Տէր Օհանեանի մասին: Կ'ենթադրենք, որ դուստրը՝ Նորան, այս ժամանակաշրջանին պէտք է միացած ըլլար անոր: Արդարեւ, Իսահակեան, որ նախորդ տարին Հայաստանէն Փարիզ վերադարձած էր, 7 Հոկտեմբեր 1931-ին գրած է Զաքարեանին. «Գրում եմ իմանալու համար սիրելի Հայկի մասին, ի՞նչ է անում, տրամադրութիւն, առողջութիւն, վիճակ: Ինչպէ՞ս է նրա աղջկայ՝ Նորայի վիճակը, առողջութիւնը: Ի՞նչ է անում Գրենֆիլդը, վիճակը, եւ այլն: Շա՛տ կը խնդրեմ բարեւես Հայկին եւ Գրենֆիլդին»<sup>48</sup>: Վերջին նամակով՝ 6 Յունիս 1934-ին, դարձեալ կը ղրկէր «շա՛տ բարեւներ Հայկին»<sup>49</sup>: Տէր Օհանեանը, ըստ Կարօ Գէորգեանի տեղեկութեան, Իրան մեկնած էր 1930-ականներուն եւ վերադարձած Պերլին՝ 1935-ին<sup>50</sup>:

<sup>45</sup> ԳԱԹ, Աւետիք Իսահակեանի ֆոնտ, I բաժին, ք. 227 (հմմտ. Իսահակեան, *Երկերի ժողովածու*, էջ 182):

<sup>46</sup> «Certificado de nacionalidad mexicana No. 899 expedido a favor de Armen S. P. de Garza,» Ministerio de Relaciones Exteriores, Mexico, Exp. VII/521.5/70535: Շնորհակալ եմ մեխիքահայ հետազօտող Գարլոս Անթառամեանին, որ մեր առամադրութեան տակ դրած է մեխիքական արխիւներու փաստաթուղթերը:

<sup>47</sup> Շիրակեան, *Կտակն էր նահատակներուն*, էջ 308-315, որ անունը յիշած է սուկ «Զօրեան» ձեռով, պէտք է ենթադրել՝ ապահովութեան նկատառումներով:

<sup>48</sup> ԳԱԹ, Ա. Իսահակեանի ֆոնտ, I բաժին, ք. 228: Տե՛ս նաեւ Իսահակեան, *Երկերի ժողովածու*, էջ 287:

<sup>49</sup> ԳԱԹ, Ա. Իսահակեանի ֆոնտ, I բաժին, ք. 230: Տե՛ս նաեւ Իսահակեան, *Երկերի ժողովածու*, էջ 314:

<sup>50</sup> «Հոդվրաիք», էջ 590:

1934-ին Արմէն Օհանեանն ու իր ամուսինը հաստատուած են Մեքսիքօ, իսկ 1935-ին Նորա Տէր Օհանեան հետեւած է մօրը քայլերուն<sup>51</sup>։ Հոն ամուսնացած է ու մահացած՝ 1967-էն ետք<sup>52</sup>։ Ա. Օհանեան մահացած է 89 տարեկան հասակին՝ 1976-ին<sup>53</sup>։

Հայկ Տէր Օհանեան մասնակցած է Գերմանա-Հայկական Ընկերութեան վերջին ժողովին՝ Բ. Աշխարհամարտէն առաջ, 10 Հոկտեմբեր 1938-ին<sup>54</sup>, իսկ 1941-ին Հայտըլպերկ փոխադրուած է<sup>55</sup>։

Տէր Օհանեան տարիներով ուսումնասիրած է հայ ազատագրական շարժման ուսմաներէն Իսրայէլ Օրիի կեանքն ու գործունէութիւնը։ Յարգ յայտնի առաջին վկայութիւնը կու գայ Սիմոն Վրացեանէն, որ 8 Մարտ 1950-ին, ի պատասխան Կոստան Զարեանի դիմումին՝ նիւթերու մասին, Պոստոնէն գրած է. «Ձեմ իմանում յատկապէս ի՞նչն է հետաքրքրում քեզ, որ ըստ այնմ գրեմ։ Իսրայէլ Օրիով, տարիներից ի վեր, զբաղուած է Հայկ Օհանեանը (Բերլինից). ունի Օրիի մասին ամբողջ գրականութիւնը՝ նաեւ վաւերագրային նոր գիւտեր է արել։ Եթէ նրան գրես, վստահ եմ, որ ըստ ամենայնի կը գոհացնի քեզ»։ Ու անմիջապէս աւելցուցած է Տէր Օհանեանի (որ, ըստ երեւոյթին, այս շրջանին արդէն կրճատած էր «Տէր»-ը) Հայտըլպերկի հասցէն<sup>56</sup>։ Շաբաթ մը ետք Իսկիայէն (Իտալիա) գրած իր պատասխանին մէջ, Զարեան պարզած է, որ Վրացեանի Սեպտեմբեր-Հոկտեմբեր 1949-ի յօդուածները կարդալէ ետք «Հայրենիք» օրաթերթին մէջ, «մէջս նորից որդը սկսեց ուտել, թէ ի՞նչ լաւ կը լինէր մի մեծ վէպ գրել նրա մասին», եւ առ այդ գրած էր տարբեր անձերուն նիւթ ուղղելով։ Սակայն, այնուհետեւ իր ծրագրէն հրաժարած էր, մտածելով, թէ «դա ի՞նչ բախտ է. ոչ միայն գրականութիւնը հայ գրագէտին չի կերակրում, այլ դեռ պէտք է հարուստ լինել, որպէս զի հայ գրականութիւնով մարդ զբաղուի»<sup>57</sup>, թէեւ շարունակած է զայն հետապնդել քանի մը ամիս ետք<sup>58</sup>։ 1954-ին Փարիզի «Յառաջ»

<sup>51</sup> Archivo General de la Nación de México (AGN), Registro Nacional de Extranjeros (RNE), Sección "Persia", Box 1.

<sup>52</sup> Վերջին յայտնի փաստաթղթային փաթեթը Ապրիլ 1967-ին կը վերաբերի (Nora Ter-Ohanian, archivo de migración 4-355-1-1935-93652, Archivosdel Instituto Nacional de Migración, Ciudad de México):

<sup>53</sup> Բախտիար Յովակիմեան, «Օհանեան, Արմէն», Հայկական Սովետական Հանրագիտարան, հ. 12, եր., 1986, էջ 537:

<sup>54</sup> Friedrich Heyer, "Zur Wiederbegründung der Deutsch-Armenische Gessellschaft", *Kirche im Osten*, 21/22, 1978-79, p. 321.

<sup>55</sup> «Հոդվումի», էջ 590:

<sup>56</sup> Վարդան Մատթէոսեան, «Կոստան Զարեանի եւ Սիմոն Վրացեանի նամակագրութեան», Հայկագեան Հայագիտական Հանդէս, հատոր ԻԹ., 2009, էջ 318:

<sup>57</sup> Նոյն տեղը, էջ 319:

<sup>58</sup> Վարդան Մատթէոսեան, «Բեգլար Նաւասարդեանի եւ Կոստան Զարեանի նամակները», Բազմավէպ, 2007, էջ 366-368:

օրաթերթին մէջ լոյս տեսած թղթակցութիւն մը կը յայտնէր, թէ Տէր Օհանեան, հակառակ իր տարիքին, կը շարունակէր գործօն մնալ եւ մասամբ յաղթահարած էր նախորդ տարիներու տնտեսական դժուարութիւնները: Իսրայէլ Օրիի կողքին, ան կազմած էր հայ ժողովուրդի ու մշակոյթի մասին գերմանական տեղեկութիւններու եւ տեսակէտներու հաւաքածոյ մը՝ 3.000 մեքենագիր էջերով<sup>59</sup>:

Յետ երկարատեւ հիւանդութեան, Հայկ Տէր Օհանեան իր մահկանացուն կը կնքէր Հայտէլպէրկի մէջ, 27 Հոկտեմբեր 1957-ին, 73 տարեկանին: Թաղման ներկայ եղած են Շիութկարտէն եւ Հայտէլպէրկէն հայեր, նաեւ ուսանողներ եւ գերմանացի անձնաւորութիւններ<sup>60</sup>: Բնակարանը նոտարի կողմէ կնքուած էր եւ յայտնի չէ, թէ ի՞նչ եղած է իր գրադարանին եւ թուղթերուն ճակատագիրը, զորս ան փափաքած էր նուիրել Դաշնակցութեան թանգարանին Փարիզ<sup>61</sup>: Ֆինանսական վիճակը թոյլ չէր տուած հրատարակել գերմաներէն մենագրութիւնը Իսրայէլ Օրիի մասին, որուն ձեռագիրը, ըստ երեւոյթին, ուղարկուած է աղջկան՝ Մեքսիքո<sup>62</sup>:

Մահուան նախորդող տարիներուն՝ 1953-ին եւ 1956-ին, Թեհլիրեանի յուշերը երկու անգամ հրատարակուած էին: Այսպիսով, Թալէաթի ահաբեկումէն երեք տասնամեակ ետք, Հայկոյի անունը կը բացայայտուէր: Բայց բուն ինքնութեան բացայայտումը պիտի սպասէր մինչեւ այսօր:

Հ. Տէր Օհանեանի վերաբերող կցկտուր տեղեկութիւնները մէկտեղուած են շնորհիւ թերթերէ եւ գիրքերէ պեղուած պատահական գիւտերու: Պէտք է յուսալ, որ անոր կենսագրութիւնը ամբողջացնող նիւթեր յայտնաբերուին Հ. Յ. Դաշնակցութեան եւ Հայաստանի առաջին Հանրապետութեան Պոստոնի արխիւներուն մէջ, երբ բարեբաստիկ օր մը լիովին տրամադրելի ըլլան հետազօտողներու:

### Vardan Matteosean

#### “HAIKO”, The Last Unknown Participant of Talaat’s Liquidation

In his memoirs published in 1953, Soghomon Tehlirian disclosed the details of the assassination of Talaat Pasha, the mastermind of the Armenian genocide, which he had carried in March 1921. For security reasons, he introduced his immediate collaborators in Berlin with pseudonyms:

<sup>59</sup> Տոբ. Տ. Յրունեան, «Երկու կարեւոր աշխատանքներ», Յառաջ, 9 Յունուար, 1954:

<sup>60</sup> Փափազեան, «Բժ. Հայկ Տէր Օհանեան»:

<sup>61</sup> «Հայկ Օհանեան»: Ըստ Հ. Յ. Դաշնակցութեան քանգարանի պատասխանատու Անոյշ Ամսէանի հաղորդումին, այժմ Երեւան փոխադրուած քանգարանը Հ. Տէր Օհանեանի վերաբերող ոչինչ ունի:

<sup>62</sup> «Հողվրաիւ», էջ 590:

Երերույքի բազիլիկում խորանի պատերի հիմքը կազմված է քարերի երեք շարքից: Առաջինը՝ անմիջապես ժայռի վրա դրված, համարյա անմշակ, անկանոն, միջին և փոքր չափի քարերից է: Երկրորդը մի քիչ ավելի խնամյալ ու կանոնավոր է, երրորդը՝ համարյա սրբատաշ քարերից: Առաջին երկու շարքերի քարերի արանքում խիճ ու անկանոն բեկորներ են լցված՝ կավա-տղմոտ մի նստվածքի մեջ, որ շաղախ չի կարելի համարել: Մինչդեռ վերին շարքը սպիտակավուն հատիկավոր մի իսկական կրաշաղախով է ամրացված: Միայն պատերի տակ դրված այս եռաշար հիմքը հաստատում է այն, ինչ արդեն մի քանի օրինակներից գիտեինք՝ հին հայկական՝ ոչ խոր և ոչ էլ լայն հիմքերի մասին<sup>8</sup>: Երերույքում հնարավոր եղավ դիտել նաև մեկ այլ կարևոր յուրահատկություն. հիմքի առաջին երկու շարքերը համարյա կապակցված չեն, այսինքն օժտված են մի տեսակ « շարժականություն »-ով, որ կարող էր հակաերկրաշարժային գործառույթ ունենալ:

Հավելենք, որ հիմքի վերին շարքը իր արևմտյան ծայրում որոշ պայտաձևություն է դրսևորում, մինչդեռ այդ գիծը չի դիտվում դրանից վեր կանգնած պատի վրա: Հիշենք, որ համեմատելի մի երևույթ առկա է Աղցի/Աղձքի բազիլիկի խորանում, ուր այս անգամ գետնից վեր կանգնած առաջին շարքի պայտաձևությունը ավելի ընդգծված է, քան խորանի մնացած պատինը:

2014 թ. բազիլիկի խորանի և հարավ-արևելյան անկյան տակ կատարված պեղումների շնորհիվ ստացանք ևս մի օգտակար տեղեկություն կառույցի մասին: 1977 թ. իտալական ալբոմում հրատարակված լայնական կտրվածքից արդեն գիտեինք, որ այն, ինչ ընկալվում է որպես բազմաստիճան եզրերով մի հզոր հարթակ (ինչպես Տեկորում ու Զվարթնոցում), որի վրա հուշարձանը կարծես ամբողջությամբ դրված է, մասամբ տեսողական (շատ հաջող) մի հնարք է<sup>9</sup>: 2014 թ. համոզվեցինք, որ պատերի հիմքերը նստած են ժայռի վրա,

<sup>8</sup> P. Donabédian, «Les architectes de l'Arménie médiévale usaient-ils de dispositifs parasismiques ?», REArm, 34, Paris, 2012, p. 169-242, այստեղ էջ 173:

<sup>9</sup> Documenti di Architettura Armena 9, Ererouk, Milano, 1977, էջ 52, sezione b-b լայնական կտրվածքի ցույց է տալիս, որ նավի հատակի մակարդակը մոտ է արտաքին աստիճանների ստորին մակարդակին:

իսկ եկեղեցու տակ ամբողջական հորիզոնական հարթակ չկա: Այսպիսով հաստատվեց, որ աստիճանների արտաքուստ այդքան ազդու գոտին ստեղծված է գետնախարիսխի տպավորություն թողնելու համար, մինչդեռ իրականում այդ գետնախարիսխը գոյություն չունի: Ստեղծված է սրբարանի վեհությունն ընդգծող մի միջոց, որ կարծես կոչված է դեպի սյունասրահները բարձրանալու անհրաժեշտությունն արտահայտելու՝ նախքան եկեղեցու նավի հատակն իջնելը: Ըստ էության եգիպտական բուրգերի, միջագետքյան զիգուրատների, դասական մեհյանների՝ դեպի սրբարան բարձրանալու նույն սկզբունքն է, որ առկա է նաև հայ ու վրացական վաղբրիտոնեական հուշային կոթողների պատվանդաններում: Գուցե հենց դասական տաճարների *krepis*-ից են սերված բազմաստիճան եզրերով այդ գետնախարիսխները:

Այդ դիտարկումը մի նոր նրբերանգ է հաղորդում տողերիս հեղինակի այն ենթադրությունը, որ վաղբրիտոնեական և նախաարաբական Հայաստանում գոյություն են ունեցել «հուշային / հուշարձան ?» (*memorial*) բացառիկ եկեղեցիներ (*Տեկոր*, *Երերույք*, *Զվարթնոց...*), որոնք «հասարակ» եկեղեցիներից տարբերվել են ի միջի այլոց իրենց տակ եղած՝ աստիճանավոր եզրեր ունեցող գետնախարիսխով (*krepis*-ով)<sup>10</sup>: Իսկ «հասարակ» (սովորական ծխական) եկեղեցիներում, որոնք կազմում են հայկական եկեղեցիների ճնշող մեծամասնությունը, կիրառվել է գետնախարիսխի սեղմ, կրճատ տարբերակը՝ պատերի ստորին մասում արտաքուստ տեղադրված մի քանի աստիճանների ձևով: Կարող ենք համարել, որ Երերույքում ունենք «հուշային» եկեղեցիներին հատուկ բազմաստիճան գետնախարիսխի նմանակումը, կամ «կեղծ» տարբերակը: Վերջինս կարող է դիտվել իբրև միջանկյալ մի փուլ՝ իսկական գետնախարիսխից դեպի ճակատների արտաքին ստորին աստիճանները տանող ճանապարհին:

Երերույքի բազիլիկի շինարարական պատմության փուլերը ճշտելու նպատակով պատերը ենթարկվեցին «կառուցվածքների հնագիտության» (կամ «ճարտարապետական հնագիտության») զննմանը: Այդ քննությունը հանգեցրեց այն կարծիքին, որ շարվածքի մեջ նկատելի տարբերությունները կապված են կարճատև ընդհատումների և ո՛չ մտահղացման հիմնավոր փոփոխությունների հետ, ինչպես վերջերս ենթադրել են մի քանի ֆրանսիացի և իտալացի գիտնականներ<sup>11</sup>:

Միակ լուրջ փոփոխությունը նկատվում է արևմտյան ճակատի վրա: Ակն-

<sup>10</sup> P. Donabédian, *L'âge d'or de l'architecture arménienne. VIIe siècle*, Marseille, 2008, p. 28, 40, 49, 56, 76, 78, 83, 133-134, 186, 192, 203, 206, 277.

<sup>11</sup> J.-C. Bessac, «Observations sur la construction de la basilique d'Ererouk en République d'Arménie (2<sup>e</sup> partie)», *Syria*, 89, Beyrouth, 2012, p. 331-366; N. Montevicchi, C. Tonghini, «Lo sviluppo costruttivo della basilica di Ererouk (Armenia), secoli VI-X: una ri-lettura archeologica», *Arqueologia de la arquitectura*, 9, Madrid/Vitoria, 2012, p. 29-56.



վանդան, բ) խորանարդաձև խարիսխ<sup>14</sup>, գ) քանդակագարդ քառանիստ կոթող կամ անզարդ (գլանաձև կամ բազմանիստ) սյուն, դ) խոյակ (երբեմն դրան փոխարինում էր կոթողի խոյակաձև վերին մասը), ե) երբեմն միջանկյալ մի տարր, որ կարելի է «խաչկալ» անվանել<sup>15</sup>, զ) թևավոր խաչ<sup>16</sup>: Ի դեպ երերույթ հնավայրը հարուստ է կոթողների բեկորներով և պահպանում է նաև փոքր խոյակների ու քարե խաչերի մի քանի մնացորդներ<sup>17</sup>: Այս տեսակ հուշարձաններ հաճախ (բայց ոչ միշտ) կանգնեցվում էին սրբարանի հվ-ալ կամ հս-ալ, կամ ավելի հազվադեպ՝ հվ-ամ անկյան մոտ:

Երերույթի եկեղեցուց հարավ գտնվող տարածքը մաքրելուց հետո լավ տեսանելի դարձան պատվանդաններից յոթի կամ ութի մնացորդները: Այդ քանակը բացառիկ է ամբողջ վաղ քրիստոնեական Հայաստանում, որտեղ սովորաբար մեկից-երեքից չի անցնում դրանց թիվը միևնույն սրբարանի մոտ<sup>18</sup>: Երերույթի բազիլիկի հարավ-արևելյան անկյան մոտ, հատկապես ուշագրավ է հս-հվ առանցքով տեղադրված չորս պատվանդանների շարքը: Սրանցից մի քիչ հվ և հվ-ամ ևս երկու հատ է նկատվում, իսկ տվյալ գոտու արևմտյան ծայրում դեռ երկու պատվանդանների հետքեր են գտնվում: Վերակազմության մեր փորձում ցույց է տրված այդ պատվանդանների վրա ենթադրվող կոթողների կամ սյուների շատ պարզեցված պատկերը, այդ երևույթին անձանոթ ընթերցողին ընդհանուր գաղափար տալու նպատակով:

Նման ուղղաձիգ հուշարձանների դերի մասին որոշ տարակարծությունների կողքին, ընդունված է այն կարծիքը, որ դրանք ունեն լայն առումով «հուշային» (*memorial*) բնույթ, ընդգրկելով և՛ հիշատակման, և՛ մահարձանային, և՛ գերեզմանական գործառույթները, առանց բացառելու պաշտամունքի ա-

գործառույթը, պատկերագրությունը, իմաստաբանությունը, Եր., 2008, էջ 44-46, Գ. Գրիգորյան, Հայաստանի վաղ միջնադարյան քառանիստ կոթողները, Եր., 2012, էջ 47-55:

<sup>14</sup> Գ. Գրիգորյանը նախընտրում է պատվանդանը «խարիսխ» անվանել, իսկ դրա վրա դրվող խորանարդաձև խարիսխը նա առաջարկում է «սեղան» կոչել:

<sup>15</sup> Ըստ Հ. Պետրոսյանի (նշ. աշխ., էջ 14, 46): Գ. Գրիգորյանի համաձայն, ամպհովանի հիշեցնող և գնդաձև վերջավորությամբ այդ մասը տանաբի և երկրագնդի պատկերն է (նշ. աշխ., էջ 49-50):

<sup>16</sup> Թևավոր խաչի առկայության պատճառով, Հ. Պետրոսյանը նման հուշարձաններ անվանում է «խաչակիր կոթող»: Սակայն Գ. Գրիգորյանը (նշ. աշխ., էջ 50) ենթադրում է, որ եղել են բացառություններ. նադիտել է տալիս, որ մի քանի դեպքերում խաչը նախատեսված չի եղել խոյակի կամ կոթողի խոյակաձև վերջավորության վրա:

<sup>17</sup> Դրանցից չորսը ցուցադրվում են այժմ, մինչև 2016 թ., Հայաստանի Պատմության Թանգարանի արտաբնի սյունասահում: Տե՛ս ցուցահանդեսի կատալոգը. Գ. Գրիգորյան, Քարերը ժողովելու ժամանակը, Եր., 2013, էջ 40, 44, 53-54, n° 21-24:

<sup>18</sup> Այդ մասին տե՛ս. P. Donabédian, *L'âge d'or...*, p. 22-23, 26-27, 206: Գոգարանի և Քասաղի վաղ քրիստոնեական եկեղեցիների մոտ նման հուշարձաններից երեք-չորս նմուշներ կային (Գոգարանում դրանք վերակառուցվել են), որոնց սկզբնական տեղը սակայն ստույգ հայտնի չէ:

ուարկա լինելը<sup>19</sup>: Բայց ինչ վերաբերում է պատվանդանի բուն գործառույթին, ապա դեռ անհայտ է մնում, արդյո՞ք այն ծառայել է միայն որպես հիմք՝ խաչով պսակված կոթողի կամ սյան խարիսխի համար, թե ունեցե՞լ է միաժամանակ գերեզմանական ուրույն դեր, այսինքն կարո՞ղ էր արդյոք իր կենտրոնում թաղում պարունակել: Այդ մասին կարծես վկայում է Ա. Սահինյանի հաղորդած մի տեղեկություն<sup>20</sup>. 1944-1947 թթ. Քասաղի բազիլիկի հվ-ալ անկյան մոտ պատվանդանի կենտրոնական «խորշում» (փոսո՞ւմ) գտնվել է երկու կմախք՝ «ոչ պառկած վիճակում» (պպզա՞ծ): Սակայն հնագիտական հաշվետվության, գտածոների, գծագրերի և նկարագրության բացակայությունը թույլ չի տալիս կմախքների հնությունը ճշտելու: Ներկայումս տեղը զբաղեցնում է նորագույն մի գերեզման: Բացառված չէ, որ Ա. Սահինյանի հայտնաբերած կմախքները այնտեղ տեղադրվել են պատվանդանի ուշ վերօգտագործման առիթով<sup>21</sup>:

Այդ հարցը պարզելու նպատակով 2011 թ. հայ-ֆրանսիական արշավախումբը քննեց պատվանդաններից մեկը<sup>22</sup>, որ արդեն վնասվել էր գանձախույզների կողմից (ինչի «շնորհիվ» էլ թույլատրվեց այնտեղ պեղել): Ավաղ «այցելուները» հուշարձանը քրքրել էին մինչև խորքը և հորատումը հնարավորություն չտվեց գործառույթի հարցին պատասխանելու: Բարեբախտաբար 2013 թ. թույլատրվեց պեղել մեկ այլ պատվանդանի<sup>23</sup> մնացորդի ներքին ծավալը, որ նման «այցելությունից» գերծ էր մնացել և դեռ լցված էր նախնական հողով: Իշնելով մինչև բնական գետինը պարզեցինք, որ այնտեղ թաղում չի եղել: Այսպիսով, գոնե մի նմուշով, առայժմ հերքվում է գերեզմանական գործառույթը:

<sup>19</sup> Ուղղանիզ հուշարձանների (կամ «խաչակիր կոթողների») գործառույթի մասին տես. **Գ. Յովելիեան**, *Նիւթեր եւ ուսումնասիրութիւններ հայ արուստի եւ մշակոյթի պատմութեան*, Պրակ Գ., Նիւ Եոբ, 1944, էջ 46-127 («գերեզմանական կոթողներ»), **Բ. Առաքելյան**, *Հայկական պատկերաբանականները IV-VII դարերում*, Եր., 1949, էջ 33 («հուշարձաններ, նեղ իմաստով մահարձաններ»), **Լ. Ագարյան**, *Վաղ միջնադարյան հայկական քանդակը*, Եր., 1975, էջ 58-59 («գերեզմանաբարե, Հայաստանում Բիստոնեության ընդունումը հավերժացնող կոթողներ»), **S. Der Nersessian**, *L'art arménien*, Paris, 1977, p. 63 («stèles funéraires; monument commémoratif»); **J.-M. Thierry, P. Donabédian**, *Les arts arméniens*, Paris, 1987, p. 75 («stèles votives ou mémoriales; deux fonctions étroitement unies, l'une votive, l'autre funéraire»); **Ս. Մնացականյան**, նշվ. աշխ., էջ 17 («մահարձան, նշանավոր իշխանի հիշատակը հավերժացնող, սակայն երբեք տապանաբար»); **Հ. Պետրոսյան**, նշվ. աշխ., էջ 17-18 («պաշտամունքի առարկաներ»), **Գ. Գրիգորյան**, *Հայկական վաղ...*, նշվ. աշխ., էջ 31-34 (հասարակության կյանքի բազմազան երեսակները, մահը ներառյալ, արտացոլող գործառույթների լայն բազմազանություն, ընդհանուր մի սկզբունքով. մարդու ու աստծու միջև կապի ձգտման արտահայտություն):

<sup>20</sup> **Ա. Սահինյան**, *Քասաղի բազիլիկայի ճարտարապետությունը*, Եր., 1955, էջ 55:

<sup>21</sup> **Գ. Գրիգորյանը** կասկածի տակ չի դնում Ա. Սահինյանի վկայությունը. «բազմաթիվ կոթողների կանգնեցման շարժառիթը վկայող միակ փաստն է» (**Գ. Գրիգորյան**, *Հայկական վաղ...*, նշվ. աշխ., էջ 31):

<sup>22</sup> Վերը նշված չորս պատվանդաններից արևմուտք հ. 5 պատվանդանը:

<sup>23</sup> Վերը նշված չորս պատվանդաններից երկրորդը եկեղեցու ումնախարխիսից հաշված:

#### 4. Գերեզմանոցի ուսումնասիրությունը

2011 թ. սկսած արշավախումբը զննում է եկեղեցուց հարավ տարածվող այդ գոտին, որտեղ գտնվում են վերոնշյալ պատվանդանները, և դրանից արևելք տարածքը, ուր առկա են մի քանի քարարկղների մնացորդները: Այստեղ կատարված պեղումներն ի հայտ են բերել մի գերեզմանոց: Այն տարածված էր եկեղեցու հարավային լանջից ու հարավ-արևելյան անկյունից մինչև դրանցից հարավ ու արևելք ընթացող պատերը, մինչդեռ պատերից անդին էլ թաղում չի դիտվում: Որոշակի է, որ դարերի ընթացքում եկեղեցու խորանը և դրա հարևանությունը կանգնեցրած խաչակիր հուշարձանները (կոթողները) իրենց մոտ քաշել-հավաքել են բազմաթիվ թաղումներ: Հիշեցնենք, որ անթվակիր, բայց հավանաբար հին մի արձանագրության համաձայն Երերույքի բազիլիկը նվիրված էր միաթամանակ սուրբ Կարապետին (սուրբ Հովհաննես Մկրտչին) և սուրբ Նախավկային (սուրբ Ստեփանոսին)<sup>24</sup>: Հավանական է թվում, որ մեծածավալ, տարբեր առումներով բացառիկ այս սրբարանը պատասպարել է Հայաստանում շատ պաշտելի այդ երկու սրբերի մասունքները: Դա էլ իր հերթին քաշողական մեծ ուժ կարող էր ունենալ ամբողջ շրջանի բնակչության համար, թերևս նաև նրա սահմաններից դուրս՝ ասորի ուխտավորների համար. հաշվի առնելով ճարտարապետական ընդհանրությունները ասորական հուշարձանների հետ և հունարեն արձանագրությունները<sup>25</sup>, կարելի է պատկերացնել ասորական տարածքներից եկած ուխտավորների, կամ գոնե Հայաստանում գտնվող ասորիների այցելություններ Երերույք<sup>26</sup>:

2011-14 թթ. այստեղ բացվել ու ուսումնասիրվել են վաթսուն վեց գերեզմաններ: Մարդկային ոսկորների վրա կատարված ռադիոածխածնային վերլուծումներից ստացվել են քսանմեկ թվագրումներ, և ևս երեք արդյունքներ սպասվում են 2015 թ. գարնանը: Առկա տվյալները ցույց են տալիս, որ թաղումները կատարվել են ուշ անտիկ շրջանից (սկսվել են եկեղեցու կառուցումից առաջ) մինչև համարյա մեր օրերը. վաղագույն գերեզմանները III-V դարերից են (մինչ բազիլիկը, ինչպես նշեցինք, դժվար թե VI դարից վաղ շինված լինի), իսկ նորագույնը՝ XVIII-XX դդ.: Սակայն (դատելով ըստ ուսումնասիրված տարածքի) գերեզմանոցը սկսել է իսկապես զարգանալ VIII-X դարերում:

<sup>24</sup> Ըստ հեղինակների VI-VII դդ-ին կամ X-XI դդ-ին վերագրվող այդ արձանագրության մասին վերջին ամփոփ ուսումնասիրությունը տե՛ս **P. Donabédian**, «Ereuyk’: nouvelles données...», էջ 269-275:

<sup>25</sup> **P. Donabédian**, «Ereuyk’: nouvelles données...», էջ 262-268:

<sup>26</sup> Ըստ Ն. Պազլագովայի, հարևան Տեկոբում հայտնաբերված ասորական արձանագրությունները կարող էին փորագրվել ասորի ուխտավորների կամ Հայաստանում ապրող ասորի հոգևորականների կամ առևտրականների կողմից. **Н. Паглазова**, «Текор – храм князей Камсараканов», *Архитектурное Наследство*, 50, Մոսկվա, 2009, էջ 5-16, այստեղ էջ 6-7:

Այդ ժամանակ գլխավոր շորս պատվանդանների շարքից անմիջապես արևմուտք ստեղծվել է կարծես «առանձնաշնորհյալ» մի գոտի՝ մասամբ վերօգտագործված քարերով եզերված: Գուցե ընտանեկան կամ տոհմային այս տարածքում հայտնաբերվել են VIII-X դարերով թվագրված վեց գերեզմաններ:

Մինչև X դարը գերեզմանոցն արտացոլում է սովորական մի համայնքի վիճակը, ուր կան տարբեր տարիքի կանայք, տղամարդիկ ու մանուկներ, հավանաբար հարևան բնակավայրից: Իսկ XI-XII դարերում ծիսական, դավանաբանական կամ ինչ-որ այլ փոփոխության հետևանքով, գերեզմանոցը ստանում է նոր «մասնագիտացում», ընդունելով համարյա բացառապես (նորից մեր բացած «պատուհանից» դիտված) նորածին, նույնիսկ վաղածին երեխաների: Այդ դարերում թաղվածներից միակ մեծահասակ անձը հիսուսն անց մի կին է: Այդ առեղծվածը պարզելը արշավախմբի մարտահրավերներից է: Թերևս դա կապ ունի եկեղեցու անվանակոչության հետ՝ սուրբ Հովհաննես-Մկրտչին և սուրբ Ստեփանոսին նվիրված լինելու հետ: Գուցե սրբերի (մանավանդ Մկրտչի) մասունքների առկայությունը, որը, ինչպես վերը տեսանք, շատ հավանական է, կամ նրանց հատուկ կապը (ըստ պարականոն ավետարանների) սուրբ Անմեղների և Անդրանիկների հետ<sup>27</sup>, բացառիկ արտոնություն էին ապահովում այնտեղ թաղելու համար այն փոքրիկ մանուկներին, որոնք չէին հասցրել իրենց մահից առաջ մկրտվել:

Վերջապես XIII դարից սկսած թաղումները քչանում են, հավանաբար արտացոլելով բնակչության նոսրացումը:

Ինչ վերաբերում է թաղման կարգերին, ապա դրանք մնացել են մոտավորապես նույնը դարերի ընթացքում՝ մարմինների դիրքի ու տեղադրման առումով: Դիակները թաղված են մեջքի վրա, գլուխը դեպի արևմուտք, ոտքերը դեպի արևելք (որպեսզի վերջին դատաստանի օրը հանգուցյալը կարողանա ոտքի կանգնել երեսով դեպի արևելք), բազուկները հաճախ կրծքի վրա խաչված: Սակայն պարունակողների մեջ նկատվում է որոշակի մի ժամատիպաբանական հոլովույթ (*évolution chrono-typologique*): Մինչև X դարը գերեզմանները սեղանակերպ արկղի ձև ունեն՝ կազմված կողի վրա կանգնեցված ուղղահայաց քարե սալիկերից, որոնց ծածկում են իրար կպած հորիզոնական սալեր: Իսկ XI դարից սկսած երևան են գալիս ավելի համեստ թաղումներ՝ անմիջապես գետնի մեջ փորված փոսերի ձևով:

Ինչպես հայտնի է, քրիստոնեական գերեզմաններում առարկաները հազվագյուտ են: Երբեքում հայտնաբերված սակավաթիվ իրերի մեջ աչքի է ընկնում գոտու մի բրոնզե ճարմանդ: Դրա տեսակը Հայաստանում արդեն հայտնի

<sup>27</sup> Հեղինակը շնորհակալ է ակադ. Ժան-Պիեր Մահեին՝ այդ կապի մասին տեղեկությունների ու դիտարկումների համար, որոնք հիմնված են *Նախալեւոստարան Յակոբայ և Մանկութեան հայկական Աւետարան* պարականոն գրքերի վրա:



էր հատկապես Դվինի պեղումներից, և համարվում էր միջնադարյան՝ ըստ Բաբեկեն Առաքելյանի այն վերաբերում է IX-XIII դարերին<sup>28</sup>: Մինչդեռ երբեք չուներ հայտնաբերված նմուշը թույլ է տալիս զգալիորեն հնացնել այս տեսակ ճարմանդները: Տակը եղած ոսկորի ռադիոածխածնային վերլուծության շնորհիվ այն վստահորեն թվագրվում է 606-766 թթ. միջև:

Երբեք հնավայրի յուրաքանչյուր գերեզմանի տեղը, անկախ դրա թվագրումից, նշվում էր դրանից մի քանի տասնյակ սմ վեր՝ գետնի մակերեսի վրա կանգնած տապանաքարով: Միակտոր տուֆի երկթեք փոքր զանգվածներ են: Հնավայրում պահպանված մոտ հիսուն նմուշները իրենց նախնական տեղում չեն մնացել (մի քանի բացառություններով) և արձանագրություններից զուրկ են: Կարելի է հնագույնը համարել ու հավանաբար վաղ քրիստոնեական շրջանին վերագրել այն տապանաքարերը, որոնք դեռ բավականին տափակ լինելով, մոտ են քարարկղների կափարիչներին: Իսկ դարերի ընթացքում, մինչև ուշ միջնադար, կարելի է ենթադրել, որ աստիճանաբար ընդգծվել է տապանաքարերի լանջերի թեքությունը: Հայաստանում գոյություն ունեցող մյուս տեսակների՝ օրորոցաձև, ուղղանկյուն կամ խոյաձև տապանաքարեր երբեք չեն պահպանվել, իսկ խաչքարերի բեկորները խիստ սակավաթիվ են, ընդ որում բոլորն էլ մանր կտորների են ջարդված:

##### 5. «Պարսպապատը» և ձուրակում գտնվող կառույցների մնացորդները

Հյուսիսից և արևելքից բազիլիկը եզերում է խնամքով կառուցված, բայց շատ վատ պահպանված մի «պարսպապատ»: Այն հետաքրքրություն է շարժում ի միջի այլոց իր կողմնորոշմամբ, որ եկեղեցու կողմնորոշումից թեթևորեն տարբեր է, մի բան որ ռելիեֆով թելադրված չէ: Արդյո՞ք դա նշանակում է, որ «պարսպապատը» նախորդել է եկեղեցուն: Հարցը մնում է բաց: Պարսպան ունի արտաքուստ տեսանելի՝ համեմատաբար կանոնավոր դասավորությունամբ, տրամատված խարխիսներով մի շարք ելուստներ: Դրանց մեջ առանձնանում են պատի արևելյան երկար հատվածից արևելք ցցվող երկու խորան-խորշերը, որոնք իրենց ներքին գոգավորությամբ բացվում են դեպի արևմուտք՝ եկեղեցական տարածքի վրա:

Հորատումներն ու դիտարկումները մտածել են տալիս, որ «պարսպապատին» ցանկացել են հաղորդել ավելի շուտ գեղագիտական-խորհրդանշական հանդիսավորություն, քան իսկապես պաշտպանական բնույթ: Ի դեպ տեղանքի ընդհանուր հանույթը հուշում է «պարսպապատի» և ձուրակը (ժամանակին) փակող «ամբարտակի» միջև կապի հնարավորությունը, որն իր հերթին առաջացնում է հանդիսավոր ուղեկամուրջի (viaduc-ի) վարկածը: Միաժամա-

<sup>28</sup> **Б. Аракелян**, «Армения в IX-XIII веках», *Археология. Крым, Северо-Восточное Причерноморье и Закавказье в эпоху средневековья*, под ред. **Б. А. Рыбакова**, Уфулқа, 2003, էջ 335-350, տախտակ 157, էջ 443, նկ. 26-28:

նակ բացառված չէ, որ պատի գոգավոր հատվածներն ունեցել են նաև մահարձանային նշանակություն:

2014 թ. պեղումներ կատարվեցին այդ պատի մեջ բացված խորանանման երկու խորշերից մեկի տակ, և հայտնաբերվեց մի խոր ու լայն փոս, որի մեջ ավաղ գանձախույզներն արդեն փորել էին (տե՛ս ներդիր, նկ. 16): Սակայն բացառված չէ դամբարանի առկայությունը: Դժբախտաբար, գործընկերոջ մահվան պատճառով արշավախումբը չկարողացավ ավարտել այդ զննումն ու պեղել նաև մի քիչ ավելի հարավ երկրորդ խորշի տակ:

Բազիլիկից հյուսիս-արևելք փոքր ձորակում կիսաթաղված շենքն<sup>29</sup> ու դրանից հարավ ձորակը հատող պատերի մնացորդները մի շարք հարցեր են հարուցում կապված դրանց և՛ թվագրման և՛ գործառույթի հետ: Պատասխանների մի մասը կարող է տալ ձորակի ստորգետնյա շերտերի ուսումնասիրությունը, որին լծված է արշավախմբի երկրաձևաբան (géomorphologue) հնագետը:

Կիսաթաղված շենքը 1984 թ. ուսումնասիրել է հանգուցյալ հնագետ Ֆ. Տեր-Մարտիրոսովը, որ դրա գործառույթի համար առաջարկել է սկզբից ջրամբարի (ցիստեռնի) և հետո դամբարանի վարկածները: 2013 թ. արշավախմբի երկրաձևաբանը հորատում կատարեց շենքից արևելք և ի հայտ բերեց ժայռերի արհեստական մի կուտակում պատնեշ՝ ստեղծված հավանաբար շենքը ջրից պաշտպանելու համար: Այս հանգամանքը թուլացնում է ջրամբարի ենթադրությունը և ուժեղացնում ի սկզբանե կիսաթաղված շինության դամբարանային գործառույթի վարկածը:

Պատնեշի առկայությունը մտածել է տալիս նաև, որ գետակի սկզբնական հունն ու տեսքը այժմվանից տարբեր են եղել, մի տարբերություն, որ տրամաբանորեն կապվում է ձորակը հատող երեք-չորս պատերի համակարգի հետ: Այդ պատերի հյուսիսային (հոսանքն ի վեր) երեսը խնամքով մշակված է և որմնամուկներով ու աստիճաններով ուժեղացված, մի բան, որն իր հերթին մատնանշում է ամբարտակից տարբեր, սկզբնական մի այլ գործառույթ, կապված գուցե եկեղեցու արևելյան պարսպի հետ, որի կարծես շարունակությունն է կազմել այդ պատերի համակարգը: Այստեղ ևս դեռ բազմաթիվ հարցականներ են մնում...:

Վերը նշեցինք ուղեկամրջի (viaduc-ի) վարկածը: 2014 թ. գիտարշավի ժամանակ հնավայրից հարավ-արևելք տարածվող սարահարթի վրա կատարված տեղանքի զննումը թույլ տվեց վերհանելու «ամբարտակի» առանցքով, դրանից արևելք ընթացող մի ճանապարհի հետքերը: Բավական կանոնավոր եզրերով և մոտ երեք մետր լայնությամբ, կառանցիկի տպավորությունը թող-

<sup>29</sup> Դրա մասին տե՛ս Փ. Թեր-Մարտիրոսով, «Мало изученные памятники Ереруйка», Հայոց սրբերը և սրբավայրերը, Եր., 2001, էջ 234-243, այստեղ էջ 241-243:

նող կարծես մի ուղի է դա, որ այսօրվա մեր գիտելիքներով հնարավոր չէ թվագրել, բայց որ կարող է հավելյալ փաստարկ հանդիսանալ վերը նշված վարկածն ամրապնդելու համար: Այսինքն փաստելու համար, որ ձորակը հատող պատերի համակարգը՝ որպես ջրամբարային ամբարտակ ծառայելուց առաջ եղել է հանդիսավոր ուղեկամուրջ, որով արևելքից, թերևս Դվինից կամ Վաղարշապատից եկող ուխտավորը կամ ճամփորդը հասնում էր մինչև համբավավոր սրբարանը: Հավելենք, որ 2014 թ. պեղումները «ամբարտակի» վերջին ու նախավերջին պատերի արանքում ի հայտ բերեցին հնագիտական նյութեր, որոնք դեռ ուսումնասիրվում են, բայց ամենայն հավանականությամբ կապվում են անտիկ և ուշ անտիկ շրջանի հետ:

#### 6. Պրպտումների սահմանափակումներ ու հեռանկարներ

2013 և 2014 թթ. գիտարշավները (թեպետ երկրորդը ծրագրված ժամկետից կանուխ ընդհատվեց) մի շարք հետաքրքիր արդյունքներ տվեցին, որոնք փորձեցինք ամփոփել վերևում: Թվեցինք այն կարևոր նորույթները, որոնք վերաբերում են բազիլիկին ու դրա պատմությանը, խաչակիր կոթողներին ու դրանց պատվանդաններին, գերեզմանոցին ու ընդհանրապես մահարձանային հնագիտությանը, ձորակում գտնվող թաղածածկ շենքին ու առեղծվածային «ամբարտակին»: 2014 թ. գիտարշավը հնարավորություն տվեց նաև ավարտին հասցնել հնավայրի տարբեր մասերում գտնվող քանդակազարդ քարերի բազմաթիվ բեկորների կատալոգը<sup>30</sup>: Իսկ քանդակազարդ այդ բեկորների ուսումնասիրությունը առատ լույս կարող է սփռել Երեբունյքի հուշարձանների պատմության ու գեղարվեստական արժեքի վրա:

Վերջապես նշենք, որ Երեբունյքի հուշարձանախմբի պահպանման ու վերօգտագործման հարցերը նույնպես մտահոգում են արշավախմբին, որ այս կապակցությամբ գործակցում է ՀՀ Մշակույթի նախարարության հետ: Սակայն այդ մասին ս. թ. հունիսին արդեն զեկուցում է ներկայացվել Երևանում կազմակերպված՝ պատմամշակութային ժառանգության պահպանությանը նվիրված գիտաժողովում, որի նյութերը պիտի շուտով հրատարակվեն<sup>31</sup>: Ուստի անհրաժեշտություն չկա այստեղ այդ հարցերին նորից անդրադառնալ:

Արշավախումբը լավ գիտակցում է, որ Երեբունյք հնավայրի վիթխարի ծավալն ու բազմաշերտ խորությունը պահանջում են մարդկային ու նյութական շատ ավելի մեծ միջոցներ, քան եղածները: Արշավախումբը համոզվել է նաև, որ հնավայրը ներկայացնում է բազմաթիվ բարդություններ՝ կապված խորհրդա-

<sup>30</sup> Բազմաթիվ (երկու հարյուրից ավել) այդ բեկորներից կարևորների գծագրային հանույթները կատարում է արշավախմբի երևանցի անդամ, Էրեբունու թանգարանի աշխատակից, հնագետ-նկարիչ Աննա Ազիզյանը:

<sup>31</sup> Պ. Տոնապետյան, «Երեբունյք հնավայրի պահպանություն», Պատմամշակութային ժառանգության պահպանություն. Միջազգային գիտաժողով, Եր., 2014 թ. հունիսի 4-6:

յին շրջանում կատարված ու շատ անբավարար ձևով կամ բոլորովին ոչ վավերագրված աշխատանքների հետ, որոնց հետևել է ամենաթողութչան մի շրջան, երբ բազմացել են գանձախույզների վայրենի պեղումները: Այնուամենայնիվ, ձգտելով կիրառել LA3M-ին հատուկ բազմակողմանի, միջմասնագիտական ու համընդգրկող մոտեցումը, իր կարողությունների սահմաններում, արշավախումբը հույս ունի պատասխանելու իր առջև դրված հարցերից գոնե մի քանիսին: Հույս ունի նաև, որ արծարծված խնդիրներն ու ձեռք բերված արդյունքները նոր սերնդի մասնագետների ուշադրությունը կգրավեն դեպի կարևոր ու խոստումնալից մի ասպարեզ, որ ցարդ անտեսվել է հայ հնագետների կողմից՝ դա միջնադարյան Հայաստանում քրիստոնեական թաղման ծեսի ուսումնասիրությունն է:

Բարեբախտաբար Երերույք հնավայրը, ինչպես դրա նման անթիվ հայկական այլ հնավայրեր, շատ ընդարձակ է ու առեղծվածներով հարուստ, ուստի դեռ առատ ու պարարտ հող է պարունակում բազմաթիվ նոր գիտարշավների ու գիտական պրպտումների համար:

### Patrick Donabedian

#### The Results of the 2013-2014 Archaeological Campaigns on the Site of Yereruyk

The investigations carried out since 2009 on the Early Christian and Medieval site of Yereruyk by a joint Armenian-French archaeological mission have already been presented through several public, published or forthcoming, and on-line reports (see notes n° 4-6). The aim of the present article is to give short information on the main results of the last campaigns of 2013 and 2014. They concern the three-nave basilica, its history, dating, hypotheses of reconstitution, the cemetery discovered on its southern and eastern sides, and the study of the tombs, the remains of memorial monuments preserved on this funeral-memorial area, the fence wall (“rampart”) which marks the eastern edge of the ecclesial area, with its abutments and “exedras”, the vaulted building to the North-East of the basilica, at the bottom of a small valley, and the remains of a “dam” which once crossed this valley, to the South-East of the church. The objective of the multidisciplinary approach developed by the LA3M together with the archaeologists of the Gyumri Regional Museum is to try to better apprehend the history of this enigmatic ensemble, the chronological and functional links between its components, the relations with its environment, and finally the reasons of the presence of such a large complex in an area now deprived, but probably actively involved, in the past, in the regional life, between Dvin, Vagharshapat and Ani.



**CHRISTINA MARANCI**

**NEW EVIDENCE FOR THE WALL PAINTINGS AND  
TRIUMPHAL ARCH INSCRIPTION AT MREN**

The church of Mren, completed c. 638/9 and located in the Kars province of modern eastern Turkey, preserves in its sanctuary the fragmentary remains of wall painting, as many have observed. I had the good fortune of making visits to the church last year, when I detected heretofore unnoticed details of Christ in the apse, an almost complete identification of the apostolic group, new details of their figures, and additional paintings on the north wall of the sanctuary and one of the eastern piers (see picture N 17). During the same trip, Steven Sim and I observed and took photographs of an inscription on the apsidal arch. I deciphered this inscription in April of this year, and believe that it constitutes one of the earliest Armenophone biblical inscriptions. What I offer here is a summary of these findings. One hopes that this new pictorial and textual evidence serves to heighten the urgency of stabilizing and preserving the church, which is now in precarious structural condition.

**The Wall Paintings in the Sanctuary**

The bust of Christ in the apse conch is sufficiently well preserved to identify basic forms and contours. Christ has a long, oval face and wears a purple, robe-like himation over a square-necked chiton. The halo contained a cruciform design, of which only the left arm is now visible. The left and right shoulders of Christ are not of equal height: while the outline of his left shoulder curves downward, the right shoulder curves up as if he were raising his right hand in benediction. Fragments of paint in the zone of his left shoulder suggest that he was holding an open scroll. Christ's right lower leg, his foot, and a jeweled pedestal are also visible (see picture N 18). His garment is hemmed at the top of the long and elegant foot, which is shown slightly foreshortened. The remains of a sandal are also evident: it is fastened to the foot with string-like straps. Deep flesh-toned pigment can still be discerned in this area. Below the foot is a jeweled boxlike footrest. The foreshortened position of the footstool is indicated in part by a series of diagonal hatchmarks on its

upper surface. From behind the footrest, a rinceau emerges like a woody stem.

Below the image of Christ, in the zone of the three windows, is a row of figures identifiable as an apostolic group. While the existence of this group has been mentioned, the photographs presented here offer new information for consideration. There appear to be eight apostles in total: three to the left of the left apse window, two flanking the central window, and three to the right of the right window. The figures' busts are enclosed in medallions and bear, to the side, onomastic inscriptions in *erkat'agir*. These texts are incised into the wall surface and were probably painted originally. The left group, from left to right, consists of Philip (ՓԻԼԻՊՈՍ), Matthew (ՄԱԹԷՈՍ), and John (ՅՈՎՀԱՆՆԷՍ). The next identifiable single figure is Peter (ՊԵՏՐՈՍ). Damage to the figure to the left of the central window precludes secure identification, but we may suppose that it is Paul; the same pairing was suggested on the west portal lintel. Finally, the trio at far right is, from the left, Mark (ՄԱՐԿՈՍ), Luke (ԼՈՒԿԱՍ), and Thaddeus (ԹԱԾԷՍ).

All the apostles at Mren have been defaced. Nevertheless, close observation permits some deductions regarding their original appearance. The heads are small and the necks muscular, with subtle modulations indicating roundness. They are rendered as specific likenesses: Philip (see picture N 19) is represented as a young beardless man, according to tradition, while Peter (the best preserved of the group) is a bearded older man with short gray hair and a high forehead. The figures wear draped garments that fall in vertical folds down one shoulder and create a square opening for the neck. At least some of the figures (Matthew, Peter, Luke) appear to be in three-quarter view.

Medallions emphasize the nimbed heads and busts of the apostles, but they were actually rendered as full-length figures, as a few faint details show. Some distance below the bust of Phillip is a hand holding a closed scroll, and Mark's right hand, emerging from long flowing drapery, is also visible. The right hand of Peter may be seen next to the central window; he uses it to point upward to the figure of Christ. The proportions of these figures are naturalistic, if not slightly elongated, with small heads and soft modulations of color on skin and on drapery.

On the intrados of the apse are a series of busts in medallions. Although only three remain, on the right side of the apse, it seems likely that twelve originally decorated this zone. As Thierry and Thierry have noted, the medallions form a kind of rinceau in which two bands intersect

to form a set of circles. Two of the three preserve their names next to their heads; unlike the apostles on the apse wall, the names are entirely within the frame of the medallions and on both sides of the figures' heads. The uppermost of these busts, perhaps because of its great height, offers the best-preserved physiognomy of any painted figure at Mren. Because of the way the painting has deteriorated, inverting the colors of the photograph (essentially creating a negative) yields a greater sense of the facial features. The face is long, with large, almond-shaped eyes, a long nose with fleshy nostrils, full lips, and a long wispy mustache and pointed beard.

Clerics appear on the northern wall of the sanctuary. The western of the two, published in 1971 by Thierry and Thierry, is the best-preserved full-length figure at Mren. Framed in a painted rectangular panel, he is situated on the northern pilaster of the sanctuary, bordering the area of the nave. On the same wall, just to the north of the triumphal arch, I have identified an additional clerical figure. Although almost completely defaced, one clue remains to ensure both the existence of a figure and its ecclesiastical identity: the omophorion. Descending toward the hem of the figure's garment is a narrow, rectangular panel of cloth which is edged in horizontal lines and terminating in a fringe. This figure, too, was framed in a rectangular panel.

On the east face of the southeast dome pier, one additional figure may be discerned (see picture N 20). Only the upper left corner of the painting is preserved. Within a rectangular panel framed in red is the fragmentary head and nimbus of a figure. The one preserved eye is large and almond-shaped, and the brow above is prominent and thick; the low forehead is capped by thick crop of black hair, suggesting a youthful person. Next to the face, in faint lettering, is the inscribed word SURB (ՍՐԻԲ). To the left of the figure is a narrow band, evidently a kind of frame, in which one may still discern faint traces, in yellow-gold pigment, of a star or floral ornament. This form is reminiscent of the border decorations of sixth-century icons in Sinai, including the encaustic panels of Christ and of the Virgin, Child, and Saints.

This short description hopefully demonstrates that Mren has the potential to add significantly to our knowledge of Armenian painting. Only some seven identifiable figural programs are known; of them the best known and relatively best preserved are Lmbatavank' (Širak province), the large church at T'alın, and Aruč (both in Aragac'otn province). The church of Aruč provides the closest parallel for the program



at Mren, however. There Christ is shown standing above a row of apostles, as at Mren. Although there is some discussion about the precise years of the construction of Aruč, historical sources and a foundation inscription indicate a likely date in the seventh decade of the seventh century. It is difficult to compare two fragmentary programs; nevertheless, what remains at the two monuments demonstrates a common iconographic scheme, a shared pictorial style and figural treatment, and a correspondence in several compositional details. Notably, the elevated right arm and the unfurled scroll in the left hand; the elegant, elongated feet, the same sandal type, and the identical conception of a two-tiered jeweled footrest from which a rinceau emerges. Close examination of the two footstools reveals a striking stylistic parallel: the same technique of diagonal strokes is used in both to indicate recession from the front to back of the object. This feature was previously thought to be unique to Aruč in the context of early medieval Armenian wall painting.

The close relationship between Mren and Aruč bears on a number of existing scholarly questions, including the relative chronologies of the two monuments (a subject best approached by textual and architecture analysis), and it raises new ones as well, including, but not limited to, exploring the prevalence of the standing (rather than enthroned) Christ as seen at Aruch, Tsromi, Mren, and maybe Artik (according to Durnovo); the role of images in this Heraclian-era monument, and the continuity of Armenian painting tradition from the fourth to the sixth decade of the seventh century, that is, from Byzantine to Arab rule. The wall paintings at Mren offer important evidence for these issues because they belong to a monument rich in epigraphy and sculpture for which we have considerable contextual information. What we can say for sure is that this set of images, the extent of which was not appreciated until very recently, now constitutes the most complete and coherent program of early medieval wall painting surviving in Armenia.

### **The Apsidal Inscription**

The inscription is located in the east end of the church on the arch crowning the apsidal curvature, on the surface facing the interior. The letters are painted in dark or black color and are in *erkat'agir* script, measure around 24 centimeters high, and are spaced generously. Presumably they once ran around the semicircle of the arch, but damage to the wall surface prevented me from discerning any on the left side. The first visible letter appears slightly to the left of the apex of the arch, and, with

two lacunae, is then followed with a series of almost completely readable letters until the bottom right. There are nineteen visible letters. The first letters preserve the last part of a nominative abstract noun "...ԲՈՒԹԻՒՆ"; the last visible fragment preserves the sequence of letters "ԴԵՐԿԱՅՆԱԻՈՒՐՍ". Based on this evidence, I propose that the complete inscription was a quotation from Psalm 92 (93): 5:

[ՏԱՆՔՈՒՄՎԱՅԵԼԷՍՐ]ԲՈՒԹԻՒՆ[ՏԷՐԸՆ]ԴԵՐԿԱՅՆԱԻՈՒՐՍ.

Տան քոմ վայելէ սրբութիւն Տէր ընդ երկայն ատուս.

Holiness befits your house, Lord, for the length of days.

When was this inscription painted? It should not necessarily be assumed that the text is seventh century; much more close physical inspection should be done to ascertain that. As is well known, Mren underwent periods of restoration, most prominently in the tenth and thirteenth centuries. It is possible that the text was added during the period of Bagratid control of the settlement of Mren, a period well attested in the exterior epigraphy of the church. At the same time, there is nothing in the paleography, as far as I can see, distinguishing the text from seventh-century Armenian inscriptions, whether lapidary, of which there are many, or painted. The paleography seems quite comparable to mid-seventh-century Armenian inscriptions in stone, such as the exterior west façade inscription at Mren itself, the sundial inscription at Zuart‘noc‘ (c. 641-661), and the east façade foundation inscription of Aruč (c. 660). The most useful comparison, however, is with the painted inscription in the apse of Aruč. The wall painting there features a standing Christ holding in his left hand an open scroll which preserves the Armenian text of John 14:21. Another reason to date the Mren inscription to the seventh century is the strong relationship of the inscription to the painted program within which it is nested. The evidence of the wall paintings, together with the paleographical remarks made above, therefore offer a strong basis on which to situate the inscription within the original period of church construction.

If this seventh-century date is correct, the arch inscription at Mren would represent the earliest known direct quotation of the Bible in an Armenophone epigraphic context. However, an important local precedent is found in a Greek inscription of Psalm 92(93): 5 at the three-aisled basilica of Ereroyk‘. Located in the Ani-Pemza region of the Armenian Republic, Ereroyk‘ is typically dated by scholars from the end of the fifth to the sixth century. At the extreme eastern end of the south façade of the

church, just at the corner of the building, the psalm quotation appears in five lines within a rectangular frame with dovetails at either side.

In addition to the Ereroyk' text, at least thirteen other Greek inscriptions in the Mediterranean and Near East cite Psalm 92(93): 5. They may be grouped, roughly, into three categories: 1) fifth- and sixth-century inscriptions in stone or mosaic pavements in Cilicia, Syria, Lebanon, North Africa, and the Holy Land; 2) the early Byzantine mosaic inscription in the arch at the church of the Dormition in Nicaea, dated before 726; and 3) Byzantine inscriptions in Thrace, Greece, and Sicily, either painted or mosaic, and located (as at Nicaea) in the elevation of the apse.

Insofar as the Mren inscription is positioned within the apse, rather than on a pavement or exterior wall of the church, it forms a parallel closest with the church of the Dormition in Nicaea, because of its relatively early date, the text selection (the longer version of the Psalm text, and without the prefix "your decrees are very sure"), and its location in the arch span. Therefore, unlike the Greek inscription of the Psalm at Ereroyk', which has been connected with Syrian epigraphic practices and church decoration, the Mren inscription seems more persuasively situated within the context of early Byzantine church decoration. Certainly the contextual evidence supports such a claim, as Mren was constructed during the consolidation of the eastern frontier by the emperor Heraclius in the late 620s and 630s. Heraclius is named in a building inscription extending across the west façade of Mren. He is also identified by scholars on the north portal, in a scene believed to represent the Return of the True Cross to Jerusalem. This combination of epigraphic and visual evidence has been regarded a vivid expression of the "high tide" of Byzantium in Armenia. Within a local context, the Mren triumphal arch inscription is also noteworthy, as it is the earliest preserved biblical inscription to be found in an Armenian church apse. The text selection, moreover, may be connected to the Armenian rites of consecration and the eucharist, and raises interesting questions about possible relations with Byzantine liturgical tradition.

### **Conclusion**

The apse at Mren offers precious new evidence for the art and epigraphy of medieval Armenia. More work must be done on this inscription, including, first and foremost, a high-quality photographic study (which was not possible during my visits). Given the severely compromised state of the building, this task should be given utmost priority.

**Քրիստինա Մարանցի**  
**Նոր տվյալներ Մրենի որմնանկարների և հաղթականաբարի արձանագրության վերաբերյալ**

Կարսի շրջանում գտնվող Մրենի եկեղեցու շինարարությունն ավարտվել է 638/9 թ.: Պահպանվել են նրա զոհասեղանը և որմնանկարների հատվածներ: Ինձ բախտ է վիճակվել անցյալ տարի այցելելու եկեղեցին և խորանում նկատելու Քրիստոսի պատկերի մնացորդներ, առաքյալների համարյա մի ամբողջական խումբ, նրանց ֆիգուրների նոր մանրամասներ և լրացուցիչ նկարներ խորանի հյուսիսային պատին ու քարամույթերից մեկի վրա: Այս պատկերները սերտ առնչություն են ցուցաբերում է դարի վերջի Արուճի եկեղեցու հետ, և կարելի է ենթադրել, որ առաջինները պատկերագրության առումով նմուշ են ծառայել վերջիններիս համար, և, ավելի լայն առումով, որ արաբական նվաճումների առաջին տասնամյակներում Հայաստանում մշակութային ավանդույթների շարունակականություն է եղել:

Նույն ճամփորդության ժամանակ ես և Սթիվեն Սիմը քարամույթը պսակող կամարի ներքին մակերեսի վրա նկատեցինք և վերծանեցինք մի արձանագրություն: Մոտ 24 սմ բարձրությամբ երկաթագիր տառերը գրված են մուգ գույնով և տեղադրված են միմյանցից բավական հեռու: Տասնինը տեսանելի տառերից դատելով ենթադրում եմ, որ ամբողջական արձանագրությունը մեջբերում է ՂԲ 5 Սաղմոսից. «Տան քում վայելէ սրբութիւն Տէր ընդ երկայն աւուրս»: Սա, իմ կարծիքով, հայալեզու սուրբգրային վաղագույն արձանագրություններից մեկն է: Հուսանք, որ այս նորահայտ որմնանկարներն ու արձանագրությունը ավելի հրատապ կգարձեն փլուզման ենթակա եկեղեցու ամրացման և պահպանման աշխատանքները:



## ՀԱՄԼԵՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԵՇՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ (15-18-րդ դարեր) ՏԱՊԱՆԱՔԱՐԱՅԻՆ ՊԱՏԿԵՐԱՔԱՆԴԱԿԻ ՊԱՏՃԱՌԱՔԱՆԱԿԱՆ, ՊԱՏԿԵՐԱԳՐԱԿԱՆ ԵՎ ԻՄԱՍՏԱՔԱՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ:

Մարդկային և կենդանական պատկերներով (ֆիգուրատիվ) բազմազան հորինվածքները տապանաքարերի վրա երևան եկան 15-րդ դարից սկսած: Ընդ որում, դրանց երևան գալը նշանավորվեց նաև տապանաքարերի ավանդական մի տիպի ավելի լայն կենցաղավարումով, ինչպիսին էր ուղղանկյուն-զուգահեռանիստ ծավալ ունեցող տապանաքարը, և նոր տիպերի ի հայտ գալով՝ ինչպիսիք էին խոյաքարերը և համեմատաբար սահմանափակ տարածում գտած ձիաքարերը: Ցավոք, մշակութային այս նոր երևույթի ծագման և կենցաղավարման հիմքերը դեռ հանգամանորեն պարզաբանված չեն: Նույնը, թերևս ավելի պակաս չափով, կարելի է ասել և պատկերաքանդակային հորինվածքների իմաստաբանության մասին, չնայած դրանց տարբեր առիթներով անդրադարձել են մի շարք հետազոտողներ<sup>1</sup>:

<sup>1</sup> **И. А. Орбели**, “Бытовые рельефы на крестных камнях Хачена”, *Избранные труды*, Ер., 1963, с. 102, **Բարխուդարյան Ս., Կարախանյան Գ.**, «Հայկական գերեզմանական հուշարձաններ և նրանց ֆանդակները». - *Պատմա-բանասիրական հանդես* (այսուհետ՝ ՊԲՀ), 1959, թիվ 4, էջ 195-209: **Ս. Բարխուդարյան**, *Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ*, Եր., 1963, էջ 150-180: **Վ. Բդոյան**, *Երկրագործական մշակույթը Հայաստանում*, Եր., 1972, էջ 168-183: **Գ. Կարախանյան**, «Հայաստանի միջնադարյան կենցաղային ֆանդակներ (15-17-րդ դդ.)». - *Կրթեր հասրակական գիտությունների* (այսուհետ՝ *Կրթեր*), 1975, թիվ 8, էջ 31-47: **Р. Эфенди**, *Декоративное-прикладное искусство Азербайджана (средние века)*, Баку, 1976, с. 173-174. **Գ. Կարախանյան, Հ. Մելոնյան**, «Գորգագործական տեսարաններ հայկական միջնադարյան պատկերաֆանդակներում», *ՀՄՍՀ-ում 1981-1982 թթ. դաշտային հնագիտական աշխատանքներին նվիրված նստաշրջան: Զեկուցումների թեզիսներ*, Եր., 1983, էջ 33-34: **Ա. Մարտիրոսյան**, «Մի նորահայտ տապանաքար». - ՊԲՀ, 1988, թիվ 2, էջ 154-159: **B. Brentjes**, “Armenian Tombstones and Turkish Adaptations in the 14<sup>th</sup>, 15<sup>th</sup> and 16<sup>th</sup> Centuries”, *In: Fifth International Symposium of Armenian Art, Venezia, San Lazaro*, 1988, p.159-162. **Г. Петросян**, “О памятниках Аветараноца”, *Коммунист*, 1989, 17 сентябрь (N 240). **Հ. Պետրոսյան**, «Բնակարթի հայտնի տապանաքարի հորինվածքի մեկնության շուրջ». - *Հանդես ամսօրյա*, 2000, էջ 429-456: **Նույնի**՝ «Վայոց Ձորի տապանաքարային ֆանդակը», *Արվեստի հանրապետական նստաշրջան: Զեկուցումների հիմնագրություններ*, Եր., 1995, էջ 53-54: **Նույնի**, «Վայոց Ձորի տապանաքարային ֆանդակը. կովի թեման», *Նորավանք 99 գիտաժողով*, Եր., 1999, էջ 22: **Նույնի**՝ «Անանիա Շիրակացու «Ներախնամականը» և միջնադարյան խնջույքը», *Հայաստանը և Քրիստոնյա Արևելքը*, Եր., 2000, էջ 356-36: **Նույնի**՝ ««Մանուկի» կերպարը ուլմիջնադարյան հայ տապանաքարային ֆանդակում (15-17-րդ դարեր)», *Թուխ մանուկ*, Եր., 2001, էջ 68-84: **Նույնի**՝ «Ուսումնասերի կերպարը և ուսումնատրթյան թեման հայ

Ֆիզուրատիվ քանդակն ինքնին նորություն չէր հայ կոթողային արվեստում: Դեռևս վաղ քրիստոնեությունն իր բարդ և համամասն համակարգը հասարակ համայնականներին ներկայացնելու համար լայնորեն օգտագործում էր նաև պատկերաքանդակը, ինչի վկայություններն են զանազան աստվածաշնչյան և տեղական քրիստոնեական թեմաների ու կերպարների պատկերումները այսպես կոչվող քառակող կոթողների վրա<sup>2</sup>: Որ պատկերակիր կոթողներն ունեցել են առաջին հերթին դիդակտիկ-ուսուցողական նպատակներ՝ վկայում է այն հանգամանքը, որ դրանց մի շարք օրինակներ պատկերաքանդակներ են կրում բոլոր չորս նիստերի վրա էլ: Քրիստոնեականին զուգահեռ վաղ միջնադարից մեզ են հասել նաև այսպես կոչվող «աշխարհիկ քանդակի» նմուշներ, որոնք թեև թեմատիկ առումով շատ ընդհանրություններ ունեն ուշ տապանաքարային քանդակի հետ, սակայն նրանց կապը թաղման կառույցների հետ մնում է չպարզված, բացառությամբ Աղցքի արքայական դամբարանի հայտնի որսի տեսարանի, որի նախնական թվագրությունն ու անմիջական կապն Աղցքի դամբարանի հետ մնում է թեական<sup>3</sup>: Թե ինչու այս քանդակներն անհետացան 7-8-րդ դդ. սահմանագծում՝ վերջնականապես պարզված չէ: Մի շարք հետազոտողներ գտնում են, որ դրա պատճառները հայ եկեղեցու հակաքաղկեդոնական-պատկերամարտ դիրքորոշման ամրապնդումն էր 7-րդ դարում, ինչպես նաև արաբական տիրապետությունն ու մահմեդական նվաճողների անհաշտ վերաբերմունքը մարդու պատկերման հանդեպ<sup>4</sup>: Թվում է կային այլ հանգամանքներ էլ. ազգային քրիստոնեական գաղափարախոսության զարգացմանը զուգընթաց նոր կոթողի՝ խաչքարի ձևավորումը, դիդակ-

միջնադարյան պատկերաֆանդակում», Հայոց Գրեր: Միջազգային գիտաժողով նվիրված հայոց գրերի գյուտի 1600-ամյակին: Զեկուցումների ժողովածու, Եր., 2006, էջ 293-299: **Նույնի՝** «Կյանքի մատյանը հայ մշակույթում. գաղափարաբանություն և պատկերագրություն», *Քանդարան*, 2012, էջ 40-50: **Հ. Պետրոսյան, Հ. Պիկիչյան**, «Երաժշտությունը և պարը պատկերագրության մեջ. Միջազգային գիտաժողով: Զեկուցումների հիմնագրություններ, Եր., 1995, էջ 16-17, (նույնը՝ անգլերեն, նույն տեղում, էջ 24-25):

<sup>2</sup> **Գ. Հովսեփյան**, «Գերեզմանական հին կոթողները և նրանց հնագիտական արժեքը հայ արվեստի ուսումնասիրության համար», *Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության*, հ. Բ, Եր., 1987, էջ 153-189: **Բ. Ն. Առափեյան**, Հայկական պատկերաքանդակները 4-7-րդ դարերում, Եր., 1949: **Լ. Ազարյան**, Վաղ միջնադարյան հայկական քանդակը, Եր., 1975: **Ս. Ս. Մնացականյան**, Հայկական վաղ միջնադարյան մեմորիալ հուշարձանները, Եր., 1982: **Գ. Գրիգորյան**, Հայաստանի վաղմիջնադարյան քառանիստ կոթողները, Եր., 2012:

<sup>3</sup> **S. Der Nersessian**, *Armenian Art*, Paris, 1978, p. 63.

<sup>4</sup> **Գ. Հովսեփյան**, նշվ. աշխ., էջ 187-189: **Բ. Ն. Առափեյան**, նշվ. աշխ., էջ 110-112: **Ս. Սահրումյան**, Գուգարքի մեմորիալ կոթողները, Եր., 1980, էջ 4: **Ս. Շահինյան**, Հայաստանի միջնադարյան կոթողային հուշարձանները. 9-13-րդ դարերի խաչքարերը, Եր., 1984, էջ 9-10, 13:

տիկ-ուսուցողական պահանջի նվազումը և այլն<sup>5</sup>։ Ինչևէ, 8-րդ դարից սկսած ֆիզուրատիվ քանդակներ կրող կոթողներ այլևս չեն կերտում, 9-րդ դարի կեսերից երևան են գալիս խաչքարերը, որոնց երկրաչափական և բուսական նախշերից կազմված վերացական-մտահայեցողական հորինվածքները ցուցում են եթե ոչ հակադրվածություն, ապա գոնե սկզբունքային տարբերություն ֆիզուրատիվ քանդակից։ Միայն Արցախում, մասամբ էլ Ուտիքում էր, որ խաչքարերի երկրաչափական հորինվածքներն ուղեկցվում էին ֆիզուրատիվ քանդակներով, այն էլ առկա տվյալներով ոչ ավելի վաղ, քան 12-րդ դարից ի վեր<sup>6</sup>։ Ընդ որում, ֆիզուրատիվ հորինվածքներն անհամեմատ ավելի հաճախ են հանդիպում գյուղական գերեզմանոցներում և հազվադեպ՝ վանքային համալիրներում, ինչը վկայում է, որ դրանք առաջին հերթին ժողովրդական կամ ոչ քրիստոնեական ընկալումների արգասիք են։ Արցախի խաչքարերն իրենց քանդակականախշ մակերեսի երկմաս բաժանումով երբ վերնամասը զբաղեցնում է զուտ խաչային հորինվածքը (փրկության պաշտոնական-քրիստոնեական գաղափարի արտացոլումը), իսկ ներքնամասը՝ պատկերաքանդակը (տվյալ դեպքում մահը հաղթահարելու ժողովրդական պատկերացումների արտացոլումը)<sup>7</sup>, արդեն նախանշում են գերեզմանային նոր կոթողի հեռանկարը։ Հայ միջնադարի դասական գերեզմանային կառույցը ճարտարապետական լուծման առումով երկմաս էր՝ բաղկացած հորիզոնական դիրքով դրվող հարթ կամ երկթեք տապանաքարից և ուղղաձիգ կանգնեցվող խաչքարից։ Եթե առաջինը խորհրդանշական ձևով իրականացնում էր խզումը, ապա երկրորդն, ընդհակառակը՝ կապը։ Ընդհանրապես նկատելի է, որ գերեզմանային կառույցների ընդհանրական խորհրդաբանությունը՝ սկսած բրոնզի դարից, երևան է բերում երկու հակադիր ընկալման համադրում. մի կողմից հանգուցյալի հետ կապի խզում (գերեզմանափոս, դամբարանալիցք, պատյան, տապանաքար), մյուս կողմից այդ կապի ապահովում (մենհիր, աշտարակ, կուրգան, ֆալոս, խաչքար և այլն), հանգամանք, որը վկայում է հենց մահվան երկակի ընկալումը հին հասարակություններում, մոտավորապես այնպես, ինչպես միջնադարում կողք-կողքի գոյատևում էին ողբի և փրկության գրական-պատկերագրական ժանրերը<sup>8</sup>։

15-րդ դարից մեծ տարածում ստացած տապանաքարի հիմնական տիպն ուղղանկյուն զուգահեռանիստն է՝ երկթեք կամ կլորացող վերնամասով (որի պատճառով էլ այն հաճախ կոչում են օրորոցաձև տապանաքար), հյուսիսային

<sup>5</sup> Հ. Պետրոսյան, *Խաչքար. ծագումը, գործառույթը, պատկերագրությունը, իմաստաբանությունը* (այսուհետ՝ *Խաչքար*), Եր., 2008, էջ 88-89։

<sup>6</sup> Տե՛ս Հ. Պետրոսյան, «Հովսեփ Օրբելին և Արցախի խաչաքարային պատկերաբանակալի հետազոտության խնդիրը»։ - *Վեմ*, 2014, թիվ 2, էջ 100-113։

<sup>7</sup> Մանուսյան տե՛ս Գ. Петросян, «К интерпретации одной группы сюжетных рельефов на хачкарах Арцаха»։ - *ՊԲՀ*, 1997, թիվ 2, էջ 164-171։

<sup>8</sup> *Խաչքար*, էջ 339-341։



<sup>3</sup> Այսրկովկասյան տարածաշրջանում նման կոթողներ հանդիպում են պատմական Հայաստանի և Վիրի տարածքում: Դա հայկական Այրարատ և Գուգարք նահանգներն են, որոնց առանձին հատվածներն այսօր մաս են կազմում Արևմտյան Հայաստանի ու Վրաստանի, մասնավորապես, Կարսի նահանգը, Կվեմո Քարթլին (հարավային Քարթլին) ու բուն Ջավախքը: Իսկ Վիրի տարածքում Շիրա Քարթլին (ներքին Քարթլի) ու Մծխեթա-Մտիաներին:

իսկ վերջին մենագրությունը, որի հեղինակն է Գրիգոր Գրիգորյանը, լույս տեսավ 2012 թ.<sup>4</sup>։ Այդուհանդերձ, քառանիստ կոթողների հետ առնչվող մի շարք հարցեր լուսաբանված են ոչ բավարար չափով և դրանց շարքում մենք հատկապես առանձնացնում ենք պատկերագրության և դրա հետ սերտ առնչվող թվագրության խնդիրները։

Քառանիստ կոթողների կանգնեցման ժամանակի և շարժառիթների մասին չկան պատմական ստույգ տեղեկություններ, իսկ կոթողները, որպես կանոն, չունեն արձանագրություններ<sup>5</sup>։ Հայտնի է, որ քարե կոթողները կանգնեցվել են մինչև արաբական գերիշխանության շրջանը, արաբների կողմից կոթողների ոչնչացման մասին է գրում Ղևոնդ պատմիչը<sup>6</sup>։ Սակայն այն հարցը, թե երբ են դրանք ի հայտ եկել՝ հստակեցված չէ։

Քառանիստ կոթողների թվագրությունը մասնագիտական գրականության մեջ շատ ընդհանրական է։ Ուսումնասիրողների մի մասը դրանք թվագրում է 4-6-րդ դդ. (Գ. Հովսեփյան, Յ. Սմիրնով, Բ. Առաքելյան, Ս. Բարխուդարյան, Ս. Մնացականյան, Լ. Դուռնովո, Ա. Շահինյան, Մ. Հասրաթյան)<sup>7</sup>, իսկ մյուսը՝ 5-7-րդ դդ. (Ս. Տեր-Ներսեսյան, Կ. Ղաֆադարյան, Լ. Ազարյան, Հ. Ռիչարդսոն, Ժ-Մ. և Ն. Թիերիներ, Պ. Տոնապետյան)<sup>8</sup>։ Սակայն անդրադարձը վաղմիջնադարյան քանդակին, հատկապես պատկերագրության ու ոճի առումով, ինչպես նաև համադրումը վաղմիջնադարյան ճարտարապետության զարգացման փուլերի հետ, ցույց են տալիս, որ կոթողների նման լայն թվագրությունը արդարացված չէ և մասնագիտական տեսանկյունից այսօր արդեն չի կարող բավարար համարվել։

<sup>4</sup> Գ. Գրիգորյան, Հայաստանի վաղ միջնադարյան ֆառանիստ կոթողները, Եր., 2012։

<sup>5</sup> Քառանիստ կոթողների վրա արձանագրություններ հանդիպում են բացառության կարգով։ Տե՛ս Լ. Ազարյան, Օձունի և Բրդանորի կոթողները. - Պատմա-բանասիրական հանդես, №4 (31), 1965, էջ 212-220, Ա. Շահինյան, 7-րդ դարի կոթողներ Գեղամա լեռներում. - «Ֆլամիաժին», № 7-8, 1974, Գ. Գրիգորյան, Հայաստանի վաղ միջնադարյան..., էջ 34-35։

<sup>6</sup> Ղևոնդ, Պատմություն (թարգմ., ներածութ. և ծանոթ. Ա. Տեր-Ղևոնդյանի), Եր., 1982, էջ 86։

<sup>7</sup> Գ. Հովսեփյան, Գերեզմանական կոթողները և նրանց հնագիտական արժեքը հայ արվեստի պատմության համար // Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի և մշակույթի պատմության, պրակ Գ, Նյու Յորք, 1944, Բ. Ն. Առաքելյան, Հայկական պատկերաբանականները 4-7-րդ դդ., Եր., 1949, Ս. Գ. Բարխուդարյան, Հայաստանի կոթողային հուշարձանները // ԳԱԱ Տեղեկագիր, № 7-8, 1960։ Л. А. Дурново, Очерки изобразительного искусства средневековой Армении. М., 1976; Ս. Ս. Մնացականյան, Հայկական վաղ միջնադարյան մեմորիալ հուշարձանները, Եր., 1982, Հայկական միջնադարյան կոթողները 9-11 դդ., Եր., 1984։ М. М. Асратян, Армянская архитектура раннего христианства. М., 2000.

<sup>8</sup> Կ. Ղաֆադարյան, Դվին ֆաղափը և նրա պեղումները, հ. 1, Եր., 1952, էջ 146, Լ. Ազարյան, Վաղ միջնադարյան հայկական ֆանդակը, Եր., 1975, S. Der-Nersessian, L'art Armenien. (reprint) Paris, 1989; J.-M. Thierry, P. Donabédian, Les Arts Arméniens. Paris, 1987; Thierry N. Essai de définition d'un atelier de sculpture du Haut Moyen Age en Gogaren // Revue des études Georgiennes et Caucasiennes. №1. Paris, 1985. P. 169-221; H. Richardson, Observations on Christian Art ...

Խոսելով քառանիստ կոթողների մասին՝ մենք առաջին հերթին կանդրադառնանք դրանց հարուստ պատկերաշարին: Կոթողների վրա ներկայացված են ինչպես առանձին կանգնած ֆիգուրներ՝ Քրիստոս, Տիրամայր, առաքյալներ, սրբեր, պատվիրատուներ, այնպես էլ Հին- ու Նորկտակարանային տեսարաններ՝ տրված արդեն մշակված պատկերագրական ձևերով: Քանդակի վաղագույն օրինակները հայկական միջնադարյան արվեստում հանդիպում են 5-6-րդ դդ. եկեղեցիների հարդարանքում<sup>9</sup>: Ճիշտ է, այս վաղ եկեղեցիների ստույգ թվագրությունը ոչ միշտ է հայտնի, սակայն ընդհանուր ժամանակագրական սահմանները պարզ են: Անդրադառնալով 5-6-րդ դդ. եկեղեցիներին՝ կարող ենք փաստել, որ քրիստոնեական խորհրդանիշերն ու դոգմատիկ հասկացություններն այստեղ արտահայտված են պատկեր-նշանների կամ միջնորդված բնույթի պատկերների ձևով: Այսպես, 5-6-րդ դարերում հաճախ են խաչի, խաչողի որթի, վարդյակների պատկերները, բայց հայտնի չէ Քրիստոսի պատկերման գեթ մեկ օրինակ: Հանդիպում են կենդանիների ու թռչունների պատկերներ, սակայն չկան ընդարձակ սյուժետային հորինվածքներ կամ պատվիրատուների պատկերներ: Այս սկզբունքը, կարելի է ասել, համընդհանուր էր քրիստոնեական աշխարհի համար, քանի որ քրիստոնեական արվեստի ձևավորման վաղագույն փուլում, ինչպես և հայկական միջնադարյան արվեստի վաղ շրջանում, գերակշռող էին պատկեր-սիմվոլները, իսկ քրիստոնեական պատկերագրությունը դեռևս կայացման ճանապարհին էր: Չնայած սրան պետք է նշել, որ 5-6-րդ դդ. հայկական արվեստում, այնուամենայնիվ, կան սյուժետային բնույթի պատկերներ, որոնք հանդիպում են, կարելի է ասել, բացառության կարգով:

5-6-րդ դարերով են թվագրվում էջմիածնի Մայր տաճարի հյուսիսային պատին ագուցված «Թեկղան ու Պողոս առաքյալը» հորինվածքը<sup>10 11</sup>, ինչպես նաև Աղց(ք)ի Արշակունիների դամբարանի սալաքարը՝ «Դանիելը առյուծների գբում»<sup>12</sup> տեսարանով<sup>13</sup>: Քանդակի այս օրինակները կոթողների պատկերա-

<sup>9</sup> 5-6-րդ դդ. ժամանակահատվածում ունեցել ենք նաև գեղանկարչության մուշներ, որը օգտակար կլինեք մեր խնդրի պարագայում, սակայն դրանք, ցավոք, մեզ չեն հասել: Մեզ հասած մոնումենտալ գեղանկարչության առանձին մուշների (որմնակար, խճանկար) թվագրությունը 5-րդ դարով, մեր կարծիքով, հիմնավորված չէ:

<sup>10</sup> Լ. Ազարյան, Վաղ միջնադարյան..., նկ. 11:

<sup>11</sup> Պատկերաբանդակը 400-ական թվականով է թվագրում Ա. Ղազարյանը, իսկ Պ. Տոնապետյանը, հաշվի առնելով այստեղ եղած հունարեն արձանագրությունը՝ նշում է Մաշտոցի կողմից այբուբենի ստեղծման թվականին նախորդող ժամանակահատվածը: Տե՛ս Ա. Ի. Կазарян, Собор Эчмиазин и восточнохристианское зодчество IV-VII веков. М., 2007. с. 48-66; P. Donabédian, Apports Byzantins dans la sculpture Arménienne prearabe // L'Arménie et Byzance. Histoire et culture. Byzantina Sorbonensia 12. Paris, 1996. P. 90.

<sup>12</sup> Լ. Ազարյան, Վաղ միջնադար..., նկ. 4:

<sup>13</sup> Կարևոր ենք համարում նշել, որ նման հորինվածք ունեցող տեսարանը, որտեղ ֆիգուրի երկու կողմից առյուծներ են, կարող է ներկայացնել և Սբ. Թեկղային, քանի որ վաղմիջնադարյան շրջանում հայտնի է եղել սրբուհու պատկերագրության նաև այս տարբերակը:



քանդակների համեմատությամբ ունեն կատարման ընդգծված պարզունակ ու ընդհանրական ոճ, մակերեսային և կոպիտ մշակում: Եթե համեմատենք էջ-միածնի քանդակը Բրդաձորի փոքր կոթողի պատկերների հետ<sup>14</sup>, որոնք առանձնանում են իրենց պարզունակությամբ, ապա կտեսնենք, որ Բրդաձորի ֆիգուրների մեկնաբանման մեջ այնուամենայնիվ կա ծավալայնության և խորության պատրանք, դեմքերն ու հագուստները մշակված են համեմատաբար պլաստիկ ու մանրակրկիտ, ինչը վկայում է, որ համեմատվող օրինակները ցուցաբերում են գեղարվեստական տարբեր մոտեցումներ և ուրեմն պատկանում են տարբեր դարաշրջանների:

Քննության առնենք այլ օրինակներ: Օրհնող Քրիստոսի պատկերը, որ հանդիպում է քառանիստ կոթողներին, պատկերագրորեն ու նաև կատարման ոճով նույնանում է 7-րդ դ. Այրկովկասյան եկեղեցիների քանդակների հետ<sup>15</sup>: Հատկանշական է, որ թե՛ կոթողներին, թե՛ եկեղեցիների հարդարանքում ներկայացված Քրիստոսի պատկերում առանձնանում է մազերի յուրահատուկ ձևը՝ խոշոր ոլորուն փնջերով ուսերին թափվող վարսերի տեսքով: Սանրվածքի նման մեկնաբանում մենք հանդիպում ենք Ռավեննայի և Հռոմի վաղքրիստոնեական հուշարձաններում պատկերված Քրիստոսի մոտ, իսկ հետագայում այս ձևը փոխվում է<sup>16</sup>: Նույն այդ սկզբունքը մենք տեսնում ենք քառանիստ կոթողների (Կեչորի<sup>17</sup>, Անիպեմզա, Թալին, Հառիճ (ՀՊԹ)<sup>18</sup>, Դվին (ՀՊԹ)<sup>19</sup>, Խանդիսի (ԹՊԹ)<sup>20</sup>), ինչպես նաև 7-րդ դ. եկեղեցիների Քրիստոսի պատկերի դեպքում (Մրեն (630-ական), Զվարի (630-40-ական)<sup>21</sup>): Այս իմաստով կարելի է համեմատել, օրինակ, Հռոմի Սբ. Կոզմայի և Դամիանաի (520) խճանկարում Քրիստոսի պատկերը Կեչորի, Դվինի, Խանդիսի քառանիստ կոթողների ու Մրենի և Զվարիի պատկերաքանդակները: (Տե՛ս ներդիր, նկ. 33, 34)

Զուգահեռներ ենք տեսնում նաև Տիրամոր պատկերներում: Այսպես, քառակող կոթողներին Տիրամայրը մանական հետ պատկերված է կամ կանգնած

<sup>14</sup> Լ. Ազարյան, Օձուճի և Բրդաձորի կոթողներ..., էջ 213-215:

<sup>15</sup> 3. Акоюн, Раннесредневековая скульптура Гугарка и Картли. Вопросы художественного стиля и масерских // Актуальные проблемы теории и истории искусства. Сборник научных статей III. СПб., 2013. С. 125-126;

<sup>16</sup> Օ. С. Попова, Образ Христа в византийском искусстве V-XIV веков; Օ. С. Попова, Проблемы византийского искусства. Мозаики, фрески, иконы. М., 2006. С. 9-68. Ил. 2, 5-8.

<sup>17</sup> Կեչորի կոթողի դրվագի լուսանկարը Փ.-Մ. Թիերիի արխիվից է, որը մեզ է տրամադրել ՀՃՈւ (RAA) գիտական ուսումնասիրությունների կենտրոնը: Հայանում եմ իմ շնորհակալությունը կենտրոնի աշխատակիցներին:

<sup>18</sup> Գ. Գրիգորյան, Հայաստանի վաղ միջնադարյան..., նկ. 115, 205, 220,

<sup>19</sup> S. Der-Nersessian, L'art Armenien... Fig. 34.

<sup>20</sup> Н. Чубинашвили, Хандиси. Тбилиси, 1972. Ил. 3-4.

<sup>21</sup> А. Ю. Казарян, Церковная архитектура стран Закавказья VII века. Формирование и развитие традиции. Т. 2. М., 2012. Ил. 550, 808.

(Արուճ, Թալին, Հառիճ<sup>22</sup>), կամ գահին բազմած (Ուշան (ՀՊԹ), Թալին, Դվին (ՀՊԹ)<sup>23</sup>), և նույն պատկերազրական տարբերակներն ենք գտնում 7-րդ դ. եկեղեցիների քանդակում՝ Պեմզաշենում (7-րդ դ. վերջին քառորդ), Օձունում (7-րդ դ. 40-ական)<sup>24</sup>, ինչպես նաև էջմիածնի ավետարանին կցված մանրանկարում (6-7-րդ դդ., ՄՄ2374)<sup>25</sup> [տե՛ս ներդիր, նկ. 35]: Հորինվածքային ու պատկերազրական ընդհանրություններ ենք գտնում նաև հրեշտականների պատկերներում, ինչպես կանգնած, այնպես էլ ճախրող տարբերակներով: Ճախրող հրեշտակների լավ պահպանված ու հետաքրքիր օրինակներ են ներկայացնում Թալինի (երկու օրինակ)<sup>26</sup>, Օձունի<sup>27</sup>, Խանդիսի<sup>28</sup> կոթողները, որոնց հետ պատկերազրորեն համահունչ են Մրենի, Օձունի, Պեմզաշենի<sup>29</sup> ու Մծխեթի Սվետիսցխովելի (1029 թ., եկեղեցու արտաքին հարդարանքում վերաօգտագործվել են ավելի վաղ եկեղեցու քանդակի դրվագներ)<sup>30</sup> եկեղեցիների համապատասխան պատկերները:

Քառանիստ կոթողների վրա ներկայացված են պատկերազրական առուժով շատ հետաքրքիր ու քիչ հանդիպող տեսարաններ ու պատկերներ, որոնք նույնպես կարևոր են թվագրության հարցի պարզաբանման համար: Շիրակի խմբի կոթողներից մեկի վրա, որի միայն արխիվային լուսանկարն է պահպանվել, կա եզակի և ուշագրավ պատկեր՝ Սբ. Եկեղեցու մարմնավորումը: Այս կոթողը ժամանակին նկարագրել և վերատպել է Բ. Առաքելյանը<sup>31</sup>: Այս խորհրդաբանական պատկերի ամենավաղ օրինակները հայտնի են վաղբրիստոնեական արվեստում<sup>32</sup>, բայց պատկերազրորեն ձևավորված՝ վաղբյուզանդական, 6-7-րդ դդ. արվեստում<sup>33</sup>: Այս հանգամանքները հաշվի առնելով, գտնում ենք, որ Սբ. Եկեղեցու պատկերումը հայկական արվեստում չէր կարող

<sup>22</sup> Գ. Գրիգորյան, Հայաստանի վաղ միջնադարյան..., նկ. 32, 117, 150:

<sup>23</sup> Գ. Գրիգորյան, Հայաստանի վաղ միջնադարյան..., նկ. 57, 110, 220:

<sup>24</sup> Լ. Ազարյան, Վաղ միջնադարյան..., նկ. 87, 88:

<sup>25</sup> Матенадаран (авторы теста и составители В. Казарян, С. Манукян). М., 1991. Т. 1. Ил. 23.

<sup>26</sup> Գ. Գրիգորյան, Հայաստանի վաղ միջնադարյան..., նկ. 115, 117:

<sup>27</sup> Լ. Ազարյան, Վաղ միջնադարյան..., նկ. 59:

<sup>28</sup> Н. Чубинашвили, Хандиси... Ил. 7-8.

<sup>29</sup> А. Ю. Казарян, Церковная архитектура... Т. 2-3. Ил. 550, 783, 2160:

<sup>30</sup> Ш. Я. Амиранашвили, История грузинского искусства. М., 1963. Ил. 60.

<sup>31</sup> Բ. Ն. Առաքելյան, Հայկական պատկերաբանականներ..., նկ. 18:

<sup>32</sup> Սանտա Սարինա (425 թ.), Սանտա Կոստանցա (4-րդ դ. առաջին կես), Սանտա Մարիա Մաջորե (5-րդ դ. առաջին կես): Տե՛ս Thérèse M.-L. Les symboles de l'«Ecclesia» dans la création iconographique de l'art chrétien du IIIe au VIe siècle. Rome, 1973. P. 13-26.

<sup>33</sup> А. Я. Каковкин, Персонализация Святой Церкви в коптском искусстве // Троицкие чтения 1997. Сборник научных исследований, Материалы конференции. Большие Вяземы, 1998. С. 129 (այստեղ նաև համապատասխան գրականությունը):

տեղ գտնել ավելի վաղ, քան 6-7-րդ դդ. և դա կարևոր հիմնավորում է թվագրության պարագայում:

Հետաքրքիր զուգահեռներ են ի հայտ գալիս, երբ դիտարկում ենք հանդերձանքի ձևերը: Կոթողների վրա առկա են սրբերի կամ պատվիրատուների պատկերներ, որոնք կրում են երկար թևերով յուրահատուկ պարեգոտ: Նման հագուստով պատկերներ կարելի է տեսնել Օձունի, Ուչանի, Քալինի (երկու օրինակ)<sup>34</sup>, ինչպես նաև վրացական Բաշկիչետի<sup>35</sup> կոթողներին, իսկ դրանց համարժեք օրինակները միայն 7-րդ դ. հուշարձաններում Մրենի, Զվարիի եկեղեցիների դոնատորական քանդակներում<sup>36</sup>: Նշենք, որ հետագա դարաշրջաններում պատվիրատուների հագուստի ձևերը փոխվում են:

Կոթողների թվագրության հարցում կարևոր կովան են հանդիսանում սիմվոլիկ պատկերներն ու զարդաձևերը: Դրանք բազմազան են կոթողների հարդարանքում, որոնցից կնշենք մի քանիսը միայն: Առաջին հերթին դա խաչի պատկերն է, որ կոթողների վրա հանդես է գալիս պատկերագրական երկու տարբերակով՝ հավասարաթև և ձգված համաչափությամբ: 5-6-րդ դդ. եկեղեցիների արտաքին հարդարանքում մենք ունենք միայն հավասարաթև խաչեր, իսկ ահա 7-րդ դդ. եկեղեցիներում և՛ հավասարաթև, և՛ ձգված համաչափությամբ խաչեր (Մրեն, Օձուն, Զվարի, Արուճ (669), Ոսկեպար (7-րդ դ. 70-80-ական)<sup>37</sup>), ինչը առանձնահատուկ է և կոթողներին, որտեղ հավասարաթև և ձգված համաչափությամբ խաչերը համատեղվում են (Քալին, Մուղնի, Գոգարան, Անիպեմզա<sup>38</sup>): Կողքի մի քանդակի խաչային հորինվածքի քննության ու համադրության արդյունքում մենք հանգեցինք այն եզրակացության, որ ձգված համաչափություն ունեցող խաչերի պատկերումը հատուկ է հենց 7-րդ դ. ժամանակահատվածին<sup>39</sup>: Եթե ընդունենք, որ քառանիստ կոթողները թվագրվում են 5-6-րդ դարերով, ապա այդ դեպքում ինչպես բացատրել, որ վաղագույն շրջանում տարածում գտած և վաղագույն եկեղեցիների վրա հանդիպող միացազիր տիպի խաչային հորինվածքները, ինչպիսիք են Աղց(ք)ի դամ-

<sup>34</sup> Գ. Գրիգորյան, Հայաստանի վաղ միջնադարյան..., նկ. 57, 109, 112, 157բ:

<sup>35</sup> Н. Чубинашвили, Хандиси... Ил. 70.

<sup>36</sup> А. Ю. Казарян, Церковная архитектура... Ил. 550.

<sup>37</sup> А. Ю. Казарян, Церковная архитектура... Т. 2-3. Ил. 552-553, 611, 615, 623, 772, 803-804, 1378, 1778-1780, 1782.

<sup>38</sup> Գ. Գրիգորյան, Հայաստանի վաղ միջնադարյան..., նկ. 44ա-45ա, 112գ-դ, 168ա, 207:

<sup>39</sup> Զ. Հակոբյան, Կողքի բարավորի պատկերագրական առանձնահատկություններն ու թվագրությունը. - «Էջմիածին», ժԲ, 2010, Z. Hakobyan, The Restitution of the True Cross in the 10<sup>th</sup> century Armenian Sources and its depiction in the Early Medieval Sculpture // Revue des Etudes Arméniennes. Vol. 35. 2013. P. 237-250.

բարանի, Էջմիածնի Մայր տաճարի ու Քասաղի բազիլիկի օրինակները<sup>40</sup>, կոթողների հարդարանքում հայտնի չեն:

Տարածված զարդապատկեր է և խաղողի որթը: 5-6-րդ դդ. եկեղեցիների հարդարանքում խաղողի որթի պատկերմանը հատուկ է ձևի որոշակիություն ու միօրինակություն (Աղց(ք), Քասաղ), մինչդեռ կոթողների նիստերին այդ զարդատարրը հանդես է գալիս պատկերազրահական բազմազան լուծումներով, իսկ նման մոտեցում մենք տեսնում ենք միայն 7-րդ դ. եկեղեցիների հարդարանքում (Օձուն, Զվարթնոց, Թալինի Կաթողիկե<sup>41</sup> և այլն): Այսպես, Բրդաձորի մեծ կոթողին (ԹՊԹ) պատկերված խաղողի տերևները ունեն եռաթերթ կառուցվածք (տե՛ս ներդիր, նկ. 36), Գսեղի զարդաքանդակում խաղողի տերևները կարծես ոլորված են և ունեն եռանկյունաձև, սրածայր վերջավորություն, իսկ ողկույզը՝ հինգ ծավալային հատվածներից է բաղկացած<sup>42</sup>:

Անդրադառնալով խաղողի թեմային, տեղին է նկատել, որ կոթողների վրա բացակայում են նուան պատկերները, որը, ինքնին, հետաքրքիր փաստ է: Նորագույն ուսումնասիրությունները հնարավորություն են տալիս պնդելու, որ հայկական արվեստում նուան պատկերը առաջին անգամ կիրառվում է Զվարթնոցի հարդարանքում<sup>43</sup>, որից էլ կարելի է եզրակացնել, որ կոթողները ժամանակագրական առումով նախորդել են Զվարթնոցին: Միևնույն ժամանակ նշենք, որ նուան պատկերից բացի Զվարթնոցի տաճարի հարդարանքից է սկիզբ առնում հյուսվածքավոր, զամբյուղանման խոյակի հորինվածքը հայկական արվեստում: Այդ դեպքում ինչպե՞ս թվագրել, օրինակ, Օշականի հուշասյունը, որը պսակված է եղել զվարթնոցատիպ խոյակով<sup>44</sup>: Հաշվի առնելով այս հանգամանքները կարող ենք եզրակացնել, որ կոթողներ կանգնեցնելու ավանդույթը Հայաստանում սկիզբ է առել մինչզվարթնոցյան շրջանում, բայց իր շարունակությունն է ունեցել նաև Զվարթնոցի, միգուցե, և հետզվարթնոցյան ժամանակ:

Եվ վերջինը: Կոթողների թվագրության հարցում, մեր կարծիքով, ապակողնորոշող գործոն է հանդիսանում այն, որ այս հուշարձանների ի հայտ գալու ժամանակը և հանգամանքերը ուղղակիորեն կապում են Ագաթանգեղոսի Պատմության և նրա մաս կազմող Գրիգոր Լուսավորչի վարքի հետ: Քանի որ Ագաթանգեղոսը համարվում է 5-րդ դ. հեղինակ, հետևաբար կոթողներն էլ վերագրվում են այդ ժամանակաշրջանին և վերջիններիս հորինվածքն էլ

<sup>40</sup> Հ. Պետրոսյան, Խաչար. ծագումը, գործառույթը, պատկերագրությունը, իմաստաբանությունը, Եր., 2008, նկ. 13, 15-18:

<sup>41</sup> А. Ю. Казарян, Церковная архитектура... Т. 2-3. Ил. 767-768, 770, 1093, 1095, 1101-1102, 1108, 1519-1520, 1522.

<sup>42</sup> Գ. Գրիգորյան, Հայաստանի վաղ միջնադարյան..., նկ. 153բ, 284գ:

<sup>43</sup> А. Ю. Казарян. Церковная архитектура... Т. 2. С. 501-506.

<sup>44</sup> Ս. Ս. Մնացականյան, Հայկական վաղ միջնադարյան մեմորիալ..., աղ. X:

նույնացվում է Լուսավորչի տեսիլքում նկարագրվող կոթողի հետ<sup>45</sup>: Սակայն ինչպես նկատում են առանձին ուսումնասիրողներ, Ագաթանգեղոսի Պատմությունը կազմված է տարաբնույթ մասերից, բացի այդ այն անցել է բազմաթիվ խմբագրություններ, որը դժվարացնում է երկի որոշակի թվագրությունը: Դեռ ն. Մառը նշում էր, որ Հայոց դարձի պատմությունը անցել է խմբագրման /ձևավորման հիմնական երեք փուլ, որտեղ առանձնանում են Մաշտոցի և նրա հետևորդների հունաբան տարբերակը (5-6-րդ դդ.), քաղկեդոնական տարբերակը (7-րդ դ.) և ազգային տարբերակը (8-րդ դ.)<sup>46</sup>: Նորագույն ուսումնասիրությունները հաստատում են այս տեսակետը՝ ցույց տալով այն երուսաղեմյան աղբյուրները, որոնցից սերում է Գրիգորի Վարքը և որն էլ իրենց հերթին հստակեցնում է վարքի ստեղծման ու հետագա ազգային խմբագրության ժամանակի հարցը<sup>47</sup>: Լուսավորչի տեսիլքի դրվագը 7-րդ դ. կամ ավելի ուշ շրջանի հավելում է համարում Մ. Աբեղյանը<sup>48</sup>:

Լուսավորչի վարքի ոչ այդքան վաղ ձևավորման մասին է վկայում վերջինիս պաշտանմունքի տարածման շրջանը: Հետաքրքրական է Պ. Մուրադյանի այն դիտարկումը, համաձայն որի 5-րդ դ. այնպիսի հեղինակներ, ինչպիսիք են Կորյունը և Եղիշեն իրենց երկերում դեռևս չեն հիշատակում Սբ. Գրիգորին<sup>49</sup>, որը կարող է նշանակել, որ Լուսավորչի Վարքը դեռ չէր ձևավորվել, իսկ պաշտանմունքը դեռ նեղ ազգային ընկալում չէր ստացել: Իսկ ահա 7-րդ դարում, համաձայն Վ. Հարությունովա-Ֆիդանյանի, Լուսավորչի պաշտանմունքը իրապես հասնում է իր բարձրակետին՝ ստանալով համահայկական և համակովկասյան բնույթ, որն էլ ատրացողված է նրա Վարքի արաբերեն ու հունարեն տարբերակներում: Համաձայն մի շարք ուսումնասիրողների (Մառ, Պետերս, Գարիտ, Վան Էսբերոկ) Սբ. Գրիգորի Վարքի թարգմանությունները արվել են ոչ վաղ քան 6-րդ դ. վերջ և 7-րդ դ. ժամանակահատվածում, որն հաստատում է Լուսավորչի պաշտանմունքի լայն տարածումը նշված դարաշրջանում: Սրան կարելի է ավելացնել այն, որ Սբ. Գրիգորին նվիրված եկեղեցիներ մենք ունենք սկսած 7-րդ դարից: Ստացվում է, որ եթե մենք կոթողների թվագրությունը

<sup>45</sup> Ագաթանգեղոս, Հայոց պատմություն, Եր., 1983, էջ 735-744:

<sup>46</sup> Н. Я. Марр, Крещение армян, грузин, абхазов и аланов святым Григорием // Записки Восточного отделения императорской Академии наук. 1905. Т. 16. С. 63-211.

<sup>47</sup> N. Gharibian, La Jérusalem du IV<sup>e</sup> siècle et le récit de la conversion de l'Arménie. Melanges offerts Jean-Pierre Mahé (ed. A. Mardirossian, A. Ouzounian, C. Zuckerman) // Travaux et Memoires 18, College de France. Paris, 2014. P. 353-368; Ն. Վարդյան, Երուսաղեմյան աղբյուրները Հայոց դարձի պատմության մեջ (տե՛ս սույն ժողովածուի համապատասխան բաժինը):

<sup>48</sup> Մ. Աբեղյան, Երկեր, հ. Գ, Եր., 1968, էջ 183-187:

<sup>49</sup> П. Мурадян, Кавказский культурный мир и культ Григория Прсветителя // Кавказ и Византия. 1981. №3. С. 12-20.

կապում ենք Սբ. Գրիգորի վարքի ու պաշտանմունքի տարծման հետ, ապա այն համընկնում է ոչ թե 5-6, այլ 7-րդ դարի ժամանակահատվածի հետ<sup>50</sup> :

Նկատենք նաև, որ Լուսավորչի տեսիլքում նկարագրված սյունը հորինվածքային առումով շատ մոտ է հայկական քառանիստ կոթողներին, որն էլ իր հերթին հիմք է տալիս մտածելու, որ վարքի հեղինակը, միգուցե, քաջածանոթ էր Հայաստանում արդեն իսկ գոյություն ունեցող կոթողներին և պարզապես նկարագրել է դրանք: Այս իմաստով հետաքրքիր է, որ նման մի եզրակացություն էլ հանգել է Ա. Ղազարյանը՝ կապված Սբ. էջմիածնի ճարտարապետական ձևի հետ՝ նշելով, որ Լուսավորչի տեսիլքում նկարագրվել են Մայր տաճարի արդեն իսկ գոյություն ունեցող չորս գմբեթակիր մույթերը<sup>51</sup> : Սա նշանակում է, որ կոթողների կանգնեցման ավանդույթը նախորդում է Լուսավորչի Վարքի ազգային խմբագրությունը և ուրեմն այն չի կարող ելակետային լինել կոթողների ուսումնասիրության պարագայում:

Կոթողները, ինչպես վերը նշվեց, հիմնականում չունեն արձանագրություններ ու թվական և այս իմաստով առավել կարևորվում են Գեղամա լեռներում հայտնաբերված երկու կոթողների դրվագների վիմագրերը, որոնք գրչությունից ու հնագրությունից նույնանում են 7-րդ դ. օրինակների հետ ու, բացի այդ, արձանագրություններից մեկում հիշատակվում է Կոնստանտ կայսրը, որը տանում է թվագրությունը 7-րդ դարի կեսերը<sup>52</sup> :

Այսպիսով, դիտարկելով հայկական քառանիստ կոթողները արվեստաբանական տեսանկյունից հանգում ենք հետևյալ եզրակացությունների: 1. Մենք գտնում ենք, որ քառանիստ կոթողների ստեղծման ժամանակաշրջանը 7-րդ դարն է, քանի որ այն հարուստ պատկերաշարը, մշակված պատկերագրական սխեմաներն ու, երբեմն նաև, շատ հազվագյուտ հորինվածքները չէին կարող ի հայտ գալ Հայաստանում ավելի վաղ, քան դրանք մշակվել ու տարածում էին գտել վաղբրիստոնեական ու վաղբյուզանդական արվեստում: 2. Կոթողները 7-րդ դ. ժամանակահատվածով թվագրելու համար հիմք են տալիս այն պատկերագրական ու ոճական զուգահեռները, որ առկա են կոթողների և 7-րդ դ. եկեղեցիների պատկերաբանդակներում ու զարդաձևերում: Այս առումով հարկ ենք համարում նշել, որ ավելի վաղ Պ. Տոնապետյանի կողմից արդեն արվել էին որոշ համեմատություններ հյուսիսային Հայաստանի կոթողների և 7-րդ դարի եկեղեցիների (Մրեն, Ատենի, Ջվարի) արտաքին հարդարանքի մաս կազմող քանդակների միջև, ինչպես նաև Թալինի, Դվինի ու Գսեղի խաչերի ու խաղողի տերևների և 7-րդ դարի եկեղեցիների բարավորների զարդաձևերի

<sup>50</sup> Զ. Հակոբյան, Հայկական քառանիստ կոթողների թվագրման հարցի շուրջ // Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական առաջին մատաչրջանի նյութեր, Եր., 2005, էջ 103-108:

<sup>51</sup> А. Ю. Казарян, Собор Эчмиазин... С. 34-35.

<sup>52</sup> Ա. Շանինյան, 7-րդ դարի կոթողներ Գեղամա լեռներում. «էջմիածին», №7-8, 1974.

միջև<sup>53</sup>: Որախալի է, որ մի խումբ կոթողների ստեղծման ժամանակաշրջանը հեղինակը տեսնում է 7-րդ դարի բուռն վերելքի ժամանակահատվածը՝ ճարտարապետության «ոսկեդարը»<sup>54</sup>:

Խորհելով քառանիստ կոթողների կանգնեցման ժամանակաշրջանի ու շարժառիթների մասին մենք չենք բացառում, որ այդ գործընթացի համար որպես խթան կարող էր հանդիսանալ Հերակլի սրբազան պատերազմն ու Կենարար Խաչի հանդիսավոր վերադարձը Երուսաղեմ համաքրիստոնեական մի իրադարձություն, որի դաշնակիցը և անմիջական մասնակիցը դարձավ Հայաստանը: Նշելով սույն ժամանակահատվածը որպես քառանիստ կոթողների ստեղծման ու տարածման շրջան, մենք նաև հաշվի ենք առնում այն բուռն գործընթացը, որ տեղ ուներ հայկական ճարտարապետության բնագավառում և որը, վստահաբար, վերաբերում էր արվեստի այլ դրսևորումներին, այդ թվում նաև քառանիստ կոթողներին<sup>55</sup>:

**Zaruhi Hakobyan**

**Current Problems in the Study of Early Medieval Armenian Four-Sided Stelae  
(Art Historian's Approach)**

Resume

Armenian four-sided stelae are unique monuments of early medieval art, which were erected before the years of Arabian supremacy, but when they have emerged, is unknown. Stelae are dated from 4 till 7 or from 5 till 7 centuries, which today can not be sufficient from vocational approach. Iconographic and stylistic study of stelae's reliefs have an important role in the question of date. The study shows that stelae' images have direct parallels with the churches' sculptural decoration of 7 th century. It refers both Old and New Testament characters, narrative figures and ornamental decoration. One of the wrong approaches of this problem is, that, as a rule, the stelae' date related with Agathangelos "History" and the stela, which is described in Gregory the Illuminator's vision. As a result of study we can say that the stelae have emerged no earlier than 30-ies of 7 th century. This period coincide with Armenian architecture's "Golden Age".

<sup>53</sup> P. Donabedian, L'âge d'or de l'architecture arménienne. VIIe sle. Marseille, 2008. P. 205-206.

<sup>54</sup> P. Donabedian, L'âge d'or... P. 206-210.

<sup>55</sup> Օգտագործել ենք Ա. Գեղյանի, Ն. Հովհաննիսյանի, Ժ.-Մ. Թիերիի, Հ. Պետրոսյանի, Գ. Գրիգորյանի, կողմից տրամադրված լուսանկարներ, որի համար հայտնում ենք մեր շնորհակալությունը:

## ԷՌԵԱ ՄԱՆԵԱ ՇԻՐԻՆՅԱՆ

### ԴՊՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԻՒԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԵՎ ԼԵՌԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՆՔԵՐՈՒՄ

Կիլիկյան Հայաստանի գրականությունը, հետևելով հայ ավանդական դպրությանը (երբեմն էլ վերականգնելով այն), այնուամենայնիվ ուներ բազում յուրահատկություններ, որոնք պայմանավորված էին բնական պատճառներով: Առաջին հերթին դա այն ժամանակաշրջանն էր, որում կազմավորվեց Կիլիկիայի հայկական թագավորությունը: 11-րդ դարը՝ կատարվող բուռն իրադարձությունների պատճառով, կարելի է անվանել շրջադարձային պատմության մեջ: Այդ իրադարձությունների շարքում էին. նախ՝ Հոռոմի և Բյուզանդիայի միջև վաղուց հասունացող խզումը, որը կատարվեց 1054 թ., Բյուզանդիայի հետզհետե թուլացումը, քաղաքական գաղափարախոսության փոփոխումը և՛ Արևմուտքում, և՛ Արևելքում, տարածքների վերաբաշխումը և այլն: Պակաս կարևոր նշանակություն չունեն նաև Կիլիկյան Հայաստանի աշխարհաքաղաքական շրջապատը՝ հարևանությունը, որը պարզ է, որ իր ազդեցությունը պետք է ունենար կյանքի տարբեր ոլորտներում, այդ թվում և մշակութային: Սերտ շփումները հարևան երկրների հետ, խաչակրաց արշավանքները, լայնածավալ առևտրային հարաբերությունները (մասնավորապես Վենետիկի և Ջենովայի հետ), հոգևոր ասպետական կամ ռազմա-վանական միաբանությունների առաջացումը, ևս մեծ ազդեցություն գործեցին հայ ավանդական դպրության վրա: Բազում փոփոխություններ կրեց նաև լեզուն՝ գրաբարը փոխարինվեց խոսակցականին ավելի մոտ միջին հայերենով, ինչը ևս իր ազդեցություն ունեցավ հայ գրականության վրա: Զարմանալի չէ, ուստի, որ նշված ժամանակաշրջանում Կիլիկյան Հայաստանում մեծ վերելք ապրեց հայ գրականությունը, մասնավորապես գրական ավանդույթները, զարգացավ ժողովրդական բանահյուսությունը, ստեղծվեցին և արմատավորվեցին գրական նոր տեսակներ, նոր ժանրեր՝ հանգավորված պատմություն, էլեգիա, քնարական պոեզիա, փոքրիկ գրույցներ, առակներ ու հանելուկներ, ինչպես նաև «Մանրուսմունք» և «Խազգիրք» կոչվող երաժշտական բացառիկ ժողովածուները:

Ինչպես Մեծ Հայքում, այնպես էլ Կիլիկիայում դպրությունը զարգանում էր գրչության կենտրոններում կամ վարդապետարաններում՝ բարձրագույն կրթական օջախներում, որոնք հիմնականում սեղակայված էին տարբեր վանքերում կամ վանական համալիրներում: Շարունակելով ավանդական մտայնումները՝ այդ կենտրոնները պահպանում էին «դպրոց» հասկացության շարունակականությունը. վարդապետ-ուսուցիչները փոխանցում էին իրենց գիտելիքները և



մեթոդներն աշակերտներին, որոնք իրենց հերթին գրեթե պարտավոր էին գնալ և հիմնել իրենց դպրոց-վանքերը և հաջորդ սերնդին ժառանգել կուտակված գիտելիքներն ու դպրուկյան ավանդույթները: Կիլիկիայի տարածքում գործում էին բազում հայտնի, մեծահամբավ վարդապետարաններ՝ Ակների, Դրազարկի, Մաշկեորի, Սսի, Տարսոնի, Մեծքարի, Գեսվանց և շատ ուրիշներ:

Սրանց շարքում ուրույն տեղ էին գրավում Սև լեռան հայկական վանքերը, որոնք մաս էին կազմում Ամանոսի (Սև) լեռների վրա տեղակայված բազմաթիվ վանքերի: Դրանց գործունեությունը գրանցված է դեռևս 5-6-րդ դարերից, սակայն այդ շրջանի վերաբերյալ տեղեկությունները սակավաթիվ են: Սկսած 11-րդ դարից, կարելի է խոսել այդ վանքերի գործունեության ծաղկման, և անգամ «միջազգային» շրջանի մասին: Ի դեպ, այդ ժամանակ, Կիլիկիայի սահմաններն արևելքում անցնում էին հենց Ամանոսի լեռների վրայով<sup>1</sup>:

Ավելին, հնարավոր է ասել, որ Սև լեռան բազում վանքերը հանդիսանում էին դպրուկյան յուրօրինակ մի կենտրոն, որտեղ ապրում և աշխույժ աշխատանք էին ծավալում տարբեր ազգույթյան պատկանող ասորի, հայ, հույն, լատին, վրացի և այլ ազգույթյան, ժամանակի առաջադեմ գիտնական վանական վարդապետները, ովքեր կարող էին գտնել այստեղ ոչ միայն հոգևոր հասունություն, այլև գիտական նորություններ: Սև լեռան վանքերի այս շրջանին վերաբերող տվյալներն ևս շատ չեն. առավել սակավաթիվ են դրանց նվիրված ուսումնասիրությունները, մինչդեռ այստեղ գրանցված աշխույժ գործունեությունը, ընդհանրապես վանքերի ստույգ քանակը, անվանումները և դրանց պատկանելությունը բազում հարցականներ են հարուցում: Հունական և հայկական աղբյուրներում առկա են վկայություններ, որոնք փաստում են այս վանքերում բնակվող տարբեր ազգերի վանականների միջև եղած որոշ դավանաբանական տարաձայնությունների և անգամ լարվածության մասին, սակայն միևնույն ժամանակ, հենվելով այդ իսկ աղբյուրների տեղեկությունների վրա, կարելի է խոսել թվարկված ազգերին պատկանող վարդապետների մրցակցություն և գիտական նյութի ու մոտեցումների բազմազան մասին: Պարզ է, որ այս ամենը նույնպես նպաստեց մասնավորապես հայկական, վրացական և ասորական գրականության հարստացմանը:

Դատելով աղբյուրներից՝ սկսած 11-րդ դարից, Սև լեռան հայկական վանքերը բավական մեծ թիվ էին կազմում: Յայտնի են տասից ավելի վանքեր, որոնցից են՝ Կարմիր վանք, Շափիրին, Քարաշիտու, Արքայաքաղին, Շուղր վանք կամ անապատ, Մաշկեոր, Պաուլահո, Արեգ կամ Արեգնի (Արեգին) վանք

<sup>1</sup> J. J. S. Weitenberg, "The Armenian Monasteries in the Black Mountain", in: K. N. Ciggaar, D. M. Metcalf (ed.), *East and West in the medieval Eastern Mediterranean. I. Antioch from the Byzantine Reconquest until the end of the Crusader principality. Acta of the congress held at Hernen Castle in May 2003* (Orientalia Lovaniensia Analecta, 147), Leuven -Paris - Dudley/MA, 2006, p. 79-93.

կամ անապատ, Վարդկան, Բարսեղյանց, Պաղակծիակ, ս. Աստվածածին՝ Ռոդի-դիոն (բառացի նշանակում է՝ «Նոան պտուղ») վանք և այլն: Այս վանքերում սովորել և գործել են այնպիսի համբավավոր վարդապետներ, ինչպիսիք են Ստեփանոս Մանուկը, նրա աշակերտներ Իգնատիոս Սևեռնցին, Գրիգոր Պահ-լավունին, Ներսես Շնորհալին, Սարգիս Շնորհալին և այլոք: Բազում էին նաև Մեծ Հայեց եկած վարդապետները՝ Գևորգ Մեղրիկ, Գրիգոր Լոռեցի, Կիրակոս Բանասեր, Մխիթար Գոշ և այլք, որոնցից ոմանք վերադարձան Հայաստան, ոմանք էլ մնացին Կիրիկիայում: Բնական է, որ Կիրիկիա այցելած հեղինակները հետագայում, իրենց երկերում նկարագրել և բնութագրել են Կիրիկիայում, երբեմն էլ հարևան երկրներում կատարված իրադարձությունները:

Ուսումնասիրելով այս հեղինակների գործունեությունը, հնարավոր է ա-սել, որ Սև լեռան հայկական վանքերում տեղի ունեցավ հին, երբեմն անգամ մոռացված, ավանդույթների հաշտեցումը նոր գիտական մոտեցումների հետ, ինչը մեծ զարկ տվեց հայկական միջնադարյան սքոլաստիցիզմի զարգացմանը և մասնավորապես Աստվածաշնչի մեկնությունների հայկական «դպրոցի» հե-տագա գործունեությանը և ուժեղացմանը:

11-րդ դարում, սակայն, Սև լեռան վանքերը ոչ միայն բաժանված էին հույների, ասորիների, հայերի, լատինների և վրացիների միջև, այլև դրանք նե-րառում էին դավանաբանական տարբեր պատկանելություն ունեցող խմբեր. օրինակ այստեղ առկա էին թե՛ ուղղափառ, թե՛ կաթոլիկ և թե՛ նախաքաղկեդո-նական քրիստոնեական վարդապետությունը հետևող անձեր: Այսպես, թվարկ-ված հայկական վանքերի թվում կային նաև քաղկեդոնական հայերին<sup>2</sup> պատ-կանող վանքեր, օրինակ՝ Պաղակծիակը, ս. Աստվածածին, Ռոդիդիոն վանքը, Արեգ վանքը:

Հատկանշական է, որ Անտիոքի մոտակայքում գտնվող, թվով մի քանի տասնյակ այս վանքերը ժամանակին հիմնականում ասորական էին, ինչը, ի

<sup>2</sup> Ի դեպ, հարկ է նշել, որ հայ ֆաղկեդոնականների, այսպես կոչված «ծաթերի» կամ, ինչ-պես ավելի ընդունված է մեզանում՝ «ծայթերի», ներկայությունը Սև լեռան վանքերում առ-ձանագրված է շատ ավելի վաղ շրջանից: Բացի այդ բավական մեծ թվով ֆաղկեդոնիկ հայեր կային նաև հայտնի ս. Սաբբասի կամ Սաբբայի մենաստանում, ինչպես նաև Ան-տիոքից ոչ հեռու գտնվող Հրաշք լեռան՝ Սիմեոն Ստիլիտեսի վանքում: Քաղկեդոնիկ հայե-րի գոյության և գործունեության հարցը սակավ է ուսումնասիրված մեզանում, մինչդեռ այն անհրաժեշտ է ենթարկել անաշտ հետազոտության, այլապես մենք կորցնում ենք մի մեծ մշակութային շերտ, որը պարունակում է չափազանց կարևոր տեղեկություններ պատ-մության մեջ մեծ դեր խաղացած ազգությամբ հայ անձանց մասին (այսպես, Քաղկեդոնի ժողովից հետո բյուզանդական մենաստաններ ֆաշված հայերը, որոնք մեծապես նպաստել են այդ անապատների ստեղծմանը, իսկ երբեմն էլ հիմնադրել են դրանք (ինչպես օրինակ ս. Սաբբայի մենաստանի դեպքում) և այլ բազում բյուզանդական տարբեր ոլորտների գոր-ծիչներ), որոնք որովհետև ընտրել էին այլ դավանաբանական պատկանելություն, երբեմն չեն հիշատակվել մեզանում, ինչը, ի դեպ, տեղի է տալիս այդ տվյալների երբեմն ոչ անա-շտ օգտագործմանն այլոց կողմից:

դեպ, պարզ երևում է որոշ վանքերի անվանումներից, և տեղակայված էին Բյուզանդիային պատկանող տարածքում, սակայն 1108 թ. Դեաբոլի պայմանագրով դրանք փոխանցվեցին Անտիոքի պրինց Բոհեմունդ I-ին: Այդ մասին է վկայում նաև Աննա Կոմենենեն «Ալեքսիադ»-ում հորը՝ Ալեքսիոս Կոմենենոսին նվիրված պատմության մեջ: Այստեղ, Բոհեմունդ I-ի անունից շարադրված պարտավորությունների թվում, հիշատակվում են նրան անցած հողերը, որոնց թվում են նաև Սև լեռան վանքերը, «բացառությամբ միայն այն տարածքների, որոնք Ռուբենյաններին են՝ Վեոն և Թեոդորոս (sic! = Թորոս) հայերինը, ովքեր Ձեր [կայսրության] հպատակներն են»<sup>3</sup>: Սակայն բացի այստեղ նշված անուններից, զանազան աղբյուրներից հայտնի է, որ կային այլ անձինք ևս, որոնք, կարելի է ասել, տնօրինում էին որոշ վանքեր: Այսպես օրինակ, գիտենք, որ մի քանի վանքեր գտնվում էին Հայոց իշխանների իրավասության ներքո: Դրանցից մեկը՝ Գող Վասիլ անվան տակ հայտնի եփրատացիքում կազմված հայկական իշխանության հիմնադիրն էր: Վասիլ իշխանին հաջողվել էր գրավել բազում տարածքներ և իր հզորության գագաթնակետին նրա իշխանությունը «հյուսիս-հարավ ուղղությամբ տարածվում էր Մելիտենեի սահմաններից մինչև Պիր, իսկ արևելք-արևմուտք ուղղությամբ՝ եփրատից մինչև Մարաշ, ընդգրկելով Քեսունը, Ռապանը, Հիսն-Մանսուրը, Պեհեսին, Հոռմկլան և որոշ մանր բերդեր»<sup>4</sup>: Բազում քաղաքների ու բերդերի նվաճումը հասկանալի երևույթ է իշխանի համար, սակայն վանքի ձեռքբերումն աշխարհականի կողմից՝ բացատրության կարիք ունի: Կարծում եմ, որ այս դեպքում մենք գործ ունենք մի երևույթի հետ, որը կոչվում էր χαριστήρια<sup>5</sup>, բառացի՝ «շնորհակալական զոհաբերություն» (իսկ χαριστικός-ը՝ «նվիրված», «շնորհված»): Հին Հունաստանում այս բառով սահմանվում էին հաղթանակի համար աստվածներին մատուցվող զոհաբերությունները: Միջնադարում, մասնավորապես 10-րդ դարում, երբ Բյուզանդական կայսրությունում վանքերը բազմացել էին և դրանցից շատերն այնքան խեղճ էին, որ միաբանները չէին կարողանում հոգալ իրենց տարրական խնդիրները, համատարած շարժում դարձավ «խարիստիկարիատ»-ը՝ վանքերի փոխանցումը հարուստ աշխարհիկ անձանց, որոնք

<sup>3</sup> Anna Comnena, *Alexias*, book 13, chapt 12, sect. 18 ἀνευ δηλονότι τῆς τῶν Ῥουπενίων διακρατήσεως, Λέοντος τε καὶ Θεοδώρου τῶν Ἀρμενίων γεγονότων ἀνθρώπων τοῦ κράτους ἡμῶν.

<sup>4</sup> Լ. Տեռ-Պետրոսյան, *Խաչակիրները և հայերը*, Եր., 2005, հտ. Ա, էջ 421:

<sup>5</sup> Ավելի մանրամասն այս երևույթի մասին տես՝ V. Laurent, "Charisticariat et commende à Byzance. Deux fondations patriarcales en Épire aux XIIe et XIIIe siècles", In: *Revue des études byzantines*, tome 12, 1954, pp. 100-113, J. Darrouzes, "Dossier sur le charisticariat", in *Polychronion. Festschrift' Franz Dölger zum 75. Geburtstag* (Heidelberg, 1966), s. 150-165, H. Ahrweiler, "Charisticariat et autres formes d'attribution de fondations pieuses aux Xe-XIe s.", 1967, *Zbornik Radova Vizantolôskog Institouta*, T. 10, pp. 1-28:

ունակ էին և պարտավորվում էին հոգալ հին վանքերի կարիքները և կառուցել նորերը: Այս մարդիկ դառնում էին կոնտրոլներ, իսկ ձեռքբերված վանքերը փոխանցվում էին նրանց ժառանգներին: Բյուզանդական կայսրերը և պաշտոնյաները, հիմնականում կողմ էին կոնտրոլական իրավունքին (հմմտ. Հուստինիանոս կայսեր 131-րդ նովելը), սակայն ժամանակի ընթացքում այս երևույթը ձեռք բերեց մի շարք բացասական հետևանքներ, ինչը զայրույթ առաջացրեց որոշ հոգևորականների շրջանում: «Խարիստիկարիատ»-ի ամենամոլի հակառակորդն էր համարվում Անտիոքի պատրիարք Հովհաննես Օքսիտեցին (կամ Հովհաննես V, 1089-1100<sup>6</sup>): Սակայն պարզվում է, որ խնդրո առարկա երևույթի առավել եռանդուն ընդդիմախոս էր Նիկոն Սևեռնցին (1025 - մ. 1100 և 1110 միջև ընկած ժամանակահատվածում), որը և մեծ ազդեցություն է ունեցել նշված պատրիարքի վրա<sup>7</sup>: Նիկոնի կազմած հիմնականում միայնակյացների կանոնադրությանը վերաբերող երեք աշխատանքները հետաքրքրական և արժեքավոր տեղեկություններ են պարունակում ոչ միայն այս հարցի, այլև շատ ու շատ այլ խնդիրների վերաբերյալ: Մինչև միայնակյաց դառնալը, Նիկոնը ծառայել է Բյուզանդիայի կայսր Կոստանդին IX Մոնոմախոսի բանակում, սակայն տարբեր վանքերում թափառելուց և իր վանքը հիմնելու փորձի տապալումից հետո, լատինների կողմից Անտիոքի գրավումից ի վեր, այսինքն 1098 թ. հետո, նա ապաստան է գտնում Ռոդիոս վանքում, որտեղ շատ քաղկեդոնիկ հայեր էին բնակվում<sup>8</sup>: Նիկոն Սևեռնցին իր գործերում նամակներում (մասնավորապես վերոնշյալ պատրիարքին ուղղված) և հատկապես 1098 թ. գրված, ամենածավալուն «Տակտիկոն» երկում, բազմիցս հանդես է գալիս «խարիստիկարիատ»-ի դեմ: Հետաքրքրական է, որ այդ անդրադարձների թվում առկա է մեկ դեպք, երբ նա, մեղադրելով ոմն իշխան Մարապային (որը համարվում է քաղկեդոնիկ հայերին պատկանող ս. Աստվածածին, Ռոդիոս վանքի<sup>9</sup> տիրակալը), խոսում է մի հայ ազնվականի մասին, որը կարող է լինել

<sup>6</sup> Հարկ է նաև նշել, որ 1100 թ. հետո, երբ Հովհաննես V (ըստ ոմանց Հովհաննես VII), լինում է Անտիոքը, պատրիարխական գահին է բազմում Բեռնար Վալենսացին, և այդ ժամանակից ի վեր Անտիոքի պատրիարխությունը անցնում է լատինների ձեռքը, իսկ դրա հետ միասին նաև բազում հայ ֆաղկեդոնականների վանքեր, բերդեր, ֆաղաֆներ և անգամ դիտություններ, տես՝ **B. Hamilton**, "Latins and Georgians and the Crusader Kingdom", *Al-Masaq: Islam and the Medieval Mediterranean*, 2011, vol. 23-, p. 119:

<sup>7</sup> **Л. А. Герд**, "«Тактикон» Никона Черногорца как источник по истории харистии-кариата в Византии", *ВВ*, М., 1994, т. 55, с. 112.

<sup>8</sup> **Герд**, «Тактикон», с. 114.

<sup>9</sup> Թեև վերը խոսվեց Սև լեռան վանքերի տարածային պատկանելության վերաբերյալ, սակայն մինչև 1108 թ. (Գեարդի պայմանագիրը), այնուամենայնիվ, որոշ վանքերի պատկանելության հարցը լուրջ խնդիր է: Սև լեռան վանքերի հետագա հակատագրի վերաբերյալ, հատկապես ֆաղկեդոնիկ հայերի վանքերի մասին, որոշ տեղեկություններ կարելի է փառել Հ. Կազարյանի հոդվածներից, մասնավորապես՝ **О. Казарян**, "Церковные контакты армян-халкидонитов и латинян в период крестовых походов на Восток (XI-XIII в.)",

հենց Վասիլ իշխանը<sup>10</sup>: Արդյոք այս մեղադրանքների պատճառով չէ՞, որ Վասիլը մյուս իշխանների հետ աղաչում էր Գրիգոր Վկայասերին գալ իրենց մոտ, ինչպես տեղեկանում ենք այդ մասին Մխիթար Այրիվանեցու «Ժամանակագրություն»-ից. «Վասիլն եւ այլ իշխանք Կիւլիկիոյ տարան աղաչանօք առ ինքեանս զտէր Գրիգոր կաթողիկոսն»<sup>11</sup>: Եվ արդյոք նաև, այդ վանքերի սեփականացումը կապ չունենա Վասիլ իշխանին տրված «գող» մականունի հետ:

Ի միջի այլոց, խոսելով Նիկոն Ալեքոնցու և Հովհաննես Օքսիտեցու նամակագրական կապի մասին, ուշագրավ է նշել հետևյալը. Նիկոնը, որին, հանձնարարված էր վերահսկել և քննել Ռոմիոն վանքում ապրող հայերի հավատարմության աստիճանը քաղկեդոնական դավանանքին, Անտիոքի հայրապետին ուղղված իր նամակներից մեկում գրում է, որ այստեղ ապրող հոգևորականները հավատարիմ են ուղղափառությանը: Միևնույն ժամանակ նա որոշ դժգոհություն է հայտնում, ասելով, որ ստիպված է եղել ապրել այլ լեզվով խոսող մարդկանց հետ այնպիսի վանքերում, որոնք ոչ թե եկեղեցուն են պատկանում, այլ տարբեր ազնվագարմ անձանց կամ էլ ինքնավար են<sup>12</sup>: Պատասխան նամակում Հովհաննես Օքսիտեցին խորհուրդ է տալիս գոտեպնդվել և կատարել իր առաքելությունը, ջանալով դարձի բերել ուխտադրուժներին, իսկ եթե չի ստացվում, պետք է գնալ մեկ այլ վանք: Ինչ վերաբերում է այլ լեզվով խոսողներին, Անտիոքի պատրիարքը նշում է, որ այդտեղ ոչ մի վտանգ չկա և, ընդհակառակը, դա անգամ օգտակար է ոգու համար<sup>13</sup>: Ի դեպ, դեռևս 1084 թ. Անտիոքի պատրիարքը (Թերևս՝ Նիկեփորոս Մավրը) դիմում է Երուսաղեմի պատրիարքին, առաջարկելով քննություն սկսել հայ քաղկեդոնականների, այսպես կոչված «ծաթերի» ուղղափառ հավատին հավատարիմ լինելու վերաբերյալ: Այդ թուղթը, ինչպես նաև նույն հարցն արձարծող, երկու այլ հետաքրքրական նամակներ ներկայացված են Նիկոնի «Տակտիկոն»-ում միայնակյացների համար գրված կանոնադրության 35-րդ գլխում՝ ա. Անտիոքի պատրիարքի նա-

<http://deusvult.ru/102-tserkovnye-kontakty-armyan-khalkidonitov-i-latinyan.html> և Օ. Կазарян, “Роль армян-халкидонитов в латино-грузинских переговорах (1223-1224 гг.)”. -2012. URL: <http://deusvult.ru/89-rol-armyan-khalkidonitov.html>: Բոլոր դեպքերում Ռոմիոն վանքի վերաբերյալ մասնագետները նշում են. «Այն գտնվել է հայկական տարածքում, որը ղեկավարվում էր ծաթերի կողմից, ովքեր ֆաղկեդոնական էին հավատով» («It was located in Armenian territory ruled by the Tzatoi who were Chalcedonian in their faith»), “Byzantine Monastic Foundation Documents, 21. Roidion: Typikon of Nikon of the Black Mountain for the Monastery and Hospice of the Mother of God Tou Roidiou (trans. Robert Allison)”, *Dumbarton Oaks Research Library and Collection*, Washington D. C., 2000, p. 425:

<sup>10</sup> Герд, «Тактикон», с. 113, տե՛ս նաև՝ “Byzantine Monastic Foundation Documents, 21. Roidion”, p. 425.

<sup>11</sup> Մ. Էմին, Մխիթարայ Այրիվանեցու Պատմություն Հայոց, Մոսկվա 1860, էջ 61, 1101. А. 550:

<sup>12</sup> Герд, «Тактикон», с. 113, տե՛ս նաև՝ “Byzantine Monastic Foundation Documents, 20. Black Mountain”, Robert Allison, *Regulations of Nikon of the Black Mountain*, p. 382.

<sup>13</sup> Герд, «Тактикон», с. 113-114.

մակի պատճենն առ Եվթիմիոս Երուսաղեմացի (1080-?)<sup>14</sup>, ք. Սիմեոն Հրաշագործի մենաստանի նամակի պատճենն նույն Երուսաղեմի պատրիարքին, գ. Նիկոնի թուղթն ուղղված նորից Երուսաղեմ հայր Գերասիմին՝ Ս. Սաբբայի մենաստանից: Նկատենք, որ այս բոլոր ուղերձներն ուղղված են Երուսաղեմ, ինչը մի փոքր զարմանալի է և բացատրության կարիք ունի, թե ինչո՞ւ Անտիոքի պատրիարքն ինքնուրույն չէր կարող որոշել այդ հարցը: Մեկնաբանման կարիք ունի նաև հայ քաղկեդոնականների վերաբերյալ աճած հետաքրքրությունը, երբ չորս կողմը պատերազմող տարբեր խմբավորումներ էին, երբ թուրքերը հարձակվում էին ավելի ու ավելի մեծ ինքնավստահություններով, չինսպելով անգամ սուրբ վայրերը (այսպես 1084 թ. Սուլեյմանն ավերեց Ս. Սաբբայի մենաստանը, անօթևան թողնելով այնտեղ ապրող բազում միայնակյացներին, որոնց մեծ մասը թերևս մտադիր էր ապաստան գտնել հենց Սև լեռան վանքերում): Այս ամբողջին հնարավոր է մի քանի բացատրություն տալ, որոնցից մեկը կարող է լինել Սև լեռան վանքերում և ընդհանրապես այդ տարածաշրջանում հայերի աճող թիվը:

Նիկոն Սևկենցու այս և մի շարք այլ տեղեկությունները փաստում են, որ քաղկեդոնական դավանանք ընդունած հայերին, այնուամենայնիվ, լիովին չէին վստահում, ժամանակ առ ժամանակ քննության ենթարկելով նրանց «ուղղափառություն»-ը: Առկա են նաև, աղբյուրներ, որոնք վկայում են, որ կաթոլիկ եկեղեցու որոշ ներկայացուցիչների և որոշ խաչակիրների կողմից ևս քաղկեդոնականությունը հարող հայերը հերետիկոսներ էին համարվում<sup>15</sup>: Սա իհարկե կապված էր նաև այն հանգամանքի հետ, որ քաղկեդոնիկ հայերի մեծամասնությունը չհրաժարվեց մայրենի լեզվից և դեռևս Ս. Սաբբայի մենաստանում եկեղեցական ծեսերը նրանք կատարում էին հայերենով<sup>16</sup>:

Հարկ է նշել, որ Սև լեռան հայկական վանքերի գործունեության ուսումնասիրությունը շատ հետաքրքրական է նաև քաղաքական պատմության տեսակետից, որովհետև բացի այլազգի անձանց, և մասնավորապես պաշտոնյաների աշխույժ շփումներից այս համատեքստում նորից արդիական է դառնում առաքելական աթոռների հարցը: Այս մասին, ի դեպ, գրում է նաև հենց Նիկոն Սևկենցին, շեշտելով, թե հարկ է հիշել, որ հենց Անտիոքն է Արևելքի հայրապետական առաքելական աթոռը<sup>17</sup>:

<sup>14</sup> Казарян, Церковные контакты ..., <http://deusvult.ru/102-tserkovnye-kontakty-armyan-khalkidonitov-i-latinyan.html>.

<sup>15</sup> «Epistulae et chartae ad historiam primi belli sacri spectantes quae supersur aeo aequales ac genvinae. Die Kreuzzugsbriefe aus den Jahren 1088-1100», *Ein Quellensammlung zur Geschichte der ersten Kreuzzugs*, hrsg. H. Hagenmeyer, Innsbruck, 1901. s. 161-165.

<sup>16</sup> Պարզ է, որ աղոթքները ևս սավում էին հայերեն, բացառությամբ «Սուրբ Աստուած» աղոթքի, որպեսզի հայերը չգայթակղվեին հավելել «որ խաչեցար վասն մեր» հայտնի արտահայտությունը, հմմտ. օրինակ ս. Սաբբայի մենաստանի կանոնադրությունը:

<sup>17</sup> Այս թեման, ինչպես նաև Նիկոնի կողմից արժարժված Հայ առաքելական եկեղեցում ընդունված պահոց շրջանների և մասնավորապես Առաջավորաց պահի վերաբերյալ դիտո-

Անդրադառնանք նաև այն հարցին, թե 11-րդ դարից այս կողմ ինչու էին այդքան բազմամարդ Սև լեռան վանքերը: Ըստ Կ. Մուլթաֆյանի շատերը փախչում էին՝ ակնկալելով ապահով ապաստան գտնել<sup>18</sup>: Այդ պատճառը միգրացիան առկա էր և կարևոր, սակայն ինչպե՞ս բացատրենք Մեծ Հայքից մեկնողների պարագան և մասնավորապես Մխիթար Գոշի արտառոց օրինակը, երբ նա թաքցնելով իր վարդապետական իշխանությունը, նորից ստացավ այդ կոչումը Սև լեռան Արքայակաղին վանքում: Բացի այդ, ինչպես ակնհայտ է Մատթեոս Ուռհայեցու հետևյալ տեղեկությունից, երբ բորբոքվում էին ռազմական կրքերը, Սև լեռան վանքերն այլևս չէին կարող մարդկանց համար թաքստոց դառնալ.

«Եւ գայր խաղայր բազմութեամբ զօրօփ եւ արար ձմերոց ի Սեւ լեառն. եւ ահագին արեան հեղութիւն եւ կոտորած լինէր յամենայն գաւառն, եւ բազում անձինք ի սրբոց կրօնաւորացն մատնեցան ի բերան սրոյ եւ յայրումն հոռոյ եւ եղեն կերակուր գազանաց եւ թռչնոց եւ ոչ ժամանեցին ծածկիլ հողով, վասն զի մնացին անբաղք մինչեւ յախտեանս. եւ անթիւ վանորայք եւ գեղք այրեցան հրով, որք երեւին մինչեւ ցայսօր. եւ Սեւ լեառն եւ ամենայն գաւառն ի ծայրէ ի ծայր լցաւ արեամբ կրօնաւորաց եւ ֆահանայից եւ արանց եւ կանանց ծերոց եւ տղայոց՝...»<sup>19</sup>

Քիչ ստորև Մատթեոս Ուռհայեցին նորից է անդրադառնում Սև լեռան վանքերին, պատմելով թե ինչպես էին հայ իշխաններն օգնում կերակրով այդտեղ բնակվողներին<sup>20</sup>: Իսկ «ժամանակագրության» երրորդ մասից տեղեկանում ենք.

«Յայնժամ դասք ֆահանայիցն, որք էին ի ֆաղաֆն յՈւտհա, ազդ արարին թղթով Տեառն Գրիգորիսի Հայոց կաթողիկոսի, որ բնակեալ էր ի Սեւ լեառն, ի յանունի անապատն, որ կոչի Արիգի. եւ նա գրով ձեռին իւրոյ հաստատեաց զնոսս անշարժ կեալ ի հաւատս ուղղափառութեանն»<sup>21</sup>:

Բավական լայնածավալ հատված կա նաև Գրիգոր երեցի «Շարունակութիւն» մասում (Մատթեոս Ուռհայեցու ժամանակագրության շարունակություն-

ղությունները, իհարկե ուշագրավ են, սակայն առանձին ուսումնասիրության նյութ են, որոնց անմնարին է անդրադառնալ սույն հաղորդման շրջանակներում:

<sup>18</sup> C. Mutafian, *L'Arménie du Levant (XIe-XIVe siècle)*, p. 602-604, հմմտ. նաև 164, 331, 452, 479:

<sup>19</sup> Մատթեոս Ուռհայեցի, *Ժամանակագրութիւն*, Վաղարշապատ, 1898, էջ 185-186: Չափազանց հետաքրքրական են նաև Վասիլ իշխանին նվիրված բազում հատվածները, որոնց վերլուծությունը կարևոր տեղեկություններ է ընձեռում այդ իշխանի գործունեության, ինչպես նաև Հայաստանի հոգևորականների հետ ունեցած նրա հարաբերությունների մասին, տես, նույն տեղում, էջ 50. «Եւ դարձաւ Տէր Պետրոսն մեծաւ պարգեօք յաշխարհն Հայոց: Իսկ Վասիլն յետ ժամանակաց գայ յԱնտիոք ի ծածուկ Գ արամբք հաստատմօք եւ եկեալ ի Սեւ լեառն ի տեղին, որ կոչի Պաղակծիակ, եւ ի հօրէ եւ յառաջնորդէ տեղւոյն առնու գրիստոսական կնիքն եւ յայնմ հետէ եղեւ որպէս զհայր աշխարհիս Հայոց...»:

<sup>20</sup> Նույն տեղում, էջ 259:

<sup>21</sup> Նույն տեղում, էջ 287:

նր), որը գրեթե լիովին նվիրված է Վասիլ իշխանին՝ նրա ծավալած գործունեությունը, նրան պատկանող տարածքներին և այլն<sup>22</sup>:

Հետաքրքրական է նաև այն փաստը, որ հաճախ Սև լեռը և այդտեղ եղած վանքերը, թե՛ հունական<sup>23</sup>, թե՛ հայկական (ինչպես կտեսնենք ստորև) աղբյուրներում վկայակոչվում են որպես «սուրբ»․ մեզանում անգամ կան առասպելաբնույթ պատմություններ, կապված այդ սարի և վանքերի հետ (օրինակ ասվում է, որ խավարն Ամանոսի լեռների վրա անհայտանում էր և մի զարմանահրաշ լույս էր իջնում դրանց վրա):

Մասնավորապես կարևոր և արժեքավոր են հայկական ձեռագրերի հիշատակարանները, որոնք թերևս ամենաշատ տեղեկություններն են հաղորդում խնդրո առարկա վանքերի վերաբերյալ: Այսպես՝ 15-րդ դարի Ավետարանում<sup>24</sup> տեղ է գտել հետաքրքրական մի հիշատակարան, որը բացատրում է, թե որտեղ է գտնվում Կարմիր վանքը և ինչի հետ է կապված դրա անվանումը.

Դարձեալ, աղաչեմ զձեզ, առաջնորդ և միաբան սուրբ ուխտիս Կարմիր վանիցս, որ խնամ ածէք սորա և լավ բռնէք, կատարող աղաչանաց մերոյ արհնեալ եղիցի[ն]: Աղաչեմ զձեզ եղբարք, եթէ ի յարկածից շարին ելանէ Աւետարանս ի Կարմիր վանացս եւ երթայ ի յայլ տեղ, թէ ի մատու դարձուցանէք ի վանս: Աստուածային արհնութեամբն արհնի բերալն ի վանսն: Զի Կարմիր վանսն ի վերայ ապառաժ քարի է. հողն կարմիր է. յարևելից կողմն Ագրակն է և Պաղանն. յարևմտից դեհն՝ սուրբ էհան, Հագարին և Աղկալն, հարաւային կողմն՝ Զմշկածագ քաղաքն, հիւսիսային կողմն՝ Ակներն և Սեղընկայ լեառն<sup>24</sup>:

Հիշատակարանն ուշագրավ է ոչ միայն բազմաթիվ կարևոր տեղանունների և դրանց տեղայնացման հաղորդագրությամբ, այլև այն առումով, որ այստեղ շատ գեղեցիկ կերպով ներկայացված է մեզանում ամենուրեք վկայված ձեռագրերի նկատմամբ եղած վերաբերմունքը որպես շնչավոր էակի. Կարմիր վանքի Ավետարանը կարող է «ելանէ» և «երթայ ի յայլ տեղ»: Ի դեպ, սա էլ մեկ այլ ավանդական մոտեցում է. երբ սուրբ գիրքն իր տունը լքում է, ինչը շատ վատ է համարվում, նրան պետք է անպայման վերադարձնել: Այս հիշատակարանը հետաքրքրական է նաև, որ այստեղից տեղեկանում ենք, որ ԺԱ դարի վերջում (1090-1091) երկրաշարժ<sup>25</sup> ապրած Կարմիր վանքը, փաստորեն ժե դարում նորից վերականգնված վիճակում է: Հատկանշական է, նաև որ այս

<sup>22</sup> Նույն տեղում, էջ 370-371, մասնավորապես հետևյալ հատվածը. «...ապա եկեալ արանց իբրև երեսնից՝ մտին եւ այրեցին զհաղաքն Քեսուն եւ գդրունս հաղաքին. եւ զբարձրայարկ ապարանսն, զոր շինեալ էր մեծ իշխանն Հայոց Գող Վասիլն, եւ զայլ շէնս, զոր բարձրագոյն տեսին, եւ ինքեանք գնացին փախստական եւ հասին այլոց ընկերաց իւրեանց»:

<sup>23</sup> Օրինակ, նույն Նիկոնն այդպես է բնութագրում Ռոդոփոն վանքը, *Byzantine Documents*, 20. Black Mountain, p. 429:

<sup>24</sup> Լ. Խաչիկյան, *Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ*, մասն Գ, եր., 1967, էջ 479:

<sup>25</sup> Այս երկրաշարժի մասին հայտնում է նաև Նիկոն Սկեռնցին, տես՝ Герд, «Тактикон», с. 114, 26:



Ավետարանը գրվել է հենց Կարմիր վանքում, գրիչ Ալեքսիանոսի կողմից և, ի թիվս այլ ձեռագրերի, մեկ անգամ ևս փաստում, որ Սև լեռան վանքերում հայկական գրչագրեր էին ստեղծվում:

Փե դ. հայտնի են նաև այլ հիշատակարաններ, որոնցից պատկերացում կարելի է կազմել Կարմիր վանքում աշխատող հոգևորականների և այդտեղի անցուղարձի մասին<sup>26</sup>:

Հիշատակարանները տեղեկություններ են հայտնում նաև վանքերի անվանումների, ինչպես նաև դրանց՝ հայերի ձեռքն անցնելու ժամանակի և պարագաների վերաբերյալ: Այս առումով ուշագրավ է Գրիգոր Վկայասեր կաթողիկոսի ստացած ձեռագրերից մեկի հիշատակարանը. այն բավական մանրամասն անդրադառնալով Գրիգոր Վկայասերի տոհմին, տեղեկացնում է նաև 1065-1110թթ. հայկական դարձած՝ Պառլահո վանքի մասին.

«Ել ապա ի յառաջասացեալ ամդ հասաք ի սուրբ լեառնն, զոր Սեան կոչեն, ի մեր սեփական պարգևական եկեղեցիքն յովստն սուրբ, զոր ըստ ասորի բարբառոյ (sic!) Պառլահոյ կոչի, որ թարգմանի «Դրախտ Աստուծոյ», եւ անդ յերեսուն և ի վեց ամի մերոյ աթոռակալութեանս՝ թարգմանեցի զվարս նզնութեան մեծ և սքանչելի առնն Աստուծոյ Յովհաննու Ոսկերեանի Կոստանդնուպոլսի հայրապետի, ի ձեռն առն միոյ, որում անուն էր Թէոփիստէ, ազգաւ յոյն: Ել ապա ետու վերստին արծարծել զսա ի տարաբան և յատարածայն բայից և բառից առաջին թարգմանութեանն, ըստ բերդողացն իմաստից՝ միաշար տողելով ի ձեռն Մա[տ]թեոսի քահանայի, որ սնեալ և վարժեալ էր ընդ մերով ձեռամբ»<sup>27</sup>:

And they come to Jericho, and having left Jericho, he with his disciples and much crowd, a son of Timee, Bartimee, blind, was sitting begging near the passing of the way.

11,14 Պատասխանի ետ եւ ասէ ցնա: մի եւս ոք յաւիտեան ի քէն պտուղ կերիցէ: Եւ լսեին աշակերտքն նորա<sup>31</sup> :

He gave answer and he said to it: “No more in eternity anybody will eat fruit of you!” And his disciples heard.

11,27 Գան միւսանգամ ի յ-ԵՆՄ<sup>32</sup> Եւ մինչդեր ի տաճարի<sup>33</sup> անդ զգնայր. գան առ նա քահանայապետքն եւ դպիրք եւ ծերք եւ ասեն ցնա: որո՞վ իշխանութեամբ անեսս զայդ: Եւ ո՞վ ետ քեզ զիշխանութիւնդ զայդ:

They come again in Jerusalem, and while he went in a temple there, the highpriests and scribes and ancients come to him...

13,11 Այլ յորժամ տանիցին<sup>34</sup> զձեզ մատնել. մի յառաջագոյն հոգայցէք. <sup>35</sup> Եւ մի զմտաւ ածիցէք թե<sup>36</sup> զինչ խաւսիցիք<sup>37</sup> : այլ որ ինչ տացի ձեզ ի ժամուն յայմիկ. զայն խաւսիցիք: զի ոչ դուք էք<sup>38</sup> որ<sup>39</sup> խաւսիցիքն. այլ հոգին սուրբ:

“But when they would take you to deliver you, do not care before, nor consider what you should speak, but what will be given to you in that hour, that you will speak, because nit is not you who will speak, but the holy spirit”.

<sup>24</sup> C Z<sup>maj</sup>: ժողովորդովք “crowds”; increasing the number.

<sup>25</sup> C: omits the phrase “then... to eat”, as in gr majority, it<sup>maj</sup>. and sys.

<sup>26</sup> M O: ուտել ինչ ոչ ունին “to eat, they have nothing”.

<sup>27</sup> C Z<sup>maj</sup>: ժողովորդովք “crowds”; increasing the number.

<sup>28</sup> Z<sup>min</sup>: բարտեմեոս.

<sup>29</sup> C: ալր “a man”; a unique reading.

<sup>30</sup> C: առ ճանապարհան “near the way”.

<sup>31</sup> C: omits “And his disciples heard” (cf. Mt 21,19).

<sup>32</sup> Z<sup>min</sup>: յ-եմ- “to Jerusalem”.

<sup>33</sup> Z<sup>min</sup>: ի տաճարին “in the temple”; C Z<sup>ms</sup>: ի ճանապարհի “on the way”.

<sup>34</sup> M Z<sup>min</sup>: տանիցեն “take”.

<sup>35</sup> C: omits next two phrases; here is no other textual testimony, but perhaps this is sign of liturgical use omitting superfluous phrases.

<sup>36</sup> M: om.

<sup>37</sup> M: խաւսեցիք “will speak”.

<sup>38</sup> Z<sup>min</sup>: ոչ իցէք “wouldn’t be”.

<sup>39</sup> M: om.

13,33 *Զգոյշ եղերուք*<sup>40</sup>: սկէցէք եւ կացէք<sup>41</sup> յաղաւթս: <sup>42</sup>զի ոչ գիտէք երբ ժամանակն<sup>43</sup> իցէ:

“Become attentive! guard and remain praying! Because you don’t know, when it would be the time”.

**Harmonisations** (mostly with Mt):

1,17 *Եւ ասէ ցնոսա ՅՄ*<sup>44</sup>: *եկայք զկնի իմ. եւ արարից*<sup>45</sup> *զձեզ որսորդս մարդկան:*.

And Jesus said to them: “Come after me! and I will make you fisher of men”.

1,19 *Եւ մատուցեալ անտի սակաւիկ մի յառաջ. ետես զՅակովբոս Զեբեդեայ. եւ զՅովհաննէս եղբայր նորա*<sup>46</sup>: *եւ զնոսա ի նաւին մինչ կազմելն ուսկանս*<sup>47</sup>.

And coming near a bit in front of that, he saw Jacob of Zebedee and John, a brother of him, and they were in a ship, while they were repairing their nets, and he called them.

5,20 *Եւ չոգաւ: եւ սկսաւ քարոզել ի Դեկապոլիս*<sup>48</sup> *զոր ինչ արար նմա ՅՄ*<sup>49</sup>: *եւ ամենեքին զարմանային*<sup>50</sup>:

And he went away and began to proclaim in Decapolis the thing that Jesus did to him, and all marveled.

11,14 *Պատասխանի ետ եւ ասէ ցնա: մի եւս ոք յաւիտեան ի քէն պտուղ կերիցէ: Եւ լսելն աշակերտքն նորա*<sup>51</sup>:

He gave answer and he said to it: “No more in eternity anybody will eat fruit of you!” And his disciples heard.

<sup>40</sup> Z<sup>min.</sup>: լերուք “be”; M: զգոյշ կացէք “remain attentive!”.

<sup>41</sup> M: կացէք, this use of conjunctive is homonymous to the imperative կացէք.

<sup>42</sup> C: omits last part; unique in omitting redundant phrase.

<sup>43</sup> M: ժամանակ “a time”.

<sup>44</sup> M: om.: so this reading means “he”.

<sup>45</sup> M C Z add: լինել “to become” (!); here, only E doesn’t follow Mt.

<sup>46</sup> Z<sup>min.</sup>: զեղբայր նորա “his brother”.

<sup>47</sup> M Z<sup>maj.</sup>: զուսականս “the nets”; C adds: իւրեանց “their own” (!); here C conforms with gr Mt.

<sup>48</sup> Z: դեկապոլիս “at decapolis”.

<sup>49</sup> C: ՏՐ “the lord” (!); a unique reading; M adds ajoute: միանգ “one time”

<sup>50</sup> C: omits the phrase omet cette phrase: “and all marveled”; here, by omitting this phrase, C follows Lk.

<sup>51</sup> C: omits the phrase: “And his disciples heard” (cf. Mt 21,19).

**Այբերա տեճ Կատե  
Մարկոսի ավետարանի բնագրային պատկանելությունն ըստ Չեսթեր  
Բիթթի գրադարանի 554 ձեռագրի**

Դուբլինի Չեսթեր Բիթթի գրադարանի CBL Arm 554 ձեռագիրը գրվել է եդեսիայում 1174 թ. և պարունակում է չորս Ավետարաններ: Ըստ հիշատակարանի՝ գրչի անունը Բարսեղ է, որն աշխատել է Գրիգոր քահանայի պատվերով: Այս քաղաքում բնդօրինակված շատ քիչ հայերեն ձեռագրեր են պահպանվել: Մենք համեմատել ենք այն էջմիածնի Ավետարանի (էջմիածնի ձ. 229, այժմ՝ ՄՄ 2374, 989 թ.) և ՄՄ 6200 (887 թ.) ձեռագրի հետ: Չեսթերի շատ յուրահատուկ բնթերցումներ է պարունակում, սակայն ոչ մեկը չի վկայում ասորական ազդեցության մասին: Ընդհանուր առմամբ ձեռագիրը միջանկյալ դիրք է գրավում նշված երկուսի միջև: Տարբեր Ավետարանների բնթերցումները համաձայնեցնելու նրա միտումը վկայում է «Գիատեսասրոնի» («Համաբարբառ որ ըստ չորից աւետարանչաց») ազդեցությունը, ինչպիսին կա Նոր Կտակարանի մյուս բոլոր վաղ թարգմանություններում, օրինակ, վրացերեն Ադիշի, ասորերեն Սինայի ձեռագրում և հին եթովպերենում:



## ՆԱԶԵՆԻ ՂԱՐԻՔՅԱՆ

### ԵՐՈՒՍԱԳԵՄԱԾԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ՀԱՅՈՑ ԴԱՐՁԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Մաշտոցյան այբուբենի ստեղծումը 405 թ. վճռորոշ դեռ խաղաց Հայաստանի քրիստոնեացման գործընթացում: Ի սկզբանե Աստվածաշունչը, ապա՝ հայրաբանական ու ծիսական գրականությունը թարգմանելու գործիքից այն շատ արագ դարձավ սեփական գրականություն զարգացնելու աննախադեպ հնարավորություն: Այս հարստագույն գրավոր ժառանգության մեջ առաջնային դիրք է զբաղեցնում պատմագրությունը, և ոչ միայն քանակական առավելություններով, այլև գաղափարական կարևորությամբ: Պատմագրությանը հատկացված նման ուշադրությունը հայոց մեջ կապված է առաջին հերթին Սուրբ Գրքի աստվածաբանական մեկնաբանության հետ<sup>1</sup>, ըստ որի Աստվածաշունչը ներկայացնում է Փրկագործության տնօրինության մասին համամարդկային պատում: Արդ, հայոց պատմությունը, առ քրիստոնեություն դարձից հետո, ոչ միայն իրավունք է ստանում ներգրվել այդ պատմությանը, այլև ընկալվում է որպես Նախախնամության պատմության օրինական շարունակություն<sup>2</sup>:

Նման հեռանկարը արմատապես փոխում է հայոց վերաբերմունքը սեփական ավանդական հիշողության վերաբերյալ, որ բանավոր էր և հիմնված էր հեթանոս նախնիների առասպելների վրա՝ դրանով իսկ փոխելով նաև նրանց ազգային ինքնության գիտակցությունը<sup>3</sup>: Քանի որ Հայոց մկրտությունը կանխապես սահմանված էր Նախախնամության կողմից, այդ նոր ինքնությունն ընկալվում էր որպես Աստծո հետ կնքած Նոր Ուխտի սահմաններում ընտրյալ ժողովրդի կարգավիճակ, որն իր արժեքով համեմատելի էր միայն Մովսեսին և Իսրայելի ժողովրդին բաժին հասած շնորհի հետ<sup>4</sup>:

Մյուս կողմից, հայ գրականությունը սկզբնավորվում է պատմական ծանր մի ժամանակաշրջանում: 387 թ. Մեծ Հայքի բաժանումից հետո, հայ ժողովրդի երկու հատվածները հայտնվեցին թե՛ մշակութային և թե՛ դավանական օտար-

<sup>1</sup> Այդ մեկնությունը հարում էր անտիոխյան դպրոցի աստվածաբանական ավանդույթներին:

<sup>2</sup> J-P. Mahé, «Entre Moïse et Mahomet. Réflexions sur l'historiographie arménienne», *Revue des Etudes Arméniennes (REArm)* 23 (1992), pp. 121-153; Նույնի՝ «L'alphabet arménien et les Saints Traducteurs», *L'Alphabet arménien*, Centre culturel Sahak-Mesrob, Marseille, 2006, pp. 29-76.

<sup>3</sup> Նույն տեղում:

<sup>4</sup> V. Calzolari, «La citation du ps. 78 (77), 5-8 dans l'épilogue de l'Histoire de l'Arménie d'Agathange», *REArm*, 29 (2003-2004), pp. 9-27.

ման վտանգի տակ: Ավելին, կենտրոնացած իշխանության բացակայության պայմաններում հայ հասարակությունը ստիպված էր պայքարել մի կողմից ուրացման, մյուս կողմից՝ ուժացման դեմ: Ստեղծված իրավիճակում մշակութային միասնության և միասնական հավատի պահպանման միակ կուլանը մնում է սեփական անցյալի հերոսական էջերի վերհանումն ու քարոզումը: Արդ, հայոց առաջին՝ մաշտոցյան կամ «Թարգմանչաց» դպրոցին հարող մտավորական ընտրանին փորձում է զարգացնել հոգևոր և աշխարհիկ իշխանությունների միասնությամբ հզորացած անկախ պետության գաղափարը՝ դիմելով իր նոր քրիստոնեական ինքնության ակունքներին և խորհրդանիշներին<sup>5</sup>:

Ուստի բոլորովին էլ պատահական չէ, որ հայ գրականության առաջին ինքնուրույն երկը պատկանում է հենց պատմագրության ժանրին և այդ երկը շարադրում է Հայոց դարձի պատմությունը. պատմություն, որ համարվել է որպես Սուրբ Գրոց շարունակություն, որի շնորհիվ հայերը, ինչպես Մովսեսի պատմության շնորհիվ հրեաները, կարող են մասնակցել Աստծո Ուխտի հավերժացման գործին<sup>6</sup>:

Ինչպես հայտնի է, հայոց դարձի պատմությունը մեզ է հասել տարատեսակ խմբագրություններով, տարբերակներով, միջարկություններով և տարալեզու թարգմանություններով, որոնք բաժանվում են երկու հիմնական խմբի՝ «Գրիգորի Վարքի» (V) և «Ագաթանգեղոսի պատմության» (A)<sup>7</sup>: Երկի ամենավաղ թվագրվող օրինակը պահպանվել է «Վարք» խմբագրության տարբերակով միայն հունարեն ու արաբերեն թարգմանություններով (Vg-Va-Var): Վերջիններս նշանակալի տարբերություններ ունեն Ագաթանգեղոսի «ազգային» կոչված հայերեն խմբագրությունից (Aa) և առանձին հատվածներով հասնում են մինչև հինգերորդ դարի կեսերը<sup>8</sup>:

<sup>5</sup> R. W. Thomson, *Agatangelos. History of the Armenians*, Albany 1976, pp. ix-x, xxxiv et xcii-xciii; N. Garibian de Vartavan, *La Jerusalem Nouvelle et les premiers sanctuaires chrétiens de l'Arménie*, London-Fribourg-Erevan, p. 205-232.

<sup>6</sup> Ագաթանգեղոսի «Պատմության» որպես աստվածային Ուխտի շարունակություն և Սուրբ Գրքի շարունակություն ինֆնագնահատականի մասին տե՛ս Calzolari, «La citation ...» (ժամ. 4):

<sup>7</sup> «Ագաթանգեղոսի դոսյեի» մասին առավել մանրամասն տե՛ս G. Winkler, «Our Present Knowledge of the History of Agat'angelos and its Oriental Versions», *REArm*, 1980, pp. 125-141; Պ. Մուրադյան, *Ագաթանգեղոսի հին վրացերեն խմբագրությունները*, Եր., 1982; N. Garsoian, *L'Eglise arménienne et le grand schisme d'Orient*, Louvain 1999, p. 1-4.

<sup>8</sup> Այս խմբագրությունների մասին մանրամասն տե՛ս H. Мартъ, *Крепение армянъ, грузинъ, абхазовъ и аллановъ Святым Григорием*, Санкт-Петербург, 1905 (հայերեն թարգմանությունը՝ Յուսիկ արեւախոս, *Մկրտություն Հայոց, Վրաց, Աբխազաց և Ալանաց ի սրբոյն Գրիգորէ, Վաղարշապատ*, 1911); G. Garitte, *Documents pour l'étude du livre d'Agathange*, Studi e testi 127, Vatican 1946, հտկ. էջ 334 և 348 (Հունարեն Վարքի արեւելահայերեն թարգմանությունը տե՛ս Հ. Բարթիկյան, «Ագաթանգեղոսի պատմության հունական նորահայտ խմբագրությունը (Վարք)», *էջմիածին*, 1966, n° 7, էջ 28-34, n° 8, էջ

Սակայն, «ազաթանգեղոսագիտություն» վերջին տարիների արդյունքները ցույց են տալիս, որ «Հայոց դարձի պատմության» առաջին, բնօրինակ շարադրանքի ժամանակային սահմանները տեղավորվում են 417 և 428 թվականների միջև և կապվում են Սահակ Մեծի ու Մեսրոպ Մաշտոցի անունների հետ<sup>9</sup>: Ամենայն հավանականությամբ, տեքստն առաջին խմբագրական միջամտությունն է ստացել 431 թ. Եփեսոսի ժողովրդի հետո<sup>10</sup>, ապա նոր արդեն ծրագրային հիմնարար վերաշարադրանքի ենթարկվել 450-ական թվականներին՝ որպես մի նոր խրախուսիչ հակադարձ արձագանք Ավարայրին հետևած իրողություններին և երկրում տիրող հասարակական-քաղաքական ու բարոյա-դավանական ճգնաժամին<sup>11</sup>:

Ըստ մեր առաջադրած վարկածի, Հայոց դարձը պատմող երկը ստեղծվել է Սահակ Մեծի նախաձեռնությամբ էջմիածնի Մայր եկեղեցու և Հռիփսիմյանների մատուռների վերակառուցման առիթով, որի ժամանակային սահմանները տեղավորվում են 406-417 թթ. միջև<sup>12</sup>: Այդ վերակառուցումը, ինչպես այբուբենի ստեղծումը, նույնպես կապված էր Հայաստանում քրիստոնեության վերջնական հաստատման և հայոց դավանական և մշակութային միասնության պահպանման ծրագրի հետ: Այն նպատակ ուներ կաթողիկոսական աթոռը հիմնավորապես հաստատել Վաղարշապատում և այդ արքայական մայրաքաղաքը վերածել համայն Հայաստանի և հայոց երկու հատվածների հոգևոր կենտրոնի<sup>13</sup>: Այդ քայլը հիմնավորելու համար նախ փորձ է արվում մայր հողում ընդօրինակել քրիստոնյա Երուսաղեմի սրբազան հատակագիծը. երեք մատուռները Մայր տաճարի շուրջ տեղադրվում են ըստ Սուրբ քաղաքի չորս հիմնական եկեղեցիների դասավորության<sup>14</sup>: (Տե՛ս ներդիր, նկ. 37)

46-54, n° 9, էջ 79-87); **Ա. Տեր-Ղևոնդյան**, «Ազաթանգեղոսի արաբական խմբագրության նորահայտ ամբողջական բնագիրը, Sin 455». - *Պատմա-բանասիրական հանդես*, 60/1 (1973), էջ 209-237:

<sup>9</sup> **Garibian de Vartavan**, *La Jérusalem Nouvelle...*, p. 209 ; 218-225; Տե՛ս նաև **Ն. Արմենյան**, *Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում*, հայ. թարգմ. Երևան 1987, էջ 379, ծան. 1; **Տեր-Ղևոնդյան**, «Ազաթանգեղոսի արաբական խմբագրության...»; **J-P. Mahé**, *Histoire de l'Arménie des origines à nos jours*, Paris 2012, p. 93 ; **R. W. Thomson**, *The Lives of Saint Gregory*, Michigan 2010, p. 93:

<sup>10</sup> **Garibian de Vartavan**, *La Jerusalem Nouvelle...* (2009), p. 219; **Նույնի**՝ «La Jérusalem du IV<sup>e</sup> siècle et le récit de la conversion de l'Arménie», *Mélanges Jean-Pierre Mahé, Travaux et Mémoires* 18, Collège de France, Paris 2014.

<sup>11</sup> **Thomson**, *Agathangelos* (1976), տե՛ս ներածությունը:

<sup>12</sup> **Garibian de Vartavan**, *La Jerusalem Nouvelle...*(2009), p. 210-213:

<sup>13</sup> **Նույնի**՝ «Պարթևական ավանդույթները Հայաստանում և կաթողիկոսական արժույթի խնդիրը 4-րդ դարում», *Կրոն և հասարակություն*, թիվ 10 (2010), էջ 48-75:

<sup>14</sup> Այս մասին մանրամասն տե՛ս **Garibian de Vartavan**, *La Jerusalem Nouvelle...*, 205-282; **նույնի**՝ «Երուսաղեմի սրբազան հատակագիծը Հայաստանում և Վրաստանում» (*The Sacred topography of Jerusalem in Armenia and Georgia*), *Հրեաները Հայաստանում*,



Ապա, 417-435 թթ. միջև, բառացի նույնությամբ թարգմանվում և ներմուծվում է Երուսաղեմի ճաշոցը, որպեսզի հայկական ծիսական տարվա տոներն ու արարողակարգը նույնպես համապատասխան լինեն Սուրբ քաղաքի եկեղեցու կարգին և կրոնական կյանքի կազմակերպմանը<sup>15</sup>: Ընդհանրապես, այդ պահից սկսած, Երուսաղեմից սերած և Երուսաղեմին վերագրվող ցանկացած աղբյուր առաջնային հեղինակություն է ստանում լինի եկեղեցական տոների թե աստվածաբանական խնդիրների հետ կապված բանավեճերում<sup>16</sup>:

Ենթադրելի է, որ այս ռազմավարական ծրագրի երրորդ մասն է կազմում «Հայոց դարձի պատմություն» շարադրումը, որում հայկական Նոր Երուսաղեմի ստեղծումը և կաթողիկոսական աթոռի հաստատումը վավերացվում է երկնային միջամտությամբ՝ Գրիգոր Լուսավորչի տեսիլքի միջոցով<sup>17</sup>:

Արդ, «Ագաթանգեղոսի» և «Գրիգորի վարքի» երկու խմբագրությունների հայտնի տեքստերի համեմատական քննությունը թույլ է տալիս առաջադրել ևս մեկ հետաքրքիր վարկած, ըստ որի ոչ միայն դարձի պատմության գրելու շարժառիթներն են առնչվում Երուսաղեմի հետ, այլև բուն երկը՝ թե կառուցվածքային, թե գաղափարական և թե իրադարձային զուգահեռների առումով: Իրոք, շարադրանքի համար օրինակ ծառայած գրական լեյթմոտիվների և կերպարների, բովանդակային և պատմական զարգացումների, հոգևոր խորհրդանիշների բազմազանության մեջ<sup>18</sup> հստակ նշմարելի են չորրորդ դարի Երուսաղեմյան իրողություններն ու կարևորագույն պատմական դեմքերը ներկայացնող աղբյուրների հետ աղերսները:

Հայոց եկեղեցու հայացքը դեպի Երուսաղեմ պատահական չէր: Ինչպես հայտնի է, 4-րդ դարի վերջին և 5-րդ դարի սկզբին, Երուսաղեմը մեծ հռչակ էր վայելում ամբողջ քրիստոնյա աշխարհում որպես հավատի օրրան, առաքելական առաջին աթոռ և համայն քրիստոնեության հոգևոր կենտրոն: Քրիստոսի և

*Միջնադար, Եդեսիայի հրեական գերեզմանոցը և հայ-հրեական մշակութային առնչություններ թեմայով հայ-հրեական գիտաժողովի նյութեր, Եր., 2009, էջ 71-75:*

<sup>15</sup> Այս մասին տե՛ս **Ch. Renoux**-ի բազմաթիվ հրատարակությունները:

<sup>16</sup> **A. Terian**, *Macarius of Jerusalem: Letter to the Armenians, A.D. 335*, New York, p. 17.

<sup>17</sup> Գրիգորի տեսիլի վերլուծությունը տե՛ս **N. Garibian de Vartavan**, «L'aspect primitif de l'église-mère Edjmiatsin», *Revue des Etudes Arméniennes*, 29 (2003-2004), p. 385-484; **նույնի**՝ *La Jérusalem Nouvelle...*, p. 232-250.

<sup>18</sup> Ագաթանգեղոսի «Պատմության» ներշնչանքի աղբյուրների և նախօրինակների մասին տե՛ս **R. W. Thomson**, *Agathangelos, Ներածությունը, նույնի*՝ *The Armenian Adaptation of the Ecclesiastical History of Socrates Scholasticus commonly known as The shorter Socrates*, trans. and comm., Louvain-Paris-Sterling, 2001, p. 3-4; **J.-P. Mahé**, «Le premier siècle de l'Arménie chrétienne (298-387): de la littérature à l'histoire», *Roma-Armenia*, Catalogue de l'exposition à Vatican, Roma, pp. 64-70; **N. Garibian**, «Costantino nella tradizione ecclesiastica armena», *Enciclopedia Costantiniana sulla figura e l'immagine dell'imperatore del cosiddetto Editto di Milano*, Enciclopedia Italiana Treccani, Roma, 2013, vol. II, pp. 441-461:

առաքյալների հետ կապված սուրբ վայրերում կառուցված հրաշակերտ մեծ եկեղեցիները և դրանք անընդհատ իրար կապող ծիսական արարողակարգը շրջանակում էին Սուրբ քաղաքի հոգևոր կյանքը: Այստեղ էին հորդում ուխտագնացների բազմություններ, տարբեր քրիստոնեական համայնքներ հիմնում էին վանքեր և դպրոցներ, իսկ կարևոր տոներին Սուրբ քաղաքն իրապես վերածվում էր միջազգային մետրոպոլիսի<sup>19</sup>:

Երուսաղեմի առաջատար դերի բարձրացման և հոգևոր կյանքի կազմակերպման գործում մեծ ներդրում ունի 4-րդ դարի ամենաակտիվ եկեղեցական գործիչներից մեկը՝ Կիրեղ Երուսաղեմացին: Օգտագործելով Սուրբ քաղաքում 4-րդ դարում տեղի ունեցած երկու կարևոր իրադարձությունները՝ Խաչի գյուտը 326-327 թթ. և Խաչի տեսիլքը՝ 351 թ. մայիսի 7-ին՝ նա զարգացնում է Հաղթական Կենարար Խաչի աստվածաբանությունը, ըստ որի խաչի մասունքի և խաչանշանի միասնական գորությունը Երուսաղեմին շնորհում է առանձնակի կարգավիճակ բոլոր քրիստոնյա քաղաքների մեջ, քանզի այն մարմնավորում է ոչ միայն բիբլիական անցյալը, այլև վախճանաբանական ապագան: Այսպիսով, Խաչը և Երուսաղեմը անքակտելիորեն կապվում են միմյանց և դառնում քրիստոնեության երկու գերազանցագույն խորհրդանիշները<sup>20</sup>: Միաժամանակ, Խաչը դառնում է Քրիստոսին համարժեք մեծություն, քանի որ նրանից է ստանում իր գորությունը և հանդիսանում է նրանից մնացած միակ մասունքը<sup>21</sup>: Ավելին, Կիրեղը ձգտում է արտոնյալ հարաբերություն հաստատել Երուսաղեմի և Կայսեր ու նրա ընտանիքի միջև՝ Խաչը դիտարկելով նաև որպես կայսերական խորհրդանիշ ու ռազմական հաղթանակների գրավական: Այս կոնցեպտը հատկապես շեշտվում է Թեոդոսյան դինաստիայի օրոք, 4-րդ դարի վերջին և 5-րդի սկզբներին, երբ Երուսաղեմը՝ թե՛ իր ֆիզիկական, թե՛ խորհրդաբանական ասպեկտներով, հաստատվում է որպես աշխարհի կենտրոն և Երկնային քաղաքի մարմնավորումը երկրի վրա<sup>22</sup>:

Երուսաղեմի «կենդանի պատկերագրությունը» հիանալի կերպով արտահայտված է 5-րդ դարի սկզբով թվագրվող մի խճանկարում, որը զարդարում է Հռոմի Սանտա-Պուլքենցիանա եկեղեցու խորանը: (Տե՛ս ներդիր, նկ. 38)

<sup>19</sup> Garibian, «La Jérusalem du IV<sup>e</sup> s. ...».

<sup>20</sup> J. W. Drijvers, *Cyril of Jerusalem: Bishop and City*, Leiden-Boston, 2004, pp. 159-162; B. Baert, *A Heritage of Holy Wood, The Legend of the True Cross in Text and Image*, Leiden 2004, p. 51.

<sup>21</sup> C. Walter, «IC XC NI KA: The Apotropaic Fonction of the Victorious Cross», *Revue des Etudes Byzantines*, 55 (1997), pp. 193-220.

<sup>22</sup> Drijvers, *Cyril of Jerusalem...*, p. 156, 159-161; Հ. Ինգլիզեան, «Կիրիլ Երուսաղեմացու թուղթ առ Կոստանդինոս կայսր. Ուսումնասիրություն եւ բնագիր» - *Հանդես Ամսօրեայ*, 78 (1964), սիւն. 289-301, 449-458, շարունակ. 79 (1965), սիւն. 1-16; B. Flusin, «Les reliques de la Sainte-Chapelle et leur passé impérial à Constantinople», *Le trésor de la Sainte-Chapelle*, catalogue de l'exposition, Paris 2001, pp. 20-31.

Այստեղ հավերժական իմանալի երուսաղեմի պատկերն ազդեցված է անցողիկ ու իրական քաղաքի տեսարանին: Կենտրոնում Գողգոթայի բլրակն է և թանկագին քարերով ընդելուզված ոսկեղեն հսկա խաչը, որը խորհրդանշում է միաժամանակ էլ խաչափայտի մասունքը, և խաչի տեսիլքը, էլ Թեոդոս Բ-ի նվիրած ոսկեձուլչ հուշարձանը: Մեկնաբանվելով որպես աշխարհի վախճանի և Քրիստոսի երկրորդ Գալստյան նախանշան՝ այն կարծես իրենով կոճկում է երկնային բնակիչների և երկրային բնակիչների աշխարհների եզրերը: Առաջին պլանում, խաչի հովանու ներքո, Հարության տաճարի ներքին բակում Քրիստոսն է պատկերված առաքյալների հետ, որ այստեղ մեկնաբանվում է որպես վարդապետող եպիսկոպոսի նախորինակ, բայց հատկապես խորհրդանշում է երուսաղեմի եպիսկոպոսին՝ ի մեջ մկրտության պատրաստվող երախաների և հավատացյալների<sup>23</sup>:

Ահա այսպես է երուսաղեմի ֆենոմենը հայվել, երևակայվել և տարածվել ժամանակակիցների կողմից: Այսպես էլ այն պետք է որ ընկալված լինի հայոց մեջ:

Երուսաղեմյան քրիստոնեական խորհրդաբանությունը լավագույնս արտահայտվել է 4-րդ դարից մեզ հասած երեք գրավոր աղբյուրներում՝ Կիրեղի հեղինակած «Կոչումն ընծայութեան» և «Թուղթ առ Կոստանդ կայսր» գրվածքներում և քրիստոնյա աշխարհում ամենատարածված և ամենահղված պատմության՝ «Նաչգիւտի պատումում» կամ «Իսկական խաչի պատումում»: 4-րդ դարի վերջերին և 5-րդի սկզբներին «Նաչգիւտի պատումը» ճշուղավորվում է երեք տարբերակների, որոնք պայմանականորեն անվանվում են ըստ հիմնական գործող անձանց. «Հեղինէի պատում», «Յուզա Կիրակոսի պատում» և «Պրոտոնիկէի պատում»: Վերջինս ձևավորվել է 431-435 թթ., եղեսիայում և հայտնի է միայն ասորերեն և հայերեն լեզուներով<sup>24</sup>: Այն խաչի գյուտը տանում է մինչև առաջին դար և վերագրում այն Կլավդիոս կայսեր հորինածին տիկնոջը՝ Պրոտոնիկէին: «Յուզայի պատումը» երուսաղեմյան ծագում ունի և գրի է առնվել հունարեն հավանաբար 415 թ. շուրջ: Այս տարբերակն ամենատարածվածն է ինչպես Արևելքում, այնպես էլ Արևմուտքում, և հայտնի է մի շարք լեզուներով: Շատ վաղ, եթե ոչ միաժամանակ, այն հավելվել է երկու այլ պատումներով, որպես նախաբան և վերջաբան, որոնք են՝ «Կոստանդիանոսի տեսիլքը» և «Յուզա Կիրակոսի նահատակությունը»<sup>25</sup>: Ահա այս եռամաս բովան-

<sup>23</sup> St'eu C. Mählner, "Lignum Vitae' or 'Crux Gemmata'?: The Cross of Golgotha in the Early Byzantine Period", *Byzantine and Modern Greek Studies*, 20, pp. 77-99.

<sup>24</sup> J. W. Drijvers, "The Protonike Legend, the Doctrina Addai and Bishop Rabbula of Edessa", *Vigiliae Christianae* 51/3 (1997), pp. 298-315.

<sup>25</sup> J. W. Drijvers, *The Finding of the True Cross. The Judas Kyriakos Legend in Syriac*, Louvain 1997, p. 11, 20-28. Կոստանդիանոսի տեսիլքը քիչ ավելի ուշ ընդգրկվում է «Կոստանդինի դարձի» եւ ապա՝ «Սերբեստոսի վարքի» շարադրանքներում եւ նաև այդ աղ-

դակույթյամբ էլ այն Երեսիայի դպրոցում թարգմանվել է ասորերեն, ամենայն հավանականությամբ ժամանակի եպիսկոպոս Ռաբուլայի նախաձեռնությամբ: Վերջինիս են վերագրվում նաև «Պրոտոնիկէի պատումի» շարադրանքը և դրա ընդգրկումը «Աղէի վարդապետության» ժողովածուի մեջ, որի վերջնական խմբագրությունը, կրկին Ռաբուլային վերագրված, թվագրվում է 431-436 թթ.: Ահա այս վերջնական խմբագրության մեջ, «Սիմոն Կեփասի վարդապետության» և «Առաքյալների վարդապետության» հետ մեկտեղ տեղ է գտել նաև Յուզայի եռամաս հատորակը, որը հանդես է գալիս որպես հաշի երկրորդ գյուտ՝ «Պրոտոնիկէի պատումի» շարունակություն<sup>26</sup>: «Աղէի վարդապետությունը» նպատակ ուներ հիմնավորելու Երեսիայի եկեղեցու առաքելական վաղեմիությունը և նրա կապը Երուսաղեմի Մայր եկեղեցու հետ<sup>27</sup>:

Երուսաղեմյան այս երեք աղբյուրները հայտնի էին Հայաստանում արդեն 5-րդ դարի սկզբին: Կիրեղի «Կոչումն ընծայութեան» (նաև՝ «զգիրս երախայիցն») և «Թուղթ առ Կոստանդ կայսեր» գործերը Աստվածաշնչից հետո կատարված առաջին թարգմանությունների շարքում են և նշանակալի հեղինակություն էին վայելում<sup>28</sup>: Դրանք հանգամանորեն ընդգրկված էին Ճաշոցի ծիսական ընթերցվածքներում: Ըստ այդմ՝ Կիրեղ Երուսաղեմացին էլ հատուկ մեծարանքի էր արժանացել Հայոց եկեղեցու կողմից և պսակվել հրաշապատում առասպելներով<sup>29</sup>: Հայկական ավանդույթը ոչ միայն նրան է վերագրում Երուսաղեմյան Ճաշոցի վերջնական հորինվածքը և բազում այլ ծիսական բարենորոգչություններ, այլև միակն է, որ այս պատմական կերպարին նույնացնում է «հաշգիւտի պատումի» Յուզայ Կիրակոսի հետ<sup>30</sup>:

բյուրների քարգմանության միջոցով փոխանցվում հայկական միջավայր (այս մասին մանրամասն տե՛ս **Garibian**, «Costantino...»):

<sup>26</sup> **Նույն տեղում**, էջ 14-15, 32-33 : Տե՛ս նաև **Drijvers**, «The Protonike Legend...»:

<sup>27</sup> **Նույն տեղում**: Տե՛ս նաև՝ **M. van Esbroeck**, «Jean II de Jérusalem et les cultes de s. Etienne, de la Saint-Sion et de la Croix», *Analecta Bollandiana* 102 (1984), pp. 99-134; **Garibian**, «La Jérusalem du IV<sup>e</sup> s. ... »:

<sup>28</sup> **G. Garitte**, «Les catéchèses de s. Cyrille de Jérusalem en arménien», *Le Muséon*, 76/1 (1963), pp. 95-108; **E. Bihain**, «Une Vie arménienne de saint Cyrille de Jérusalem», *Le Muséon*, 76 (1963), pp. 319-348; **Ս. Արեշապյան**, «Հնագույն հայկական քարգմանությունները եւ նրանց պատմա-մշակութային նշանակությունը». - *Պատմա-բանասիրական հանդես*, 1973/1, էջ 23-37 ; **Լ. Տեր-Պետրոսյան**, *Հայ հին թարգմանական գրականություն*, Եր., 1984, էջ 9; **R. W. Thomson**, «Jerusalem and Armenia», *Studia Patristica* 18/1 (1985), p. 77-92.

<sup>29</sup> **Bihain**, «Une vie arménienne...»; **Ch. Renoux**, «Les fêtes et les saints de N. Adontz. Fin», *REArm* 15 (1981), p. 103-144; **Նույնի՛** *Le Lectionnaire albanien des manuscrits géorgiens palimstes N. Sin. 13 et 55 (IX-XI ss.): essai d'interprétation liturgique* (*Patrologia Orientalis* 52/4), Turnhout 2012, n° 234, p. 158-159; **Terian**, *Macarius of Jerusalem*, Introduction:

<sup>30</sup> **Ն. Ալիմեան**, «Վկայաբանութիւն սրբոյն Կիրղի (Կիրակոսի) եւ մօր նորա Աննայի». - *Հանդես Ամսօրեայ* 62 (1948), սիւն. 129-155; **M. van Esbroeck**, «Legends about

Ինչ վերաբերում է «Խաչգիւտի պատումին», ապա այն հայկական միջավայրում հայտնի է միայն «Պրոտոնիկէի» և «Յուդայ Կիրակոսի» տարբերակներով: Առաջինը փոխանցվել էր «Աղէի Վարդապետութեան» միջոցով, որ հայերեն թարգմանվել էր արդեն 430-ականների վերջերին և շատ արագ հայացվել՝ կապվելով Սանատրուկ թագավորի առասպելի և Սանդուխտի վկայաբանության հետ<sup>31</sup>: Հինգերորդ դարի հայ պատմական աղբյուրներում պահպանված քիչ թե շատ ճանաչելի տեղեկությունների քննությունից կարելի է ենթադրել, որ այս տարբերակը նույնպես հայտնի էր նույն ժամանակաշրջանում<sup>32</sup>: Ավելին: Մի կողմից՝ Կիրեղ Երուսաղեմացու հռչակը և նույնացումը Յուդայ Կիրակոսի հետ, մյուս կողմից՝ հայկական ծիսական ժողովածուներում «Կոստանդինի տեսիլքի», «Խաչգիւտի պատումի» և «Յուդայ Կիրակոսի վկայաբանութեան» գրեթե միշտ միասին հանդիպելը թույլ են տալիս եզրակացնել, որ «Խաչգիւտի պատումի» այս տարբերակը հայկական միջավայր է թափանցել մեզ արդեն ծանոթ «Յուդայի եռամաս հատորեակի» տեսքով: Ըստ մեր կատարած հետազոտության՝ հայ թարգմանիչները վերջինիս հետ ծանոթացել են կամ ուղղակի Երուսաղեմում, արդեն 5-րդ դարի սկզբին գործող հայկական դպրոցում, կամ Եդեսիայում, որի հայտնի Պարսից դպրոցի և Ռաբուլա եպիսկոպոսի հետ սահակ-մաշտոցյան ինտելեկտուալ շրջանակը սերտ կապերի մեջ էր<sup>33</sup>:

Երուսաղեմյան այս երեք աղբյուրների ազդեցությունը Ագաթանգեղոսի «Հայոց պատմության» վրա արդեն իսկ նշվել է տարբեր առիթներով<sup>34</sup>: Նկա-

Constantine in Armenian”, *Classical Armenian Culture: Influences and Creativity*, ed. By Th. J. Samuelian (Armenian Texts and Studies 4), Chico 1982, p. 79-101.

<sup>31</sup> Աղբյուրը հայտնի է «Քուղթ Աբգարու» վերնագրով, որ հայ ավանդույթը վերագրում է Լաբուբնային, տե՛ս՝ *Լաբուբնայի դիւանագիր դպրի Եդեսիոյ Քուղթ Աբգարու յեղեալ յասորոյն ի ձեռն Ս. Քարգմանչաց, Վեմեաիկ, Սբ. Ղազար, 1868*; **Mahé**, «Le premier siècle»; **V. Langlois**, *Histoire d'Abgar et de la prédication de Thaddée*. Introduction, dans *Collection des historiens anciens et modernes de l'Arménie*. I, Paris 1867, p. 315-316. Ասորական եւ հայկական պատումների կապի մասին տե՛ս **Ն. Ակիմեան**, «Մատենագրական հետազոտութիւններ. Քաղէի եւ Սանդխտոյ վկայաբանութիւնը. - Հանդէս Ամսօրեայ, 83 (1969), սիւն. 399-426; **M. van Esbroeck**, «Le roi Sanatrouk et l'apôtre Thaddée», *REArm* 9 (1972), p. 241-283.

<sup>32</sup> Տե՛ս **Garibian**, «Costantino...» (ծա՛մ. 18):

<sup>33</sup> Այս մասին մանրամասն տե՛ս **Garibian**, «La Jérusalem du IV<sup>e</sup> s...»: Ռաբուլա եպիսկոպոսի հետ հայ թարգմանչաց դպրոցի հիմնադիրների սերտ հարաբերությունների մասին տե՛ս **P. Peeters**, «La vie de Rabboula, évêque d'Edesse» (écrit en 1928), *Recherches d'histoire et de philologie orientales, Subsidia Hagiographica* 27, T. I, Bruxelles 1951, p. 139-170 եւ **K. Yuzbashyan**, «L'invention de l'alphabet arménien», *REArm* 33 (2011), p. 67-129.

<sup>34</sup> **Thomson**, *The Armenian adaptation...* (ծա՛մ. 18); **հույճի**՝ «Constantine and Trdat in Armenian Tradition», *Acta Orientalia* 50 (1997), p. 277-289; **van Esbroeck**, «Legends about Constantine» (ծա՛մ. 30); **Garibian de Vartavan**, *La Jérusalem Nouvelle...*, p. 246-254; **հույճի**՝ «Costantino...»:

տենք, մասնավորապես՝ «Գրիգոր Լուսավորչի վարդապետության» և Կիրեղի «Կոչումն ընծայութեան»-ի միջև եղած աղերսները, Գրիգորի և Կիրեղի, Տրդատի և Կոստանդինի կերպարների զուգահեռությունը, երկու արքաների մկրտության պատմությունների նմանությունը, վերջապես՝ Գրիգորի տեսիլքի խորհրդաբանության և մեկնության մեջ տեղ գտած առնչությունները Երուսաղեմի սուրբ վայրերի պատկերագրական մանրամասների հետ, և այլն:

Սակայն, «Յուզայի եռամաս հատորի» համեմատական քննությունը հայոց դարձի պատմության մյուս՝ «Վարքի» խմբագրության հունա-արաբական տեքստերի հետ երևան է հանում այնպիսի շոշափելի հարազատություն, որից կարելի է ենթադրել, որ հայ հեղինակներն առաջին շարադրանքում արդեն իսկ սխտեմատիկ կերպով օգտագործել են այս աղբյուրը որպես նախօրինակ, մոդել: Դա արտահայտվում է ինչպես հորինվածքային սխեմաների, այնպես էլ պատմողական տարրերի և դիպային ֆորմուլաների առումով: Թվում է նույնիսկ, որ Կոստանդին Մեծի և իր պատմության մասին տեղեկությունները, ինչպես նաև Կիրեղ Երուսաղեմացու և իր շարչարանքների հետ կապված ակնարկները ուղղակիորեն սերում են «Կոստանդինի տեսիլքից» և «Յուզա Կիրակոսի վկայաբանությունից»<sup>35</sup>:

Օրինակ, շարադրանքի հենց սկզբում, Տրդատի և Գրիգորի միջև երկխոսությունը և վերջինիս խոստովանությունն ու աղոթքը հստակ հիշեցնում են «Յուզայի վկայաբանության» մեջ նկարագրված՝ Յուլիանոս ուրացող կայսեր և Յուզա Կիրակոսի հանդիպման հանգամանքները: Գրեթե նույն արտահայտություններով, ինչ Յուզան, Գրիգորը հրաժարվում է պաշտոն մատուցել կեղծ աստվածներին և նույն բնույթի շարչարանքների է ենթարկվում: Հիշենք, թե ինչպես «Խաչգիւտի» հատվածում Յուզան Հեղինեի հրամանով նետվում է օձերով և կարիճներով լի վիրապը: Կայսրուհու քարոզները բավական մոտ աղերսներ ունեն Գրիգորի առաջին քարոզի հետ, իսկ Լուսավորչի տեսիլքում երևացող երեք խաչերը, որ խորհրդանշում են Հռիփսիմյան կույսերին, արձագանքում են Յուզայի գտած երեք խաչերին: Խաչի գորությունը Գրիգորի կողմից կուսապաշտական մեհյանների կործանման նկարագրությունը տեսանելի թելերով կապված է «Կոստանդինի տեսիլքում» կայսերը երևացած խաչանշանի գորության մասին քրմերի վկայության հետ: Այդ նշանի երևութական բնութագիրը համապատասխանում է ոչ միայն Գրիգորի տեսիլքի խաչերի, այլև Տրդատի մկրտության պահին հայտնված խաչանշանի բնութագրերին: «Խաչգիւտի պատումի» և «Կոստանդինի տեսիլքի» տեքստերին ավելի կոնկրետ անդրադարձ կա կայսերը վերաբերող պարբերության մեջ: Այսպես, Տրդատին

<sup>35</sup> Կոստանդինի տեսիլքի հայերեն տարբերակի մասին տե՛ս **C. Sanspeur**, «La version arménienne de Visio Costantini. BHG 390». - *Հանդէս Ամսօրեայ* 88 (1974), սիւմ. 307-320: Յուզա Կիրակոսի նախատվության հայերեն օրինակի մասին տե՛ս **Ալիմեան**, «Վկայաբանութիւն սրբոյն Կիրղի...»:

հասցեագրած նամակում նա նշում է, որ իր մայր Հեղինենին ուղարկել է Երուսաղեմ՝ սրբազան Խաչափայտը գտնելու, իսկ երկու միապետերի հանդիպման ժամանակ Կոստանդինը Տրդատին պատմում է իր տեսիլքի և Խաչի հաղթանակի մասին: Վերջապես, Յուդա Կիւրակոսի և Կիւրեղ Երուսաղեմացու կերպարների նույնացման մեջ կարելի է տեսնել Գրիգոր Լուսավորչի պատմական կերպարն ըստ Երուսաղեմյան եպիսկոպոսի վերակերտելու ջանքերը՝ օգտագործելով Յուդայի վկայաբանութեան մեջ տեղ գտած գրական արտահայտչամիջոցները: Այս առումով հատկանշական է, որ հայկական աղբյուրներում Կիւրեղին զարդարող «վարդապետ ճշմարտութեան», «լուսաւորիչ», «ախոյան կամ խոստովանող ուղղափառութեան» տիտղոսները<sup>36</sup> հանդիպում են Հայոց դարձի պատմութեան տեքստերում Գրիգորի վերաբերյալ:

Իհարկէ, Դարձի պատմութեան բնօրինակի մասին մեր պատկերացումները հիմնված են հունա-արաբական տեքստերի վրա, որոնք ներկայացնում են այս աղբյուրի 5-րդ դարի կեսերի վիճակը: Հետևաբար հնարավոր չէ միանշանակ որոշել, արդյոք այն գրի է առնվել 417-428, թե 432-438 թթ. միջև: Սակայն, եթէ հաշվի առնենք, որ «Աղէի վարդապետութիւնը» հայերեն էր թարգմանվել մինչև 5-րդ դարի կեսերը, մյուս կողմից, եթէ ընդունենք, ըստ Գրիգորի վարքի քարշունի տարբերակի և Փավստոս Բուզանդի ու Խորենացու մոտ պահպանված վկայութիւնների, որ Ագաթանգեղոսի գրքի սկզբնական տարբերակում ընդգրկված է եղել նաև Սանատրուկի պատմութիւնը<sup>37</sup>, ապա կարող ենք հանգել այն հետևություն, որ Հայոց դարձի հեղինակները կամ խմբագիրները որպես օրինակ ձեռքի տակ են ունեցել «Աղէի վարդապետութեան» ասորական մի ձեռագիր՝ շատ նման վերը նշված ժողովածուին<sup>38</sup>:

Այս դեպքում, միանգամայն հավանական է թվում, որ, ընդօրինակելով Երեսիայի եկեղեցու նույն միտումը, Հայոց եկեղեցին ևս փորձել է հնացնել իր տարիքը և այն կապել Երուսաղեմի հետ՝ երկրի քրիստոնեացումը ներկայացնելով առաքելական ժամանակներից մինչև Կոստանդին կայսեր ժամանակաշրջան: Միաժամանակ ցույց է տրվում, թե ինչպես այդ քրիստոնեացումը փառավոր ավարտին է հասնում Վաղարշապատում, որտեղ աստվածահայտ տեսիլքով հիմնված կաթողիկոսական աթոռը միավորում է հայոց դարձի երկու՝ ասորական և կապադովկյան հոսանքները և երկու՝ Թագեոսի և Գրիգորի աթոռները<sup>39</sup>:

<sup>36</sup> St'eu Bihain, «Une Vie arménienne...»:

<sup>37</sup> St'eu M. van Esbroeck, «Un nouveau témoin du livre d'Agathange», REArm 8 (1971), p. 13-167 եւ նույնի՝ «Le roi Sanatrouk...»; Տեւ-Ղեւոնդյան, «Ագաթանգեղոսի արաբական խմբագրության...»:

<sup>38</sup> «Աղայի վարդապետության» մեզ հասած ամենահին ասորեան ձեռագիրը թվագրվում է մոտ 500 թվականով (Drijvers, *The Finding of the True Cross*, p. 31):

<sup>39</sup> Garibian, «La Jérusalem du IV<sup>e</sup> s... ».

ել վերջապես՝ Հայոց դարձի գրական հորինվածքում ուղիղ բաբախում է երուսաղեմյան վերոհիշյալ երեք աղբյուրներում արտահայտված վախճանաբանական Սուրբ քաղաքի կոնցեպտը, որի կենտրոնական առանցքն է Քրիստոսի Գալուստն ազդարարող խաչանշանը: Այդ կոնցեպտը հմտորեն կիրառված է ժամանակի քրիստոնեական աստվածաբանության մեջ տարածված «ըստ կերպարի և նմանության»՝ *icona-mimesis* կամ այլ կերպ ասած՝ «սրբազան համեմատության» սկզբունքով, որտեղ հայկական օրինակը համեմատվող առարկայի նկատմամբ ներկայացված է առավել շահեկան կամ գերադրական իրողությամբ<sup>40</sup>:

Օրինակ, եթե Երուսաղեմյան խաչի տեսիլքն ընդամենը զգուշացնում էր մոտալուտ Գալստյան մասին, ապա Գրիգորի խաչերի տեսիլքը հենց ուղեկցվում էր Գալուստով, քանի որ տեսիլքում նկարագրված էջքը մեկնաբանվում էր որպես Երկրորդ Գալուստ<sup>41</sup>: Այս ընկալումն ի դեպ արտահայտված է երկնքից թափվող անձրևի պատկերի միջոցով, ինչպես նաև Վարքի հունական տարբերակում Գրիգորի կնոջ՝ Յուզիտալի խոսքերով, որը Հայաստան է գնում իմանալով «սուրբ կույսերի և Գրիգորի սխրագործությունները, որոնք վկայում են Քրիստոսի գալստյան մասին»<sup>42</sup>: Այդպիսով, եթե Երուսաղեմն ընկալվում էր որպես «Փրկչի ծննդյան ավետյաց երկիր»<sup>43</sup>, ապա Վաղարշապատը՝ հայկական Երուսաղեմը, ընկալվում է որպես «Փրկչի Գալստյան ավետյաց երկիր»<sup>44</sup>, որը համարվում էր մի մակարդակ ավելի բարձր քան առաջին Գալուստը, քանի որ ժամանակների ավարտին երկնային արքայությունը իջնելու էր երկիր: Նույն կերպ՝ ինչպես Կիրեղ Երուսաղեմացին է օգտվում Երուսաղեմում կատարված հրաշք-իրադարձություններից և խաչի մասունքի առկայությունից՝ իր աթոռը համայն քրիստոնեության մայրաքաղաք և աշխարհի կենտրոն հռչակելու համար, այնպես էլ Գրիգորի գործած հրաշագործություններն ու սուրբ կույս նահատակների մասունքներն են շեշտադրվում Վաղարշապատը որպես համայն հայության հոգևոր մայրաքաղաք և Հայաստանի կենտրոն հաստատելու համար, որի կարգավիճակն այդպիսով ավելի բարձր է դիտարկվում որպես Երկրորդ Գալստյան վայր: Բայց եթե Կիրեղը, եպիսկոպոս կարգադրվելուց և հրեաներին մկրտելուց հետո մարտիրոսական մահով մահանում է վիրապում,

<sup>40</sup> Այս մոտեցումը շոշափելի կերպով արտահայտված է նաև Կորինի մոտ, ուր հեղինակը Մաշտոցին անվանում է նոր Մովսես, բայց եւ՝ առավել քան մեծ մարգարեն (տե՛ս Կորին, Վարք Մաշտոցի, գլ. 9):

<sup>41</sup> Տեսիլի տեխնալը՝ Հուն. Վարք, 77-82 եւ Արաբ. Վարք, 54-62, Ագաթանգեղոս, § 733-755: Տեսիլի վերլուծությունը տե՛ս **Garibian de Vartavan, La Jérusalem Nouvelle...**, p. 213-255:

<sup>42</sup> Հուն. Վարք, 95, **Բարթիկյան** 1966, էջ 51:

<sup>43</sup> Մեջբերումը՝ **P. Maraval, Lieux saints et pèlerinages d'Orient**, Paris 1985, p. 184, n. 2:

<sup>44</sup> Տեսիլի այս մեկնաբանությունն է ընկած «Էջմիածին» անվանման հիմքում, որ հետագայում շնորհիվ Վաղարշապատի Կաթողիկե մայր-եկեղեցուն:



ապա Գրիգորը այնտեղ գոյատևում է 13 տարի և հաղթական ելքից հետո դառնում է հայոց եպիսկոպոս և մկրտում հայ ժողովրդին ու թագավորին:

Գրիգորի տեսիլքում խաչերի նկարագրությունը և դրանց մեկնաբանությունը, հատկապես հունա-արաբական խմբագրության տեքստերի օրինակով, բեկանված կերպով արտացոլում է երուսաղեմյան տարրերով հագեցած մի պատկեր, որ կազմված է ըստ Գողգոթայի խաչի հուշակոթողի, Կիւրեղի «Թուղթ առ Կոստանդ» և «Կոչումն ընծայութեան» գրվածքների, ինչպես նաև «Կոստանդինի տեսիլքի»<sup>45</sup>: Այսպես, առաջին խաչը, որ խոյանում է քաղաքի կենտրոնում, նմանվում է Կոստանդինի տեսիլքի խաչանշանին: Այն «հովիվն է, որը խաչի օգնությամբ վարդապետելու է ժողովրդին՝ հաստատելով մարդկանց համազոտ երրորդության հավատի մեջ»<sup>46</sup>: Այս խաչը խորհրդանշում է Քրիստոսի վարդապետությունն ու քահանայությունը, ինչը եպիսկոպոսների պաշտոնավարության նախօրինակն է, բայց հատկապես ակնարկում է երուսաղեմի եպիսկոպոսին՝ ի դեմս Կիւրեղի, որի՝ նորընծաներին (երեխաներին) ուղղված քարոզները կենտրոնացած են Գողգոթայի և խաչի շուրջ<sup>47</sup> և որն այստեղ Գրիգորի միմեսիկ կերպարն է: Այդ խաչի երևման տեղում պետք է կառուցվի Կաթողիկէ մայր եկեղեցին, որի ե՛ւ անունը, ե՛ւ կենտրոնական դիրքը վկայակոչում են Գողգոթայի Հարություն եկեղեցական համալիրը<sup>48</sup>: Մյուս երեք խաչերը, որոնք շղթաներով իրար կապված միավորվել էին մի պատկերում՝ «Իսկ և իսկ նշան խաչի»՝ «են օրինակք խաչին, յորոյ վերայ բարձրացեալ եղև Քրիստոս ի մէջ երկուց աւազակաց» և խորհրդանշում են նահատակ կույսերին, որոնք արժանի եղան մասնակից դառնալ Քրիստոսի շարժարանքներին<sup>49</sup>: Դարձի պատմության հայտնի տեքստերը չեն ճշտում, որ այս խաչերը երևացել էին ապագա մատուռների տեղերում, այլ որ դրանք դասավորված էին ըստ աշխարհի ծագերի՝ այսպիսով աղերսվելով հաշիւության պատկերագրությանը, երուսաղեմում Ավագ ուրբաթ օրը կատարվող հաշվերաց արարողությանը<sup>50</sup>, բայց նաև՝ Ադամի արարմանը երուսաղեմում, որ նկարագրված է եդեսական ծագմամբ մեկ այլ աղբյուրում՝ «Գանձերի այրը» պատումում<sup>51</sup>:

<sup>45</sup> Այս մասին տե՛ս **Garibian de Vartavan**, *La Jérusalem Nouvelle...*, p. 250-253:

<sup>46</sup> Հուն. Վարք 82, Արաբ. Վարք 59:

<sup>47</sup> **Drijvers**, *Cyril of Jerusalem*, p. 156-157.

<sup>48</sup> Երուսաղեմի Գողգոթայի եկեղեցական համալիրի կոստանդինյան բազիլիկան ի սկզբանե անվանվել է Կաթողիկէ կամ Մարտիրիոն (Մատուռ), ապա ստացել է նաև Սուրբ-խաչ անվանումը, մինչդեռ Քրիստոսի գերեզմանը ամփոփող բոլորակ եկեղեցին կրել է Հարություն անունը:

<sup>49</sup> Արաբ. Վարք. 59, *Մկրտություն Հայոց, Վրաց...*, էջ 34-35:

<sup>50</sup> Այս արարողության ներմուծումը նույնպես վերագրվում է Կիւրեղ Երուսաղեմացուն, տե՛ս **Drijvers**, *Cyril of Jerusalem*, p. 166-167:

<sup>51</sup> **J.-P. Mahé**, «A la conquête du centre», *Centre et périphérie: approches nouvelles des orientalistes*, actes du colloque, 31 mai – 1 juin 2006, éd. J.-M. Durand et A. Jacquet, Paris 2009, p. 179-195.

եվ վերջապես՝ Լուսավորչի տեսիլքի խորհրդաբանությունը զարգացնում է Հայոց մկրտությունից վախճանաբանական համատեքստը, քանի որ 5-րդ դարի առաջին կեսին Հայոց, Վրաց և Աղվանից վերջնական քրիստոնեացումը ընկալվում էր որպես ժամանակների ավարտի վերջին նշան<sup>52</sup> :

Այս ընկալումը հրաշալի կերպով արտահայտված է Կորյունի գրքում. «Յայնմ ժամանակի երանելի և ցանկալի աշխարհս Հայոց անպայման սքանչելի լինէր (...) քանզի յԱյրարատեան գաւառին՝ ի կայս թագաւորացն և քահանայապետացն, բղխեցին Հայոց շնորհք պատվիրանացն Աստուծոյ», և «երկիրն (...) առժամայն վաղվաղակի ամենայն իրացն եղելոց խելամուտ լիներ. ոչ միայն ժամանակաւ պաշտեցելոցն, այլ եւ յառաջագոյն յաւիտենիցն, եւ ապա եկելոցն, սկզբանն եւ կատարածի...»<sup>53</sup> :

Եթե փորձենք պատկերային լեզվով արտահայտել Գրիգորի տեսիլքն ու այս խոսքերը՝ կատանանք Սանտա-Պուլգենցիանայի խճանկարին շատ մոտ պատկեր:

Ահա այսպիսին էին այն մարդկանց ներշնչանքն ու նկրտումները, որոնք ձեռնարկեցին շարադրել Հայոց դարձի պատմությունը, և այն ուղիղ կապով հանգուցելու համար Փրկության համաշխարհային պատմությանը՝ անդրադարձան Փրկության համաշխարհային կենտրոնի «սրբազան մոզելին», որպիսին համարվում էր Երուսաղեմը չորրորդ դարի ավարտին և հինգերորդ դարի սկզբին:

### Nazenie Gharibian

#### Les sources hierosolymitaines dans le recit de la conversion de L'Armenie

La création de l'alphabet national en 405 était une démarche décisive dans le processus de la christianisation de l'Arménie. Conçu spécialement pour la traduction de la Bible, puis des livres liturgiques et des exégèses patristiques, cet alphabet permet bientôt de développer une riche littérature propre, dans laquelle l'historiographie occupe une place prédominante. L'importance que les Arméniens accordent à ce genre est liée à leur conception théologique de la Bible interprétée comme récit historique universel sur l'Économie du salut, dans lequel leur propre his-

<sup>52</sup> Ըստ Բրիտանական վախճանաբանության (Մթ. ԻԳ 14), Երկնի արհայությունն իջնելու է Երկիր, երբ Ավետարանը ֆարոզվի աշխարհի բոլոր ծագերում: Ըստ հելլենիստական եւ աստվածաշնչյան աշխարհընկալման՝ Կովկասը դիտարկվում էր որպես աշխարհի հյուսիս-արեւելյան ծայր: 5-րդ դարում այս ընկալումը փոխանցվեց Կովկասի երեք Բրիտանյա պետությունների ժողովուրդներին, որոնք ինքնաբերական էին իրենց որպես Աստուծոյ ծայրագոյն շնորհի կատարման գործակիցներ, տե՛ս **J-P. Mahé**, «A la conquête du centre»:

<sup>53</sup> **Կորին**, Վարք Մաշտոցի, գլ. 11 եւ 12:

toire s'intègre, dès la conversion au christianisme, comme prolongation légitime de l'histoire Providentielle. Il n'est donc pas surprenant, que la première œuvre littéraire proprement arménienne soit du genre historiographique, et que cette œuvre raconte la conversion de l'Arménie. Or en examinant de plus près tous les textes du *récit de la Conversion* ou du «dossier d'Agat'angelos», nous percevons, parmi les modèles littéraires choisis, la constante référence à la Jérusalem chrétienne de la fin du IV<sup>e</sup> siècle dans son aspect aussi bien symbolique que matériel. Cette tendance se fait exprimer, dans la source arménienne, par les œuvres littéraires hiérosolymitaines de cette époque les plus répandues : *Les Catéchèses baptismales* de Cyrille de Jérusalem et sa *Lettre à Constance II*, la *Légende de la Vraie Croix* dans sa version de Judas Cyriaque. Toutes ces trois étaient connues en Arménie dès le V<sup>e</sup> s.

## ՎԱՐԳԻ ՔԵՇԻՇՅԱՆ

### ՈՒՇ ՄԻՋՆԱԳԱՐԻ ՄԻ ՆՈՐԱՀԱՅՏ ՉՐՈՒՅՑ

Մասնագետների լայն շրջանին մինչև օրս անձանոթ, ուստի և քննական հայացքից ու գիտական շրջանառությունից դուրս մնացած 18-րդ դարի ոչ անհայտ հեղինակ՝ տաղերգու Հովհաննես Բերիացու «Վէպք Կարթագինեայ» երկի գոյություն մասին հայտնում են միայն մատենագիտական ցանկերն ու Մաշտոցյան Մատենադարանի ձեռագրացուցակները՝ նշելով սոսկ հեղինակի անունը և խորագիրը: Նկատենք, որ հայ միջնադարյան արձակի, զրույց-պատմությունների, և առհասարակ ուշ միջնադարյան գրականության (արձակ կամ չափածո) պատմությամբ զբաղված բանասերներից և ոչ մեկը չի հիշատակում խնդրո առարկա երկը, թեպետ որոշ հեղինակներ իրենց ուսումնասիրություններում նշում են Հովհաննես Բերիացու անունը:

Դեռևս 2006 թ. մենք ծանոթացել էինք Մաշտոցի անվան Մատենադարանի (այսուհետ՝ Մատենադարան) թիվ 2768 (1818 թ.) «ժողովածու»ում պահպանված Հովհաննես Բերիացու մեզ հետաքրքրող երկին: Այդ ձեռագրից քաղված բանասիրական որոշ տեղեկություններ հրապարակել ենք մեր աշխատանքներում, հուսալով հետագայում անդրադառնալ բնագրի ուսումնասիրությանն ու հրատարակությանը:

Հետագա որոնումները ի հայտ բերեցին Մատենադարանի ևս երեք՝ Վեպը պարունակող ձեռագիր՝ թիվ 3384 (18-րդ դ.), 8420 (1814, 1822 թթ.) և 10589 (1817 թ.):

Վեպի մեզ հասած բոլոր օրինակներն էլ սյուժետային ու կառուցվածքային հատկանիշներով գրեթե նույնական են, ինչը հիմք է տալիս ենթադրելու, որ գոյություն է ունեցել մի ընդհանուր նախօրինակ, որից էլ օգտվել են հետագայի գրիչները: Միմիայն այն հանգամանքը, որ 18-րդ դարում Հալեպում գրված այս երկը, ձեռքից ձեռք անցնելով, տեղ է գտել 19-րդ դարասկզբին ստեղծված մի շարք ժողովածուներում, վկայում է նրա հանդեպ դրսևորված հետաքրքրության և լայն տարածման մասին:

Այժմ անդրադառնանք Վեպի կառուցվածքին և ժանրային առանձնահատկություններին: Երկը իր մեջ ընդգրկում է հայ միջնադարյան արձակի ամենատարբեր՝ զրույցի, մանրավեպի, իրապատում հեքիաթի և այլ ժանրային առանձնահատկություններ, սակայն բովանդակային և կառուցվածքային հատկանիշներով ավելի մոտենում է զրույցի, մասնավորապես՝ խրատական զրույցի ժանրին: Թեպետ մի դեպքում հեղինակային պատկանելությունը, մյուս դեպքում՝ «Վէպք» խորագիրը, կարող են տարակարծությունների տեղիք տալ,

սակայն կառուցվածքային և տիպաբանական սերտ աղերսները հայ միջնադարյան գրույց-պատմությունների հետ, ինչպես նաև բուն խորագիրը (վեպ՝ «հին գրույց, պատմական ավանդություն»), բավարար հիմք են տալիս Բերիացու այս երկը դասելու ուշ միջնադարյան գրույցների շարքին, որոնք շարունակում էին մնալ աշխարհիկ ընթերցանության կարևորագույն գործեր: Վեպի կառուցվածքը ներառում է գրույցի ժանրին բնորոշ բոլոր բաղկացուցիչ մասերը՝ բուն պատմվածք, խրատական եզրակացություն և չափածո հարասություն:

Այնուամենայնիվ խրատական գրույցից Վեպը տարբերվում է մի շարք առանձնահատկություններով: Այստեղ միջնադարյան գրույցներին հատուկ վիպական շերտին միահյուսված են հեղինակի խորհրդածություններն ու գնահատումները՝ խրատական ուղղակի շեշտով: Պետք է ավելացնել նաև հարուստ բովանդակությունը, հորինվածքի նպատակասլացությունը, սյուժետային գիծը, դեպքերի ու իրադարձությունների փոխկապակցվածությունը:

Ի դեպ, Վեպի մեզ հայտնի բոլոր օրինակներում էլ առկա է «նախաբանք» վերտառությամբ միևնույն առաջաբանը, որը բուն շարադրանքին ուղղակիորեն չի առնչվում և հետագա հավելում է: Դա գրչի ավելացրած ընծայականն է՝ հավանաբար ուղղված իր վարդապետ-ուսուցչին՝ «քաջ գիտնական Ստեփանոս սրբազան արքեպիսկոպոսին»: Ուշագրավ է, որ ընծայականի հեղինակ գրիչը շեշտել է մատուցվող երկի կարևորությունն՝ իբրև «գլխավոր՝ ազգեաց բանն կանխագիր»:

Բուն Վեպը կամ գրույցը սկսվում է պատմողական ժանրի՝ գրույցի ոճով. «Զրուցեն հին աուրք մատեանք, և հասու առնեն զմեզ երեկայցն պատմութիւնք, թէ ընդ աուրս ժամանակաց հոլովեալ ամաց...»: Այս սկզբնատողով հաստատվում է, որ Վեպի հիմնական կորիզը կազմող գրույց-պատմությունը հայ ընթերցողին ծանոթ է եղել շատ ավելի վաղ ժամանակներից: Որոշ հիմքեր ունենք կարծելու, թե Վեպի սյուժետային հենքում ընկած է հայ հին և միջնադարյան բանահյուսությունից եկող մի աշխարհիկ գրույց, որը մշակվելով ներհյուսվել է պատմմին: Չի բացառվում, որ դա արևմտաեվրոպական, կամ, ավելի հավանական է, արաբական գրականության մեջ ձևավորված և տարածում գտած մի գրույցի գրական վերամշակումը կամ վերապատումն է, որը հայ մատենագրություն է մուտք գործել բանավոր ճանապարհով կամ թարգմանության միջոցով: Զրույցի նախօրինակի հետագա որոնումները թերևս ի հայտ կբերեն նրանում առկա թարգմանական որոշ շերտեր կամ նրա հետ առնչվող այլ երկեր: Համենայն դեպս, և՛ պատմմի նյութը, և՛ այնտեղ շրջանառվող որոշ տեղանուններ ու պատվանուններ, հիմք են տալիս ենթադրելու, որ հեղինակը ծանոթ է եղել այդ նյութը պարունակող թարգմանված գրքերի և գեղարվեստական մշակման է ենթարկել դրանք, ուր իրար են միահյուսվել հին ու նոր վիպասանությունները:

Բուն պատումը, ինչպես հուշում է խորագիրը, աղերսվում է Կարթագեն քաղաքին և նրա անկման ու կործանման պատմությանը: Կարելի է ասել, որ գործ ունենք նյութի ստեղծագործական իրացման հետ, որի խորքում պահպանված են հին աշխարհի «մեծագոր» տերություններից մեկի՝ Կարթագենի կործանման իրական կամ երևակայական պատճառները: Պատմությունից հայտնի է, որ Հռոմը շարունակ պայքարի մեջ էր տնտեսական և ռազմական հզորությամբ իրեն մրցակից Կարթագենի դեմ: Մասնավորապես Միջերկրական ծովում իր գերիշխանությունը հաստատելու և առևտրում մենաշնորհի հասնելու համար, հռոմեացիները մի շարք հարձակումներից հետո, ի վերջո (մ. թ. ա. 146 թ.) տիրացան քաղաքին, դաժան կոտորած սարքեցին ու հիմնովին ավերեցին այն. արդյունքում երբեմնի հզոր ու բարգավաճ Կարթագենն ընդմիշտ հեռացավ պատմության թատերաբեմից:

Պատմական այս եղելության հետքերն են, ահա, նշմարվում Վեպի խորքային շերտերում: Սակայն, հեղինակը, կարծես շրջանցելով պատմական իրական դեպքերն ու եղելությունները, ձգտել է ի հայտ բերել քաղաքը հիմնովին կործանման մղող այլագո պատճառներ: Այդ նպատակով նա ճոխ և փարթամ գունչերով գովերգում է իր ծաղկման ու հզորության գագաթնակետին հասած Կարթագեն պետության հաջողության ու բարօրության գրավականները՝ «համբարձաձիգ իշխանութիւնն, յառոյգ ճոխութիւնն ու հաստադրական բարեկարգութիւնը»: Սակայն բարգավաճ կյանքն ու հետզհետե աճող ցոփությունն ու շվայտությունը, չափազանց հարստությունն ու ազատությունը քայքայման եզրին էին հասցրել երկիրը: Բերիացի հեղինակը խորությամբ ըմբռնել է, որ հղփացած կյանքի մոլարն ու դրանց ուղեկցող խրախճանքներն ու գինարբուքները իրենց հետ բերում էին բարքերի անկում, բարոյական արժեքների վերացում, որն էլ երկիրը կարող էր իսպառ կործանման առաջնորդել: Եվ այսպես, հեղինակի իսկ բնորոշմամբ՝ «Տիրեալ երջանիկ այս քաղաքի՝ ապերջան ախտ շուայտութեան և արբեցութեան, ...և գլխովին գթաղաքն յայն ախտ վարակեալ...»: Ըստ Բերիացու՝ մարդիկ նախընտրում էին ավելի զվարճանալ, քան աշխատել ու արարել, և ավելի դատարկաբանությամբ, խելահեղ զվարճաբանություններով ու գինարբուքներով էին տարված, քան երկրի բարօրությամբ մտահոգված, ինչի հետևանքով քաղաքը «եղծեալ» կերպարանք էր ստացել: Այս դառնադետ ախտով էր վարակված երկիրը գլխովին՝ ամենաստորին խավերից մինչև երկրի գլուխ կանգնած թագավորն ու իշխանավորները, և հեղինակը ժողովրդական ասույթն հիշեցնելով եզրակացնում է՝ «ձուկն ի գլխոյն սկսանի նեխիլ», ու ավելացնում՝ «քանզի այս ախտ որոց տիրանէ գիտէ ի բարեաց զրկել, ի գոյից մերկել, ի կորուստ գրկել, ի չարիս հերկել...»: Այս «ախտացեալ ախտ»-ն էր տիրել քաղաքի վրա, երբ թշնամին հարձակվելով, անգամ դիմադրության չհանդիպեց «զգաստութենէ և զգոնութենէ» զուրկ

բնակիչների մոտ, այլ հեշտ ու համարձակ գրավեց և ավերեց քաղաքն ու «դիտապատս յերկիր ճապաղ սփռեալ նիրհել զքուն թանձրութեան մեռելոյ»:

Հարկ է նաև կանգ առնել մի կարևոր հանգամանքի վրա, որը էական տեղ է զբաղեցնում երկի խրատաբանական համակարգում: Նրանում արտացոլված են հեղինակի ըմբռնումներն ու աշխարհայացքը առհասարակ երկրի, պետության և պետականության վերաբերյալ: Ըստ Բերիացու՝ երկրի գլուխ կանգնած թագավորը, ինչպես և նախարարները, իրավապահներն ու դատավորները, պետք է լինեն արդարադատ, զորեղ և աշալուրջ, որպեսզի թույլ չտան ամեն տեսակ անիրավությունն ու անօրինությունն երկրի մեջ, վերահասու լինեն ներքին կարգ ու կանոնին, նաև հոգատար իրենց ժողովրդի հանդեպ: Միաժամանակ, հասարակության բոլոր խավերին հորդորում է նվիրվել իրենց երկրի բարօրությանը, աշխատանքով արարել, օրենք ու կարգ հարգել, և մանավանդ՝ արթուն և զգոն լինել իրենց երկրի պաշտպանության գործում: Հեղինակն իր այս տեսությունը ինչ-որ չափով մոտենում է իշխանություն և հասարակություն քաղաքագիտական հիմքերին և պետության կատարելատիպին, որն ինչպես հայտնի է, 18-րդ դարի կեսերից սկսած եվրոպայից տարածվող լուսավորական շարժման բաղկացուցիչներից էր:

Վեպն իր պատումային հենքով ու սյուժետային էական գծերով հիշեցնում է Վարդան Այգեկցու «Թագավորի տղան» («Գինի») առակը: Երկու երկերի պարզ համեմատությունը ի հայտ է բերում իմաստային նմանություններ և ընդհանրություններ, թեև դրանք ժանրային առումով խիստ տարբեր են: Հետևաբար կամ Բերիացու համար Վեպի ստեղծման նախագաղափար նախօրինակ է հանդիսացել Այգեկցու առակը, կամ էլ Վեպի և Վարդանյան առակի հիմքում ընկած է մի ընդհանուր սկզբնաղբյուր, բանահյուսական կամ թարգմանական երկ, որը գրական մշակման ենթարկվելով շարունակել է գոյատևել մինչև 17-18-րդ դարերը: Այդ նմանությունները առավել ցայտուն են պատումային հենքում և գինուն առնչվող խրատական շերտերում: Մյուս կողմից, քննարկվող երկը Վարդանյան առակից ակնհայտորեն տարբերվում է ոչ միայն ժանրային և ծավալային առումով, այլև լայն ընդգրկումով, հատկապես անհատականից ընդհանրականին անցումով: Եթե Այգեկցու Առակում թագավորի տղան է անզուսպ խրատիկաների ու գինարբության ենթական, ապա Վեպում՝ բովանդակ Վարթագենի ժողովուրդն է դառնում զեխ կյանքի ու գինեմոլության զոհը: Այս ներքին աղերսներն ու արտահայտությունները՝ «յիմարեցոյց գեղխութիւն»ը, «արբեցութիւն»ն ու «զգաստակորոյս գինեսիրութիւն»ը, ընդգծված առնչություններն ու ծագումնաբանական կապ են բացահայտում Վարդանյան առակի հետ: Այստեղ տեղին է հատվածներ մեջբերել Այգեկցու առակից, որոնք ակնհայտ նմանություններ ունեն Բերիացու հեղինակած Վեպի հետ:

«Մի թագավոր մի որդի ուներ և հրաման արեց նայիպներին, թե ամեն օր ձեզնից մեկը թող տանի իմ որդուն և պատվի...: Եվ մի օր մի նայիպ պատվելու

էր տարել թագավորի որդուն...: Թագավորի տղան խիստ գինով էր և հարբած դուրս եկավ, ընկավ աղբանոցը և մեռավ: Եվ թագավորը հրամայեց, թե իմ իշխանութւյան ներքո ինչքան այգի կա՝ փակեք և կարասները կոտրատեք: Եվ այդպէս արին: Եվ մի այրի կին մի որդի ուներ և այրի կինը պահեց լուր հնձանը և գինին և ամեն առավոտ և երեկո հացի վրա երկու թաս գինի էր տալիս որդուն: Եվ այրի կնոջ որդին մի գիշեր դուրս եկավ, սպանեց թագավորի առյուծին, և թագավորն առավոտյան հրամայեց, թե ով որ սպանել է իմ առյուծին, եթե գա և ինձ պատմի՝ նրան չեմ պատժի: Եվ եկան այրի կինը և նրա որդին: Թագավորը նրան հարցրեց, թե ինչպէս սպանեցիր առյուծին: Եվ նա ասաց. թե գիշերով դուրս եկա, հանդիպեցի առյուծին և սպանեցի: Եվ մայրն ասաց, թե նրան գինով է սնուցել և պատմեց, թե ինչպէս է գինով սնուցել: Եվ թագավորը հրաման արձակեց. թե այգի տնկեք և գինին այնպէս խմեք, որ առյուծ սպանեք և ոչ թե աղբանոցում մեռնեք»<sup>1</sup>:

Այն, որ Բերիացին հնարավորութիւն է ունեցել մշակելու և նորովի մեկնելու Վարդան Այգեկցուց քաղած առակը, պատահականութիւն չէ, ինչպէս որ պատահան չէ, որ Հալեպում, հավանաբար տեղի դպրատան մեջ կրթութիւն ստացած Հովհաննէս Բերիացին ոչ միայն ծանոթ է եղել Վարդան Այգեկցու առակներին, այլև իր ձեռքի տակ ունեցել է միջնադարյան բանահյուսութիւնից եկող այլ երկեր, որոնք մշակել ու հարստացրել է իմաստային նոր շերտերով:

Մեր կարծիքով կարելի է այս երկուսը նույն շարքի մեջ գետեղել՝ իբրև մշակութային միևնույն միջավայրի արտադրանք: Այստեղ մենք գործ ունենք գրական ավանդույթի շարունակականութեան հետ, երկու գործերն էլ ստեղծվել են նման միջավայրում, թեև ժամանակով իրարից հեռու, սակայն նույն հոգևոր դաշտում:

Ավելացնենք, որ Վեպի և Վարդանյան առակի միջև ընդհանրութիւնները չեն սահմանափակվում սոսկ իմաստային և գաղափարական հենքով, այլ նաև կառուցվածքային զուգահեռներ են ցուցաբերում: Երկու հեղինակներն էլ օգտագործել են միևնույն հնարքը՝ շարի ու բարու և դրանց հարացուցիչների հակադրման միջոցով հասնելու հղացքի իմաստային ներքին թելադիր շերտին: Այս հնարքը, որը լայնորեն կիրառվում էր միջնադարյան արձակ գրականութեան մեջ, առավելապէս խրատական առակի և զրույցի ժանրերում, միտված էր ավելի անմիջական և ազդու դարձնելու նյութը: Այս սկզբունքով են ստեղծված քննարկման ենթակա երկու երկերն էլ. երկուսում էլ կշեռքի նժարի վրա է դրվում գինին, մի դեպքում իբրև շարիքի, մյուս դեպքում իբրև մտքին ու հոգուն ուրախութիւն, զվարթութիւն և արիութիւն պատճառող բարիքի աղբյուր: Խրատական մեղմ շղարշով հանդերձ, զուգադրվում են գինու երկու

<sup>1</sup> Վարդան Այգեկցի, Աղուեսագիրք, Եր., «Սովետական գրող», 1981, էջ 24:



տարբեր հատկանիշները. այն շար է, եթե շարաշահում ես, և բարի է, եթե չափավորության ճանապարհն ես ընտրում: Այսպիսով մի դեպքում քննադատվում է վեպում պատկերված քաղաքի վատաբարո նկարագիրը, ցոփության, շվայտության, գինեմոլության բերած ավերքը, իսկ մյուս դեպքում՝ այրի կնոջ՝ ամեն օր չափավոր և սակավ գինի խմող որդու վարքագծի մեջ, դրվատում գինու պատճառած բարիքները, որտեղ գինով կորովացած ու առյուծնեերին հաղթած քաջասիրտ պատանին դառնում է քաջառողջ, զորավոր, առույգ և ապահով կյանքի խորհրդանիշը, որ այնքան համահունչ է Վեպում տեղ գտած չափաբանքի «Սակաւ ըմպողաց մայր է շատ օգտից» տողին:

Այս դեպքում հեղինակը հանդէս է գալիս իբրև զգոնության, չափավորության, ժուժկալության գաղափարախոս, այսինքն՝ չափավորի, որ չխորտակվես, որ նույնքան հարազատ է վարդանյան առակի վերջին տողերին. «գինին այնպէս խմէք, որ առիւծ սպանէք, և ոչ թէ աղբանոցում մեռնէք»:

Վեպում առանձին գլուխ է կազմում վերջաբանը, որ երևան է հանում ամբողջ պատումի համառոտ ամփոփումը. «Բայց դու եկ տե՛ս ինձ, թէ զի՞նչ ի միում և զի՞նչ ի միւսում գործեաց գինին...»: Այս բաժնի մեջ հրաշալիորեն դրսևորվում են հեղինակի ստեղծագործական հմտությունն ու անձնական փորձառությունը, որ թույլ է տալիս գրույցի խորհուրդը ընկալել իր ամբողջության մեջ:

Վեպի մեջ, ինչպես նշեցինք, առանձնանում է «Բանք չափաբանք» խորագիրը կրող բանաստեղծությունը, որը բնագրի բովանդակության թելադրանքով հորինված բացատրող և մեկնող չափածո խոսք է: Պարզ ժողովրդական ոճով գրված «չափաբանք»-ն աչքի է ընկնում բանաստեղծական հղացքի ինքնուրույնության աստիճանով և ընդհանրացման չափով, և արձակ բնագրից անջատ՝ կարող է ընկալվել իբրև ինքնուրույն բանաստեղծական կտոր: Եվ իրոք՝ չափաբանքը նաև տպագրվել է իբրև ինքնուրույն գործ, մասնավորապես՝ Հնդկաստանի Կալկաթա քաղաքում լույս տեսած «Ազգասէր»-ի 1846 թ. էջերում հրատարակվել են ոտանավորի առաջին երկու տները՝ հարազատորեն պատճենված ձեռագիր օրինակից:

Հովհաննէս Բերիացու այս գողտրիկ բանաստեղծությունը չի վրիպել նաև բանասեր, խմբագիր և հրատարակիչ Թեոդիկի սուր հայացքից, որն իր «Որթն ու իր բերքը» ընդարձակ ուսումնասիրության մեջ<sup>2</sup> հրատարակել է «Գինին խրախատու մտաց և սրտից» սկզբնատողով քերթվածը: Սա նաև հաստատում է, որ Հովհաննէս Բերիացին որպես տաղասաց բավական համբավ էր վայելում, և նրա տաղերը ընդօրինակվում էին տարբեր ժողովածուներում:

Ջրույցի լեզուն աչքի է ընկնում գրաբարի ճոխ և շուայլ, որոշ առումով խրթնախոս ոճով: Ամենից ավելի հագեցած է եզրաբանական շերտը, ուր

<sup>2</sup> Տե՛ս Թեոդիկ, «Ամենուն Տարեցույցը», 1926, էջ 158:

լայնորեն կիրառված են երբեմն անհանգիստ, երբեմն համանիշ ու նույնանիշ եզրաբառեր, իրենց հարուստ հնչերանգներով, բարդություններով ու նորաբանություններով: Քննությունը ցույց է տալիս, որ երկն իր վրա կրում է միջնադարյան լեզվամտածողության որոշակի ազդեցություններ, մասնավորաբար՝ «Գիրք պիտոյից»ի և Գրիգոր Մագիստրոսի լեզվից: Ավելին, կան փաստեր, որոնք գալիս են հաստատելու, որ Վեպն ստեղծող հեղինակը մեծապես օգտվել է Մագիստրոսյան լեզվաոճական համակարգից: Հատկապես հոմանիշ և բաղաձայնույթով (ալիտերացիայով) կապված բառերի կուտակումները հիշեցնում են վերջինիս ոճը: Ահա բնագրային մի քանի նմուշ. «գտանեցեալ գինին գովելի գովելեացն գործակ գարշելի», «կարօղ կալուղք կենաց կեղեքելոց ի կոկորդա», կամ «պարտիլ պարպատիլ և պարտաւիլ»: Կան նաև նմանատիպ արտահայտությունների, բառեզրերի օգտագործման բացահայտ նմանություններ: Մեջբերենք մի օրինակ: Հովհաննես Բերիացու գործում կարդում ենք. «տեսեալ զանտիականն զխակութիւն, և զնկնահասակ դրակին զգծծութիւն» (Թերթ 109բ): Նույն արտահայտությունն է օգտագործված Գրիգոր Մագիստրոսի «Առ Անանիա Հայրն Տիրուայ» նամակում. «մինչդեռ տակաւին յանտիական խակութեանն»<sup>3</sup>: Իսկ ահա «Գիրք պիտոյից»-ի մեջ կարդում ենք. «սեխենի և մորենի, որ մարմնով նկնահասակ և գձուձ են»<sup>4</sup>: Ինչպես տեսնում ենք, այստեղ նույնություններն ակնհայտ են, բայց դա արդեն այլ ուսումնասիրության նյութ է:

Այժմ անդրադառնանք Վեպի՝ մեզ համար ամենակարևոր՝ հեղինակի ինքնությունն ինդրին: Ո՞վ է «Վեպ»-ի հեղինակը, և ո՞ր ժամանակաշրջանի ու ի՞նչ միջավայրի հետ է կապվում նրա գրական արտադրանքը: Մենք համարյա ոչինչ չգիտենք նրա կյանքի մասին, ո՞վ էր նա, կիլիկեցի՞ էր, թէ՞ հայաշխարհի մի այլ անկյունից Հալեպ գաղթած մի ընտանիքի շառավիղը. այս հարցերը պատասխան չունեն, ինչպես որ հստակ պատասխաններ չունենք իր ապրած տարիների, ստացած կրթության, և այլ հարցերի շուրջ: Այդ իսկ պատճառով, եթե ձեռագրերում տեղ գտած Բերիացու երկերի ժամանակը (որոնք բոլորն էլ հետագայի ընդօրինակություններ են) համարենք 1800-ականների սկիզբը, ապա Հովհաննէսը ապրած պիտի լինի ոչ ուշ քան 18-րդ դարի կեսերին: Այս ենթադրության օգտին է խոսում, օրինակ, Հալեպում ավելի վաղ ընդօրինակված ժողովածուների մեջ Հովհաննես Բերիացու գործերի իսպառ բացակայությունը: Միակ վկայությունը նրա մասին իր գործերն են՝ ցրված Մաշտոցյան Մատենադարանի, Վիեննայի Մխիթարյան վանքի, Նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի մատենադարաններում և Փարիզի Ազգ. գրադարանում պահվող ձեռագրերում:

<sup>3</sup> Տե՛ս «Մատենգիրք հայոց», ԺԱ դար, հտ. ԺԶ, Գրիգոր Մագիստրոս, աշխատ. Գ. Մուրադյանի, էջ 301:

<sup>4</sup> Տե՛ս «Գիրք պիտոյից», աշխատ. Գ. Մուրադյանի, եր., 1993, էջ 146.23:

հազիվ մեկ տասնյակի հասնող տաղեր, թղթեր, ինչպես նաև այստեղ ներկայացվող գրույցը: Իր մասին առաջիմ միակ հիշատակության հանդիպում ենք մեր ուսումնասիրության առարկա՝ Մաշտոցյան Մատենադարանի թիվ 2768 գրչագրում. «Յօրինեալ Յօհաննու սարկաւագի Բերիացոյ, առն Աստուած-իմաստի և քաղցրաբանի...»: Այս բնորոշումները գալիս են հաստատելու, որ Հովհաննես Բերիացին հայտնի է եղել իր ժամանակին իբրև հմուտ քարոզիչ ու աստվածաբան: Ձեռագրերից մեկում Բերիացին ինքն իրեն սարկավագ է կոչում. «Յովհաննէս սարկաւագ Բերիացի»: Կարելի է ենթադրել, որ Հովհաննեսը հոգևոր կոչման է նվիրվել հասուն տարիքում: Ամեն դեպքում Հովհաննես Բերիացուց մեզ հասած երկերը իրենց վրա կրում են հասուն, խորագետ, ու ամենից կարևորը՝ գրական-ստեղծագործական ձիրք ունեցող անձի դրոշմը:

Անհրաժեշտաբար նկատենք, որ միջնադարյան Հալեպը (հին անվամբ Բերիա, այստեղից էլ հեղինակի Բերիացի անվանումը) վայր էր գրի ու գրչության, գիտության ու դպրության, որի արմատները սերում էին Հայկական Կրիկիայից: Կրիկիայի հայկական թագավորության անկումից հետո Հալեպը դարձավ այն բացառիկ կենտրոններից, ուր վերապրեց ու իր վերամարմնավորումը գտավ Կրիկյան մշակույթն ու արվեստը: Հովհաննէս Բերիացու ժամանակ, ինչպես և նախկինում, Հալեպում կային պայմաններ և համապատասխան միջավայր, գրականության զարգացման համար:

Ամփոփենք. Հովհաննէս Բերիացու մինչև այժմ միայն մատենագիտական ցանկերից ծանոթ «Վեպք Կարթագինեայ» երկն առաջին անգամ է դրվում գիտական շրջանառության մեջ: Չնայած իր փոքր ծավալին այն ունի գեղարվեստական ընդգծված արժանիքներ: Աչքի է ընկնում հետաքրքրական բովանդակությամբ, շարադրանքի խիտ և ընդգրկուն հատկանիշներով: Այս գործը ուսումնասիրողին հնարավորություն կընձեռի ծանոթանալու ժամանակի գրական ճաշակին, նախասիրություններին, բարոյական ըմբռնումներին, հոգեբանությանը, ինչպես և հետևելու ժամանակի գեղարվեստական արձակի զարգացման ընթացքին: Իբրև այդպիսին այն կարող է դասվել ուշ միջնադարի նշանակալի երկերի շարքին:

Բնագիրը պատրաստելիս ուսումնասիրել ենք Մատենադարանի՝ Վեպք պարունակող բոլոր չորս գրչագրերը: Հրատարակության համար համադրել ենք երկու ձեռագիր՝ A - թիվ 8420 (թերթ 105ա-112ա) և խմբագրական որոշ տարբերություններ ներկայացնող՝ B - թիվ 2768 (թերթ 3ա-10բ): Մյուս օրինակները (թիվ 3384 և 10589) գրեթե նույնական են A-ի հետ:

**ՎԷՊ ԿԱՐԹԱԳԻՆԵԱՅ<sup>5</sup>**

**Նախաբան**

Գիտեմ սիրելի է քեզ՝ քա՛ջդ գիտնական՝ կանգնումն կարդացեալ, հագներգութեանցն հանդէս, վասն որոյ եւ գրոյցս ինչ կարգեալ զկնի կարեւոր համարիմ քեզ՝ և որոց ընդ քեզ՝ առնել վերծանելեացն զբօսանս: Քանզի ո՛չ ակն ի տեսանել, և ոչ ունկն ի լսել ունել զյագուրդ՝ ազգեաց բանն կանխագիր: Եւ թէպէտ անոճ եւ տգեղ տեսակս ունել տեսանիցին բանիցս յերկրք, բայց առ այն ի գուրթ գորովոյ զիջանել ժտեմ, յիշեալ՝ թէ այն ինչ յատուկ է դեռավարժից՝ բազմասխալն լինել:

Ուրեմն կարեկցաբար եւ ողջամիտ սիրով ընկալ զայս, իբր զբռնալիր ափալիցն և եթ ջուր, նուիրեալ սիրտն՝<sup>6</sup> այն արքայի՛<sup>7</sup>:

**Վէպք<sup>8</sup>**

Զրուցեն հին աւուրք մատեանք<sup>9</sup> և հասու առնեն զմեզ երեկայցն պատմութիւնք, թէ ընդ աւուրս ժամանակաց հոլովեալ ամաց, քաղաքն Կարթագինէ՛ որոյ արդ և ո՛չ աւերակաց<sup>10</sup> հետք հետազօտողաց երևին, յօրժամ էր ի մեծագոր տէրութեան, յամբարձածիզ<sup>11</sup> իշխանութեան, յառոյզ ճոխութեան և ի հաստադրական բարեկարգութեան: Տիրեալ երջանիկ այս քաղաքի՛ ապերջան ախտ շուստութեան և արբեցութեան, յաւագաց հաւեալ և յանաւագս պսակեալ, վատթար իմն վթարմամբ զնոսա վրիպեաց, և գլխովին զքաղաքն յայն ախտ վարակեալ՝ յոգի դատեաց շարս զօրութեան զեղխութեանն զեղծագործ:

Եւ այս այնքան ամենաճեցուն առաւելութեամբ գերապատկեալ որպէս զի<sup>12</sup> ի բանականութեանն սահմանէ ամենեցուն եղծանել զեղծանել և տարօրինակ տարագու տարագրել ի զզգաստութեանն զգօնութենէ. համբուրեալք զպայման պարսաւոյ անպարկեշտ պարու պաճարեղենաց: Քանզի ա՛նդ էր տեսանել զթագաւորին պատիւ՝ զիրաւունս ո՛չ սիրեալ, զնախարարս՝ յիշխանու-

<sup>5</sup> B հորագրից հետո պահպանվել է երկի՝ հավանաբար հնագույն օրինակներից եկող վերտառությունը. «Յօրինեալ Յօհաննու սարկաւագի Բերիացոյ, առն Աստուածիմաստի և Բաղրաբանի, որ ծաղկեցաւ ի յուր և տասներորդ դարու»: Հաջորդում են՝ «Իսկ այժմ օրինակեալ եղև՝ յեղծեալ ձեռագրէ, աշխատասիրութեամբ ուրումն հեհացելոյ՝ յիմաստիցն հաշակէ: Ի սբ. էջմիածին» տողերը:

<sup>6</sup> B առատասիրտն

<sup>7</sup> B «Ի 1818 Սեպտեմբեր 26: Գծեալ եղև Վէպս Կարթագինեայ. Ի վայելումն Ստեփաննոս Շնորհապսակ Սրբազան Արքեպիսկոպոսին Ենօֆեան Տփլիսեցոյ, որ ի Մայրագահն սբ. էջմիածին»:

<sup>8</sup> A չիք, լրացումն ըստ B-ի

<sup>9</sup> B հինատուրց մատեանս *փիս* հին աուրֆ մատեան

<sup>10</sup> աւերակացն

<sup>11</sup> Երկու ձեռագրում էլ սխալ է. պետք է լինի՝ համբարձածիզ

<sup>12</sup> B մինչ զի *փիս* որպէս զի

թեան հոգս ո՛չ հոլովեալ, զվերակացուս ի յապահովութեան քաղաքին ո՛չ յա-  
ծեալ և զիրաւարարս ի դատ ընտրողութեան ի դատողականն<sup>13</sup> ավոռ ո՛չ հան-  
դիսացեալ:

Եւ առ<sup>14</sup> ի հաւաստել հասարակաց առածին՝ թէ ձուկն ի գլխոյն սկսանի  
նեխիլ: Զնոյն վիշտ վտանգք կարեզին կրից և երաստ ամբոխին յանձին ունէր  
ստանձնեալ<sup>15</sup>, զի որեարն ո՛չ զիւրեանց զարհեստից զհետ լինէին կրթեալ: Կա-  
նանին՝ ո՛չ զտնարարութեան զկնի հետամուտ եղեալ: Մանկունք՝ ո՛չ ի  
հրահանգ անտիական<sup>16</sup> խակութեան առ մանկածուս առաքեալ, որպէս և ոչ  
իսկ սոցա երբէք ընդ փորձ ազատական արհեստի միւսեալ: Եւ այսպէս տաբու-  
նիք արուեստականաց առ արկանեալ, կրպակք հանթից փակեալ, սենեակք  
վաճառաց աղխեալ, առ և գինք անհետացեալ և տարազք աղխամաղխից շա-  
րամեծ գերծեալ<sup>17</sup>: Յորոց շահուցն յուսոյ՝ ուշակորոյս և տեսրցն լեալ լքան՝ լու-  
ծան՝ ընդարմացան ժողովն համայն, զվերջինն արբեալք զթշուառութեան  
մահամատոցն զբաժակ: Քանզի այս ախտ որոց տիրանէ<sup>18</sup> գիտէ ի բարեաց  
զրկել, ի գոյից մերկել, ի կորուստ զրկել, ի շարիս հերկել, և զպատն բնա-  
կութեամբ անապատ ի բարեկարգութեանց կարգել:

Զսոյն ախտացեալ ի խոտան ախտէ յաղթեցեալս այս քաղաք, լինէին  
իրաւունքն մերժեալ, ծէսքն ջրեալ, բարեկարգութիւնքն խահրեալ, և շարակրու-  
թիւնք յամէնուստեքէ<sup>19</sup> պատեալ պաշարեալ, մինչև համակ թագաւորութիւնն  
զվեր ի վայր գրեթէ կրել զկործանումն: Քանզի անշուշտ բարձեալ բերէին յան-  
ձինս զտիպ պատկերի հեղեղահեղձն արանց<sup>20</sup>, և վայելէին զվայն յամովսած-  
նէն կարգացեալ, որոց ընդ առաւօտս յարուցեալ զարբելեաց<sup>21</sup> լինին զհետ ի  
նմին երեկոյացեալք: Դա և դոքա գինեկէզք մոլեալ մոլորեալ զանառակ արբե-  
ցութեան զկնի, և առ մի մի վայր խրախճանս<sup>22</sup> յօրինեալ, գիներբուս հարեալ<sup>23</sup>,  
ցանկ զանձինս ի շուայտութեան տիղմ թաթաւեալ ո՛չ դադարէին, որով  
համբուրէին զվիճակ արժանաւոր արդարև տարակուսանաց և մշտարտօսր կա-  
կանման: Քանզի յայն սահման դառնադառն վտանգի և ժանտաժուտ ժողխու-  
թեան եղեն ժաման, մինչ զի՝ թէ դէպ լինիցէր<sup>24</sup> մօտալուտ թշնամեաց յառնել ի

<sup>13</sup> B ի դատողութեան

<sup>14</sup> B եւ առ չիք

<sup>15</sup> Լրացումն ըստ B-ի (անընթեռնելի)

<sup>16</sup> B + ախոց

<sup>17</sup> B արհամարեալ փիւ շարամեծ գերծեալ

<sup>18</sup> B տիրանայ

<sup>19</sup> B յամէն ուստի կուտ

<sup>20</sup> B հեղեղահեղձիցն փիւ հեղեղահեղձն արանց

<sup>21</sup> B զարբելեացն

<sup>22</sup> B խրախճան

<sup>23</sup> B հատեալ

<sup>24</sup> B լինէր

վար կամ հենից հրահոսակաց<sup>25</sup> գերփութեամբ յերկիր նոցայ յարձակել, վաղու ևս հեշտին իմն և համարձակ ձերբաձիգ<sup>26</sup> յինքեանս գրաւեալ գերկիրն նոցայ և զաթոռ՝ անճետ և անյիշատակ զկեանս նոցայ ջնջեալ բառնային ի կենդանեացս երկրէ:

Եւ այսպէս գերեաց գինին, յիմարեցոյց զեղխութիւնն, թմբրեցոյց<sup>27</sup> արբեցութիւնն մեղկացուցիչ, և ի գրունս կորստեան պատատեցոյց գինէսիրութիւնն զգաստակորոյս և հանճարազրաւ:

Դէպ լինէր յաւուրսն յայնոսիկ գոմն յարքունի փառունակ իշխանաց՝ կարծեալ զգօն և յամենայնի խելամուտ, յուրեք առաքեալ մեծասար հանդերձանօք պիտեան գործոյ վասն<sup>28</sup>, և յուղորդութեան անդորր և ապահով պատահեալ վայրի՝ էջս առ նոյն հրամայէ առնել, յորում հետ մեծահաց զճաշն կազմելոյ յումպ արբելեաց գերախանն լուծանեն, ընդ բուսոյ բարուց բնութեան նոցին, մինչև յուշակորոյս և զգայազիրկ պարտիլ պարպատիլ և պարտաւիլ նոցայ ի բազում գիներբութենէ անտի, և դիտապաստ յերկիր ճապաղ սփռեալ նիրհել զքուն թանձրութեան մեռելոյ զօրէն:

Յայն պահ պատահեալ անգեղ օղաթուիչ սլացմամբ, և համարելով զնոսա անկեալս ի պատերազմի, ճախր առեալ ուղղակի խոնարհեալ յարձակի ի վար և գերկուս սալարին զակունս յակնակապճէ անտի բրեալ բոլորեալ յուտեստ իւր յարդարէր, և անդրէն խոյացեալ, ուստի էջն դարձ առնէր ի հանդէս հատուցման, արդարև արդար հանդիպեալ, զի զաչացուն յոգի անարժան դատեաց տեսակն գոլ ի մարմնի:

Այլ չու առ շուականին՝ յանակնունելի վտանգէս՝ ոչ ինչ զգացեալ, օգուտ ժամուց զկնի ի գինուց թմրութենէ լրջացեալ, աւաղականն ձայնարկութեամբ զանձինն տոյժ կոծէր, և վայրս վհատականս ժառանգեալ տարաբաղդութեանն կարգացեալ, ուստի շոգան ի նոյն դարձ առնէր, անգործ թողեալ զկարևորն գործ:

Իբրև յայն ողորմագին սահման թշուառութեան ի տես թագաւորն<sup>29</sup> զիջեալ զիրն մտերիմ և զթագաւորութեանն խոհերիմ, միանգամայն և յարքայանիստ քաղաքին շարաշուք տգեղ անկարգութեան անդր հայեցեալ, յայն որ ի վերջինն էր վարեալ վարանումն, ուշ ի կուրծս անկեալ, յանդաճումն վարեալ, յարտասուս հարեալ, ի սիրտ և ի հոգի կարեվէր խոցեալ, ելս խորհէր իրացն գործել, և առ վշտին վարանեալ ժամ դնէր, կէտ սահմանէր, պահ պայմանէր, խմբել ազա-

<sup>25</sup> B հրոսակաց

<sup>26</sup> B ձերբակալ

<sup>27</sup> B քմբրեցոյց

<sup>28</sup> B պիտեան գործոյ վասն մեծասար հանդերձանօք *ի*ս մեծասար հանդերձանօք պիտեան գործոյ վասն

<sup>29</sup> B ի տես թագաւորն յայն ողորմագին սահման թշուառութեան *ի*ս յայն ողորմագին սահման թշուառութեան ի տես թագաւորն

տերամն երաստից ի կոչ արքունի, այն ինչ անճաշակ լեալք<sup>30</sup> զայն օր յարբեկեաց<sup>31</sup> համոյ:

Նոքա այն ինչ ըստ տէրունի հրամանին ի ժամակալ յօրադէտ պայմանն փութային<sup>32</sup>, անդէն բանել սկսաւ արքայն և զծածուկս խորհրդոցն խորհրդապետացն հոլոնելոց հոլանել:

Արժան է մեզ ասէ, ո՞վ արքայութեանս կարեաց խոհեմ խորհրդածուք զխորհուրդ<sup>33</sup> մէջ առնուլ, որով մարթասցուք զդաւաբեր զանհնարին վտանգ աղէտիս յանձնէ ի բաց պարուրել, և ի թիւր թեակոխութենէ զմեզ ուղղել: Զի թագաւորութեանս այս մեր վեր՝ արժանաւոր խորհրդովք ներհուն վերասպիցդ վաղվաղ մինչ չև է զանձամբ կոռեալ եթէ ո՛չ բուժիցի զայրանայ, փաղաղէ, և զթագաւորութեանս մարմին համաճարակ ախտալից ի կորուստ գրաւէ: Յոր պահ՝ վերաց խարանք անգործ պատահեսցին և սպեղանեաց դիրք ի շպէտս վատնեսցին: Հապա՝ մինչ ժամ կայ ձեռս ի գործ արկցուք և յանձանց շինութեան անձանձիր ճեպով ճեպեսցուք: Մի՛ և մի՛ առօրեայ հեշտութեան և ախորժակի մերոյ փոքու վասն ծաղածանակ<sup>34</sup> ի յաւիտենից կեանս լիցուք, և զյոգնագրոհ խուժանին զօգուտ ի վերջ նահանջեսցուք, որով ո՛չ ինչ շահեցան՝ որք այնպէսն գնացին:

Իբրև զայս օրինակ զբանսն մերկանայր թագաւորն, ապա՝ ունկնդրացն բոլրք և յակճիռս կացելոցն կաճառք խելամուտ խօսիւքն ամոքեալք, իբրև ընդ մի բարբառ աղաղակել սկսան. կեցցէ՛ արքայ, ասեն, սրտի մտօք հաճ և հաւանեմք հոյակապ հրամանիդ, թէև ընդդէմ դիւրութեան մերոյ<sup>35</sup> ոգորեցի, միայն թէ մարթեցէ զմեզ յայս մօտակալուտ մահահրաւէր կործանմանէ ի կեանս կանգնել: Ապա՝ ի հասարակաց հաւանութենէն դատեալ ընտրեցաւ<sup>36</sup>, զի ի բազն արկցի պարուրեալ հրամանաւ ումպն գինուոյ, յամենայն տէրութեան Կարթագինեայ ի կորուստ մատնելով միանգամայն զայնու ժամանակաւ գտանեցեալ գինին գովելի՞ գովելեացն գործակ գարշելի: Վասն որոյ արքունի մեծագոր սաստիւքն հրաման հան<sup>37</sup> եղև թագաւորն ընդ ամենայն տեղիս տէրութեան իւրում, զի ի հպիլ այսմիկ հրամանիս ի մեծի և ի փոքու լսելիս ի կորուստ դատեսցեն զգինի գտանեցեալ առ մի մի այր<sup>38</sup>:

<sup>30</sup> B լեալ

<sup>31</sup> B յարբեաց

<sup>32</sup> B փութացան

<sup>33</sup> B զխորհուրդս

<sup>34</sup> B ծաւաճանակ

<sup>35</sup> B մերում

<sup>36</sup> B ընտրեալ դատեցաւ հաւանութեանն *փի* հաւանութեանն դատեալ ընտրեցաւ

<sup>37</sup> B հրամանական *փի* հրաման հան

<sup>38</sup> B գտանեցեալ գինիքն առ մի մի այր դատեսցեն *փի* դատեսցեն զգինի գտանեցեալ առ մի մի այր

Եւ յետ պայմանեալ աւուրն լրման, առ որում և գտանիցի նոյն նիւթ ընդ գնդալոյ ի կորնչելն՝ ինչքն յարքունիս և ինքն ի ծովու ալիս<sup>39</sup> :

Եւ այս բազ արգելանաց այնքան յոխորտ և հատու, մինչ զի թէև թագա-  
գարմի կամ արքայ<sup>40</sup> որդւոյ իսկ անցանել զանցանել իցէր ընդ այս հրամանն,  
նոյն բաժին շարաշար կտտանաց հանդերձեալ պահեար որ ինչ յետին ստան-  
կին<sup>41</sup> : Չայս օրինակ և քարոզն ի հրապարակս քաղաքին Կարթագինեայ կար-  
դայր, և զօրեղ զօրականք պատկառատեսակ պալատին յայս հատու հրամանէ  
իբրև զնեսս միսեալ կաղնւոյ կայծակամբք յեղակարծ յիւրաքանչիւր տունս  
յարձակեալք, զամանսն բեկեալ՝ զամանեալսն հեղուին: Յորմէ շէկորակ շուրցն  
հեղեղք երևէին տիրել, և կոտորոցն բեկորիւքն մարթ երևեալաւ<sup>42</sup> կառուցա-  
նել:

Դէպ լինէր կնոջ միոյ այրւոյ՝ ունողի զմանուկ մի երկեմեան ծմակացեալ  
ծերութեան լուսածագ, ունել զերկու կարասս գինւոյ, յորոց մինն անխայեալ,  
իշուցանէ զայն ի ստորին նկուղ գետնափորի անդ, և ընդ երկրաւ գետեղեալ  
հետախաղաղ զշաւիղն ծածկէր, յապայն ժամանակի առ սակաւ սակաւ ի  
սնունդ զարգացման մանկանն տղայի:

Իբրև եկին մտին ի տուն անդր դահիճքն հրամանակատարք, տեսեալ զմի  
կարասն հարեալ բեկին, իսկ զմիւսմէն տգէտացեալք արձակեցան ի բաց:

Եւ այսպէս յամենուրէք նովին հանգամանօք կատարեալ զհրամանն ահեղ  
իմն բանի՝ ի սակս աւուրս զբանն բոլորեցին, և զգործն ի գլուխ անվեհեր  
մատուցին:

Եւ առ ի հաստարմատ հիմնել զայս պարոյր հրամանի, առ երեկոյ՝ իբրև  
արևն ի մուտս մօտէր՝ զերկուս ահեղ առիւծունս ի գառագղէ անդի ի քաղաքին  
փողոցս արձակէին: Յորոց երկիւղէ շէր մարթ ումեք գիշերայն ընդ դուռն տան  
իւրոյ ելանել, ոչ ի պէտս ինչ, և ոչ յերթեկս<sup>43</sup> բարեկամութեան, որով կասեցան  
օրէնք խրախճանաց, և լքան կազմութիւնք մեծահաց կոշունց, զի բարձեալ  
պատճառին, բարձաւ և պատճառելին:

Եւ այսպէս խոհեմ խորհրդով և գեղեցիկ մոլութեամբ յերկրէ անտի ախտն  
գինեճանութեան կարճնովին ջնջեալ, հիմնեցաւ հաստատեցաւ ընդ նորա  
զգաստութեանն զգօնութիւն, և որք անտի յառաջագային բարբբաստ բեղմ-  
նաւորութիւնք, արգասալիրք ետուն զպտուղս իւրեանց:

Յայնմ հետէ սկիզբն կալաւ<sup>44</sup> արքայութիւնն կորովանալ, իշխանութիւնն  
ճոխանալ, և ձգել ուր շէ՛ր կարդացեալ անուն Կարթագինեայց, վաճառք առա-

<sup>39</sup> B ի ծովու ալիս, և ինչքն յարբունիս *ի*ս յարբունիս և ինքն ի ծովու ալիս

<sup>40</sup> B *չիք*

<sup>41</sup> B ստան (երկու ձեռագրերում էլ սխալ է. պէտք է լինի՝ սատակ)

<sup>42</sup> B է բուրգն ինչ *ի*ս երևեալաւ

<sup>43</sup> Լրացումն ըստ B-ի (ամբնթեոնելի)

<sup>44</sup> B սկսաւ *ի*ս սկիզբն կալաւ



տանալ, արուեստ բազմանալ, առաքինութիւնն յօրանալ և անձն իւր այլ ի գործս ձեռաց իւրոց ուրախանալ:

Իսկ կնոջն այրւոյ զարգացուցեալ զմանուկն, միշտ մատուցակէր նմա ի գինւոյ անտի, մինչև ողջունել նմա ի պատանեկութեանն տես: Յաւուր միում անագանեալ և ի գործոյ ապաժամ եկեալ՝ մինչ մօտ էին զառիւծունսն արձակել, ոչ ժամանէ բերել յաղբերէ անտի ջուր, վասն որոյ զծարաւ ջրոյն զիջուցանել կամեցեալ, տակառաւ ի գինւոյն գովելոյ մատուցանէ նմա մայրն յըմպել: Իսկ զկնի ժամուց ինչ իբրեւ զհասարակաւ գիշերաւ արծարծեալ ի նմա տապ տոշորման ծարաւոյ, և ո՛չ բաւացեալ յաղթել զջրոյն պապակ, և զգովացմանն փափաք, զմահ յաշսն թիւրախէ և քաջասրտեալ գօտէպնդեալ բառնայ զսափորն պղնձի ի յուս և զգուռն բացեալ զտան յաղբիւրն դիմէ, և իբրև լցեալ զայն դառնայր անդրէն՝ վատ իմն պատահ թաղդի լինէր նմա դիպան գիշերապահ առիւծուն ունել զճանապարհին անցս, որ և ահեղ կոշմամբ, ահարկու գոշմամբ և սասանական մոնջմամբ դէմ ընդ դէմ եկեալ և յարձակեալ ի վերայ կամէր կենդանւոյն կլանել զնա: Իսկ համբակին տեսեալ զաղէտ վտանգի կանխեալ<sup>45</sup> օրհասի մահուն եկեալ հասեալ և անդէն մօտակալուտ զոտիւքն պատեալ, ի բաց զերկիւղ անտի եղեալ, արտանայր արտեղանայր: Քանզի և չէր որ զօրավիզն առ որ կարգայր օգնել, կամ ի թիկունս հասանել, վասն որոյ առ հարկի ձեռն ի գործ առնէր, ինքնին մղեր առաքինանալ ի հանդէս մարտակցութեան ընդ ամեհի այն առիւծուն հակազինեալ<sup>46</sup>:

Անդ էր տեսանել զայլ իմն հանդէս դանեան մանուկածնի, որ խրոխտ զօրութեամբ՝ յերկուս զկերչին ցելոյր ժանիս, նաև փոքր առ սա զնորուն իմանամք հանդէս:

Արդ՝ յետ օգուտ գօտէմարտութեան յետուստ կուսէ առիւծուն անցեալ և զերկուց ոտիցն կալեալ, յերկուս զանհեթեթն զայն մարմին բաժանէր և զնորինն գեշ ի փողոցի անդ ճապաղ սփռեալ ինքն անցեալ զնայր:

Իբրև այգն զցայգն մերկանայր, և այն ինչ ծայրակարմիր արեգակն ընդ երկիր ծաւալել կամէր, եկեալ առիւծապահքն ի պահ ունել զառիւծունսն, տեսին՝ զի մինն չէր ի միջի և այսր անդր ընթացեալք անկեալ ականեցին ի մի հրապարակացն զշաւիղն մեռելոտի: Ուստի զարհուրեալ և ընդ գործն սքանչանի ահիւ պակուցեալ, նոյն հետ այն ազդ առնեն քաջի արանցն զայսպիսահաս իրակեալ վտանգս, որ ընդ լսելն տապ տագնապոյ տարակուսանաց զնովաւ շաղապատեալ, և ի կարծիս կասկածանաց ընդ աւագանւոյն թաւալեալ հասանէ նոցա հետ ընդ հետ հասանել<sup>47</sup> յայն վայր, ի զննին տեսլեան<sup>48</sup> հրա-

<sup>45</sup> B զաղէտալի վտանգին կանխալ փիւ զաղէտ վտանգի կանխեալ

<sup>46</sup> B Քանզի և չէր ոք ... ընդ ամեհի այն առիւծուն հակազինեալ չիք

<sup>47</sup> B + խմբովին

<sup>48</sup> B ի տեսլեան զննին փիւ ի զննին տեսլեան

շագան տեսարանին, ուր զահէ գերկիւղէ հարեալ, և յերկար ժամս յապուշ կրթեցեալ, բանս ի բերան առեալ հիացականս ասել սկսան<sup>49</sup>։ Հօրիս վերայ ո՞վ զօրացեալ, և զանպարտելիս ո՞յր ձեռքէն պարտեալ, զահեղ թագաւորս ո՞վ ստրուկ կարգեալ, և զանարգ վախճան առ սովաւ ածեալ, որ զայս հրաշաւէտ յաղթութեան ուղղեալ դիացազգի զնա ի դէպէ կարդալ։

Ապա ճշտիւ խնդրել սկսան, ո՞վ ասեն բանեղէն առիւծ՝ անբան առիւծուս իցէ պատահեալ, եկեսցէ կացցէ ի մէջ, զի զնա մեծաշուք մեծապարգև պատկեսցուք, պանծ մեզ վարկուցեալ, զառ ի նմանէ յաղթութիւնն ուղղեալ։

Յայս ձայնէ վստահանաց խրախուսեալ հուժկու պատանիս այն<sup>50</sup> աննման, քաջի արանցն փոխարինին լինէր յանդիման։ Յիս ասէ տէր եպարքոս՝ այս վնաս, յայս նիշ գիշերի ծառայդ ծարաւեալ, և առ ի շօյնէ ջրոյ ի տան՝ յաղբիւրն շոքայ, յոր պահ պատահ պատուհասի լինէր ինձ ժաման, հեռ գայօղ առիւծուց միոյն ունել զանցս ճանապարհի իմոյ<sup>51</sup>։

Իբրև ստուգեցի զլինիլս կուր կորստական կոկորդից նորին, մենամարտեալ հատուցի զհատուցումն նորա նմին, և ևս շողշուպեալ<sup>52</sup> ի նորուն ժանեաց ողջունեցի զողջութիւն։

Իբրև այս բար զբանսն պատշաճէր, ակնապուշ ակնակառոյց որք յայն հանդէսի էին աչք ի նա հայէին, և տեսեալ զանտիականն զխակութիւն, և զնկնահասակ դրակին զգծծութիւն, ընչացս բանալ սկսան անաւատ թուեալ նոցայ և ճառատական ճառքն ճառեցեալ։ Վասն որոյ և զասացելոցն զփորձն առնուլ կամեցեալ բանս եպարքոսն մատուցանէ ի մէջ։

Եթէ չէ քո ասէ երբէք ընդ խաբս ինչ եկեալ և կամ զսուտս սիրեալ, այժմ իսկ յանդիման ցուցանի. է՛ աստ գիշատելոյ առիւծուդ յարակից զուգորդ ի մէջ բերցի, եթէ վիճակէս զնա միւսոյն վիճակեալ բաղդի՝ յաւատ խաղաղիմք, եթէ ի դերևս լիցի քեզ ելանել, դու ընդ նորա մահու գրաւեալ քերթիս ի կենցաղոյս։

Բարուք բարբառիք<sup>53</sup> ասէ համբակն՝ ո՞վ կարօղ կալուղք կենաց կեղեքելոց ի կոկորդս ձեր, բայց դուք ինձ նախ հրաման<sup>54</sup> երթալ զինու վառել և ապա յայս հանդէս մրցանակի շահատակել, որում պատասխանեալ եպարքոսին ասէ, է՛ ստակարկատ կեղծաբան զի թանգուզես, յառիւծն պատառեալ չէր ոչ որոյ վէրք, ոչ ատրճանակիւ հարանք, և ոչ այլ զինուց վիրաւորմանց ինչ տեղի, և զմէ՛ բաղայս բաղբաղես զինուորիլ զինու։

Ասէ մանուկն և չէ ինչ արդ պիտոյ զբազում բանիւք գալ, և ի ճշմարտութեան խօսելեաց վրիպեալ գտանիլ, ասացից զանսուտն տէր փոխարքայ,

<sup>49</sup> B սկսան ասել փիս ասել սկսան

<sup>50</sup> B այս

<sup>51</sup> B իմում

<sup>52</sup> B նողոպրեալ

<sup>53</sup> B բարբառիս

<sup>54</sup> B + նախ

զի եթէ ոչ նախ զարդու զինուք յօրինեցայց չէ ինձ մարթ ի ձեր<sup>55</sup> համարձակիլ հրաման:

Յայնժամ որպէս և կամերն յատենէ անտի ի տուն արձակեալ կացին, որք ընդ նմայն զօրականք առ դուրս, և ինքն մտեալ ի ներքս անդր, խնդրեաց խառնելեօք ի մօրէն ի գինուոյ անտի, զոր ըմպեալ և ելեալ արտաքս գնաց ընդ նոցայ և հասեալ յաշխարհաժողովն դուռնն խրախուսիւ խիզախէր:

Ածէք ինձ ասէր զգազանն կատաղութեամբ զինեալ և ես անձամբ անձին ընկճեալ նուաճեալ<sup>56</sup> պարտեցից զնա:

Իբրև շօշափմամբ հասին ի վերայ զի ո՛չ բարձեալ տանէր զիւր և ի զինուց<sup>57</sup> ինչ ի սքանչանս ըմբռնեցան, բայց ելից իրացն ուշ եղեալ ակն ունէին: Ապա ի հրամանէ թագաւորին ածաւ մատուցաւ ի մէջ անարգելն առիւծ արձակ ունելով յամէն ուստեքէ զկապանացն արգելս և յարձակեալ ի վերայ կամէր գազանային ժանեօքն լափելզ մաքրել զմանուկն: Տի նա և սա ընդ առաջինն այն նուագի, գօտէպինդ քաջասրտեալ, նաև զայս զմիւսոյն<sup>58</sup> լծորդ ըմբշամարտութեամբ յաղթեաց և կամէր սմա որպէս և նմա զնոյն մրրախառն բաժակ մահու տալ ըմպել, եթէ չիցէր<sup>59</sup> արգելեալ ի եպարքոսէն յայս ձայն թէ՛ թոյլ տուր առիւծդ արի՛ առիւծուդ անարի, զի աւանիկ զքոյ գեր օրինակ քաջութեանդ առաք զչափ, բայց դու ե՛կ անսա ասա ինձ՝ թէ ո՛ր և որո՞վ անվան և անվկանդ զօրութեամբ զօրացար ի զօրեղ առիւծուս վերայ:

Ասէ պատանին այդորիկ մեկնել առ յինէն յանհնարիցն, ահա՛, թէև յօշ յօշ զանդամոց իմոց յօդս հրամայիցես<sup>60</sup> առնել: Եպարքոսն երկիւղիկս արկեալ համբակին ասէ, իսկ եթէ ո՛չ ասասցես, ապրեալդ յերկուց մահուց երրորդիւս անզերծ վտանգեսցիս մահուամբ, և զառիւծուն հատուցեալդ շափ պատարուն եւ կատարումն ի քում գոգի գոգեա զեղուն:

Պատանին ասէ, և չէ ինչ այդ ապաքէն ցապաք արդ այսօր ի քոյ ձեռանէ զկենացս կատարած կայ ինձ համբուրել, թէ յայտնեցից և թէ թագուցից: Բայց լա՛ւ լիցի ինձ ապաքէն, ծածկելով զխորհրդապահի անուն ժառանգել, քան փեռեկտելով ինձէն ինձ ի վի՛հ անհամար կորստեան խեղդիւք շրթանցս խարդաւանել:

Իբրև սոյն աւուրս կորովի խօսիւքն լինէր պետն պատասխանեալ, երդնում ասէ յարևն արքայի, զի չիցէ ինչ քեզ վտանգ իսկ<sup>61</sup> կենաց, հոլանելդ զսքանչելի ուժգնութեանդ զխորհուրդ:

<sup>55</sup> B ի ձեր չիք

<sup>56</sup> B չիք

<sup>57</sup> B զիւր և չիք (սխալմամբ՝ ի զինուց զինուց)

<sup>58</sup> B սոյն

<sup>59</sup> B չիք

<sup>60</sup> B հրամայես

<sup>61</sup> B իսկ չիք

Յայս ձայնէ բարբառոյ զօրացեալ զօրեղ զօրութեամբ զածածին յուշ ածել սկսաւ զարգել հրամանին, որ նախքան զվեշտասան ամի և զմօրն գաղտնելն զկարասն գինւոյ, և նորին զնովաւ սնունդն և զառ ի նմանէ յաղթութիւն, և թէ այն իսկ էր իմս սպառագինութիւն, զոր ո՛չ յերևելիս ունել ումեք պիտոյք գոն, բայց եթէ ի ներքուստ անտուստ զնորայն բոցափայլ զօրութիւն ցոլացուցանել: Իբրև սոյն օրինակ բանք ի պատում պատանեկէն լինէին լսելի, ի հարուստ ժամս որք անդն էին՝ բազմականք և ոտնկայք կառեալ կապեալ և ի հիացումն կարգեալ, ո՛չ ունէին այլ ասել կամ<sup>62</sup> լսել ինչ եթէ ո՛չ զիրերաց զհետ հծծել յաղթանակ քաջալանջ մանկանս վասն որոյ և զնորուն զրուագ զրուատի համարձակաձայն համայնից հնչեալ, բայց զի մի՛ յանբաւ յորդութեամբ անդր զեղծի բանս համառօտ հատանել հաւանիմ<sup>63</sup>: Ուստի թողեալ զբազումս խորախոհ մտաց իմաստասիրել անցեալ կացից ես անընդհատ պարապմամբ առ պսակ կատարման առաջագիր գործոյս:

Արդ՝ ի գործոյս<sup>64</sup> կէտ կատարածի վերընծայեցին զյաղթութեանս գործակ յաշտիճան աւագ, գիւղից և գերդաստանաց կարգեալ զնա տէր և ի թիւս ազատաց զնա դասեալ:

Եւ այսպէս բարեմոյն քաջողջութեամբ և նսեհ բարօրութեամբ կատարեալ զկեանս ընկալաւ զվախճան բարի ի բարւոք ծերութեան, թողեալ ժառանգս և ընչաւէտ ժառանգութիւնս զկնի իւր ի յիշատակ յաւիտենական յապա ժամանակի արիական հոյակապ նահատակութեանն:

Ըստ որոյ օրինակի և մեզ շնորհեսցէ պարգևատուն ամենայնի գինեաւ արեան իւրոյ զարգանալ զօրանալ զինել և ի հանդէս ճակատու աներևան ոսոխին մերոյ և յաղթող գտանիլ, որ իբրև զառիւծ գոչէ ընդ պարագլխոյն առաքելոց վկայելոյ, շրջի և խնդրէ թէ զոր կլանիցէ:

Քանզի և մեզ մարդ առաջի կայ, բայց ոչ ընդ մարմնոյ և ընդ արեան, այլ ընդ խաւարային օդական այսոց փաղանգս, յորոց լիցի մեզ զերծանել շնորհօք ամենափրկչին Յիսուսի և զօրութեամբ արեան նորա խորտակել զզօրութիւն նոցա և զհնարս. Ամէն:

#### Վերջաբանք

Բայց դու եկ տե՛ս ինձ, թէ զի՞նչ ի միում և զի՞նչ ի միւսում գործեաց գինին, զի յառաջինն յայն նուագ յայնքան անարգ նուաստութիւն զիջոյց զըմպուս իւր, մինչև զլինիլ բաւական քաջագիր նօտարաց կարգել յանբաւ տարածութեան ընդարձակատարր քարտէնի<sup>65</sup> զնոցուն պարսաւս, թէև յերկարս տարժանէին: Իսկ յերկրորդումն յայս անգամ, յայնքան ծայրաւոր երջանկութիւն

<sup>62</sup> B և

<sup>63</sup> B համարիմ

<sup>64</sup> B ի գործոյս չիք

<sup>65</sup> Լրացումն ըստ B-ի (անընթեռնելի)

զգինեալն նովիմբ արար ժաման, մինչ գրեթէ յանարգ կայից ի բարձրագոյնն բարձրացոյց փառս հանդերձ կրկնանուագ փրկութեամբ ի մահուն դրանց:

Թողում որ ինչ յաւուրց անտի և այսր ի յուշոյ յիշատակաց, և յանվեհեր գրչացն կշռեալ, եպերանաց պարսաւ մոլելոցն ի նոյն, և բարեբան ներբող համեստացելոցն նովին:

Ընդ որում և ինձ է հաս արտավարան հէքացելոյս և վերջացելոյս արդարն<sup>66</sup> իմաստնոցն դամարձակէ և յիմաստիցն վիճակէ սակաւութ զսովաւ աշխատասիրել<sup>67</sup>:

Համառօտութիւն բանիս ճոխութեան

Նախքան զայս ճոխ ճառեցի զախտին շուայտութեան Կարթագինեայ տիրանել և զզառածանելն շարաշար զքաղաքն ողջոյն: Զաւաքումն հոյակապ իշխանի միոյ ի գործ ինչ պիտեան և յուղոջ զզեղիսիլ գինեաւ և զնիրհել: Զառ վայրն անգեղ պատահեալ զերկուս զաշան զխճեալ<sup>68</sup> զաշացուին յոգի, և նորին յանիմայս լեալ ի թափիլ գինուոյն զանդրէն դարձն մեծաւ կոծիւ: Թագաւորին ի վարանս յայսպիսահասն ըմբռնել վտանգից և զխորհրդականացն խորհրդով սաստիկս իմն բազարկումն գինուոյս արձակելով զառիւծս երկուս առ երեկոյ ի քաղաքին փողոցս, յարգելս երթևեկութեան, յորում ժամանակի և կնոջ մի այլուոյ երկեմեան ունողի մանկան ի դէպ զայ գաղտնել զկարաս մի գինուոյ, որով և զարգացուցեալ զմանուկն մինչև զպատանեկութեանն ողջունել նմա զտես, որ և յաւուրց միումն ապաժամ ի գործոյ եկեալ շժամանէ բերել յաղբերէ անտի ջուր, իսկ զծարաւն ի ժամին գինեաւ զիջուցեալ, ապա ի տապ պապակեալ և յաղբերակն շոգեալ ի սափորն լնուլ, ի դարձին առիւծ նմա պատահի, զոր մենամարտեալ<sup>69</sup> ընկճեալ ցելոյր զժանիսն: Ի լրջանալ այերաց խնդիր այնմ եղեալ ի կամաց կանգնի մանուկն յոտեան, և ի շաւատալի բանիցն լինիլ ի փորձառութեան միեալ հանդէս, զկենդանին ածին ի մէջ զառիւծ: Համբակին հրաման առեալ սպառազինիլ և երթեալ ի տուն հին գինեաւ զանխուլն գինեալ զառիւծուն ի մրցմանն գտանի յաղթական, իսկ ի զորպէսն հարցանել լռէ զստուգութիւնն<sup>70</sup> և յապահովն ի եպարքոսէն լինելն ճառէ ի զառմու<sup>71</sup> զամենայն: Յորմէ հասանէ նմա յաւագաց վերստնել դաս, և բարեկրութեանց տիրանել մեծաց:

<sup>66</sup> B չիք

<sup>67</sup> B իմաստասիրեալ աշխատասիրել փիւ աշխատասիրել

<sup>68</sup> B բրեալ զխնեալ փիւ զխնեալ

<sup>69</sup> B մեմամարտիկ

<sup>70</sup> B չիք

<sup>71</sup> B ի զառմու չիք

Ի նոյն կարգ բանք շափականք<sup>72</sup>  
 Գինին ըստատու՝ մտաց և սրտից,  
 սակաւ ըմպողաց՝ մայր է շատ օգտից,  
 Յաճախեւ ի նոյն գունակ շուայտից,  
 յոգի է՛ի մարմին գործէ փոնալից<sup>73</sup> :  
 Տէ՛ս դու զբազումս՝ որք յայս մոլեցան,  
 ի բարձր կայից՝ որպէս հոսեցան,  
 Բայց որք սակաւուն սորին շատացան,  
 մեծաց գովեստից՝ յար արժանացան:  
 Մի քաջ խորհրդով շատ գործք վճարին,  
 ոյր զի բաւական՝ աշխարհ վճարին,  
 Բայց շատն գինւոյ՝ տոյժ է հանճարին,  
 զբանեանն առնէ հանգէտ<sup>74</sup> պաճարին:  
 Ի սփոփ տխրանաց է առ պիտեան,  
 պիտանեաւ լինին բազումք անպիտան,  
 Վշտացն փարատ՝ ոմանց է սատան,  
 որք ի նոյն յարակ դանդաղեալ մնան:  
 Բռնասբօսեսցուք ի գինւոյն պատճառ,  
 զանձս վաղեմնիս՝ կարգել ի յայս ճառ,  
 Ուստի սա լիցի յարացոյց պայծառ,  
 և մեք գործեսցուք այս վէպի վճար:

### Varty Keshishian A Newly Revealed Tale of the 18<sup>th</sup> Century

The “Tales of Carthage” by Hovhannes of Beraia, a famous ballad maker of Late Middle Ages, is still unknown for wide circle of specialists and naturally has dropped out of scientific circulation. Only the bibliographic lists and catalogues of manuscripts of the Matenadaran provide information about the existence of this work.

In four manuscripts preserved in the Matenadaran (M2768, M3384, M8420, M10589) similar examples of the “Tale” exist. According to these copies it was possible to prepare the critical text of the “Tale”. All the extant copies of the “Tale” with their narrative and structural characteristics are almost identical and have only minor differences, which gives reason to suppose that there has been a general archetype.

<sup>72</sup> Լրացումն ըստ B-ի (էջը վնասված է)

<sup>73</sup> B գանալից

<sup>74</sup> B զբանին առնէ հանգոյն *ի/ս* զբանեանն առնէ հանգէտ

---

With its essential narrative features the Tale reminds the fable “The King’s Son” by Vardan Aygektsi”. It is not excluded that the Tale is based on Aygektsi’s fable or another common source. Both works were created in the same cultural environment. Although the period of time was different but the reality was the same. It confirms that Hovhannes of Beraia, who was born and received his education in Aleppo, was perfectly aware of Vardan Aygektsi’s fables and other tales and historical works from the medieval folklore, which he developed and introduced in a new way.

## ARMENUHI DROST-ABGARJAN

### DAS ARMENISCHE KULTURELLE ERBE IN DEUTSCHLAND UND SEINE SICHERUNG

Im Zuge der Vorbereitung, Durchführung und Nachbereitung der Ausstellungen zum 500. Jubiläum des armenischen Buchdrucks in Halle (Kunstforum) und Mainz (Gutenbergmuseum) 2012/2013 anhand der Buch- und Handschriftenbestände der deutschen Bibliotheken, die in Zusammenarbeit der Martin-Luther-Universität Halle (Seminar Christlicher Orient) und der Staatsbibliothek Berlin (Orientabteilung / Meliné Pehlivanian) realisiert wurde, entstand die Idee bzw. Anregung der Digitalisierung der armenischen Handschriften und Artefakte in Deutschland.

Die armenischen Handschriften in Deutschland wurden im Kontext des Akademienprojekts der Katalogisierung der orientalischen Handschriften in Deutschland (KOHD) durch Julius Abfal<sup>1</sup> katalogisiert. Dabei stütze er sich auf die früheren Beschreibungen der armenischen Manuskripte in Berlin (Königliche Bibliothek /Staatsbibliothek), München (Bayerische Staatsbibliothek) und Tübingen (Universitätsbibliothek) von Nikolaus Karamianz, Gregoris Kalemkiar, Franz Nikolaus Finck und Levon Gjandschezian<sup>2</sup>.

Nach der Publikation von Abfal sind inzwischen mehr als 50 Jahre vergangen. Daher wurde auf Initiative des Armenologen und Slawisten Christian Hannick (Universität Würzburg) ein Korpus illuminiertes armenischer Handschriften in Deutschland ins Leben gerufen, der durch

---

<sup>1</sup> **Julius Assfal**: *Armenische Handschriften*; Beschrieben von Julius Assfal g u. Joseph Molitor. Mit 2 Farbtaf. u. 4 Lichtdrucktaf.. - Wiesbaden : Steiner, 1962. - XVI, 158 S. 4" (Verzeichnis der orientalischen Handschriften in Deutschland ; 4)

<sup>2</sup> **Nicolaus Karamianz**: *Verzeichniss der Armenischen Handschriften* / Nicolaus Karamianz. - Berlin : Asher, 1888. - VIII, 88 S. : Ill., (5 Taf.) ; 4° (Die Handschriften-Verzeichnisse der Königlichen Bibliotheken / hrsg. von d. Königl. Oberbibliothekar Geheimen Regierungsrath Dr. Pertz ; Bd. 10); *Majr. çuçak hajerën dze řagraç = Haupt-Catalog der armenischen Handschriften* / Herausgegeben von der Wiener Mechitharisten Congregation [II.]: *Catalog der armenischen Handschriften in der k. Hof- u. Staatsbibliothek zu München* / **Gregoris Kalemkiar**. - Wien, 1892; *Systematisch-alphabetischer Hauptkatalog der Königlichen Universitäts-Bibliothek zu Tübingen* 13: *Verzeichnis der armenischen Handschriften* / **Franz Nikolaus Finck**; **Levon Gjandschezian**. - Tübingen, 1907. - VI, 276 S. Atlas zum Katalog der armenischen Handschriften = Veröffentlichungen // K. Universitätsbibliothek zu Tübingen.



den armenischen Kunsthistoriker Mikayel Arakelyan (Institut für Alte Handschriften Matenadaran / Jerewan) bearbeitet und im Rahmen des GWZO-Forschungsprojektes “Armenier in Wirtschaft und Kultur Ostmitteleuropas (14.-19. Jahrhundert)” an der Universität Leipzig Leipzig (Prof. Stefan Troebst / Dr. Bálint Kovács, Internationales und Interdisziplinäres Geisteswissenschaftliches Zentrum, Geschichte und Kultur Ostmitteleuropas) auch auf Rumänien und Polen erweitert wurde.

Nach den Angaben des letzteren Vorhabens befinden sich ca. 340 armenische Handschriften in den deutschen Bibliotheken, verteilt auf 22 Orte (neben den größeren Sammlungen von Berlin, Tübingen und München, auch in Halle, Jena, Leipzig, Marburg, Nürnberg, Stuttgart, Wittenberg, Darmstadt, Erlangen, Fulda usw.). Etwa 20-30 Handschriften sind in den gedruckten Katalogen nicht erfasst. Das Projekt spezialisiert sich auf illuminierte Handschriften (ca. 120).

Um dieses Vorhaben weiter zu verfolgen und die armenischen Handschriften in Deutschland zu sichern, schlug der Wissenschafts- und Bildungsminister der Republik Armenien bei seinem vor kurzem erstatteten Besuch im Partnerland Sachsen-Anhalt (Magdeburg und Halle) im September 2014 vor, im Zusammenarbeit mit dem MESROP Zentrum für Armenische Studien ein Projekt der Digitalisierung der armenischen Handschriften in Deutschland zu starten, um nicht zuletzt die Bedeutung der hochentwickelten Buchkunst und Buchkultur Armeniens wieder in die Sichtweite des wissenschaftlichen Interesses bzw. der Wissenschaftspolitik Deutschlands zu rücken. Über die akute Notwendigkeit solch einer Initiative zeugt das Fehlen dieser alten Manuskriptkultur im Programm des “Zentrums für Forschung der Manuskriptkulturen in Asien, Afrika und Europa” an der Universität Hamburg, das sich mit arabischen, türkischen, indischen, äthiopischen, afrikanischen, chinesischen, japanischen, griechischen u. a. Handschriften auseinandersetzt. Außerdem würde dies die Erforschung und den Unterricht der armenischen Sprache, Literatur und Kultur fördern.

Das Land Sachsen-Anhalt ist seit 1995 federführend für die Bundesrepublik Deutschland und im Auftrag der Bundeskultusministerkonferenz für die Kultur- und Wissenschaftsbeziehungen mit der Republik Armenien zuständig. Ein entsprechendes Kulturabkommen regelt diese Beziehungen. In diesem Rahmen wurde die gemeinsame deutsch-armenische Publikation “Schriftkunst und Bilderzauber”: Eine deutsch-armenische Festgabe zum 500. Jubiläum des armenischen Buchdrucks“ (Jerewan, Voskan-Jerewantzi-Druckerei 2012) vorbereitet, die einen Ansatz zu diesem Vorhaben darstellt, das zur Erhaltung des armenischen Kulturerbes in der Bundesrepublik Deutschland einen Beitrag leisten soll.

Einen ähnlichem Antrag zur Armenologie in Deutschland im Bereich der Kunstwissenschaft hat auch der UNESCO-Lehrstuhl für armenische Kunstgeschichte an der Staatlichen Universität Jerewan (Partneruniversität der Universität Halle-Wittenberg seit 2008) gestellt. Es ist bekannt, dass viele führende Kulturschaffende Armeniens (z.B. Maler) im 19./20. Jh. an den Universitäten Deutschlands studiert und gearbeitet haben. Ihre Kunstwerke befinden sich in den Kunstsammlungen deutscher Museen und Galerien. Sie warten ebenfalls ihrer wissenschaftlichen Erschließung.

Dieses Jahr sind es genau 100 Jahre, dass mehr als 100 armenische Handschriften, die den Bestand der heutigen Tübinger Handschriftensammlung bilden, aus Tbilissi in Deutschland eintrafen. Diese abenteuerliche Aktion war dank der Bemühungen des Alttestamentlers Prof. Paul Alexander Vetter (1840-1906), des Sprachwissenschaftlers Prof. Nikolaus Finck (1867-1910), des Theologen und Literaturhistorikers Dr. Levon Gjandschezian und des Oberbibliothekars Karl Geiger sowie dank der großzügigen Spende des Fabrikanten Ernst Sieglin aus Stuttgart möglich geworden. Der Grundstock des Katalogs wurde schon in demselben Jahr, in den Herbstferien 1904 durch dieses Team geschaffen, dem auch Frau Gjandschezian, die Schwester von Nikolaus Finck angehörte.

Heute sei dieser Mitstreiter für die Pflege der armenischen Kultur in Deutschland in dankbarer Erinnerung gedacht. Möge ihre wertvolle Arbeit fortgesetzt werden.

### **ԱՐՄԵՆՈՒՅԻ ԴՐՈՍԱ-ԱՐԳԱՐՅԱՆ**

#### **Հայ մշակութային ժառանգությունը Գերմանիայում և նրա պահպանումը**

Հայ սուպագրության 500-ամյակին նվիրված գերմանական ցուցահանդեսների ընթացքում, որոնք Հալլեի համալսարանի և Բեռլինի Պետական գրադարանի նախաձեռնությամբ և համագործակցությամբ 2012/2013 թվականներին տեղի ունեցան Հալլեում (Արվեստի ֆորում) և Մայնցում (Գուտենբերգի թանգարան), ծագեց Գերմանիայում պահպանվող հայկական ձեռագրերի թվայնացման գաղափարը, քանզի ցուցադրված նմուշների մեծ մասը պատկանում էր գերմանական գրադարաններին և ձեռագրական հավաքածուներին:

Գերմանիայի հայկական ձեռագրերը ցուցակագրել և հրատարակել է Մյունխենի համալսարանի արևելագիտության պրոֆեսոր Յուլիուս Ասֆալզը 1962 թվականին Գյոթինգենի Գիտությունների Ակադեմիայի արևելյան ձեռագրերի ցուցակագրման ծրագրի համատեքստում:

Այդ աշխատանքի ընթացքում Ասֆալզը հիմնվել է իրենից առաջ լույս տեսած Բեռլինի Պետական գրադարանի, Մյունխենի Բավարական Պետական Գրադարանի և Թյուբինգենի համալսարանի գրադարանի ձեռագրացուցակների վրա, որոնք կազմել են Նիկողայոս Քարամեանցը (1888), Գրիգոր Գալեմբեարը (1892), Նիկոլաուս Ֆինկը և Լևոն Գեանջեցեանը (1907):

Ասֆալզի հրատարակությունից մոտ 50 տարի անց Վյուրցբուրգի համալսարանի պրոֆեսոր Քրիստիան Հաննիկի նախաձեռնությամբ ստեղծվեց մի նոր ծրագիր՝ եղած ձեռագրացուցակներն 120 պատկերազարդ հայ ձեռագրերի նկարագրությամբ ամբողջացնելու և ժամանակակից մեթոդներով արդիականացնելու ուղղությամբ:

Գերմանիայի 22 քաղաքներում (Բեռլին, Թյուբինգեն, Մյունխեն, Հալլե, Լայպցիգ, Յենա, Մարբուրգ, Նյուրնբերգ, Շտուտտգարտ ևն) այժմ պահպանվում են մոտ 340 հայկական ձեռագրեր, որոնցից մոտ 30-ն ընդգրկված չեն վերոհիշյալ հրատարակություններում:

2014 թվականի սեպտեմբերի 15-ին իր Գերմանիա կատարած պաշտոնական այցի ընթացքում ՀՀ գիտություն և կրթության նախարար Արմեն Աշոտյանը բարձրացրեց հայ մշակութային ժառանգության պահպանման հարցը Գերմանիայում, ընդգծելով մասնավորապես հայկական ձեռագրերի թվայնացման անհրաժեշտությունը, որը զարկ կտա նաև հայագիտության զարգացմանը այդ երկրում: Պատահական չէ, որ տեղի հայ ձեռագրերի ուսումնասիրությունը դուրս է մնացել Համբուրգի համալսարանում գործող «Ասիայի, Աֆրիկայի և Եվրոպայի ձեռագրական մշակույթներ» կենտրոնի համապատասխան ծրագրից:

Հայաստանի Հանրապետության և Սաքսոնիա-Անհալտ երկրամասի մշակույթի նախարարությունների պատվերով հրատարակված «Գրչարվեստ և պատկերների հմայք» հոբելյանական հրատարակությունը՝ նվիրված հայ գրքի 500-ամյակին (Արմենուհի Դրոտ-Աբգարյան և Մելինե Փեհլիվանյան, Երևան 2012) կարող է կարևոր ազդակ ծառայել այս ձեռնարկի խթանման ուղղությամբ:

Գերմանիայի թանգարանների և պատկերասրահների հավաքածուներում գտնվում են նաև տեղում ուսանած կամ ապրած հայ նշանավոր նկարիչների ստեղծագործություններ, որոնք ևս սպասում են իրենց ուսումնասիրողներին:

Այսօր, ուղիղ 100 տարի առաջ, հայագիտության երախտավորներ Պաուլ Ալեքսանդր Ֆետտերի, Նիկոլաուս Ֆինկի և Լևոն Գեանջեցեանի, ինչպես նաև Թյուբինգենի գրադարանի գլխավոր գրադարանավար Կարլ Գայգերի և Շտուտտգարտցի ֆաբրիկանտ Էռնստ Զիգլինի ջանքերի ու ֆինանսավորման շնորհիվ Թյուբինգեն ժամանեցին 100-ից ավելի հայկական ձեռագրեր Թբիլիսիից, որոնք անմիջապես ցուցակագրվեցին նույն թվականի աշնանը:

Նշելով այս նվիրյալների հիշատակն ու բարձր գնահատելով նրանց վաստակը հայ ժառանգության պահպանման գործում Գերմանիայում, մաղթենք, որ նրանց արժեքավոր աշատանքն իր շարունակողները գտնի:

## PETER HALFTER

### IST DER MYTHOS VOM EWIGEN JUDEN ARMENISCHEN URSPRUNGS?

Im 13. Jahrhundert nahm die Zahl von Armeniern zu, die von Großarmenien kommend, Westeuropa besuchten. Unter diesen hat ein Erzbischof besonderes Aufsehen erregt. Seine Spuren lassen sich durch Italien, Nordspanien, Flandern und das englische Königreich verfolgen. Sein Weg durch Europa ist schon als solcher interessant, was diesem Erzbischof aber einen Platz in der Geschichtsschreibung gesichert hat, ist eine Erzählung, die er in Westeuropa verbreitete. Ihr verdankt die kollektive Phantasie aber auch die Literatur des Westens das zentrale Motiv der Legende vom *Ewigen Juden*, also der Gestalt, die wegen ihres lästerlichen Verhaltens bei der Passion Jesu bis zum Jüngsten Tag ruhelos über die Erde irren muß: Ein Mythos, der jahrhundertlang die Gemüter beschäftigte.

Ich bin auf die Frage im Zusammenhang einer Arbeit über Armenier in Westeuropa gestoßen<sup>1</sup>. Die ausführlichste Darstellung über den Erzbischof verdanken wir dem englischen Chronisten Roger of Wendover. Dieser Roger berichtet in seinem *Flores Historiarum* zum Jahr 1228 über den Besuch des erwähnten Erzbischofs in der englischen Abtei St. Albans<sup>2</sup>. Matthew of Paris hat den Text des Roger of Wendover in seine *Chronica Maiora* weitgehend übernommen<sup>3</sup>, hat aber einige wichtige Details unabhängig von der Vorlage ausführlicher dargestellt. Beide Chronisten waren Mönche in St. Albans, vielleicht waren sie sogar zugegen, als der Erzbischof St. Albans besuchte<sup>4</sup>.

Doch zuerst die Geschichte des Roger:

Im Kloster St. Albans wurde der Erzbischof vom Abt und Konvent befragt, ob er schon von dem Joseph gehört habe, der bei der Passion Jesu dabei gewesen sei und noch jetzt als Beweis der Wahrheit des

---

<sup>1</sup> Halfter, Armenier in Westeuropa, p. 77-123.

<sup>2</sup> Rogerii de Wendover *Flores Historiarum*, p. 352-355

<sup>3</sup> *Matthae Parisiensis Cronica Maiora*, III, p. 161-164)

<sup>4</sup> Über Roger of Wendover, Art. Schnith, *Roger von Wendover*, col. 944. Über Matthew of Paris, cf. Art. Schnith, *Matthäus von Paris*, col. 399.

christlichen Glaubens auf Erden lebe. Der Dolmetscher des Erzbischofs, nach Matthew of Paris, ein Ritter aus Antiochia<sup>5</sup>, habe für seinen Herrn geantwortet und ihre Frage bejaht. Den versammelten Mönchen von St. Albans erzählte er darauf in französischer Sprache folgende Geschichte. Sein Herr kenne diesen Joseph sehr gut, kurz bevor der Erzbischof in die Länder des Westens aufgebrochen sei, habe dieser an seinem Tisch gesessen. Dieser Joseph habe ursprünglich Cartaphilus geheißen und sei Türhüter im Prätorium des Pontius Pilatus gewesen. Als damals Pilatus Jesus den Juden zur Kreuzigung auslieferte, habe Cartaphilus Jesus, als dieser das Gerichtsgebäude verließ, mit der Faust in den Rücken gestoßen und ihn mit den Worten verhöhnt: „Geh schneller Jesus, warum zögerst du!“ Jesus sei stehen geblieben, habe ihn angeblickt und gesagt, „Ich gehe, aber du wirst bleiben und mich erwarten!“ Cartaphilus könne deshalb nicht sterben, immer wenn er hundert Jahre alt werde, verjünge er sich zu dem Alter, welches er zur Zeit der Passion Jesu hatte. Cartaphilus habe schließlich erkannt, dass dies die gerechte Strafe für seinen Frevel sei. Er habe sich von Hananias, der schon Saulus in die Gemeinde Christi aufgenommen hatte, auf den Namen Joseph taufen lassen. Joseph führe seitdem das Leben eines Heiligen. Er lebe bescheiden, lehne alle Geschenke ab, er mache seine Geschichte nicht zum Geschäft, nur wenn er von Bischöfen und frommen Männern dazu aufgefordert werde, erzähle er von der Passion und der Auferstehung Jesu Christi sowie vom Wirken der Apostel. Seinen Aufenthalt habe er in den beiden Armenien oder anderen Gebieten des Orients. Dorthin kämen dann viele Menschen aus den entlegensten Gebieten zu ihm, um ihn zu sehen und um sich von ihm erzählen zu lassen. Ständig setze er seine Hoffnung auf Jesus Christus, er möge auch ihm verzeihen.

Man hat schon vor langer Zeit in dieser Geschichte einen Kern entdeckt, aus dem die Legende vom Ewigen Juden entstand. Zwei Fragen stellen sich im Zusammenhang mit dieser Erzählung. Zum einen, wer war dieser Erzbischof? Die Frage ist nicht so nebensächlich, wie es auf den ersten Blick erscheint. Es könnte sich ja unter seiner Maske ein Betrüger verborgen haben, der seinen Zuhörern erfolgreich eine sensationelle Geschichte vorsetzte<sup>6</sup>. Da aber weder Roger of Wendover noch

---

<sup>5</sup> *Matthae Parisiensis Cronica Maiora*, III, p. 161

